483-
Ibmmy 364

2004

376-ԱԿ

ՈՒՂԵՒԱՐՈՒԹԻՒՆ

ԿՐՏԱՆԵՐՈՅՆ ՄԵԼՔԻՍԵԹԱՅ

ՅԵԼԼԵԴԸ

ՀԱՏՈՐ Ա.

Printed in Turkey

1059 ԱԼ

ՈՒՂԼԻՈՐՈՒԹԻՒՆ

ԿՐՏՍԵՐՈՅՆ ԱՆԱՌԱՐԱՍԵԱՅ

ՅԵԼՎԱԿԻ

ԳՐԵԱԼ ԳԻՄԱԹՈՒԹԵԱՄԲ

Ի Յ. Յ. ՊԱՐԹԵԼՄԱՆԱՅ

ԵՒ ԹԱՐԳՄԱՆԵԱԼ

Ի Հ. ԵԴՈՒԱՐԴԱՅ Վ. ՀԻՒՐՄԻՋԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ

3054-57 1059

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՍ

1843 . ՌՄՊԲ

9(38)



Ց. Ց. ՊԱՐԹԵԼԷՄԻ

Printed in Turkey

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՎԱՐՈՒՑ ԵՒ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԵԱՆՑ ԻՆՁ

Յ·Յ· ՊԱՐԹԵՎ ՅՈՒՆԱՑ

ԶՈՐ ԻՆՔՆ ԻՍԿ ԳՐԵԱՑ ՅԱՄԻՆ 1792 ԵՒ 93։

ՅԻՇԱՏԱԿ Ը·

Յանդուրժութեանս խնամ, յոր զառաջին գիս վիշոք և արկածք, ընակեալ ընդ յարկաւ՝ ուր պատկեր վեհագունեցն առաքինութեանց բուսէ ի սիսիրումն ծանրագունից թշուառութեանց [1], բուռն հարկանեմ ի գրել տալ յոգոյ և առանց սնապարծութեան զգլխաւոր անցս կենաց իմոց։

Էր երբեմն զի յիշատակս այսոքիկ, զորս հանդերձիմ ի գրել առնել, պիտանիք էին մեծանշեան քարտուղարի տիմանագրաց և բանասիրութեան կամաւոյն, որում անկ է յորինել զպատմական ներբող իւրազանչիւրոց ի կամաւորդաց սնան։ Պիտանիք էին և կենսագրաւոր մատենագրաց, որպիսի որ էր Հայրն Սիսրան, որ ի պատմագրել զվարս բանասիրաց՝ մանրապատում առնէր զնա գուշնաքեայ երկասիրութիւնս նոցա, և զգործս կարի իսկ անենանս։ Եւ չիցեն իսկ անպիտանիք ի վերծանումն այնոցիկ, որք յայլոց ազգաց ի նոյն վաստակս՝ յորս ես պարապիցի՝ բուռն հարկանիցեն։ զի դուցեն թերևս ի սոսա խրատս պիտանիս։ Ասեմ իսկ յայլոց ազգաց։ զի զոյս ազգ

---

1 Բնակեր յայնժամ ի տան Շուազիոլ տիկնոջ։

մասնաւորագրութեան մարդ իսկ է համարել զնոսին ի լեալ արգ ի Գաղղիա։

Մասնաւորագիրք հռչակաւորք, որպիսի որ էր և Հիւմ, աւանդեցին մեզ զպատմութիւն զործոց իւրեանց և զերկասիրութեանց։ Դոցա էին իսկ պատճառք Թողզի յաւելուած դիշատակ իւրեանց, և ըղձակերտ առնելոյ յեանոց զանգուածութիւնն. իսկ ես ոչ առ այլ ինչ գրեմ զայսոսիկ, բայց զի լիցի ինձ անցուցանել վայրկեանս ինչ՝ որ արդ կարի յամրագնացք թուին ինձ։ Զազնատանս զայսոսիկ Թողզի՝ ազգականացս ի մոց, պիտանեգոյն ինչ ոչ կարացեալ Թողուլ նոցա, ընդ որ վերջ է ինձ։

ԱՀԳԱՅԱՆԷ իմ բնակէն ի բաղում ժամանակաց հետէ յԱրարատ քաղաքի փոքրիկ և գեղեցիկ ընդ մէջ Մասիսոյ և Թուլանի։ Յովսէփ Պարթեղեմի հայրն իմ, բարեկիցիկ վիճակեալ բախտի, էառ իւր կին զՄագդալենի Ռասմէի դուստր վաճառականի ուրումն ի Վասպ, նաւահանգիստ փոքրիկ, ոչ ինչ հեռի ի քաղաքէ անտի, ուր բարգաւաճէր յոյժ յայժմ վաճառաշահ։ Յայդ երբեմն երթեալ անդր մայրն իմ առ ազգականս իւր, Ծնաւ զիս անդ յամին 1716, ի քառասերորդում աւուր ամսեան յունուարի։ Եւ ածին զիս վաղ յԱրարատ, ուր և անայ։

Մինչդեռ տղայ էի չորեքամեայ, վաղամեռիկ եղև մայրն իմ։ Որոց միանգամ կենդանեաց ընդ նմա լեալ էր, պատմին ինձ՝ զի սիրելի էր նա և ուշիմ և հանճարեղ։ Զեղև ինձ բախտ կրթելոյ օրինակաւորին. այլ յաճախ հեղի ընդ յիշատակ նորա քաջքը արասաւուս։ Հայրն իմ անմխիթար՝ հանապազորդ ընդ աւուրսս և ընդ երեկս առեալ զձեռանէ իմմէ, մինչդեռ բնակեաքն ի գեղջ ուրեք, ածէր զիս ի վայր մենաւոր. և բազմացուցեալ զիս առ իւր, արասաւէր փոշկալով, և յորդորէր զիս ողբալ զմայրիկն իմ բան զամենայն մարս դորովագութիւն. և արասաւք իմ սիրտքին զվերս նորա։ Յետարանքս այսորիկ ազդոզրութ, և ընդ բազում ժամանակս առեալ յեղեղեալք, այնպէս խորագոյն ի սրտի իմում տպաւորեցան, զի մինչև ի սպառ կացին անջնջելիք։

Եւ եթող մայրն իմ երկուս ուստերս և երկուս դստերս։ Զեղև երբեք ուրեք ազգատոհմ միաբան քան զնոսա, և հպա-

տակ ընտանեկան պարտուց. և այնպէս մեծարոյ էր Հայրն իմ առ քաղաքակիցս իւր, զի յաւուր մահուան նորա սուգ էառ ամենայն քաղաքն։ Նոյն սուգ և ի մեռանել եղբօրն իմոյ եղև ի քաղաքին. և իբրև տեսի ես զոգիս էս նորա ժառանգս հայրենի առաքինութեան, ոչ էս ցանկացայ ազնուականութեան ազգատոհմի, այլ պանծալի ընդ ազգատոհմն իմ, և տակի յանախ ընդ միտս իմ, զի եթէ ինձ լեալ էր յընտիր՝ ազգատոհմն իմ, ոչ յայլոց ծնողաց էրբէք կամէի ծնանել։

Իբրև եղէ տասց երկոտասանից, Հայրն իմ էառ զիս ի դպրոց Հայոց Ալեքսանդրիոն ի Փասիլիա, ուր ուսակերտեալ ի չորրորդ դասուն։ Եւ անդր ընդ կարգս ուսանոյ ընդ վարժապետութեամբ Հօրն Ռէյնոլդ, որ եղև ապա քարոզիչ երեսելի ի Լուսաբաց, հռչակաւոր լեալ յառաջ քան զայն մրցանակաց արձակ և ուսանաւոր բանի ի Ռեմբրանդին Փասիլիոն և ի գաղղիական Ռեմբրանդին։ Պէրթք էին յոյժ սխորժակք նորա, և ցանկայր կրթել զմեզ։ Եւ յաւէլ և էս ի խնամսն ի վարժս հուսաւորականին. զինի դասուն ունէք նա զմեզ առ իւր մանկունս ճաշի կամ ուտի, և վերծանէր մեզ զընթերս ի մատենագրոց մերոց, և զգէզեցկութիւնսն որ ի նոսա տայր մեզ նկատել, յակռնա կացուցանէր զմեզ՝ հարցանելով զկարծիս, և մերթ էս առ ասպարկէր մեզ պատասխան Հաւոց։

Ի միւսմ աւուրց ինդրեաց նա ի մէնջ զնկարագիր մրցեի ի տասս գաղղականս. և իբրաքանչիւր ուրուք գրէրթուած իւր մատուցեալ, ի վաղիւ անդր ածան յընթերցումն ի սակաւաւոր ակրմբի, և հաճոյ թուեցաւ նոսա գրէրթուածն իմ։ Ցետ անօրեայ աւուրց պրոր հանգէս իմն գրաւորական ի սրահ մեծ վարժարանին. և քանզի երկրտա էի ես, ոչ հանդգնաձակեալ մատնել ի հանդէսն՝ կայի յանկեան ուրեք ի սրահին։ Ընդ զուարճալ էին ընտրեալ քաղաքին Փասիլիոյ արք և կանայք. և տեսի զնա յարեան յատն կացին ամենեքեան, զի հասանէր անդր վ խարէա մեծնեքեան քարտուղար Ռեմբրանդին Փասիլիոյ, որ յանուց ինչ հետե հասատատեալն էր. և էր նա մեծարոյ յոյժ։ Հայրն Ռէյնոլդ բարեկամ նորա էլ ընդ առաջ, և հրաւիրեալ բազմեցոյց զնա յառաջին տեղւոջ։ Եւ էի ես յայնժամ ամենց հնդէսասանէից։ Ի յոգնախուռն ակրմբի անդ էին կանայք չքնաղագեղք քաղաքին գեղջոյրին զարդարեալք. այլ ես

ակնկալուց եւեթ կայի ի Վ խաչէս , և սիրտ իմ բաբախեր ի հայելն ընդ նա :

Յետ սակաւ միոյ յաբեւաւ նա , և հայրն Ռէյնոյ ընդ նմա . և շուրջ հայեցեալ , եթէն եւեթ զիս յանկեան՝ ակնարկեաց ինձ մերձենալ կալ ի մէջ : Իսկ ես զաչս ի վայր արկեալ ծծկեի յիս ինքն , և կամէի թագչել յետոյս աչակերտակցացն խնդ՝ որ յառաջ անդր ձգեին զիս : Ապա հայրն Ռէյնոյ կոչեաց զիս մեծաձայն , և թուեր ինձ տալ զդասակիսիք մահու : Ամենեքեան դարձուցին զաչս իւրեանց ի յիս . և հարի եղև ինձ անցանել ընդ մէջ երկայնաձիգ սրահին ընդ անձուկ միջոց սեռուցն , գթելով յանփոխս իւրքանչիւր յաչ և յահեակ , յետս և յառաջ , և կուուեալ ընդ հանգերձս , ընդ լոգիկ , և ընդ գլխարկ : Եւ կատարեալ զերկայն և զաստիճանաւոր ընթացան , հասի յետոյ ուրեմն առ Վ խաչէս . որոյ առեալ զձեռանն իմմի , կացոյց զիս յանդեմսն ժողովոյն , և պատուեաց նոցա զնկարագրեալ մրրկին՝ զոր Հօր Ռէյնոյի տուեալն էր . և ապա արարեալ բազմ մեծ զկարծեցեալ հանձարոյ իմմի : Իսկ ես ամաչէի յոյժ , քանզի զնկարագիրն զայն գրեթէ ամբաջ յորմականէն Մոթի գոլացեալ էր : Զայնր ժամու զկիրս իմ ի պատուհանեալոյ ասսի ի միտ առնուլ է , զոր ի լուեն Վ խաչէսի եւառ նմա գոլալով . Պարոն . . . « Պարոն . . . պարծիմ գոլ . . . նուաստ և հնազանդ ծառայ ձեր Պարթեղմի » : Եւ խոյս եառ յետս ամենեսեան և անցոյս յայնպիսւոյ հանձարոյ :

Բայց Վ խաչէս , ընդ որում եղև ինձ ապա յետ ժամանակի ծանօթանալ , թէպէտ և նախանձաւոր էր բարգաւաճութեան բանաստիրականին , և ցանկայր յոյժ զարգացման հանրակաց՝ յորս նշոյլք հանձարոյ ի վերս երևեին , այլ էր նա կարի ելն քաղցրագոյնք և նեղոյ , որով ի յանձնապատանութիւնն կրթէր զմանկանն :

Կամի մտանել ի կարգ եկեղեցական . այլ քանզի էպիսկոպոսն Մասիվոյ Պէշրուէս չընդունէր զաշակերտս Աղբեթարանին , կատարեցի զնարժս խնամասիրութեան և զաստուածաբանութեան առ ոտս Հայրն Յիսուսեանց . . . Մինչև մեկնեալ Յաղբեթարանէն , խնդրեալ էր իմ ի մեջն յաշակերտակցացն խնդ զանտարակս վարժից խնամասիրականաց , զորս թելադրէր անդ վարժապետն ըստ կարգ եւսեան վարդապետու-

թեան՝ որ չէին ընդունելի Զիսուսանց. և ընդսրինակեալ զայնս ուսանէի ի ծածուկ։ Պարապէի միանգամայն ի վարժս նախնի լեզուաց, և մանաւանդ հելլենականին, առ ի գիւրել ինձ զուսումն Եբրայական լեզուի, զորոյ զբառս սրամտականս ոլորեալ ի սուղ արուեստականս յուսեգոյնս եւ քան զԱրմատ՝ սն հելլենականս փոռ Ռուսայալի։ Բաղդատեի ապա զբնագիրն Եբրայական ընդ ատամարացոյն և ընդ քաղդէական և ընդ ասորի Թարգմանութիւնս։ Ուսանէի և զեկեղեցական պատմութիւն, մանաւանդ զառաջնոց դարուցն։

Ի Ջանից ատամ յաւելաւ ի վերայ իմ հոգ վարժապետին, որում անկ էր զորհանապալ զՀետ Ճաշուն բաղատարել մեզ զուսերբ գիրս, զՀոգոլս և զուսերբ Հարս։ Էր նա այլ կորովամիտ, և գովութիւն նորա հանոյ էր ինձ. խորհեցայ, առ ի ցուցանել զարգիանս գովութեանց նորա, Ճաշս ինչ առաջ նորգութեամբ նորա յորմէնէ՝ բամանդակելով ի նոսա զկաբեալ ինդիրս զդրոց սրբոց, և զեկեղեցական պատմութիւնն և զկանոնաց։ Բաղումք էին յոյժ ինդիրքն, և ի յոգուածս խրատանչիւր կուսակեալ վէճք՝ որ կարօտ էին խորին քննութեան։ Բնենգիկեանց տատանց հոգոյց ոչ էր իշխելի ձեռն արկել յանբաւ աշխատութիւնն. այլ ևս մանուկ էի անփորձ, և անյաղ ի վատակս։ Եւ ուսուցչն իմոյ երկուցեալ արգելաք ազգ առնել ինձ զանպարագիրս ընդարձակութիւն առաջարկութեանն առ ի չՀետատեցուցանելոյ զիս, արկի զիս ի վիշն այնպէս խորատոյզ, մինչև անկանել ինձ յախտ վատագուար։ Եւ յերկարաձիգ խոհութեանս ոչ առ այլ ինչ ցանկալի կազդուրել ի զբութիւն, այլ առ ի զեղծանել և ևս նոսա։

Եւ իբրև զբացայ, մտի ի կղերիկոսարան Մասիսեոյ, որոյ տեսուչք էին Ղազարեանք՝ երկուքեք կարգին առաքելութեան. և վիճակեցաւ ինձ անդ վարժ ապէս ատատատ արանութեան այր խահէմ։ Հանապազաբ ի հինգերորդ ժամու առաւաւոտն սահմանեալ էր մեծութիւն այլ և այլ ի գրոց Պէօզլէի։ Ի վաղիւ անդր մեծին իմոյ ի վարժարան անդր ածաւ յինթերցուն յուշիկ և արտ գլուխ գրոցն, յորում Պէօզլի համեմատեալ նաւու զեկեղեցի, զորաբան պարն նմանեցուցեալ զեկավարի, զեպիսկոպոսանս տեղակալաց, և զերի-

ցանես և զասիկաւադունս այլոսին հանդերձ՝ որ ըստ նոցանէ պարտանէիցս։ Պարտ էր մեզ խոկալ մնադրութեամբ ի նմա. նութիւնն յայն զկնս ժամ. իսկ իմ առանց մեղայ ելիցն կա. տարածի, ածեալ զմտաս զի ի նոսն յայն խնամալի ոչ այլ ինչ մարթի էր ինձ գալ բայց հանգիստ նաւատուց, ասացի զայն առ որ մերձն կայր ինձ։ և նա յաւել ասել զայն առ մերձակայն իւր, և ահա լռութիւնն գտնաւ ի ծաղր համարարքառ։ Եւ վերակացուին հարցեալ զվատ էին, չկարաց և ոչ ինչն ժողովել ծաղուն։

Էր ինձ պարապոյ ժամանակ բաղում ի վարժարանի անդ, և ուսանէի զարարացի բարբառ. ժողովեցի զամենայն արմատական բառս լեզուին յընդարձակաւարբ բառարանէն Գոնդեայ, և ածի զնոսա ի չափ տողից արուեստական զարհուրելիւեայ, զորս աշխատութեամբ բազմաւ ի միտ առեալ ապա անգէն մոռանայի զնոսա։ Եւ առ ի գործնական կրթութիւն վարժիցն իմոց տեսականայ, ծանօթացայ ընդ Մարոնիա պատանւոյ ուսելոյ ի Հռոմ յուրբանեան վարժարանին, որ բնակէր ի Մասիլիա առ միւսմ յազգականաց նուրոց, որ առնէր վաճառականութիւն ընդ արևելս։ Հանապազաց կանխէր նա առ իս, և խոսակցեալք ի լեզու արարացի։ Ի միւսմ ուրեմն ասայ ցիս, զի օգուտ մեծ մարթ էր ինձ գործել Մաընթեաց բազմաց և Հայոց * և այլոց ուղղափառաց արարացոց՝ որ ոչ քաջ իմանային զբարբառս գաղղիական, եթէ յանձն առնուսի քարոզել նոցա ի բնիկ նոցին բարբառս։ Էին առ նոսա Ճառք արարելոցն ուրուսն ի Յիսուսանց, քարոզչի երբեմն յուրբանեան վարժարանին, և բնարեալ յայնցանէ զնուազ անպատկանաւորն՝ առի զայն ի միտ։ Ընդունիցէք իմ, արք իբր քառասուն, ժողովեալք ի միասմ ի սրահից կղերիկոսարանին, թէպէտ և սուգանէին զարտասուութիւն իմ և զոլորակ օտար, այլ այնպէս սիրժէցին, մինչև թախանձել զիս քարոզել նոցա միւսանգամ։ Յանձն առի. և ի վաղիւ անդր

---

* Ա. յաշտաի ինչ ծանօթութիւն էր յայնժամ գաղղիացւոց և այլոց արևմտեան ազգաց զարգէս Հայոց, զի մասնեալ բարձրագոյնս ընդ արարացիս զազգ մեր գասէ։ Գրագ. Բարգմանչաց։

ոմանք ի նոցանէ եկին խոտոտման լինել առ խ. այլ կռաւ նո-
ցա պատասխանի, զի զմեզ արաքացիս ոչ խմանայի։

Մինչև ցայսվայր Ծաղուռ էին սեպարանքն. այլ որ ինչ այժմ
առաջի կայ ինձ պատմել, լեցի պիտանի ի խրատս Ճանաչաւակո-
ղաց։ Զբոլոցս ինչ արաքացիս հարցուածոց և պատասխանեաց
պայմանաւ առեալ էր ուսուցչին խմոյ ինձ ի սիկտս պատաս-
սիրական բանից և ինդրոց և ազգի ազգի խօսակցութեանց՝
օրինակ ինն՝ «Բարի լոյս, Պարոն, ողջոյն ինչ քեզ։ — Եւ կարի
խակ ողջոյն, շնորհ ունիմ քեզ։ Բաղուամ Ժամանակք են զի
չտեսանեմ զքեզ։ — Ի գեղջ եմ։։ Եւ այլ ևս այսոքան բանք։
Յառաւք միտմ ազգ. արարին ինձ, զի ինդրեին զիս արք առ-
դուրս կղերիկոսարանին։ Ելի անդր, և շուրջ եղեն զինև
սաստ կամ երկոտասան արք ի գլխաւոր վաճառականաց մեա-
սիրկացուց. ածէին ընդ իւրեանս զոյր ոմն ի ձև մուրացկի,
որ եկեալն էր առ նոսա ի Ժողովեալ վաճառականաց, և պատ-
միալ զի էր ինքն ազգաւ հրեայ, և հաճեալ ի պատիւ բա-
ռնական, բայց խեղճանալ լեալ ՃՀմարտութեան ուսեալ-
բանին՝ յանձն առեալ էր զքրիստոնէութիւն. և զի սեղեակ
էր նա արնելեան լեզուաց, և առ ի փորձ ինդրեր ընդ ու-
մեք ի լեզուագիտաց անցանել ի հանդէս։ Եւ արքն ազնուա-
կանք յաւելուին պատասխրական բանիւք, զի առանց ընդ
բանս ինչ ածելոյ՝ ածեալ էին զնա առ խ։ Ա՛յնուհետ յայն-
ժամ հրեցի կիրս, զի հարայ ընդ քրան ցուրտ. և մինչդեռ
ջանայի ցուցանել նոցա՝ զի ուսողք լեզուացս այսոցիկ ոչ առ-
ի խօսել ուսանին, և ահա սկսաւ նա բարբառել այնու
համարձակութեամբ, մինչև շփոթել ինձ ի սկզբան անդ։
Ա՛յլ ըստ բարեսի հաստ եղէ զի արտասաներ նա երբայեցե-
բէն զառաջին գլուխ Սաղմոսացն Դաւթի, զոր գիտէի ի բե-
բան։ Թողի կատարել նմա զառաջին տուն սաղմոսին, և պա-
տասխանեի նմա զմի յուսեալոցս անտի յարաբացի զուռցայ. և
հարայարեցաք, նա զերկրորդ տուն սաղմոսին, և ես որ ինչ
գիտեան գայր զոյոյ։ Սատակացաւ վիշն, և երկոքեան ի միա-
սին հանգիստաքաղ միանոյ բարբառեաք։ Ա՛նայի արտասա-
նելոյ նորա զվերջին տունն, յորում արդարև զկայ էաւ. այլ
ևս յառաւելագոյն պարծանս յաղթութեան՝ յաւելի այլ ևս
զոյոյ մի կամ երկուս. և առ որս մերձն կային ազնուականքն՝

սասցի ցնոսա թէ սրժանի էր այլն ազգութիւնն նոցա վան գիտութիւնն և սրկածից։ Իսկ նա յաւել առ. Նոսա ի կոր-Ճայն իւր բարբառ, զի էր նորա ուղղութեալ ի Սպանիա, ի Լուսիտանիա, ի Գերմանիա, Իտալիա, ի ՑաՀիստասան, և ոչ ուրեք սեպեալ Ճարտարագոյն զոք քան զվարդապետս մա-նուի։ Եւ էի ես յայնժամ ամաց քսան և միոյ։

Հաշակիցան գնաքս ի Մասիրիա, Թէպէտ և Քանացայ զա-ռաջս առնուլ Համբաւոյն՝ զՀաւատոն պատուելով բարեկա-մաց խնց. այլ ոչ ոք լսէր ինձ, զարմանալեացն առաւելա-գոյն Հաւատս ընծայեալ։

Կատարեցի զուսմունս եկեղեցական. և Թէպէտ խելա-մուս լեալ մասանց կրօնից, այլ այնու իսկ Թերան՝ զի խելա-մուս էի այնոցիկ, չկամեցայ առնուլ զկարգ եկեղեցական։։։ Զմման ինչ ապրուց անցուցանէի յԱպայն ի տան ուրեք որ յոյժ ինձ ցանկալի էր, և ի սակաւաւոր ակմբի սերելեաց՝ ընդ որս ի քաղաքի և ի գեղջ առնէաք ընթերցմունս և տաքս։ Եւ երբեք երբեք գնայի ի Մասիրիա առ. ոմանս ի կաՀատա-գաց Ճեմարանին, ընդ որս էին ինձ երբ. մի ի նոցանէ էր Ցեր Գիւրնիէ կանոնիկոս եկեղեցւոյ սրբոյն Վիկտորի, անուանի առաքինութեամբքն և հմտութեամբ պատմութեան միջնոյ դարուն։ Ցօրինեալ էր նորա տեղեկութիւնս բազումս գիա-նական ի մատեանն մակագրեալ Դ.ՀԷ.Ա. ԷՐԻՍԹԱՆԻ, և ի յաւելուածն՝ զոր Քարբանթիէ պարբ ի բառարանն Ցիւքան-ժ։ Միւս էր ի նոցանէ էր Քարի, այն որ յաջողութեամբ Հանդերձ պարապեալն էր ի գիտութիւն վաղեմի յիշատակաց. և էր նորա թանգարան զրոյցածաց գեղեցիկ, և ընտիր Հա-ւաքումն մատենից ըստ իւրոցն պատրաստակաց։ Ընդ այլ երկա-սիրութիւնս իւր առանդեաց նա մեզ զպատմութիւն Թագա-ւորաց Թրակիոյ և Պտոլոմի ի գրոշմածաց Հանեալ։ Հմտու-թիւն ամենայն ազգի ազգի երաց, ուղղեալ ի գերազանց Հան-Ճարոյ, և զարգասրեալ քաղցրութեամբ բարուց, պատրաստելի զկենակցութիւն նորա գործէին և ՀրաՀանգիչ։ Սիրելի էր նա ինձ յոյժ. և յիշատակ նորա ածեալ ի միտս իմ զայլ ևս գան-նագոյն կրօնաւոս բարեկամաց, Թուսին ինձ կեանքս այս ապ-պարեզ ծածկեալ ի փուշս և ի տատասկս, յորս հետ զՀետ կռուեալ Հանդերձք մեր կապտին, և մեռեալ մերկք և վիրավիրք։

Էր զի զանձն ոգւոյն անցուցեալ ընդ բարեկամին խնամ յաղագի ազգի մասունս բանասիրականին, զնայի ասպա անցուցանել զդիշերն առ միանձնուն Պաւլայեցին, ուր Հայրն Սիկաւոր կանգառոդ Ամենայնին գիտութեանց առեալ աստեղաբաշխական զնոսին թիւնս, առեալ զնս ընդ իւր։ Քանզի ընդհանրական ինն գոգցես առնելով ասա խոստովանութիւն, պարտ է ինձ ընդ մեզս մանկութեան խոյ դասել և զժամանակն կորուսեալ յինէն ի վարժս չափականս, և մանաւանդ յասանզարաշխութիւն։ Խոստովանիմ դարձեալ և քերթութիւնս արարեալ առաջս բաղմաց զարհուրելեաց, առաջի ուղնելով զքաջ օրինակագիր քերթողս։ և շարագրածս Ճառից բաղմաց դատողականաց, առանց ունելոյ առ իս զմտաւորանս կարևորս։ Եւ դարձեալ զի յամին, չյիշեմ յորում իսկ, մերձ ի կատարումն աւուրց Բարեկենդանին, հրաւիրեցայ քարոզել յՈրսայն ի կուսաստանի ուրեք ի կիւրակէս աղուհացից, և յանձն առի։ Ոչ գոյին ինձ ոչ քարոզք, և ոչ քարոզիրք։ և ոչ մատենադարան կարգին Քարոզաց. սկսանէի յօրինել յերկուշաբաթի զքարոզս իւրաքանչիւր, և ի յաջորդ կիւրակէն արտասանէի զայն։ Ի միւսումն ամի զարձեալ զնոյն պարտ յանձին կալայ, նոր յօրինելով Ճառս. այսքան վերջացեալ ի զդուշութենէ։ Ապ. յերկրորդումն յայսմ նուագի նուազեալս զորութիւն իմ, և չկարացի յանկ հանել զայն։

Եւ Թափառեալ ընդ երկար պարապմանց ի պարապմունս, խորհէի յանձն իմ զի չև ևս ընտրեալ էր զկարգ ինչ կենաց, և հասանէր ինձ քանեկիներորդ ամ տիոցս. բաղմանային ընտանիք եղբօր իմոյ, և մարմնէր ինձ բեռն լինել նոսա առաստս։ Ամենեքին յորդորէին զնս գնալ ի Լուսաւորս. այլ զինչ կարող էի առնել անդ, անփորձս ի Ճարտարութենց հնարից, անտեղեկս առագրութեան, և վերջացեալս ի յայտնի ինչ մտանել հանճարոյ, վեր ի վերոյ ինչ ունելով գիտութիւն։ Հանդոյն էի ես ուղևորի, որ բարձեալ բերիցէ զրաստս բազումս մանուանս զաշխարհս՝ ընդ որս անցանէ, և չիցէ նորա գրամ ինչ սակի։ Ապ. չգիտէ՝ մի ինչ պատճառաք յայնմ ելցին հզօր խոտանացս այսոցիկ, և ուղևոյ եղէ։ Եւ յանցանելն խնամ ընդ Էջ քաղաք, չարայ առ Պսակ Կանոնիկոս մայր եկեղեցւոյն, որ ծը նեալն էր յՈրսայն՝ ուր և բնակէրն ազգատոմ նորա։ Դասեալ

յոյժ էր ինձ նա. և քանզի անկ էր նմա եպիսկոպոսանալ ի վախճանել ուրուք ի թեմական եպիսկոպոսաց, յիս ամենայնոյց կայր՝ կամելով բաժանել ընդ իս զվաստակս և զպատիւ ամենայն, և կացուցանել զիս օգնական կամ փոխանորդ և այն. և խոստանայր՝ ընդ եպիսկոպոսանացն ուղղորել ի Լուսաւորիչ, և առնուլ զիս անսի ընդ իւր։ Եւ եհարց զիս՝ թէ հաճո՞յ իցէ ինձ առաջարկութիւնն։ Իսկ ես ի խնդութենէ մարմնոյն առի զամենայն, ոչ յուսացեալ զի հաճոյագոյն ինձ և շահաւորագոյն վիճակիցոց էր բարեաւ, տեսանելով կենաս ինձ անկարօտս պատրաստեալ ի ձեռն այնպիսւոյ ուրուք որ սիրելն էր և առաքինի, և գերազանցեալ մարդասիրութեամբ՝ որ առաջին քան զամենայն առաքինութիւնսն է։

Չերծեալ յանբերելի հոգոց, հասի ի Լուսաւորիչ յամենայն յուսիսի յամին 1744։ Իսին առ իս նամակաւի բազում, և մի յայնցանէ առ Պող տեսուչ թանգարանին արքունի և գաղղիական ճեմարանին, և մանրիկան քարտուղար արձանագրոց և բանասիրաց կաճառոյն։ Այս թէպէտ և ոչ արեւոյժ էր բնութեամբ, սակայն բազում պատուասիրութեամբ ընկալաւ զիս, և հրաւիրեաց ի Ճաշ երեքշաբաթին։ Քանզի յերեքշաբաթի աւուր կոչնակաւք էին նմա բազումք ի կաճառագոյց բանասիրական ճեմարանին, և ի չորեքշաբաթի Ռէմոմիւբ և այլք ամենք ի բարեկամաց նոցա։ Ընդ երկս ինձ ճանաչէլ, ոչ միայն զՌէմոմիւբ, այլ և զկոմսն Բէկիլիւս, և զՏէր Սալիճ տեսուչ մատենագարանին արքունի, զԴէսաուէն, զՊլեթիլ, զՌէմանէլ, զՊոնսրմայն, զՏիւբլոյ, զՊասսին՝ զորդի երիցուն, այլովքն հանդերձ։ Զկարեմ բացատրել զիրս, զոր յաւաջնումն նուագդ կենակցութեանս իմոյ ընդ նոսա՝ կրեցի յիս. միտ դնելի ամենայն բանից նոցա և շարժուածոց, և զարմանք էին ինձ՝ զի հասու լինելի ամենայնի զոր խօսէին։ Առաւելագոյն ևս արդեօք նոցա էր զարմանալ ընդ ապագեալ իմ ի խօսել իւրեանց առ իս։ Չի այնպիսի խորին մեծարանս ի մանկութեան իմում զգայի առ բանասէր որեարն, մինչև ի միտ առնուլ ինձ զանուանս այնոցիկ իսկ՝ որ առաքինին առէզծուածս առ լաւագիրն ՀԷՐՏ։ Լաւի ինձ հասանելոյ յոյժ մեծ, զի առ զարմանաց ի բաց գնելի զգաստասան։ Ընդ բազում ժամանակս ի վերծանել զգիրս համարեի ի մոմ ապիկար

զանձն ի մատնադրել. ի վերին ամս կենաց իմոյ յանգգնագոյն գոլայ ի հետեւս և ի քննողական շարագրածս, ընդ երկար երկարութեամբ երաւացի առեալ խրախոյս։

Ի Ծանօթանալ ընդ կաճառորդս ոմանս Ռեմարանին, յաւելի եղեալ բարեկամս։ Ցեսի զցանկալիս Լուսաւորոյ, յաճախեի ի մատնադարանս արքունիս, և խորհեի ի կանոնիկսն ՑերՊոսէ, և ինդրեի ի լաւագիրս զսպարապուն սիՈռոց, այլ սեւսանեի զայլս ընդ հուռ յաջորդեալ ի նոսա։ Յետ երբ միոյ ամի Պոլ, զոր սակսն սեւսանեի, և որոյ բաղում անգամ առանց յայտնի ինչ առաջարկութեան հարցեալ էր զնորդհուրդսն իմ, յայտնեաց եղեալ զիւրան սովորականաւն եւրով անայլայլելի ձեւովն զոր յետ ցանկալեան իւր յանձին բերբեր լիրս։ Ի Թանգարանին գրոշմաՀաց բաղում աշխատութեան պէտք եին, զոր ոչ ներեր նոսա հատանին։ Ի սկզբան անդ առեալ էր նորա իւր օգնական զարբուն ՊաՀի հնագէտ հմուտ, զկաճառորդ Ռեմարանին բանասիրութեան. այլ այն ինչ ի նմանէ զրկեալ, յերբեքայս կայր զնարութենէ այլոյ ուրուք օգնականի. քանզի ոչ է մարթ, սակը, հաւատալ զուանգս զայս ի ձեռս՝ որ ոչ սուրբք եցին. և այնչափ ինդրի ասա հաւատարմութիւն, որչափ հմտութիւն։ Եւ յաւել յուսացուցանել զիս ի պաշտանն յայն. և ես յանդգնման արարի նմա զնգութիւն իմ, եՀեկ վՀանկեր եեմ վստահակից լինել նմա։ Եւ քանզի Ծանօթ էր եեմ խոհակաՀութիւն նորա մեծ, և զի բարեկամք էին նմա Պիեռն սեւսուչ մատնադարանին, և Մորփա Էֆան ուսուցիչապետ, յուսայի յուսի աւուրս սեւսանել զերս երայն. այլ էր նա այնպես յամր և զգոյշ, զի յետ անցոյց բաղմաց յաջողչին երբեր։ Շնորհս կալայ վստահութեան նորա ցիս, և Քանացայ արժանի վստահութեան նորա գնալ՝ զամս եօթն կացեալ ընդ նմա անձկագոյն մտերմութեամբ։ Եւ՝ ի վախճանել նորա, որ ինչ առաւելագոյն գործեեն փառս յիշատակի նորա՝ հաւաքեալ եաս Պուէկնվիլեայ, որ արար զվիպասանական ներբող նորա. զի նա էր բանասիրական Ռեմարանին մշանջեան քարտուղար։

Որ ինչ յաւելումս ասասցեար, զարդք են յիշատակի նորա. և ոչ արտաքոյ առաջարկութեանս՝ վասն որ ընդ նմա կենաց կցորդութեան իմոյ։ Կարգ և ծարբութիւն բերբեր նա յանձին և ի կահս և յընտիր մատնադարանին, յորում մա-

սեանք գրեմք առ հասարակ յայնմիս կաշւոյ կապմեալ, և հաւասար կարգաւ ի դարանն զետեղեալ կային. շարադրեալք գեղեցիկք զետեղեալք ի պահարանս Ճոխս կրեին զմեզ ամենայն գասակարգեալ, և գաղափարեալ ի գեղեցկագիր գրչէ, զերծ յեւ գուշաբերից վրիպակաց: Ի կերպարանս նորա և ի թոսս այնպիսի էր վսեմութիւն, որ զգուշաբերսն իսկ զնորին գործս ապուռացուցաներ. և ի վաստակս նորա խնամք այնպիսի, զի և ոչ խուռ ինչ ի նախահոգ զգուշութեանց անտի անաւեա առնէր, որ անեղկան առնէն գյաջողութիւն իրաց:

Օրինակ եմն. յետ հրաժարելոյ նորոյ ի քարտուղարութենէ Ճեմարանին, դեռ ևս վաստակէր նա ի յօրինուած գրոշմածոց և արձանագրութեանց և առակաւոր գրուագաց, զորս խնդրեին իշխանք կամ քաղաքք և կամ միաբանութիւնք: Էր նորա ի վաստակս յայսպիսիս հանճար զարմանալի, և զարմանալի ևս երկայնմտութիւն: Եթէ գրոշմած ինչ պարս էր նմա յօրինել, յետ ընդ երկար խորհելոյ և ստեղծանելոյ ինչ՝ տայր նկարել քարտուղարին զանպարտ նորին, և վերստին վաստակէր յայն. և յամենայն վիպոմանութեան՝ պարս էր քարտուղարին նորոգ յօրինել զանպարտն: Սահմանեալ զօրինակ գրոշմածոյն, կոչէր ապա զՊուշարան գծագրիչ Ճեմարանին. և յետ երկար խորհրդակցութեան ընդ նմա զնոսա և զամենայն յարակից երանց՝ որ ի նմա, տայր յօրինել Ճարտարին զնախագիծ ուրուագիսն, և մերթ միւս ևս: Եւ ի կատարել ապա ուրուագծին, աւանդէր զայն ինդրոցն հանդերձ յիշատակարանաւ՝ որ զնորհնդրդ գրոշմածոյն յայտ առներ. յաւելեալ ընդ նմին և նամակ, յորում և ոչ կարի իսկ կորովարիւք չկարեին ապագանել ինչ, ոչ ի տառն, ոչ ի կէտս, և ոչ իսկ ի ծայն: Եւ ի հաձել արքային ընդ ուրուագիծն, աւանդէր այն ի քանդակ. և Պող մինչև ի կատարումն իսկ քանդակին հակէր:

Ասասնօր ինձ յուշ անկանի գժուարութիւնս կարճաւութիւնն իմ ընդ այնքան ՀՌՀԻՄ քննութիւնսն. այլ գժնդակագոյն ևս կրեցի կիրս յետ մահու նորա, յորժամ ի Ճեմարան անգր դարձաւ հոգ յօրինուածոյ գրոշմածոց, որում ինքն իսկ Ճեմարանն վերէ ինդիր լեալ էր միշտ. յորժամ վերակացուք, ուրոց գործ էր առաջի առնել զօրինակ գրոշմածոյ երբեք կամ

արձանագրի, գանձագրեին ի Ժողովին, շատ համարեին ընդ մի միայն նախագիծ օրինակ, և վաղվաղեին եղանել ի բաց յոր-ժամ առաջարկեալ ի վերակացուաց անտի օրինակն ի Ռեմա-բանին, Ժողովք ի նանիր համախրմամբ ի քննութիւնս և ի վէճս առանց վճռելոյ ինչ՝ կատարեին. և յորժամ տեսի զնե-ռագիս այնպէս անտեսուց մնալս, զի ի գրոշմած անդ-գրոյն Լուդովիկեայ հիգեռասանեերորդի տեսեալ փորագրո-ղին՝ զի տառք արձանագրի խաբսիին լինեին մանուանք յոյժ և անընթեռնելիք առանց մանրացոյց դրծոց, փորագրեաց որ ինչ տառք նոցա ի միտս եկին, որպէս զի չտալ նոցա խմատս ինչ։

Յառնեի ընդ առաւօտս ի հինգերորդ Ժամու. ի վաստակս. և լինն Ժամու երթեալ առ Պող, վաստակեի առ նոսա մինչև ցերկրորդ Ժամ յետ միջօրեի. և եթէ չէր ինձ հրաւէր Ճաշել առ նոսա, դառնայի անդրէն, և վերստին վաստակեի մինչև յեօթներորդ կամ յութերորդ Ժամ։ Եւ ծանր էս էր ինձ հպատակել տաժանաւոր Ճշդութեան նորա։ Ի մեկնելն ի-մում ի սենեկէ նորա զերկրորդ Ժամուս առ ի դառնալ անդ-դրէն, թողուն ի վերայ սեղանոյն գրեան բաղում առանց խել-ցոյ, քանզի պարտ էր ինձ վերստին հետաքննել ինչ ի նոսա. այլ անդատն յառաջանէ օրէ գիտացի, զի ինքնին իսկ Պող բարձեալ զգրեանն և ի գաղտնս անդրէն զետեղեալ էր։ Ի ցուցանել իմում նմա զհամառօտագիծ պատկերս վաստակոցս, ի զուր էր ինձ յաւելուլ զի վեր ի վերոյ ինչ առ ի փոքր յօ-ղմնեալ էի զայն։ զի ինքն մարթէր ինձ զերծանել ի խնամ քն-նութենէն նորա, որ զմոգակեաս ինիոյ յաւելոյր գնել, ինձ որ յաՀնին զմոգակեա առանց ինիոյ գրեի։ Զհանգուրժէր նա ընդ բան մի ոչ բարոյ պատկանեալ, և որոմեր ընդ բա-ցատրութիւն ինչ անասէր։ Ա յորիկ բաղում այն էր զի քաղ-ցրութեամբ անցանէին, և էր զի գառնանայր նա սակաւ ինչ, և ես յաւելուլ ի բաղում հրաւէրեն. քանզի խէրամաս էի և եմ իսկ, զի մանրաքնին խոսութիւն նորա կարաւոր էր ինձ։

Վասն սովորական ախտարութեանցն չէր կարացեալ նորա կատարել զդասակարգութիւն գրոշմածացն արքունի ածե-լոց ի Վերսալեայ ի Լուսանախ։ Գամ ի պահարանս իւրաքան-չիւր զարդի և զվաղեմի գրոշմածս, և զդրամս և զդրամանեն

9054-57 1059

խաղալիկս դեռ ևս յարկէզս։ Հանի զնոսա, և ըստ ցուցակացն տուգդեալ՝ դասակարգեցի զնոսա։ Հանի յարկեզաց զդրոշմածս մարգարէսին Եղիշեայ, զորս ամենք ինչ յառաջ սաստցեալ էր արքային, և որոց երբեակ կարգք էին. առաջին՝ վարպետներք պղնձի գրոշմածք ինքնակալացն, երկրորդ Թագաւորացն Յունաց, և երրորդ՝ քաղաքացն Յունաց։ Պարա էր դասակարգել զնոսա ընդ գրոշմածս արքունի, վասն որոյ և բաղդատել և նկարագրել մանրամասնաբար զգրոշմածս և գծալա՛ի պահ, և նորոգ ցուցակաւ հրատարեալ՝ի հինն զնքն գրոցս։ Ի կատարել զբաղմամեայ վաստակաց զայսոսիկ ընդ տեսչութեամբ Պողոսի զիրոյ առնուի զհմտութեան նորա։

Գիտէ՛ք է ասա, զի ընդ վարպետներք գրոշմածս մարգարէսին Եղիշեայ գտանին երկիրս ոմանք, և այլք յայտնի իսկ անհարազատք. այլ քանզի հրատարակեալք են, լաւ համարեցաւ Պող Թողուլ զնոսա՝ի կարգի անդ, և յետուս իսկ՝ի ցուցակին, որպէս զի մարթ իցէ պահպանին ցուցանել զայնոսիկ՝ որոց կամիցին քննել։ Սարքն իսկ ազատաւ և զայլ գրոշմածս ինչ անստոյգս եթող յայլս՝ի կարգաց։ Եթէ երբեք վերստին դէպ լիցի հրատարակել զկարգս գրոշմածաց Թանդարանին, խնամ կալցին հրատարակողք հանել զանպատանաւորսն՝ի բաց։

Ի նմին ժամանակի ևս Պող գնել և զչքնաղ կարգ կայսերական տուտար գրոշմածացն պղնձեայ, որք՝ի Թանդարանէ Ռոթելնի անցեալ էին՝ի Թանդարան Պողոսի. և այն ևս յաւելաւ վաստակ։

Դարձեալ և զԹանդարան հնութեանց սկսայ զառաջինն դասակարգել՝ի վերայարկի ուրեք Թանդարանին գրոշմածաց. և էին անթիւ անհամար գրոշեալք մանուանք, կանթեղք, անօթք, Ճանկք և գործք, որ առ հասարակ շեղջակուռեալ կային՝ի ձեզուան, և զեռեզեցի զնոսա վայելուչ՝ի գարանս և յորմս։

Այլ ինչ սկսեալ էի զվաստակն, և ահա հասանէր ինձ թղուլ զայն։ Մինչև մեկնեալ՝ի Նարբոնեանն Գաղղիոյ, ըստ նախապատուէն խնդ բանի, խոստմունս արարեալ էր իմ Պոսեի։ Ի դէպս բազումս ընդարձութեանց եպիսկոպոսաց՝ի մուռացունս լեալ էր նա, այլ յետոյ ուրեմն յամին 1745 ընտրե-

42-2020

ցաւ. Եպիսկոպոս Ի Պեզիէ. և գրեաց նա առ իս զընտրութիւնն, յիշեցուցանելով ինձ զնոստումն իմ. և ապա ուժգին ևս Ի գալն Ի Լուսեսիա յիշեցոյց ինձ զայն։ Թուեցաւ ինձ յայնժամ միակ հնար հրաժարելոյ Ի խոստմանէ իմմէ, կացուցանել զնա ինքն զատաւոր իրացն։ Որոյ արգելս խելամուտ լեալ, զի անհնար էր զակառելումս բուռն տենչիս զհետ բանախրութեան՝ ասել զանձն աջողակի և առանց անհնարին Ոչ գանց յայլ ազգ ուսման, և ոչ կամեցեալ պահանջել յինէն զասժանաւորն Նուէր, եթող զնս ազատ, պահեալ ընդ իս զբարեկամութիւնն։

Չէրծեալ Ի խոստմանէ անտի, ըմբռնեցայ գրեթէ անդէն կամակար յայլ խոստումն՝ որ կցորդէրն զնս անլոյծ ընդ ցանկալին իմ։ Պիւռեմի կանանորդ Ռեմարանին բանախրութեան վախճանեցաւ յամսեան մայիսի յամին 1747, և ընտրեցայ ես Ի տեղի Նորա։ Պարտ էր ինձ ոսոխել ընդ Պոլ մերտակից ազգեալ. այլ նա եթող ինձ ազատ զասպարէզն։ Նա յետ սակաւ ժամանակի այլ ինչ պարապեալ աստիճան, հրաւիրեցաւ նա յայն ամենեցուն ընտրութեամբ։ Բայց տպաւորեալ Ի պրսի իմում էր ազնուականութեան Նորա շնորհ. և իբրև Պուկանվիլ մեր իսմ բարեկամն իմ, մշանջեան քարտուղար Ռեմարանին կամէր վասն տկարութեան իւրոյ հրաժարել Ի պատուոյն, և առաջարկեաց զնս փոխանորդի ազգային Ի յաջորդութիւն իւր, և նա հաճեցաւ ընտրել զնս, հրաժարեցի յայնմանէ, և ազատեցի զերկպանչիւրն նախամեծար առնել զՊոլ։ Այլ նոքին իսկ յետ ոչ բազում ինչ ամաց դաեալ զհնարս դեղեցիկ վերաժիդրութեան, տասց ցնս. Պարտ Ի ինձ Թողուլ զպաշտան իմ, և զի Ի քէն զայն ընկալայ, քեզ ընծայեմ զայն։ Որում եառս պատասխանի. Այլում զպատիւն Թողում, այլ ոչ ումիք զբերկանս խոստման ընկալոյ՝ զի ոչ է մարթ յաղթել քեզ Ի պարգևս։

Մինչդեռ հանապազորդեմ Ի վաստակս ընդ Պոլ, անկաւ նա անդամալոյծ յամին 1753, և յետ ոչ բազում ամաց վախճանեցաւ։ Պոլ իսկ Ի բազմաց հետէ ամենեքին ինձ հաստատին անկ գլաշորդութիւն Նորա, և ոչ ոք կարծէր թէ գոյն ոք ինձ ոսոխ Ի պաշտաման՝ զոր ստանամեայ անգուլ վաստակեալ իբր զբարութեամբ բաղեմ ստացեալն էի։ Սակայն Ի վաղիւ

անդր յետ մահու նորա, մի'ի կաճառակից ընկերաց իմոց՝ զո-
րոյ ոչ ինդրեցի երբէք գիտել զանունն, համարձակեցաւ ո-
սոխել ընդ իս։ Անկաւ նա առ Արժանոն մարդիզ՝ եղբայր
փոխանորդի արքային, որ 'ի նախկին յոյզս ցասմանն իրազեկ
արար զիս, և ծանոյց զայն եղբօրն։ Եւ 'ի խնդրել նորա ըզ-
պաշտպանութիւն այլոց, խառվեցան բարեկամք իմ. և Մա-
լէրպ, որ էր յայնժամ տեսուչ մատենադարանին, նախ նա
ինքն դիմագրաւեաց լի նախանձու բարեկամութեան ընդդէմ
անիրաւութեանն՝ որ պատրաստէրն ինձ։ Նմա հզօր պատսպա-
րան եղեն ըստ աղաչանաց Պոմպարտայ և կոմսին Քայիլիւ-
սեայ, որ հասարակաց բարեկամքն էին մեր, մարդիզն Կոն-
թոյ՝ որ ապա դուքս, և կոմսն Սթենվիլ՝ որ ապա Շուազէօլ
դուքս, զորս չև ևս իսկ ճանաչէի։ Եւ այնպէս դէպք 'ի բարի
յաջողեցին փութոյ նոցա, զի 'ի գնալ կոմսին Արժանոնի
առ արքայ 'ի գործ, և 'ի գուժել նմա զմահն Պոզայ, կանխեաց
թագաւորն ինքնին անուանել զիս յաջորդ նորա. որում պա-
տասխանեաց Արժանոն, զի յայն իսկ եկեալ էր՝ հարցանել
զայնմանէ զկամս արքայի։ Ի վաղիւ անդր փոխանորդ արքային
ծանոյց ինձ զընտրութիւն իմ, և թուէր դժկամակեալ ընդ
երկմտութիւն մեր զնմանէ. սակայն մինչև 'ի սպառ բարու-
թեամբ վարեցաւ նա ընդ իս։

Ի դառնալ ամին՝ Սթենվիլ կացուցաւ դեսպան 'ի Հռոմ։
Քաղցր է ինձ յոյժ յիշատակ տարւոյս, զի յայնժամ յաջո-
ղեաց ինձ յառաջադիմութիւն, և որ մեծն ևս է՝ բարեկենդա-
նութիւն։ Ձէր լեալ ինձ երբէք պատեհ շնորհ ունել նմա զե-
ղբախտեացն, զոր արար նա ընդ իս՝ մինչ ոչն իսկ ճանաչէր
զիս. արդ յայնժամ առաջի կային դէպք բարեպատեհ։ Ընդ-
տրեալ էր նորա իւր քարտուղար դեսպանութեանն զՊուայէ
բարեկամ իմ, որ և ած զիս առ նա. և հիւրընկալութիւն նո-
րա ազդեաց յիս վստահութիւն 'ի նա և սէր։ Ցհարց նա ցիս,
թէ ո՞չ 'ի դէպ էր վասն վաստակոցս իմոց ուղևորել ինձ յՌ-
տալիա. և 'ի պատասխանելն իմում զարժանն, փութացաւ
խօսել զայնմանէ ընդ Արժանոնի. և յետ երկուց աւուրց
եկն առ իս Պուայէ ազդ առնել 'ի դիմաց նորա զուղևորու-
թեանն իմոյ զՀրման։ Փութացայ առ դեսպանն 'ի շնորհա-
կալութիւն. և 'ի սպառ 'ի հիացման եղէ յասել նորա ցիս՝ զի

պարա էր ինձ ուղեկից ընդ նմա լինել, և ի Հռոմ առ նմա մնակել, և կառս հանապազոր ունել ինձ ի սպասաւորութիւն, և զի նա ինքն յանձն առնոյր դիւրել ինձ զուզութիւն և ընդ այլ կողմանս խաղալոյ։ Զև նա խնամասիրութեամբ խելամուտ արարեալ էր զիս արժանապատուութեան մարդոյ, և շփոթեցայ ի շնորհակալս, ոչ ի ձեռ ուշ ի կուրծս անկեալ զի և բարեբարս ինչքին բարեբարի ի խոնարհել բարեարելոյն ընդունել զզարգեա նորա։

Գործ հասեալ արքունի հարկ արար յամել ինձ ի ջու, և խափանեցաւ ուղեկցութիւն իմ ընդ դեսպանին։ այլ բարեկամութիւն փոխարինեալ աւուժիցն։ Կոմն սեսուչ գործարանին գրաշմածոց, ընդ որում էր ինձ բարեկամութիւն յոյժ, խորհեցաւ յոգուս արկանել զզաստութիւն, և կատարել զրազմաժամանակեայ խղճս իւր սեսանելոյ ղնատիս։ Ուրախ եղէ յոյժ ընդ այն։ զի ոչ միայն հմտութեամբքն և այլովք մասամբք օգտակար էր ինձ ուղեկցութիւն նորա յանկալի։ այլ զի և ոչ առանց օգնականութեան նորա մարմն էր ինձ յալթել զժուարութեանց երկար ճանապարհորդութեն։ Փութացայ ազդ առնել դեսպանին։ և նա պատուիրեաց ինձ հրաւիրել զնա ի ճեանել առ իւր։ Յամին 1755, յամսեան օգոստոսի ուրոյ եղեալ, և հասեալ ի Հռոմ յառաջնում աւուր նոյեմբերի։

Վաղ իսկ Պենովիլ անուանի լեալ էր անդ, որ և ընդ հայմայն Եւրոպա եղև ապա անուանի։ ոչ չքոլն, որ յապարանս նորա փայլեալ՝ յայտ առնէր զվեհագունին ի պետութիւնս զերկրագործան, տապալեալ զհամբաւն։ այլ զերազանց հանճարոյնն, և ազնուականութեամբ՝ որ յամենայն գործս նորա փայլէր, և կամարդութեամբ ինն՝ որով նուաճեր զոչիսս ամենեցուն զոր յինքն կամէր յարեցուցանել, և անյողդողդ հաստատութեամբն՝ որով պատկառեցուցանէին զայնոսիկ զոր ոչ արժան համարէր ի գործ իւր։ Յանդիմանարան դեղ հոգւոյն զշրատեալ ձգեաց նա զրենեզիկոս ՅԳ։ և զխոհակաղագոյնս ի սրբազան կաճառոյն, աջող համարձակութեամբն ի գործառնութիւնս . . .

Յիկին նորա, դեռ ևս ուեթատանանակայ, յայտնիսի մեծարանս էր՝ որ բազմաժամանակեայ առաքինութեան սովորաբար

է անկ։ Ամենայն ինչ ի նմա հաճոյ էր, հասակն, կերպարանքն, քնքուշ առաջքութիւնն, աշխոյժք ի բանս նորա և ի գործս, փոյթ հաճոյ լինելոյ՝ որ առաձեռն պատրաստ էր նմա, և որով բովանդակ յինքն գրաւեալ էր զսիրտ փեսային զարժանաւոր սիրոյ իւրոյ և մեծարանաց, և գիւրագրգիռ զգայութիւն նորա՝ որով կարեկից թշուառութեան և բարեբաստութեան այլոց գտանէր, և անբծութիւն սրտի այնպիսի՝ որ ոչն ներէր նմա կասկածել ինչ զուսմբէ չար։ Զարմանալի էր միանգամայն ի նմա այնքան գիտութիւն ընդ այնքանոյ պարզմտութեան կցորդեալ։ Խելամուտ լինէր նա ի հասակի, յորում հազիւ այլք սկսանին խօսիլ։ Ընթերցեալ էր նորա հանդէպն բերկրանաբ և օգտիւ զբաջս ի մատենագրաց մերոց ի խորին և լրմտիր ստացուած։ Ցենչ բանաիրական յանկոյզ լիս զնեղրողմտութիւն նորա և զվեստին իւրոյ. և յայտմէտեն եղէ նոցա անձնանուէր, առանց գուշակելոյ զարգասիս նուիրման իմոյ։

Յետ աւուրց ինչ հասանելոյ մերոյ ի Հռոմ, էած զմեզ գեղապանն առ Բենեդիկտոս ԺԴ., որում ընծայեցուցեալ էր զմեզ յառաջագոյն. և քահանայապետն ընկալաւ զմեզ մարդասիրութեամբ։ Մեկնեցաք ապա վաղ ի Հռոմայ գնալ ի Նէապօլիս. և անդ պարապեցաք ամսօրեայ աւուրս ի զնին ցանկալեաց քաղաքին և շրջակայ վայրաց։ Ցետաք զՆապոլիսն ի յիշատակ հելլէն Ճարտարապետութեան, որ կայ իբր երեսուն փարսախաւ հեռի անդր քան զՆէապօլիս, ի տեղւոջէ՝ ուր երբեմն քաղաքն Պէստոն կառուցեալ կայր։ Մրահաք ապարանիցն Փոքթիչի, ուր հաւաքեալ կան իբր վաղեմիք գլուխաք յատերակս քաղաքացն Հերկուլանեայ և Պոմպէի, Տգէին զմեզ յաշխոյժ առ իւրեանս։ Ցետաք մեծաւ զարմանալեօք և զեկարագործ զանթիւ պատկերացն բարձրութիւն և զանդրեացն ամրողջից և զկիսաց, և զբազում ապդի ապդի առնօքմն և զգործս. որք էին առ հասարակ գեղոնի կամ պիտառութեամբ նշանաւորք։ Այլ մեծագոյն ևս կարեկցութեամբ տեսաք զձեռագիր մատեանս իբր հինգ հարիւր, գրեալս ի տարերկրեայ ուրեք տեղւոջ Հերկուլանեայ, և թողեալս անտեսս ամենապարտ անհոգութեամբ. զերկուս ևեթ կամ զերիս ի նոցանէ վերծանեալ և բացարեալ գիանաւորին

Մացոբեայ, և քանզի կարեւոր ինչ յերիսն յայնոսիկ ոչ գոյին՝ ձեռնեմտի լեալ ի վաստակոց։ Հաստատէին ամենեքին զի վերսանին հանդերձեալ էր սկիզբն ընեել վաստակոցն։ այլ սակս կալութիւնս այս չեին յարգիւնս։ Աչս յետ ժամանակաց խոսեի զայնմանէ յաճախս ընդ մարդիսն Քարաշխալն զեւսան Նեռայոլայ ի Գաղղիս, և գրեցի իսկ առ նա յորժամ եկաց փոխանորդ արքայի։ և ետ ինձ պատասխանի, զի հրաման իսկ լեալ էր առաջարկութեանն, և զի առ ի վարագոյն կատարումն գործոյն խորհէր նա բաշխել զվաստակն՝ եթէ հնար էր՝ յայլ և այլ հոլս գիանոց, և յղել հետզհետէ զոմանս ի ձեռագրաց անսի առ բանասիրսկան Ճեմարան մեր, այլս առարքունի կաճառ Լենգինոնի, այլս ի համալսարանն Գոռոմնագայ, և այլս այլուր։ Այլ յետ երկուց ամուց հրատարակեցաւ մեհ նորա ի լրագիրս։

Ի դարձին խնամ անդրէն կամիկ առաջի առնել հնագիտաց զբրնեակ հնագունի հելլէն գպրութեան։ Մատեայ առ Մացոբի, և նա ծանոյց ինձ զի ոչ էա էր հրաման ցուցանելոյ ուրեք զմատեանն։ Փատերնոյ պահապան աւանդիցն ի Փորթիսի, և նա զնոյն էա ինձ պատասխանի։ այլ եցոյց ինձ մի ևեթ ի գրոցն վերուստ ի վայր հատեալ ի գասեալ անդ զմատեանն, և էին ի նոսա տողք քսանեւութ։ Ընթերցայ զայնոսիկ հնդիցս կամ վեցիցս։ և ապա երբև ի պէտս ինչ ի վայր իջեալ ի գաւիթն, գծեցի զհաւատաց նոցա ի թերթ ինչ թղթոյ, պահելով ըստ կարի զդիր և զձև տառիցն։ և գրաձեալ անդրէն բաղդատեցի մեզ զդաղափարն ընդ ընդարձին, և հնարիւք ինն ուղղեցի զերկուս կամ զերիս վրիպակս՝ որ ապրդեալն էին։ Եւ էին խմատոք հատուածոյն զհաղորդանացն՝ զորս նախնի խմատասէրքն կրեցին, բաց Յեսիկուբեայ։ Ալաղ ընդ փոյթ առաքեցի զայն առ կաճառ բանասիրացն ի Լուսոտաս, ապաղերով մի հրատարակել զայն, զի մի հասցէ ինչ վնաս Մացոբեայ և Փատերնոյի։

Ի ժամանակին յայնմիկ մարդիսն Օսէն, զեւսան Գաղղոյ ի Նեռայոլիս, ծանոյց ինձ՝ զի Թագաւորն իրազգէ լեալ վասն որոյ եբաց եկեալն էի, կամէր տեսանել զիս։ Եւ էր յայնժամ Թագաւորն ի Հոյաշէն գզեկին իսրում ի Քաղքիթա, զորոյ տայրն իսկ կատարել զչինուած։ Յանդիման եղէ

նմա ի Ժամ Ճաշուն. և խօսեցաւ ընդ նա խնդութեամբ զդէ-
ութիւն որ ընկեալն ի սահմանս իւր. և ասասէր, զի վասն սա-
բաթայութեան պահպանի գրուեցեալն՝ չէր ինձ մարթի տե-
սանել զայնոսիկ. և հրամայեաց ցուցանել ինձ զսիւնն մար-
մարեայս վսեմս, որ այն ինչ բերեալ էին ի Քաղքերեմս. և ետ
գրել զնս ի համար այնոցիկ, որոց հետզհետէ բաշխելոց էին
հատուցք հնախօսութեանն հերկուլանեայ։ Հոգ երկայնութ-
եանն յանձն էր ի Պայմ՛ասի վերապատուեալ ի Հռոմայ
գահիցն, զոր ասացայն հրաւիրեալ էր առ ինքն։ Այլ ընդա-
ձակատարք մեզ և անխոնջ ի խմբագրել, սենեակելի ըստ
հանգամանաց հոգւոյն, և յիշողականաւն ահարկու այնոցիկ՝
որ լսէին նմա կամ զդիրս նորա ընթեռնուին։ Պայմ՛ասի պա-
տրաստեալ էր յամենայն ազգի ազգի մասունս բանասիրութեան,
և չեզջակուտեալ ի գլուխ իւր չեզջակոյտ անհեթեթ և ան-
կերպարան հմտութեանց՝ որ խառն ի խուռն յորգէին ի
նմանէ։ Ի նախաշաւիղ երկոցն ոտիցն նա զցուցակ առանձին
առ հասարակ պահէլոց ի Փոքրիկի, ի մատեան մի անձամբ։
Եւ քանզի փորագրութիւնք ձեռոց նոցա չև ևս պատրաստք
էին, հրաման էառ յարքայէ յեռուլ ի Ճակատ լայնաձաւալ
մեկնութեանն յառաջաբան, ազգ առնելով զնուական, ըզ-
կարգ և զոգնակարութիւն հերկուլանեան երկրորդի հեատ-
զատութեանցն։ և հատորս եօթն քառաձաղս ի լոյս էած, չև
ևս սկսեալ զառաջարկութիւնն։

Առաջի առնեմ ասասնոր զկարգ մատենագրութեան նորս
յորմէնակ այնոցիկ, որ փորձիցին նկարել ի նմանութիւն նո-
բին։ Զի որոց միանգամ բուռն հարեալ էին հնախօսել զար-
ձանաց, պարտ է յայտ առնել նոցա զհամամատութիւնս նո-
ցին. այլ զոր չափս պարտ էին նոցա ի կիր առնուլ։ Ասեմ
դրուագք երկայնաձիգք զչափուց ասօրեասանեայց, զբաբ-
լացուց, զՊարսից, զՅունաց, և զհռոմայեցւոց։ Զի բազմա-
գոյնք յարձանացն հանեալ էին յաւէրակաց հերկուլանեայ.
և զի անուն հերկուլանն, նոյն ընդ հերակլեա, ընծայի
քաղաքաց բազմաց. պարտ է ապա ճառել զհանուրց քաղա-
քացն։ Ասի արշաւանք յաստաբէլս նախնի աշխարհագրու-
թեան։ Զի հերկուլանն կառուցաւ ի հերակղեայ. բայց
բազումք եղեն դիւցազունք հերակղեանք, սիւրականն, և

գիտացին, Յոյնն, այլովքն հանդերձ. ապա պարտ է զնեա տապտակութեանցն նոցա գնալ, և հետապնդել թէ յորմէ՞ի նոցանէ Հերկուլանոնս այս իցէ կամուցեալ։ Ասսի սրշաւանք յապարէզս զեցարանութեան։ Յայտ իսկ է զի ինդրոց այսպիսեաց դիւրին էր ածել հասուցանել զմտաւնագիտն մինչև յերկոտասանեերորդն իսկ ի հատոր։ այլ ըստ ձախողակ բախի մատուցան նմա ազաչանք զկայ առնուլ ի գեղեցիկ տապարիզին։ և յետ ատկաւ ժամանակի գարձառնա ի Հռոմ, ուր գնացի նմա յայլ։ Եւ ի հարցանելն իմում թէ Էր Նորա ի մտի կատարել զյառաջարանութիւնն, եւ պատասխանի զի թողեալ զայն առ ժամանակ մի, պարապէր առ ի հանդիսս ի խմբագիր համաշխարհական պատմութեան, զոր խորհէր ամփոփել յերկոտասան հատորս երկոտասանածայր, և ի յառաջարան մատեանին լուծանել ինդիր ինչ կարևոր յոյժ ասելարարշաւութեան և պատմութեան։ այն էր գտանել յերկինս զկնան՝ ուր էգ Աստուած զարեգակն ի տեղծանելն զարշաւարս։ և գտեալ իսկ էր Նորա զկնան զայն, զոր և հցոյց ինձ յերկնագնեմ։

Թերևս երկայնեցի յոյժ զՀառս, որ յայսգս գերասպասիս Ցեառն Պայարտեայ. այլ քանզի զանձնէ առաջի կայ ինձ խօսել, և թէ առաւելինչ զբարեկամաց ոմանց, կատարեցից զՀառս Նորա, պատմելով զառաջին այցելութիւնն իմ առ Նա ի Նեապոլիս։ Գտի զնա ի սրահի մեծի, ընդունեալ ի հարբուխ սատակի՝ որ արգելոյր զնա ի բազմոցի, որոյ առ սիրն ինքնին յայտ առնէր զդարմանեայ սպասաւորութիւնն։ Զգեցեալ էր նա հեռոս, զորս մարթէր կարծել ի զգեստուց անտի հին ընակչացն Հերկուլանեայ. և պարապէր նա յայնժամ ընդ քարտուղարին։ Ազաչեցի զնա կատարել զբանն, և նրատոյ առ ստորև բազմոցին։ Մինանձուինք ընակեալք ի Կաշարբիա հարցանէին զնա յայսգս հերձուածոյ իրիք՝ որ սկսանէր շուրջ զնոքօք սարածանել։ քանզի ազդ լեալ էր նոցա զի Կոսպերնիկ ամն շրջան տայր երկրի զարեգակամբ։ Եւ զինչ պարտ էր ասել ըստ ազատաց սուրբ գրոց, որ երկրիս յաւանան ասել կալ։ զինչ զՀեղեսայ կացուցանելոյն զարև, և զինչ զվիայութենէ զգայութեանցս։ և մրպէս ոչ ի վայր անկանէաք, եթէ պարտ էր մեզ դիշերի դիմիվայր կալ։ Եւ

պատասխանէր վարդապետն երկար և խմստուն բանիւք առ ինդիրսն իւրաքանչիւր, պահէալ զՀչմարտութիւն սուրբ գրոց, բացատրեալ զբրէնս Ծանրութեան, և հերքեալ զղպարտութիւն զդայութենացս մերոց։ Եւ վարժեան առներ բանիցն, խրատելով զմիանձունսն՝ մի անհանգիստ առնել զանձին կոպերնիկեայ զվաղ իսկ ցրտացեալ, և ՆՆՔԼ յանդորր ի խաղաղութեան որպէս միշտ։

Եւ կատարեաց զպատասխանին, բազում անգամ ինդրելով յինէն ներումն. և ես ասացի ցնա, զի յայրպէն Գաղղեոյ հրաման հասեալ առ ես ՀՐՔԼ Յոստլիա՝ ի ինդիր գրոշմածաց՝ որ պակասն ի Թանգարանի Նորա որոյ ինձ յանձն է պահ, ինդրեի Հանաչել անդ և զՀնագիտս բազմաՀմտաս։ Զա այս Եբարձ նա զդէմաբին, և յաւել յաճախել բանս պատուասիրականս, Հաղալով ասէպ։ . . . Եւ ապա սկսաւ գանգատել զդանգաղանաց վաստակոցն ի Հերկուանան, զանՀոգութիւնն պաշտօնեիցդ յաղագս ձեռագիր մատեանին, և զմախանացն զոր գտելոց ընդդէմ իւր վասն մեծարանաց Թագաւորին։ Եւ ի յիշել խմում, չգիտեմ առ ինչ, զկոման Քաղիլիս, գոչեաց անդէն. Եւ սրպէս, Հանաչէս իսկ զնա. նա բարեկամ իմ է։ Եւ փոխեալ յանկարծ զխօսան ի գաղղիարէն, ասէ թեզքեկ բարբառուն. Չմենչ ես գրեաց Քաղիլիս. յաւելս ինչ այլ զնոքին։ Եւ առանց մեզոյ լսել զպատասխանին, հնչեցոյց զանգակ, և ես ածել սուրբ մի մեծ՝ ի Թերթիւք, որ էին քերթուածք իւր ի լսելն ասող. և ասաց ցիս լսել Հասուած ինչ յայնցանէ։ Եւ ես պատասխանի՝ Թէ մատդիւք իսկ. բայց տեսանեմ, վարդապետ, զի նեղդ զքեզ Հաղ։ Կա ես պատասխանի. Թեթև է ինձ ամենայն նեղութիւն առ ի հայթայթել զբօսանս քեզ։ Եւ ընթացաց զմի ի քերթուածեանցն՝ մակագրեալ Անդամանանաց նիւթագիր։ Ոչ միայն պատճառք ասելոյն օտար էին ինձ, այլ և զի խառազոյնք այնպէս տպաւորագանութենէնս մերմի ընթեռնուն զասածն, զի գեղոյ տալոյն ոչ հասու լինիմ։ Զորս զդայեալ յետ հարիւրեակ մի տողից ընթեռնլոյ, զի ի չքնաղ խմստուն յայնոսիկ պարս էր խոսկալ ուշիւ՝ առ ի քաջ՝ ի միտ առնուլ, եթող զայն և էաս. զքերթուածն ԱՅՊԻՒՐ Թրեւ։ և ասէ ցիս. Քանզի ի Հռոմայ գամ, տեսեալ ինչ քս արգեօք ասէպ զարմացմամբ զդէ-

զեղջին զայն ապրիլը . անդ իակ եմ ես ի բանալ ապրելն , և ասիան քրիստոնական ազգեցաւ յիս , և ի քրիստուածս յայս ուղղօրէն զեղի : Յայնժամ ի զուր Ջանացայ դադարեցուցանել զնա , ասելով . Վարդապետ , նեղէ զքեզ հաղ : Հարի եղև ինձ ասել զայն ծայր ի ծայր . և այս եկն խմաստք ասելոյն :

Դիմի քրիստոնն ի նորաշէն ապրիլն , տեսանէ ի հեռուստ զվանին Պասիզան՝ որ բախէ երկաթեամբ զդէզդէզ կարկառս ժայռիցն ընդ ոտիւք իւրովք , և ըմբեցուցանէ ուրեմն ասասիկս : Պատչի յատազան անդր , ուր ջուրքն հանահանաքեալ ընծայեն տեսիլ պանչելի . զի նայագք ի նմա պարտուն : Խառնի և ինքն ի նոցին պարտ , անեւրեայի զորութեան ածեալ զնովաւ յանկարծ կերպարանս ելն երկնաւորս , և շուրջ պատեալ զնա ամենայն մնասմբք գեղոյ՝ որ ի նոր պարակիցս իւր փայլէին : Ոչ է հարկ ասել , զի ձեռն Հարտարք ի նկարել զանեւրեայի երակս ուղղոյ՝ քանի Հոխագոյն երանդովք կարէր յանդիման առնել զերեւելն եւ գեղեցկութիւնս զերբոյ չքնաղ պրակերպութեանն : . . .

Մինչդեռ նա առաջի առնէր ինձ զպատկերն զայն խանգարեալ շուտափոյթ ընթերցանութեամբն , և անընդելի լաւութեամբ , համեմատակի եւ զկերպարանս երբեմն յաւելմ հարսինն այնորիկ ընդ յայնժամուն կերպարանսն . ծնեան կորացեալ և թանձրաձեր խոզանացեալ , այսպէս վայրանկեալ և պիսակոտ , աչքն խորացեալ , և խորշոմք խիտք ի գէմսն անկեալ , այնպէս խրատուցանէին զիս , զի ի կատարել ընթերցուածոյն՝ յետ պատուասիրական բանից ինչ ասացի զքրիստոնն . Չկարեմ թանգուզել զի յետ այդպիսի պատկերպարանգ ձերոյ սակաւ ինչ կերպարանափոխ լեալ իցէք : Յարուցեաւ նա , և բարձր մասին գնասականսն վարկուցեալ՝ իբր թէ ընդբռանուի յոյժ , ասէ . Համբեր վայրկի մի եւ . ի Ղերեանց կերպոլ տեսեր զնս ցարդ , և արդ տեսցես զնս ի կերպ ասուածապարարկաց : Նս հանեալ յանսպառելի ոտից անտի երկդանեներին ինչ ասոյց մասեան ասուարարկաս , և ժողովեալ յինքն զորութիւնս իւր՝ սկսաւ նուազ ինչ օրհնութեան : Ալլ եռանգն՝ որով արարասանէրն , անդամին յառաջնոց առզնցն այնպէս դրդռեաց զհաղ նորին , զի թախանձ արկի նմա յայլում աւուր կատարել զընթերցուածն : Լուաւ նա ասա-

չանաց խնդ, Թէպէտ և ակամայ. և փութացայ խուսել ի բաց, եդեալ ի մտի ոչ ևս աշխատ առնել զՅոգնս նորա։

Սիրելի է ինձ յաւելուլ սատ զանուանս արանց բարոյից երևելեաց գիտութեամբ կամ կիրթ ախորժակիք, զորս ելև ինձ Հանաչել Լիտալիա։ Ցեռանեի յաղախ ի Նէապոլիս զկանոնիկան Մացոքի, զդուքսն Նոյա, և զկոմսն Փիանուբա։ Դիւժուաբին էր ուրեք առաւել քան զՄացոքի բարեպաշտութիւն և խոնարհութիւն ընդ այնքան հմտութեան միալուծ յանձին բերել։ Վասնակէր նա յայնժամ յարձանագրութիւնս գտեալս ի Հերակլիա. երկասիրութիւնն այն արձան ներհուն հմտութեան և անենկուն արիութեան՝ լինէր անթերի, եթէ չէր խակեալ յոգնախուռն ծանօթութեամբք. որք թէպէտ և բազմահմուտք, այլ տարակայիք են, զի չեն պիտանիք։ Կածոլս հիւրընկալէր բազում մեծարանաբք զեկս գիտնարս, զորս գիւրին նորանորք ձգէին ի Նէապոլիս։ Նոյայ ի գրբնմանց մեծին ևեթ յունասանի արարեալ էր հաւաքումն անբաւ. իսկ Փիանուբայն Թանգարան ոչ զմեծին ևեթ Եղլադայ, այլ և զամենայն ազգի ազգի գրբնմանս ընծայեր ի աւել։ Զբազումս յայնցանէ հաձեցաւ նա պարգևել ինձ. Թանանձի զնա յաւելուլ յայնոսիկ և զգրբնմանն Կուռնելիայ Սուպերայ, զորոյ այն ինչ արարեալ էր գրացաբարութիւն 1, յորում ցուցանէր զի դշխոյս այս էր սիկին Եմիլիանոսի ինքնակալի. այլ ոչ իշխեաց նա տալ զայն ի բաց առանց հրամանի արքային։ Աղաչէցի զՕսէան խնդալ զայնմանէ առ Թանանչ. զի փոխանորդ արքայի. այլ սա մեծասատ էս պատասխանի, զի եթէ գրբնմանդն ինդրելոյ գուցէ միւս այլ հաւասար ի Թանգարանին Փիանուբայ, կարասցէ նա տալ զմին. իսկ եթէ միակ իցէ, չէ հրաման Թագաւորին ելանել այնմ յիւրոց սահմանաց։

Ի հոսմ եղեն ինձ եղծորդութիւնք առաւել կամ նուազ ընդ Հայրն Փաշիանտ ի կարգէ Թէատեանց, ընդ Հայրն Քրիստի նի նախագահ կարգին բարեպաշտ դպրոցաց, ընդ Հայրն

1 Ի Թղթին առ գերապատիւ Հ. Յովհաննէս Փրանկիսկոս Պալբինի, նախագահ ուխտի քահանայից միաբանակիցաց Սամանկեան կարգին. ի Նէապոլիս. 1751։

Յաբիկ և ընդ Հայրն Սիւէօր՝ երկոքին կա՛ի կարգէ սրբոյն Փրանկիսկեայ պատուայեցուց, ընդ Հայրն Պոպովիչ յիսուսեան, ընդ Պոմթարի և ընդ Ասանմանի սեռաւոր վասիկանեան մատենադարանի, ընդ մարդիսն Լուքամենլի պատհասան նոքին մատենադարանի, ընդ Տէր Վէնուէթի, ընդ ասպետն Վենթարի, ընդ Ծիրանաւորս Փասսիսնէի, Ալբանի, և Սիմինել՝ ի սրում ընծայեցի իսկ զերկասիրեալն յինէն զբացատրութիւն պրենետեան միսիոնին։

Ի Փլորենսիա Ծանօթացան ինձ Սթոչ և Կոբի, ի Պիսաբան՝ Փասսերի, և Վէնիքաղ Օլիվիերի՝ առ որ ի գարձին խնամի՝ ի Գաղղիա գրեցի գիր յայտգաս արձանագ ինչ փիւնիկեցւոց։

Յամին 1757, ի վերջ յունուարի գարձաւ Սթենվիլ ի Լուսատիա. և յետ սակաւ ժամանակի ընտրեալ նա ինքն դեսպան ի Վիեննա, գրեաց առ իս յորդոր՝ գառնալ ընդ սիմինոջ իւրում։ Եւ ի հասանել մերում, Ծանոյց ինձ որ ինչ ընդ Սենիքրենիէնենոր փոխանորդն արքայի խորհեալ էր նոցա զնեին. զի պարտ էր ինձ գնալ ընդ նոսա ի Վիեննա, և անտի ապա ի դանեռուց արքունի շրջել ընդ յունատասան և ընդ կղզիս Արշիպելագեայ, և գառնալ ի Մասիլիա։ Թէպէտ և սիրելի էր ինձ յոյժ առաջարկութիւն նոցա, այլ հարկ եղև ինձ հրաժարել յայնմանէ. զի յետ բազմաժամանակեայ տարակայութեանս խնդ ոչ էա մարթի էր ինձ թողուլ ընդ երկար զմանգարանն գրոմմատեայ փակ։

Այնպիսի սերտ եղև ինձ կենակցութիւն ընդ Շուազէօլի և ընդ սիմինոջ նորա, և այնքան կցորդութիւն եղև նոցա ընդ անցս կենաց խնդ, զի անհնարին է ինձ խօսել զինեն առանց խօսելոյ զնոցանէ։ Մի ոք ապա զարմացցի, հանդիպեալ նոցա սուէպ ի յիշատակագիրս յայսոսիկ։

Ի վերջ կոյս ամին 1758 Սթենվիլ, որ ապա գուքս Շուազէօլ, կոչեցաւ յետս ի Վիեննայէ, կալ փոխանորդ արքայի ի վերայ երեսց աշխարհին ընդ օտարս։ Յառաջնումն Յուլիսի յանդիման ելեալոյ խնդ նմա, ասայ ցիս. Ինձ այսու հեռուն և սիմինոջ խնամ՝ անել է ի նեռամեր զբաստ քո, և քեզ յայտնել մեզ զնոցա քո։ Ապրեան մարդասիրութիւն ի վեր էր քան զանիկալութիւն իմ. և բռնադատեալ ասել Համարձակ, Եռու պատասխանի, զի հասք վեց հազար լիրայից յաւելեալ ի հաս

պահպանութիւն Թանգարանին գրաշնծաց՝ որ յիսն էր յանձն, բաւէին ի պէտս երկուց եղբարարդաց խնց՝ որ կարին ի վարժարանի, և միաւսին եւ՝ զոր խորհէի կուլ առ իս։ Բայց զայդ ընդ բանիցս շառագունեցայ ընդ տարապայման խնդրուած իմ. իսկ նորա ժպտեալ, վասայ արար զիս։

Վ կայութիւն գնեմ ասա, զի զայս եւթ շնորհ յամենայն կենաս իմ խնդրեցի ի Նմանէ և ի սիրելոջէ նորա։ և խոստացեալեմ իսկ, զի չէին ինձ պէտք Թախանձանաց առ Նոսա։ Իսկ եթէ դիտել ոք խնդրիցէ թէ ուստի ասա այսքան մեծութիւնք եղեն ինձ պարգևելոյն ի բանարարութիւն, ասեմ. Յանհրաժեշտ բերմանէ նոցա ի յարգարել զբարեկենդանութիւն այլոց, ի բարեգթութենէ նոցա՝ որով ոչ երբէք մոռանալ կարէին զնամն ուրուք, և վեհ և յաղնուական բնաւորութենէ նոցա՝ որով համարէին զն ի գործս սիրոյ եթէ ոք ոչ զամենայն զոր կարէն առնիցէ, ոչ ինչ առնէ։ Բայց քանզի բնաւորութիւն այսպիսի ազնուական՝ բաղում այն է զի ածէ վանդիչխանաւորաց, եթէ ոչ զայն ի չափու ունիցին, պարտ է ինձ և զայն յայտ առնել՝ ի բազում յանհամար դէպս զիտրձ առեալ, զի Շուաղեալ և սիրին նորա ոչ յանձն առնուին և զբաստուերս երբէք անիրաւութեան առ ի Նպաստս բարեկամացն։ Զկարացի երբէք փոխարինել իւիք ընդհանացն զորս ի նոցանէ ընկալայ. միակ այս ինձ մնայ արդ հնար, մնանցենաւորյաղագսատոմի իմում Թողուլ զդիշատակս երախտեաց նոցա։

Յամին 1759 Շուաղեալ ընկալեալ ընդհան ի Թադաւորէն յառաջ մատուցանելոյ զնդայրք իւր յեպիսկոպոսութենէ Եչրոմիկայ քաղաքի յարբեպիսկոպոսութիւն Աղբիոյ, եւ հանել ինձ մասն ի վիճակէ անտի հաստ չորեքչորսաղր լիրայից։

Յամին 1760 երևեցաւ երդ ինչ երգիծական այլաբանեալ ի վերայ մեոյ ի տեսարանացն Պինեայ ընդդէմ Օմանի գրքին և Արժանեալի։ Աղգականք և բարեկամք Օմանի յարուցին զարքունիսն համարեն ընդդէմ Մարմանեալի, կամեցեալ զն նորա զասուն զայն իցէ յարիներեալ. քանզի յընթերս ուրեք անդրաշարաբ ընթերցեալ էր նորա զայն։ Վասն որոյ Ջանահանար եղեն բառնալ ի Նմանէ զշնորհ տպագրութեանն Հերմեայ, զորոյ յաւելեալ էր նորա յոյժ զսորագիրս։ Եւ անեբկեան եւ վերժինդրութիւն առաջի արարին Շուաղեալի սիրնոջ, զի

Հ.Երմէա՝ զերծ յամենայն ծախուց՝ պատրաստեալ վրայս քան հազար. զի Թէթև ինչ խնամոյ գրչին պէտք էին ի նմա, յաջողեալով Նորին ի ձեռն վաստակիցս ընկերաց, և զի ի տալն ինձ զշնորհս տպագրութեան օրագրին այնորիկ, ոչ ևս էին պէտք խնդրելոց վասն իմ Նպաստս յեպիսկոպոսէն Աբբելոյ, որոյ ի մեզ եղեալ էր պահել ապնուականաց զօժիտս արքայից և զհասս Ճոխս։ Եւ պատմեաց տիկինն Շուշանիկ սիկինոն Կրամենի և Կոնեմոյն զառաջարկութիւնս զայս, և երբեքեան ի միասին խօսեցան զայնմանէ առ տիկինն Փոմիքատուր, յայսմ առնելով համարձակ զի ոչ կամէին լինել այնու միաստակարք դատաստանին Մարմոնթելի։ Բայց դուքն Շուշանիկ չէառ յանձն խառնիլ երբեք լիբան։

Զ.Մարմոնթել ոչ Ճանաչէի, բայց միայն ուստեալ էր իմ զնա երկիցս կամ երիցս ի տան Պոլսաժայ տիկնոջ. այլ ասէլի էր ինձ յոյժ Ժառանգել զկապուտ զառն վաստակաւորի. և զայս բանիս և գրով բազում անգամ յայտ արարի Շուշանիկ տիկնոջ։ Այլ նա համոզեալ յամենեցունց որ երթևեկին առ նա՝ զի յանցաւոր էր Մարմոնթել, և չէր մարթ թողուլ նմա զապագրութիւն Հ.Երմեայ, ոչ հասու լիներ դժկամակութեանս իմում։ Եւ ապաչեցի զԿոնեմոյ, ծանուցանել տիկնոջ Փոմիքատուրի զվասն էրն, և հաճոյ թուեցաւ նմա յոյժ, զի ոչ կամէր կործանել զՄարմոնթել։

Ի դժուարին դասնէի ես յայնժամ՝ ի կիրս. ասամ դորովէր սիրս իմ ընդ բարի ինամ հոգս, զոր տիկինն Շուշանիկ յայտնապէս ցուցանէր վասն իմ, և ես յամառ հրաժարմամբ դատաստարանի ինն զշնացս նորա, և զբարեբարոյութիւն նորա ցուցանելի բանաւորական ինն. և անտի զարձեալ թէպէտ և արքունիքն հակառակ էին Մարմոնթելի, բայց Լուսաւորիչ ընդ նմա էր. և բանաւորք առ հասարակ կուսակիցք լեալ նմա երդնուին քէն յաւիժական որում իշխէրն ժառանգել զպաշտն նորա։

Մինչդեռ հանդարտեալ թուէին ոգիք զաւուրս ինչ, և համարեի զանձն զերծ ի վասնգէն, յանկարծ ի մէջ էած Օմին դէր ինչ գրեալ ի Մարմոնթելէ առ ինքն՝ յորդորելով ձեռն թափ լինել ի ջնեից անտի։ Գիրս այս միաստակար եղև յոյժ, և զրգռեաց անդրէն զՕմին և զկուսակիցս նորա ի հալածանս։

Յայնժամ հատատաւեցաւ տալ ինձ զՇնորհն տպագրութեանն Հեղինայ. և զի ի հրաժարելն իմում յայնմանէ, կացի զայն Փլաս։ Յայնժամ գոչեցի ես վրիպակ մեծ. քանզի ածեալ զմտաւ, զի եթէ ի ձեռս անկանէր Փլասայ շնորհն այն՝ չեղանէր երբէք ի ձեռաց նորա, իսկ եթէ ես ընդունեի զայն, մատեթէր ինձ ի դադարել հակառակութեանց՝ զարձուցանել զայն ի Պարմանթել, գրեցի առ ոմիկին Շուաղէջ, ցուցանելով նմա զպատճառս՝ որ յորդորէին զիս յանձն առնուլ զպագրութիւն օրագրին։ Ցուաւ ինձ շնորհն, և բացան աչք իմ. ի միտ առի զաղմուկ զարանջանացն և զդժուարութեանց և զվատանգաց պատրաստեալ ի վերայ իմ, և հառաչեցի ընդ ձախողակի բարեսէրութիւնն իմ։ Ըստ յաշողուածոյ բախտի ընկալաց ընդ շնորհին գիր մի ի Շուաղէջէ, որ ոչ սակաւ հանգարտեցոյց զամբոխեալ միտս իմ։ Եկն ի հաս նա յերբկոյին յայնմիկի ի Լուսաբերա, և ջոգայ առ նա. և խրատ եւս ինձ փութալ վաղ առ Օմին, և առաջի արարեալ նմա զշնորհն՝ ազատել զնա թախանձանաք, գարձուցանել զայն ի Պարմանթել, ցուցանելով նմա զի ոչ գոյր ազնուականագոյն քան զայն և արժանաւորագոյն նմին վերժինդրութիւն։ Դիմեցի առ Օմին, ազատեցի զնա և թախանձեցի. ՝Քանզի յոյժ համոզել զնա, այլ էր նա յամառ՝ որպէս ամենայն միաք նուաստախոհք, և անողոքելի՝ որպէս ամենայն սիրաք վերջացեալք յայնուականութենէ։ Թուէր ինն առ վայր մի տեսի տալ, այլ անդէն ապա զվայ առեալ պատճառէր, իբր թէ չէր ազատ, այլ պարտ էր նմա խնամ ունել ընտանեացն։

Դարձայ տխրագին պատմել Շուաղէջի զամենայն։ և Հաց նա զիս առ օրին ի Վերապա։ Եւ իբրև հասաք անդր, յանձն արար ի Սէնիլբերնիթեն զպագրութիւն, և եհան ինձ ի հասից անտի մասն մի լիրայս հինգ հազար, որ կարի ինն Թուեցաւ ինձ։ Եւ ընկալաւ Փլաս զՀերմա, բայց հանգանակօգք նորին նուազեցին անդէն, մինչև խռովել յոյժ վարձուորացն։ Եւ առ ի ջղայրանալոյ խռովութեանն՝ Թոզի Լիթթոնի, որ ելն և մեզ տպագրութեանն վերակացուն էր, առնուլ ի հասից իմոց զբաշխոյս՝ զորս պարտ էր տալ շարադրողաց գրգուածս օրագրին։ Եւ յետ ամաց ինչ, ըստ յաշողելոյ բախտ, և զն ինձ հրաժարել ի սպառ ի հասից անտի։ Եւ ապա

գեռասցի՝ զի երգոյն երգիծականի քերթողն լեալ էր Քիւրի, և զի Մարմնեթել լաւագոյն հմտութեալ էր կորուսանել զնոյն ժուլթիւնս իւր քան մատնել զարիւկամն։

Պարապետցին ի Հեմարանին Գաղղեայ հետզհետէ և այլ առանձինք պատուոյ. իմաստասէրքն յիրարս պաշտպանք եղեն Մարմնեթելի, այլ հակառակորդաց նորա յաջողեաց միջամխական լինել նմա։ Եւ ի միում նուագի, յորում հաստատուն էս Թուէր յոյս նորա, Ագամնեթալ՝ որ ծայրելի ինն յանձին բերբեր գէմս յայլազանեալ տեսարանին կենայ, մոլեգին էս գրգռեաց զկաճառորդս՝ որ բարեկամք էին ընդ իս. և սոխակեցին զնս վերստին յառաջ մատչել, այլ մերժեցի անգրէն զառաջարկութիւն նոցա, և համոզեցի զկոնեթոյ ցուցանել առաջի գամփռատուրի սիկնոջ այնոցիկ՝ որ հակառակ կային ընդունելութեան Մարմնեթելի, թէ քանի անոյրիմ էր Ագամնեթալ, զի յետ կործանելոյ զայրն վաստակաւոր՝ դեռ էս այնպէս մոլեգին հալածէր զնս։

Ոմանք յիմաստասիրաց մեզադրէին զնս մինչև ի սպառ, այնու զի յանձն առի վայրիկ մի զտագրութիւնն Հերմէայ. և առաւել էս զՀուազեալ և զսիկին նորա, զի պաշտպան կացին ինձ։

Ի ձեռագիր հաւաքումն ինչ Թղթոց Ալամպերի, գրեալոց ի Բերլինէ առ օրիորդն Էմփինաս, ընթերցեալ՝ տեսի թէ ձախողակի կարծեաց յորպիսի անիրաւութիւն զնս զառաջեցուցեալ էր։ Պատմեալ իցեն նմա, որպէս Թուէր, զի վիճեն էս ընդ Մարմնեթելի՝ առնուլ ի ձեռանէ նորա զասպիճան ինչ պարապետալ ի Հեմարանին. որ ամենեքին սուտ էր։ Վասն որոյ գրէ նա՝ թէ միակ Մարմնեթել արժէ Պարթեղմիս հազար։ Արդ էս խոստովանիմ իսկ, զի Մարմնեթել վաստակաւոր էս է քան զնս, այլ ոչ թէ հազարապատիկ առաւել. և ոչ թուի ինձ Հշգրիտ հաշուն երկրաչափական։

Յաւելից այլ էս սուղ ինչ զգաղղական Հեմարանէն։ Յետ ընդունելութեան Մարմնեթելի, Գոնսալվոյն և բարեկամք նորա՝ որք էին բազումք յոյժ, գարձեալ ձեռն արկին յառաջ մատուցանել զնս։ բայց յոլովք էին ինձ պատճառք յետս կալոյ. քանզի եղէ ի բերանս ամենեցուն վասն ձախողակի իրացն Հերմէայ. և զի չէի իսկ այնքան ցանկացող գրաւորական առաւելութեանց, մինչև խնդրել զայն գժտութեամբք ամպրոպայրդ

ըն արութեան. յոյժ առաւել ցանկալի էր ինձ մնանել ի կա-
ճառ, ուր հասարակաց կարծէք ի լեռն իսկ տեղւոջ դիս կա-
ցուցանէին։ Խաստասէրքդ երկու հզօրք, Տիւքլոյ և Աղամպէր,
յարուցին պատերազմ ի վերայ աւագանւոյն, և մանաւանդ
ընդդէմ Շուազէօլի. որ թէպէտ և յարգէր յոյժ զՀանձնաց
նոցա, այլ ոչ զբէնս մտաց. ի համախմբութիւնս իւրաքան-
չիւր ի մէջ բերեին ընդդէմ նորա նոր յայտարարութիւնս։
Դժոխքմբերքդ էին ինձ տեսարանքն մտեղծինք. զի որք միանգամ
ի կանառորդաց անսի չէին բարեկամք նորին, անարժանք
բարեկամութեան նորա էին։ Եւ տեսեալ պատերազմս այս
մինչև ի ժամանակս, յորում տիկին Պարրի ամբարձեալ աչ-
արկու լինէր ամենեցուն համարձակութեամբն իւրով առա-
ջի Լիկլէօնի։ Տիւքլոյ և Աղամպէր պաշտպանեին զՇաղոթէ,
զոր հալածէրն Լիկլէօն, և որում Շուազէօլ իսկ կարծէր
պաշտպան։ Յայնմհետէ ամենայն ոՀիրք Շուազէօլի անհետա-
ցան, և հաստատեցաւ առնել ընդ նմա խաղաղութիւն և ուխտ
բարեկամութեան, և Պարրն Պրէմեոյլ մատոյց նմա ի գիմաց
նոցա որ ինչ ասպիՀան պատուոյ ի Հնմարանին նախիին պա-
բասիցէ, զերծ զնա կացուցանելով ի սովորական այցելու-
թեանց։ Շուազէօլ, որ չէր ինչ տեղեակ յառաջագոյն թշնա-
մութեան նոցա և ապա խաղաղութեան, զարմանայր ընդ մե-
ծարանսն. և եթէ ոչ նմա յանկարծ աքսորանքն ի վերայ հա-
ասնէին, լսելի արդեօք լինէր ներբոյղ նորա ի արահէն՝ յորում
թշնամանք ընդդէմ նորա այնպէս յառաջս հնչէցին։ Եւ յիս
իսկ արդեօք անչիշտարութիւն նոցա հասանէր. զի յաւուրսն
յայնոսիկ Աղամպէր զայրագին ելն ասացեալ էր առ Կաթթի
բարեկամ իւր և իմ, զարմանալով՝ զի ոչ դնայի ես ի Հնմա-
բանն։ Հարցեմ թէ իցէ ոք որ ոչ պարծանս համարիցի իւր
արձանագրել ի մատեանի՝ ուր դրոշմեալ կան Աղլիքէր և Պրի-
ֆին, համարձակիմ ասել թէ և Աղամպէր։

Յուցից ընդ հուսկ վասն որոյ իւրաց յորդորեցայ յեռոյ գը-
նալ անդր. այլ ասա առնում վերատին զկարգ յառաջագի-
մութեան խմբ, որ ինձ ոչ վասն այլ իրիք սիրելի է, բայց մի-
այն զի բարեկամութիւն ես ինձ դայն, և զի այնու վայելեմ ի
ցանկալի բերկրանս բարեբարելոյ այլոց։ Յաւուր միում ի խօ-
սել սիկնոջն Շուազէօլի առ նա զզգեաքսի սիրոյ խմբ ընդ

խրեանս, նա ընդ քիմն Ժպտելով՝ ՂՔՕԱՌԷՂԼ զառն էտ պատասխանի.

« Լ.ՐՅԻ ԸՆԵ ԲԱՐԵԱՑ Ի ՀԻՐ, ՊԱՏԱՐԵՑՅՑ ԽԱՏ ԺԱՅՐԱՎԻՐ »։

Յամին 1765, դանձապետութիւն սրբոյն Մարտինոսի Ի Ցուրն պարարտեցաւ. և էր երկրորդ աստիճանն այն պատուոյ Ի Ժողովի կանոնիկոսաց, և Թագաւորին էր անկ շնորհել ըստ պատիւն։ Շուտ ազէալ և տիկին նորա խնդրեցին տալ զայն ինձ. և իմ յայնժամ յօգուտ Ի կիր արկեալ զայսքան ազնուութիւն, Թողի Ի հասից խնոց որ Ի Հերմեայ՝ լիրայս երկու հազար, յորոց հազար ըստ ազատանաց խնոց առաւ Մառէնի, և հազար Գլաստայ առ Ի նպաստ վարձուց վաստակաւորաց օրագրին։

Դուքան Մէն, հազարապետ կացեալ զորաց հելուէտացւոց, կարգեալ էր իւր Ղմալէսիոյ՝ զոր սիրէին յոյժ՝ հանրական քարտուղար, յանձն առեալ տալ լիւրոց անտի հասս Ի պաշտօնն։ Նէ Շուտազէալ կարգեալ էր տալս Ի նոցն պաշտօն ըստ Ցիւպուտ առաջին հոգաբարձու պատերազմի, պահեալ Ի հասից նորա լիրայս վեց հազար Սէնշամանի տիկնոջ կրտսերոյ գաւառ Մալէսիոյի։ Արդ յամին 1768, Ի վերջին աւուրս յունուարի վախճանեալ Ցիւպուտա, ինձ զաղաշոն նորա յաւել տալ Շուտազէալ. ընդ որ բանաւէրք առ նախանձու բողոք բարձին։ Գլաստրք Ի նոցանէ Ցիւրլոյ և Ալամկէր երեքեալ առ Մալէրոյ, գառնագինս և սրտմտութեամբ մեծաս բարբառեցան. և ոչ կարաց նա այլազգ հանդարտել զնոսա, բայց ցուցանելով զի մարթէր պարտաւանն այնմիկ այսու օրինակաւ անցանել Ի ժառանգութիւն բանասիրաց։ Զնոսն միշտ յաւելուամ ասել, զի հասք հանրական քարտուղարին՝ գոլով Ի սկզբանէ հաստատեալ զորացն, օրէն էր նմա անօրինել զայն ըստ կամաց իւրոց։ Հանդերձ այսու ամենայնիւ, յետ աւուրց ինչ ընդարձութեան խնդ Ի պաշտօնն, դարձարարեցի Ի սպառ և յերեք հազար լիրայիցն որ մնային ինձ հասք Ի Հերմեայ, Թողլով հազար մի Ի Պէն, նոցնչափ ևս Ի Շասպանոն, որ երկոքեան իսկ հաճառորդք էին Ռեմարանին. և զմնացեալ հազարն Ի Գլաստ գրիչ օրագրին։ Պարտ է ինձ ասել, զի Ալամկէր և պՅՅ յիմատատսիրաց յոյժ մեծարեցին զառատաձեռնութիւն իմ զայս, սրբանաց և ոչ ես ինքն արժանի համարեմի զայն մեծարանաց։

Յամին 1771, Իկիլէօն երթալ զհելու

տել զանգնասպառնալ ազգաբարութեանս. այլ որ ազգ առ-
նէին ինձ էր յարանց դքսին Լիկիրենի։ Եւ ապա տեսեալ
Ամիրեայ զանդգրդուելի հաստատութիւն մտաց իմոց, վախճան
արար իրացն, սահմանեալ ինձ ի հասից պաշտամանն լիբայս
բիւր, առանց խնդրելոյ իմ զայն։ Եւ ի վաղիւ անդր գարձայ
ի Շանթիլու։

Ի բաղմաց հեռակ էին ինձ գոյք բաւական առ ի հայթայթել
զդիւրութիւնս, այլ ես հրաժարեցի յայնցանէ։ Մարթէր
ինձ տանել կառս, այլ վանդ էր ինձ ամաչելոյ ի հանդի-
պելն զՀանապարհայն լաւագուռնացն քան զիս բանաւորաց գը-
նացելոց հետ. շատ համարեցայ ունել երիվարս երկու առ ի
ձիավարել ըստ պատուիրանի բժշկաց վասն առողջութեան։
Սաստայ զգնեղկագոյն և զընթար ոտագիրս մատնեցից կա-
ւեորաց ի վասնակս իմ, և զյոլովագոյնս յայնցանէ ետուս կազ-
մել ագնիս կաչուով։ Զայս միայն շուք ոչ տարապայման ան-
ձին իմում համարեցայ։ Բայց հոգ մեծ, որչափ մարթի էր ինձ,
կալայ ի գտանիարակել և ի դնեռելել զերիս եղբօրորդիսն
իմ. այլ յազգականաց իմոց կեան ի նաբրոնեանն Գաղղիա
ի նպատակ իմոց։ Զիմաստառս դիմեալս առ իս ոչ արձակեցի
երբէք ունայն. այլ զիրք մեծ է ինձ, զի նախահոգ զնոսա արա-
բի քան զոմանս յազգականաց իմոց, որոց կարաւութիւն ան-
ծանօթ էր ինձ ի դայլանելոյ նոցա և կամ ի չինդրելոյ իմմէ։

Հասք իմ, արդարև բաղումք առն բանաւորի՝ յետ թողցի
իսկ իմոյ զհանրական քարտուղարութիւն հեղուռուցաց.
բաղմագոյնք ևս լինէին՝ եթէ ոչ ես ինձէն նուազեցուցանեի
զայնոսիկ հրաժարմամբ ի տուելոյն ինձ և յառաջարկելոց այլ
ևս հասից։ Պատմեցի իսկ զհրաժարելն իմ ի հասէն Հերմայ.
հրաժարեցի և ի հասէն՝ զոր ժառանգեմ որպէս քէնիչ. և
երիկոցս դարձեալ հրաժարեցի ի մեծամեծաց և ի շահաւէտ
պաշտամանէ մշանիկնաւոր քարտուղարութեան բանաւորա-
կան Ռեմարանին։ Եւ ի վախճանել Հարաբանի, որ էր պա-
հպան մատենադարանի արքային ի Վերսալիա, կամէր Պի-
նենտի կացուցանել զիս ի տեղի նորա. որոյ յաւելուն ինձ
փառք և հաւք. այլ ես ազատեցի զնա ընդունել զայն այլում։
Յամին 1789, Լընուար հրաժարեաց ի պաշտամանէ արքունի
մատենադարանին. և Ակնփրիէսմի, որ հաղարապետն էր յայն-

ժամ արքայի, հաճելագու առաջարկել ինձ զայն։ Ջառաջեալ ի յուսոյ գրաւելոյ զպաշտօնն զայն՝ առյապայ ի դասս բանաւորաց, կամեի ընդունել զայն, թէպէտ և Ծանր էր ինձ կոչուսա ժամանակի և խափան գրաւորականացս իմոց վասուսկոյ։ Ա՛յլ վաղ ի վերայ հասեալ զի առ պիտոյից ևեթ հանգամանաց ժամանակին հրաւիրեին զիս յայն, առ ապահովելոյ Օրենսդրի վերակացուի զժառանգութիւն այնորիկ, որպէս պայմանեալն էր նորա զայն ընդ Լենուարայ, վասն որոյ և խորհեին կարգել զնա ինձ օգնական կամ յաջորդ առյապայն, և զի գործեալ ընտրութեամբս իմով զժուարանայր իրաւախոհութիւն շահից ընդ նա և ընդ Լենուար, յորմէ կամիք և պարտ իսկ էր ինձ հեռի կալ, և տեսանելով ի դէպն լինալ զայս իմ՝ որ միայն կարէր յաղթել զժկամակութեանս իմում, հրաժարեցի ի փառասիրութեան խորհրդոցս՝ յոր ոչ վասն իմ ինչ, այլ յօգուտ ևեթ բանասիրութեան յորդորեալն էի։ Եղանակն՝ որով ընդունելի եղև հրաժեշտ իմ, և դիւրութիւնն՝ որով վաղ ընդ փոյթ վախճան եղև իրացն, արդարացուցին զգնացս իմ. և յայտնի եղև՝ զի որք ի սկզբան անդ կարեւոր յոյժ համարէին տալ ինձ զպաշտօնն, օգտակար յոյժ համարեցան յայնժամ թողուլ զնս ի բաց։

Ոչ է պարտ ի պատմութենէ անցից կենացս իմոց թողուլ ի բաց զյօդանսն իմ գաղղիական ՀԵՄարանին՝ յորմէ մէրան հեռի կայի, և ոչ զպաշտՃառան որ յեզանակաւ իմն հարկ արարին ինձ ինդրել ի նմա ատենՃան ինչ, ի ամին իսկ ի 1789 ամի։ Ա՛յն ինչ վախՃանեալ էր Պոզէ, և յաջողութիւն Ռ-ՇՈ-ԲՐԻՆՆ Ա՛ՇԽԱՐՀՈՅ զարթոյց զնախանձ ոմանց ի կանՃառորդաց անտի, ընդ որս էր ինձ ի բազմաց հետէ բարեկամութիւն։ Սորա զինձս բարեկամութեան իւրեանց յայանեցին բազմաց ի կանՃառակցաց իւրեանց, որք և պատուիրեցին նոցա հրաւիրել զնս ի տեղի Պոզէի։ Սրտառուչ հրաւէր նոցա ի գիմաց ՀԵՄարանին շարժեաց զիս. այլ զի ի մտի եգեալ էր իմ հրաժարել, յամառեալ կացի ընդդէմ թախանձանաց նոցա՝ պատՃառանօք հաստակիս, և մանաւանդ զի զդուշանայի յամենայն ակնթիրց հաստակաց և ի նոր պարտս յանձն առնլոյ։ Եւ յետ սակաւ ատուրց, մինչդեռ կարծէի զանձն զերծ, ըստ զի ի միում ի համախմբութեանց ՀԵՄարանին հաստա-

սեալ էր բանի իսկ ընտրել զկա՛ճառորդ։ Ոչ ինչ գժուա-
րին էր դուշակել որ ինչ ընարութեանս այսմիկ զհետ գայնի
իբրև. զի եթէ յանձն առնուին զպատիւն, մարթէր սանոց կար-
ծել զնա՛ ի վերծանելոյ ի սովորական այդելութեանց հրա-
ժարիլ, ցանկանալով նախասաստութեան՝ որում ոչ ոք յա-
ւագայ զհետ եղև. իսկ եթէ չառնուի յանձն, նախատեի զժ-
զոմին պատկառելի ի մեծարելն նորա զնա մեծապատիւ։ Ոչ ևս
ապա ընդ բանս ինչ ածեալ՝ յանձն առի, և արարի զայդելու-
թիւնսն. և ոչ ոք եկաց ինձ ասոյս վասն ծերութեանս։ Եւ ի
լուսն յաջողութեանն Պատ.ի, որ ի սկզբանէ հետէ բարե-
կամութեամբ լեալ էր ընդ իս, և զի էր տեսուչ կաճառոյն,
եւ ինձ զպատիւ խորհրդականութեան։ Հաճեցան ներողա-
մտութեամբ ընդ Հառս իմ. այլ ընդ հանձարեղ իմատաս Ճա-
ռիչ նորա, ընդ հնարէս, ընդ նորանոր և ընդ ազգաս խելա-
մտութիւնս գմայլեալք յանձիւս կացին. և զարմանալեացն՝ զոր
զարթոյց՝ ոչ դոյզն ինչ մտան լլնարութիւն ձեմարանին ձգէր։
Յայնմ հետէ աչեկոծեալ գրեթէ հանապազ ի մրրիկ տարա-
տատութեան, և ծանրացեալ աչօք և սխտակութեամբք,
ջաւորեալ յամենայն գոյից, զգեցեալ օր ըստ օրէ ի բարեկա-
մաց սիրելեաց սրատարսի ընդ սակաւս ի նոցանէ՝ որ մնայ-
ին, ինձ այնուհետեւ կեանք ոչ այլ ինչ էին՝ բայց յաջորդու-
թիւն աղէտից։ Բախան, յորմէ կարի յոյժ ցայնմայր բարերա-
բեալն էի, լիուլի տալա զղջէժան լինէն պահանջեաց։ Իբր ոչ
եթէ կամիցիմ տրանջել. զի որում յամենայն կողմանց յաճա-
խեն վիշտք, հեծէ միայն, ոչ ևս տրանջէ. սա՝ ներեսցի ընկ-
ճելումս ի վշտաց հեղուլ ասա չիմս ինչ արտասուաց առ բա-
բեկամս։ . . . Սակայն և զայն պարտ է ինձ ասել, զի ի վիշտս
անդ հնս ինձ սիրտումն անանկեալ, որով թուէի յայլ իմն
փոխեալ յաշխարհ. և ոչ առանց ապերախտութեան լռել
կարեմ զբարեգործն և զազնուական առնն զանուն, յորմէ ըզ-
միսիթարութիւնն զայն ընկալայ։

Ընդ մեկնելն իմ ի Պատրլնեթեայ, ուր բանտարկեալն էի
յերկրորդումն աւուր 1793 տարւոյս, ամբաստանեալ՝ չգիտեմ
յումմէ ուամբէ ի պաշտօնեէից՝ ընդ այլ պահպանս մատեան-
դարանին, և ընդ եղբօրորդւոյ իմում՝ Քուրսեի՝ որ օգնականն
էր՝ ինձ ի Թանգարանին գրաշարաց, լուայ զի Թէպէտ և նշա-

ւակեալ էր անիրաւութիւն ամբաստանութեանն զմէնջ՝ սա-
կայն հանդերձեալ էին արձակել զմեզ ՚ի բաց, և զայլս ՚ի տե-
ղի մեր կացուցանել։ Եւ հաւատարիմ ինձ համբաւն Թուէր
այնու, զի ոչ հաստատեցան ինձ երբէք բանալիք Թանգարանին՝
զորս Նեղբին փոխանորդ արքային էաւ բառնալ յինէն ՚ի յլէլն
՚ի վերայ մեր կալանաւորս։ և հանապազօր յանձնելին այնո-
քիկ, ոչ ինձ կամ եղբօրորդւոյ իմում, այլ պահապանի Թան-
գարանին՝ բանալ զայն ընդ առաւօտն և ընդ երեկս ՚ի մուտս
հասարակաց։ Եւ մինչդեռ մնայի բառնալոյ յինէն և յեւին
նշխարաց՝ որ հայԹայԹէին զկեանս իմ, ընդ երեկս երկուսա-
սանեերորդի աւուր հոկտեմբերի տեսի, և ահա մտաներ առ իս
փարէ մի ՚ի քաղաքացեաց տեսուչ Նեղբին իրաց աշխարհին։ որ
և էաւ ինձ գիր՝ յիւրմէ իսկ գրեալ, և ազաչեաց ընԹերցուլ
զայն։ Այնպէս գիրն այն օտար յարդի բարուցս մերոց է, և
այնպիսի յաճախէ փառս հաղարատեսին՝ որ ՚ի բազմաԹշուառ
ժամանակիս գրեաց զայն, զի տեսցիմ ՚ի սերոյ սրտիս յե-
ռուլ զայն ասս, առ ՚ի հաստատեալ նմա՝ որքան յիսն է կա-
րողութիւն՝ զհարկ ընորհաւորս մեծարանաց։

Յ՝ սոքին երկրորդի անդամանքի և միակ հասարակապե-
տութեան, ՚ի 21 աւուր ամսեան առաջին։

ՓԱՐԷ յանձնաձիչ Նեղբին իրաց աշխարհիս

Ա՝ Պարիզեցւոյ պահապան ազգային մարդանդարանի։

«Ի մտանել քո անդրէն ՚ի մատենադարանն ազգային,
» ուստի հանդամանք ժամանակիս խիստ բարձին զքեզ առ-
» վայր մի, ՚ի դէպ ժամանակի է քեզ երկրորդել զՀնարաբ-
» սեայն՝ զոր նա ապրեալ ՚ի տեսել մատենադարանին Եւ-
» զիգեայ՝ ասէր 1. «Հաստատեալ եմ զեղանել ՚ի տեղւոջէ
» ատի»։

» Մի, ո՛ քաղաքակիցդ իմ, մի եւ ելցես այսր։ զհաւա-
» սիս բանից իմոց հաստատեմ յարդարութիւն ժողովրդեան,
» որ պարտ անձին մինչև ՚ի սպառ համարեսցի վարձառել

1 Հատոր Գ։ գլ։ Իթ։

՝՝ զգիլ մտանէին՝ յորում այնպէս զմայլելի նկարագրին բա-
՝՝ բենչան աւուրք Նլաղայ, և բարք ընկերահաշտք՝ որ այն-
՝՝ քան օրեար և այնպիսիս յառաջ բերին զոգոց մեծամեծս։
՝՝ Ցանձն առնեմ՝ ի խնամս քո զմտաենդագարանն ազգային.
՝՝ յուսամ զի ընկալցիս զաւանգս զայս պատուական, և բա-
՝՝ բերեսիս զանձն համարիմ՝ զի եղև ինձ մատուցանել զայն
՝՝ քեզ։ Ցընթեռնուլն երբեմն զՈՒՇՈՒՐՈՒԹԻՒՆ ԱՒԳՈՒՏՈՅ,
՝՝ զարմանալի ընդ մտաենդն՝ յորում հանձար այնպէս գե-
՝՝ զարդեալ զՀմտութիւն. այլ ոչ կարծեալ բնաւ, թէ պարտ
՝՝ էր յաւուր միում արգարակորով ժողովրդեան ընդ իմ
՝՝ ձեռն մատուցանել մտաենդագրի նորին զառհատաստէպ իւ-
՝՝ բոցն մեծարանաց։

՝՝ Արդարև սրբարանս այս մարդկեղէն գիտութեանց տա-
՝՝ կաւ ինչ մասոյց ցարդ նպաստս ի յեղափոխութիւն իրաց
՝՝ աշխարհիս, և չեւ եւս ի վերայ եհաս ամենին՝ զի իւր իսկ
՝՝ է պետութիւնս այս, և զի պարտ է նմա վայելել յարա-
՝՝ ժամ յայն, և զի Կ՚ԱՐԺԱՒ ԼԵԹ պարտին պատահել նմա,
՝՝ պատրաստք ընդունել զնա և ի խրատել իրբև զեղբայր։
՝՝ Տուր ապա, ով քաղաքակիցդ իմ, զի արձանս այս՝ արժա-
՝՝ նաւոր վեհ ազգի՝ յուշ ածցէ մեզ զանկալի բարեմասնու-
՝՝ թիւնսն, զորս միտք և աչք գտանէին ի հաւաքել ի կրբա-
՝՝ սերագոյնս իսկ ի վաղեմի հասարակապետութեանց՝՝։

ՓԱՐԻ։

Բարեացապարտ եղանակ գրոյն, զնացք հազարապետին, շնորհք՝ որ կցորդէին բարեբարութեանն, թախանձանք՝ որով ստիպէին զնա ընդունելութիւն պարգևին, և ցանկալի վկայութիւնքն՝ զորս յանձնէին տալ, շարժէին առ հասարակ զսիրտ իմ. և ոչ կարէի յանդիմանն առնել բանիւ զնմանատս շնորհապարտ սրտի։ Բայց տկարութիւն իմ այժմու՝ ի ընդ զարարս պաշտաման մատենադարանին՝ համարձակեցոյց զնա ի հրաժեշտ։ Կա քաջագրութեամբ զարտմութիւն իւր ընդ այն յայտ արարեալ, ահաձուութեամբ յանձն էառ թողուլ զնա ի բաղմաժամանակեայ պաշտամանս՝ որ բաւական լեալ էր մշտ ի ընդ զանկութիւն իմ։

Ի սկզբան անդ յիշատակարանիս ցուցի Հանառօտիւ զվատ-
տակս իմ ի Թանգարանին գրոշմածաց, զոր վատատակեցի ի
վերջին ամս նախորդին իմոյ։ Ցուցից յառաջիկայ յիշատակիս
որ ինչ յետ այնորիկ եղեն ինձ վատատակ, և որ ինչ իսկ ի մտի
էր ինձ առ ի Հոխատցուցանել զայն և առնել ևս քան զևս օգ-
տակար։

ՅԻՇԱՏԱԿ Բ.

Ջիանգիրանի գրոշմածաց։

Յորմէ հետէ կացի պահապան Թանգարանին գրոշմածաց,
Ջանահնար լինեի առնել զայն՝ որչափ մարթէին՝ պիտանի։
Ա. Աւանդք այսպիսիք շմարթեն ամենեցուն առ հասարակ
գոլ մատչելի. քանզի զետեղեալք ի տախտակս թղթեայս՝
յորս բաղմաց ի միասին կարկառին ձեռք, մարթ է գիւրաւ
բառնալ ինչ անտի ի բաց, կամ փոփոխել՝ ընդ ազնուացն
անարգս կամ տարաձեալս զետեղելով։ Հանդերձ այսու ա-
մենայնիւ արարի զԹանգարանն՝ որչափ մարթէին՝ գիւրամա-
տոյց։ Ոչ սահմանեցի ի շաբաթեանն օր, յորում մարթ իցէ
ամենեցուն գալ ի զնին. այլ ի խնդրել ուրուք միայնակ կամ
ընդ ումեք ի բարեկամաց և կամ ընդ երկուս ոմանս գալ ի
Թանգարան անդր, բաց ելին նմա մուտք. եթէ ի գիմանց ոք
դարձեալ և կամ ի հիւրոց խնդրելր յանձախել անդր ի զնուռ-
թիւն, ոչ երբէք մերժէի զնոսա. իսկ ի բազմաց ի միասին ե-
կելոց խնդրելի ազգ առնել ինձ կանխաւ, և սահմանեի ընկե-
բութեանց հւրաքանչիւրոց օր. որով խափանեի զբազմու-
թիւն, առանց մերժելոյ զոք։ Բայց թէպէտ և զայս ամենայն
նախահոգ զգուշութիւնս ի կիր արկեալ, սակայն յանձախ ի
գունդագունդ բազմութենէ շուրջ պատեալ դատեի. և ամ-

նայր ինձ այլ հնար, բայց յետ գնալոյ նոցա ի բաց այց առնել սահմանական զնեալոց ի նոցանէ։

Բ. Պարտ համարէի գրով տալ զամենայն տեղեկութիւնս ինդբեալս յինէն զգաւառաց մերոց և զայլոց աշխարհաց։ Ասա հարկ լիներ ինձ յաճախ առնել քննութիւնս երկարս, և մերթ ևս վաստակ նիւթական երկայնագոյն ևս և ծանրատաղտուկ. որպէս կշռել Ճշգիւ զրազմութիւն գրոշմածաց և ըզդրամաց։ Գտանին ի Թղթեանն իմ բազում չափք կշռոցս այսոցիկ. և ի յիշատակագիրս Ճեմարանին արձանագրութեանց Ճառ հանգուցելոյն Կողմ յաղագս հռոմէական լարք 1. որ ըստ մ ես ինչն ետու զկշիռ ամենայն գրոշմածաց ոսկեղինաց վերին ինքնակալութեանն։ Ասելի քան զքսան աւուրս աշխատ եղէ յայն, և կարի խակ էր ինձ այնքանեաց աւուրց կորուստ. և չէր խակ յայնժամ, որ օգնէր ինձ։ Բայց գիտելի է զի բազումք ի գրոշմածաց անտի փոխեցան յետոյ ընդ ամբոջանգոյնս, որոց կշռեաք զանազանին յառաջնոցն ըստ հասոյց ինչ։

Գ. Եւ քանզի յուսայի հրատարակել օգնոյն խակ կամ ի մտանել զմանգաբանն՝ որ յանձն էր ինձ, պարտ էր ածել զայն յայն կատարելութիւն՝ որ պիտանեագոյն լինէր, և ոչ ի վայր՝ այլ մանաւանդ դէր ի վերոյ գտանէր քան զհամբաւն՝ որ հրաչակէր զնմանէ ընդ Եւրոպա։ Խելամտաւ եղէ անդատին անբաւ ընդարձակութեան առաջարկեալ վաստակոցս։ Ասա ի յեռուլ զգրոշմած ինչ ի մի ի կարգաց, պարտ է նախ հաստատել ըզհնութիւն նորա, և զյատուկ նմին հանգամանս՝ որովք զանազանի ի նմանեացն ի կարգին. պարտ է ապա առնել զատորագրութիւն նորա, հանդերձ կոչմամբքն ի ցուցակս, յաւելեալ և զթուական տացմանն, և զանուն տուողին։ Վաստակքս այսոքիկ մանրամասնեալք այնպէս անբերելիք ի յաճախելն գրատանին, զի շնորհաւորտ գտանիմք պահպանեալ՝ որոց ոչ շատացեալ պահել և ի լոյս ածել զնոխութիւնս թանգարանին՝ ցանկան և ևս յոլովել զանձինս յախորժելի ևս վաստակոց՝ որ առաւել ևս Ճանաչին։

Ի կազմել Լուսովիկեայ ԺԴ. զմանգաբանն, հաւաքեցան ի նմա ամենայն ազգի ազգի կարգք արդի գրոշմածաց ոսկե-

---

1 Հատոր Լ. էջ 359։

զինաց և արժանի եղինաց, հատուցոյ յամենայն կողմանս Եւրոպայ։ Ա՛յլ քանզի յետ վախճանելոյ Քոլպերթի, անտես լեալ էր շարայարութիւն կարգացն, խորհեցայ ես ընալ զկարգս արծաթեղինացն։ Սկիզբն ի Սուէտիոյ և ի Դանիոյ արարեալ, յոլովս ի Հոլմիա և ի Հաքինիա զանոնկ գրոշմածացն՝ որ էին առ մեզ՝ զերկոցունց պետութիւնացն, և գեղանկար մեր հատուցին առ մեզ զմեքենն զամենայն, երկուս բիւրս լիրայից ծախեալ։ Վասն որոյ Արժանասն իշխան ուսուցեալ պետ լաւ ևս համարեցաւ զհաւատարմն գրոշմածաց վաղեմեաց։

Ի վերջ կոյս 1754 ամի վախճանեցաւ ի Փասսիլիա Քարի բարեկամն իմ. և էր նորա ոչ դուշեաբեայ ինչ Թանգարան գրոշմածաց։ Ի գրել եղբօր նորա զայնմանէ առ իս, արժան համարեցայ ուրեմնասն հազար լիրայ ի գինս, և հաճոյ Թուեցաւ նմա։ Խօսեցայ զայնմանէ ընդ Արժանասնի, և խոստացաւ տալ զգուանն, բայց ի մուրհակս. իսկ ժառանգն ինդրէր արծաթի, և զի չէր հնար տալ զայն, խոստացաւ նմա Արժանասն յաւելուլ չորեքհազար այլ ևս լիրայս ի գինսն, եթէ յանձն առնոյր նա տամ ըստ ամէ տակաւ զհատուցումն։ Եւ Քարի յանձն էառ զայն, բայց միայն ինդրեալ սահմանել զժամանակն։ Յերկարատեւեցան խրդն. և ինձ պարտ էր գնալ ի Հռոմ, անցեալ ընդ Փասսիլիա։ Գրեաց ապա Քարի առ իս, զի եթէ ուրեմնասն հազար լիրայք ոչ հատուցանէին նմա յաւուր ամենի սրբոյն Լուգովիկեայ յամին 1755, պարտ էր նմա աւանդել զգրոշմածանն գործակալի տարի ուրուք, որոյ պատրաստ կայր արծաթի ի ձեռին։ Յուզի զվարանս իմ միւմ ի բարեկամացս, որ էր Ֆոնֆիերիէր հարկապետ ընդհանուր. նա մարդասիրապէս ետս ինձ մուրհակ առ հարկապետն Փասսիլիոյ, և հատուցաւ ինձ արծաթին անդէն։ Եւ հրամանաւ Արժանասնի, որում կանխաւ իսկ ծանուցեալ էի զկրան, հատուցի Քարեայ զուրեմնասն հազար լիրայսն. և ծրարեալ զամենայն զգրոշմածանն, առաքեցի զոպէս առհատատեալ առ Ֆոնֆիերիէր։ Եւ ի դառնալ իմում յամին 1757, հատոյց նա ինձ զանանգն, և ոչ ինչ ընկալաւ ի շահ կանխիկ հատուցմանն։ Եւ քանզի հրամանագիր արծաթոյն ըստ առաջարկութեանն Արժանասնի լեալ էր յամին 1755 ի հատուցումն քանի և երկուց հազար լիրայից, յաւելուած չորեքհազարացն առան-

գեղցան 'ի գանձանակ մատենադարանին։ Բայց Աբժանան ոչ ևս էր 'ի պաշտամանն, և ոչ կարացի հայթայթել ինչ հատուցումն կամ առհատաստեալ ընդհակակիրեաց ընդ բարուքեանն Գանձիբերիերի։

Ի սատմանէ ասսի Ճոխացան յոյժ ընծիր գրչագրեալ ամենայն կարգք Թանգարանին։ Բայց յամին 1762, առաքել ևս Ճոխացաւ կարգ ոսկի գրչագրեալ ոսկեաքն Քլեւի, որ ընդ կարգս ոսկեաց ազգային Թանգարանին մրցել կարէին չքնաղ գեղոլն։ Վաճառեցան նոքա յԽուսն հազար լիրայից։ և Հոսան, հմուտ և ցանկացող նոցին, գնեաց զայնոսիկ։ Այլ մինչև գնեալ, խնդրեաց վասահ լինել ընդ կամս Թանգարանին գնելոյ մասն ինչ յայնցանէ։ Ընկալաց խոստումն Երկուց բիւրուց լիրայից 'ի մուրհակս՝ որ 'ի վայր քան զարժէն գընային 'ի տուրեաւս, և արժեցին չորեքտասան հազար լիրայս։ Եւ վճարեալ Հոսանայ զտուրեաւսն, եթէր վաղվաղակի առեալ զկարգն համբրէն։ Եւ ես չորեքտասան հազար լիրայիւքն ոչ միայն սատցայ զայնոսիկ որ 'ի կարգ գրչագրեալցն մերոց ոսկեաց պակասէին, այլ և փոխեցի որ ինչ ոչ ամբողջքն էին։

Ի պակասելոյ անսի արժանի յիշատակի համարիմ զմիակ և զբազմահնգամեակ գրչագրեալն Ուրբանիսի Պատմիչնեաց, որ առ Իշխանութեամբն Աղեքսանդրի Սեւերոսի ամբարձաւ յինքնակալութիւն յարևելեան զօրաց, և որ վաղ զիմաց և զազատութիւն կորուցս։ Ոչ ինչ ընդհանս և միակ գրչագրեալն Կոստանդեայ Երբորդի, հօր Վաղենտինիանոսի Երբորդի, կայսերաց կցելն Թեոդոսի Երբորդի, անեերոյ եւրոյ։ Ոչ ինչ ընդհանս և Փաւստոսի տիկնոջ Կոստանդանոսի մեծի, և Լիկինիայն Եւդոքսեայ տիկնոջ ինքնակալին Պասկիդեայ Վաղենտիանոսի. այլոլքն հանգերձ բազմօք, որ ընդուն զկարգ Թագաւորաց և զգեշարոյն՝ կացելոց յամենս ինքնակալութեան Հռոմայ։ Ի գրչագրեալց անսի Քլեւեայ Ճոխացան և ևս բազում ընծիր գրչագրեալ կարգք գրչագրեալց նախնի հատարակապետութեանց, և նախնի Թագաւորացն Յունաց։

Քելքբերնի ծովակեալ կացեալ ընդ բազում ժամանակս, որ բազում ապա յաջորդեաց որդի նորա, յորմէնեալ էր Թանգարան ամենաձոխ՝ որպէսի ոչ ուրուք 'ի հնասիրաց լեալ է։ Ի յոլովից ինքնուրոյն հաւաքմանց կազմեալ էր նորա զայն, և թող

թակցութեամբ ընդ սմն աւելի քան զքաւասուն ընդ հեւ-
պատս մեր յարեալ՝ Ճոխացուցեալ անքաւ բազմութեամբ ըն-
տիր և ցայնվայր անծանօթ գրոշմածաց յուշանակաց. և բա-
ցատրութեամբքն ի բազում հատորս քառածալս՝ աբարեալ
էր զայն գերահռչակ։

Յամին 1776, առաջարկեցին հայր և որդի խառնել ընդ
արքունականին զպերճ թանգարանն զայն։ Ժամանակն իսկ
էր բարեպատեհ. զի Մորփա, որ ազգատոհմն այնորիկ պա-
տրօգարան լեալ էր միշտ, էր յայնժամ փոխանորդ արքային.
և Մալէրբէ իշխան ուսումնասէր։ Պատուոյն տեղեկութիւնս
զայնմանէ բազում անգամ, այլ ոչ ինչ զգնոցն ասացեալ։ Փե-
լըբէն, որոյ անդեղի էին ինդիրքք, պահանջէաց երիւքարիւ
հազար լիրայս, հատուցանել զայն և կամ Թողուլ ի բաց ըզ-
վաճառան։ Կռեցաւ դաշն, այլ այնու գժոխամբեր ժլատու-
թեամբ Փելբրէին, զի բազում անգամ եղև ինձ ի մոի խարա-
նել զատուրեան. զի ոչ միայն չէս ինձ զցուցակս գրոշմածացն,
այլ և ոչ եցոյց ինձ զայնոսիկ. հարկ եղև ինձ շատանալ վեր
ի վերոյ ինչ տեղեկութեամբք զայնցանէ և ակնարկութեամբ
ևեթ ի տարտարան։ Թէպէտ և լիով տեղեակ էի ես Թանգա-
բանին, և համեմատեցի պարտպով զգրոշմածս ընդ փորա-
գրեալ ի նմանէ պատկերացն մինչև տարակացուցանել զնա։
Թուէր ինձ ցայնվայր աւելի քան զարժէսն հատուցեալ. այլ
ի յեռուալ զնոսա ի կարգս այնոցիկ՝ որոց յանձն էր ինձ պահ-
պանութիւն, փոխեցան վերնական խորհուրդք իմ։

Յետ Թանգարանին փոխադրութեան տպա մատոյց ինձ
Փելբրէն ի պարգև զմատեան իւր յաղագս գրոշմածոց յին-
նեակ հատորս քառածալս։ Էր իսկ ինձ հաւասար մատենին,
այլ ի նորայն շուրջ յաւելեալ էին տեղեկութիւնք, առա-
ւելագոյն մասամբ հակառակք ինձ։ Կորբունակ էր ձեռաձիրն։

Ամբ սակաւք ի վերայ անցեալ մահուն Փելբրէնի, ի վա-
ճառ ածաւ Թանգարան Էնինբրեայ, յորում մանաւանդ երևե-
լի էր բազմաթիւ կարգ տակի գրոշմածաց կայսերականաց, զոր
տացեալ էր Նորա ի Վայէ հնգից ամաց լիրայից, և Ճոխա-
ցուցեալ ևս յոյժ։ Հրատարակեցաւ ցուցակ Թանգարանին ի
հատոր քառածալ, և ոչ ոք կամէր ստանալ զայն ամբողջ-
վասն որոյ վաճառեցաւ մասնաբար. և կարգ տակեացն բաշխե-

ցաւ ի տասանց մինչև ցերկոտասան գրոշմածս ի բաժին մի։ Եւ առաք մեք զյուրցակ գրոշմածացն՝ որ պակասէին մեզ, և յաջողեաց մեզ ըստ բաւական տասանալ զբազումս ի պակասորդաց անտի։ Եւ քանզի գրեթէ ի կշիռ ոսկւոյ վաճառէին գրոշմածքն, ասացաք իբր երկոտասան հազար լիրայից որ ինչ արժէին քառնեւհինգ կամ եռեսուն հազար լիրայս։ Պրքթէջոյ, որ էր յայնժամ տաճկազգիր յանձանձիչ աշխարհին, մասագիսբ նպաստատմանոյց եղև ասացուածոյս։

Բայց ի հաւաքմանցն Քարեայ, Քիւրւ, Փէլբրենի, և Կնոնրեայ, դէպք յաճախաւորք և Թղթակցութիւնք հանապազորդք յաւելին հնձ ընդ ամս ուրիշ քան զքառասուն բաղմութիւն յոյժ գրոշմածաց, որպէս է տեսանել ի տեղեկութիւնսն և ի ցուցակս երկոտրեալս յինէն։ Ի նիզիր էն մանաւանդ գրոշմածաց, զորոց հնգնուրոյն մասեանք բացասրութեանց էին, և զորոց վէճք առ հմուտս յուրէին։ Մարթ է ինձ զբազումս յայնցանէ յիշատակել, այլ երկու կամ երեք շատ լինին։

Հայրն Քօրսնի և Հայրն Ֆրէլիք Ճառս յաղագս արծաթի տուաւ գրոշմածոյ երեք հրատարակեցին, յորում միոյն ընթերցեալ էր Մէնդոս, իսկ միւսոյն Ադենէգոս, միոյն համարեալ զայն ուրուք ի Թագաւորացն Պարթեւաց, և միւսոյն՝ ուրուք յաբգայեցն Հայոց։ Ցեսեալ էր իմ զգրոշմածն զայն տուաւ ի Փլորենտիա առ Պարոն Սնոյշ, որ չկամեցաւն իսկ տալ ինձ զայն. այլ յետ մահու նորա ստացայ զայն յեղբօրորդւոյ նորին։

Ցեսեալ էր իմ ի Հռովմ ի Թանգարանին Վէրթօրեայ տապեսի քառեակ գրոշմածս լատինս պղնձեայս փոքրիկս, որ Թուէին ի ժամանակս քրիստոնէութեան գրոշմեալ։ Էին նոքա յատաջագոյն Սասպանթինեայ հնագիսի, որ և զիսրագիր պատկերս նոցին արարեալ էր՝ առանց բացասրութեան։ Առաջինն յայնցանէ բերէ ի մի գէմն գլուխ ծածկեալ տաբնեանաւ, և մակագիր Աղէքսանդր. և ի միւս գէմն էշ և յատանակ ընդ նմին, և խաչատառ ի վերոյ, շուրջ փակագրեալ անուն Յիսուսի Քրիստոսի։ Երկրորդն ի մի գէմն իւր բերէ զնոյն գլուխ հանգերձ անուամբն Աղէքսանդրի ուղղագիր կա, և ի միւս գէմն զնոյն հանգոյն միւսումն՝ առանց անուան Յիսուսի Քրիստոսի։ Չէրկոսին զայնն տեսցեն իբրև-

գրոցք ՝ի փորագիր պատկերան՝ զոր արար Վ. Էթիոպի 1։ Նա զգրոշմածս զայսոսիկ համարեր առ իշխանութեամբն Աղեքսանդրի Սեւերեայ գրոշմեալ, և Հայոցն Փաշիւտի առ իշխանութեամբն ուրացողին Յուլիանոսի 2։ Եւ յառաջ քան զնոսա Մոնոֆիզիտնի հրատարակեալ էր զառաջինն ՝ի գրոշմածաց ասի՝ ըստ գծագիր պատկերի՝ զոր ընկալեալ էր Յոստինոս 3։ Վասն որոյ ՝ի վերնմանել Վ. Էթիոպիայ փութացայ ստանալ զգրոշմածսն զայսոսիկ յերեցուցեալ հնագիտաց ասի հուչակեալս։ Իբր ոչ եթէ հաստատելով ստացմամբս զհարազատութիւն նոցա, այլ զի կարասցեն եթէ ինդիրոցք մատչել ՝ի քննութիւն նոցին։

Հանրիսին, որ էր կանառորդ բանասիրութեան Ռեմարանին, հրատարակեալ էր երբեմն զարձանի գրոշմած ինչ Տրայիանոսի, հարեալ սամարացի կնքաւ 4։ Ասանդա այս այնչափ առաւել ցանկալի, որչափ զի երիցայութիւնս բազումս ածէ զգրոշմածաց սամարացւոց, անկեալ էր ՝ի ձեռս տեառն Թերանայ, որ միւս ևս այնպիսի ինչ գտեալ էր։ Նա ինքն ըստ ազաչանաց խոց յանձն էառ զփոխանակութիւն, և աւանդեցի զայսոսիկ ՝ի Թանգարան անդր։

Խորհէի Ջանիւքս այսոքիւք առնել զիանգարանն զայն աւանդ հասարակաց, պահել ՝ի նմա որ ինչ ումեք նորանչան ինչ գրոշմած ՝ի ձեռս անկանիցի, զի մի ՝ի կորուստ ապա գնայցեն։

---

1 Յաղագս հնութեան և ձևոյ փակագրի ամենասուրբ աթոռանն Յիսուսի Ճառ. ՝Ի Հ—ոմ. 1747. ԺԸ—Ի—Ա. էջ 60։ Նոյն ինքն ՝ի Թղթին առ Պօղոս Մարիամ Փաշիւտի. ՝Ի Հ—ոմ. 1747. ԺԸ—Ի—Ա. էջ 15։ Նոյն ինքն Ջատագովութիւն զգրամոց ինչ Աղեքսանդրի Սեւերոսի. ՝Ի Հ—ոմ. ԺԸ—Ի—Ա. էջ 6։

2 Տեսութիւնք Պօղոսի Մարիամու Փաշիւտեայ ՝ի թէատեան կարգէ ՝ի նորանչան և ՝ի չքնաղագիւտ գրոշմածս ինչ. ՝Ի Նէապոլիս. 1748. էջ 48։

3 Ի Բացատրութեան հնութեանց. Հատ. Բ. Մասն Բ. էջ 168։

4 Ի Յիշատակագիրս Ռեմարանին. Հատ Գ. էջ 193։

Եռաւ ապա առնել զհամար ամենայն Հոխուութեանցն, զորս յաւելի ի Թանգարան անգր. և զասն գրոշմածք վաղեմիք երկու բիւր. Թուով և ազնուութեամբ հաւասարք այնոցիկ, որք ի սկզբանէ հեաւ կազմուեցան Թանգարանին գեր ի վերոյ զնա քան զամենայն Թանգարանս Եւրոպայ կացուցին։ Թողում զդրոշմածս արդեօ. զորս Թէպէտ և ոչ անտես առնեի, այլ ոչ պարտ համարեի զնոցն խնամս ունել զնոցանէ։ Կրկնակ գրոշմածք՝ որք ի սաստմանէ Թանգարանաց յաւելուին՝ գիւրացուցանէին զփոխանակութիւնս, զորս զմարթէր առնել արծաթով։

Ապաքէն յաջողութիւնքս այսոքիկ յաճախեցին ինձ բերկրանս. այլ Ղշնեմ և մանրակրկիտ քննութիւնք ի զետեղել զնոսա, անբաւ հաստատին ինձ աշխատութիւն։ Ձեր մարթ ասանալ ինձ երբէք Թանգարանս, առանց նուիրելոյ այնմ բաղմամեայ աւուրս. այլ պարտ է ինձ խոստովանել բերկրանք, զի եղբօրորդին իմ Բ.ուրսէյ յաւելեալ ինձ պահպանակից յամին 1772, եղև ինձ պատապարան մեծ, եթէ ի սաստցուածս որ յետ այնորիկ, և եթէ ի հանապազորդ վաստակս Թանգարանին. և ոչ կարեմ ըստ արժան բաւականին գոհանալ զհմտութենէ նորա և զքանից։

Կապատամեայքդ եղեն ինձ յոյժ ի Հոխացուցանել զաւանդն որ յանձն էր ինձ՝ տեսուչք մատենադարանաց և գեսպանք. և ոչ վայրապար վասահ էի ի փոյթ նոցա այնու՝ որում ուշ ունէի հանապազ, և որում պարտ էր պահել զվաստակս իմ. այն էր փորագրութիւն և հրատարակումն Թանգարանին։ Խորհէի սկսանել զայն ի կարգէ Թագաւորացն Յունաց, շարայարել զքաղաքս Յունաց այրոցն հանդերձ, և յարել զհետ սուղ ինչ բացատրութիւն՝ զարգասխ վաղմնամեայ փորձոյ, և զքննութեան աւելի քան զքաւասուն բիւր գրոշմածաց։ Այլ քանզի ոչ ներբէր հասակն իմ՝ ի կատարումն ածել զառաջարկութիւնս զայս, գիտացի յամաց ինչ հետ զհարկ յաւելոյ զոք վաստակակից եղբօրորդւոյ իմում, որ նախակրթեալ վաղ ի հմտութիւն աւանդիցն՝ կարողանայր օգնել ի կատարումն խորհրդոյս։ Դարձուցի զաչս ի Պարսիկ, որ էին իակ ներդնուն ի վերս և յաշխարհագրութիւն նախնեաց. և առաջարկեցի զնա Պրեմեէյլի, որ յանձն էառ յաւելուլ զնա ի պաշտն

թանգարանին։ Յուցի եւ նոնա, զի ժամ էր յայտ առնելոյ հը-նարագիտաց Եւրոպայ զգանձն՝ որում կայի ի պահ։ Ընկալաւ նա զառաջարկութիւն իմ այնու փութով, զոր եցոյց նա միշտ ի նպաստս գիտութեանց և արուեստից. այլ հանգամանք ժամանակին պէսպէսք խափանեցին զարգասիս բարեսէր կամաց նորա. ի սկզբան անդ չքաւորութիւն գանձուցն, ապա աշխարհաժողով աւագանւոյն, ապա համախմբութիւն հանուրց կարգաց, և այլն։ Ասա հրաման եղև Պարսկեի անցանել յայլ պաշտօն ի մատենադարանին, ոչ ինչ իսկ իրաղեկ դոլով իմ զայնմանէ։

ՅԻՇԱՏԱԿԳ.

Զ. Անագրանայ։

Դիւգիք յորդորեցին զնս ի գրել զուղեւորութիւն Ընաքարսեայ։ Յամին 1755, մինչ էի ես յԽոտաչա, ոչ այնչափ սիրա եղեալ յայրդի հանգամանս քաղաքաց ընդ որս անցանէի, որչափ ի նանեի պայծառութիւն նոցա, ի վեր ընթացեալ ի դաստ՝ յորում ելեալ զվիճամբք առնէին նախանձընդդէմք առ ի գրաւել զպարծանս գիտութեանց և արուեստից, զմտաւածէին՝ զի վէպք ուղեւորութեան ընդ աշխարհն յաւուրս Լաւնի Ֆ., մինչև ի պարագայս ինչ ամաց կարէին յանդիման առնել օգտակարագոյն և ցանկալի յոյժ տեսարանս զպատմութեան մարդկային հանճարոյ։ Համառօտագիծ պատկերաւս ասց զՀաւատսիս իրացն։

Գաղղիացւոյ ուրումն անցեալ ընդ Աքրկեայս, տեսանէ ի Ցիկիլոն զՀերոնիմս Քարատն՝ որ գրեաց գրեթէ զամենայն ազգի ազգի իրաց, և մատենագրութիւնք նորա բովանդակին ի տասն հատորս անծայս. ի Պարսս տեսանէ զՔիորքիճիոյ,

որ նկարէ ջաղանգ դեղովք յորմն մայր եկեղեցւոյն. ի Մանաուա զկոմսն Բաղատասար Քասթիլիօն, զմատենագիրս հրաշալեղն գրոցն որ մակագրի Ռոդոնիկ. ի Վերանա զՔիրաքաթոր բժիշկ, իմաստասէր, աստեղաբաշխ, չափաբան, բանաստեղծ, աշխարհագիր, և անուանի յամենայն մասունս յայսոսիկ զեղուութեանց, այլ մանաւանդ ի բանաստեղծութեան. քանզի բաղմագոյնք ի մատենագրաց խնդրեին յայնժամ զնենալ անուանի յամենայն ազգի ազգի գիտութիւնս, որպէս հարկ իսկ է պատահել ի մեւս բանասիրութեան յաշխարհս ուրեք. ի Պատաւիան կայ նա ի լուր վարժապետելոյ Փիլիպպեայ Դեկիոսի օրենսգիտի, հռչակաւորին գերազանցութեամբ հանճարոյն և գիտութեան: Բազաքս այս էր ընդ տերութեամբ Վենետացւոց. և Լուդովիկոս ԺԲ. տիրեալ ի դաւառս Մեդիոլանու, կամեցաւ պայծառացուցանել զմայրաքաղաքս նորին՝ կացուցանելով անդ զՊեկիկոս: Նա խնդրել զնա ի հաստատակապետութենէն, որ հակառակ եկաց խնդրոյն ընդ երկար. և ոչ դադարեցին վէճք, մինչև պատրաստել երկուց պետութեանցն ի պատերազմ առ ի ժառանգել զբերնագէան:

Յետանէ ուղևորն ի Վենետիկ զԴանիել Պարպարոյ գերազանցաբանեալ ի բանասիրականին, որ պայծառացոյց զՀանրաբուբ մեկնութեամբք Հռետորականին Արիստոտելի, թարգմանութեամբն Վիտրուվեայ, և Ճարտարքն զընդարձակութիւնք: Յետանէ և զՊողոս Մանուկիոս, որ բարգաւաճեցոյց զբազպագրութիւն, և յաջողեցաւ ի գիտութիւնս ոչինչ նուազ քան զՀայոյ իւր Ալդոս Մանուկիոս: Գտանէ նա առ Պողոսի զամենայն տպագրութիւնս նախնեաց յոյն և լատին մատենագրաց, վերատին ի լոյս ածեալ ի հռչակաւորագոյն մամլոյ խառնեալ, և մանաւանդ զՍիկերոնին ի չորս հատորս սնծայս տպագրեալ ի Մեդիոլան յամին 1499. և զՍաղմոսն քառալեզուեան, Եբրայեցերէն, յունարէն, քաղդէարէն և արաբացի լեզուաւ տպագրեալ ի Գենուայ յամին 1516:

Յետանէ ի Փերրարիա զԱրիոսթոյ, ի Բոնոնիա զՊեցնաբիւր հանճարակ պարապեալս վարժիչ օրենսգիտութեան, որոց վարժապետեր Ռիչինի. և ընդ նոսա աշակերտակից զՍալիցիագ, որ ընդ հուսկ ուսմանց վարժապետաց նահանջոյց զիւառս Պարթոլոյ և զԱբուռսաս: Ի Փլորենտիա տե-

սանել զՄարգարէն, և զպատմագիրսն Կուիլեարտինի և զՊՕ-
զոս Ճիմվէ, զՀամալարանն բարգաւաճ. և զազգատոհմն Մէ-
ռիչի, Եբրեմն ի վաճառաշահ ևեթ պարապեալ, և յայնժամ
իշխանակից և ազգակից արքունեաց բազմց. որ յառաջուանն
պայմանի իւրում եղոյց առաքինութիւնս մեծամեծս, իսկ յեր-
կրորդումն յուսութիւնս մեծամեծս, և որ միշտ եղև անուանի,
զի միշտ իսկ փոյթ եղև նմա զգիտութեանց և զարուեստից։
Ի Սենա զՄաթիոյ պարապեալ ի մեկնութիւն Դիոսկուրա-
ցւոյն. ի Հռոմ զՄիքէլանճելոյ պարապեալ ի կանգնումն
գմբեթի սրբոյն Պետրոսի, և զՊափայէլ ի Նկարել ի սրահս
Վատիկանու. զԱռալէթի և զՊէնոյ, որ յետոյ կարգի-
նալք՝ այլ ի ժամանակին յայնմիկ եին քարտուղարք Լեոնի ԺԴ.
զԲրիսենոյ՝ որ ի նախկին տեսարան տայր զՍոփոնիսքէ, զա-
ռաջին ոգբերգութիւնն յորինեալ յարգեաց. զՊերօալտ տե-
սուչ Վատիկանեան մատենադարանին՝ պարապեալ ի հրա-
տարակել զՏարեգիրս Տակիտոսի, որ այն ինչ ի Վեսպասիանոս
գտեալ էր, և Լեոնի Ժ. զնոց առեալ զայն հինգ հարիւրց
ոսկի տուքանիցդ. և զնոյն ինքն զքահանայապետն Լեան, որ
բարձս խոստանայր գիանոց ամենեցուն որ յամենայն ազգաց
գային բնակել ի սահմանս իւր, և վարձս մեծամեծս՝ որոց բե-
ռեին ձեռագիր մատեանս նորանորս։

Ի Նէապոլիս տեսանէ նա զԹաղենիոյ պարապեալ ի նորո-
գել զվարդապետութիւն Պարմենիդեայ, նախկին վերականգ-
նող եղեալ խմաստասիրութեան ընդ Պէյլբէի. և զՀիբոքրատ
Պրունոյ, զոր բնութեանն գոգցես ընտրեալ իւր ի Թարգման,
ի ներբնէն նմա զհանճար՝ զուրկ զնա ի ներսէն առաջնոր-
դութեան անձին կացուցեալ էր։

Մինչև ցայսմայր անց արագապէս ուղևորս ընդ խաղաղս համ
օրեն, շուրջ պատեալ ի սքանչելեաց՝ այս ինքն է յաւանգիս
մեծամեծաց և յաւագ սրբոյ, և ըմբռնեալ ի զարմանս՝ որ
յաւելուին անդադար։ Հանգուցեալս տեսցէ նա սքանչել-
ս ի յաճախել զարշաւանս իւր. և քանի հունձք անտի նորա-
նոր գիւտից, որպիսի ազբիւր մասնահանութեանց ի ծագումն
գիտութեանց՝ որք լուսաւորեցին զԵւրոպա։ Զաս հանարիմ
ցուցանել ևեթ ի հարանցն զՀամալսարանութիւնս զայսոսիկ.
այլ որ առաջինայս է իր՝ ձգէ զնս զՀան, և պահանջէ այլ ևս
բացատրութիւնս ինչ։

Ի հինգերորդ և 'ի վեցերորդ դարս թուականութեան փրրկչին Հերուք, Գոթք, Ռաղոթք և այլ ազգք ցայնվայր անծանօթք, նուաճեցին զԻտալիա. իսկ 'ի հնգետասաներորդումն 'ի բարեբախտագոյն գերութիւն նուաճեցին հանճար և զօրութիւնք մնաց, զորս հրաւիրեցին անդր, և կամ գէթ հիւրընկալեցին ազգատոհմք Մէսիլի, Էսթ, Ռերոլինի, և Կոնծակա, և ևս կրոսերագոյնք յիշխանաց, և այլ և այլ հասարակապետութիւնք։ Ամենայն ուրեք աւագ որեաք, կէսք ընիկք ծնեալք անդ, այլք անդր յայլոց աշխարհաց ձգեալք, ոչ այնչափ վասն անարդ շահից՝ որչափ վասն պանծալի պատուոց. և այլք դարձեալ հրաւիրեալք յազգս մերձակայս, ծաւալել 'ի նոսա զգիտութիւնս, հսկել 'ի գաստիարակութիւն մանկուց և յառաջութիւն իշխանաց։ Ամենայն ուրեք կանգնէին համալսարանք, դպրոցք, տպարանք ամենայն ազգի ազգի լեզուաց և գիտութեանց, մատենադարանք՝ որ անդադար ճոխանային մատենիւք հրատարակելովք 'ի քաղաքս իւրաքանչիւր, և ձեռագիր մատենիւք եկեալովք հետ զհետէ յաշխարհաց՝ ուր տակաւին տիրէր տգիտութիւն։ Ճեմարանք այնքան յաճախեալ, մինչև 'ի Փերրարիա իրր երկոտասան, 'ի Բոնոնիա իրր չորեքտասան, և 'ի Սենա վեշտասան գոյին ճեմարանք, կանգնեալք 'ի բարգաւաճութիւն գիտութեանց, բանասիրութեան, լեզուաց, պատմութեան, և արուեստից։ Յերկոսին 'ի նոցանէ, յորոց մին նուիրեալ էր Պղատոնի, և միւսն աշակերտի նորին Արիստոտելի, յուղիին վէճք նախնոյն խմաստասիրութեան, և նորոյս հետազօտէին կարծիք։ Ի Բոնոնիա և 'ի Վենետիկ մի 'ի կաճառաց ասաի տեսուչ էր տպարանի, ընտրութեան թղթոցն, տառիցն ճարտար ձուլուածոյ, ընթերցուածոյն անսխալութեան, և ամենայնի որ ինչ 'ի կատարելութիւն նորանոր տպագրութեանց էր կարեւոր։

Ապաւել քան ամենայն ուրեք յԻտալիա յայնժամ զարգանային օր ըստ օրէ գիտութիւնք 'ի նախանձընդդէմ ջանից այլ և այլ պետութեանց՝ յորս բաժանէր աշխարհն, և 'ի նահանդին իսկ բարեխառնութենէ։ Ի պետութիւնս իւրաքանչիւր մայրաքաղաքք, և կրոսերագոյնք ևս քան զնոսա գաստակերտք ունէին անյապաղէս գիտութեան և փառաց. ամենեքին գրեթէ առ հասարակ մատուցանէին ասուեղաբաշխից գիտա-

բանս, անդամանգնեաց շուրջ սեսանելեաց տեղիս, բանադիտաց պարտէզս, բանաստրաց ամենեցուն Ժողովարանս մատենից և գրոչմածաց և հին աւանդից, և ամենայն ազգի ազգի հանճարոց նշանս երևելիս պատուոյ, ընդարձակութեան և մեծութեանց։

Դարձեալ և ըստ բնութեան նահանգին, ոչ սակաւք գտանին յոտալիա երևակայութիւնք ժիրք և բեղմնաւորք, միաբարգաղափարովք, խորախորհուրդք, բաւականք ի մեծամեծս թեւակոխելոյ, կարողք ի խորհել ընդ երկար, և անկարողք ի ձեռնեթափ լինել ի քաջ խորհելոցն։ Բարեմասնութիւնքս այսոքիկ և այսքանեաց պարարութիւն հանդամանաց մատուցին Խաալոյ զայնչափ հղոյս գիտութեանց և հանճարոց, որք ի պարագայս ինչ ամաց սերարձին զնա գեր ի վերոյ քան զայլ գաւառս Եւրոպայ։

Զ.Բրիսոթոյ յաւուրս Լեոնի տասնեերորդի ժամանակագրեալ, մարդէք ինձ ընդ ժամանակակիցս քերթողս ածել և զգիտիթարքս, թէպէտ և սա իբրև հարիւր և յիսուն ամաց երիտասարդն է քան զնա ժամանակաւ, և զթասայ՝ որ մեռաւսան ամաւ յետոյ ծնեալ գասանի։ Առաջնոյն պատճառ, զի քերթութիւնքս իւր խաալականք գրեթէ անդադարն ի սկզբանէ անտեսք լեալ՝ առ քահանայապետութեամբ Լեոնի ժ. պատուեցան, և յաճախեցին տպագրութիւնք նորս և մեկնութիւնք. իսկ երբորդին, քանզի Թասայ առաւելապէս ընթերցմամբ Արիոսթոյի կրթեցաւ. որպէս համանուանք Վերոսի ակունք նորա և բերանք՝ ընդ որս հոսէ ի ծով յորջորջին։ Ամենայն ազգի ազգի բանաստեղծութեանն սեռակք բարգաւաճեալ յայնժամ, թողին օրինակս ի նմանութիւն։ Ընդ բանաստեղծս խաալայիս արժան է յիշատակել և զԵռնեարգոս Թասայ ըստ հայր Տրիսուատայ, զՀերակղէս Պենթիվլիոյ, զՄենիկաղ Քարոյ, և զՊէրնի. և ընդ լատին քերթողս զՄանածծար, զԳարլիցիեռս, զՍ.խաա, և զՊերբալը. իսկ ընդ այնոսիկ՝ որ սա զաւանդք քան թէ քերթողք կոչին՝ մարմ է դասել զՄոն ի, զՄաքքեաւելլի, զՊոնտրոթթի, և զՊէնվենուտոյ Չելլինի՝ ճարտար ի քանդակագործութիւն, յոսկերչութիւն և ի փոքրագրութիւն։

Զարգացման ճարտարապետութեան յայնմ դարու վկայեն

ոչ միայն երկաթբութիւնք Սերղիոյի, Վիճիոլոյի, և Փալլաֆոյի, և Հոլլք մեկնութեանց գրոցն Վ խարուեայ, այլ և շինուածք հատարակաց և իւրաքանչիւրոց կանգնելոք յայնժամ՝ որք ցարդ իսկ կան։

Կիսարիւս յիշատակեցի զՊանարիթեթի, զԻտիֆոյել, և զԲօրբեՀիոյ. այլ պարս է յաւելուլ և զՅուլիոս Հռոմայեցի, զԹիցիանոյ, և զՎեղգիլաս Սարթոյ Ժամանակակից, և զՀոլլս հանՀարոյ կրթեալս ի Նոցունց կամ ի Նեարուց նոցին։

Հանապազոր նորանորք ի լոյս ածէին մատեանք յաղագս վարդապետութեան Պղատոնի, Արիստոտելի և այլոց նախնի իմաստասիրաց։ Յամենա քննաբանք, որպիսիք ոմանք էին Գիրարդաս, Պանուենիոս, և Սիկոնիոս, վասատակէին ի հնախօսութիւն Հռովմայ. և քաջաբար գրէին առ հատարակ ժողովին զարարեալս իւրեանց։ Եւ մինչև ոչ մատենագիրքն հեռատոյտեն՝ մինչև ի հնագոյն ազգին ի վեր ընթացեալ՝ զհամաշխարհական պատմութիւն մարդկան, ուրմարդք անվնասիրք գնեալ գրեալ էին ահագին վասանգաց առ ի գիւտ տարաշխարհիկ և անծանօթ ազգաց՝ զորոց կարծիք եղեալ էին զոչիմեն։ Բրիստափոր Բարնմարդ գենուացի, Ամերիկայ Վեսպուչիոյ փլորենտացի, և Սեբաստիանոս Գաբոտի վենետացի պայծառացուցանէն զդաս յանուցս, ստուարացեալ ընդ հուլ յաղոց բարեաց խաղաղացոց, որոց պատմութիւնք յետ սուղ ժամանակի անցին ի խարագիրս՝ զոր արար Ռամուսիոյ հայրենակից նոցա։

Աստուն Կոստանդնուպօլսի յաղագս ելեալ յամին 1453, և առատաձեռնութիւն Լէոնի Ժ., ետուն դունդագունդ գիմել Յունաց յԻտալիա, ածելով ընդ իւրեանս զամենայն գիրս նախկին ի չարաբերութիւն։ Ոչ սան ժիրամիր ընթիկք զՏիւրոցն բարեառ, և զգիրս նոցա տարարեցին, Թարգմանեցին և բացատրեցին, և սիրաժակք երկրաչափութեան տարածեցան յամենեսին։ Բազումք զամենայն զկնանս իւրեանց նուիրեցին ազնմ, որպիսիք եղեն Քոմմանտին և Թարթալիա. այլք ընդ առաջին վասատակ իւրեանց կցորդեին զայն, որպիսի որ էր Մաւրոլիքոյ մեսինացի, որ պէսպէս երկասիրութիւնս թուաբանական, մեքենական, աստղաբաշխական, տեսարանական, երաժշտական, պատմական զԱրեկիլիոյ.

և քերականական ի լոյս էած . եւ և զվարս սրբոց ոմանց , և զՅայսմաւուրսն հաւատիկական , ոչ անտես արարեալ և գրանաստեղծութիւն խաղական : Որպիսի ոք էր և Օգոստինոս Վի-ֆիոյ վարժապետ իմաստասիրութեան ի Հռոմ յաւուրս Լեոնի Ժ. , որ գրեաց գիրս ասաստեղաբաշխական , բժշկական , քաղաքական , բարոյական , հաւատոցական , և այլ ազգի ազգի մատեանս :

Ֆաղլովի մուսիկացի , Ամբրոսիէնոսէնիթ աշակերտ Նորա , Պոլոնեէնի ի Պատաւիոնէ , և Վիկոյ գեներացի , Ճոխացուցին զաեսութիւնս անդամանենականս :

Ալարովանտի բռնութիւնքն գրատասանեւութ ամ պարապեալ ի անկարանութիւն և յիմաստասիրութիւն ի համալսարանին Բոլոնիոյ , եթող Ճառս բնապատումս յեսմենեասան հատորս յանծալս :

Ընդ հոյլս այսոցիկ անքաւ երկասիրութեանց , որ զայնուժամանակաւ ածան ի լոյս , ոչ ինչ յիշատակեցի զաստուածաբանական և զերաւագիտական մատեանից , որ ծանօթք են պարապելոցն ի գիտութիւնսն յայնոսիկ , և օտարացն յայնցանէ ոչ ինչ խնդրելի : Իսկ յայլոց գասուց սակաւս ևեթ գոգցես ինն ըստ դիպուածոց ածի օրինակս , շատ համարեալ զայնոսիկ ի ցուցանել զազգս ազգս բանասիրութեան՝ յոր ախորժելի էր յայնժամ պարապել , և զազգի ազգի հնարս՝ որ ի կիր արկանէին ի համասիրեա յաՃախութիւն գիտութեանց :

Զարգացումն արուեստից կրթեր զսիսորժակս տեսարանաց և զմեծագործութիւնս : Ուսումն պատմութեան և աւանդիցն Յունաց և հռոմայեցւոց մատուցանէր զսիպս վաչէլութեան և զհամեմատութեան և զկատարելութեան , որ յայնմայր չեւ էին : Յորժամ Յուլիանոս Մէտիչի , եղբայր Լեոնի Ժ. քաղաքացի Հռոմայ հրատարակեցաւ , ի հանդէս ածան յայնժամ խաղք . և յընդարձակ տեսարանի՝ որ ի հրապարակ Կապիտոլին կայմեալ՝ ի տեսիլ ածաւ զաւուրս երկուս մի ի կատակերգութեանցն Պլաւտոսյ , որոյ երաժշտութիւն և շուք նորանշան ածին զարմացումն ամենեցուն : . . .

Ի տեսանել ուրուք մերկանալ յանկարծ բնութեան զայնչափ գաղտնիս , խմաստասիրութեան ի վեր բերել այնչափ Ճշմարտութիւնս , և Ճարտարութեան այնչափ նորանոր հը-

նարա , 'ի ժամանակի յորում յաւելոյր աշխարհ նոր 'ի հին , թուէր արդեաք նմա նորոյ իմն ազգի մարդկութեան առնուլ գոյութիւն . այլ նուազեին զարմանք նորա ընդ այն ամենայն աքանչելիս 'ի տեսանելն , զի վաստակք և հանճար յաղթող գտանէին պատուականագունիցն իսկ աւագութեանց , և ընծայէին գիտնոց և բանասիրաց ծիրանին հռոմէական , խորհրդականութիւն արքայից , բարձրագոյն իշխանութիւնք , և ամենայն պատիւ և յարգ :

Ա՛ռ և ես ըղձակերա առնելոյ զուշադրութիւնն՝ զոր 'ի մոի ունէի ստորագրել , շատ էր 'ի նախանձընդդէմ փոյթ փառացն՝ որ ամենայն ուրեք յուզէր՝ յաւելուլ զամենայն նորանոր տեսարանս՝ զոր մեծապանծ յեղափոխութիւնն այն ներ-գործէր , և զդղրդումն ամենայն ազգաց Եւրոպայ , և զամենայն համեմատութիւնս ընդ նախնոյն Հռովմայ՝ որ ազգին միշտ 'ի միտս , և զամենայն որ ինչ մերձակայիցն աւելիք զապառնեաց . քանզի գար Լեոնի Ժ , եղև իսկ արշալոյս առյապայիցն գարուց , և յոլովք 'ի հանճարաց՝ որ փայլեցին յերկոտասանեերորդ և յերեքտասանեերորդ դարս առ այլ և այլ ազինս , զառաւելագոյն փառս իւրեանց ստացան 'ի նոցանէ՝ զորս Խաալիա յերկոսին 'ի նախորդ դարս էած 'ի լոյս :

Ա՛ռաջարկութիւնս այս պատկերս այնպիսի Ճոխս և բազմակերպս և հմտականս ինձ առաջի ընծայէր , զի 'ի սկզբան անդ ցանկացայ 'ի գրի առնել զայն . այլ ածի զմտաւ զի այլոց հրմտութեանց ինձ առ այն պէտք էին : Ուշ 'ի կուրծս ինձ անկաւ յայնժամ զի ուղևորութիւն իմն ընդ Եղլադա 'ի ժամանակս Փիլիպպէայ հօր Ալէքսանդրի , առանց խափանելոյ զիս 'ի սովորական վաստակոցս , տայր ինձ պարապ ամիսս մի 'ի միջոց ինչ ժամանակի որ ինչ վէպք Յունաց ընծայեն մեզ ցանկալիս , և զանբաւ մատուանս գիտութեանց , արուեստից , կրօնից , բարուց և սովորութեանց , այլովքն հանդերձ , զորովք զանց առնէ պատմութիւն . և հաճեցայ ընդ խորհուրդս ընդ այս : Եւ բազում ժամանակս խոկացեալ 'ի նոյն , ապա բուռն հարի 'ի գործ յամին 1757 , 'ի դառնալն իմում յԻտալիոյ : Մարթ իսկ է կազմել մատենագարան մեծ յամենայն գրեանց հրատարակելոց յազգս Յունաց : Գրանովիոս զսակաւ ինչ մասն յայնցանէ ժողովեաց յիւրում խմբագրին յերկոտասան

հատուցյանմամբ։ յորում են և Ճառաք Ռուբրոյի Եմմեայ, Կրա-
գիոսի, և Մեսրոպոսի։ Մեսրոպոս ի մի վայր Ժողովեաց զամե-
նայն որ ինչ նախնեացն առանձեալ էր զանձնացուց, գասա-
կարգեալ զվայելութիւնս նոցա ի գլուխս գլուխս ըստ այլ և
այլ իրաց։ Յորմէ թէպէտ և ինչ ինչ անառս լեալ, և ինչ ինչ
ոչ ուղիղ իմացեալ, և բազում ուրեք՝ ոչ ինչ փոյթ լեալ է նմա
միաբանել զհակառակ վկայութիւնս, և դուն ուրեք նշանակէ
զդիրս և զգլուխս տպագրութեանցն՝ զոր ի կիր առնու, սա-
կայն ոչ է մարթ ըստ արժան բաւականին զարմանալ ընդ ան-
բաւ վաստակս նորա և գովասանել զերկասիրութիւնն։

Համարձակիմ ասել զի ոչ ինչ նուազ եղեն ինձ վաստակք ի
սուրգել զՆշմարտութիւնս։ Ահաւասիկ առաջի առնեմ զկարգ
վաստակոցս։

Ընթերցեալ իսկ էր իմ զնախնի մատենագրսն. այլ դարձայ
անցի ընդ նոսա գրիչ ի ձեռին, նշանակելով ի թերթս զամե-
նայն՝ որ ինչ ի լոյս ածէին զկարգս տեսչութեանց, զբարս և
զբրէնս ազգաց, զկարծիս խմաստասիրաց, և այլն։ Մինչև զեւ-
բաքանչիւրոց յայտցանէ իրաց բուռն հարեալ ի գրել, բաղ-
դատեի զքաղուածս իմ ընդ բնագիրսն, վերծանեի ապա զարդի
քննաբանս՝ որոց երկասիրեալ էր ի նոսին Ծայրագիր պարագ-
մամբ կամ՝ ի մասնէ։ Եւ եթէ գտանէի ինչ առ նոսա խուսա-
փեալ ի հետազօտութեանցս խմաց և պիտանի ինձ, Ժողովէի
զայնս՝ բաղդատեալ նախ ընդ բնագիրսն։ և եթէ այլազգ բա-
ցատրութիւնք նշ էին յիմացս, դառնայի վերստին յայրբիւրսն
անդր։ և դարձեալ եթէ խմաստս ինչ գեղեցիկս ինձ մատուցա-
նէին, ի կիր առնուի զայնոսիկ՝ նշանակելով զմատենագիրսն։

Բայց առաջարկութիւնն իմ ընդ մեծամեծ բարեմասնու-
թիւնս և գժուարութիւնս բազումս ի ներքս ածէր։

Ա։ Յուռնացն պատմութիւն, առ ի չհասանելոյ առ մեզ
բնաւ ից որ ինչ զնոցանէ աւանդութեանցն, անթիւ երկայա-
թիւնս առաջի առնէ մեզ զանցից և զկարծեաց։ Մատենագրի,
որում քննել եւեթ զայնոսիկ է անկ, մարթ է բաղդատել և
կշռել զհաւատարմութիւն վկայիցն՝ յորոց զվկայութիւնս ա-
ծէ. և որչափ յաճախեալ զարտաքուստանան, այնչափ առաւել
հանդէս առնէ հմտութեան իւրոյ և դատման։ Ալ իմ զՆ-
նաքարսիս ածէաւ ընդ Դշլադա, ակամասուս զնա առնելովա-

մենայնի և ականջալուր ի տեղեկագունից արանց, չմոռում նմա տեղի երկրայանաց, այլ գրեթէ ամենայն ուրեք հարկ առնեմ զհաւատսոխ բարբառելոյ։ Եւ ոչ այոչափ միայն, այլ և ի ժամանակին՝ յորում տամ նմա ուսանել՝ յոլով գրանաք էին պատմութեանց և մակացութեանց, և ոչ էր պարտ ուղղորդն պատուել միայն որ ինչ վաղ իսկ ծանօթ այլոց համարելի էր նմա։ Զգժուարութիւնս զայսոսիկ առաջին անգ ուսնելով միշտ, ուր ուրեք ոչ կարէի յաղթել նոցա՝ ջանայի խուսել ի նոցունց, մերթ զեերութիւն յանձն առեալ՝ որովհետուղէ գժուարութիւնն, և մերթ զանութիւն՝ որով բնաւ իսկ բառնի։

Ընդէն յառաջին գլուխ գրոցն յայտ առնէ Ագաթանգեղոս, զի ի գառնալ Իւրում՝ ի Սկիւթիա՝ անդ ի կարգի եդ զպատմութիւն ուսնորութեան իւրոյ, և յաւելու. «Ասուգասատում ևս յաջողէր ինձ առնել զամենայն, եթէ նուէն՝ յորում էին մնասեալքն իմ՝ չէր կորուսեալ յեւբանեանն Պանտոս»։ Յորմէ՝ ի միտ առնուլ է, զի նա յանկարկել վերստին ի վասատակ իւր, առ՝ ի չգոյէ նոցին նպաստից՝ որ կարեւորքն էն մեզ, չկարաց նա զհաւատսոխն աւանդել զերաց ինչ զորոց ընդ ազգա ունէր ի մտի զբիշատակ։

Ի քսաներորդ գլուխ գրոցն կամի Ճշգիւ զգենս Նշանակել զպարենից, և նոքին իսկ զպէսպէս ստացուածս ամենեցուց. այլ ոչ կարացեալ զայն, ասէ առեալ իւր զՃշգրիտ ցուցակ պարենից, բայց կորուսեալ զայն, յիշելով եւեթ զի կեղեր ցորենոյ վաճառէր հինգ դրամակշռաց, և արջառ ընթեր երբ ուսմանից և կամ եօթն անասուն և երկուց լերանց, և այլն։

Ի ԽԶ. գլուխն ի ներքս ածէ զորենս Ղիգուրկայ, որ օրինադրեր հաւատարութիւն ընչից քաղաքացոյն։ Օրինք այսպիսիք ոչ ընդ երկար տեւեն սովորաբար. և որով իւրք պարսկեալ զայն օրենգրին, վասահէր ընդ երկարատեւութիւն նորա։ Կարելոր է խնդրել, այլ առ՝ ի չգոյէ աւանդից՝ անհնարին սահմանել զայն. վերոյ այսպէս տամ Ագաթարեայ բարբառել. «Ի ժամանակին յորում էի ես ի Պարսս, այլոյրեալ էր կարգ ժառանգութեան ազգատոհմից՝ հրովարտակաւ Եղիտագեայ պարենի, կամելով նորա այնու վրէժ խնդրել յորոյ իւրմէ։ Եւ վասն զի չեղև ինձ փոյթ ուսանելոյ զհին կարգս նոցա,

չկարեմ ասասնօր բացատրել զմիտս օրէնդրին՝ եթէ ոչ ի սկզբանէ օրինաց նորա անդրէն ի վեր ընթանամ։ Եւ ապա ուղղորդ իբր գուշակելով եթէ խնդասարիլ ինչ ինչ։

Իսկ ուր ուրեք չեղեն բաւական հնարքս այսոքիկ, զգուշութիւն պատուէրն։ եթէ զսովորութեանց՝ զորս պատմի եթէ մատենագիրք ոք կրսուերագոյն յոյժ քան զժամանակս Աւագքարսեայ, և եթէ զանցիլ՝ որ յետ ամենայն քննութեանց թողին զնա յերկբայս։ Բայց զգուշութիւնս զայսոսիկ ոմանք ի մոռացօնս ինձ համարեցան, և զվասն երն հարցին զիմոզոյ ի մոյ ինչ ինչ անդիշատակ։ օրինակ ինն, թէ ընդէր ոչ յիշատակեմ ինչ զկարծեցեալ օրինացն կրեսուացոց՝ որ հրաման տայր ասլսատմբել ժողովրդեան հարատահարելոյ։ զոր Մոնթէսքէօ յիշատակէ իբր յԱրիստոտէլէ։ Բայց խաբի Մոնթէսքէօ։ քանզի Արիստոտէլ իբր զեղծումն ինչ հակառակ օրինաց զապրատմբութիւնն զայն յիշատակէ։ Եւ հասարակաբար կարեւոր էր ինձ առնուլ զամենայն ի քննութիւն, բայց կարեւորագոյն էա՝ մի ամենայն ուրեք տալ զվնիա։

Բ. Միւս ևս գժուարութիւն առաջի կայր ինձ, դատաստան միոյ ի դատաւոց բանտարեաց, որ մեծարոյ յոյժ է ինձ, այլ դժուարահաւան։ Զեր ինձ մարթի ածել զԱնաքարսիս ի Դեզոս, ի Ցեմպէ, և յաշխարհախուզիչ ամս Եղլադայ, և անզգայ զնա առնել գեղջ տեսարանացն։ Զեր ինձ մարթի ի կիր առնուլ զարամախասութիւն, քաջագէպ ի բառնալ զտաղտուկ միաձայնութեան, առանց մատուցանելոյ զԱնաքարսիս առ աւագ որեաք ժամանակին, եւ և առ անծանօթս ոմանս յերեւելեաց՝ յորոց մարթէր նմա առնուլ տեղեկութիւնս։ Ա.յսպէս սկիւթացին իմ տեղեկանայ հելլէն բանտարութեան՝ յԵվղեգեայ ամենացուոյ, այլ և այլ կարծեաց զառաջին պատճառաց՝ ի քրմապետ գեղն Դեմարեայ, ազանդոյն Պիթագորայ՝ ի միոյ ի պիթագորականաց ի Սամոս ի հայրենիս իմասասիրին։

Պաւանմիսս երկարաբանում առնէ յոյժ զանցս երեցունց պատերազմացն Մեսենիոյ։ որ այնպէս պիտանիք են ի գիտութիւն, զի ոչ ի դէպ էր զանց առնել զնոքսք։ և այնպէս քաջածանութիւ, զի առ ախորժելի ևս առնելոյ զնոսա՝ ամենայն զգվեստոր անցս նոցին յերիս ազգերդութիւնս։ Ոչ ինչ

խղճեցի տալ պատմութեան իրացն զկերպարանս զայս, զի և Պատանիսս զայնոսիկ գրեմք առ հատարակ ի կիր առնու՝ ի քերթութեանցն Տիրատայ և Հռխանոսի, որ երկոքին խակ ողբերգաբար զՀաչակաւոր պատերազմունն վկայեցին։ Զի-կուցի խակ ընթեռնլեաց ի միում ի տեղեկութեանցս ի գլուխն Խ, զոյսատՀան համարձակութիւն խնդ։

Արդ խիթայի զի ի գասու անդ բանասիրացն, զորոց տաս-ցի, իցեն որք սովորեալ ի խիստ և յանգարդ խնդիրսն՝ ոչ նե-բեսցեն խառնելոց յիմեն ի վկսս անդր պատկերաց առ ի բարձակերպ փոփոխութիւն. և յորմէ խիթայի, նոյն և պա-տահեաց։ Բազումք ի նոցանէ համարեցան վկայս մատուածինս զերկասիրութիւն իմ, և գոգցես իմն ի յանցանս գրեցին ինձ զայն։ Այլք ի նոցանէ ներողագոյնք եղին հաւատարմաբար խորը ընդ պատմեալսն և ընդ եղանակ պատմութեանն. և հա-մարեցան զպատմեալսն հաստատեալս բոլո բաւականին, որ-պէս թուի, ի բազմութենէ վկայութեանցն՝ զոր ի ստորոտս պատմութեանց նշանակեմ։ Խակ յաղագս եղանակին պարտ էր նոցա զնուա ածել, զի զարդք որովք ուրեք ուրեք Ջանա-ցայ պՀնել զպատմութիւն իմ՝ քաջ պատկանաւորք են յունա-կան ոգւոյ, և զի կեղծիք բան պատշաՀի ի կիր առեալ մար-թին պիտանի լինել պատմութեան, որպէս ենն խակ Ճչմար-տութեան։

Լաւեմ զտագանս ինչ գուշնաբերայս, զորս ընթերցայ ի թերթս ուրեք չջնաբերականս։ Որմն տագանէր, զի ոչ քաղա-խնդրեալ հոլանեմ զակիզն առասպելեաց. և անդխատայր անշուշտ, զի և Ճարտարագոյնք ի քնեաբանից ընդունային զնեա եղեն հոլանելոյ զայն, և իշխեմ խակ ասել՝ զի անյայտ մեսցէ այն ի տգառ։ Այլ ոք խնդրեր, զի մանրաբանումս ևս գրեմ զվէպս ամենացաւոց որ յառաջ քան զաւուրս Աղջնի. այլ ոչ ոք ի նախնի մատենագրաց աւանդեաց զայն, և ինձ հարկ էր զտպաւան ևեթ ի կիր առնուլ, որոց գտանին առ նոսա յի-շատակք։ Դարձեալ և ի գնանոց որ յանգիսացոց ի խոյա-գիրս ուրեք քնեոզական Ճառից, հերքեալ զհաւատարմու-թիւն յունականի իրիք արձանագրութեանն՝ զոր Ցուբմանի ածեալ էր ուղղեալ ընդ արեւելս, և իմ վստակեալ էր ի բացատրութիւն նորին, ասց տպա զդատաստան իւր զՊՀղեր-

թութենէ Ամաքարանայ. և համարի զայն ախորժելի, այլ յոյժ վեր ի վերոյ ինչ։

Զիք ինչ առաւել տագնապեցուցիչ մատենագրի քան զայս-պիսի տարաժամ սոգանաս, զորս յոյժ դիւրին է առաջարկել, և հեղգել զայնոսիկ յոյժ դժուարին. զի ոչ գայսանեաք ինչ յամին։ Ամլ զայս ևեթ ասեմ, զի ոչ գրեցի ինչ՝ մինչև խորհեցեալ յայն յերկար, և մինչև բաղդատեալ ի հակառակ բանսն՝ որ ընդ առաջ լինէին ինձ՝ զկայութիւնս նախնի մատենագրաց և զկարծիս արդի մեկնչաց և քննաբանից, տալով ուր ուրեք պարան էր՝ զՄեռ. որ մերձաւորագոյն Հշմարտութեան թուէր ինձ։ Դաժկեցի զվաստակ իմ առ ի պիտանի ևս առնել զայն. հրաժարեցի ի փառաց քաջութեան, եթէ արդարև իցէ ինչ քաջութիւն մատենագրի հանդէս առնել բազմահմտաց գիտութեան ի բնագրի. ուր ուրեք կարօտ ինչ թուէին քննութեան, յետոյս հատորոց իւրաքանչիւր յաւելի տեղեկութիւնս զայնցանէ. և տեղեկութիւնքն այնոքիկ առ հասարակ կարևորք թուեցան ինձ, և են ի նոսա որ թուին ինձ զերծք ի սոգանացս վեր ի վերոյ ինչ գոլոյ։

Լաւ համարեցայ գոլ Հշդրտաբան, քան երևել խորհրդոս. լաւել ինչ ինչ, քան հաստատել զայնոսիկ ի գուշակութիւնս. հրաժարել ի հեռաղտեալոյ զպատճառս իրաց, ուր ուրեք հետազօտութիւնք իմ՝ որպէս զՀարատաբաղդութիւնն ի քննաբանից՝ յաւելուն մանաւանդ զնոսմութիւն իրացն. տալ ընթերցողացն խելամուտ լինել, քան ինձէն դիմդրաւել ի խելամտութիւնս։ Զարմանալ ինձ դայ յաշխարհս ընդ իմաստասէրս, որք ըստմանեալ գիտութեամբք իւրեանց առանձինն մեզ տեսութիւնս զհանճարոյ, զբնաւորութենէ և զբաղադրականութենէ Յունաց և Հռոմոց։ Իւրաքանչիւր ումեք ի մատենագրաց պարտ է իւրում առաջարկութեան զհետ գնալարդ առաջարկութեանս իմում ոչ պատկանի յոգէլ զուղղութն ի Յոյնս՝ առ ի տանել առ նոսա զմտածութիւնս իմ, այլ առ ի բերել զնոցայն առ իս՝ որքան է նմա հնար։ Իսկ եթէ սխալեալ ևս ուրեքիցեմ, և վաստակս իմ չիցէ զերծ ի վրիպանաց, ընդ այն իսկ ոչ ամաչեմ. զի ոչ աւելի ինչ իմաստութիւն լինէն պահանջի քան զառաւելն ինձ ի բնութենէ։ Յաւէ ինձ միայն թէ ընդէր ոչ վաղագոյն տասն ամաւ յառաջ

բուռն հարեալ ի վատահել, և ոչ տասն այլ ևս ամաց յեռոյ կատարեցի զվաստակն իմ, թէպէտ և զսոն առելի քան զերեսուն վատահեալ յոյն։

Եւ իբրև կատարեցի զոյն, ի վարանս կայի ընդ երկար զոր-պագրութենէն։ Թողուի արդեօք զայն ձեռագիր, եթէ վասն յոգնախառնուն յիշատակութեանց մատենից և ծանօթութեաց և աղբատակաց ոչ հարկ համարեի զտեսչութիւն մատենա-գրին ի տպագրութիւնն։ Յամին 1788, յամսեան դեկտեմ-բերի կատարեցի զոյն։ և ոմանք ի բարեկամաց խրատս տային ինձ պահել զայն մինչև ի կատարումն աշխարհահռչակն որ գուսանքեր, և ամենեցուն ի յոյզս էին միաբ։ Այլ այս փոխա-նակ յորդորելոյ զիս ի յամենցումն, ասիպեաց զիս տալ ըն-դերան վաղագոյն ի լոյս։ քանզի կամէի յարամբի զայն ի ներ-քին մուծանել։ զի եթէ յայնպիսուէ՛ խակ ժամանակի ձգէր նա զուրուք յինքն զմտագրութիւն, յաճախեր ինձ քաջա-լերս։ խակ եթէ վաղափուլ անկեալ կործաներ, գասնէի պատ-ճառանս սփոփելոյ զանձնասիրութիւնն իմ։

Բայց յաջողութիւն յաղթեաց անիկայութեան խմբի, և հոյլք բանասիրաց ընկալան զայն ներսոպամիտ քաղցրութեամբ, և օրագիրք Գաղղիոյ և այլոց ազգաց ներբողս յորմէնեցին զայն-մանէ։ Հանդերձ այլովքն և հանառատութիւն ինն նորին ման-բամասն ի լոյս եղ յօրագիրն անգլիական՝ մեկագրեալ Աշ՛ ն խնդիր ամառան, կամ Օրագիր Բանասիրական, Հատ. Զ Ա։ Մա-տենագիրքս այնու մեծարանաբ իսոին զինէն, զի ընդհանրապա զիս կացուցանեն։ այլ յաւելուն ինչ, զորմէ պարտ է ինձ տալ տեղեկութիւն։ Թէպեա, ասեն, առաջարկութեան գրոցս պատճառս տուեալ իցէ Կամանտին Ինչնան։ Կամակա-նին այն յօրինեցաւ ի 1739 և ի 1740 ի միաբանութենէ բա-բեկամաց՝ որք ի Կանտաբրիգիոն կատարէին զուսանութիւն։ ելանց ի Համալարանի։ և ի 1741 ամի տպագրեցին զայնս-սիկ ի ձև ութածաղ, երկոտասան ևեթ օրինակս դրոշմեալ։ և երկրորդ անգամ յամին 1781 տպագրեալ զայն ի մի հատոր քառածաղ, թէպէտ տառաելադրոյնս եռատն դրոշմել օրինակս, բայց տպագրութիւնքս այսորիկ ի պէտս մատենագրացն ևեթ արարան, մինչև օրագրաց անգլիացոց ասել՝ թէ նամականին այն տիրապէս ոչ հրատարակեցաւ։ Այլ քանզի յաւելուն

ևս, զի բազմից առաւն առանձնաբար օրինակք, մարթ իցէ կարծել և զիս հաղորդ լեալ գաղանեացն, առ հաւատչեայ կարծեացն զայն իսկ համարեալ՝ զի շարայարութիւն միմեանց թուին վաստակքն երկոքեան։

Երկոքին ևս կացուցանեն ի յուռատան, ի ժամանակս իսկ մերձաւորս միմեանց, վկայ ականատես՝ պարապեալ ի ժողովել, որ ինչ թուի նմա արժանի գիտութեան։ Ի Ն-մանանն -ՏԻՆ-ԱՆ Կղէանդրոս, գործակալ արքային Պարսից ՅԱԹԻՆս յաւուրս պէզոյտնեաման մարտին, Թզթակցի անընդհատ ընդ աւագանին և ընդ ոմանս ի Պարսից։ Պատմէ նոցա զանցս մարտին, զգրգիռս հանապազորդութեան նորին, և զՀերձուածս ազգաց Եղլատայ։ Ստորագրէ զզորութիւնս նոցա՝ որ ընդ ծով և ընդ ցամաք, զՀրահանգս զնեուորութեան, զքաջաքանութիւն, զտեսչութիւն, զբրենս, զբարս, զասնս, և զկիշատակարանս, ոչ ինչ ի հետապնին աչաց նորա անուս լեալ։ Խօսակից լինի ընդ Փիգիասայ, ընդ Ասպասայ, ընդ Ավիբիագեայ, ընդ Սոկրատայ, ընդ Կղէոնի, և ընդ Թուկիդիդեայ։ Գրէ զնմանասիրութենէ Յունաց մերթ առ Շմերդ ի Պարսս, որ ի պատասխանեալն Ճառէ զնմանասիրութենէ Սոգաց. և մերթ առ Որշամ՝ որ ուղևորէին յայնժամ ընդ Եգիպտոս, և որ ի պատասխանին գրէ առ նա զորինաց և զհին աւանդից աշխարհին։ Որով Ճարտարապէս առ միմեանս ածեալ կարևորագոյն մասունք պատմութեան Յունաց, Պարսից և Եգիպտացւոց, հանեալք ի նանիի մասանդրաց, զուգակցիս ցանկալիս և հրահանգիչս յանդիման առնեն։ Առաջարկութեանս այսմիկ կարի քաջ պատշաճաւոր և կատարումն գտանի։

Արդ եթէ էր ինձ առաջի օրինակս այս, կամ ոչ ձեռնարկեի ի գործն, և կամ ոչ կատարեի զայն։ Զայս վկայութիւն եդի միում՝ ի բարեկամաց իմոց, որ կայր յայնժամ՝ ի Լոնդոնն, և էր Տիւթան կաճառդ արքունի ընկերութեան, և մի՝ ի տարակայիցն յոգացելոց ձեմարանին բանասիրութեան, և անուանի բազում երկասիրութեամբք։ Նորա ցուցեալ զգիր իմ առ գրիչս բանասիրականի օրագրին, հաճոյ թուեցաւ նոցա յեռուել զման ինչ նորին ի միում ուրեք յօրագրացն, յամին 1790, յամսեանն ապրիլի, յեջ 477։

Յայմմ վայրկ եհաս առ իս յԱԳգոյոյ օրինակ մի հոյակապ Նամակաւոյն ՈՒՆԻՆԻՄԻՆ քաղաքապետ, և ի Ճակատ նորին զկնոցուն այսպիսի ձեռագրեալ.

«Ցովսեփ Իշխանապետ, Նորք յազգատոհմէ, ի բարեպատեհ «ժամու փութմամբ ի ձեռն պարսն Պարթելբմեայ, ամենիշխան «պարապետի վերհսկաւոր արքային Գաղղիոյ յարքունիս Լոնդ«նոնի, մատուցանել հարկաւոր ներ տեսուն Պարթելբմեայ զնարկ «մեծարանաց՝ որ պարտ և պատշաճն է բազմահմտութեան ընտրեալ «մատենագրին Ո-ՆԼ-ՐՈ-ՒԼՆԻ Լրագրոյն Աստուածոյ ՅԵԱՊԳ, «յորելով առ նա ինքն զմատեանս զայս Ամենիմանի նամակաւոյն։

«Զսկիզբն երկասիրութեանս այսորիկ է տեսանել յերկրորդ «գումն յառաջաբանութեան ի Ճակատ գրոցն։ Կամանկանին «մանագրեալ տառիւս Փ, է Փիլիպպոսեայ Նորքի կոմսին Հար«տութիւնեայ, անդրանկին Համանուան իւրոյ մեծի առնեղբայ«րին։ Իսկ մանագրեալքն տառիւս Կ, են եղբօր նորա Կաթ«լոսի Նորքի, որ և նա ինքն ամբարձաւ ի բարձրագոյն բարձ «մեծի առնեղբարին, այլ վաղամեռիկ լեալ՝ եթող ի սուգ զաղ«գատոհմ իւր և զնայրենիս։ Ապաք ի նամանանուն՝ են որ «յազգականաց Նորցն, և են որ ի բարեկամաց գրեալ են։

«Զգնչասելով ընդգումնեալ տեսուն Պարթելբմեայ զգուշնաչաբ«նուէրս զայս գրատրական, իբր ոչ եթէ յանդգնի մատուցումն «համեմատեալ զերկասիրութիւնս զայս ընդ հրաշալան Ո-ՆԼ«ՐՈ-ՒԼՆԻՆ Աստուծոյ, այլ ցանկայ եթէ տալ զառհաւատչեայ «մեծարանացն առ մեծանուն մատենագիրն, յայտ առնելով՝ «թէ քանի քաղցր է տեսանել զառաջարկութիւնն յիսուս ա«մբ յառաջ սկսեալ ասա՝ յետ բազումք ամաց յայսպիսի սէրմ «կատարութեան ածեալ ի ձեռն մատենագրի արժ անուրի նմին, «առանց ինչ իրազեկ գ ոլոյ.

«Ի Լոնդինոն. ի 21 Դեկտեմբերի. 1789 »։

ՑՈՎՍԵՓ.

Յառանդել առա զպանծալի սիրտակ իշխանապետին Ցովսեփայ, հրաժարեալ յանձնապրութենէ, և ոչ խնայեալ ի պարծանս

անձին՝ ցանկամ տեսանել զԿոմանին Անէնոյան 'ի գաղղիական Թարգմանեալ 'ի բարբառ։

ԶԵԿՈՒՅՑՈՒՄՆ Ի ՏՊԳԻՐՈՂԱՑ ՑԱՌԻԼԵՐԷ. Յետ մահուան Պարթելզմեայ Կոմանիանին ամենական վերսին տպագրեալ հրատարակեցաւ Լիոնզիս յամին 1798. և յանդիմանին նորոգ տպագրի անդ գասք զպատասխանիս զայս Պարթելզմեայ առ սիսական իշխանազնին Յովսեպայ.

ԻՐԱԽԱՆԱՔԻՆԴ ԽՆԴԱԼ.

«Պարծանս ինձ համարիմ Ջնորհ ունել ձեզ յարգաս պերճ
«օրինակի Անէնոյան Նամականոյն, զոր մարդասիրաբար յղեցիք
«առ իս, և մանաւանդ յարգաս պանծալի պիտակին՝ զոր հա-
«ճեցայքդ գրոշմել 'ի նմա ձերովք իսկ ձեռամբ։ Յանցեալ ա-
«մսոցայնի ի հաս յուսեն իմ համաւ մատեանիդ 'ի ձեռն Ձէն-
«քինարնի։ Ձեզ 'ի Ձեզոյ եղև ինձ ցարդ անցանել ընդ այն.
«Եթէ վաղագոյն եկեալ էր ինձ այն 'ի Ծանօթութիւն, չէր
«իմ արդեօք ձեռն արկեալ 'ի գործ, և կամ ջանացեալ էր նմա,
«Նագոյն չքնաղ օրինակին յարդարել զայն։ Ընդէր էր չհրա-
«տարակել զայդ, ընդէր ոչ յամենայն լեզուս Թարգմանել։
«Մտադիր զնչխարեալ աւուրս իմ Նուիրեալ 'ի Ճոխացուցանել
«նուաստ զդպրութիւնս մեր, Եթէ հմուտ գեղեցկութեանց
«անդրկանիզ էի բարբառոյ. այլ 'ի շարայարութիւն Նորին
«չհամարձակեի երբէք, զի մի գուցէ նոյն և ինձ պատահէր
«բանսն՝ որ ինչ յանդգնելոյն 'ի շարայարութիւն համախօսու-
«թեանն Պոսիէի 'ի վերպ ազգայ։

«Հաճեսջիք ընդունել զիարկ ինորհապարտ մեծարանացս,
«որով և այլն.

«Ի Լուսեափս. յառաջնումն աւուր յունուարի. 1790։»

ՊԱՐԹԵԼԸՄԻ.

ԿԱՏԱՐԵՑԱՒ ՑԻՐԱՏԱՊԱՐԱՆՍ.

ՊԱՐԹԵԼԸՄԻ 'ի մեծ ունէր տալ զհամար և զայլոց երկասի-
րութեանց իւրոց, որպէս զուղղութեանն Աստաքարեայ
էաւ. այլ ոչ կարաց կատարել զնորհուրդ իւր, թողեալ անե-
թերի տեղեկութիւնս ինչ և սուղ ինչ անհարկութիւնս, զորս
ոչ 'ի գէպ թուեցաւ հրատարակել։ Վասնակս այս, թէպէտ
և մեծի պարծանաց օձան, ոչ արգելաք բաւական մատուցա-
նէր նմա բերկրանս 'ի սփոփումն ցաւոցն՝ յորոց ընկէր, և
վշտագին միշտ զդացման նուազելոյ տակաւ գործարանաց հա-
գեալն։ Հաճոյ ևս թուեցաւ նմա վերստին յանն արկանել զԱ-
նարարսիս, և գտանել անդրէն յաւաջին վասնակս իւր 'ի հր-
նախօսութիւն զդրամոց, եդեալ 'ի մեծ ճոխացուցանել զնա-
շանն՝ զոր 'ի խնդալիր յիշատակաց ճեմարանին բանասիրու-
թեան տուեալն էր, և բովանդակել զայն յամբողջ մասեան։
Հանգոյն ուղղորի, որ անցեալ ընդ այլ և այլ աշխարհս՝ գտա-
նոյ կատարել զուրուրս իւր յերկիրս ծննդեան իւրոյ, այսպէս
Պարթելիմի զդրաւորական կենաս իւր սկսեալ 'ի հետազօտու-
թիւնս գրոշմածաց, և յաճեալ ընդ լայնածաւալ սահմանս
բանասիրութեան, և յաւելեալ աշխարհակալութիւնս նորա-
նորս 'ի նոսին, գաղտաւ անդրէն 'ի գրամատանն գիտութիւն,
և զերջին մասխոհութիւնս իւր նուիրեաց նմին։ Այլ ընդ
հուսկ նուազեալ 'ի նմա զօրութիւնք մարմնոյ և մտաց, ոչ նե-
րեցին նմա կատարել զուսաջարկութիւնն՝ առ որ տաժանա-
ւոր հետազօտութեանց և բազմամատակ քննութեանց պէտք
էին, և խափանեցին իսկ զնա յամենայն պարապմանց։ Եւ
վախճանեցաւ նա յետ երկարատև տկարութեան, թողեալ
անհատաբար զկարեւոր վասնակն։

Ոչ է պարտ աստանօր ներբողս զնմանէ յօրինել [1]։ զի եր-

---

1 Ներբողս զՊարթելիմեայ յօրինեցին Դիւրնուա, Սենթ-
քրուա, Լալանտ, և այլք 'ի բանասիրաց։

կասիրութիւնք նորա առ հասարակ ներբողն զնա, յաճախք ի ձեռս ամենեցուն։ Վկայեն ամենեքին խոր և ընդարձակ հմտութեան նորա, հանճարեղ և արդարակորով խելամտութեանց նորա և դատման, պարզ՝ ազնուական՝ ընտիր և մանաւանդ բազմաբեղանակ կերպարանաց բանիցն. զի ամենայն ուրեք զնա պատկանաւոր ոչպս կերպարանաց բանից պատշաճէ առաջարկութեան իրացն, զորոց Ճառէ։ Բնաւորութիւն նորա սիրտ և հոգի կենդանապիսի նկարագրեալ կան ի յիշատակն զոր եթող զկենաց իւրոց։ Պակաւուց ոմանց բարեկամաց նորա, որ յերկարակեացք քան զնա դատանին, ոչ այլ ինչ ասաս ի մեծարանս յիշատակի նորա մեայ մատուցանել՝ բայց զսուգ սրտի։

ՑԱՆԿ

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԵԱՆՑ ՊԱՐԹԵԼՄԵԱՑ

ՀՐԱՏԱՐԱԿԵԼՈՑ ԻՆՄԱՆԻ

ՏԱՐԳԱՆՈՒ Կարիսեայ և Պողիդորի, մատաղածին վէպք Թարգմանեալ ի հելլէն բնագրէն. 1760։

Թուղթ առ մարգիսն Օլիւիէրի յաղագս փիւնիկեցի արձանաց ենչ. ի պատասխանի երկուց Թղթոցն, զորս Սուէնթէն յեռեալ էր ի ծգ հատոր Դաշանցն իմաստասիրականաց։ Ի Լ-ոէէոէ- Տ.ԸՈ-որ. 1766։

Խօսք զհանգամանաց յունական երաժշտութեան ի մէջ կոյս ջորրորդ դարու նախ քան զԹուականութիւն փրկչին։ Ի Լ-ոէէոէ- Տ.ԷՈ-որ. 1777։ Վերսին ապա տպագրեալ փոփոխութեամբք յՈՀՀորութեանն Ամաբարեայ, ի գլ. Իկ։

Հատ. արտասանեալ ի գաղղիական Ակադեմիսն յամի 1789. ի 25 Օգոստոսի, յաւուր երեքշաբաթի։

Հատ. յաղագս յունականի հին արձանագրութեան երիք զհասիցն ամենացուց, որ բերի զհաշիւ տարեւոր մեծց միոյ ի գանձուցն։ Ի Լ-ոէէոէ- 1792։

Խնդիրք զՊատրոնիսոյ, արտասանեալ ի 1748, և տպագրեալ համառօտիւ ի պատմական մասին ի յիշատակագիրս Ակադեմացն արձանագրութեանց. Հատ. իգ. էջ 19։

Տեսութիւնք ի մի ի դրոշմածացն Քսերքսեայ, որ Թագաւորէին յԱրշամտատ. արտասանեալ ի 1747. Հատ. իգ. ի նոյն յիշատակագիրս. էջ 404։

Տեղեկութիւնք յաղագս արձանագրութեան երիք Ամիկզեայ. արտասանեալ ի 1749, և ի 1750. Հատ. իդ. էջ 394։

Համառօտ տեսութիւն ի հնագրութիւն ինչ գրամական. արտասանեալ ի 1750. Հատ. իգ. էջ 30։

Ճառ յաղագս երկուց դրոշմածոց Ալեքսանդրոսի ազգային հրէաստանի, արտասանեալ ի 1749. Հատ. իգ. էջ 49։

Տեսութիւնք ի զենան պղնձիս գտեալս ի Յանտակ, համառօտեալ ըստ պատմական մասին. Հատ. իե. էջ 117։

Տեղեկութիւնք զդրոշմածոց ինչ հրատարակելոց յայլ և այլ մատենագրաց, արտասանեալ ի 1750. Հատ. իզ. էջ 532։

Ճառ յաղագս արարայի դրոշմածաց, արտասանեալ ի 1753. Հատ. իզ. էջ 557։

Տեսութիւք յաղիպտեաց և ի բաբառս, որով վարեին երբեմն ի Պալմիրա. արտասանեալ ի 1754. Հատ. իզ. էջ 577։

Տպագրեալ ուրոյն ի քառածալ և յանծալ դիպս. Ի Լոնդոն. Կէրէն Ն ՏէրՖոր։ Զորս Ռոբերտ Վուտ թարգմանեալ ի բաբերէն անգղիական, եւ ի տպագ ի նմին խակ ամի ի Լոնդոնեան։

Ցիշատակարան հնոց աւանդից Հռոմայ, արտասանեալ ի 1757. Հատ. իթ. էջ 579։

Տեսութիւնք յարձանս ինչ փիւնիկեցիս, և յայփաբետս՝ զորս ի Նոցունց է խմաստասիրել. արտասանեալ ի 1758. Հատ. Ը. էջ 405։

Բացատրութիւն պրէնեստեան միւսէոնին, արտասանեալ ի 1760. Հատ. Ը. էջ 503։ Տպագրեալ ուրոյն, և նորոգեալ առ կարդինալ Սիպիոնէլլի։ Ի Լոնդոն։ Կէրէն Ն ՏէրՖոր։ Զոր և կոմն Քայլիուս եւ տպագրել զհետ հին նկարուց Պետրոս Պարթոլեայ։

Հանրական տեսութիւնք ի համեմատութիւն եգիպտական փիւնիկ և հելլէն լեզուաց, արտասանեալ ի 1763. Հատ. Լբ. էջ 212։

Տեղեկութիւնք զդրոշմածաց ինչ (Թագաւորացն Պարթեաց) զհրատարակելոց յայլ և այլ մատենագրաց, արտասանեալ ի 1764. Հատ. Լբ. էջ 671։

Բացատրութիւն եգիպտականի երիցս բարձր քանդակի, և որ յարակից նմին փիւնիկեցի արձանագրութեանն. արտասանեալ ի 1767. Հատ. Լբ. էջ 725։

Տեղեկութիւնք զՈւռայ քերթութեանց՝ որ ի միւսմ աւուր

Ի թատերս ամենայնց Ի տեսիլ ած Էին. արտասանեալ Ի 1770. Հատ. ԼԹ. էջ 172։ Վ Էրսին տպագրեալ լսա մասին Յուզերութեան Ընտրութեան Ի գլուխ Հ։

Տեղեկութիւնք զդրշմաց ոչ Ընտրեալնեայ, հարեալց Յ-գիպտոս. արտասանեալ Ի 1775. Հատ. խե. էջ 501։

Գիտելիք զդրշմաց ոչ սամարացւոց. արտասանեալ Ի 1790. տպագրեալ Համառօտիւ եւ Ի յօրագիրն գիտոց Ի Ղոմի ամի, և ապա վերստին տպագրեալ Հանդերձ վեցիքեան Թղթով իւիք յաղագս նոյն Ղոմին իրաց յետոյս մասնին՝ զոր Էրկասրեաց Փերէզ Պէյէ, մանագրեալ Դրոմոյ Էֆրայէի սոմարիանաց սաղմ։

Յօդուածք բազումք Ի խմբագիրն Հեսիոսութեան, զոր Էրկասրեաց Քայիլիս. և բաց յայլոցն բացատրութիւն արձանագրութեանց Հեգիպ բագնացն Յունաց. Հատ. Ա. էջ 61։ Կարծիք զՄուսիայէ Իսիքի Եգիպտակնէ. Հատ. Բ. էջ 18։ Բացատրութիւն դրշմաց Ի իրիք քիմանի. անդ, էջ 145։ Տեսութիւնք Ի մասնէ՝ սոս Եգիպտակնի իրիք Մուսիայի. Հատ. Ե. էջ 77 և այլն։

Երրեակ թուղթք զՔիմնիկեցի դրշմաց վիճաբանակաք ընդ բժիշկն Սուինթն, յօրագիրն գիտոց. յօգոստոսի 1760 ամին, Ի դեկտեմբերի 1761 ամին, և Ի նոյեմբերի 1763 ամին։

Սատրագրութիւն ածեցին դեզրասականաց. Ի Նէրոնէրդ սաղմ-ռութեան ընդ Եպատ՝ զոր արար Շուսղէօլ Կուիֆի. գլ. Գ. էջ 50. 1782։ Վ Էրսին տպագրեալ Յուզերութեան Ընտրեալ. գլ. Հ.։

Թուղթ առ Տէր Օտիպէ զդրշմաց ինչ. Ի Ճառն Նոյնին Տեառն Օտիպէի յաղագս սկզբան Թուղթի քաղաքի. Ի Լոնդոնէ. 1764։

ԱՌ ՀԱՆԴԻՊԵԱՅ ՄԱՏԵՆԻՍ

ՕՅԱԿՈՒՅՈՒՄՆ

Ալեքսանդրիս ոմն սկիւթացի, ստեղծական յիմոց մտաց, երթեալ Յաղլադա ոչ բազում ինչ ամօքնախ քան զծնունդն Ալեքսանդրի, և բնակացեալ Աթէնս, անտի ստէպ ուղևորի ընդ շրջակայ գաւառս՝ դիտել զբարս և զսովորութիւնս ազգաց, հանդիսատես լինել տօնից նոցա, և կարգաց տեսչութեան նոցա խելամուտ։ Պարապէ 'ի խոյզ և 'ի խնդիրս զարգացման հանձարոյ, և կենակից լինի ընդ արս՝ որ 'ի ժամանակին յայնմիկ կացին երևելիք՝ Յպամինոնդ, Փոկիոն, Քսենոփոն, Պղատոն, Արիստոտել, Դեմոսթենէս և այլք։ Իսկ իբրև Փիլիպպոս հայրն Ալեքսանդրի ծառայեցուցանէ զյունաստան, դարձ առնէ նա 'ի Սկիւթիա, և գրէ անդ կարգաւ որ ինչ յամենայն Հանապարհս իւր տեսեալ էր. նա-

խաչաւիղ առնելով գրոցն որ ինչ նախ քան զմեկնելն իւր 'ի Սկիւթիոյ արժանի յիշատակի իրք լեալ էին 'ի յունաստան, որպէս զի միահետ ապա զիւրն շարայարել զպատմութիւն։

Յան զամենայն դարս, որոց ցանկալի են պատմութիւնք, զժամանակս զայս նախամեծար ընտրեցի՝ կրկին տեսութեամբք։ Նախ ըստ բանասիրականին և արուեստից բարգաւաճութեան, զի զոդէ սա զՊերիկղէսյն ընդ ժամանակս Աղեքսանդրի. քանզի Նաքարսիս յաճախէ ընդ բազումս յաթենացւոց՝ որ ժամանակակից կացեալ էին Սոփոկղի, Եւրիպիդեայ, Արիստոփանեայ, Թուկիդիդեայ, Սոկրատայ, Օնէքսեայ և Պարրասեայ։ Եւ աստ իսկ 'ի վեր այսր յիշատակեցի զոմանս յերևելի մատենագրաց, ընդ որս ձգեաց նա զկենանս։ Յեսանէ նա և զՀրաշակերտս Պրաքսիտելեայ և զԼուփրանորի պատկերազարդոյ, և զառաջին երկս Արկեղեայ և զՊրոտոգենեայ. և 'ի վերջին ամն բնակութեան նորա 'ի յունաստան հանդիպին Լապիկուբեայն և Մենանդրի ծնունդք։

Եւ երկրորդ դարձեալ, զի ոչ ինչ նուազ նշանաւոր է քան զայլն ժամանակս այս, ա-

կանատես լինելով Նաքարսեայ մեծի վրդ.
վութեանն՝ որ գյուղաստան կերպարանափոխ
արար, և որով պարսկայնոցն պետութեան յետ
սակաւ միոյ եհաս կործանումն։ Ի գալ նորա
'ի յունաստան, Փիլիպպոս դեռ ևս մանուկ՝
աշակերտելով Սպամինոնդայ, գահակալէ ա-
պա 'ի Մակեդոնիա. և ընդ ամս քսան և եր-
կու զամենայն հնարս հանձարոյ ընդդէմ Յու-
նացն ազատութեան 'ի կիր արկեալ, յետոյ
ապա զանհաշտ թշնամին միապետութեան
ձգէ ընդ իւրև։

Վիտեմ զի ոչ է պարտ պատմագրի մանրա-
պատում յոյժ լինել, նմին իրի ընտրեցի ու-
ղևորութեան պատմիչ լինել, յոր և դուշնա-
քեայք գտանեն տեղի։ Որ ինչ 'ի բարս և 'ի
սովորութիւնս հային նախնի մատենագրացն
ակնարկութիւնք, զայնցանէ այլ և այլ են
դատողացն արդ կարծիք. այլ ես ընտրանաւ
զայնոսիկ 'ի ներքս ածեալ 'ի գրիս, և վերբս-
տին քննութեամբ գյոլով յայնցանէ 'ի բաց
թողի. այլ հանդերձ այսու ամենայնիւ թե-
բևս ոչ բաւականապէս 'ի կիր արկեալ զիսբ-
տութիւն։

Ակիզբն արարի գրոցս 'ի թուականութեան
փրկչին 1757. և անընդհատ վաստակեցի

յայն. այլ ոչ արդեօք 'ի վերս քան զիս արկա-
նէի զանձն յաշխատութիւնս, եթէ ոչ գեղեց-
կութեամբ իրացն յորդորեալ խրախուսէի։

Զ. Զվնակարգութիւն գրոցս և զկարգ ժա-
մանակագրական աստանօր զգեմ։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՐՊ

ԱՆՑԻՑ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆՆ ԱՆԱՓԱՐՍԵԱՑ

		Ն-Ի ԹՎՈՒՆ ՀԱՅԿ	
ԳԼ.	Ա. Զու Անապարսեայ 'ի Սկիւթիոյ յամենեանն	Ապրիլ	363
	Բ. Դեգերել Նորա 'ի Բիւզանդիոն, 'ի Լեսբոս և 'ի Թեբէ, և հասանել յԱթէնս	13 Մարտի	362
	Թ. Երթ Նորա 'ի Կորնթոս, և վերատին դառնալ յԱթէնս	1 Ապրիլի	362
	ԺԲ. Նկարագիր քաղաքին աթէնացւոց, և որ ինչ խոյզ և խնդիրք 'ի Նմանէ լեալ զկարգաց տեսչութեան և զբարուց և զկրօնից նոցա . .	'ի Նմին ամի.	
	ԻԲ. Երթ Նորա 'ի Փոկկիս	Ապրիլ	361
	ԻԳ. Վերատին դարձ Նորա յԱթէնս. որ ինչ անցք 'ի չորեսին յայնոսիկ ամս ան անցին, և բաղում ինչ դարձեալ զսովորութեանցն աթէնացւոց և զդպրութեց նոցա բանք :		
	ԼԴ. Երթ Նորա 'ի Բէոտիա, և 'ի հիւսիսային կողմանս յունաստանի .		357
	ԼԷ. Զմերել Նորա զերկեամ մի յԱթէնս, և ապա զրջել ընդ հարաւակողմն յունաստանի	Մարտ	356
	ԼԸ. Ողիմպիական խաղուցն հանդիսատես կալ Նորա	Յուլիս	356
	ԾԵ. Դարձ Նորա վերատին յԱթէնս, և խոյզ և խնդիրք		

Կ· Որ ինչ անցք նշանաւորք ի յունասատան և ի Սիկիլիա յերբեմն յամանս յայնոսիկ լեալ · · · · · ·

ԿԱ· Երթ Նորա յԵգիպտոս և ի Պարսս· Նամականին՝ որ մինչ ինքն ի բացեայն էր զամս մեստասան՝ հասին առ Նա յԱթենայ, պատմելով զվերդովումն յունասատանի, և զյաջմակմունս Փիլիպպէայ, և որ այլ ինչ կարևոր անցք · · · · · · 354

ԿԲ· Ի դառնալն Նորա Պարսից՝ հանդիպել Նորա Արիստոտելի ի Մարմելինէ, և ընթեռնուլ զնառնորա յայտագս կարգաց տեսչութեանն, և ծայրաքաղ համառօտել զայն · 343

ԿԳ· Դարձեալ վերստին յԱթենս, ի սովորականն հանապազորդել պարարտանս · · · · · · · · 343

ՀԲ· Նաւարկել Նորա ընդ Ծովեզերեայ քաղաքս փոքրուն Ասիոյ, և ի կղզիս բազումս յԱրշիպելագոս · · 342

ՀԶ· Ի Դելոս հանդիսատես կալ տօնիցն· 341

Զ· Դարձեալ միւսանգամ յԱթենս բազմաքնին տեղեկութիւնքն · · 341

ՁԲ· Յետ Քերսնեայ Ճակատամարտին դարձ Նորա ի Սկիւթս · · · 337

ԳԼԽԱԳԱՐԳՈՒԹԻՒՆՔ ԳՐՈՑՍ

ՀԱՏՈՐ Ա.

ՆԱԽԱՀԱՒԻԴ

Համառօտութիւն պատմութեան Յունաց անդամին ի սկզբանէ մինչև ցառուցումն Ալեքսանդրայ յորիւրաբիւր յորիւք ամաց նախ քան զգալուստս փրկչին։

Վայրենութեան Ժամանակն յունաստանի։

Յաղագս գաղթականացն, որ յարևելից անգր հասեալ։

Յաղագս Ինաքոսի և Փորոնեայ։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Կեկրոպս։

Արգիական Նաւաստիկքն։

Հերակղէս։

Թեսէոս։

Նախկին պատերազմն Թեբայց։

Երկրորդ պատերազմն Թեբայց, որ և Եպիգոնայց պատերազմն ասացեալ։

Տրոյական պատերազմն։

Դարձ Հերակղէանց։

Տեսութիւնք ի դիւցազանցն Ժամանակս։

Բնականալ յանիացուցն ի փորձն Աստուա։

Զհոմերայ բանք։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԳՐԱԿ Ա·

ՈՐ ԽԱՉ ՑԱՌՈՒՐՍ ՍՈՂՄՈՆ ԻՐՈՒ ՑԱԹԻՆՍ

Դրակոն։
Եպիմենիդէս։
Օրէնագրութիւն Սողոնի։
Պիսիստրատ։
Տեսութիւնք յոբէնսն Սողոնի։

ԳՐԱԿ Բ·

ՈՐ ԽԱՉ ԻՐՈՒ ՑԱՌՈՒՐՍ ԹԵՄԻՍՏՈՍՈՎՆԻ ԵՒ ԱՐԻՍՏԻԴԵԱՑ

Հակատամարտն Մարաթոնի։
Պատերազմն Թերմոպիլէայ։
Սալամինեայ պատերազմն։
Հակատամարտն առ Պլատեաւ։
Տեսութիւնք յաւուրս Թեմիստոկլի և Արիստիդեայ։

ԳՐԱԿ Գ·

ՈՐ ԽԱՉ ԻՐՈՒ ՑԱՌՈՒՐՍ ՊԵՐԻԿԼԵԱՑ

Պելոպոնեսեան պատերազմն։
Ալկիբիադ։
Ամենացւոց որ 'ի Սիկիլիա պատերազմն։
Առուռն քաղաքին ամենացւոց։
Տեսութիւնք յաւուրս Պերիկլէայ։

ՈՒՂԻՒՈՐՈՒԹԻՒՆ ԿՐՏՍԵՐՈՑՆ ԱՆԱՌԱՐՍԵԱՑ ՑԵԼԱԼԱԴԱ

Գլ.· Ա· Զաւ Աղաթարսեայ 'ի Սիկիլիոյ· Զբ.ևբսոնէ Ցաւ-
բոսի և զեւ.քսենեանն Պոնտոսի բանք։ Իրք յաւ-

նատանի յատմանէ քաղաքին աթէնացւոց ը-
ռեքարիւբ ջրիւք ամբնոթս քան զնուականու-
թիւն փրկին մինչև ի Ժամանակս ուղևորու-
թեանն Անաքարսեայ. զԱյսոսիրէ Թրակիոյ
բանք, և հասանէ Նորա ի Բիւզանդիոն։

Բ. Նկարագիր բիւզանդացւոց քաղաքին, և վասն որ
ի Յունաց հասուցանէ գնացեալ անդր. զկր-
ՃԷն Եղեսպոնտեայ բանք, և ի Բիւզանդիոնէ
ի Լեսբոս ուղևորել Անաքարսեայ։

Գ. Նկարագիր Լեսբեայ, և վասն Պիտտակեայ, Ա-
ռիոնի, Տերպանդրի, Աղկեայ, և Սափփոյայ։

Դ. Զու Անաքարսեայ ի Միտիլենեայ. Նկարագիր
Եւբոյ, և զԲաղկիսի բանք. և հասանէ Նորա
ի Թեբէ։

Ե. Դեղեբել Նորա ի Թեբէ, և վասն Եպամինոնդայ
և Փիլիպպեայ մակեդոնացւոյ։

ՀԱՏՈՐ Բ.

Զ. Զու Նորա ի քաղաքէն Թեբացւոց, և հասանել
ՅԱԹԷՆս. և յաղագս աստիկաստան Ժողովրդ-
դոց։

Է. Վասն ակադեմիականն դամարՃակի։

Ը. Յաղագս Լիկէոնին և կրթարանացն, և Խոկրա-
տայ, և կրկիսից մրցութեանցն. և վասն յա-
ղարկաւորութեան հանդիսից աթենացւոց։

Թ. Ուղևորել Անաքարսեայ ի Կորնթոս, և վասն
Քսենոփոնի և Տիմոնեայ։

Ժ. Յաղագս զբաժոդովոյ աթենացւոց, և հանդէս
առնելոյ զբացն, և հրահանգաց Նոցա։

ԺԱ. Յաղագս հանդիսի տեսարանին։

ԺԲ. Նկարագիր քաղաքին աթենացւոց։

ԺԳ. Վասն Ճակատամարտին որ առ Մանտինեաւ, և
մահուն Եպամինոնդայ։

ԺԴ. Վասն որ ի ժամանակին յայնմիկ կարգք տեսչութեան ամենացուց։

ԺԵ. Վասն գաստաւորացն ամենացուց։

ԺԶ. Որ ինչ առեալք գաստատանի յԱմենս։

ԺԷ. Վասն Արիսպագին։

ԺԸ. Յաղագս գաստախազութեանց և ատենական հարցափորձիցն յԱմենս։

ԺԹ. Վասն յանցանաց և պատժոց։

Ի. Յաղագս սովորութեանց և քաղաքական կենաց ամենացուց։

ԻԱ. Յաղագս կրօնիցն ամենացուց և քրմաց նոցա, և որ ինչ առ նոսա սեղանակատութիւնք։

ԻԲ. Ուղիտել Աստաբասեայ ընդ Փոկկա, և յաղագս պիւռեան խաղուց և գեղջական հարցկին։

ԻԳ. Որ ինչ Երեւելի իբք լեալ ի յուտաստան զամս չորս, սկսեալ յԵրեքարիւրորդէ վաթսներորդէ յառաջնմէ ամէ նախ քան զԹուականութեի փրկչին. և յաղագս մահուն Աղեսիոյսոի արքային ապարտացուց։ Եւ գահակալել Փիլիպպէայ ի Մակեդոնիա, և վասն համաշխարհական նիզակակցաց պատերազմին։

ԻԴ. Յաղագս ոտիցն ամենացուց, և համամենականացն և սպանդարամետական ոտիցն։

ԻԵ. Յաղագս բնակութեան և սեղանոյ ամենացուց։

ԻԶ. Յաղագս գաստիարակութեան ամենացուց։

ԻԷ. Չհեղձն երաժշտութենէ բանք։

ԻԸ. Չքարուց և զսովորութեանցն ամենացուց վերըստին բանք։

ՀԱՏՈՐ Գ.

ԻԹ. Վասն մատենադարանին ամենացոյց ուրուն, և իմաստասիրական մատենից։

Լ. Դարձեալ ի նոյն մատենադարանն. Կալլիսթայ

քրմապետին Դեմետրեայ զառաջին պատճառայ Հառաք։

ԼԱ. Ի նոյն մատենագրարան տեղեացոյցն յաղագս տեղաբաշխութեան և աշխարհագրութեան։

ԼԲ. Վասն Արիստոտղեայ։

ԼԳ. Գրգռութիւնք կրասերոյն Դիոնիսեայ տրքային սիրակուռացուցոյ ընդ Դիոնի քեռառն իւրում. և ուղևորել Պղատոնի ի Սիկիղիա։

ԼԴ. Ուղևորել Անաքարսեայ ի Բիսանդիա, և յաղագս տրոփոնեան պատգամատուղոյն. և վասն Եսիոդեայ և Պինդարոսի։

ԼԵ. Ուղևորել Անաքարսեայ ընդ Թեսպղիա, և յաղագս Ամիֆիկիոնեանցն և մոգաց. և վասն Աղէքսանդրի տրքային փերեսացուցոյ, և տեսիլեան հովին։

ԼԶ. Ուղևորել Անաքարսեայ յԵգիպտոս, յԱկարնանիա և յԵթոլիա. և վասն Դոդոնեայ պատգամատուղոյն, և զլիկաստեան սարիւն վանք։

ԼԷ. Ուղևորել Անաքարսեայ ի Մեգարա, ի Կորնթոս, ի Սիկիոն և յԱքայիա։

ԼԸ. Ուղևորել Նորա յԵղիս, և յաղագս ողիմպիական խաղոցն։

ԼԹ. Շարայարութիւն ուղևորութեանն յԵղիս, և երթ Նորա ի Սկիղոն քաղաք առ Քսենոփոն։

Խ. Ուղևորել Նորա ի Մեսենիա։

ԽԱ. Ուղևորել Նորա ի Լակոնիա։

ԽԲ. Զքնարչացս Լակոնիոյ։

ԽԳ. Ցեսութեի օրինացն Լիկուրգեայ առ Հաստատակ։

ԽԴ. Զկենացն Լիկուրգեայ։

ԽԵ. Կարգ տեսութեան սպարտացւոց։

ԽԶ. Զօրինացն սպարտացւոց։

ԽԷ. Զդաստիարակութենէ և զհարսանեաց սպարտացւոցն։

ԽԸ. Զբարուց և զսովորութեանց սպարտացւոցն։

ՀԱՏՈՒՐ Դ·

ԽԹ· Օ կրօնից և զանից սպարտացւոցն։
Ծ· Չգենուորութեանէ սպարտացւոցն։
ԾԱ· Չատագովութիւն օրինացն Լիկուրգեայ, և պատճառք անկանելոյ նոցա։
ԾԲ· Ուղիորել Աղեքսանդրեայ Արկագիա։
ԾԳ· Ուղիորել Նորա Արգոսլիս։
ԾԴ· Վասն պղտոտեան հասարակապետութեանն։
ԾԵ· Յաղագս վարձառականութեան ամենացւոց։
ԾԶ· Զհարեալս և զգանձուցն ամենացւոց։
ԾԷ· Ի նոյն մատենագրան ամենացւոյն յաղագս տրամաբանութեան։
ԾԸ· Դարձեալ ի նոյն մատենագրանն յաղագս ճարտարախօսութեան։
ԾԹ· Շարեալ Աղեքսանդրեայ ընդ Աստիկէ, և յաղագս մշակութեան, և որ ի Սուսիոն բռվքն. և Պղատոնի զլինելութենէ աշխարհս ճառք։
Կ· Որ ինչ նշանաւոր անցք ի յունաստան և ի Սիկիլիա անցին յերեսին ամին, սկսեալ յերեքարիւր յիսունեւեօթներորդ ամէ նախ քան զԹուկանութիւն փրկչին. և վասն արշաւանացն Դիոնի, և դատապարտութեան զորավարացն Տիմոթեայ և Իֆիկրատեայ։ ՎասնՀան նիզակացայ պատերազմին, և մեհենական մարտին սիկիլն։
ԿԱ· Որ առ Աղեքսիս և առ Փիլոտաս, յուղիորելն նոցա ընդ Եգիպտոս և ընդ Պարսս, հասեալ նեռականին՝ բերելով զրոյցս զիրոց յունաստանի առ հասարակ։
ԿԲ· Յաղագս ազգի ազգի կարգաց տեսչութեան՝ Արիստոտելի և այլոց խմաստասիրաց բանք։

ՀԱՏՈՐ Ե·

ԿԳ· Դիմեսեսայ արքային սիրակուսաց.ոց՝ Կորը-
թոս իրք, և արուեթիւնք Ցիմոլէոնի։
ԿԴ· Ի նոյն մատենագաբանն Եւկղեսայ բնաձնին և
բնապատում հմտութեանց Ճառք· և յաղագս
խմանալեաց։
ԿԵ· Ի նոյն նորին մատենագաբանն յաղագս պատմա-
գրութեան։
ԿԶ· Վասն որ առ Յոյնս յաճախեալ յատուկ ա-
նուանցն։
ԿԷ· Զ Սոկրատայ բանք։
ԿԸ· Զ Եղեւսեան խորհրդաւորիցն։
ԿԹ· Զ Թատերախաղից Յունաց։
Հ· Վասն որ յԱթենս հանգիսի տեսարանացն։
ՀԱ· Զ բուցաղութիւնք բնախօսականք զոզբերգու-
թենէ, և յաղագս առ որ ինչ սահմանեալ այն։
ՀԲ· Եաւարկել Անաքարսեայ ընդ Ծովեզերս Ասիոյ·
և չուրջ՝ի կղզիս։
ՀԳ· Շարայարութիւն Նաւարկութեանն· և զՀռո-
դոսէ, զՊրենսայ և զՍամ կղզեաց, և վասն Ի-
պոկրատեայ բանք։
ՀԴ· Ակարագիր Սամոս կղզւոյ, և վասն Պոլիկրատեայ։
ՀԵ· Զ բուցաղութիւն Անաքարսեայ ընդ սամեցւոյ
ումեմն զաղանգոյն Պիւթագորայ։

ՀԱՏՈՐ Զ.

ՀԶ. Ի Դեղոս և 'ի Բոլոր կղզիս։
ՀԷ. Դարձեալ 'ի Դեղոս մի հարսանեկան հանդիսից
ՀԸ. Դարձեալ 'ի Դեղոս վասն երանելի կենաց։
ՀԹ. Դարձեալ 'ի Դեղոս վիճաբանութիւն զկրօնից։
Զ. Ի նոյն մատենագարանն Եկեղեցեայ յաղագս քերթողութեան։
ՁԱ. Ի նոյն մատենագարանն յաղագս բարոյականին գիտութեան։
ՁԲ. Վասն վերսին յարձակմանցն Փիլիպպէայ, և առ Գերմանեաւ Ճակատամարտին. և Նկարագիր Աղէքսանդրի։
Յայտարարութիւն աղիւսակացն։

ԱՂԻՒՍԱԿՔ

Ա. Ժամանակագրութիւն երևելի անցից պատմութեան Յունաց 'ի հիմնարկութենէ արքիական պետութեան մինչև ցվախճան թագաւորութեանն Աղէքսանդրի։
Բ. Ամիսք ատտիկեցւոց։
Գ. Ատեանք և աւագանին աթենացւոց։
Դ. Անուանք որոց 'ի գալրութիւնս կամ յարութեստս կացին երևելիք 'ի դաղթելոյ փիւտիկեցւոց մինչև 'ի կառուցումն ուսումնարանին յԱղէքսանդրիա։
Ե. Նոցին անուանք այբենաւոր կարգաւ։
Յուցակ բռնանդակելոց առ հատարակ իրաց 'ի գիրս յայս։
Յուցակ աշխարհագրական հին և նոր անուանց վայրացն որ 'ի գիրս յայս յիշատակին։

ՆԱԽԱՐՀԱՐՈՒԹԻՒՆ

ԳՐՈՑ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵՐՆՆ ԸՆԵՌԵՐՄԱՆՑ

ՑԵԼԱԳԴԱ

Նախնի բնակիչք յունաստանի, եթէ հընոցն արժան ուսմաբ թուեսցի հաւատալ աւանդութեանց, յայրս խորափորս բնակեալք՝ առ քաղցի ևեթ արտաքս ելանէին, մրցել ընդ գազանս առ'ի հայթայթել իւրեանց Հարակս խոշորս, է զի և ինասակարս՝ ։ Ոչ՝ ոկեալք ապա, յանդգուն ոմանս ունելով իւրեանց առաջնորդ, յաւելին 'ի գիտութիւն համայն և 'ի կարիս և 'ի չարիս ։ Վասնզի տկարութեան իւրեանց կարծեաք թշուառացեալք, թշուառա-

1 Պղատոն 'ի Պրոտ. հտ. 1. էջ 322 ։ Դիոդոր. գիրք Ա. էջ 8 և 21 ։ Պաւսան. գիրք Ը. գլ. 1. էջ 599 ։ Մակրոբ. յոլ. երազ. Սկիպ. գիրք Բ. գլ. 10 ։

ցան ապա կարծեաք զօրութեան իւրեանց. պա-
տերազմունք անդէն 'ի ներքս մտին, և գրր-
գռեցան մոլեկան կիրք՝ զհետ ձգելով զահագին
չարիս։ Եւ ոք առանց ուղղիչ արեան ամրա-
նայր 'ի կալուած ժառանգութեան իւրոյ, և
յաղթող գլաղթեալն կլանէր, մահ ամենեցուն
'ի վերայ գլխոց կացեալ, և վրէժխնդրութիւն
'ի սիրտս համայնից բունեալ։

Ապա ուրեմն տաղտկացեալ մարդկանն 'ի
վայրագութենէ, կամ թէ ելաղական նահան-
գին զօրութեան զգօնացուցեալ տակաւ զընակ-
չացն դաժանութիւն, ջոկք ջոկք վայրենեացն
դիմեցին առ ոտս օրէնսդրաց, որք 'ի քաղա-
քականութիւն ջանային ածել զնոսա։ Սոքա
Ս. Գիպտոսն անդր եկեալք՝ 'ի ծովեզերս Ար-
գողեայ խնդրելով ապաստան, հիմնեցին անդ
իւրեանց պետութիւն[1]։ Ազգն իմն էր տե-
սիլն. ազգք գեղջուկք վայրենիք, դողութեամբ
ընտելացեալք առ եկսն օտարոտիս՝ զարմանայ-
ին ընդ խաղաղաւէտ վաստակս նոցա. և տա-
պալեալ զհինաւուրց մայրիս զժամանակակիցս
աշխարհի, բանային առաջի իւրեանց զերկիրն
անծանօթ՝ արգասաւորելով զայն. և ընդ խա-

[1] Եւրիպիդ. 'ի Սիզիփ. էջ 492։ Մոսք. առ Պատրէոսի մէջակ. բնաբան. գիրք Ա. էջ 18։ ԱԹԵՆ. գիրք ԺԴ. էջ 660։ Սէքստոս Եմպիր. ընդդէմ Ճաբտ. գիրք Բ. էջ 295։ Պկկ. յՂ. գիւտ. գիրք Ա. գլ. 2. հտ. 1. էջ 24. և Ճառ. յՂ. Սէքս. գլ. 42. հտ. 6. էջ 38։ Ովսատ. հրգիծ. գիրք Ա. երգիծ. 3. տող 39։

[2] Կասս. առ Եւսեբ. ժամկ. գիրք Ա. էջ 11։ Սիմեկիզ. էջ 64. 124։

չինս իւրեանց և ընդ անդեայս տաւաղելին անդ, կեցեալք յանմեղութեան՝ զանդորը և զխաղաղ վարելով կենցաղ, յորմէ ոսկեղենիկ վաղեմի դարքն այնոքիկ կոչեցան։

Ակեղեն յեղափոխութեանս այսմիկ Ինաքոս եղ*, այն՝ որ զառաջին գաղթականն անդր Յ՚Եգիպտոսէ ած՝։ Նոյն և Հանասպազորդեաց առ որդւովնորա Փորոնեաւ[2], և վաղ ընդ փոյթ կերպարանափոխ եղեն Ա՚ռգողիս և Ա՚ռկադիա, և որ շուրջ զնոքօք գաւառք[3]։

Ա՚մբ իբր երեքարիւր՝ի վերայ անցեալ, և ապա կացին Ակերոփս Յ՚ստիկէ, Կադմոս՝ի Ի՚ոլոտիա, և՝ Ի՚ոանաւոս** Յ՚Եգողիս, ածեալ ընդ՝ իւրեանս Յ՚Եգիպտոսէ և՝ ի Փիւնիկեայ այլ գաղթականս։ Ճարտարութիւն, և աբուեստք ընդարձակեալ քան զսահմանս Պելոպոնէսայ, զարդացմամբն իւրեանց յաւելին ինն նորանոր ազինս մարդկան։ Բայց սակայն գունդ մի վայրենեաց ամփացեալ՝ի լերինս և՝ի հիւսիսակողմանս յունաստանի, յարձակեցան՝ի վերայ այն ինչ բարգաւաճեալ ազանցն. որոց զվայրագութիւն ընկճեալ զօրութեամբ, հարկեցուցին զնոսա հնազանդել օրինաց և

* Ն. Գ. 1970 ամաք։

1 Գրեբէ Ջաս. Ժէկգ. էջ 275։

2 Պաւան. գիրք Բ. գլ. 15. էջ 145։ Կլ. ազէքս. յորդ. առ հեթ. էջ 84։ Տաթեան. Հաս. առ Յոյնս. էջ 131։

3 Պաւս. գիրք Ը. գլ. 3. էջ 601։

** Կեկրոփս 1657 ամաւ նախ քան զԻսայանութեան փրկչին, Կադմոս 1594 ամաւ, Իսկ Դանաւոս 1586 ամաք։

կամ տարագիր 'ի բնիկ երկրէն վայելել 'ի չարաչուք ազատութեան։

Զիք 'ի վէպս Յունաց հնագոյն քան զԹագաւորութիւն Վորոնեայ՝, և ոչ քան զԱեկրոպայն 'ի վէպս աթենացւոց։ Ի սմանէ մինչև ցվախճան պեղոպոնեսական մարտին անցին ամք իբր հազար երկերիւր և յիսուն. զայս մի ջոց ժամանակի բաժանեմ՝ 'ի Կեկրոպայ մինչև ցառաջին ոլիմպիադն, և անտի մինչև ցառումն Ղթենայ 'ի սպարտացւոց*։ Որ ինչ արդ յերկաքանչիւր միջոցս ժամանակի կարևոր անցք անցին՝ առաջի կայ ինձ պատմել, մանաւանդ զիրսաթենացւոց. բայց գիտասցեն ընթերցողք, զի յառաջնումն մասին պատմութեանս և զառասպելապատում վէպս հնոց խառն ընդ ճշմարտութեան հարկ է ինձ կարգել. քանզի երկաքանչիւր առհասարակ կարևորք են 'ի խելամտութիւն կրօնից նոցա և սովորութեանց և յիշատակարանաց։ Այլ թերևս ուրեք, զի և տիպք կերպարանաց բանից վիպագրացն, յորոց առի զվէպս, խառնեսցին 'ի սմա. զի յոյժ դիւ ժուարին է 'ի վէպս կեղծեաց չառնուլ զնոցայն բարբառ 'ի կիր։

1 Պղատոն 'ի Տիմ. հա. 3. էջ 22։ Կղ. ազէքս. հա. 1. էջ 380։ Պլին. գիրք Է. գլ. 56. հա. 1. էջ. 413։

* Սկիզբն ոլոմպիադից 776 ամաւ նախ քան զԹուականութիւն փրկչին, իսկ առումն քաղաքին աթենացւոց 404 ամաւ։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՈՐՔԱՆԴԻՊՏՈՍԷ 'Ի ՅՈՒՆԱՍՏԱՆ ԸՆԴ ԿԵԿԲՈՒՊԱՅ ՀԱՏՈՒԱԾԵՑԱՆ ԵԳԻՊՏԱՑԻՔ՝ ԷԿՆ 'Ի ԲԸՆԱԿԱՑԱ ԱՅԻՍ ՔԱՂԱՔԻ՝ [1]։ ՄԵԿՆԵԱԼ ՆՈՅԱ 'Ի ԲԱՐԵԲԱԽՍՏ ԱՓԱՆՑՆ ԿԼԵՂՍԻ, ՓԱԽՍՏԱԿԱՆՔ 'Ի ԲՌՆՈՒԹԵՆԷ ԱՆՈՂՔԵԼԻ ՅԱՂԹԱԿԱՆԻՆ, ԵՒ ՅԵՐԿԱՐ ԸՆԴ ԾՈՎ ՆԱՒԱՐԿԵԱԼՔ, ՀԱՍԻՆ ԱՊԱ ՅԵՂԵԼՍ ԱՅՏԻԿԵԱՅ. ՅՈՐՈՒՄ ԲՆԱԿԵԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԱՆԳՍՏԻՆ 'Ի ԱԿԶԲԱՆԷ ԶԵՐԾ ԿԱՅՐ 'Ի ՀԻՆԻՑ ՎԱՅՐԵՆԻ ԱԶԱՑՆ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ, ՎԱՆ ԱՄՈՒԼ ԱՆԳԱՍՏԱՆԱՑ ԵՐԿՐԻՆ ՉԳԳՈՒԵԼՈՅ ԶԱԳԱՀՈՒԹԻՒՆ ԱՒԱՐԱՏՈՒԹԵԱՆ ՆՈՅԱ, ԵՒ ՏԿԱՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՆ ԱՅՆՈՐԻԿ ՈՉ ԻՆՉ ԿԱՍԿԱԾ ԵՐԿԻՒՂԻ 'Ի ՄԻԱՍ ՆՈՅԱ ԱՐԿԱՆԵԼՈՅ [2]։ ԱՍՈՎՐԵԼՈՅՆ 'Ի ԶԵՕՍԱՆՍ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ, ԵՒ ՈՐ ԱՂԱՍՔ ԿԱՅԻՆ ԱՌԱՆՑ ՀԱՆԱՁԵԼՈՅ ԶՅԱՐԳ ԱՂԱՍՈՒԹԵՆ, ԵՒ ԳԵՂՋՈՒԿՔ ԷԻՆ ՄՆԱՒԱՆԴ ՔԱՆ ՎԱՅՐԵՆԻՔ, ԴԻՒՐԻՆ ԷՐ ՄԻԱԲԱՆԵԼ ԸՆԴ ԵԿՆ ԽՐԱՏԵԱԼՍՅԱՐ-

1 Պղատ. 'Ի Ցիմ. հտ. 3. էջ 21։ Թէոպոմպ. առ Եւս. պատար. աւետ. գիրք Ժ. գլ. 10. էջ 491։ Դիոդ. գիրք Ա. էջ 24։

2 Թուկիդ. գիրք Ա. գլ. 2։ Խսակր. Նէրբ. հտ. Ա. էջ 130։

կածից. որով օտարքն ընդ բնիկս եղեն վաղ-
վաղակի 'ի մի ազգ։ Այլ զնախապատուու-
թիւնն, զոր վաղ կամ անագան նաւթեղէն ա-
ռաւելութիւն հանձարոյ, կալան եգիպտա-
ցիք. և Աղեքսանդրոս ամենեցուն առհասարակ պետ
կացեալ եկացն և բնակչաց, եդ 'ի մտի յար-
դարել զբարեկենդանութիւն նորոյ հայրե-
նեացն։

Ինակք երկրին տեսանելով ամի ամի զնա-
զինն վայրենիս պտղաբերեալ շատանային առ-
ձեռնպատրաստ կերակրովն՝ զոր բնութիւնն 'ի
պէտս նոցա մատակարարէր. բայց Աղեքսանդրոս
հաճոյագոյն նոցա պատրաստեաց սեղան, և ու-
սոյց հանապազորդել նոցա զայն, աւանդելով
երկրի զազգի ազգի արմտիս[1]։ Զիթենիս յոր-
գիպտոսէ ածին անդր[2], և ծառք յառաջագոյն
նոցա անծանօթք հովանացան 'ի վերայ ատոք
հնձոց պտղալից ոստովք։ Ստիկեցին 'ի նա-
խանձ նմանութեան եգիպտացւոցն քաջա-
հմուտ մշակաց յաւելեալ 'ի ժրութիւն, բրտա-
նայր 'ի վաստակս. բայց չև ևս զրդեր զնա
ցանկութիւն շահից, հզօր 'ի թեթևացուցա-
նել զվիշտս և 'ի խրախուսել յաշխատութիւն։

Հարսանիք հնազանդեցան օրինաց[3]. և օ-

1 Պարապ. Յեղեսի առ Ե-
սիոդ. գործք տող 32։ Կիկ-
ղդ. օրինաց գիրք Բ. գլ. 25.
հա. 3. էջ 158։

2 Սիւնկեղոս էջ 153։

3 Յուստ. գիրք Բ. գլ. 6։
Աթեն. գիրք ԺԳ. էջ 555։
Սուիդ. 'ի բառն Προμηθ։
Նոննոս դիոնիսականք գիրք
ԽԱ. տող 386։ Պարապ. Ա-
րիստոտ. 'ի Պլուտ. տող 773։

բէնքն այն, աղբիւրք այլազան ուղղութեանց և բերկրանաց, ուսուցին նոցա զլաւութիւնս պատշաճից, զգեղ համեստութիւն, զիղձս հաճոյ լինելոյ, զբարեկենդանութիւն ամուսնասէր կենաց, և զհարկ անմուսաղելի սիրոյն։ Ուստն հարք 'ի սրտի զիմանալի բարբառ ընութեան, և որ 'ի սիրտս հարսին նոցա և որդւոց ձայնք՝ լսելի եղեն։ Զարմանային ընդ արտօսր աչաց իւրեանց, հեղեալ ոչ ևս առ վշտի։ և պատուաւ կան թուէր անձն նոցա առաջի նոցա վասն գթոյ գորովոյն։ Խառնեցան վաղվաղակի խընամութեամբ ընդ միմեանս ազգատոհմք, և իրերաց պիտոյիւք ընտանեցան միմեանց, անթիւ կապանօք զոգեալք'ի համբոյրս ընկերութեան։ Ոչ ևս իւրաքանչիւր ուրուք էին վայելք բարեաց, այլ և կարեաց միմեանց կցորդք գտանէին՝ զերծք 'ի նոցուն։

Յաւելան և այլ պատշաառք առ 'ի հեշտընկալ դիւրութիւն պատշաճիցն։ Դպիսի՝ Հելլէնք անծանօթից ոմանց դից տանէին պաշտօն, կարի իմն գերակայից քան զպայման մահկանացուաց, և որոց զամենայն զօրութիւն իւրեանց 'ի կիր արկեալ 'ի վարել զտիեզերս՝ հաղիւ յանկեան ուրեք 'ի Դոդոնէ Յուպիրոս՝ հրամանս ինչ պատասխանուց տային մարդկան։ Իսկ եկքն օտարականք զընիկ աշխարհին իւրեանց զանուանս դիցն եգիպտականաց զլի-

[1] Երոդոտ. գիրք Բ. գլ. 52։

բիականաց՝ և զիրենիկեցւոց ետուն նոցա, և սահմանեցին իւրաքանչիւր զօրութիւնս առանձինն, զԼրգոս նուիրեալ Հերայ[1], զԼեթենս Լեթենասայ[2], և Ոփոխեսայ սրբազանեալ զՈՓերէ[3]։ Ոչ զոյն ինչ նորաձևութեամբս այսուիկ պաշտման կրօնիցն աստուածամերձ թուէր լեալ յունաստան, աշխարհաբաժին առնելով զայն դից յիւրեանս։ Ոչ իւրամնտոյցս զնոսա համարեցաւ ժողովուրդն, նուազագոյն ունելով նոցա զօրութիւն և հոգս. և իբր թեմերձ առ իւր ունելով զնոսա, և զինամն անքուն տեսչութեան նոցա յիւրն ձգելով, վերհագոյն ինն զբնութիւն մարդկան վարկաւ։

Վերկրոփս բազմացոյց զպաշտամունս դից, և զգերակայեալն 'ի նոսա կոչեաց բարձրեալ[5]. մերհեանս և բազինս ամենայն ուրեք կանգնեցոյց, այլ արգել չհեղուլ զարիւն զոհից, ոչ միայն առ 'ի կեցուցանել զանասունս՝ որ կարևորք էին 'ի մշակութիւն, այլ և 'ի յաձախել զարհաւիրս անագորոյն տեսլեանն՝ որում երբեմն թատր եկաց Լրքադիա[6]։ Օ՛ի այր թագաւոր, խուժադուժ լեկայոնացին, ոչ յառաջ քան զաւուրս բազումս եղեն անդ դիցն զմա-

[1] Երոգ. գիրք Բ. գլ. 50։
[2] Հիգինիոս առակ 143։ Լակտ. առ. Ստատիոսի թեբ. գիրք Ա. տող 541. Դ. տող 589։
[3] Ապոլոդ. գիրք Գ. էջ էջ 600։ 237։ Սիւնկ. էջ 153։
[4] Երոգ. գիրք Բ. գլ. 49։ Փիլոն ժամ. էջ 319։
[5] Մեսոպ. յոլ թագաւորեն գիրք Ա. գլ. 9։
[6] Պաւս. գիրք Բ. գլ. 2.

նուկ տղայ 'ի պատիւ այսոցիկ, որոց 'ի թշնամանս են թշնամանք բնութեան։ Դահաւորագոյն աստուածայնութիւն բարութեան կարգեաց Վեկրոպս զպաշտօն՝ նուիրել նոցա ցորեան և արմտիս, զերախայրիս հնձոց՝ որովք Հոխացուցանէին նոքա զՊտղեկ, և զաթերայ զՀարկ Հարտարութեան՝ յոր աջողէին տակաւ բնակիչք երկրին։

Պմենայն կարգք սահմանեալք 'ի Վեկրոպայ յիմաստութիւն և 'ի մարդասիրութիւն յօժարեցուցանէին զմարդիկ, պատրաստելով զիրենազանդելոցն խաղաղութիւն կենաց, և մեծամամբ յետ մահուն ձգելով նոցա զհետ։ Օգպականացու մարմնոյ մարդկան սահմանեաց 'ի ծոց հասարակաց մօրն անդրէն դարձուցանել 'ի հող, և վարել անխափան զերկիրն՝ որ ծածկէրն զնոսա, զի մի քայլ մի ոտին պակասեսցէ հողագործին։ Պզգականք վախճանելոյն կոչունս գերեզմանականս առնէին պատկաւորք, զվերջինն և եթ զայն սպասառանց ի բիւր մարդահաճութեան և աշառանաց մատուցանելով նոցա. քանզի անդ առաքինեալն մեծարէր յիշատակ, անշուք լեալ ամբարշտին, և խանդաղատելի տեսիլ հանդիսին խրատէր ըզտեսողս. զի թէպէտ և անփոյթ ուրուք արարեալ անմահ յիշատակի, սակայն չկամիր թողուլ որդւոց իւրոց ամօթ և շառագունանս։

1 Պիկ. յլ. որ. գիրք Բ. գլ. 28. հա. 3. էջ 158։

Լոյն խմաստութիւն նշողէ 'ի սահմանադրութեան ատենին, որ 'ի վերջին ամս կենաց Կեկրոպայ, կամ 'ի սկիզբն յաջորդին նորա թագաւորութեանն երևի սահմանեալ՝ . ատենի ասեմ Քրիստոսագին, որ անդատին 'ի սկզբանէ կառուցման իւրոյ անզեղջ գտաւ ընդ վՀիուս դատաստանաց իւրոց[1], և նախակրթեաց ըզ Հայնս յօրէնս արդարութեան[2] ։

Լոթէ արդարեւ Կեկրոպայ էին սահմանադրութիւնքս այս յաւէժ կենդանականք, և այլ ևս յոլովք՝ որովք պայծառացոյցնա զաթենացիս, նախասկիզբն օրէնսդրաց Համարելի էր զնա և վեհ 'ի մահկանացուս . այլ զայսոսիկ ազգ մի ողջոյն Հանձարեաց, նոյն և ընդ բազմահոլով պարագայս դարուց զթերին նոցա լրացոյց ։ Կեկրոփս յԱգիպտոսէ ած զնոսա . և արդասեաց նոցին այնքան վաղ յաջողեալ Ատտիկէ, զի 'ի սուղ ժամանակի գտան երկու բիւր բնակիչք երկրին[3], բաժանեալք 'ի չորս նահապետութիւնս[4] ։

Քրագ արագ յաջողութիւնք նոցա և զարգացումն ձգեցին յիւրեանս զազգակամ աչս ազգաց աւարառուաց, և հինք արշաւեցին 'ի ծոլ

1 Ոքսոնեան վէմք . դար 3 . էջ 348 ։

2 Դիոնս . յԱրիստոկր . էջ 735։

3 Նղման . զան . պատմ . գիրք Գ . դլ . 38 ։

4 Փիլոք . 'ի պարապ . Պինդոզիսկ . երգ 9 . տող 68 ։

5 Սուտի . 'ի բառն 'Αττ: Պոզիսակիս գիրք Ը . գլ . 9 . հատած 109 ։ Եւսեբիա . 'ի Դիոնիս . տող 423։

եղերս Լաոտիկեայ. և բիսոլտացիք յելս սահմանաց նոցա ասպատակեալ[1], արկին շուրջանակի արհաւիրս։ Այն ժամանակ առեալ Կեկրոպս, հաւանեցոյց ժողովրդեանն՝ որ ցան և ցիր ընդ դաշտավայրս բնակէին՝ ժողովել 'ի մի վայր, և պատսպարել պարսպաւ յարշաւանաց հինիցն զորոց այն ինչ զիրոձ առեալ էին։ Ի վերայ բլրոյն արկան Աթենայ հիմունք, ուր մինչև ցայսօր միջնաբերդն կայ[2]. և մետասան այլ քաղաքք աստ անդ կառուցան, մտադիւր փոխանակելով բնակչացն առ ահի զեւս ցանկալին իւրեանց զազատութիւն գեղաբնակ կենաց[3], և փակեցան 'ի քաղաքորմի՝ որ թըւեր նոցա գերեաց կայեան, եթէ ոչ տկարութեան լիներ պատսպարան։ Լմնացեալք 'ի պարիսպս, եղեն նոքա առաջինք 'ի Հոյոնս՝ որք 'ի ժամանակի խաղաղութեան զմարտացու զենսն 'ի բաց եդին, որք յառաջագոյն զինուորելք կային հանապազ[4]։

Յս մեռաւ Կեկրոպս Թագաւորեալ զամս յիսուն[5]։ Լոր նորա կին դուստր ուրումն 'ի գլխաւորացն ատտիկեցւոց[6], և ծնաւ նմա որդի՝ որ վաղամեռիկ քան զհայրն եղև, և դրս-

1 Փիլոս. առ Սոփոս. գիրք Թ. էջ 397։

2 Պլին. գիրք Է. գլ. 56. հա. 1. էջ 413։ Եւսեբիոս. 'ի Դիոնիս. տող 423։ Սառաբանութեանց մասեան 'ի բառն Ἔπακρ։

3 Փիլոս. առ Սոփ. անդ։

4 Թուկիդ. գիրք Ա. գլ. 6։

5 Սուիդ. 'ի բառն Προμηθ։

6 Ապոլոդ. գիրք Գ. էջ. 239։

տերս Երիս՝ որոց ապա աթենացիք աստուա-
ծական ետուն պատիւ՝ ։ Այլ գերեզման Կեկ-
ռոպայ կայ մինչև ցայսօր 'ի մեհենին Աթե-
նասայ[1], և յիշատակ նորա անջինջ տաւիւքյաս-
տեղատուշան անդ դրոշմեալ 'ի Ջրհոսն՝ զոր
սրբազանեցին նմա աթենացիք[2] ։

Զհետ Կեկրոպայ ընդ ամն իբր հինգհա-
րիւրվաթսունևհինգ կացին թագաւորքեօթն
և տասն, յետ ամենեցուն Կոդրոս։ Բայց չէ
իսկ արժան զկայ առնուլ յետնոց 'ի տեսու-
թիւն նոցա. զի զինչ փոյթ է թէ զկիսոց 'ի
նոցանէ յաջորդքնոցին յափշտակեալ իցեն զար-
քայութիւն, կամ թէ այլոց դիպուածով բախ-
տի չիցեն 'ի սպառ անյիշատակ լեալ անուանք.
այլ այն իսկ խնդրելի է՝ թէ ո՛յաւուրս թա-
գաւորութեան իւրոյ արար ինչ 'ի բարգաւա-
ճութիւն ազգին, և իւր 'ի բարօրութիւն։

Զ թագաւորութեամբն Կեկրոպայ, և
Կրանաւոսի՝ որ զնա յաջորդեաց, ատտիկեցիք
կեցին անխռով 'ի խաղաղութեան. որոց սովո-
րեալ 'ի դիւրութիւն և 'ի վիշտս քաղաքաժո-
ղով ընկերութեան, զպարտս և զպիտոյս իւ-
րեանց առհասարակ հայթայթէին, և նախանձ
նմանութեան կրթէր զբարս։

Ընձուկ կցորդութեամբ միմեանց բարգա-

[1] Եբոդ. գիրք Ը. գլ. 53։ Պաւս. գիրք Ա. գլ. 18, 27։ Սուդաս. 'ի բառն Ἀβόβεφ։
[2] Պոտոք. առ. Կղեմայ ա. զեքս. հա. 1. էջ 39։ 3 Հիպն. քերթ. տասղ. գիրք Բ. գլ. 29։

ւաձեալք՝ յաւելան և եւս 'ի գիտութիւն հաւ-
ղորդութեամբ շրջակայ ազգաց, և գիտու-
թիւնք յարևելից ածանցեալ մնին 'ի Լիսիոսիա
ամբ ինչ յետոյքան զկերպոս։ Բանզի Կաղ-
մոս հատուած 'ի Փիւնիկեայ ածեալ անդր,
եթէ ընդ իւր զվերհագոյնն համայն արուեստ-
ից, ձևոյք ոմամբք կայուն տալ անցանելոյ
բարբառոյ և իմանալի խորհրդոց մտաց՝։ Ա-
բուեստ դպրութեան մուծեալ Լատիկէ, վաղ
ընդ փոյթ եղև աւանդապահ յիշատակաց նշա-
նաւոր անցից։

Օ հաւաստին չունիմ ասել՝ թէ Էրբ այլք
յարուեստից մուծան 'ի յունաստան, այլ զա-
ւանդութիւնս ևեթ մեայ ինձ ածել այսր։
Կաղթեալքն ընդ Կերկրոպայ զՁիանն վաղ ու-
բեմն ընդ բռնադատութեամբ սանձից նուա-
ճեալ 'ի հլութիւն, մղեցին առ Լրիքթոնեաւ
'ի լուծ տաժանակիր սայլոցն՝. և 'ի վաստակս
մեղուաց վայելեցին, յարակայեալ զպարս նո-
ցայ Լամետ լերին՝։ Զ Պանդիոնիս և եւս զարդ-
գացան յերկրագործութիւն՝. բայց յոյս մշա-
կայն յերկարատև երաշտութենէ 'ի դերև ե-
լեալ, Լդիպտոս զթերին պիտոյից գաղթակա-

1 Երոդ. գիրք Ե. գլ. 58։ Լուկան. գիրք Գ. տող 220։ Պոշար աշխար. սրբ. գիրք Ա. գլ. 20։

2 Պլին. գիրք Է. գլ. 56. հա. 1. էջ 416։ Եղիսան. զան. պատ. գիրք Գ. գլ. 38։ Արիստոտ. յԱթենայս Ճառ. հատ. 1. էջ 22։ Վիրգ. մշակական գիրք Գ. տող 113։

3 Կոլումեր. գեղջ. գիրք Թ. գլ. 2։

4 Մեսոբ. յոլ. թագ. Ասիոն. գիրք Բ. գլ. 2։

նին իւրոյ ելից[1], և անտի ազօտ իմն վաՀառա-
կանութեան սկիզբն եղև։ Լրիբթէոս յաջոր-
դեալ Պանդիմնի, պայծառացոյց զթագաւո-
րութիւն իւր կենցաղօգուտ կարգօք[2], որում
աթենացիք յետ մահուն կանգնեցին մեհեան[3]։
Հնարագիտութիւնք արուեստից զՀետան-
կեալ միմեանց՝ յաՀախեցին զժրութիւն ազգին,
և առատութի՛ Հայթայթեալ՛ ինոցունց՝ պատ-
բաստեր զզեղծումն։ Ոչ իբրև զբարեացն ըզ-
փորձ էառ ազգն, զորս յաւելու արուեստ՛ ի
տուրս բնութեան, զարթեան՛ ի նմա մոլեկան
կիրք, և մղեցին զնա զՀետ ցնորից այլոց իմն
կարծեցեալ բարեկենդանութեան։ Ախանձ
նմանութեան, գրգիռ Հզօր՛ ի գործս մարդ-
կան, որ յառաջ բարենախանձս զնոսա յարդաւ-
բեր, զառաՀեցոյց զնոսա այնուՀետև՛ ի ցան-
կութիւն փառաց և պատուոյ, և մոլենախանձս
արար զնոսա և քինախնդիրս։ ՊՀպաւորք՛ ի
քաղաքայնոց զգրգիռս զայսոսիկ ըստ մոլ՛ ի
կիր արկեալ, լցին աղմկաւ զազգն՝ ակն եդեալ
թագաւորութեան. որով Միթիկտոն զԱրա-
նաւոս ընկէց յաթոռոյ, և ինքն Լրիբթոնեայ
ընկեցաւ[4]։

Ըստ յաւելուլ աթենական պետութեանն՛ ի
զօրութիւն, և Արգոս և Լակադիա և սպար-

[1] Դիոդ. գիրք Ա. էջ 25։
[2] Նոյն անդ։ Մեսդ. յղ. թագ. Ամենն. գիրք Բ. գլ. 7։
[3] Նոյն անդ։ գիրք Ա. գլ. 55։
Կիկ. յղ. բնութեան դեղ գիրք Գ. գլ. 19. հմ. 2. էջ 503։
Պաւս. գիրք Ա. գլ. 26. էջ 62։
[4] Նոյն անդ գլ. 2. էջ 7։

տացիք և կորնթացիք և Սիկիոն և Թեբէ և բնակիչք Թեսաղիոյ և եպիրացիք զօրանային տակաւ, և աղմուկք ապստամբութեանց նորանոր տեսարանս գործէին հանապազ։ Ընդանօր նախնին խուժադուժ անգթութիւն դարձեալ 'ի վեր երևէր 'ի թշնամանս օրինաց և կրթութեան բարուց։ Չը զի սրիկայք ուժեղք 'դարանեալք 'ի Հանապարհի՝ աւազակէին զանցաւորս, և էր զի անագորոյն բռնաւորք անյոյզք 'ի կրից կատէին յուշիկ զանմեղս 'ի դառնակսկիծ տանջանս։ Բ. յլ խնամակալութիւն, որ միշտ չարին ընդդէմ կշռէ զբարին, յաբոյց 'ի կործանումն նոցա արս ուժեղագոյնս քան զառաջինսն, և հզօրագոյնս քան զվերջինսն, արդարակորովս քան զերկաքանչիւրսն առ հասարակ։ Ոչոց ընթացեալ ընդ յունաստան՝ սրբեցին զերկիրն 'ի հարստահարութենէ ռամկին և թագաւորի, երևեալք գեր 'ի վերոյ քան զընութիւն մահկանացուաց։ Չը աղքն տղայաբարոյ, ծայրայեղ 'ի շնորհակալութիւն և յերկչոտութիւն, այնպիսի փառս ընդ դուշնաքեայ քաջութեան նոցա փոխարիներ, զի արք հզօրք պատուասիրէին խնամակեալնմա։

Բ. յս դիւցազնական առաքինութիւն, անսովոր առ յապայ ժամանակս, անծանօթ առ այլս յաղգաց, և պատշաճագոյն 'ի միաբանել

1 Պլուտ. 'ի Թես. հա. 1. էջ 3։

զգուշութիւն ընդ մարդասիրութեան, ա-
մենայն ուրեք 'ի վեր երևեալ, և յամենայն
ազգի ազգի կարիս օգնական լիներ։ Այնթե գա-
զան վայրենի յարձակեալ 'ի մայրուց՝ շուրջ
յանդաստանս ահ արկաներ, դիւցազն երկրին
պարտ անձին վարկաներ յաղթահարել զնա ա-
ռաջի ժողովրդեան՝ որ դեռ ևս դեր 'ի վերոյ
քան զամենայն բարեմասնութիւնս համարեր
զկորով, և վեհ յառաքինութիւնս զարիու-
թիւն։ Այլ և թագաւորք առ 'ի յաւելուլ 'ի
պատիւ իւրեանց զվաստակս՝ որ գերապանծք
'ի ժամանակին յայնմիկ կարծեցեալք էին, իսկ
զախէին 'ի կռիւս. և յաղթանակաւն որպէս թէ
օրինաւոր զիշխանութիւն իւրեանց կացուցա-
նէին։ Այս որ յառաջագոյն չզանգիտէին և էթ
'ի վտանգաց, սկսան այնուհետև կոչել ըզ-
վտանգս տարագէմ երթեալք 'ի խնդիր նոցին,
կամ ձայնատուր լեալ նոցա շուրջանակի։ Այլ
քանզի բազում այն է զի առաքինութիւնք 'ի
յաճախել գովութեանցն խամրին, քաջու-
թիւն նոցա զառաջեալ 'ի յանդգնութիւն՝
կերպարանափոխ եղև 'ի սպառ ըստ բնու-
թեանն և ըստ գործոյն։ Օ՛ի ոչ ևս 'ի փրկու-
թիւն ժողովրդեան ուշ ունէին, այլ զամենայն
ինչ փոխանակէին մոլեկան ախտիցն՝ որք ան-
պատուհաս յաւելուին 'ի ժայռութիւն։ Զեռն
որ զբռնաւորս ընկենոյրն յաթոռոյ, նոյն և
զթագաւոր արդար կապտեր 'ի հայրենի մե-

ծուլթեանցն, կամ յափշտակէր 'ի ծոցոյ նորա զՀարսնն չքնաղ։ Լ.յսպիսի խծբիծք ամենապարտք զնախնի դիւցազանցն ժանտացուցանեն զփառս։

Լսոցանէ բազումք, արգիական նաւաստիկքն անուանեալ, զծովաչու արշաւանացն կալան խորհուրդ *, 'ի յափշտակել զգանձս Լ.յետայ արքային կողբիսացւոց '։ Հարկ էր նոցա հատանել անցանել ընդ ծովս անծանօթս, և 'ի նորանոր վտանգս անդուլ շահատակել. այլ նոքա յառաջագոյն մեծաւորք յաղթանակեալ, իսկ անդ 'ի միասին իբր ամենայաղթք խիզախեին. և եղեն իսկ անպարտելիք։ Ընդ նոսա էր Յասոն, որ հրապուրեալ յափշտակեաց զՄեդիա զդուստր Լ.յետայ. այլ մինչդեռ 'ի բացեայ կայր յաշխարհէն, կորոյս զթագաւորութիւն Թեսաղիոյ՝ զոր նմա անկ էր ժառանգել։ Ընդ նոսա և Կաստորն և Պոլլուքս, որդիք Տինդարեայ արքային սպարտացւոց, հռչակաւորք քաջութեամբ, և գերահռչակք առ միմեանս սիրոնին՝ որով բազնաց արժանի եղեն։ Ընդ նոսա և Պելէոն արքայ փթիովտացւոց, զորոյ զհամբաւ քաջութեանն մեծացոյց որդի նորա Լ.քիլլէս քաջագոյն քան զհայրն երևեալ։ Ընդ նոսա և Լրփէոս քեր-

* Իբր 1360 ամք Ն. Ք։ Դ. էջ 245։ Ապոլոդ. գիրք
։ Հոմեր. Ոդիս. գիրք ԺԲ. Ա. էջ 53։ Ապոլոնիոս արգոնաւոր 70։ Պարապ. անդ։ Եւրոդ. գիրք Դ. էջ 145։ Դիոդ. գիրք

թողլ, որ վաստակակից նոցին զուարճական երգովքն եղև։ Ինդ նոսա դարձեալ և Հերակլէս, դերակայեանն 'ի մահկանացուս, և նաև խասկիզբն կիսատուածոց՝. որ ելից զերկիր 'ի հուչակ համբաւոյ անուան իւրոյ, և փառաց յիշատակաց։

Լ։Ր նա յաղագէ Թագաւորացն արգիացւոց, և որդի զնա ասէն Լ։բամազդայ՝ Յ։ՇԿՄԵՆԵԱՅ ծնեալ 'ի կնոջէ Լ։միիտրիոնի. և նահատակութիւնք զնմանէ պատմին՝ առիւծն 'ի Լեմեայ անտառին սատակեալ[2], և ցուլն 'ի Արետէ, կինձն Յ։ՐԻՄԱՆԹՈՍ, և բազմագլխի վիշապն 'ի Լերնա, և եւս ամենագոյն հրեշք։ Լ։ԱԼ և Զ։ՈՎԵՒՐԻՍ սպան նա զաղքայն Եգիպտացւոց, որ յարիւն հիւրոցն զձեռնն վատ շաղախէր, և Զ։ՆԹԷՈՍ լեռիացի՝ որ գօտեմարտիւ պարտեալ զնոսա և խողխողէրն. և զՀրոսկայն 'ի Ալիկլիա, և զյուշկապարիկն 'ի Լեռսաղիա, և զամենայն եղեռնագործս 'ի վերայ երկրի, սահմանս կարգելով արևմտից[3], որպէս Դիոնիսիոսն արևելից։ Դարձեալ և լեբինս 'ի նմանէ ասէն հերձեալ՝ առ 'ի կցորդել զազգս ընդ միմեանս, և կիրձն փեռեկեալ՝ առ 'ի խառնել զծով 'ի ծով, և զդժոխս 'ի նըմանել պարտեալ և նոմաւ աստուածոց ընդդէմ

[1] Դիոդ. գիրք Դ. էջ 223։ Ապոլոն. արգոն. գիրք Ա տող. 494։

[2] Ապոլոդոր. գիրք Բ. էջ 109. և այլն։

[3] Պլատ. 'ի Փեդր. հա. 1. էջ 109։

հսկայիցն 'ի պատերազմի յաղթանակեալ։

Այլ էպք նորա հիւսք իմն են սքանչելեաց, կամ՝ մանաւանդ պարարութիւն վիպաց համանուանացն նորա ամենեցուն՝ որք հանգոյն նմին գործեցին արութիւնս[1]։ Որոս վիպասանիցն պաճուճեալ՝ խառնեցին զընաւս 'ի մի, և միումն ընծայելով զամենայն քաջայաղթ արութիւնս՝ որոց անյայտք էին գործողքն, ըստ ոչ զնա փառաք ամենայն մարդկան. քանզի Հերակլէսն երկրպագեալ կեղծիք իմն են մեծութեան կանգնեալ ընդ երկինս և ընդ երկիր, իբր առ 'ի ներաշխարհացն որ 'ի միջի։ Իսկ բուն Հերակլէս ոչ իւիք առաւելոյր քան զայլս 'ի մարդկանէ, այլ ուժով միայն. և ոչ դիցն իւիք նմաներ Հելլենայ, բայց մոլեկան ախտիւքն։ Արութիւքն և չարութեամբք՝ զորս 'ի յաճախ արշաւանսն գործեաց՝ արար իւր համբաւ այնպիսի, զի նոր ախոյեան յունաստանի օրինակաւն իւրով յարոյց զԹեսէոս։

Թեսէոս որդի էր Այգեայ արքային ատենացուց և Այթրայ դստեր Պիթիթէոսի առն իմաստնոյ իշխանին Տրեզենայ, ուր և մնաւ նա. և 'ի հուչակ համբաւոյ նահատակութեանցն Հերակլեայ վառեալ 'ի նախանձ, չհանդարտէր 'ի լուր նոցին, և ազգակցու-

[1] Դիոդ. գիրք Գ. էջ 208։ Պլիկերոն յղ. բնութեան գիր գիրք Գ. գլ. 16. հա. 2. էջ 500։ Տակ. տարեգր. գիրք Բ. գլ. 60։

թիւն ընդ դիւցազնին յաւելոյր 'ի նմա զնա-
խանձ նմանութեան, և եռայր ոգի նորա
վաղ բեկանել զխոչ արգելանին՝ տեսանելով
առաջի իւր ասպարէզ լայն և ընդարձակ[1]։
Դարձեալ վերստին հուզկահարք 'ի վեր ե-
բևէին, և հրեշք 'ի մայրեաց 'ի դուրս յար-
ձակէին, իսկ Հերակլէս 'ի Լիւդիա կայր։

Լթբա առ 'ի հանգուցանել զյորդեռանդն
աշխոյժս որդւոյն, 'ի վեր եհան նմա զգաղտ-
նիս ծննդեանն։ Լծ զնա 'ի վեմ մի մեծ անհե-
դեդ, և ասաց գլելնմա զայն[2]. և եգիտ նա
ընդ վիմանն ծածկեալ 'ի հօրէն սուսեր մի և այլ
նշանակս որդւոյն։ Լռեալ անտի զաւանդսն
ուղևորի ՅԹէնս. մայր նորա և հաւ յորդո-
բեն զնա նաւարկել ընդ ծով, այլ 'ի զուր. զի
ոչ միայն խորհուրդք երկչոտութեան, այլ և
խրատք զգուշութեան դժպհիք էին նմա։
Լնտրէ նա զՀանապարհ վտանգի և փառաց,
և փութանակի 'ի վերայ հասանէ Աթենեայ[3]։
Սա այր անողորմ զորս միանգամ պարտէ-
ըն, կաշկանդէր յոստս ծառոց ուժգին 'ի
վայր ձգեալ զնոսա, և անդրէն թողացու-
ցեալ, որք զարիւնաթափաւ յօշուածս անգա-
մոց թշուառականացն առեալ 'ի վեր դիմէին։
Լնտի յառաջ անցեալ, ուրանօր Սկիւռն կա-

[1] Պլուտ. 'ի Թես. հտ. 1. էջ 3։
[2] Պլուտ. անդ։ Պաւս. գիրք Ա. գլ. 27։
[3] Պլուտ. անդ. էջ 4։ Դիոդ. գիրք Դ. էջ 262։ Ապողոդ. գիրք Դ. էջ 255։

լեալ զկիրճ լերինն՝ զանցաւորս ընդ այն 'ի վայր գահավիժէր, և անդր էաւ՝ ուր Պրոկոստ գառացուցեալ զնոսա յանկողնի, զերկայնահասակս ծայրատէր, և զկարճահասակս դժնդակ տանջանօք կրկին 'ի չափ անկողնոյն ձգտէր՝, զերկոսին էաւ ելուզական նովին առ 'ի նոցանէ հնարեալ տանջանօքն կորոյս։

Լ՝ու յետ բազումմարտից և յաղթութեանց ժամանէ նա յարքունիս հօրն, մինչդեռ 'ի յոյզըս սաստիկ գրգռութեանց կորուստ 'ի վերայ հասեալ կայր թագաւորին։ Պալլասեանք, ազգատոհմ հզօր Յ՝ԱԹԷՆՍ՝, դժկամակութիւն տեսանէին զգաւազան իշխանութեան 'ի ձեռին առն զառամոյ, որումն չէր համարէին ուշնել իրաւունս և ոչ զօրութիւն տանելոյ զայն։ Լ՝ու հանդերձ արհամարհանօքն՝ ցուցանէին և ակնկալութիւն իմն մեծալուտ մահու նորին, և իղձս բաժանելոյ յիւրեանս զթագաւորութիւն նորա։ Լ՝ԱԼ յերեսաց Լեսկոսի եղծան ամենայն խորհուրդք նոցա։ և զի մի գուցէ Լ՝գէոս առեալ իւր զեկն յորդեգիրս, վրէժխնդիր իւր զնա պատրաստեսցէ և հարազատ ժառանգ թագաւորութեանն, արկին զամենայն երկեւանս 'ի կասկածոտ միտս նորա. այլ անդէն 'ի ժամ՝որդեսպանութեանն ծանեաւ նա զորդին, և ծանոյց ժողովրդեան իւրում։ Լ՝նդ

1։ Պլուտ. 'ի Թես. հտ. 1. էջ 2։ Պլուտ. անդ։
5։ Դիոդ. գիրք Դ. էջ 262 ևն։

պալլասեանք ապստամբեցին, քայց Թէսէոս հար ցրուեաց զնոսա[1]։ Բայց իսկ և իսկ դիմեալ 'ի Մարաթոն, ուր յամաց հետէ մի 'ի ցլուց մոլեալ աւերէր զանդաստանս[2], հաս կալաւ զնա, և շղթայակապ եդ 'ի տեսիլ ամենայնոց, որք ոչինչ նուազ հիացան ընդ յաղթութիւնն՝ որքան ընդ գազանամարտն զարհուրեալք։ Բայց Թէսէոս յաւել նոցա մեծագոյն յոյժ զարմանս։

Վանդի Մինովս արքայ կրետացւոց, պատճառանօք՝ իբր թէ զՆդրոգէոս զորդի իւր նոցա սպանեալ էր՝ առնոյր 'ի նոցանէ ըստ ժամանակի[*], սահմանեալ զօրութեամբ զնուց, պատանիս և օրիորդս թուով[3]։ Այնմակաւ ընտրէին գնացականքն, և գերութիւն առաջի կայր նոցա կամ մահ։ Այն երրորդ անգամ գային ՅԱթէնս խնդրակք կորզել 'ի գրկաց եղկելի ծնողացն զկատորս ոգւոց նոցա։ Լաւ մինչդեռ քաղաքացիքն 'ի սուգ թաղծութեան պաշարեալ կային, քաջալերեաց զնոսա Թէսէոս, և ընկեց զանձն իւր յառաջ՝ ազատել զնոսա 'ի դժպհի հարկէն. և 'ի յաջո-

1 Պլուտ. 'ի Թես. հմ. 1. էջ 6։ Պաւս. գիրք Ա. գլ. 28. էջ 70։

2 Դիոդ. գիրք Դ. էջ 262։ Պլուտ. անդ։

* Ըստ Աղոլոդորայ (գիրք Դ. էջ 253.) ամի ամի. ըստ Դիոդորի (գիրք Դ. էջ 363.) 'ի լուսնի եօթն ամաց. իսկ ըստ Պլուտարքեայ ('ի Թեսէոս.) յիններկի ամին։

3 Դիոդ. անդ էջ 264։ Պլուտ. անդ։

զութիւն առաջարկութեան արիական խորհրդոյն՝ խառնեցաւ և ինքն 'ի թիւ ընտրելոց զոհիցն, նաւարկել ընդ նոսա 'ի Կրետէ։

Այլ աւանդեն աթենացիք, զի ընդ հասանել նոցա անդր՝ փակեին զնոսա 'ի բաւղի, և մարդացուլն կլաներ զնոսա։ Այլ էր մարդացուլն, զոր յոյնն Մինոտաւրոս ասէ, հրեշ երկկերպի՝ մարդ ցլախառն, ծնեալ յանարժան տուփանաց Պասիփայեայ դշխոյին Կրետացւոց։ Այլ յաւելուն սպանեալ Թեսէոսի զհրեշն, և զմանկունսն աթենացւոց դարձուցեալ առ զատս. զի Արիադնէ դուստր Մինովայ առաջնորդէր նմա յանել բաւղին. որ ապա թողաւ 'ի նմանէ 'ի ծովեզր Նաքսոսի։ Այլ ազգ իմն կրետացիք պատմեն. զի մանկունքս այսոքիկ էին 'ի մրցանակ յաղթողաց 'ի խաղսն՝ որ 'ի պատիւ Ընդրոգեայ կատարէին. յորում Թեսէոս ընկալեալ 'ի կռիւ, յաղթեաց Ցաւրոսի զօրավարին Մինովայ. և Մինոսն մեծախոհութեամբ վարձատրեալ զքաջութիւնն, ետ թող աթենացւոց զհարկն։

Կրետացւոցն աւանդութիւն առաւել 'ի Ճահ գայ բուսոյ բարուցն Մինովայ, որ արդարութեամբ և իմաստութեամբ համբաւէրն. իսկ աթենացւոցն իցեն արդեաք կեղծիք անհաշտ թշնամութեան նոցա ընդ յաղ-

1 Խոսկ. Հեղինէ Ներբ. հա. հա. 1. էջ 6։ Ալտոզդ. գիրք
2. էջ 127։ Պլուտ. 'ի Թես. գ. էջ 253, և այլք։

թողս իւրեանց վասն կորանացն[1]։ Այլ յերկաքանչիւրոցն առ հասարակ վկայի Թեսեայն քաջութիւն, որ զհայրենիսն իւր յամօթալի ծառայութենէն ազատեցոյց, և զանձն 'ի կըշիռ եդեալ՝ արժանի գտաւ աթոռոյ թագաւորութեան, որ անժառանգ կայր մահուամբն Լիգեայ։

Իսկ ԵՒ Իսկ 'ի գահակալէն՝ խորհեցաւ նա չափ և սահման դնել իշխանութեանն, և հաստատագոյն և անյեղլի զկարգ տեսչութեանն յարդարել[2]։ Լրկոտասան քաղաքքն, որ 'ի Կեկրոպայ հիմնարկեալք Ա՝տտիկէ, յերկոտասան պետութիւնս փոխեալ էին՝ ատենաս ուղնելով իւրաքանչիւր, և պետս գրեթէ ինքնիշխանս[3]. որոց խնդիրք շահուն ընդդէմ միմեանց ստէպ պատահեալ, դրդէին յաՀախ պատերազմունս։ Օի թէպէտ և 'ի կարևոր վտանգաց ստիպեալք՝ դիմէին նոքա առ թագաւորն, այլ խաղաղութիւն զհետ մրրկին յուզեր դարձեալ 'ի նոսա նախանձընդդէմ գրգռութիւնս։ Իսկ թագաւորին իշխանութիւն մերթ հզօր տիրապետեալ, և մերթ նըկուն վատթարեալ, ահարկու կամ արհամարհ երևէր։ և ժողովուրդն դեռ անկերպարան զկարգ տեսչութեանն ունելով, որ-

[1] Պլուտ. 'ի Թես. հա. 1. էջ 7։
[2] Դիոնս. 'ի Նեբր. էջ 873։
Խոկ. Հեղին. Նեբր. հա. 2. էջ 130։ Պլուտ. անդ էջ 10։
[3] Թուկիդ. գիրք Բ. գլ 15։

պէս զի ոչ ինքն և ոչ Թագաւորն գիտէր ըստուգիւ զսահմանս օրինաց նորա, ոչ գտանէր հնարս յերկուցն և սոյս տալոյ անչափութեանց՝ ստրկաբար գերութեան և համարձակ ազատութեան։

Մեսէոս կազմեալ զառաջարկութիւն խորհրդոյն, և առ 'ի հասանել յամբոկ գործոյն՝ զխոչ և զխութ առ ոտն կոխեալ, շրջեցաւ ամենայն ուրեք ընդ Ասիկէ առ 'ի յանկուցանել յինքն զսիրտս ամենեցուն։ Համիկն մտադիւր ընկալաւ զհրաւէրն, որ Թուէր 'ի նախնին իւր դարձուցանել զնա յազատութիւն. իսկ ազնուականք առ ահի անկանելոյ յիշխանութենէն՝ զոր յիւրեանս գրաւեալ էին, և հաւասարելոյ ընդ այլ քաղաքացիս, քրթմնջէին ընդ նորաձևութիւնն՝ իբր վատթարիչ արքունի իշխանութեանն. այլ ոչ իշխեցին յայտնապէս կալ հակառակ կամաց Թագաւորին, որ համոզէր զնոսա ջանայր՝ առանց 'ի կիր արկանելոյ զսաստ հրամանի, և յանձն առին՝ պատեհագոյն մնալով ժամանակի 'ի հետել։

Եւ այս կարգք սահմանեցան, զի մայրաքաղաք և միջակէտ աշխարհին կացցեն Ասթէնք. զի այլոց քաղաքաց բարձցին ատեանք. զի իշխանութիւն օրէնսդրութեան պահեսցի աշխարհաժողովատենի, համախմբեալ յերրեակ դասուց՝ յորոց բովանդակէր ազգն, դաս ազատանուոյն, և երկրագործացն դաս, և որք 'ի

ձեռացն արուեստք կէին. զի դատաւորք ա-
ւագք ընտրեալ յաղատորերոյն՝ կացցեն տե-
սուչք սրբութեանցն և օրինաց թարգմանք,
հաւասարելով երրեակ դասուցն ընդ միմեանս,
միումն աւագութեանն շքով, երկրորդին կա-
ւոր վաստակօքն, և երրորդին բազմադոյն
թուով՝. և զի դարձեալ Թեսեոս գլուխ կա-
ցեալ հասարակաց պետութեանն՝ վրէժխնդիր
լեցի օրինացն սահմանելոյ 'ի նմանէ, և զо-
բաւոր զօրացն՝ որ 'ի պահպանութիւն նոցին
կարգեալ։

Բստ կարգացս ըստ այսոցիկ կացին Աթէնք
յընկերահաշտ ազատութեան[2]. և վասն զի
զինի էր այս աթենացւոցն բնաւորութեան՝
յարատեւեաց մինչև 'ի սպառ, թէպէտ և առ
Պիսիստրատեաւ կրեալ փոփոխմունս[3]։ Կար-
գեաց Թեսեոս և տօնս աշխարհախումբ, յոր
մինչև ցարդ խուռն ընթանան ժողովուրդք
բնակեալք Ատտիկէ[4], կառոյց նա դատաս-
տանարանս, և մեծացոյց զմայրաքաղաքն և
գեղեցկացոյց ըստ ներել արուեստից ժամա-
նակին թերութեան։ Դիմեցին յամենայն
կողմանց եկք անդր հրաւիրեալք, և խառնե-
ցան ընդ հին բնակիչսն[5]. և յաւել նա 'ի սահ-

[1] Պլուտ. 'ի Թես. հտ. 1. էջ 11։
[2] Դիոնս. 'ի Նեկր. էջ 873։ Եւսեբիոս. 'ի յաւել. տող 404։
[3] Պլուտ. գիրք Ա. գլ. 3. էջ 9։
[4] Թուկ. գիրք Բ. գլ. 15։ Պլուտ. անդ։ Սուիդ. 'ի բառն Ἀττική.
[5] Պլուտ. անդ։ Թուկ. գիրք Ա. գլ. 2։ Պաւսան. անդ։

մանս երկրին զՄեդարա, և 'ի նեղջին Կորընթեայ կանգնեաց արձան՝ որ բաժանէր ընդ Լոտիկէ և ընդ Պեղոպոնես[1], և զխնամեան խաղսն 'ի տեղւոջ անդ նորոգեաց 'ի նմանութիւն դեռ ևս սահմանելոյն 'ի Հերակլեայ ոգոմպիականացն։

Լմենայն ինչ թուէր յաջողեալ ըստ ըղձից նորա. հրամայէր նա աղատ Ժողովրդեան[2], զոր հեղութիւն նորա և բարերարութիւն ունէին 'ի հնազանդութեան. օրէնս քաղցունս և խաղաղասէրս տայր շրջակայ ազգաց[3], և վայելէր անդստին 'ի մեծապատիւ մեծարանս՝ զոր դարք ապագայք ընծայէն տակաւ յիշատակք արանց աւագաց։ Լայլ և ոչ այնպիսին բաւական եղև 'ի հայթայթել իւր անթերի զփառսն։ Ցաղտկացաւ նա 'ի հարկաց խաղաղութեան՝ զորս Ժառանգէրն, և 'ի դիւրապատրաստ առաքինութեանցն՝ որ այնոցիկ առիթքն էին. մանաւանդ զի էր և այլ ինչ, որ յաձախէր զտաղտկութիւն նորա։ Վասնզի դիտէր նա հանապազ զգործս Հերակլեայ[4], և նորանոր արութիւնքն՝ որովք դիւցազնն այն փառաւորէր զդարձ իւր Յունաստան՝ զրգռէին զոգի նորա. և դարձեալ զի

1 Պլուտ. անդ։ Սոր. գիրք Թ. էջ 392։

2 Խոսկ. Հեղին. Ներբ. հա. 2. էջ 131։

3 Պաւս. գիրք Ա. գլ. 39. էջ 94։ Պլուտ. անդ. էջ 14։ Դիոդ. գիրք Դ. էջ 262։ Խոսկ. Հեղին. Ներբ. հա. 2. էջ 125։

Պերիթովս որդի Լքսիոնի, արքայ Թեսաղայոց, առ 'ի փոքռ արդեօք քաջութեան նորա թէ 'ի խուսովել զխաղաղութիւնն՝ ոչ գիտեմ՝ արկ 'ի միտս իւր խորհուրդ՝ նախնի գիւցազանցն սովորութեան ոչ ինչ տարաղէպ։ Զանազ 'ի դաշտավայրս Մարաթոնի արշաւեալ, եբարձ զանդեայս Թագաւորին՝. այլ 'ի դիմել նորա 'ի վրէժխնդրութիւն, Պերիթովս լի զարմացմամբ՝ աջ խաղաղութե մատոյց նմա, և ասէ. Ինտրեա դու քեզ որ ինչ կամիս 'ի հատուցումն։ Եւ Թեսէոս ասէ. Լեր դու ինձ 'ի նիզակակից։ Եւ երդուան յանլոյծ նիզակակցութիւն[2], և յաՀագին արութիւնս հանապազ մտաբերէին։

Ելա այնուհետև Հերակլէս, Թեսէոս և Պերիթովս, բարեկամք և նախանձորդք միմեանց դիմեալք առհասարակ յասպարէզ՝ ձայնատուք վտանգաց և ակնկառոյցք 'ի յաղթութիւն, պակուցիչք անօրէնութեան և դողացուցիչք անմեղին, զաչս ամենեցուն յինքեանս ձգէին տեսարան եղեալ ամենայն Եւլադայ։ Թեսէոս մերթ աջակից Հերակլեայ, և մերթ աջակցեալ 'ի Պերիթովայ, և եր զի խառն 'ի դունդ դիւցազանց, հրաւիրեալ մշտանէր յամենայն երևելի պատերազմունս։ Եւ պատմեն յաղթանակեալ նորա ընդդէմ

[1] Պլուտ. 'ի Թես. հա. 1. էջ 14։ 1664։ Պաս. գիրք ա. գլ.
[2] Սոփոկլ. Եդիպ. կոլոն. տող 29. էջ 870։

Լամազոնացն, և առ Թերմոդոն գետով Ամ-
սիա, և 'ի դաշտս Լատիկեայ[1]. և 'ի Կալիդոն
ընդ Մեղէագրի որդւոյ արքային ետողա-
ցւոց շահատակեալ յորս անարգիլինՀին, յորոյ
վերայ արիագոյնք 'ի գիւցազանց ժամանակին
գումարեցան ընդ Մեղէագրի[2]. և նշանաւոր
լեալ 'ի Թեսաղիա ընդդէմ յուշկապարկացն,
յանդուգն պատերազմողաց՝ որք նախ առա-
ջին հեծեալք ձիախառն դիմեցին 'ի Ճակա-
տամարտ, աջողակագոյնք 'ի սատակումն հա-
կառակամարտիցն և յանձնապուր փախուստ[3].
Պար առեալ 'ի գերապանծ քաջութեանց
աստի, որ օգուտ և ոչ մի ինչ գործէին ժո-
ղովրդեան, խորհուրդ կալաւ ընդ Պերի-
թովայ յափշտակել զՀեղինէ դշխոյն սպար-
տացւոց, և զդշխոյն Լապիրայ, զհամբաւեալսն
գեղով որ զնոսա հռչակաւորս նոցն և եղկելս
արար[4]. Զ Հեղինէ ասեմ, զայն վասն որոյ
գեղեցկութեանն այնքան Ճապաղիք եղեն ա-
րեան և արտասուաց. իսկ դշխոյն Լապիրայ էր
Պերսեփոնէ դուստր Լայդոնի արքային Մո-
ղոսաց Լապիրոս[5]. Հասին 'ի վերայ Հեղի-
նեայ, մինչ կաքաւէրն 'ի մերհենին Լրտե-
մեայ. և յափշտակեալ զնա 'ի միջոց պարակ-

1 Խոր. հատոր. հա. 2. էջ 281։ Պլուտ. 'ի Թես. հա. 1. էջ 12. Պաւս. գիրք Ա. գլ. 2 և 41։

2 Պլուտ. անդ էջ 13։

3 Խոր. Հեղ. Ներբ. հա. 2. էջ 126։ Երոդ. առ Պլուտ. անդ։

4 Դիոդ. գիրք Դ. էջ 265։

ցացն, փախուցեալ զերծան 'ի պատուհասէն՝ որ սպառնայր նոցա 'ի Պարսից, և մնայր նոցա յԱրքայիրս։ Զանգի Աստն գիտացեալ զնորհուրդս նոցա՝ զՊերիթովս մատնեաց շանց կատաղեաց 'ի կերակուր, և զՄեսէս կապեաց յարհաւիրս բանտին 'ի սանդարամետս, ուստի Հերակլեայ խնամք բարերարութեանն ազատեցին զնա։

Իսկ երբև դարձաւ նա յԱթէնս՝ եգիտ ըզտուն իւր լի նշաւակութեամբ, և զքաղաքն պատակտեալ 'ի բազում հերձուածս։ Դէպ ոչ ոչ Փեդրա, այն որոյ անուն յաճախ հնչէ 'ի տեսարանս Աթենայ, հարեալ կայր 'ի սէր Իպպոլիտեայ որդւոյ նորա՝ զոր ծնաւ նմա Ամազոնացի. սէր զոր և ինքն դշխոյն դատապարտեր, և յորմէ գարշէրն արքայորդին, և որ երկաքանչիւրոցն ընդ հուպ եղև առիթ կորստեան։ Ի նմին ժամանակի և պալլասեանք գումարեալ ընդ իւրեանս զգրլխաւորս 'ի քաղաքացւոց, ջանային զբռամբ ածել զիշխանութիւնն՝ վասն որոյ եպերեէնն զՄեսէս զի վատթարեցոյց զայն։ Սողովուրդն իշխանութիւն 'ի ձեռս առեալ՝ բնաւ ամենևին անփոյթ առնէր զկարգաց, և ապաշնորհ առ երախտաւորսն գտանէր։ Դարձեալ զի և դառնացեալ իսկ էր յերեսաց Պիսոկուրացւոյն եղբարց Հելենեայ, և 'ի բողոքոյ նոցա, զի նոքա առ 'ի թափել զքոյր իւրեանց

'ի ձեռաց այնոցիկ՝ որոց Թեսէոս զնա յանձն արարեալ էր, արշաւեցին Յոտիկէ՝ աւերելով զաշխարհն՝, և լուծին զազգն 'ի տրտունջ ընդդէմ Թագաւորին՝ զի ախտիցն իւրոց փոխանակէր զամենայն, և զի լքեալ զհոգ աշխարհին՝ գնայր տարագէմ 'ի խնդիր ամՆթալից նահատակութեանց, և 'ի քաւել զամօթն 'ի շղթայս։

Ընդունայն ջանացաւ Թեսէոս փարատել 'ի մտաց նոցա զդժնդակ խորհուրդն. զի և զմէկնել նորա յաշխարհէն, և զարութիւնն, և զարկածս թշուառութեանցն, զամենայն 'ի յանցանս գրէին նմա։ Չէ զսաստ կամեցեալ 'ի կիր արկանել, գիտաց յայնժամ՝ զի չիք ինչ տկար քան զթագաւոր արհամարհեալ առաջի ժողովրդեան։ Չյանհնարս մտեալ՝ անէծ զժոզովուրդն, և խոյս ետ 'ի Սկիւրոս առ արքայն Լիկոմեդէս[2]. ուր և յետ սակաւ ժամանակի* ըստ դիպուածոյ ինն կամ դաւով արքային գահավիժեալ կորեաւ[3]. քանզի Լիկոմեդէս ջանայր զմիտս հաճել Նեսթեայ՝ որ զՀետ Թեսէոսի յաջորդեաց ՅԹենս։

Բութիւնք Թեսէոսի, և դատաստանք իւրոցն զնմանէ 'ի մանկութեանն նորա 'ի սկզբան թագաւորութեանն, և 'ի վերջին աւուրս

[1] Երոդ. գիրք Թ. գլ. 73։ քով. ԱԹէն։
[2] Պլուտ. 'ի Թես. հմ. 1. էջ 16։ Հերակլ. յղ. քաղաք.
* Իբր 1305 ամք 'ն. Ք.։
[3] Պաւս. գիրք Ա. էջ 41.

կենաց նորա, երևեցուցանեն զնա որպէս ըզ-
դիւցազն, իբրև զթագաւոր, և որպէս ըզ-
բախտախնդիր ոք զօրական. որ և ըստ այսո-
ցիկ երեցունց կերպարանաց յաջորդելոց 'ի
նմա՝ զզարմացումն զսէր և զարհամարհանս
աթենացւոց յինքն ձգեաց։ Այլ նոքա մոռա-
ցան յետոյ զզառածանս նորա, և ամաչեցին
ընդ ապստամբութիւն իւրեանց [1]։ Կիմոն որ-
դի Միլտիադեայ, աստուածուստ ուրեմն պատ-
գամաւ, փոխեաց զոսկերս նորա 'ի ներքս 'ի
պարիսպն Աթենայ [2]. և 'ի վերայ գերեզման-
ի նորա կառուցաւ մեհեան գեղեցկաշէն, ա-
պաւէն թշուառականաց [3]։ Արձանք ոչ սա-
կաւք յանդիման առնեն զնա, և զարքայու-
թեան նորա պահեն անմահ զյիշատակ. սա
ընդ շահապետս աւուրց ամսոց կարգեալ [4], և
ընդ դիւցազունս զոհիւք և տօնախմբու-
թեամբք պաշտի [5]. և աթենացիք համարին
զնա սկիզբն զօրութեան իւրեանց, և յանուն
նորա հպարտացեալ կոչեն քաղաք Թեսեայ
զԱթէնս։

ԱՅՏՈՒԱԾԱՍԱՍՏ ցասումն՝ որ զԹեսէոս մեր-
ժեաց յաթոռոյ, նոյն ինքն 'ի բազում ժամա-

1 Դիոդ. գիրք Դ. էջ 265։
2 Պաւս. գիրք Ա. էջ 41։ Պլուտ. 'ի Թես. հա. 1. էջ 17. 'ի Կիմոն էջ 483։
3 Դիոդ. անդ էջ 265։ Պլուտ. անդ։ Սուիդ. և Հիւսիք. 'ի բառն Θησε. Պարապ. Արիստոտ. 'ի Պլուտ. տող 627։
4 Պլուտ. անդ։ Պարապ. Արիստոտ. անդ։
5 Պլուտ. անդ։ 'ի Կիմոն էջ 483։

նակաց ծանրանայր 'ի վերայ Թեբացւոց։ Կադմոս հալածեալ 'ի Թագաւորութենէն՝ զոր կանգնեաց, Պողիդոր յաստուածապարարկացն յոշեալ, և աբդակ վաղամեռիկ լեալ՝ Թողլով որդի միամօր յորբանս, շրջապատեալ 'ի Թշնամեաց, յայսպիսի Թշուառութիւնս տատանէր անդստին 'ի սկզբանէ տունն աբքունի։ Լաբդակայ երկիցս կորուսեալ զԹագն և դարձեալ վերստին զբառամբ ածեալ զայն, էած իւր 'ի հնութիւն զԼպիկաստ կամ զՅոկաստ դուստր Ենեկեայ՝։ այլ հարսանեացն այնմիկ մնային դժնդակագոյն Թշուառութիւնք։ Պուժեաց 'ի դիցն պատգամ, Թէ որդին՝ որ 'ի նոցանէ ծնցի՝ սպանցէ զՀայրն, և ընդ մօր իւրում՝ անկցի։ Ընդ ծնանել որդւոյն, արկին զնա ծնողք իւր գեշ գաղանաց. այլ Ոչիչ մանկանն կամ դեպք յերևան ածին զնա յամայոջ, և ածաւ մանուկն առ դշխոյն կորնթացւոց, որ մնայց զնա յարքունիսն, և անուանեաց զնա Լդիպոս, ընկալեալ զնա իւր յորդեգիրս[3]։

Երբև աՀեաց մանուկն, և գիտաց յորմէ վտանգէ մնաղապուր լեալն էր, խնդրեաց Հրամանն պատասխանւոյ 'ի դիցն։ Լա 'ի քրմաց զնոյն զառաջին պատգամն ընկալեալ՝, 'ի նոյն

[1] Դիոդ. գիրք Դ. էջ 266։ Պաւս. գիրք Թ. գլ. 5. էջ 721։ Եւրիպ. 'ի փէնիս տող 10։

[2] Եւրիպ. անդ տող 30։ Ա պոլոդ. գիրք Դ. էջ 181։

[3] Ապոլոդ. անդ էջ 183։

աղէտս՝ յորոց խորշէրն՝ ածեալ ձգեցաւ։ Բանզի խորհուրդ կալեալ ոչ ևս դառնալ 'ի Կոբընթոս, զոր առ հայրենիս իւր ունէր, դէմ եդեալ գնայր 'ի Փովկիս։ Եւ հանդիպեալ նմա յուղղոջ ուրեք ծեր ոմն, խրոխտս բարբառեցաւ տեղի տալ իւր, և բռնադատեր զնա. և էր ինքն Լայոս։ Ինկաւ 'ի վերայ նորա Եդիպոս, և հար սպան զնա՝։

Եւ յետ չարաչչուկ արկածիցն՝ հրատարակեր, զի որ ոք զԹեբացիս 'ի չարեացն 'ի վերայ հասելոց զերծուսցէ, նմա և Թագաւորութիւն Թեբայ տացի, և 'ի հարսանիս ընդ Յոկաստայ խառնեսցի։ Բանզի Սփինքս հարձ որդի Լայոսի գումարեալ ընդ սրիկայս, աւազակեր յարձակավայրի, և դաւեալ առեղծուածովք զուղևորս՝ մոլորեցուցաներ զնոսա 'ի բաւղականաձև շաւիղս Փինեայ լերին, մատնելով զնոսա 'ի ձեռս դրժող դաւակցացն։ Եդիպոս նշաւակեաց զՀաղբան, ցրուեաց զընկերշակողս չարեացն, և զվարձ յաղթութեանն ընկալաւ, գալով չափ հաւաստեաւ դիցն սատ գամաց։

Ա՝ծղնէութիւն յաղթանակեր 'ի վերայ երկրի, այլ ոչ յամենցին երկինք կասեցուցանել զնա՝։ Նշոյլք դժպհի յայտնութեանն արկին սոսկումն զերկաքանչիւրովքն։ Յոկաստ վախ

1 Եւրիպ. 'ի Փենիս. տող 40։ 2 Հոմեր. Ոդիս. գիրք ԺԱ. տող 273։
Դիոդ. գիրք Դ. էջ 266։

Հանեաց զթշուառ կեանս իւր, երթեալ զիւրոյ-
վին. իսկ Լդիպոս, որպէս կեաք 'ի վիպագրացն
աւանդեն, անձամբ զանձն կուրացոյց [1], և
մեռաւ Մտտիկէ յապաստանին՝ որ 'ի Թեբ-
սեայ նմա անդ հնորհեցաւ։ Իսկ այլք աւան-
դեն [2] դատապարտեալ զնա 'ի տեսանել զարև՝
որպէս զի դէմ յանդիման զվայրսն նկատեսցէ
զվկայս անօրէնութեանցն, և 'ի կեանս՝ որպէս
զի անօրինագոյնս քան զինքն ծնցի որդիս, և
հանգոյն իւր թշուառս։ Լաւ եղեն նորա որ-
դիք Լտէոկղէս, Պողինիկէ, Լնտիգոնա և
Իսմենէ՝ զորս ծնաւ նմա Լուրիկանէա երկ-
բորդ կին նորա [3]։

Լտէոկղ և Պողինիկէ այն ինչ 'ի տիս թա-
գաւորութեան լեալ, արգելին զԼդիպոս 'ի
խորշ մի ապարանիցն, և միաբանեցին ընդ մի-
մեանս ամ ըստ ամէ փոխանակաւ վարել զթա-
գաւորութիւնն [4]։ Լտէոկղէս նախ ամբար-
ձաւ յաթոռն՝ ընդ որով վիհք բացեալ կային,
և ոչ ևս յանձն առ իջանել անտի. իսկ Պողի-
նիկէ անկաւ առ Լգրաստ արքայ արգիացւոց,
որ զդուստր իւր ետ նմա կնութեան, և խոս-
տացաւ հզօր ձեռամբ օգնական լինել նմա [5],

[1] Սոփոկլ. յԵդիպ. կողն։ Ապոլոդ. գիրք Գ. էջ 185։
[2] Ցիշատ. բանաս. հա. 5. պատմ. էջ 146։ Պանիէ գից. հա. 3. էջ 367։
[3] Պաւս. գիրք Ա. գլ. 28. էջ 69. Թ. գլ. 5. էջ 722։ Ապոլոդ. անդ։
[4] Դիոդ. գիրք Դ. էջ 267։ Եւրիպ. 'ի Փենիս. տող 64։ Ապոլոդ. անդ։
[5] Դիոդ. անդ։

Այսր շարժեալ դրդեցաւ նախկին պատերազմն, յորում Հելլէնք ցուցան հմուտք հրամանգաց ինչ մարտի [1]։ Զի մինչև ցայսժամ խուժան անհրամանգ մարդկան յարձակեալ յաշխարհս մօտաւորս, և հարստահարութիւնս և նախճիրս առ ժամայն գործեալ՝ դառնային յետս [2]։ Իսկ պատերազմն Մեդացոյ ոչ այսպէս, այլ իմաստութեամբ պատրաստեալ, և քաջութեամբ կատարեցաւ։ Այլ և այլ ազգինք զմի քանակ կազմեալ, և միում հընազանդեալք իշխանութեան, տարան ժուժկալութեամբ խստութեան տարեբաց, յերկարաձիգ պաշարման, և վտանգաց հանապազօր ճակատամարտի։

Աքրաստ զօրավարս ընդ իւր կացոյց բանակին զՊողինիկէ՝ զոր կամէրն Թագաւորեցուցանէր Թեբացւոց, զարին Տիդէոս զորդի Անեայ արքային Ետոդացւոց, զամբին Կապանէոս, զընդձապատումն Մնիսարաւոս, զՍպոմեդոն, և զՊարթենոպէ։ Զհետ սոցա, որ առ հասարակ պատերազմողք էին՝ երևելիք ազգաւ և քաջութեամբ [3], կացին խոնարհագոյնք 'ի վաստակս և 'ի պատիւ՝ գլխաւորքն 'ի մեսենիացւոցն և յարկադացւոց և յարգողեցւոց։

[1] Պաւս. գիրք Թ. գլ. 9. էջ 728։

[2] Դիոդ. գիրք Դ. էջ 267։ Աղոդոդ. գիրք Գ. էջ 187։ Եպիփ. ընդդէմ թեր. Եր. լիպ. 'ի Փենես։

[3] Պաւս. գիրք Բ. գլ. 20. էջ 156։

* Ն. Ք. 1329 ամաւ։

Զու արար բանակն, և եհաս եմուտ յանտառն Լեմեայ. անդ զօրականք սահմանեցին զխաղն, որ և ցարդ կատարին մեծահանդէս[1]։ Իսկ անցեալ ընդ նեղուցն Կորնթեայ՝ հասին 'ի Ասիոմտիա, և վանեալ յարգել և 'ի պաշարումն արկին զզօրս Լատեոկղի 'ի պարիսպս Թեբայ[2]։

Զևեսս Հելլէնք հմուտք եին արուեստի առնլոյ պատերազմաւ զքաղաքս ամրացեալս զօրօք. պաշարողք ամենայն զօրութեամբ 'ի վերայ դրանցն եւեթ գուն գործէին, իսկ պաշարելոց ամենայն յոյս 'ի յաձախ յարձակմունսն էր։ Այլ 'ի խառնուրդսն անդ իբրև բազում նախձիրք ասսի և անսի գործէին, և կորովին Կասսանէոս 'ի բարձուէ սանդղոցն՝ զոր 'ի պարիսպսն անդր յեցուցեալ էր, 'ի վայր մղեալ հոսեր[3], Լատեոկղ և Պողենիկէ խորհուրդ կալան մենամարտութեամբ վախճան առնել պատերազմին[4]։ Զամ և տեղի սահմանեցին, և Ժողովուրդն յոգոս, և բանակն 'ի լռութեան, դիմեցին իշխանքն երկոքին 'ի վերայ միմեանց. և կարեալեր հարուածեալք յիրերաց, զվերջին հեծութիւնն արձակեցին՝ զրաւեալք 'ի կենաց առանց յաղեցուցանելոյ զբարտուութիւն իւրեանց. և ածան եդան 'ի նմին խարուկի։

1 Ապոլոդ. գիրք Գ. էջ էջ 729։ 189։ Նախագր. 'ի Նեմ. Պինդ. 319։

2 Պաւս. գիրք Թ. գլ. 9.

3 Դիոդ. գիրք Դ. էջ 268։

4 Ապոլոդ. անդ էջ 193։

Լաւ կեղծիք զնոցանէ հնարեցան, առակաւ ահեղ իմն զկիրս նոցա նշանակելով զոր 'ի կենդանութեան յանձին բերէին, իբր թէ բոցոյն իրազդայ լեալ և պատառեալ ընդ մէջ, առ 'ի չխառնելոյ զաՀիւն նոցա ընդ միմեանս։

Արէսին եղբօր Յոկաստայ յանձն եղև, մինչ դեռ Լաւոդամաս որդի Լտեոկղի մանուկն էր, յառաջ վարել զպատերազմն՝ որ օր ըստ օրէ յաՃախէր զաղէտս պաշարողացն. որում վախՃան արարին Թեբացիք մեծազօր յարձակմամբ։ Բազում Ճապաղիք եղէն անդ արեան, և անկան 'ի կռուին Տիդէոս և յոլովք 'ի զօրավարացն արգիւացւոց։ Հարկ եղև Արքաստայ լուծանել զպաշարումն, Թողեալ անպատիւ զդիակունս անկելոցն՝. բայց ապա սաստ զօրութեանն Թեսէոսի հպատակեցոյց զնա իրաւանց աղգաց, որ տակաւ առնուին զՀաստատութիւն՝։

ԿՈՐՈՒՍ Թեբացւոցն յամեաց և ԷԹ յաղԹութեամբ նոցա. զի զօրավարքն արգիւացւոց Թողին որդիս արժանի իւրեանց վրէժխնդիրս։ Որք 'ի հասանել ժամանակին * Լպիգոնքն առնուանեալք, այս ինքն են Պայազատք, յորս էին Դիոմեդէս որդի Տիդեայ, և ԱԹենեղոս

1 Դիոդ. գիրք Դ. էջ 268։ Ապոլոդ. գիրք Դ. էջ 195։
2 Խորհ. հանաԹ. հա. 2. էջ 269։ Պաւս. գիրք Ա. գլ. 38։

էջ 94։ Պլուտ. 'ի Թես. հա. 1. էջ 14։
* Ն. Ք. 1319 ամաք։

որդի Լապանեայ, մտին ահեղ բանակաւ յերբ կիր Թշնամեացն։

Լուռնեցաւ պատերազմ, և Թեբացիք'ի պարտութիւն մատնեալ՝ փախեան 'ի քաղաքէն, և քաղաքն եղև յաւար։ Ամերսանդր որդի և յաջորդ Պողենիկեայ յետ ամաց ինչ սպանաւ, յերԹալն իւրում'ի Տրովադա 'ի պաշարումն քաղաքին։ Յետ նորա Թագաւորք երկու 'ի զաւակէ նորա կացին 'ի Ամերէ։ այլ յերկրորդին յանկարծակի ինն դժնեայ կատաղութեան 'ի խելն անկանելոյ, գիտացին Թեբացիք՝ զի և զՀետ անգամ Լդիպեայ հալածէին դժոխք 'ի վերայ երկրի, և Թագաւորեցուցին զայլ ոք յայլմէ ազգատոհմէ։ Լու ապա ազգք երեք 'ի վերայ անցեալ, կացին յընկերահաշտ ազատութեան՝ յորում և կան մինչև ցայժմ[1]։

Յետ երկրորդ պատերազմին Ամերայ՝ ոչ էր մարԹ Լլադայ յերկար 'ի խաղաղութեան վայելել։ Օրավարք մարտին լի փառաք, և զինուորք լի աւարաւ դարձ արարեալ, խրոխտագոյնք յաղԹանակաւն եղեն։ և որդւոց իւրեանց և բարեկամաց խունելոց զնոքաք պատմելով զնահատակութիւնս իւրեանց և զգործս քաջութեան, վառէին զմիտս նոցա, և զսիրտս ամենեցուն արծարծանէին 'ի սաստիկ եռանդն

1 Պաւս. գիրք Թ. գլ. 5. էջ էջ 269։
722։ Աղոլոդ. գիրք Գ. գլ. 2 Պաւս. անդ էջ 723։
38. էջ 197։ Դիոդ. գիրք Դ.

մարտի . և ոչ յամենցին դէպք զդառնադէտ իշէս նոցա յարդիւնս ածել։

Պրիամ՝ի ծովեղերս Աքիոյ հանդէպ Աղլադայ կեայր՝ի խաղաղութեան, ՝ի հաւուց նախնեաց Թագաւորազանց սերեալ՝ հայր բազմաձնունդ ազգատոհմի, պարառեալ՝ի պարմանեաց գիւղազանց, Թագաւորելով՝ի Տրոյադա։ Աբքայութիւն նորա Հոխութիւն գանձուց և քաջութեամբ ազգացն նուաձելոց ընդ օրինօք նորա, և կցորդութեամբն դարձեալ ընդ Թագաւորս ասորեստանեայց [1], այնպէս՝ի մարզն յայնոսիկ Աքիոյ սփռէր Հաճանչ, որպէս Միկենացն Թագաւորութիւն Յունադա։

Տանն Աքգոսի, որ՝ի Միկենս բնակեալ, իշխան էր Աքամեմնոն որդի Ատրեայ։ Նա յաւել՝ի սահմանս իւր զՅորնեթոս լրիւն իւրով և զՄիկիոն և զայլ քաղաքս մծտաւորս [2]. և զօրութիւն Մենեղաւոսի եղբօր նորա, ուրոյ այն ինչ ածեալ էր իւր կնութեան զՀելենէ ժառանգ Թագաւորութեանն սպարտացւոց, յաւելոյր յոյժ զսաստ իշխանութեան նորա և յայն կողմն Յունադայ, որ՝ի Պելոպայ հաւոյն նորա յորջորջէր Պելոպոնես։ Տանտաղոս նախահաւ նորա նախկին Թագաւոր կացեալ՝ի Լիւդիա, կոխեաց զօրէնս սուրբս, և զՊանիմեդէս արքայ տրովացւոց արկ՝ի

1 Պղատ. յղ. որ. գիրք Դ. հտ. 2. էջ 685։ 2 Սոր. գիրք Ը. էջ 372։

ղթայս։ Դարձեալ և ոչ բազում ինչ ամաք յառաջ Հերակլէս 'ի Թագաւորացն արգիաց։ սերեալ, զբազաքն տրովայեցոց աւերեաց, զ Աւամեդոն սպան, և զ Յոխոնէ ըզդուստր նորա առևանդեաց։ Յիշատակ թըշնամանացս այսոցիկ, որ անպատուհաս առանց վրիժուց մնային, պահէր անհաշտելի զմթերեալ քէն տանն Պրիամու ընդ Ալեքսանդրեայ, Ժառանգեալ 'ի հարց, և եւս օր ըստ օրէ զայրացեալ նախանձընդդէմ իշխանասիրութիւն՝ որ դժնդակագոյնն է 'ի մահաւիթ կիրս։ Պարիս որդի Պրիամու, նա բողբոջեցոյց զսրոմն հակառակութեանս այսորիկ։

Պարիս եկեալ 'ի յունաստան՝ էջ յապարանս Մենելաւոսի, ուր գեղեցկութիւն Հելենեայ զօշոտեր զաչս ամենեցուն։ Ալբայորդին տրովացի ընդ վայելուչ գեղ դիտակին բերելով յինքեան և զրդձակերտ բարս՝ և ըզպարառութիւն ամենայն բարեմանութեանց՝ որ ողբքեն, և յուսով յաջողութեանն և եւս արիացեալ, այնպէս զդշխոյն սպարտուհի յինքն յարեցոյց, զի եթող նա զամենայն, և եկն զհետ նորա։ Ուր ջանացան ատրեանք ըզհատուցումն թշնամանացն քաղցրութեամբ 'ի ձեռս բերել. քանզի Պրիամոս համարեցաւ զայն 'ի հատուցումն անիրաւութեանցն՝ զոր Հելլենաց ընդ ազգատոհմ իւր և ընդ բոլոր

1 Հոմեր. Եղիակ. գիրք Գ. տող 39։

Աբիա արարեալ էր՝, և մերժեաց զանս խաղաղութեան։

Յետոյ արդ համբաւոյն հնչեցին՝ի սիրեալս աղաղակք աղմկայոյզք և արիւնախանձք, և շուինդն կարապետ մարտի և մահու. և ազգք և ազգինք Յաղադայ շարժեցան որպէս մայրիք յանտառի բախեալք՝ի մրրկէ։ Ոչք՝ի միում ևեթ քաղաքի իշխէին թագաւորք, և որոց՝ի բազում ազգս տարածանէր իշխանութիւն, ամենեքին առ հասարակ միով ոգւով քաջութեան գումարեցան՝ի Ամիկենս։ Ուխտ եդին զԱգամեմնոն առաջնորդ ունել մարտին, խնդրել զվրէժ Մենեղաւեայ, և զՏղուն յաձիւն դարձուցանել։ Յս հրաժարեալքն՝ի նիզակակցութենէն վաղվաղակի՝ի նոյն ածեալ ձգեցան համոզող ձարտարխօսութեամբ ծերունւոյն Ներստորի արքային Պիւղեայ, կեղծաւոր բանիւք Ադիսեայ արքային Իթակայ, և օրինակաւ Լասայ արքային Աղամնայ, և Դիոմիդեայ արքային արգիացւոց, և Ատոմենեայ արքային կրետացւոց, և Աքիլլեայ որդւոյ Պեղեայ՝ որ՝ի մարտս ուրեք Աստաղիոյ թագաւորէր, և ամբոխի խօլից կորովեաց խրախուսելոց անդստին՝ի յաղթութիւն։ Ուանակն հզօր, յորում էին արք իբր տասն բիւրք՝, յետ բազում պատ-

[1] Երոդ. գիրք Ա. գլ. 1։ 494 և զնոսին։ Թուկ. գիրք Ա. գլ. 10։
[2] Հոմեր. Եղի. գիրք Բ. տող

բաստութեան՝ խմբեցաւ Յիսուս 'ի նաւա-
հանգիստն. և նաւք իբր հազար և երկերիւր
առագաստեալ թափեցին զսպառազէնս յափն
Տրոադայ։

Բաղաքն տրոադացւոց ամրացեալ 'ի պատ-
նէշս և յաշտարակս, պահպանէր 'ի բազմա-
գունդ զօրաց[1], որոց զօրավարէր Լիկոտոր որդի
Պրիամու. զի էին ընդ նովաւ արքայք բա-
զումք նիզակակիցք, և գումարեալք զօրք
իւրեանց ընդ տրոադացիս[2]։ Որոց համախմբեալ
ամենեցուն առ հասարակ առ ծովեզերքն,
կազմեցին ռազմ ահեղ ընդդէմ Ճակատուն
Հելլէնաց։ Իսկ սոքա յետս զնոսա ընկրկեալ,
ամրացան 'ի բանակետղ իւրեանց մեծաւ մա-
սամբ նաւատորմին։

Դարձեալ միւսանգամ փորձ փորձեցին Ճա-
կատն երկաքանչիւր. այլ 'ի մնալ մարտին
յերկոցունց կողմանց անպարտելի, յայտնի
եղև՝ զի հարկ էր յերկարաձգել պաշարմանն։
Հելլէնք դեռ ևս ընչին լաստափայտիւքն, և
նաւաստականին թերի Ճարտարութեամբ ա-
ռուեստագիտութեան, չկարէին անդադար առ-
նել երթևեկս ընդ աշխարհն իւրեանց և ընդ
Ասիա. և պակասէին նոցա համբարք։ Սմին
իբրև կիսոց 'ի նաւաց պատուէր ետուն գնալ
շուրջ 'ի կղզիս և 'ի ծովեզերս, աւար առնուլ

[1] Հոմեր. Եղի. գիրք Ը. տող 562։
[2] Նոյն անդ գիրք Բ. տող 876. Ժ. տող 434։

վարել և սերմանել զերկիր. և ինքեանք սա-
պատակ սփռեալ ընդ երեսս երկրին, յափըշ-
տակէին զհունձս և զանդեայս։ Պարձեալ և
հարկ իսկ անհրաժեշտ էր նոցա զօրահատոյց
առնել. քանզի քաղաքն ոչ յամենայն կողմանց
էր պաշարեալ, և մարթ էր զօրացն Պրիամու
հայթայթել զպէտս՝ յարամրի 'ի դուրս յար-
ձակմամբ. վասն այնորիկ խորհուրդ կալան
դիմել 'ի վերայ նիզակակցաց նորա, առ 'ի լը-
նուլ զպէտս իւրեանց աւարաւ, և առ 'ի զբա-
կել յօգնականութենէ նոցա զամրականս։
Ընդ Աքիլլէս հուր և երկաթ ընդ ամենայն
կողմանս ածէր շուրջանակի[1]. և ուղխօրէն
զեղեալ աւեր զաշխարհաւն, դառնայր փար-
թամ աւարաւ՝ զոր 'ի զօրսն բաժանէր, և ան-
թիւ գերեաւք՝ զորս զօրավարք բաժանէին յիւ-
րեանս։

Ի ստորոտս Իդայ լերին քաղաքն տրուալցւոց
կառուցեալ էր 'ի բացեայ 'ի ծովէ, և խորանք
և նաւք Հելլէնաց զծովեզրն ունէին. իսկ որ
'ի միջի երկիրն՝ ասպարէզ էր քաջութեան և
կատաղութեան։ Ելստի և անտի նիզակաւորք,
զինուորեալք 'ի մկունդ և 'ի սուսեր, բար-
ձեալ նետս և գեղարդունս, սաղաւարտ 'ի
գլուխ եդեալ, զոտհ զանձամբ արկեալ, և զան-
գատանս 'ի վերայ բարձիցն սնդեալ, վառեալք
սպառազէն վահանաւորք, կուռ ընդ միմեանս

[1] Հոմեր. Եղ. գիրք Թ. տող 328։

ռազմ գործեալ, և զօրավարք առաջի նոցա, խաղային 'ի Ճակատ միմեանց. տրուակացիք խրա-խոյս բարձեալ, իսկ Հելլէնք ահաւորագոյնք և լռութեամբն։ Զ զօրավարք անդէն ընդ զինուորս հաւասարեալ, նախանձաւորք 'ի տալ մանաւանդ օրինակս արութեան քան հանձա-րեալ խորհուրդս՝ խիզախեին 'ի վտանգ, բաղ-դին գրեթէ միշտ թողլով զհոգ յաղթու-թեան՝ զոր ոչ 'ի ձեռս նոցա էր պատրաստել, կամ ընդ շաւիղս նորա հետևել։ Լցառն 'ի խուռն ընդ միմեանս բախեալ՝ զիրեարս խոր-տակէին գունդքն, որպէս որ յեւբեան կրՃին ալիքն մղեալք 'ի հողմոց և ընկրկեալք։ Գի-շեր բաժանէր զնոսա 'ի միմեանց. քաղաքն և պատնէշք ապաւէնք պարտելոցն լինէին, և յաղթուիւն գնեալ արեամբ՝ ոչ ինչ զրաւ առնէր մարտին։

Ի վաղիւ անդր բոց փայտակուտին մաշէր զհունձս մահուն զգիակունս անկելոցն, և յողբս և 'ի խաղս դամբանականս մեծարէր յիշատակ նոցա։ Լու գուլ զինուցն սպառեալ, դառնային անդրէն 'ի կռիւ։

Բազում այն էր զի 'ի խուռն սաստկացեալ մարտին մի 'ի քաջաց ձայն տայր ումեմն 'ի հա-կառակամարտիցն 'ի մենամարտ։ Զ զրքն երկուստեք 'ի լռութեան՝ կային 'ի զնին. իսկ ախոյեանքն մերթ տեգընկէցք 'ի միմեանս լեալ, և մերթ վէմն ստուարս յիրեարս արկա-

նէին. և էր զի սուսեր 'ի ձեռին ընդ միմեանս կռուեալք, և թշնամանօք միմեանց գրգռէին և ևս 'ի զայրոյթ. որպէս զի սրտմտութիւն յաղթականին ոչ զնջանէր մահուամբ ոսոխին, այլ և զդիակն նորա թշնամանեալ՝ զբրկէր զնա 'ի թաղմանէ, և կամ 'ի զինուցն կապտէր զնա։ Յայն վայր զօրքն երկուստեք յառաջ խաղային, կէսք 'ի թափել զաւարն 'ի ձեռանէ յաղթողին, այլք յօգնութիւն նորա դիմեալ. և մենամարտն փոխէր 'ի Ճակատամարտ։

Այն դէպք պատահէին 'ի խիթալ աստի կամ անտի զօրացն ընդ մօտալուտ անկումն իւրոյ ախոյենին, կամ եթէ ինքն իսկ զաչս ածէր 'ի խուսել 'ի վաղահաս մահուանէն։ Բանզի անստգիւտ լինէր նա վասն հարկին. իսկ անուանարկք և շինչելափառք 'ի սպառ այնոքիկ լինէին, որք նախ քան զկռիւն 'ի բաց խուսէին. զի յամենայն ժամանակի դիմագրաւեալքն 'ի մահ արժանի գտանին կենաց։ Օր որ զիորձ առեալ առաւելագոյն զօրութեան ոսոխին, և ապա խուսէրն, ներելի թողութեան էր. քանզի քաջութիւն 'ի ժամանակին յայնմիկ 'ի չափգիտութիւն իւրաքանչիւր զօրութեանն էր քան 'ի խիզախումն արիութեան, և ոչ ամենի համարէր տեղի տալ հարկին. բայց պարծանք էին հասանել զհետ խուսելոյ ոսոխին, և 'ի կորուն՝ որ պատրաս-

տէրն զյաղթութիւն՝ յաւելուլ զերագութի, լրումն առնելով յաղթանակին։

Ձեղև երբէք բարեկամութիւն սերտ և յաՀախ 'ի զինուորակիցս, որպէս 'ի պատերազմին Տրովադայ։ Աքիլլէս և Պատրոկղ, Լաս և Տեկրոս, Դիոմեդէս և Աթենեղոս, Իդոմենէ և Աերիոն, և բազում այլ դիւցազունք արժանի նոցին շաւղացն, ստէպ մարտակիցք լինէին միմեանց. և դիմագրաւելք 'ի խուռն մարտին՝ կցորդէին միմեանց 'ի վըտանգ և 'ի փառս։ Լր զի և 'ի մի կառս հեծեալք, մին ձիավարէր և միւսն վանէր զմահ 'ի թշնամին արձակելով զնա։ Օ՛ինուորակից զզինուորակցին անկելոյ ինդրէր զվրէժ. և Հապաղեաց արեան արեամբ Հատուցումն լիներ։

Յայսպիսի միտս քաջութեան վառեալ, տոկային երկաքանչիւր կողմանք անՀնարին աղետիցն կրելոց։ Բազում անգամ յառնուլ եղև քաղաքն 'ի Հելլենաց, և բազում անգամ տրովացիք 'ի նեղ արկին զքանակեստղ նոցա, թէպէտ և պատնէշք և ձորք և պատուարք շուրջ պարսպէին զսոյն։ Լրծան բանակքն, և քաջ պատերազմողք նոցա ոչ ևս էին 'ի միջի։ Լկտոր, Պարպեդոն, Լաս, և Աքիլլէս ինքնին գլխովին տապաստ անկան 'ի փոշւոջ. և 'ի տեսիլ թշուառութեանն տրովացիք ցանկային տալ 'ի բաց զՀեղինէ, իսկ Հելլենք դառնալ

'ի Հայրենիսն. այլ զերկաքանչիւրսն խափանէր ամենի, և աւաղելի դիւրութիւն մարդկան առ ընդելանալ ամենայնի, դժուարընդել 'ի հանդիստ եւեթ և 'ի բարեկենդանութիւն։

Տիեզերք ակնկառոյց կային 'ի դաշտս Տրովադայ, անդր՝ ուր փառք բարձրագոչ հրաւիրէին զիշխանս։ Որոց 'ի սկզբան մարտին հրաժարեալն էր, 'ի տենչ համբաւոյ քաջութեան դիմէին անդր յասպարէզն բացեալ առաջի ազգաց, գումարելով զզօրս իւրեանց ընդ նիզակակիցս. և էին իսկ 'ի նոցանէ, որք յառաջնում անդ Ճակատու անկանէին։

Օ՛ամն տասն դիմամարտիւ ժուժկալեալ, և զընտիրս մանկտոյն և զքաջաց պատերազմողացն իւրոց կորուսեալ, յետոյ ապա նկուն եղև քաղաքն ընդ յունական զօրութեամբն. և անկումն նորա այնպէս դղրդեցոյց զԱՂՍադա, զի թուական մեծ 'ի տարեգիրս ազանց եկաց*։ Պարիսպք նորա, և ապարանքն՝ որ 'ի նմա, և մեհեանք յաՃիւն դատեցան. Պրիամ առ ոտս բազնաց զրաւեալ 'ի կենաց, որդիք նորա շուրջ զնովաւ սրախողխողք. Աչոբէ կին նորա, և դուստր նորա Կասանդրէ, Անդրոմաքէ այրին Աչտորի, և բազում այլ տիկնայք կապեալք 'ի շղթայս, գերի վարեցան ընդ ուղիս արեան՝ որ հոսէր ընդ փողոցս, և ընդ մէջ ամբոխին՝ զոր աստի ասոյն և անտի երկաթն վրէժխնդիր ապա

* Ն. Ք. 1282 ամաւ։

ռէր։ Լայսպիսի եղև վախճան բազմաղէտ պատերազմին, 'ի յագուրդ սրտմտութեանն Հելլենաց, այլ յագուրդն այն անագորոյն եղև կատարած յաջողութեանց նոցա, և սկիզբն տառապանաց։

Լքկածք ամենագժնդակք 'ի դարձին նոցա պատահեցին։ Նախքեանս արքայ աթենացւոց վախճանեաց զկեանս իւր 'ի Մեղոս կղզւոջ[2]. Լաս արքայ լակեդեմոնացւոց ընդ նաւատորմին իւրում կորեաւ[3]. և Ոդիսեւս՝ ևս թշուառագոյն՝ զամս տասն թափառեր ընդ ալիս, բազում անգամ յարհաւիրս նմանավիշտ բաղդի ըմբռնեալ։ Իսկ այլք առաւել ևս եղկելիք՝ իբր օտարախորթք ոմանք հասին յընտանիս իւրեանց. քանզի բազմաժամանակեայ հեռաւորութեամբն մոռացեալք 'ի նոցանէ 'ի ըսպառ, և յեղակարծ դարձիւն ատելիք եղեն նոցա։ Փոխանակ ցնծութեան ընդ ողջամբ դարձ նոցա՝ խուժեցին զնոքօք ՀԻՔ դժգոհիք փառամոլութեան, շնութեան և զօշաքաղութեան. և դաւեալք յազգականացն և 'ի բարեկամաց, յոլովագոյն 'ի նոցանէ չոգան տարադէմ խնդրել իւրեանց այլս յաշխարհ անծանօթ, առաջնորդեալք Յոդոմենեայ, 'ի Փիլոկտետեայ, 'ի Դիոմեդեայ և 'ի Տեւկրեայ։

1 Պղատ. յՂ. օր. գիրք Դ. հա. 2. էջ 682։

2 Եւսեբ. քրոն. էջ 128։

3 Հոմեր. Ոդիս. գիրք Դ. տող 499։

Զարքունիս Աբգեայ ծածկեցին ոճիրք, և հերձ նա անձամբ զիւր աղիս. քանզի Աստամեմնոն եգիտ զաթոռ իւր յանարժանէ ուսմենէ յելուզակէ յափշտակեալ, և զանկողինս իւր պղծեալ'ի նմանէ։ Այս սպանաւ նա դաւաճանեալ'ի Պլիտեմնեստրեայ կնոջէ իւրմէ, որ և նա զդարձ փոխարինին վաղ ընկալաւ, Ովլբեստեայ յորդւոյ իւրմէ լեալ սրախողխող։

Յարհաւրաց աստի, որ յաճախեցին յայնժամ գրեթէ յամենայն կողմանս Աշխարհայ, որ և մինչև ցայսօր 'ի տեսարանս աթենացւոց յանդիմանին, պարտ էր թագաւորաց և ազգաց խրատել, և 'ի յաղթութենէ իսկ զանգիտել։ Զի յաղթութիւնն Յունաց և նոցին իսկ յաղթողացն ոչ ինչ նուազ քան տրուվացւոց եղև աղիտաբեր. քանզի տկարացեալք ձգամբքն և յաղթանակօք՝ ոչ ևս կարացին զդէմ ունել պառակտման իւրեանց, ձախողակի կարծիս 'ի մտի եդեալ՝ իբր թէ պատերազմունք հանգոյն խաղաղութեան կարևորք էին աշխարհի։ Զգգք սակաւք 'ի վերայ անցեալ անկան և չիջան տունք բազմագունիցն 'ի թագաւորաց, որոց զՊրիամուն չիջուցեալ էր. և յետ ութսուն ամաց յաւերածոյն Տրուվադայ՝ տիրեցին 'ի կողմն մի պեղոպոնեսական աշխարհին հերակղեանք, զաւակն Հերակղեայ։

[1] Թուկ. գիրք Ա. գլ. 12։

Ի՛ՂՄՈՒԿ մեծ յարոյց յԱղլաղա դարձ նոցա՝ պատճառանօք արդարութեան. քանզի 'ի տոհմն, որք 'ի նախնի ժամանակաց տիրեցին Աբգոս և Միկէնս, երևելագոյնք էին Պանաւոսին և Պեղոպայն։ Աբգ 'ի Պանաւոսէ սերեալ էին Պրետոս, Աքրիսիոս, Պերսէոս և Հերակղէս. իսկ 'ի Պեղոպայ Ատրէոս, Ագամէմնոն, Ովրեստէս, և որդիք նորա։

Հերակղէս 'ի կենդանութեանն իւրումծառայելով կամաց Եւրիսթեայ, որ ըստ հարկի իրաց ժամանակին տիրապետէրն, ոչ կարաց զիրաւունս իւր կացուցանել. այլ եթող զայն 'ի ժառանգութիւն որդւոց իւրոց։ Որոց ապա տարագրեալ 'ի Պեղոպոնեսեայ, բազում անգամ՝ փորձ փորձեցին դառնալ մտանել անդր՝։ այլ խափանէր ձիգն նոցա 'ի պեղոպեանց, որք յետ մահուն Եւրիսթեայ յափըշտակեալ էին զաթոռն։ Վասնզի Հերակղեանց յոճիրս համարէին նոցա՝ ցորչափ բռնութիւն կարէր զդէմ ունել նոցա. այլ իբրև ահ զօրութեան նորա դադարեաց, զարթեաւ սէր ժողովրդեան առ նախնի տեարս իւր Հերակղեանս, և վրէժխնդրութիւն շրջակայ ազգաց ընդդէմ պեղոպեանց։ Ցանն Հերակղեայ գրեալ խաւորք էին յայնժամ երեքին եղբարք, Ցեմենէս, Արեսփոն և Աբիստոդեմ. որոց միա-

՝ Ն. Ք. 1202 ամաւ. Դիոդ. գիրք Դ. էջ 261։
՝ Երոդ. գիրք Թ. գլ. 26։

քանեալ ընդ իւրեանս զգոնացիս[1], մտին ընդ նոսա 'ի Պեղուսոնես. և յոլովք 'ի քաղաքաց աշխարհին նուաստնեցան ընդ նոքաք[2]։

Օաւակն Լգամեմնեայ 'ի նեղ անկեալ Մլբգոս, և Նեստորին 'ի Մեսենիա, նոքա 'ի Թրակիա փախուցեալ անկան, և սոքայ Մտիկ։ Մլբգոս եղև բաժին Ցեմենեայ, և Մեսենիա Արեսփոնի. իսկ Մլբիստոդեմայ 'ի սկզբան պատերազմին զբաւեալ 'ի կենաց, որ-դիք նորա Լուրիսթենես և Պրոկղես թագաւորեցին 'ի Սպարտա[3]։

Յետ սակաւ ժամանակի դիմեցին յաղթա-կանքն 'ի վերայ Կոդրոսի արքային աթենացւոց, որ թշնամեաց նոցա ապաւէն լեալ էր։ Կոդրոսի իրազեկ լեալ 'ի դիցն ուստեք պատգամաց, զի այր զօրավարն անկցի յերկուց բանակացն՝ նմա լիցի յաղթութիւնն, դիմագրաւեաց կամակար 'ի մահ. և անձնանուէր քաջութեամբ նորա այնպէս խրախուսեալ զօրացն, զի 'ի բաց հալածեցին զՀերակղեանս[4]։ Մյսոանօր դադարեն դարձ դիւցազանցն. ուր զկայ առնուլ 'ի դէպ է առ 'ի քաջ խելամուտ լինել վի-պացս, և առ 'ի մանրապատում առնել ինչ-

[1] Սոր. գիրք Թ. էջ 393։
[2] Պաւս. գիրք Բ. գլ. 13. էջ 140։
[3] Խոսկ. յԱրքիդ. հա. 2. էջ 18։ Տակիտ. տարեգր. գիրք Դ. գլ. 43։ Պաւս. գիրք Բ. գլ. 18. էջ 151. Գ. գլ. 1. էջ 205։ Վելլ. Պատեր. գիրք Ա. գլ. 2։
[4] Մեսոր. յոլ. թագ. Աթեն. գիրք Գ. գլ. 11։

ինչ՝ զոր 'ի հարևանցի ընթացս պատմութեանս հարկ եղև վեր 'ի վերոյ նշանակել։

Ի ՎԱՂՆՋՈՒՑ ժամանակս միապետութիւնք ևեթ էին 'ի յունաստան[1], ուր արդ գրեթէ ամենայն ուրեք ընկերահաշտ ազատութիւն զօրացեալ ունի։ Լայնի թագաւորք միոյ միոյ քաղաքի իշխանք էին, կամ յանկեան ուրեք թագաւորեալ[2]. եղեն ոմանք 'ի նոցանէ, որոց զսահմանս դրացեացն հատեալ յաւելին յերկիր իւրեանց. և յաջորդաց նոցա և ևս ընդարձակել կամեցեալ զպետութիւն իւրեանց տուժիւք ժողովրդեան, կորուսին զայն 'ի ըսպառ։

Լինէ ոչ այլ ևս հատուածք զՀեա գաղթելոցն ընդ Կեկրոպայ գային 'ի յունաստան, աթենացիք՝ բարգաւառեալք քան զամենայն ազգսն վայրենիս և հզօրագոյնք 'ի նոսա՝ նուաձէին զնոսա մի ըստ միոջէ. և միահեծան պետութեան կալեալ զԱլլադա առ հասարակ, տիրեր այժմիկ որպէս զեգիպտացին և զպարսիկն։ Բայց ժողովուրդք բազումք վարատականք անդր յարևելից եկեալ, բաժանեցին զայն 'ի բազում պետութիւնս, և ամենայն ուրեք Հոյնք ընդ միապետութեամբ կացին. զի և որոց մարգիչքն եղեն նոցա 'ի քա-

[1] Պղատ. յղ. որ. գիրք Գ. հատ. 2. էջ 680։ Արիստոտ. յղ. հասար. գիրք Ա. գլ. 2. հատ. 2. էջ 297։ Սկիզ. յղ. որ. գիրք Գ. հատ. 3. էջ 161։

[2] Թուկ. գիրք Ա. գլ. 13։ Հոմեր. Ոդիս. գիրք Բ. տող 495 և զնի։

զաքականութիւն՝ բնաւ անծանօթ էր այլ կարգ տեսչութեան։ Վասնզի յոյժ իսկ դիւրագոյն է միոյ ուրուք հնազանդել իշխանութեան քան բազմաց. և դժուարահաս իսկ էր խակ անփորձ մտաց չև եւս զարգացելոց ազգացն՝ իշխել և հնազանդել համայն, իշխանք նոյնք և իշխանաւորք գոլով։

Թագաւորք միանգամայն և քրմապետք էին և զօրավարք և դատաւորք՝. իշխանութիւն նոցա՝ զոր որդի՝ 'ի հօրէ ժառանգէին՝[2] ընդարձակ էր յոյժ, այլ խորհրդականացն ու ղղէր խրատու, զորոց զվէճս հրատարակէին նոքա 'ի համախումբ ատենի ժողովրդեան[3]։ Եր զի և յետ երկար պատերազմի երկուք ոմանք հետամուտք թագաւորութեան կամ զօրավարք երկու ընտրեալք 'ի նոցանէ, զէն 'ի ձեռին յանդիման լինէին միմեանց, և կամ աջողութիւն սահմանէր զիրաւունս թագաւորութեան։

Թագաւորք առ 'ի պահել զշուք իշխանութեան իւրեանց՝ ոչ միայն հարկս 'ի ժողովրդոց առնուին[4], այլ էին նոցա և կալուածք հայրենի ժառանգութեան՝ զորս ընդարձա-

[1] Արիստոտ. յոչ. հասար. գիրք Գ. գլ. 14. հա. 2. էջ 357։

[2] Թուկ. գիրք Ա. գլ. 13։

[3] Արիստոտ. յոչ. բարոյ. գիրք Գ. գլ. 5. հա. 2. էջ 32։

Դիոն. աղիկ. հն. հռ. գիրք Բ. հա. 1. էջ 261։

[4] Հոմեր. Եղի. գիրք Թ. տող 156։ Պարապ. անդ։ Ոդիս. գիրք ԺԳ. տող 15։

կէին աշխարհակալութեամբ և կամ բարեկամացն առատութեամբ։ Թեոդոս Հալաձեալ Մթենայ, կեայր 'ի գոյիցն՝ զոր հայր նորա 'ի կղզւոջն 'ի Սկիւրոս եթողնմա 'ի ժառանգութիւն։ Հոտոզացիք նեղեալք 'ի հզօր թշնամւոյ, խոստացան Մեղեագրի՝ որդւոյ արքային իւրեանց Հնեայ՝ երկիր բազում, որպէս զի առաջնորդեսցէ նոցա 'ի պատերազմ։ Եւ զի՞ մի մի թուիցեմ զթագաւորս, որոց 'ի յաղթութենէ պատերազմաց և 'ի շնորհս կալ նուիրաց մեծերեցան գանձք. այլ զայն ասացից, զի զայնպիսի նուէրս 'ի պարծանս իւրեանց համարէին նոքա։ Զանազի պարգևք փոխարէնք երախտեաց և առհաւատչեայք սիրոյ սահմանեալ՝ փառք էին ընդունողացն, և որք ոչն լինէին այսոցիկ արժանաւորք՝ նախատէին։

Ոչ ինչ առաւելագոյն քան զեռանդն դիւցազնական յաճախէր պատիւ թագաւորի, և խրախոյս արիութեան. և ոչ քան զայն համամատագոյն ինչ գոյր բարուց ազգին, որ գրեթէ ամենայն ուրեք համաբարոյ էր։ Սակաւ ինչ տիպք կերպարանաց պարզք զնկարագիր բարուց այնր ժամանակի որերոյն կազմէին, բայց տիպք կենդանիք և պայծառք. զի չև եւս մնգոյրք արուեստին 'ի սկզբնատիպն

1 Պլուտ. 'ի Թես. հա. 1. 2 Հոմեր. Ղղլ. գիրք Թ. էջ 16։ տող 573։

բնութեան յաւելեալ էին։ Որով հարկ էր իւրաքանչիւրոց զանազանել 'ի միմեանց, իսկ ժողովրդոց հանդունատիպս իրերաց գալ։

Որք 'ի բնէ կորովիքն էին, կորովագոյնք դաստիսարակութեամբն լինէին. առանց ակնածութեան և կեղծեաց՝ աշխոյժք և ձեռներեցք. ծայրայեղքն 'ի սեր և յատելութիւն, ձգեալք միշտ 'ի զգայութեանց, և կազմք միշտ 'ի յանդգնութիւն։ Ունութիւն անբռնադատելի ևս յիշխանս, բացայայտագոյն 'ի նոսա երևէր քան 'ի ժողովրդեան։ Ախատանօք կամ զօրութեամբ զվրէժ թշնամանաց խնդրէին. և տկարագոյնք 'ի կիրս կորանաց քան յարկածս թշուառութեան, եթէ արդարեւ տկարութիւն արժան իցէ ասել զսաստիկ զգացումն, լային ընդ նախատինս՝ չկարացեալ խնդրել զվրէժ։ Հեզք և համբոյրք առ մեծարանս, խիստք և ահարկուք առ արհամարհանս. 'ի ծայրապատար բռնութենէ յառաւելագանց ստրջանս զառածեալք, և նովին անկեղծութեամբ՝ որով զմեղանսն յանձն առնուին՝ հատուցումն մեղանացն առնէին։ Այլ առանց իսկ յերկարելոյ, քանզի անդ առաքինութիւնք և յոռութիւնք անպատրուակ և ոչ կեղծս 'ի կեղծս երևէին, թագաւորք և դիւցազունք յայտնապէս զհետ լինէին շահու

1 Հոմեր. Եղն. գիրք Դ. Ոդիս. գիրք Ը. տող 402։ տող 360. ԻԳ. տակով։ Նոյն

և փառաց, գահերիցութեան և առաքանաց։

Հարիական և 'ի խրոխտ սիրտս նոցա չմարթեր բնականալ մեղկ կրից. կրկին զգացմունք հզօրք բաղխէին զնոսա միանգամայն, տուփումն և բարեկամութիւն. բայց միայն զի մին բոցոյ ինն օրինակաւ ծախիչ և շինանուտ էր, իսկ միւսն որպէս հուր սաստիկ անշէջ։ Բարեկամութեանն ներգործութիւնք 'ի նոսա՝ զարմանալիք թուին այժմ, որ յայնժամ պարտք համարէին։ Ովքեստես և Պիղադէս ոչ նորա հրաշ լինչ գործեալ, այլ ըստ օրինակի առաջնոցն դիւցազանց եռուն զանձինս 'ի մահ փոխանակ միմեանց։ Բակ սեր սաստկայոյզ և մոլենալ խանձ՝ դժնդակագոյնս յաձախ ներգործէր չարիս։ 'ի սիրտս նոցա դիւրազգացս քան զիւրագորովս առաւել ազդէր գեղեցկութիւն, քան որ զնա պայծառացուցանէն բարեմասնութիւնք։ 'Այս զշքեղ հանդէսս հարսանեաց թագաւորացն զարդարեր, ուր ընդ աքքայս և ընդ պատերազմողս 'ի մի վայր գային օրիորդք իշխանազունք, որոց տեսիլ գիմացն և գրգիռ նախանձու էին նոցա առիթք գժտութեանց և աղէտից։

Բ. Հարսանիս միոյ ուրուք 'ի թագաւորացն Լաբիսսայ՝ պատանիք թեսաղացիք, որ Կենտաւրեանքն կամ յուշկապարիկք անուանին, թշնամանեալ զհարսնաւէրս դշխոյին՝ կորեան ընդ հարուածովք Թեսեայ և այլոց դիւցա-

զանց բաղմաց, որք անաւագ բնութեանն է-
ղեն անդ վերէժինդիր զոր ինքեանք իսկ յա-
ՀԱխագոյնս նախատէին [1]։ Լ.յլ և Հարսանիքն
Մնատեայ և Պեղէոսի խոռվեցան 'ի փառա-
սիրութենէ մեծութեաց ոմանց, որք ընդ սո-
վորութիւն ժամանակին ծպտեալք 'ի կերպա-
բանս Հերայ և Լ.թենասայ և այլոց ոմանց
աստուածութեաց, զգեղեցկութեան վիՀեալ
խնդրէին զմրցանակ [2]։

Լ.ինէր և այլ ինն համախմբութիւն իշխա-
նաց և դիւցազանց 'ի յուզարկաւորութիւն
Թագաւորի. ուր իւրաքանչիւր որ 'ի նոցանէ
Հանդէս առնէր Ճոխութեան և Ճարտարու-
թեան իւրոյ 'ի խաղսն, որ 'ի պատիւ վախ-
Ճանելոյն կատարէին։ Ոչ ինչ դժպատեհ
թուէր նոցա զգերեզմանաւ խաղս կատարել,
մինչ դեռ 'ի սուգ կային. քանզի ակնածու-
թիւնս այս, որ 'ի բաց մերժէ զամենայն սփո-
փանս, զինչ այլ ինչ է՝ բայց առաւելագան-
ցութիւն ինն կամ կատարելութիւն զգայու-
թեան, որում դեռ անփորձք էին նոքա։ Լ.յլ
նոցա սովորութիւն էր հեղուլ անկեղծ ար-
տասուս, և դադարել յորժամ բնութիւնն
ազդէր [3], և դարձեալ վերստին ուշ 'ի կուրծս

1 Դիոդ. գիրք Դ. էջ 272։ Ովիդ. պլ. գիրք ԺԲ. տող 210։ Հոմեր. Ոդիս. գիրք ԻԱ տող 295

2 Մեղր. մեկն. արձան. Ո. վիդ. հա. 1. էջ 220։ Պանիկ գիս. հա. 3. էջ 182։

3 Հոմեր. Եղե. գիրք ԺԹ. տող 229. ԻԳ. տող 48։

անկեալ աղետիցն՝ արտասուել։ Բայց սմին օրինակի առնէր Մենեղաւոս, որպէս 'ի հոմերական վէպսն է տեսանել[1]. խոյս տամ, ասէ, երբէք երբէք յապարանս իմ, ողբալ զանկեալսն առ պարսպօք Տրոյայ զբարեկամս իմ։ Բայց սակայն ամբ տան 'ի վերայ անցեալ էին մահու նոցա։

Դիւցազանցս այսոցիկ զանհրաւութիւն և զերկիւղածութիւն լծորդեալ յանձինս, 'ի սպանանելն զոք ըստ դիպաց ինչ, կամ առ քինու, և կամ ըստ արդար վրէժխնդրութեան, սոսկայնն ընդ արիւնհեղութիւնն. մինչև մեկնել յաթոռոյ և 'ի հայրենեաց, և գնալ տարադէմ 'ի խնդիր քաւութեան։ Որոց յետ օրինաւոր զոհիցն՝ 'ի ջուր քաւութեան զարիւնահեղ ձեռան լուացեալ[2], յայնմհետէ խառնէին 'ի ժողովս մարդկան, պատրաստեալք 'ի նոր սպանութիւնս։ Յողովուրդն զարմանայր ընդ արարողութիւնն, այլ ոչ ինչ նուազ զարմացումն ածէր նմա դիւցազանցն այնոյիկ արտաքին տեսիլն սպառնական, զոր ոչն թողուին 'ի բաց։ Օ՛ի կէսք զվագերց և զաւիծուց նուաձելոց կրէին զկողոպուտս զանձամբ[3], իսկ այլք զսխտոս ստուարս և զազգի ազգի

[1] Հոմեր. Ոդիս. գիրք Դ. տող 100։
[2] Ովիդ. 'ի տոմարականն էջ 4։ Հն. գրամ. Սոփոկլ. յԱյաս. տող 664։ Պլուտ. 'ի Թես. հա։ 1։
[3] Ովիդ. 'ի տոմարականն գիրք Բ. տող 37։ Պարապ.

զէնս կապտեալս յաւազակաց՝ յորոց զերծուցեալն էին զ[illegible]ղադա[1]։

Ի տեսիլ կազմածոցն ամենայն ուրեք հիւրընկալեալք վայելէին յիրաւունս ասպնջականութեան. քանզի այս հասարակաց իրաւունք էին յայնժամ, և արդ 'ի տոհմս ևեթ ուրեք ամփոփեալ[2]։ Եւ հիւր օտար բանային ամենայն դրունք, և ամենայն հոգք և խնամք զեղուին զնովաւ. և զամենայն պէտս նորա հայթայթեալ ասպնջականացն՝ ապա զբաղդէ նորա և զազգատոհմէ հարցանէին, զանձնականագոյն սպաս մարդասիրութեան այսպէս նմա մատուցանելով[3]։ Օ գերազանց սահմանադրութիւնս զայս ոչ յօրէնսդրաց իւրեանց ընկալան Հելլէնք, այլ 'ի բնութենէ. որոյ ճառագայթք պայծառք և խորագոյնս ծաղեալ 'ի սիրտս մարդկան, դեռ ևս անշէջք 'ի նմա պահին։ Վասնզի նախ քան զամենայն յարգ և վստահութիւն առ նմանիս մեր կրի 'ի մեզ, և թուէր արդեօք մոլորութիւն անհեթեթ՝ կասկածել զայլոց, եթէ ոչ 'ի յաճախ փորձոյ դրժանաց յառաքինութիւն իմն փոխէին կասկածանք։

Սակայն 'ի ժամանակի, յորում՝ այսպիսի

[1] Պլուտ. 'ի Թես. հտ. 1. էջ 24։

[2] Հոմեր. Եղ. գիրք Զ. տող 15։ Նոյն Ոդիս. գիրք Գ. տող 34. Ե. տող 208. Բ. տող 544։

[3] Նոյն Եղ. գիրք Զ. տող 173։ Նոյն Ոդիս. գիրք Ա. տող 124. Գ. տող 70։

չքնաղ օրինակք մարդասիրութեան փայլէին, պատմին լեալ և ոճիրք անլուրք և դժնդակք։ Այեաք յայնցանէ ստուգապէս գործեցան, և էին իսկ արդասիք փառամոլութեան և քինախնդրութեան՝ որ անսանձահարելի մոլութիւնքն են, և ըստ պայմանի անձանց և ժամանակաց՝ մերթ զանխուլ մեքենայս, և մերթ զբռնութիւն անպատրուակ 'ի յագեցումն ըղձից իւրեանց 'ի կիր արկանեն։ Իսկ կեաք քերթողաց են կեղծիք, որք 'ի վէպս իւրեանց այլայլեն զանցս իրաց և զբնութեան արգասիս։ Վանդի բանաստեղծք, տիրողք սրտից պյլոց, և գերիք ցնորից մտաց իւրեանց, զդիւցազունս վաղնջուց ժամանակաց 'ի տեսիլ ածեալ՝ ըստ տպաց ինչ ապրելոց յեղծուածոյ ժամանակին ստեղծանեն նկարագիրս ամբողջս, զանազանեալս 'ի միմեանց կամ՝ ընդդիմակս՝ որպէս և պէտք վիպացն պահանջիցեն՝. և մերթ յաւելուն 'ի նոսա երանգս խոժոռատեսիլս, զթերութիւնս փոխեալ յոճիր, և զոճիրս յերեւնապատութիւն։ Այպաքէն սոսկամք ընդ իրսն Մեդեայ՝ որ յափշտակեցաւն 'ի Յասոնէ 'ի Կողքիս, քանզի հիւաք իմն արհաւրաց են 'ի վէպս կեանք նորա. այլ թերևս ամենայն կախարդութիւն նորա 'ի գեղեցկութեանն ևեթ էր, և ամենայն ոճիրք նորա 'ի տրա-

1 Պղատոն 'ի Մին. հա. 2. էջ 320։

փանսն [1]։ Թերևս և բազումք 'ի Թագաւորաց, որոց Թշնամանին արդ յիշատակք, ոչ ինչ առաւել քան զԱՐեդիա մեղապարտք էին։ Իսկ ոչ եԹէ խժդժութիւն 'ի վաղեմի ժամանակսն յայնոսիկ տիրէր, այլ բռնութիւն ինն բարուց՝ որ անձամբ անձին մատն լինէր համարձակութեամբն։ ԱՐԹԷր յայնժամ գեԹ զդէմ ունել քինու՝ որ սպառնայր նախ ցասմամբ, և զամենայն յարձակմանց կրից՝ որ գուշակն լինէին դիտաւորութեան իւրեանց։ Իսկ այժմ զիաՀրդ ոք խոսել կարիցէ 'ի մտածեալ անգԹութենէ, և յանվրդով ոխութենէ՝ որ երկայնամտեալ սպասէն պարապոյ 'ի քինախնդրութիւն։ Խժդժութիւն ոչ անդ է, ուր առաւել մոլին կիրք. այլ անդ տիրապէս, ուր յաձախեն մեղմեխանք։

Ամ աւագութիւն և ոչ խտիր առն և կնոջ ազատ զոք կացուցանէր յառաջին հոգոց. քանզի այսոքիկ հասարակաց լեալ ամենայն մարդկան, ոչ ևս են արհամարհք։ Իր զի և զախորժականս 'ի նոսա խառնէին, զերաժըշտութիւն և զկաքաւ, և հանգոյն սոցին վարժ. և յաձախագոյն ևս զշահատակութեան որսոց զբօսանս, և զայլ ևս մարմնոյ կրթութիւնս, որ պահեն զկորով կամ հրահանգեն զայն։

[1] Դիոդ. գիրք Դ. էջ 249։ Պարմեն. առ պարապ. Եւրիպ. Ի Մեդ. տող 9 և 273։ Ե. զխան. զան. պատ. գիրք Ե. դլ. 21։ Պանիէ գից. գիրք Գ. դլ. 5. հտ. 3. էջ 259։

Պարզք էին նոցա օրէնք և 'ի համառօտս բովանդակեալ. զի պարտ էր նոցա խափանել զթշնամանս քան զանիրաւութիւն, և սանձահարել զթափ կրից՝ քան զզաղմահետ շաւիղս ախտից դարանայոյզ առնել։

Ի արդյականին գերազանց իմաստք, յայտնեալք յառաջագոյն զարմանալի իմն բնաւորական ազդեցութեամբ՝ որ դրդէ զմարդ 'ի բարին, վաղ հաստատեցան ակնարև կենցաղոգութեամբ պահպանութեան նոցա։ Ի յորդոր և 'ի վարձս առաքինութեան սահմանեցան յայնժամ նպաստք դից, մեծարանք ժողովրդեան և զարմացումն յետնոց, քան բերկրութիւն ոգւոյ։ Զև և խելամտեր բանն 'ի հեռագոտել զիսկն պատշաճից, և 'ի ձգել զնոսա 'ի խոյզ և 'ի խնդիր, որք է զի հաստատութեանն նոցին, և է զի եղծմանն լինին պատճառք։ Զոր տեր ամենայն որ զի յամենայն դէպս կենաց լաւագոյն է հատուցանել իւրաքանչիւր զիւրն. և սովին խելամտութեամբ տային լաւք զանձինս յառաքինութիւն, այլ ոչ 'ի միտ առեալ թէ քանի՞ ինչ պարտ էր նոցա 'ի վերայ այնր փոխանակել։

Լ'ին գիտութեան նոցա աղբերք կրկին. աւանդութիւն՝ որոյ քերթողք էին թարգման, և փորձ ծերունեացն։ Լ'ւանդութիւն պահէր

1 Հոմեր. Եղեգ. գիրք Բ. տող 119։ Նոյն Ոդիս. գիրք Բ. տող 64։

զյիշատակս իրաց զդից և զմարդկան. նմին ի-
բի յարգէին քերթողք, զի նոցա գործ էր վի-
պել զայնոսիկ 'ի խնջոյս և 'ի հանդէսս, գեղ-
գեղել նուագօք, և պատուել սեթևեթիւք,
շողոմելով զփառասիրութիւն ազգաց և թա-
գաւորաց[1]։ Իսկ փորձ ծերութեանց էր նոցա փո-
խանակ յամբ փորձոյ դարուց և ժամանակաց[2].
և խմաստս 'ի գիպաց 'ի միտ առեալ, ուսուցա-
նէր զբարիս ախտից, և զհնարս նուաճելոյ ըզ-
նոսա։ Զմին իբի մեծարէին ծերք, և գահե-
բեց 'ի ժողովս բազմէին, և հաղիւ համարձա-
կելի էր մանկտւոյն բարբառել առաջի ալեաց[3]։

Բուռն սաստկութիւն կրից մեծարգոյ յոյժ
առնէր զնոհականութիւն, և կարօտութիւն
գիտութեան զնարտարխօսութիւն։ Յառաջ
քան զամենայն զօրութիւնս մտաց զարգացաւ
երևակայութիւն, զի սա վաղագոյն 'ի վեր ե-
բևի 'ի տղայութեան մարդկան և ժողովրդոց.
և մանաւանդ առ Հելլէնս՝ նահանգն իսկ, ընդ
որով բնակէին նոքա, և կցորդութիւն ընդ ա-
բևելեայս, օգնեցին 'ի զարգացումն նորին։

Յեգիպտոս՝ ուր բոցակիզագոյն է արեգակն,
ուր հողմք և յորդութիւն Եղեսոսի, և այլ յեղ
մունք յեղանակաց ընթագրեալ կան հաստա-
տուն կարգաց, ուր անյեղլի և միօրինակ կարգ

1 Հոմեր. Ոդիս. գիրք Ա. տող 152 և 338։
2 Նոյն Եղ. գիրք Ա. տող 259. Գ. տող 108. Թ. տող 60։
3 Նոյն Եղ. գիրք Դ. տող 587։ Նոյն Ոդիս. գիրք Գ. տող 24։

բնութեան աղօտ իմն զմշտնջենաւորութեանն իւրոյ 'ի գէմն բերէ զառհաւատչեայ, երևակայութիւն անդ ստուարացուցանէր զամենայն. և անողորմ ձգտեալ ընդ ամենայն, 'ի հիւացումն և 'ի մեծարանս ածէր զժողովուրդն։

Լակ Հ Ալադա, ուր երկինք մերթ աղմկեալ 'ի մրրկաց, և գրեթէ միշտ վՀիտ լուսովպայծառանայ, ուր այլակերպութիւն տեսարանաց և յեղանակաց ընծայէ ցանգ ներՀականս 'ի զարմացումն աչաց, ուր յամենայն ոտնփոխս և անդադար 'ի ներգործութեան թուի բնութիւն՝ յար 'ի փոփոխութեան կալով, անդ երևակայութիւն Ճոխագոյն և ազդոյ քան Հ Ալիպտոս՝ պՀՆեր զամենայն, և սփռեր շող զուարթ միանգամայն և բեղնաւոր յազդմունս մտաց։

Ն Լմին իբր Հելլէնք յանտառաբնակ կենացն 'ի բաց կացեալ, ոչ ևս նկատեցին զէքս ընդ ահարկու և տխուր կերպարանաց. Նմին իբր և եգիպտացիք գաղթեալք Հ Ալադա, ամոքեցին տակաւ զխստութիւն և զդժնկութիւն կերպարանութեանց մտացն։ Հ Ս երկաքանչիւրոցն 'ի մի կացեալ ազգ, կազմեցին իւրեանց բարբառ բազմաձև, և գունագեղեցին զիմաստս իւրեանց երանգովք՝ որովք պարզութիւն նոցա եղծանէր, այլ առաւել ողբաբիւք լինէին։ Հ Ս քանզի շարժունք յեիցս՝ կենդանիք նոցա թուեցան, և ամենայն երևութեանց՝ ուրոց զանխուլ էին 'ի նոցանէ զոգք՝ այլ և այլ

տային պատՃառս, եղև աշխարհս առաջի նո-
ցա որպէս թատր հոյակապ՝ որոյ կազմածք մե-
քենայիցն 'ի բազումս յանհամար զօրութեանց
աներևութից շարժիցին։

Աստի սկիզբն կալաւ իմաստասիրութիւնն
այն կամ մանաւանդ կրօնք՝ որ տևեն ցայսօր
'ի ժողովրդեան, Ճշմարտութիւն առասպելա-
խառն, և աւանդք պաշտելիք ընդ ծաղրական
կեղծիս յօդեալ. աղանդ հրապուրող զգայու-
թեանց, և սարտուցիչ մտաց. որ յառաքինու-
թիւնս պանծացեալ, զառածեալ բերի 'ի դրը-
գանս։ Զսորա հարկ է աղօտ իմն տալ գնկա-
բագիր, զի զտիպս կերպարանաց ժամանակին՝
յորում ծնաւն՝ բերել յինքեան։

Որ զօրութիւն զտիեզերս վերաբերեցեալ
դընդոց։ Ան անսահման, անստուերը լոյսն, կե-
նաց աղբիւրն[1]։ Զգեղեցկագոյնն և անկ է
տալ նմա զանուն. նոյն ինքն սէրն, այն որ յե-
բեսաց նորա ամենայն ուրեք դաշնակեալ յաղ-
մարեցան կարգք[2], և յորմէ դիցն և մարդկան
ազգք առին սկիզբն[3]։ Ամանաւորացս այսոցիկ
էից վիՃեալ ընդ միմեանս զաշխարհակալու-
թենէ, և յահագին Ճակատամարտսն նկուն
եղեալ մարդկան, նուաՃեցսն ընդ իշխանու-
թեամբ յաղթականացն 'ի մշտնջենաւոր ծա-
ռայութիւն։

[1] Որփ. առ Պրուք. պատ. իմաս. հտ. 1. էջ 390։
[2] Եսիոդ. Ծնն. գիս տող 120։
[3] Արիստոփան. 'ի Հաւան տող 700։

Լնմահիցն և ազգ առնեաց որպէս զմարդ-
կան. և Կոռնոս 'ի խառնմանէ երկնի ընդ երկ-
րի սերեալ, ծնաւ երիս որդիս՝ որ բաժանեցին
յիւրեանս զտիեզերակալութիւն. Դիոսի յերը-
կինս թագաւորեալ, Պիսիդոնի ընդ ծով, և
Պլուտոնի 'ի սանդարամետս, երեցուցին և
համիշխանք 'ի վերայ երկրի գոլով', և զերե-
քումբքն և շուրջ կալով բազմամբոխ դից՝
կազմք յարբանեկեալ։

Հզօրագոյն 'ի դիս Օ՚էւս, նա որոտընդոստ
արձակէ շանթիս. աքքունիք նորա գերապայ-
ծառ քան զհամայնից՝ օթևանք են մշանջե-
նաւոր լուսոյն, և կայք երանութեան. զի
գրեթէ ամենայն բարիք 'ի վերուստ իջանեն
յերկիր։ Ընդ աստուածս ծովուց և սանդարա-
մետաց 'ի տեղիս ուրեք և 'ի դէպս ինչ առնին
խնդրուածք. իսկ առ երկնայինսն ամենայն ու-
րեք, և յամենայն ժամանակի. զի հզօրագոյնք
են քան զայլսն և գերաբնակք, ուր այլք ըղ-
մեօք բնակեն կամ ստորև քան զմեզ։

Կեանք, առողջութիւն, մեծութիւնք գան-
ձուց, իմաստութիւն և կորով 'ի դիցն բաշխին
մարդկան [2]։ Ի նոսա հանեմք զպատճառս
թշուառութեանց մերոց [3], և 'ի նոցանէ կըշ-

1 Հոմեր. Եղ. գիրք ԺԵ. 730։
տող 193։
2 Նոյն անդ գիրք Բ. տող 164. Զ. տող 349։
197. Է. տող 288. ԺԳ. տող
3 Նոյն անդ գիրք Գ. տող

տամբեալ յանդիմանիմք՝ մերովք յանցանօքս թշուառացեալք՝։ Պղտուտն քանզի անողոքելի է, ատելի է մահկանացուաց[1]. իսկ այլք 'ի դից ողբին խնդրուածովք, և մանաւանդ զոհիւք և պատարագօք՝ որոց ձեռնձեր հոտ անոյշ բուրէ առ նոսա[2]։

Օ գայութիւնք են նոցա որպէս մարդկան, նմին իրի և նոցին կրից են հաղորդք. գեղեցկութիւն զնոյն 'ի նոսա ազդէ որ ինչ 'ի մարդիկ, և յաճախագոյնս իսկ խնդրեցին նոքայերկրի զցանկութիւնս, մոլեգին ևս հեշտ ախտին զայրացեալ 'ի նոսա ընդ քօղով մեծութեան և գաղտնածածուկ խորհրդոց։ Որք ոչ եթէ սովին անհեթեթ կցորդութեամբ բնութեանց կամէին Յոյնք նուաստացուցանել զիս, այլ յորոց կրէին՝ 'ի նոյն և զայլ ամենայն կենդանի էակս կարծելով՝ զախտաւոր կիրս իւրեանց ընծայէին դից, և անբանից կենդանեաց զիմաստս իւրեանց. ոչ նոցա նուազութիւն, և ոչ սոցա առաւելութիւն զիրսն համարեալ։

Օ երանաւէտ կենաց դիցն և զաշխարհահոգ խնամոց նոցա կամելով առնուլ զկերպարանս, հայեցան շուրջ 'ի զգալիս, և համարեցան երանելի 'ի վերայ երկրի զազգ՝ որ 'ի խնջոյս զաւուրս իւր անցուցանիցէ, և զթագաւոր՝ որ զսահման-

[1] Հոմեր. Ոդիս. գիրք Ա. 158։ տող 33։
[2] Նոյն Եղ. գիրք Թ. տող 48. Իդ. տող 425։
[3] Նոյն անդ գիրք Դ. տող

նակիցս իւր զարքայս և զտիւնայս 'ի Հաշ խրամ բիցէ, և շուրջ զսեղանսն օրհորդք նաժիշտք պար առեալ՝ բուրելով զանուշահոտութիւն, լիա բուղխ զբաժակս մատուռակիցեն, և Հարտաբ նուագածուք զքաղցրաձայն երգս իւրեանց խառնիցեն 'ի քնարս։ Հանդոյն ինն և 'ի դիցախումբ կոչունսյաՀախաւորս երկնաբնակացն զգեղ և զմանկութիւն ընդ առակաւ Աբեայ համարեցան աստուածամպելեացն մատռուակ, և Աղողնի հանդերձ իւրովք երաժշտովքն Մուսայիւք զկամարս Ողիմպեայ հնչեցուցանել՝ զխրախունս բազմականացն յաՀախելով։

Մերթ ևս Աբրամաղդայ ժողով գումարեալ դից շուրջ զաթոռսն, խորհուրդ 'ի մէջ առնու 'ի խնամս տիեզերաց. զօրէն Թագաւորի, որ ընդ աւագանին տերութեան իւրոյ խորհէցի զօգուտ աշխարհին։ Իւրաքանչիւր ոք 'ի դից զիւրն 'ի նեբքս ածէ խորհուրդս. և 'ի սատանայեալ վիՀին՝ տայ զվՀիոն Աբրամաղդ, և դադարէն ամենեքին 'ի լռութիւն։

Դիք իւրաքանչիւր 'ի նմանէ առեալ իշխանութիւն՝ գործեն յերդմունս ընդ տիեզերս, և 'ի նոցանէ համայնք ներգործին երևոյթք զարմանալիք։ Յերիտասարդուհեացն ոմն 'ի դից այգուն այգուն բանայ զդրունս արևելից, ծաւալէ շաղ զովարար ընդ օդս, ծաղկունս ընդ

1 Հոմեր. Ոդիս. գիրք Ա. տող. յդ. հաս. գիրք Ը. գլ. տող 152. Թ. տող 5։ Արիս. 3. հա. 2. էջ 451։

դաշտս, և յակինթ ընդ շաւիղս արեգական։ Օ՛ղաթնու երկիր ընդ առնուլ զազգ աւետեացն, և պատրաստի ընդունել զաստուածն՝ որ օր ըստ օրէ նորոգէ զնորայն կենդանութիւն։ Իսկ աստուածն կենդանարար ծագէ, և երևի 'ի շուք՝ վայելչական թագաւորին երկնից. Ճախրեն կառք նորա լծեալք 'ի ժամուց, և խաղայ ընդ անհուն ասպարէզս երկնից՝ համասփիւռ լուսոփն և ջահիւք Հառագայթեալ։ Ի հասանել նորա յարքունիս տիկնոջն ծովուց, գիշերն՝ անանջրպետ նորին հետևորդ՝ պարզէ զքօղ իւր տիսրերանգ, և ցանէ ընդ խորանարդ երկնից բոցկունս անթիւս։ Յառնեն ապա միւս այլ կառք, աղօտաջահ և զուարթալոյս պայծառութեամբն անուրջս 'ի սիրտս զգայուն արկանել. և վարիչ նորին մի յաստուածուհեաց բազմեալ, կառավարէ 'ի լուութեան՝ զբղեալն հարկն պահանջելով զ[Ինդիմիոնի հովուին։ Զ՛ղէն երփներանգ, կամարաձև ոլորտացեալ 'ի ծագաց երկրի ընդ երկինս, հետք են Լուսոյ լուսաշաւիղք պատգամաւորին Հերայ։ Հողմք մեղմիկք և ահարկու մրրիկք՝ այսք են օդայինք, որք մերթ խաղան ընդ օդս, և մերթ կռուել ընդ իրեարս՝ յարուցանեն զալիս 'ի ծով։ Ի ստորոտ բլրոյն քարայրն հովասուն և խաղաղաւէտ՝ օթևան է բարերար Յաւերժահարսին, որ յանհատահոս ստիրոյն անսպառելի կայլակեալ վտակ՝ արգասաւորէ զառընթեր կայ

դաշտն։ Ինտի ընդունի նա զուխտս ջինաղ օ-
բիսոզին, որ զգեղ իւր 'ի փախստական ալիսն
նկատէ։ Լեթէ 'ի նսեմաստուերը մայրիս անդը
մտանիցես, ոչ լուութիւն անդ, և ոչ միայնու-
թիւն զարհուրեցուցանէ զսիրտ քո. այլ շահա-
պետք անտառաց և դաշտաց բնակեն անդ, և
արհաւիրքն դիցական զօրութեան նոցա ազգին
'ի քեզ։

Յով և երթայցեմք, յերեսաց դիցն խուսել
ոչ կարեմք. 'ի ներքս իսկ 'ի մեզ են, և արտա-
քոյ մերամենայն ուրեք։ Ամաժանեալ յիւրեանս
զիշխանութիւն հոգւոց, և իշխեն ըզձից մե-
րոց. կէսք պատերազմի, և կէսք խաղաղասէր
արուեստից են խնամակալք. և այլք դարձեալ
զսէր իմաստութեան կամ զտուփանս ազգին 'ի
մարդիկ։ Մենեցուն նոցա սիրելի է արդարու-
թիւն, և օգնեն առաքինութեան. երբեակ
բիւրք աստուածոց սփռեալք զմեզ, հսկեն
հանապազ 'ի վերայ խորհրդոց և գործոց մերոց[1]։
Ամարեգործացն յաձախեն երկինք զաւուրս և
զբարեկենդանութիւն, իսկ չարագործացն 'ի
վերայ ածեն պատուհաս[2]։ Ամ բողոքել չարեաց
Լեմեսիս և Ինգղայք ժանտք կատաղիք դժ-
խոց մանչելով 'ի դուրս սողեալ մտանեն 'ի սիրտ
չարագործին, և նեղեն զնա զցայգ և զցերեկ
'ի բազմաթախանձ Ճիչս դժնդակս. այս են

1 Եպիոգ. Գործք տող 250։
2 Հոմեր. Ոդիս. գիրք ԺԳ. տող 214։

թախիծք դատախազութեան խղճի մտացն՝։ Լեթէ չարագործն անփոյթ արասցէ նախ քան զօրհաս մահուն ցածուցանել զնոսա կրօնական պաշտամամբք, յափշտակեալ կատաղեացն ըզհոգի նորա իբրև զորս՝ ձգեն 'ի քարշ 'ի տարտարոսական վիհս անդնդոց. քանզի նախնի Հելլէնք գրեթէ առ հասարակ խոստովանէին զհոգի անմահ։

Լ՝ այս նոցա կարծիք էին, յեղիպտացւոցն 'ի նոսա ածանցեալ, զանհետազօտելի հոգեղէն բնութենէ։ Հոգի մտաւոր, այս ինքն է միտք կամ՝ իմացութիւն, բնակէ 'ի զգայական հոգւոջ՝ որ է նիւթ նուրբ և լուսաւոր, Ճշգրիտ պատկեր նախատպին իւրոյ մարմնոյ՝ զորոյ յաբակայեալ մշանջենաւորէ զնմանութիւն և ըզչափ։ Լ՝ որկեակ այս հոգիք սերտիւ ընդ իրեարս շաղկապեալ կան 'ի կենցաղումն, և մահ զնոսա բաժանէ [2]. հոգին մտաւոր վերթաթևէ յեթերս, իսկ միւսն առաջնորդեալ 'ի Հերմէայ՝ Ճանարհ 'ի խոնարհ յեղերս ծագաց երկրի, ուր դժոխքն էն, և դահոյք Պղուտոնի, և Ա՝ինովայ ատեանն։ Լ՝ լքեալ թողեալ յամենայն աշխարհէ, ոչ ինչ ընդ իւր ունելով՝ բայց միայն որ ինչ 'ի կենդանութեանն իցէ գործեալ, յանդիման լինի ահեղ ատենին. և ընկալեալ զդատ-

[1] Կիկ. յՀ. որ. գիրք Ա. գլ. 14. հա. 3. էջ 127։

[2] Հոմեր. Ոդիս. գիրք ԺԱ. տող 217։ Տասիթ 'ի ծան. Ժ. և ԺԱ գլոց Ոդիս։

տակնիքն, կամ յեղիսեան դաշտան յուղարկի և կամ 'ի տարտարոսն։

Հելլէնք, քանզի զերանութիւն դից 'ի գըրգանս զգայութեանց համարէին, հանգոյն ինն և զեղիսեան դաշտան ստեղծին՝ վայրս փափկութեան, ուր անխռով խաղաղութիւնն էր, այլ յար անփոփոխ։ Թերի բերկրութիւնք, որ ոչ բաւէին յագեցուցանել զհոգիս արդարոց, և ազատել զնոսա 'ի ցանկութենէ վերկենցաղելոյ 'ի վայելս աղցաւոր կրիցն և գըրգանաց։

Տարտարոսն կայեան է ողբոց և յուսահատութեան. անդ չարագործք 'ի զարհուրելի տանջանս կան. անդեղք գիշախանձք յօշատեն զաղիս նոցա, և յանիւս հրացեալս թաւալին զառանցիւք։ Ընդ Տանտաղոս մեռանի հանապազ սոսալլուկ և ծարաւահոյծ, պարանոցաթաղ 'ի վճիտ ալիս՝ ընդ կողերքք պտղալից ծառոց. և դստերքք Դանաւոսի անդ դատապարտեալ կան 'ի ընուլ զկարաս ծակ, և Սիսիփոս 'ի կոթողել 'ի ծագ լերին զժայռ մեծ, որ այն ինչ ձգամբ 'ի վեր հոլովեալ՝ անդրէն 'ի ստոր գլորեալ վայրաբերի։ Կարիքանհանգուրժելիք, վերջացեալք միշտ 'ի յագեցմանէ՝ պիտոյիցն առձեռն պատրաստ կալով, և վաստակք մշանջենաւորք և զրաջանք. ով դառն պատուհասք, զիւտք մտաց ծայրացելոց յանագորոյն հնարս պատուհասի յանցանաց, ուր առաքի-

նութեան ոչ այլ ինչ գոյին վարձք՝ բայց երա-
նութիւն թերակատար և աղմկեալ յրղձից։

Լրբ ոչ եթէ օգտակարագոյն թուէր նոցա
ահիւ պատժոց քան յուսով բարութեանց ուղ-
ղել զմարդիկ, այլ զի զթշուառութեանց դիւ-
բին էր նոցա ստեղծանել պատկերս յաձախա-
ւորս քան զերանութեան։

ԼՆկերպարան աղանդս այս կրօնից սակաւս
ինչ ուսուցաներ կարևորս 'ի խաղաղութիւն
կենցաղոյս. զգոյութիւն աստուածոց, զանմա-
հութիւն հոգւոյ, զվարձս առաքինութեան
և զպատիժս չարեաց։ Լահմաներ տօնս և խոր-
հրդածութիւնս, որ Հնմարտութեանցս այսո-
ցիկ աւանդապահք լինէին. մատուցաներ իշ-
խանութեան հնարս զօրաւորս՝ յօգուտ 'ի կիր
արկանելոյ զտգիտութիւն և զմիամտութիւն
ռամկին, զհրամանս պատասխանւոյ, զհաւա-
հմայս և զրղձութիւնս։ Լայլընտիր առներ ա-
մենայն ումեք զնախնեացն աւանդութիւնս, և
ներեր այլայլել զաղգ և զպատմութիւն դիցն,
որպէս զի իւրաքանչիւր ումեք ընդ ցնորից մի-
տացն յօդել զնոցանէ վէպս, կամառասպելեօք
պաՀուՀեալ զվէպս նոցա՝ նորահրաշս յարդա-
բել միշտ զայնոսիկ. ծաղրելիք իրաւադատ մի-
տաց, և զմայլելիք տղայամտացն և աղգացնո-
բածնելոց։ Լուղևոր առ ասպնջականս, տա-
նուտեր առ ընտանիս, և երգեցիկք զբօսացու-
ցիչք թագաւորաց, դիտվքն խառնելովք 'ի

ներքս՝ զեղջերին կամ պարզերին զվերպան. և տա-
կաւ վարդապետութիւն կրօնից փոխեցաւ 'ի
կերդիս և 'ի քերթածս։

Դարձեալ և ախտարակացն մոլար կարծիք
յաւելուին 'ի զրոյցս նոցա այլասացութիւն
բաղում՝։ Քանզի զշարժումն ընդ կենաց, և
զկեանս ընդ իմացականութեան այլ ընդ այ-
լոյ առեալ, և ըստ աղօտ ինչ նմանութեան
հաւասարեալ զիրս ընդ միմեանս, նիւթակա-
նաց երից շունչ ի՛ն և հոգի 'ի զրոյցս իւրեանց
տային, և յատկութիւն՝ որ անընտանի էն նո-
ցա. սրոյ ծարաւել արեան թշնամեաց, և նե-
տից գիմելանժոյժ յարիւնհեղութիւն, և թեւս
ամենայնի՝ որ ընդ օդս գնայցեն, շանթից, հոգ-
մոց, սլաքաց, և հնչման ձայնի. արուսեկին
վարդամնատուցս, արեգական վարսս ոսկիս, և
թեատեայ ոտս արծաթիս։ Լու 'ի փոխաբերա-
կան ձևոց աստի՝ որ զարմանալիք թուէին,
մանաւանդ 'ի սկզբանն, եղև բարբառ նոցա
քերթողական՝ որպէս ամենայն լեզուք 'ի տը-
ղայութեան։

Այսպէսն էր զարգացումն Հելլենաց, յոր-
ժամ Պողրոս փոխանակեաց զկեանս իւր 'ի վե-
բայ փրկութեան հայրենեաց։ Աթենացիք
պակուցեալք ընդ ամ առաքինութիւնն, բարձ-
ին այնուհետև զանուն թագաւորի. զի յայն-
պիսի բարձրագոյն փառս համարեցան ածեալ

1 Մեծոս.յղ. Թագ. Աթեն. գիրք Գ. գլ. 11։

զայն Կոդրոսի, ուր չէր մարթ այլ ումեք հաս-
սանել. նմին իբրի զԻոս կոչեցին իւրեանց
թագաւոր[1], և զՄեդոն որդի Կոդրոսի մերձ
բազմեցուցեալ աթոռոյ թագաւորութեանն՝
քարոզեցին զնա Աքքոն կամ իշխան[2], իշխել
նմա մինչև ցկեանս, բայց տալ զհամար իշխա-
նութեան իւրոյ առաջի ժողովրդեան[3]։

Այլբարբ նորա հակառակ կացին ընտրու-
թեանն[4]. այլ իբրև հրաման պատասխանւոյ 'ի
դիցն հաստատեաց զիշխանութիւն նորա, ոչ
կամելով նոցա հերձուածս 'ի հայրենիսն ար-
կանել, տարադէմ գնացին 'ի խնդիր լաւագոյն
բաղդի։

Ատտիկէ, և որ շուրջ զնովաւ գաւառք, ըն-
ցեալ էին յայնժամ բնակչաց և մարդաւէտք.
քանզի աշխարհակալութիւնք հերակղեանց
անդր զյոնիացիսն առ հասարակ գաղթեցու-
ցին, որք յերկոտասան քաղաքս 'ի Պեղոպոնես
բնակէին[1]։ Բայց ծանրացեալք աշխարհին՝ որ
ասպնջականեղև նոցա, և մերձ բնակեալ յոյժ
վայրացն՝ ուստի խախտեցան, ցանկային փոխել
'ի տեղի ուրեք՝ որ թշուառութեան նոցա մո-
ռացումն ածիցէ։ Որդիք Կոդրոսի ցուցին նո-

1 Պարապ. Արիստոտիան.
Յանցան տող 2։
* Ն. Փ. 1092 ամաւ։
2 Պաւս. գիրք Դ. գլ. 5.
էջ 292։
3 Նոյն գիրք Է. գլ. 2.
էջ 523։ Եղեան. զան. պատ.
գիրք Ը. գլ. 5։ Վեղ. Պա-
տեր. գիրք Ա. գլ. 2։
4 Երոդ. գիրք Ա. գլ. 145.
Սոր. գիրք Ը. էջ 383։

ցա յայնկոյս ծովուն հանդէպ Լիբոսայ զեր-
կիրն պարարտ՝ որ սահմանէին զԼիբիա, ուր ե-
ւողացիք յառաջագոյնքան զնոսա փախուցեալք
'ի Պեղոպոնեսեայ յերեսաց Հերակղեանցն՝ ըզ-
նակէին 'ի կողմն մի երկրին [1]։ Յեզերս սահմա-
նաց Լիւղիոյ էր գաւառ արգաւանդաւոր ընդ-
քաղցրախառն նահանգաւ, ընակեալ 'ի խու-
ժադուժ ազգաց՝ որոց զօրութիւն արհամար-
հեալ լինէր տակաւ առաջի Յունաց։ զայն գա-
ւառ խորհուրդ կալան նուաճել որդիք Կոդ-
բոսի, գումարեալ ընդ իւրեանս ամբոխ բա-
զում յամենայն աշխարհէն և յամենայն չափոյ
հասակի [2]։ Եկուն եղեն առաջի նոցա խուժա-
դուժքն, և զաղթականք ժառանգեցին անդ
վաղվաղակի քաղաքս՝ որչափ 'ի Պեղոպոնես
ժառանգէին։ Որոց միաբանեալ առ հասարակ՝
զյոնիականն կազմեցին նիզակակցութիւն. և
էին 'ի քաղաքսն յայնոսիկ նշանաւորք Մելե-
տոս և Լիփեսոս [3]։

Զ. Զաւակն Մեդոնի որդի 'ի հօրէ ժառան-
գեր զիշխանութիւնն. բայց աթենացւոց խեթ
'ի մտի լեալ, սահմանեցին զայն տասնամեայ [*]։
Ա. յիշ զուշութեանցն և եւս յաձախեալ զկաս-
կածանս նոցա, բաժանեցին տապա զիշխանու-

[1] Երոդ. գիրք Ա. գլ. 149։ Սոր. գիրք ԺԳ. էջ 582։
[2] Պաւս. գիրք Է. գլ. 2. էջ 524։
[3] Երոդոտ. անդ գլ. 142։ Սոր. գիրք ԺԳ. էջ 633։ Ե. զիան. զան. պատ. գիրք Ը. գլ. 5։
[*] Ն. Ք. 752 տարի։

թիւնն յինն իշխանս տարեւորս *, որ և ցարդ Բրբոնքն կոչին ':

Բ. Յսոքիկ են անցք պատմութեանն աթենացւոց 'ի մահուանէն Կոդրոսի մինչև ցառաջին ողիմպիադն, որ ունին չափ ժամանակի երեքարիւր վեշտասան ամ: Յորում ժամանակի երևի կեցեալ նոցա յերանաւէտ խաղաղութեան, քանզի թշուառութեանց ազգաց յաւանդութիւնս նոցա պահին միշտ յիշատակք. յոր թէպէտ և յաճախ ոք խոկայցէ 'ի տեսութիւնս յայս աւաղելի, ոչ ինչ աւելի խոկայ: Յայսմ բազմաժամանակեայ խաղաղութեան, յոր վայելէրն Բ. տոհիկ, ծնաւ արդեօք սիրտս արիս և ազնուականս անձնանուէրս յօգուտ հայրենեաց, և արս հանճարեղս՝ որք իմաստութեամբ իւրեանց զբազում ազգի ազգի կարգս մարդկան կալան 'ի միաբանութեան. այլ նոքա 'ի մոռացօնս կան անյիշատակք, զի առաքինութիւնք միայն էին նոցա: ԼՆթէ ուղխրս արեան և արտասուաց զնացուցեալ էր նոցա, յաղթանակէին 'ի վերայ ժամանակի անունք նոցա. և առ 'ի չգոյէ վիպագրաց, արձանք կանգնեալք նոցա՝ քարոզ կարդային ցարդ զնոցանէ 'ի հրապարակս: Պա՞տ էր ինչ աշխարհաւեր և սպառիչ գոլ մարդկան առ արժանի լինելոյ բագնաց:

* Ն. Ք. 684 ամաւ: Ա. գլ. 1. և գնի: Քորսինի տարեգր. առտիկ. Հատ. 1:

1 Մեօրա. յշ. արքան. գիրք

Մինչ դեռ Պատրիկ 'ի խաղաղութեան կայր, աղմուկք թեթևք և վաղանցուկք և զայլ գաւառս վրդովէին։ Ընդդէմ դաբք 'ի լուութեան, կամ թէ այսպէս հաճոյ ումեք թուեսցի ասել, գրաւեցին զամս հաճոյ արք երեք յաւագագունից բանցն՝ որ ուրեք երբեք կացին յաշխարհի. Հոմերոս, Լիկուրգոս, և Պլատոնն։ Օսոսա երկոսեան 'ի Այպարտա և 'ի Աթենիա մարթի ճանաչել. այլ 'ի խելամտութիւն հոմերական հանճարոյն պարապել՝ ամենայն ուրեք և յամենայն ժամանակի մարթ է։

Հոմերոս իբր չորեքարիւր ամաւ յետոյ քան զտրովական պատերազմն եկաց *։ Յաւուրս նորա բանաստեղծութիւն զարգացեալ էր յոյժ առ Հելլէնս. կեղծիք, յորոց կազմի նա կամ պճնի, յաճախէին տակաւ՝ յորդեալք աղբերաւոս. և Հելլէն բարբառ ճոխանայր այլաբանութեամբք, ըստ յաճախել արտուղի ազատութեանցն՝ առաւելեալս ձեռնտու գոլով քերթողն **։ Դէպք կրկին երևելիք զքերթողացն կրթէին յայնժամ զհանճար, պատերազմունք Թրեայ և Տրովադայ. ամենայն ուրեք քնար 'ի ձեռին նուագէին առ Հելլէնս վիպասանք զարութիւնս նախնեացն նոցա նահատակաց։

Որփէոս, Լինոս, և Մուսէոս, և այլք 'ի քերթողաց յոլովք ' կացին վաղագոյն. որոց

* Ն. Ք. 900 ամաւ։ ։ Փարրիկ. մատեն. յուն։
** Ի վերջ կոյս մատենիս 'ի հատ. 1։ տեղեկութիւնսն. թիւ Ա։

քերթածք չեն 'ի միջի, այլ այն իսկ թերևս յաճախեսկ զհամբաւ նոցա։ Մոտանէր յայնժամ Լսիոդ յասպարէզ, այն որ ոսոին ասի թէ էր Հոմերի, և որ բարեյարմար դաշնակաւոր տողիւք՝ զծննդաբանութիւն դիցն երգեաց, և զգեղջէից վաստակս, և այլ ինչ ինչ ցանկալի յարդարեալ երգովքն։ Լոգիտ ապա Հոմերոս զքերթողականն արուեստ վաղ իմն եղեալ ըստ չափ տղայութեան, և նախանձընդդէմ մերոյնսօք մղեալ 'ի զարգացումն. և զահահասեալն յարբունս յայն չափ կատարելութեան հասոյց, զի ստեղծիչ համարեցաւ արուեստին։

Այլ երգեալ նորա զպատերազմն Թրոյայ[1], և բազում այլ քերթածս արարեալ, որովք վեհիցն 'ի քերթողաց իւրոյ ժամանակին հաւասարեր. այլ Լղիականն նորա և Ոդիսականքերթածք գեր 'ի վերոյ համայնից զնա կացուցին քերթողաց, երիցագունիցն քան զնա և կրտսերագունից ժամանակաւ։

Յառաջնումն 'ի քերթածաց աստի զգեպս ինչ տրովական պատերազմին նկարագրէ, իսկ յերկրորդումն զդարձ Ոդիսեայ յաշխարհ իւր։ Բանզի դեպք իմն 'ի պաշարման քաղաքին տրովացւոց դիպեալ՝ գրաւեցին զուշ Հոմերի. այն՝

1 Դիմեիս. ալիկ. յզ. շար. բառ. հատած 23. հա. 5. էջ 173։ Նոյն յզ. նախ. մատ. հա. 5. էջ 419։ Կուինտ. հր. Ճար. գիրք ժ. գլ. 1. էջ 629։

2 Լսիոդ. գիրք Դ. գլ. 32։ Պաւս. գիրք Թ. գլ. 9. էջ 729։

զի Աքիլլէս Թշնամանեալ Գամենիեայ, մեկուսի եկաց 'ի բանակէն. և 'ի մեկնել նորա՝ տկարացան Յոյնք, իսկ տրոյացիք զօրացեալ, և յամրէն 'ի դուրս յարձակեալ՝ 'ի բազում Ճակատս մշտայաղթք լինէին։ Այլ երբեմն եթէ 'ի հրձիգ առնել զնաւատորմ Թշնամեացն, եկն եկաց 'ի միջի Պատրոկղ՝ վառեալ զինուք Աքիլլեայ. այլ 'ի վերայ նորա յարձակեալ Այկտոր, տապաստ արկ զնա բերանսեալ զոսոին 'ի փոշի։ Ընդ Աքիլլէս, զոր յառաջագոյն պաշտատանք զօրագլխաց բանակին չկարացին ողոքել դիմել 'ի Ճակատ, լուծանել զվրէժ մահուն Պատրոկղի սպանութեամբ զօրավարին տրոյացւոց, առնել յուղարկաւորութիւն սիրելւոյն, և տայ փրկանաւ զդիակն Այկտորի եղկելւոյ հօր նորա Պրիամու։

Այս ամենայն անցք 'ի սակաւ աւուրս անցին՝, զհետ եկեալ ցասմանն Աքիլլեայ ընդ Գամենիեայ. և զի է սա պատահար ինքնուրոյն յանցս պաշարմանն Ցրոյայ, զայն ընտրեաց Հոմերոս պատՃառս Իլիականին։ Այլ թէպէտ պահէ 'ի նմա զկարգ պատմութեանն, այլ առ 'ի շուք քերթածոյն՝ ըստ հասարակաց մտաց իւրոյ ժամանակին ստեղծանէ պառակտեալ զդիս անդստին 'ի սկզբանէ պատերազմին, կիսոցն 'ի կողմն Հելլէնաց, այլոցն կուսակից գոլով տրոյացւոց։ Այլ վասն առաւելագոյն ըշ-

։ Պոիս. յՂ. գիւ. քերթ. գիրք Բ. էջ 269։

միտս գրաւելոյ, զդէմն իւրաքանչիւր 'ի ներքս մուծանել. որ թերևս անծանօթ էր ցայնժամ արուեստն այն, ուստի թատերականն սկիզբն կալաւ ազգ քերթուածեան'. զոր և Յոդիսականն նովին Ճարտարութեամբ 'ի կիր առնու Հոմերոս։

Յերկրորդումն յայսմիկ դերազանցեալ արուեստ և հմտութիւն։ Մինչ տասն 'ի վերայ անցեալ էին յետ մեկնելոյ Ոդիսեայ 'ի Ծովափանց Իղիոնի. արք ջարդյաւշտակեալ վասանէին զինչս նորա, և բռնաբարէին զտառապեալ կին նորա յանօրէն հարսանիս, և յընտրութիւն անհրաժեշտ՝ զոր ոչ ևս կարէր յերկարաձգել։ Մինչ սկսանի Ոդիսականին Հոմերի տեսարան։ Տեղեմաք որդի Ոդիսեայ անցանէ յերկիրն Եղլադայ՝ հարցանել զՆեստոր և զՄենեղաւոս զողջունէ հօրն. և մինչ դեռ էր նա 'ի Սպարտա, Ոդիսևս մեկնի 'ի կղզւոյն՝ յորում իշխէր Կալիփսով, և տարժանաւոր նաւարկութեամբ վաթեալ 'ի մրրկէ անկանի 'ի կղզին փեակացւոց մերձ Յոթակա։ Ի ժամանակին յայսմիկ չև ևս վաճառականութեան կցորդեալ զազգինս, 'ի հասանել ուրուք 'ի տար աշխարհէ՝ զեղայր ըզնովաւ ամբոխ բազումառ 'ի լսել զանցս նորա։ Ոդիսևս լու 'ի լու աւագանւոյն, որ կամ առ

1 Պղատ. 'ի Թեետ. հտ. 1. էջ 152։ Նոյն յղ. հատ. դէ. 4. հտ. 2. էջ 598 և 607։ Արիստոտ. յղ. քերթ. 4. հտ. 2. էջ 655։

յոյժ տգիտութեան, կամ զակատեալ 'ի լուր զարմանալեաց թախանձէրն զնա, պատմի ըզ-հրաշալի անցս իւր, և գորովական զնոսա յարդարեալ արկածիւքն՝ զորս կրեաց. և գտեալ անդ օգնականութիւն, դառնայ յաշխարհ իւր։ Հաստանեալ անդր, ծանօթս տայ որդւոյն, և խորհի ընդ նմա հնարս զօրաւորս 'ի վրէժխնդրութիւն թշնամեացն։

Եւ է չափ ժամանակի Ողիսականին քառասուն օր՝. բայց առաջարկութիւն իրացն բանայ ասպարէզ քերթողին նկարագրել զամենայն անցս՝ որ 'ի դարձին Ողիսեայ անցին, և բազում ինչ յիրաց պատերազմին Տրովադայ մանրապատում առնել, և 'ի ներքս ածել որ ինչ իւր իսկ յուշևորել իւրում տեսեալ և ուսեալ էր։ Թուի 'ի ծերութեան արաբեալ ըզքերթածս զայս, զի յաշխարհն 'ի նմա պատմութիւնք, և զի դէմք 'ի նմա հանդարտաբարոյք են, և եռանդն մեղմ՝ որպէս արեգականն տայ 'ի մուտսն[1]։

Թէպէտ և Հոմերոս 'ի հաճոյս ժամանակակից մարդկանն արար զքերթածս իւր, այլ ոչ այնմ աւելի ուշ կալաւ. քանզի ահա յայտնապէս 'ի տեսիլ ածեալ ցուցանէ Յոլիսականին՝ զի յամենայն ժամանակի կոխան լինին ազգք պառակտման գլխաւորացն. և Ողիսականին,

1 Յիշատ. բանաստեղ. հա. 2. 2 Ղմնդ. յլ. վեմ. գլ. 9։ էջ 389։

զի իմաստութիւն կցորդեալ ընդ արիութեան՝ թէպէտ վաղ և թէ անագան տապալէ զամենայն զխոչ և զխուռթ։

Մինչ դեռ այն ինչ հոմերական քերթածքն հռչակէին, Իկուրգոս 'ի Յոնիա պայծառանայր։ Հանճար քերթողին զօրէնսդրին զարթոյց զհանճար. և զի ուր ամբոխն կեղծիս ևեթ զմայլականս նկատէր, Իկուրգոս եգիտ անդ խրատս իմաստութեան։ և ած եմոյծ զերկոսին քերթածսն 'ի հայրենիս իւր։ Նստի տարածեցաւ 'ի Յոյնս առ հասարակ, և գուսանք՝ Հագներգուքն անուանեալք՝ հատուածս անտի յերգս առեալ շրջէին ընդ Յունս՝ որ զմայլեցին 'ի լուր նոցա։ Կէաք զքաջութիւն Դիոմեդեայ նուագէին, այլք զՀրաժեշտն Անդրոմաքեայ և զբարեաւ մնայն, և կէաք դարձեալ զմահ Պատրոկղի և զԱյկտորի, այլովքն հանդերձ։

Ի բաժանելդիմաց իւրաքանչիւր՝ յաճախէր համբաւ քերթողին, բայց հիւսք քերթածացն տակաւ եղծանէին։ Ի իբրև հատուկտիր լեալ՝ գժուարաւ այնուհետև շարամանեալ լինէին մասունքն 'ի մի, արգել Սողոն Հանգներգուաց՝ մի խաւն 'ի խուռն կցորդել միմեանց

1 Ագատ. յՀ. հայրեն. Հոմերի գլ. 9։
2 Պլուտ. 'ի Լիկ. հա. 1։
3 Պարագ. Պինդ. 'ի Նեմ. երգ 2. տող 1։
4 Եղիան. զան. պատ. գիրք ԺԳ. գլ. 14։ Ագատ. անդ։

զՀատուածսերգոցն Հոմերի, այլ պահել զկարգ քերթողին 'ի վէպսն, և ուր մին դադարէր՝ անտի միւսումն սկսանել[1]։

Բայց թէպէտ և խափանեաց այսուիկ Սողոն զմի 'ի վտանգաց, այլ միւս ևս մնայր անխորշելի վտանգ։ Քերթածք Հոմերի մատնեալք յաշխոյժս և 'ի տգիտութիւն երգչացն և հրապարակախօս մեկնչաց, այլայլեին օր ըստ օրէ 'ի բերանսնոցա՝ կրճատմամբ և յաւելուածով տողից։ Մին իրի Պիսիստրատ և որդինքն Իպպարքոս[2] խորհեցան նորոգել հարազատ զընագիրն, խորհրդակցութեամբ հմուտ քերականաց, և վարձս խոստացեալ որոց հատուածքս վաւերակսն զքերթածոցն ուստէք հայթայթիցեն։ Յուրերկար և տաժանաւոր երկվք զերկոսին զմեծաշուք պատկերսն կացուցին 'ի տեսիլ Յունադայ, որ ոչ ինչ նուազ ընդ գեղ ստեղծուածոյ նոցա քան ընդ Հոմերութիւն յարակից մնասանցն հիացեալ պակեաւ։ Հրամայեաց և ևս Իպպարքոս, 'ի համաթենական տօնս խաղուց ըստ սահմանադրութեանն Սողոնի երգել 'ի Հոմերոնէ տաղս[3]։

1 Դիոգ. Լայեր. 'ի Սողոն գիրք Ա. յօդ. 57։

2 Կիկ. յղ. Ճարտ. գիրք Գ. գլ. 34. հմ. 1. էջ 312։ Պաւս. գիրք Ը. գլ. 26. էջ 594։ Ուօրտ. 'ի Պիսիստ. գլ. 9 և 12։ Ալլատ. յղ. հայրեն. Հոմերի գլ. 5։

3 Պլատ. Յիպպարք. հատ. 2. էջ 228։ Եղիան. զանպատ. գիրք Ը. գլ. 2։ Դատ. Պերիպ. անդ։ Լիկուրգ. 'ի Լէոկր. էջ 161։

Պղագայից ոչ կարելով իւրովի առնել դա-
տաստան զփառաց աքքայից և գիւցազանց ըստ
գործոց նոցա, գոգցես ինն 'ի հեռուստ առեալ
զտիեզերահռչակ հնչիւն համբաւոյ նոցա, բազ-
մահռչակ ևս զայն 'ի լուր ապառնեացն հընչ-
եցուցանեն։ Բայլ հռչակ մատենագրի, որոյ
մատենագրութիւնք անկորուստ կան, ազգաց
յազգս և յամենայն ժամանակի բազդատի ընդ
պատմառս համբաւոյն. և փառք նորա հաս-
տատեալ կան 'ի վերին մշանչենաւոր դատաս-
տանի դարուց 'ի դարս մինչ 'ի սպառ։ Փառք
Հոմերի այնչափ ևս առաւել յաճախեցին, որ-
չափ խորագոյնս քերթածք նորա ծանուցան,
և բաւականագոյն գտան միտք յընտրութիւն
նոցա։ Հելլէնք երբէք ուրեք չեղեն բարգա-
ւաճք 'ի գիտութեան որպէս այժմ, նմին իրի
և զարմացումն նոցա արդ զքերթողէն մեծ է
յոյժ. անուն նորա 'ի բերանս ամենեցուն կայ,
և պատկեր նորա 'ի տեսիլ համայնից։ Աքա-
ռին ընդ միմեանս քաղաքք յափշտակել զփառս
խանձարրոց նորա[1], և այլք 'ի կանգնել նմա
մեհեանս[2]։ Բրգիացիք կարդան զանուն նորա
'ի պաշտամունս կրօնից, և ամի ամի մատու-
ցանեն նմա զոհ 'ի Արիոս[3]։ Ցաղք նորա հնչեն
ընդ հանուր Եղլադա, և զարդարեն զմեծա-

[1] Աէլ. Գելլ. գիրք Գ. գլ. 11։ Սար. գիրք ԺԴ. էջ 645։ Պաւ. գիրք Ժ. գլ. 24։

[2] Սար. անդ էջ 646։

[3] Հոմերիընդ Եպիգ. վէճ։

պայծառ տօնս նորա։ Ինձա մանկտին գտանէ հրահանգս նախակրթութեան[1]. անտի Աքիլլաս[2], Սոփոկղ[3], Մբիլղոքոս, Արոգոտ, Դեմոսթենէս[4], Պղատոն[5], և այլք 'ի մատենագրաց ընտիրք առին զյոլովագոյն մասն 'ի վայելուչ զարդուցն՝ որովք պՀնին մատեանք նոցա։ Ընտի և անդրիագործն Փիդիաս[6], և նկարիչն Ապրանոր[7] զվերհագունին գից ուսան մեծավայելուչ յօրինել զպատկեր։

Մրդ ո՞վ ոք զուգահաւասար հռչակելոյս այսմիկ գտանիցի քերթողիս, որ օրէնսդրացն խրատս քաղաքավարութեան ընծայէ, և իմաստասիրաց զՀարտարմտութիւն, վիպագրաց զարուեստ մատենագրութեան, և քերթողաց և Հարտասանից յուզել զկիրս, և որ զբազմաստեղն ՀանՀարոյն տեսակս բարգաւաՀեցուցանէ[8], այնքան գերազանցեալ զամենեքումբք, մինչև Հանգոյն լուսասփիւռ արեգական գոլ աննախանձելի։

1 Եւսեբիոս. յԵղի. գիրք Ա. էջ 145. Բ. 263։

2 Ամեն. գիրք Ը. գլ. 8. էջ 347։

3 Վալքեն. հակաՀ. յԵբրիպ. Խպպոլ. էջ 92։

4 Ղենգին. յղ. վեհմ. գլ. 13։ Դիոնիս. աղիկ. թղթ. առ Պոմպ. հտ. 6. էջ 772։

5 Պանեաս. առ Կլիկերոնի տուս. գիրք Ա. գլ. 32. հտ. 2. էջ 260։

6 Սոր. գիրք Ը. էջ 354։ Պլուտ. յԵմիլ. հտ. 1. էջ 270։ Վազ. Մոքս. գիրք Գ. գլ. 7։

7 Եւսեբիոս. անդ։

8 Դիոն. աղիկ. յղ. շաբ. բառ. հտ. 5. գլ. 16. էջ 97. և գլ. 24. էջ 187։ Կուինտ. հրահ. գիրք ժ. գլ. 1. էջ 628։

Եւ ինչ երկբայիմ զի Հոմերոս ցանկալի եւ համազգեացն իցէ այնու, զի գլխաւորք՝ի տոհմից Յունադայ առհասարակ դատանէն՝ի գիրս նորա զազգ եւ զպարծանս իւրեանց, եւ պետութիւնք իւրաքանչիւր զաւուրս մեծութեան իւրեանց. զի եւ բազմաց՝ի դրացի ազգաց վըկայութեամբ եւեթ նորա որոշեցան նախնի սահմանք՝։ Յ.ԼԼ այս ամենայն պիտանութիւն, թերեւս հասարակաց եւ յոլովից այլոց մատենագրաց՝ որ արդ՝ի մոռացօնս կան, չէր բաւական զայն զմայլումն ներգործել՝ի համազգիսն. հարկ էր զի եւ այլ զօրութիւնք՝ի քերթածս նորա կային առ՝ի յափշտակել զսիրտս Հելլենաց։

Պաքէն սկիւթականիս անկիրթ զգայարանաց անզգալի իսկ է բաղումս ուրեք հոմերական տաղիցն ներդաշնակութիւն՝ որ զմայլեցուցանէն զՀելլէնս. բայց սակայն հիացեալ զարմանամ մինչ տեսանեմ զնա բարձրաթռիչ որպէս թէ ընդ երկինս սաւառնեալ՝ բոցատիպ ակամբ դիտելով զառ՝ի յերկրէքս, եւ որ ինչ՝ի նոսա հուր կամ երփն երփն փայլեն երանգք՝ յինքն ժողովելով. մինչ տեսանեմ զնա մերթ առընթերակաց աստուածախումբ դիցնակըմբի, եւ մերթ զի քնեալ զսիրտս և զերիկամունս մարդկան։ Յ զի բազմահնար՝ի գիւտս, և դեղով էիցս զուարճացեալ, ոչ եւս կարելով բե-

[1] Եւսեբիոս. ՚ի Հոմեր. հա. 2. էջ 263։

բել յինքեան զՀուրն ծախիչ՝ ծաւալէ զայն 'ի նկարագրութիւնս իւր և 'ի բացատրութիւնս. և է զի զերկինս ընդ երկիր համախմբէ 'ի կըռիւ, և զկիրս ընդ միմեանս, և փայլատակամբք հանձարոյն շլացուցանէ զմիտս, և յափշտակէ զայն ցոլիւք իմաստիցն՝ որ բուն վսեմքն իսկ են, և այնպիսի ազդմունս տպաւորէ 'ի խորս սրտի՝ որովք թուի զեղուլ և ընդարձակել զայն։ Օ՛ի յայսոսիկ մանաւանդ փայլեն գերազանցութիւնք քերթողիս. շունչ ինն և հոգի տալ ամենայնի՝, և զյոյզս անդադարս կրից իւրոց ազդել յայլս, արբանեկեցուցանել բռնագուն 'ի կրից զամենայն յարձակմունս նորա և զզառածանս և զզառանցանսն հետազօտել. հանել զնա մինչև յամպս 'ի վեր, և յորժամ պէտք իցեն՝ 'ի վայր կործանել զնա զօրութիւն իմաստից լաւութեան և առաքինութեան, զօրէն ինն բոցոյ հրաբուղխ լերին՝ զոր հողմն անդրէն 'ի վայր 'ի վիհսն մղիցէ. քաջ 'ի դէմս ածել զնկարագիրս աւագաց, և զանազանել 'ի միմեանց զիշխանութիւն զկորովութիւն և զայլ ևս իւրաքանչիւրոցն յոլովութիւնս, ոչ անձաշակ ինչև տաղտկալի ստորագրութեամբ՝ այլ 'ի հզօր և յարագ շարժուած երփնուռնակ գրչի, կամ նորանոր ստեղծիւք մտաց՝ անխնամաբար ինն 'ի քերթածսն անդ սփռելովք։

1 Արիստոտ. յզ. Ճարտ. գիրք Գ. գլ. 11. հա. 2. էջ 595։

Վերամբարձեալ ընդ նմա յերեսս, նկատեմ անդ զՄստղիկ կամարաւն՝ ուստի անընպաւ բոցք տարփանաց հատանին, իղձք ապաժայժք, ողբք հրապոյրք, և շրթունք և աչք զոշտիւք՝ [1]։ Կատեմանդ զԹենաս և զսրբամտութիւնս նորա յայծենակաՀ ասպարին՝ զորմէ կախին արհաւիրք և հերձուածք և բռնութիւն, և զարհուրելոյն Գորգոնայ պակուցանողական դէմք [2]։ Անդ Բրամազդ և Պլեսիդոն հզօրագոյնք 'ի դիս. բայց Պլեսիդոն երեքարձենիւն շարժէ զերկիր [3], իսկ Բրամազդ յօնիւքն ևեթ ակնարկութեամբ դողորդեալ սասանեցուցանէ զՊղմպոս [4]։ Ինքանեմ յերկիր, և անդ Բքիլլէս և Լաս և Գիոմեդէս ահաւորագոյնք 'ի Հելլէնս. բայց Գիոմեդէս խուսէ յերեսաց տրոիական բանակին [5], Լասյետ բաղումդիմամարտութեան՝ ապա տայ տեղի [6]. իսկ Բքիլլէս երևի ևեթ, և յերեսաց նորա հալածին թշնամիք [7]։

Այս խտիրք զանազանութեան ոչ 'ի միայոյր երևին 'ի սրբազան տաղսն Հելլէնաց, քանզի այսպէս անկ է զՀոգիական և զՀոգիական

1 Հոմեր. Եղի գիրք ԺԴ. տող 215։
2 Նոյն անդ գիրք Ե. տող 738։
3 Նոյն Ոդիս. գիրք Դ. տող 506։
4 Նոյն Եղի. գիրք Ա. տող 530։
5 Նոյն անդ գիրք Ե. տող 605։
6 Նոյն անդ գիրք ԺԱ. տող 565։
7 Նոյն անդ գիրք ԺԸ. տող 228։

քերթածն անուանել։ Այլ քերթողին հաստատուն առաջի իւր զայսոսիկ եղեալ նկարագիրս, զպէսպէս դաշնակսն ապա ըստ պատշաճի 'ի ներքս խառնէր 'ի զանազանութիւն նոցա 'ի միմեանց. և յայլայլելն իսկ առ սուղինչ զտիպս նոցա, առաջի աչաց ունէր միշտ զնախատիպսն։ Անզի արդարեւ արուեստին և եթէ անյեղլի ընծայել հաստատութիւն բուսոյ բարուց. այլ չէր որ 'ի բնէ, որ 'ի փոփոխել բաղդին՝ երբեք ուրեք չյողդողդիցէ։

Պղատոն դժպատեհ համարեր մեծութեանն Քիլլեայ և Պրիամու՝ զթաւալել նորա ընդ փոշի վասն մահուն Պատրոկղի, և զխնամարհել սորա յայնքան նուաստութիւն վասն գրաւաթափ առնելոյ զդիակն որդւոյն՝։ Այլ որ այն նորանշան մեծութիւն իցէ, որ անզգայ առնիցէ զմարդ. գովելի ինձ Հոմերոս այնու իսկ, զի հանգոյն բնութեան՝ զտկարութիւն կցորդէ ընդ քաջութեան, և զնուաստութիւն ընդ բարձրութեան. գովելի ևս դարձեալ, զի ըզհայր բազմագութ 'ի հզօր թագաւորն յանդիման առնէ, և զբարեկամ բազմագորով յամենի դիւցազնն։

Լուայ դարձեալ պարսաւելոյ ոմանց զթըշնամանագիր բանս՝ զոր քերթողն գնէ 'ի բերան դիւցազանցն, 'ի Ժողովս նոցա և 'ի կռիւս։ Այլ դարձայ հայեցայ 'ի մանկունս՝ որ բնու-

1 Պլատ. յղ. հատ. գիրք Գ. հատ. 2. էջ 388։

թեանն առաւել հպատակէն, և 'ի ռամիկն՝ միշտ մանուկ, և 'ի վայրենի ազգինն՝ ցանկ ռամիկս, և տեսի յամենեսին 'ի նոսա, զի ցասումն նախ քան զարդիւնս գործոց՝ յայտնէ զանձն յոխորտանօք, ժպրհութեամբ և թշնամանօք։

Լուայ և զստգտանս ոմանց, զի ասէին՝ թէ չէր պարտ քերթողին զբարս վաղեմիս հանդերձ ամենայն անհարթ պարզութեամբն նկարագրել. և լուա և եթ կացեալ ծիծաղեցայ։ Այլ առ այսոսիկ որ մեղադրեն նմա զդիցս 'ի տաղս նորա անարգութիւն, պատասխանեմ զլուեալն յումեմնէ 'ի բանիբուն աթենացւոյ, զի ասէր. Հոմերոս ընդ քերթողական կարգաց ժամանակին՝ զմարդկեղէն կիրս յարէ 'ի դիս. Այրիստոփան յետ ժամանակաց 'ի թատերս իսկ ածզնոսա[3], և հարքն մեր դովեցին զհանճարեղ համարձակութիւնն. նախնի դիցաբանքն համասերունդս աստուածոցն ասացին զմարդիկ՝, և Պինդար՝ ոչ յոյժ երիցագոյն քան զմեզ ժամանակաւ՝ հանգոյն իմն նոցին բանիցն նուագէ՝։ Այլ ուրեմն ոչ որպէս մեք բերեմք զաստուածութենէ կարծիս՝ այնպիսիք էին դիքն, այլ անստերիւր իմաստասիրութիւն դերագոյն ևս քան զնոսա կացուցանէ էակ՝ յորմէ յամե-

1 Արիստոտ. յդ. քերթ. գլ. 25. հտ. 2. էջ 673։
2 Արիստոփ. յԱմպան տող 617. 'ի Պղուտ. տող 1120։
3 Եսիոդ. Ծննդ. դից տող 126 եւն։ Արիստոփ. 'ի Հաւուն տող 700։
4 Պինդ. 'ի Նեմ. երգ 3. տող 1։ Պարապ. անդ։

նեսին 'ի նոսա բաշխին զօրութիւնք։ Օնա իմաստունք լուելեայն պաշտեն. իսկ այլք զուխտս իւրեանց, է զի և զբողքս, ուղերձեն առ այնոսիկ՝ որ զնայն 'ի դէմն ածեն. և յոլովք 'ի քերթողաց որպէս Թագաւորին Պարսից են ծառայք, որք Թագաւորին երկիր պագանեն, և զիշխանս նորա Թշնամանեն։

Լրդ որոց լեզուք 'ի գեղեցկութեանց հոմերական տաղիցն ոչ կարկիցին, բազմացուսցեն զխօսս զԹերութեանցն։ Լչ ընդէր իցէ ինձ Թանգուզել. բազում այն է զի և հանգչի, է զի և նիրհէ քերթողն. այլ հանգիստ նոցա հանգիստ է արծուոյ, որ վերաթեւեալ ընդ անոլորտ սահմանս իւր բարձրաթռիչ ընդ օդս և խոնջեալ, խոյանայ ապա դադարէ 'ի ծագ բարձու լերին։ Լչ նիրհել նորա նիրհ Լրամազդայ, որ ըստ նորին իսկ Հոմերոսի Հայհագրութեանն շանթ ընկէց որոտընդոստ ամպահարութեամբք զարթնու 'ի քնոյ[1]։

Ամք զտաղիցն Հոմերոսի ոչ բազմախոյզ քննութեամբ՝ այլ ըստ զգայութեան դատիցին, և ոչ ըստ յեղյեղուկ կանոնաց՝ այլ ըստ անցեալ օրինաց բնութեան, ոչ ինչ յերկուանայցեն զի արժանի է նա գերակայ աստիճանին, յոր եդին զնա Հելլէնք, և զի եղև նա զարդ գեղապանծ դարուցն՝ զորոց ահա Համառօտեցի զպատմութիւն։

[1] Հոմեր. Եղի. գիրք ԺԵ. տող 377։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Յետ ամաց իբր հարիւր և յինսից 'ի սկսանելոյ ողիմպիադիցն, անտի սկսանին Հնգբրտիւ վեպք աթենացւոց. և տևեն զամս երեքարիւր մինչև ցիմ ամսս, իսկ մինչև ցառումն քաղաքին նոցա՝ զամս իբր երկերիւր և քսան։ Ակիզբն և զարգացումն և անկումն պետութեան նոցա յայտնանչան տեսանի անդ, զորս լիցի ինձ յիւրաքանչիւր ժամանակս առանձինն նշանաւոր ցուցանել. զառաջին ժամանակն անուանեալ դար Սողնի կամ օրինաց, զերկրորդն՝ դար Թեմիստոկղի կամ Աբիստիդեայ, որ են բարենչան աւուրքն Լշլաւդայ. իսկ զերրորդն՝ դար Պերիկղեայ, և որ է ժամանակ զեղխութեան և արուեստից բարգաւաճութեան։

ԳԼԱԽ ԱՌԱՋԻՆ

Որ ինչ յաւուրս Սողնի իբր յԱթենս։

Կարդաց տեսչութեանն, զոր Թեսէոս եղ ՅԱթենս, բազում ինչ փոփոխումն լեալ էր։

* Ի 630 ամէ մինչև 'ի 490 ամն Ն. Ք։

Ոսամիկն դեռ ևս մնանէր 'ի Ժողով, այլ գերագոյն իշխանութիւն 'ի ձեռս ազատանոյն էր[1]։ Արքունք ինն կամ իշխանք տարեւորք[2] առաջնորդէին աշխարհին, ոչ կարելով զեղծանել սակաւատև իշխանութեամբն, և ոչ զբարեկենդանութիւն աշխարհին յարդարել։

Ստոիկեցիք պառակտեալք զհետ երից ազգատոհմից վաղեմեաց աթենացւոց, այլակամք 'ի միմեանց և այլաբարոյք և յայլեայլ իրս հասեալք, չկարէին միաբանել կալ 'ի մի կարգ տեսչութեան։ Ազգաւորագոյնք 'ի նոցանէ և ինքնագլուխք խուսեալք 'ի մերձակայ լերինս, խնդրէին ընկերահաշտ ազատութիւն. Հոխք ժառանգեալ զհովիւսն, խնդրէին զազնուապետութիւն. իսկ ծովեզերեայք պարապեալք 'ի նաւարկութիւն և 'ի շահավաճառ, խառն իմն յերկոցունցն խնդրէին կարգ տեսչութեան՝ որ յապահովեր զստացուածս նոցա, առանց բառնալոյ զհասարակաց ազատութիւն[3]։

Եւ ոչ այս միայն պատճառք էին պառակտման նոցա, այլև հնացեալ ատելութիւն աղքատաց ընդ մեծատունս։ Օ՛ի նուաստ քաղաքացիք հեծէին ընդ պարտեօք, և ոչ գոյր նոցա այլ հնար՝ բայց վաճառել զազատութիւն անձանց կամ զորդւոց իւրեանց անողորմպար-

[1] Արիստոտ. յԼ. հատոր. գիրք Բ. գլ. 12. հա. 2. էջ 336։

[2] Թուկ. գիրք Գ. գլ. 126։

[3] Երոդ. գիրք Ա. գլ. 59։ Պլուտ. 'ի Սոլոն. հա. 1. էջ 85։

տատեարցն. նմին իրի և բազումք խոյս տային յաշխարհէն, որ կիսոցն մատուցանէր զրաջան աշխատութիւն, իսկ այլոց ստրկութիւն մշտին ջենաւոր և հրաժեշտ յիմաստից բնութեան[1]։

Սակաւ ինչ օրէնքն, որ գրեթէ հասակակիցք էին պետութեանն, և յոլովք յայնցանէ անուանեալ արքունականք[2], ոչ և բաւականք էին յորմէ հետէ զարգացմամբ ազգին յաճախէին 'ի քաղաքաժողով միաբանութեան ընդ Ճարտարութիւնս արուեստից՝ պէտք և ախտք։ Ստահակութիւն լքէր անպատուհաս, կամ ըստ հաճոյից կամաց կրէր պատուհաս. կեանք և ստացուածք իւրաքանչիւրոց կային ապաստան 'ի դատաւորս, որոց ոչ գոյին հաստատուն օրէնք, և դիւրակործանք էին 'ի մտահաճութիւն և 'ի չարաշահութիւն։

Յաջնմ խառն 'ի խուռն աղմկի՝ որ մնտալուտ կործանումն սպառնայր պետութեանն, յանձն եղև Դրակոնի խմբագրել զամենայն օրէնս 'ի մի մատեան, և յաւելուլ յայն մնլատան և վասն այլոց իրաց օրէնս։ Ոչ սորա կենացն զհանգամանս չունիմք ուստեք, բայց եթէ նա համբաւ զառն բարեբաւի, իմաստնոյ և հայրենասիրի[3]։ Այ՝արթ էր իսկ այլոց հանգամանաց բարեզարդել զգոլութիւն նորա,

1 Պլուտ. 'ի Սոլոն։
2 Քաեն. մնա. 836։ Մեսրոպ. Ա՛սոմիկ. գլ. 36։
3 Ակլ. Գելլ. գիրք ԺԱ. գլ. 18։ Սուիդ. 'ի բառն Δράκ.

այլ չէին ինչ կարևորք առ անմահացուցանելոյ զյիշատակ նորա։ Հանգոյն օրինաղրացն, որ յառաջ և յետոյ քան զնա կացին, արար նա մատեան օրինաց և բարոյական կարգաց. առեալ՝ի ծննդենէ զբաղաքացին, սահմանեաց ուրպէս պարտն էր նմա մնանել և դաստիարակել՝. ած զնա ընդ ամենայն հասակս, և զպատշաճս իւրաքանչիւրոց ընդ հասարակաց բարուոյն կցորդեալ՝ խորհէր յարդարել զմարդիկ աղատս և առաքինի քաղաքացիս. բայց գրժկամակս և ետ արար զնոսա։ Այլ այնչափ բոզքք և տրտունջք զօրինադրութեանցն նորա լեալ, մինչև հարկ լինել նմա խոյս տալ յԱթենա կղզի, ուր և մեռաւն իսկ յետ սակաւ ժամանակի։

Տիպք նկարագրին նորա դրոշմեալ կան յօրէնս նորա. զի խիստք են յոյժ[3] օրէնք նորա ըստ բարուցն, որովք եկեաց նա՝ի սպառ։ Պարապորդութեան զմահ սահմանէ պատուհաս, նովին միով պատժով զդոյզն ինչ մեղանս և զոՀիրս դժնդակս պատուհասեալ. քանզի ասէր՝ թէ չիք վասն այսոցիկ թեթևագոյն պատուհաս, և ոչ վասն այսոցիկ ծանրագոյն[3]։ Ընդոյողդողդ և ծայրացեալ ինքն յառաքինութեանէ, չկարէր իմն ներել ախտից՝ յորոց գարշէրն, և

1 Եպիֆան՝ի Տիմարք. էջ 261։ էջ 337. յղ. Հարա. գիրք Բ. գիրք Բ. գլ. 12. հա. 2. գլ. 23. հա. 2. էջ 379։
2 Արիստոտ. յղ. հաս. 3 Պլուտ. ի Սոլ. էջ 87։

ոչ տկարութեանց՝ յորոց վերայ անաշխատ յաղթանակէին։ Խորհէր իսկ թերեւս, զի առաջին քայլափոխք ընդ հետս չարեաց 'ի չարագոյնսն ածեն անվրէպ գահավիժութիւնս։

Այս քանզի Դրակոն ոչ ինչ 'ի կարգ տեսչութեան աշխարհին փոփոխումն արար՝, օր ըստ օրէ յաճախէին ընտանի հերձուածք։ Մի ոմն 'ի գլխաւորաց քաղաքայնոց, որոյ անուն կոչէր Կիղոն, ամբարձ զձեռն իւր 'ի տիրապետել և յարգել և 'ի պաշարումն անկեալ, ժուժկալ եղև միջնաբերդին ընդ երկար։ Բայց ապա սովալլուկ և անոյոյս յօգնականութենէ՝ ինքն խոյսետ փախստեամբ 'ի պատուհասէ չարեացն, իսկ հետևողքն նորա ապաւինեցան 'ի մեհեանն Աթենասայ։ Որք ապայուսով կենաց պատրանօք անտի 'ի դուրս ձգեալ, սրախողխող եղեն * • կէսք ևս 'ի չուառականացն 'ի բագինս Նեմենեայցն դժնեից սպանան[2]։

Բողոքք զայրագինք ամենայն ուստեք ամբարձան զսոսկալի դաւոյն, և քաղաքն ամենայն սրտմտեալ ընդ ամբարշտութիւն յաղթականացն, դէտսին կալեալ սպասէր երկնառաք աստուածասաստ մծտալուտ պատուհասիցն։ Այս մինչ դեռ յարհաւիրս անդ ամենեքին առ հասարակ ըմբռնեալ կային, լու եղև զի ՀԱՅ-

[1] Արիստոտ. յՀաս. գիրք Բ. գլ. 12. հա. 2. էջ 337։ [2] Թուկ. գիրք Ա. գլ. 126։ Պլուտ. 'ի Սող. էջ 84։

* 'Ն. Գ. 612 տաս։

սէաք քաղաք և զկղզին Սաղամինայ մեգարա-
ցիք զինուն նուաճեալ էին։

Օ Հետ գուժկանին և սրածութիւն Ճարա-
կեցաւ 'ի քաղաքին Մենեցուն սասանեալ միտք
'ի կասկածանայ, զահի հարեալ խուճապէին,
և ցնորք անդոհականք տագնապէին զնոսա։
Դիմեցին առ իշձն և առ հարցուկս, և նոքա
ետուն հրաման պատասխանւոյ 'ի դից, զի քա-
ղաքին պղծելոյ սեղանակապտութեամբ՝ պարտ
էր սրբել պաշտամամբք քաւութեան։

ԿՈՉԵՑԻՆ զԼիմենիդէս 'ի Կրետայ[1], զի
համարէր նա 'ի ժամանակին յայնմիկ այր աս-
տուածամերձ և ապառնեաց գիտող. այլ էր
նա, որպէս արդ Ճանաչի, այր խորագէտ և նա-
խանձայոյզ, հզօր 'ի մոլորեցուցանել հանճա-
ռով իւրով զոռամիկն, և 'ի զարմացուցանել զնա
խստակրօնութեամբն, Ճարտար 'ի մեկնել զե-
բաղս և զպատգամս մթինս[2], և հմուտ 'ի գու-
շակել զելս իրաց[3]։ Պատմէին կրետացիք, զի
դեռ տղայ գոլով նորա, 'ի խորշ ինչ ուրեք լե-
ռին նիրհեալ, եկաց 'ի քուն զամս քառասուն[4].
զոր բազումք և ևս երկայնեն զժամանակ քը-
նոյ նորա[5], և յաւելուն զի 'ի զարթնուլն հիա-

1 Պղատ. յղ. օր. գիրք Ա. հտ. 2. էջ 642։
2 Արիստոտ. յղ. Ճարտ. գիրք Գ. գլ. 17. հտ. 2. էջ 605։
3 Պլուտ. 'ի Սոլ. էջ 84. Դիոգ. Լայ. յԵպիմ. գիրք Ա. յոգ. 114։
4 Պաւս. գիրք Ա. գլ. 14 էջ 35։
5 Պլուտ. հտ. 2. էջ 784։ Դիոգ. Լայ. անդ. յոգ. 109։

ցեալ զարմանայր ընդ նորանշան փոփոխումնն. և զի մերժեալ'ի հայրենի տանէ որպէս խաբուսիկ ոմն, հազիւ Ճանաչէր յիւրոցն 'ի ձեռն յայտնի նշանաց։ Ոչ ինչ աւելի հաստատեն վէպքս, բայց զի Դպիմենիդէս մենակեաց վարէր կեանս'ի մանկութեան՝ պատաղեալ յախտարակաց գիտութիւնս, և զի յաստուածարութիւն զմիտսն կրթէր՝ պահօք, լռութեամբ և պարապմամբ 'ի խոկմունս, և հետաղօտէր զկամս դից՝ առ իշխելոյ մարդկայնոց։ Յաջողեցին ելք իրացն 'ի վերք քան զակնկալութիւն նորա. և այնքանոյ իմաստութեան և սրբութեան երթայր հռչակ զնմանէ, զի 'ի հասանելարկածից'ի վերայ աշխարհին[1] ժողովուրդն դիմէր առ նա 'ի քաւութիւն, աստուածահաճոյ ևս համարեալ զպաշտամունս կրօնից 'ի նմանէ ուղղեալս։

Լթենացիք ընկալան զնա յուսով և երկիւղիւ*. և ետ նա կառուցանել մեհեանս և բագինս նորս, և զոհս ընտրեալս յիւրմէ՝ զայնս զենուլ, և երգս խառն ընդ մատուցմունս զոհից սահմանեաց նուագել[2]։ Այլ զի աստուածազգեցիկ իմն 'ի խօսելն թուէր[4], և թափով

[1] Պլուտ. 'ի Սոլ. էջ 84։ Կիկ. յոլ. ըդդ. գիրք Ա. գլ. 18. հա. 3. էջ 16։

[2] Պլաս. գիրք Ա. գլ. 14. էջ 35։

* Իբր 597 ամաց Ն. Ք։ Ի վերջ կոյս մատանիկա 'ի սեղկութիւնն. Թիւ Բ։

3 Սոր. գիրք ժ. էջ 479։

4 Կիկ. անդ։

Հարտարիսօսութեանն զՀետ իւր առեալ ձգէր զամենայն, զմեծարանս ժողովրդեան 'ի Հահ առեալ՝ արար փոփոխումն կրօնական պաշտամանց. որով ընդ օրէնսդիրս աթենացւոց մարթէ համարել զնա։ Նուազեցոյց նա զծախս պաշտամանց՝, և խափանեաց զխուժադուժ սովորութիւնն ցետելոյ կանանց զերեսս յաշխարանս մեռելոց, և բազում կարգս պիտանիս հաստատեաց՝ առ 'ի ձգել զաթենացիս 'ի սէր միաբանութեան և յիմաստս ուղղութեան։

Վստահութիւն ժողովրդեանն 'ի նա, և ըզբազումն 'ի կատարել զպատուէրս նորա, ցածուցին տակաւ զխռովութիւնս, և խուՀապքն երևութացեալք անտես եղեն։ Նպիմենիդէս մեկնեցաւ 'ի նոցանէ լի փառաք, մորմոքելով ամենայն ժողովրդեանն ընդ երթ նորա. և 'ի բազում մեծամեծ պարգևաց նոցա ոչ ինչ ընկալեալ, ոստ մի ևեթ խնդրեաց ձիթենւոյ 'ի նուիրելոյն Աթենասայ, և զբարեկամութիւն նոցա ընդ հայրենիս իւր ընդ գնոսացիս[2]։

Ի յամեցին՝ յետ մեկնելոյ նորա հերձուածք՝ մոլեգին ևս գրգռել. և անհնարին կատաղութիւն նոցա յայն ժամանեաց, զի ոչ ևս հնար էր այնու հետև կալ պետութիւն, այլ կործանել, կամ միոյ ուրուք իշխանութիւն ներքոյ անկանել։

1 Պլուտ. 'ի Սոլ. հա. 1. էջ 84։
2 Պլատ. յդ. օր. գիրք Ա.
հա. 2. էջ 642։ Պլուտ. անդ։ Դիոդ. լայ. գիրք Ա. յոդ. 3։

Այսենեցուն միաբարբառ խնդրեցին զՍողոն. և իշխանապետ կացուցեալ զնա և օրէնսդիր և իրաւարար անբողոքելի *, հրաւիրեին և զնա բազմել յաթոռս։ Այլ նա խորհեցաւ, զի ոչ նոյնպէս դիւրին էր նմա իջանել յաթոռոյ անտի, և ոչ բազմեցաւ՝ հակառակ կացեալ ամենայն աղերսական յանդիմանութեանց բարեկամացն և թախանձանաց գլխաւորաց հերձուածոյն, և ողջամտագոյն մասին քաղաքայնոցն ։

Այլ էր Սողոն յազգատոհմէ նախնի թագաւորացն աթենացւոց 2. և պարապէր նա 'ի մանկութենէ 'ի վաճառականութիւն, առ 'ի լքնուլ զառատին տոյժս՝ որ յառատութենէ հօրն հասեալ էին նմա, և առ ուսանելոյ զբարս և զօրէնս ազգաց։ Այլ իբրև արար իւր ստացուածս 'ի լիութիւն բաւականի պիտոյիցն, առ 'ի չպարտուելոյ ձրիոյ բարեկամացն, ոչ ևս այնուհետև 'ի խնդիր շահու ուրեք ուղևորեր, այլ առ յաւելուլ 'ի գիտութիւն 3։

Ի ժամանակին յայնմիկ աբք ոմանք առաքինիք՝ որ իմաստունքն կոչէին, ցրուեալք ատ անդ 'ի յունաստան, նոքա ևեթ աւանդապահք էին գիտութեանց։ Որոց հանապազօր պարապումն էր խուզարկել զբնութիւն մարդոյ, թէ

* Ն. Ք. 594 ամաւ։
1 Պլուտ. 'ի Սող. հա. 1. էջ 85։
2 Նոյն անդ էջ 78։
3 Նոյն անդ էջ 79։

զինչ է մարդ, և զինչ լինելոյ է, և թէ զիարդ պարտ իցէ կրթել զնա և ուղղել։ Խմաստս ինչ բարոյականս և քաղաքավարականս առեալ ամ-փոփէին 'ի վճիռս պարզս՝ առ դիւրահաս իմա-ցուած, և 'ի համառօտս՝ 'ի ցոյց կամ՝ի կար-ծիս խորախորհուրդ մտաց։ Լաւ իւրաքանչիւր ոք զմի յայնցանէ ընտրէր իւր 'ի նշանակ և 'ի կանոն ուղղութեան կենաց. որպէս ոմն, Մէ-նէ դարբ. և այլ ոմն, Ծանիր զանձն՝։ Համառօ-տութիւն պահեալ առ սպարտացիս, զոյր վաղ ուրեմն 'ի պատգամն՝ զոր իմաստուէրն տայ-ին, հարցեալք յաձախագոյնս 'ի թագաւորաց և 'ի ժողովրդոց։ Սոքա կապեալք ընդ միմեանս բարեկամութեամբ, զոր հռչակ համբաւոյնս-ցա ոչ թուլացուցանէր, զայնն երբէք երբէք 'ի մի վայր՝ խօսել ընդ միմեանս զգիտութեանց և զկենցաղոգուտ իրաց[2]։

Ա ի հափառ այնր ակմբին ժողովականք էին Խաղէս միլետացի, այն որ անդստին 'ի ժամա-նակէ անտի արկ զհիմն ընդարձակագունին իմաստասիրութեան, այլ Թերևս նուազ պի-տանեգունի, Պիտտակոս միտիլենացի, Բիաս պրիէնացի, Կղեոբուլ լինդացի, Միւսոն քե-նացի, Արիզոն սպարտացի, և Սողոն աթենա-ցի երևելագոյն յամենեսին[3]։ Ղեթողացուցանէ

1 Պղատ. 'ի Պրոտագ. հա. գիրք Ա. յոգ. 40։
1. էջ 343։
2 Պլուտ. 'ի Սոզ. հա. 1. էջ 80։ Դիոգ. լայ. 'ի թագ.
3 Պղատ. 'ի Պրոտագ. հա. 1. էջ 343։ Պլուտ. անդ։

ինձ կցորդութիւն արեան և հայրենասիրութիւն անյիշատակ առնել և զ՝Նաբաբասիս, զոր հուչակ համբաւոյ նոցին ած ձգեաց 'ի խոր Ակիւթիոյ, և զոր Լչլադա՝ նախանձընդդէմ փառաց օտարաց՝ ոչ մերժէ զնա 'ի բաց 'ի խրմբէ իմաստնոցն, յորս պանծայ[1]։

Ի գիտութիւնսն, զոր Սողոն 'ի կենակցութենէ նոցին յանձն ձգեաց, յաւելոյր և զիւրոյ հանճարոյն բարեմասնութիւնս։ Օ՛ի էր նորա 'ի բնէ հանճար բանաստեղծութեան, և կրթեաց զայն մինչև ցալեւորեալ ծերութիւն, առանց մոլութեան և փառասիրութեան։ Լրբախայրիք եղեն նորա երկք զուարճականք. իսկ յայլ քերթածս նորա գոն օրհնութիւնք դից, տաղք ջատագովականք իւրոց օրինացն, և խրատք կամ կշտամբութիւնք առ աթենացիս[2]. և գրեթէ յամենեսին 'ի նոսա անստգիւտ գըտանի ըստ բարոյականին, և չքնաղ գեղեցկութիւնք հոլանեն զհանճար։ Ալսեալ 'ի ծերութեան զեգիպտական աւանդութիւնս, ձեռն էարկ 'ի նկարագրել քերթողաբար զամենայն որ ինչ յեղափոխութիւնք լեալ ընդ երեսս երկրի, և զպատերազմունս աթենացւոց ընդ բնակիչս ատլանդական կղզւոյն՝ յայնկոյս հերակլեան արձանացն, որ ապա ընկլուզաւն 'ի ծով[3]։

1 Հերմիպ. առ Դիոգ. լայ. գիրք Ա. յօդ. 41։
2 Պլուտ. 'ի Սոլ. հա. 1. էջ 80։
Դիոգ. լայ. 'ի Սոլ. յօդ. 47։
3 Պլատ. 'ի Կրիտ. հա. 3. էջ 113։

Լ,թէ վաղագոյն մինչ չև էր անցեալ զաւուրքք, զերծ յայլոց զբաղմանց՝ ձեռն արկեալ էր 'ի բանաստեղծել զկրաց, որ արձակէին զՌուիչս մնաց նորա, ընդ Հոմերի արդեօք և ընդ Լ-սիոդեայ բաժաներ զփառս[1]։

Մարթ է ստգտանել զնա այնու՝ զի էր ընչ-ատեաց, թէպէտ և ոչ ագահէր 'ի մթերել զինչս. և դարձեալ՝ զի իմաստս ինչ ստերիւրս 'ի պարկեշտութենէ 'ի կիր արկ դժպատեհս իմաստասիրի[2], և ոչ եթէր յանձին խստակրօն բարս՝ որպէս վայելէր օրէնսդրի։ Ընտել և համբոյր բնաւորութեամբն Հահաւորագոյն թերևս զսոսկական վարեր կենցաղ 'ի գործ ա-բուեստից և 'ի վայելս պատշաճ բերկրութեանց։

Բայց սակայն 'ի դէպս ինչ յոյժ քաջասիրտ և անյողդողդ գտաւ. զի նա յորդորեաց զաթե-նացիս 'ի թափել անդրէն զԱղամմնա, թէ-պէտ և խստիւ արգելեալ էր նոցա ատենաբա-նիցն չխօսել իսկ բնաւ զայնմանէ[3]։ Ընդաւել և սայտնանշան ցուցաւ անվրէպ արիութիւն նորա սաստիւ իշխանութեանն, զոր 'ի կիր էարկ ընդ առնուլ զառաջնորդութիւն աշխարհին։

Ազաւորացն զամենայն գուն գործեալ առ 'ի զերծանել 'ի հարստահարութենէ, բողոք բարձեալ խնդրելին թողութիւն առնել պար-

[1] Պլատ. 'ի Տիմ. հտ. 3. էջ էջ 79։
21։
[2] Պլուտ. 'ի Սոզ. հտ. 1.
[3] Նոյն անդ հտ. 1. էջ 82։

տեաց, և զվիճակս կալուածոց նորոգ սահմանել։ Իսկ մեծատունք զայրագինս հակառակ կային ինդրոյ նոցա, որ հաւասարէր զնոսա ընդ ռամկին, և որ աղմկեալ վրդովէր զաշխարհն՝ որպէս կարծէին։ Ի վարանս տարակուսին՝ Թոզուբիւն արար Սողոն պարտեաց ամենեցուն, և եղջ զամենայն վիճակս՝ որ բռնաբարէին զազատութիւն քաղաքացեաց, առանց բաշխից վիճակացն փոփոխումն առնելոյ՝. որով երկոքին ևս կողմանք դժկամակ եղէն՝ որպէս թէ կորուսեալ զամենայն, զի ոչ զամենայն զոր խնդրէին՝ ընկալան։ Բ. Յլիբրև Հոխք խաղաղութեամբ այնուհետև ժառանգէին զինչսն հայրենիս և զստացուածս իւրեանց, և չքաւորք զերծեալք 'ի սպառ յերկիւղէ ստրկութեան՝ տեսանէին զդոյզն կալուած իւրեանց ազատեալ յամենայն հարկաց, և զի Հարստաբութիւնք արուեստից և վաճառաշահք անդրէն 'ի վերերևէին, և հաւատարմութիւն հաստատէր վերստին, և բազմութիւն թշուառ քաղաքացոց՝ որք վասն խստութեան պարտատերոյն տարագիր 'ի հայրենեացն պանդխտեալ՝ դառնային անդրէն, տրտունջքնոցա փոխեցան 'ի գոհութիւն. և ժողովուրդն զարմացեալ ընդ իմաստութիւն օրէնսդրին յաւել և ևս զնշխանութիւնն տուեալ նմա։

Սողոնի յօգուտ 'ի կիր արկեալ զայն, արար

1 Պլուտ. 'ի Սոզ. հա. 1. էջ 87։

ուղղութիւն օրինացն Դրակոնի՝ զորս խստդրեին աթենացիք բառնալ։ Որ ինչ 'ի վերայ սպանողացն սահմանեալ էին օրէնք՝պահեցան՝, որ և իշխեն տակաւին յատեանս, ուր և անուն Դրակոնի մեծարի փառօք՝ որ վայելեն բարեբարաց մարդկութեան[2]։

Յաջողութեամբն խրախուսեալ 'ի լրումն էած Սողոն զօրէնսդրութիւնն։ Դախ զկարգ տեսչութեան աշխարհին 'ի նմա ուղղէ, և ապա սահմանէ զօրէնս՝ որք զբարեկենդանութիւն քաղաքացւոցն միախուռն պինդ ունին։ Յառաջնումն մասին միումն ևեթ ուշ կալաւ, 'ի հաստատել զհաւասարութիւն յայլ և այլ կարգս ժողովրդեան, որ կարևորն է 'ի հասարակապետութեան[3]։ Դակ յերկրորդումն կալաւ իւր կանոն ուղղութեան զիմաստս զայս, զի չիք կարգ տեսչութեան լաւագոյն քան զայն՝ յորում իմաստութեամբ բաշխիցին վարձք և պատիժք[4]։

Դան զամենայն պետութիւնս ընտրելագոյն համարեցաւ Սողոն զդամկապետութիւն. և երից այսոցիկ առաւելագոյն խնամ կալաւ, ազգախումբ ժողովոյ, ընտրութեան աւագանւոյն, և ատենի դատաստանաց։

Օգերագոյն իշխանութիւն ետ հասարա-

1 Պլուտ. 'ի Սող. հտ. 1. էջ 87։ 'Ի Սող. հտ. 1. էջ 88։
2 Դեմ. 'ի Տիմոկր. էջ 805։ 4 Կիկ. Թզթ. 15. առ Եպք. 'ի Տիմարք. էջ 261։ Բրուտոս հտ. 9. էջ 115։
3 Սոդոն առ. Պլուտարքեայ

կաց ժողովոյ՝ յոր ամենայն ու�ք քաղաքացւոյ օրէն էր մտանել՝ . և անդ սահմանէին խորհուրդք խաղաղութեան և պատերազմի , նիզակակցութեան , օրինաց , հարկաց , և ամենայն կարևոր իրաց աշխարհին [1] : Այլ քանզի յոյժ 'ի վտանգի կային այս ամենայն թողեալ 'ի կամն յեղամիտ և տիմար ամբոխին , որ անդէն 'ի խորհէին՝ մոռանայ զոր պարտէր կամել , և զոր կամէրն յետ խորհելոյ [2] , կացոյց Սողոն ուղղիչ խորհրդոց նորա զատեան չորեքարիւրոց արանց ընտրելոց 'ի քառեակ ցեղից , յորս բաժանէր յայնժամ բոլոր Աթտիկէ [3] : Սոքա էին որպէս գործակալք ժողովրդեան՝ զդէմն աղգին բերելով յիւրեանս . և մինչ չև ժողովրդեանն սահմանեալ ինչ , յանձնէր նոցա զիրան 'ի քննութիւն . և նոքա խորհեալ և քննեալ պարապով զիրսն , տային տեղեկութիւն ժողովրդեան 'ի հասարակաց ժողովն : Աթտի սկիզբն կալաւ մի 'ի գլխաւոր օրինացն , մի՛ ինչ առանց վճռոյ աւագանւոյն՝ սահմանել ժողովրդեան [4] :

Քաղաքացւոց ամենեցուն , քանզի օրէն էր նոցա մտանել 'ի ժողովս , անկ էր տալ և ըզ-

1 Պլուտ. 'ի Սոզ. հա. 1. էջ 88:
2 Արիստոտ. յզ. Հար. առ Ազիքս. գլ. 3. հա. 2. էջ 612:
3 Դիոնս. յզ. վերպ հրեշ. տակութեանէ. էջ 314:
4 Պլուտ. անդ:
5 Դիոնս. 'ի Լիպտին. էջ 541. յԱնդրոս. էջ 699: Լիբան. յԱնդրոս. էջ 696: Պլուտ. անդ: Հարպոկ. 'ի բառն Προβολή.

վարկս իւրաքանչիւր։ Այլ վասնզ 'ի վերայ կայր, զի յետ չորեքարիւրոցն տալոյ տեղեկութիւն Ժողովրդեան՝ արք անփորձք անցեալ 'ի բեմ, խոտորեցուցանէին զՀետ բանիցն իւրեանց զամբոխն։ Զմին իրի պարտ էր տպաւորագոյն 'ի միտս ռամկին զառաջին լուեալսն պատրաստել. և սահմանեցաւ զի չորեքարիւրքըն իցեն հասակեալք 'ի յիսնամենից և 'ի վեր՝։

Ի հասարակապետութիւնս ուրեք զատենախօսութեան գործ յանձն առեալ ոմանց, բազումք այն էր՝ զի զօրանային 'ի ժողովս հասարակաց քան զօրէնս. և այս յայտ 'ի փորձոյ էր[1]։ Արդ առ 'ի պատսպարել զաշխարհն յերեսաց Ճարտարութեան բանից նոցա՝ բաւական դատեցաւ լաւութիւն նոցա առ 'ի յօգուտն 'ի կիր արկանելոյ զՀանՃար իւրեանց. և սահմանեցաւ՝ զի այր ոք Ճարտարախօս, որ չիցէ վկայեալ լաւութեամբ 'ի հարցափորձի քննութեանց, մի՛ իշխեսցէ հրապարակախօս լինել զիրաց աշխարհին։ Եւ ամենեցուն օրէն էր դատախազել զՃարտարախօսսէ, որ դաւով իմն զանկարգութիւն բարուցն թագուցանէր 'ի խիստ հարցափորձին[2]։

Այս ամենայն կարգք վասն սահմանելոյ գերագոյն իշխանութեան զկամն իւր. այլ առ 'ի

1 Եպիֆ. 'ի Տիմարք. էջ 264։

2 Պլուտ. 'ի խրախճ. հա. 2.

3 Եպիֆ. 'ի Տիմ. էջ 264։

Հարպ. և Սուիդ. 'ի բառն Γραφ. էջ 154։

կատարումն նոցին՝ պաշտօնեից պէտք էին աւագաց։ Լաւ թէ ուր անկ էր զիշխանան կացուցանել, զոյս, որպէս, յորքան ժամանակս, և զինչ պայմանօք, զայսմ ամենայնէ սահմանեաց Սողոն կարգս Ճահաւորս բարեկարգ ռամկապետութեան։

Գործն այն կարևոր յանձն է աւագանւոյն, զի 'ի գերագոյն իշխանութենէ և եթ մարթէր այնմ անօրինել։ Լ.Ոլ զի եթէ չէր օրէն ժողովրդեան իշխել ըստ իւրում կարի և խնամ ունել զգործոյ պաշտամանցն, մնանէր 'ի սարկութիւն, և թշնամի լինէր աշխարհին՝, նմին իրի հասարակաց ժողովոյ եթող Սողոն կացուցանել զաւագանին, և առնուլ զհամար իշխանութեան նոցա[3]։

Ի ռամկապետութիւնս յունաստանի բազում ուրեք և չքաւորագոյնք 'ի քաղաքայնոց հասանէն աւագութեան[4]. բայց Սողոնի 'ի դէպ ևս թուեցաւ թողուլ զաւանդն զայն 'ի ձեռս մեծատանց, որք 'ի սկզբանէ ժառանգէին զայն՝։ Ի քառեակ դասս զատոյց զատտիկեցիս ըստ յաճախութեան և ըստ նուազութեան հասիցն. զի որոց հինգ հարիւր չափք

1 Արիստոտ. յդ. հասար. գիրք Բ. գլ. 12. հա. 2. էջ 336։

2 Նոյն անդ գիրք Գ. գլ. 11. էջ 350. Զ. գլ. 4. էջ 416։

3 Նոյն անդ գիրք Ե. գլ. 8. էջ 399. Զ. գլ. 2. էջ 414։

4 Նոյն անդ գլ. 12. էջ 336։

յորմէնոյ կամ ձիթոյ էին հասք՝ զնոսա յառաջին կարգն կացոյց, որոց երեքարիւր չափք՝ յերկրորդն, և որոց երկերիւր՝ յերրորդն։ Իսկ այլք՝ յորոց յոլովագոյնք չքաւորք և ագէտք էին՝ 'ի չորրորդ կարգն կային, և ոչ որ 'ի նոցանէ ամբառնայր յաւագութիւն՝. զի թէ գոյր նոցա յոյս հասանելոյ այսմ, յոյժ նուազագոյն մեծարէին զայն. իսկ եթէ հասանէին այսմ, զի՞նչ 'ի նոցանէ ակնկալէր։

Զընկերահաշտ ազատութեան, ուր իշխէ ռամիկն, կարևոր է՝ զի բարձք և պատիւք մի իցեն մշանջենաւորք, և զի վիճակաւ բաշխեսցին աւագութիւնք՝ եթէ ոչ առ հասարակ, գոնեա այնոքիկ՝ որ ոչ կարօտին բազում գիտութեան։ Սոզոն սահմանեաց նորօգել ամի ամի զաւագանին, զչլխաւորագոյնսն ընտրութեամբ կացուցանել որպէս 'ի սկզբանէ, իսկ զայլսն վիճակաւ։

Դարձեալ և վասն իշխանացն ինուզնց զբլխաւորաց, որ Աքրոնքն կոչէին և էին իրաւարարք ժողովրդեան, սահմանեաց Սոզոն՝ զի յատենէ նոցին մնալթ իցէ առ գերագոյն աստեանս բողոքել, որպէս զի մի յոյժ զօրասցին իշխանութեամբ 'ի վերայ ժողովրդեան։

1 Պլուտ. 'ի Սոզ. հա. 1. էջ 88։

2 Արիստոտ. յդ. հաս. գիրք Գ. գլ. 11. էջ 350։

3 Նոյն անդ գիրք Զ. գլ. 2. էջ 414։

4 Նոյն անդ գիրք Բ. գլ. 12։

5 Եպիֆ. 'ի Տիմարք. էջ 63։

6 Պլուտ. 'ի Սոզ. էջ 88։

Ամենայր զարդարութիւն յատեանն հաստատել։ Ի չորրորդ կարգէ քաղաքացոցն, ըստ նախապատուին իմոյ բանիս, ոչ ոք ամբառնայր յաւագութիւն։ Եւ այս մերժումն յոյժ էր բազմավտանգ յընկերահաշտ ազատութեան՝ արհամարհ կացուցանելով զառամիին[1], եթէ ոչ գոյին մերժելոցն այլ ինչ փոխարէնք, և ամենայն շահ նոցա և իրաւունք աւանդէին 'ի ձեռս մեծատանց։ Զմին իրի սահմանեաց Աստուն, ամենեցուն անխտիր ընտրել վիճակաւ 'ի դատաւորութիւն[2]։

Այս ամենայն կարգաւորութիւնք կարևորք էին առ 'ի կշիռ հաւասարութեան այլ և այլ կարգաց քաղաքացոց. այլ առ 'ի զգուշութիւն պահպանութեանն նոցա հարկ էր կացուցանել և միւս այլ ատեան, որոյ ատենակալք մինչև ցկեանս վարէին զիշխանութիւն՝ անբաժք 'ի մտտեսութենէ իրաց աշխարհին, և որոյ իմաստութիւն ակնածելի գոյր ամենեցուն։ Ատեան Երիսպագին Յաթէնս զվստահութիւն և զսէր ժողովրդոց յինքն ձգէր իմաստութիւն և ուղղութեամբ[3]։ Զմին Աստուն զինամն պահպանութեան օրինաց և զանեղծութեան բարուց յանձն արար, կացուցեալ զնա 'ի վերայ ամենայն իշխանութեան, որպէս զի զժողո-

1 Արիստոտ. յլ. հատար. գիրք Դ. գլ. 11. հա. 2. էջ 350։

2 Նոյն անդ գիրք Բ. գլ. 12. էջ 336։ Դեմոս. յԱրիստոտ. գիրք. էջ 832։

3 Մեծրա. արիսպ. գլ. 4։

վուրդն 'ի սահմանս օրինացն կալցի, և զիւրաքանչիւր ոք 'ի կարգս պարտուցն և պատշաճից։ Այլ որպէս զի պատկառելի եւս և տեղեկագոյն լիցի ատեանն այն օգտի աշխարհին, սահմանեաց՝ զի Աբրոնք, 'ի կատարել իշխանութեանն իւրեանց 'ի թիւ ատենակալաց Աբիսպագին ընկալեալ լիցին՝ խիստ քննութեամբ։ Որով ատեան Աբիսպագին և ջրեքարիւրոցն 'ի կշիռ հաւասարութեան յարակայեալ իրերաց, յապահովէին զհասարակապետութիւնն 'ի սպառնալից մրրկաց[1]։ Բանզի նա ամենաբնին դատաստանաւ զհարստահարութիւն մեծատանցն սանձահարէր, իսկ սա դատակնքաւն և սաստիւ զստահակութիւն ամբոխին։

Յաւելան և այլ օրէնք պատսպարանք առաջնոցն։ Բանզի սահմանադրութեանցս այսոցիկ մարթէր դղրդել կամ 'ի պառակտմանէ աշխարհին՝ որ 'ի բազում ժամանակաց հետէ վրդովէր զայլ և այլ կարգս ժողովրդեան, և կամ 'ի փառամոլութենէ և 'ի մենքենաւոր ջանից իւրաքանչիւրոց։ Արդ Սողոնի զառաջս առեալ չարեացն, սահմանեաց պատուհաս որոց 'ի ժամանակի խռովութեան ոչ համարձակ յայտնեսցին 'ի մի կողմն[2]. քանզի խորհեր գերահրաշ օրինադրութեամբն

[1] Պլուտ. 'ի Սող. հա. 1. [2] Նոյն անդ էջ 89։ Աբէ. էջ 88։ Գելլ. գիրք Բ. գլ. 12։

չթողուլ 'ի խուսուլութեան ժամանակին զարս լաւս 'ի փնտռակար անգործութեան, այլ խառնել զնոսա յամբոխ խուսվայոյզ մարդկանն, և ապրեցուցանել զհասարակապետութիւնն ա-ռիւութեամբ և յաղթանակաւ առաքինութեաբ։ Իսկ զքաղաքացիս, որք փառամոլութեամբ տիրապետելն կամիցին, զնոսա 'ի մահ դա-տապարտեաց'։

Դարձեալ առ 'ի յարուցանել զազգն, եթէ երբեք այլ կարգ տեսչութեան յաւերակս ընկերահաշտ աղատութեանն կանգնեսցի, հարկեցոյց զաւագանին 'ի լքանել զիւրաքանչիւր իշխանութիւն ահագին վճռովք, հրաման տուեալ քաղաքայնոց ամենեցուն սպանանել՝ ոչ միայն զբռնաւորս և զհամախոհս նոցա, այլև որ ոք յաւագանւոյն կացցէ մնասցէ յիշխանութեանն 'ի կործանել ռամկապետութեան[2]։

Ամասիկ սողոնեան հասարակապետութեանն համառօտագիծ պատկեր. արդ այժմ զքաղաքական և զատենական օրէնս նորա համառօտեցից։

Դրակոնի'ի վերայ սպանողացն սահմանեալ օրէնք, որպէս ասացի, պահեցան անփոփոխ։ Իսկ զայլ օրէնս նորա եղծ Սողոն, կամ մանաւանդ ամբեաց զխստութիւն նոցա[3], և ընդ

1 Պլուտ. 'ի Սող. հատ. 1. էջ 110։

2 Անդոկ. յոր. խորհրդ. էջ 13։

3 Լիբ. առ Դիոնիսեայ ա. գլխ. 'ի Սող. յոգ. 55։

իւրան յերիւրեալ զնոսա յարմարեաց բարուց աթենացւոցն, յամենայնի ուշ կալեալ յօգուտ հասարակաց քան իւրաքանչիւրոց[1]։ Զդ ըստ իմաստից նորա, որ նոցն և գերակատար իմաստասիրութեանն են իմաստք, երրակի դէմք են տեսութեան առն քաղաքացւոյ։ Զ, ախ առանձին իւր ման բաղկացու աշխարհին[2]. երկրորդ՝ ըստ յոլովագոյն պարտուցն առ ազգատոհմ իւր, զի և ազգատոհմք աշխարհին են[3]. և երրորդ՝ ըստ ուղղութեան կենացն, զի յօդացեալ է քաղաքաժողով միաբանութեան՝ որոյ անեղծ բարք կայկայեն զպետութիւնն։

Ա. Զ՝ստ առաջնում տեսութեան, օրէն է ամենայն ումեք քաղաքացւոյ պահանջել յատենի զվրէժ նախատանաց անձին։ Զ՝ու եթէ չքաւոր ոք է, և չիցէ բաւական ձեռն նորա՝ի հատուցանել զտուրս դատախազութեանն, արձակեալ է՝ի պարտուց[4]։ Զսկ եթէ աննշան ոք է, և վտանգ կայցէ նմա յերեսաց անօրէնութեան մեծատանց և հզօրաց, պաշտպան կացցէ՝ն նմա ամենայն կուսակիցք ընկերահաշտ ազատութեան, և ամենեքին իսկ՝ զորս ուղղութիւն և նախանձ և վրէժխնդրութիւն հայրենեաց վառէ ընդդէմ հարստահարողին՝ի թշնամութիւն, իշխանութիւն առեալ նո-

1 Դեմոս. ԱՆդրոս. էջ 703։
2 Արիստոտ. յղ. հան. գիրք Ը. գլ. 1. էջ 450։
3 Պղատ. յղ. օր. գիրք ԺԱ. էջ 923։
4 Խոսկ. ի Ղաք. հտ. 2. էջ 547։

ցա 'ի գերազանց օրինացն՝ որ հրաման տայ ամենայն ուժիւք քաղաքացւոյ եկակոչ առնել, որ ոք զտղայ կամ զկին և կամ զայր ազատ կամ զստրուկ թշնամանիցէ՝ ։ Այսու օրինակաւ բոլոր աշխարհագատ զզրկումն յետին քաղաքացւոյն պատուհասէր որպէս եղեռն ընդդէմ աշխարհին գործեալ, գալով չափ բանին՝ թէ Օրուութիւն սակաւուց, իսկ օրէնք բոլորեցունց են պատսպարան [1] ։ Չէ այս է զոր ասէն Սողոն, զի ոչ գործէին զրկանք 'ի քաղաքի՝ եթէ ամենայն քաղաքացիք զչարեին ընդ այն որպէս զրկեալքն [2] ։

Զատութիւն քաղաքացւոյ այնպէս մեծ և պատուական է, զի օրէնք ևեթ տիրեն նմա. ոչ ինքն իսկ տեր ազատութեանն վասն պարտեաց և կամ վասն այլ իրիք պատճառանաց կարէ վաճառել զայն [3], կամ իշխել ազատութեան որդւոցն ։ Այլ Սողոն հրաման ետ հօր զդուստր և եղբօր զքոյր իւր վաճառել, եթէ հոգաբարձու նորա իցէ [5], և ականատես լեալ լկտութեան նորա *։

Զնձնասպանն մեղանչէ աշխարհին, զրկեալ զնա 'ի միոջէ 'ի քաղաքացոցն [6]. նմին իրի մե-

1 Դեմոս. 'ի Մեդ. էջ 610։ Խոսկր. 'ի Ղոք. հա. 2. էջ 548։ Պլուտ. 'ի Սող. էջ 88։

2 Դեմոս. անդ։

3 Պլուտ. 'ի Սող. էջ 88։ Սոսբ. Ճառ. 41. էջ 247 և 268։

4 Պլուտ. անդ. էջ 86։

5 Նոյն անդ. էջ 91։

* Ի յետ կոյս մատենիս 'ի տեղեկութիւնսն. Թիւ. Գ։

6 Արիստոտ. յդ. բարոյ. գիրք Ե. գլ. 15. հա. 2. էջ 73։

կուսի 'ի մարմնոյն Թագի ձեռն նորա [1], և այն նախատինք էն նմա։ Իսկ հայրապանին զինչ պատուհաս սահմանիցեն օրէնք. և ոչ ինչ։ Զանգի Սողոն առ մեծ և սարհաւիրս արկանելոյ, յանհնարից զոՀիրն զայն վարկաւ [2], և լուռ եղև զայնմանէ։

Ներակատար լինէր ազատութիւն քաղաքացւոյ, եթէ անարգէր անպատուհաս պատիւ նորա։ Նմին իրի և 'ի վերայ զրպարտչաց սահմանեցան պատուհասք, և ամենայն ումեք օրէն էր գատախազել զնոցանէ [3]. Նմին իրի և արգելք 'ի վերայ եղան՝ մի չարահամբաւել զյիշատակ վախճանելոյ [4]։ Հանճարեզ քաղաքավարութեան անկ է, ոչ միայն ցաւէժացուցանել զատելութիւն յազգատոհմն, այլ և չթողացուցանել զի և յետ մահուն ոք ներքոյ անկցի թշնամանաց, զոր մարթէրն նմա ցրել 'ի կենդանութեան։

Այր քաղաքացի ոչ է իշխան անձին պատուոյ, զի չէ և կենացն տէր։ Նմին իրի որ ժանտացուցանէն զպատիւ իւր, զրկեն զնա օրէնք 'ի բազում յառաջամանութեանց քաղաքացւոյ։

Այլ ուրեք նուաստ քաղաքացին վկայեալ

1 Եպիֆ. 'ի Կաբսիպ. էջ 467։ Պեսիա. առասիկ. օր. էջ 522։

2 Կիկ. 'ի Ռոս. գլ. 25.

հտ. 4. էջ 72։ Դիոդ. լայ. 'ի Սող. յոգ. 59։

3 Պեսիա. անդ էջ 535։

4 Պլուտ. 'ի Սող. էջ 89։

անշան բաղդիւն, և զարհուրեալ 'ի զօրութենէ ոսոխացն, և յերկարաձիգ քննութեանց դատաստանի, և 'ի վտանգացն՝ զոր նոքա ըզհետ իւրեանց առեալ ձգեն, լաւ համարի ըզհարստահարիչն քան զդէմ ունել հարստահարողին։ Իսկ օրէնք Աստուծոյ բազում պատրսպարանս մատուցանեն ընդդէմ բռնութեան և անիրաւութեան։ Եթէ գողզինչս ուրուք գողասցի՝, կարէ տէր ընչից քարշել զնա յատեան մետասանից բանտապետացն, որոց 'ի շրթայս զնա արկեալ մատնեն 'ի դատաստան։ Այլ եթէ ամբաստանեալն անպարտ արձակեսցի, դատախազն պարտաւորի 'ի տուգանս։ Իսկ եթէ դատախազն չկարիցէ ունել զյանցաւորն, դիմէ առ Ն. ըքոնս, և նոքա 'ի ձեռն նուիրակաց ձգեն զնա յատեան։ Արձեալ կարող է դատախազն և հրապարակագոյժ զյանցաւորն ամբաստանել. և եթէ խիթայցէ՝ զի գուցէ յանցաւորն անպարտ արձակեսցի, և ինքն 'ի տուգանս մատնեսցի տուժել զհազար դրամակշիռսն, յատեան իրաւարարացն զնա ամբաստանեսցէ. զի յայնժամ հասարակաց լիցի դատն, և դատախազին չըկայցէ վտանգ տուգանաց։ Ն. յսպէս Աստուծոյ ըզտրուպ քաղաքացին զօրաւոր արար, և զամենայն հարստահարութիւն դիւրընկալելի։

Յոլովագոյնս 'ի յանցանաց, որ վրդովեն

։ Դեմոս. յԱնդրոս. էջ 703։

զապահովութիւն քաղաքացւոյ, մարթ է ա-
ռանձին կամ հրապարակաւ ամբաստանել։
Յառաջնումն դատախազն համարի որպէս մի
ոք 'ի բազմաց, նմին իրի և հատուցումն հա-
մեմատ առանձնակի յանցանացն չափի. իսկ
յերկրորդումն զդէմս քաղաքացւոյ բերէ յին-
քեան. վասն որոյ և յանցանքն ծանրանան։
Սողոն զհրապարակագոյժ ամբաստանութիւն
դիւրացոյց, զի կարևորագոյնք են յընկերա-
հաշտ ազատութեան քան ամենայն ուրեք[1]։
Օ՛ի եթէ չէր սանձս այս ահարկու, ազատու-
թիւն հասարակաց լինէր հանապազ 'ի վտան-
գի՝ ազատութեամբ իւրաքանչիւրոց։

Բ. Ցեսցուք արդ ո՛ր իցեն առանին յոլովա-
գոյն և ս պարտք քաղաքացւոյ առ ազգատոհմ
իւր։

Ի բարեկարգ հասարակապետութեան ոչ է
պարտ ժողովրդեան ոչ յոյժ բազումս լինել,
և ոչ կարի սակաւս[2]. փորձիւ իսկ վկայեալ, զի
և առաւելն յոյժ քան զերկու բիւր մարդկան,
որ կարող իցեն զէն առնուլ, և նուազն և ս քան
զայն ինասակարք են[3]։ Զ՚ի պահել զկշիռ
չափոյ բազմութեանն, Սողոն ընդ այլ հնարան

1 Մաքեաւէլլի յառաջին տասանեակն Լիւ. գիրք Ա. գլ. 7 և 8։

2 Պղատ. յղ. հաս. գիրք Դ. հա. 2. էջ 423։ Արիստոտ. յղ. հաս. գիրք Է. գլ. 4. էջ 430։

3 Նոյն 'ի Կրիտ. հա. 3. էջ 112։ Դեմոս. յԱրիստոգ. էջ 836։ Պլուտ. 'ի Պերիկղ. հա. 1. էջ 172։ Փիլոք. 'ի պարապ. Պինդ. ոլիմպ. Թ. տող 67։ Պարապ. Արիստոտ. 'ի Պիծական տող 716։

յաւել և պայմանս դժուարինս յոյժ՝ եկաց ընդ բնիկս համարելոյ[1]։ Դարձեալ և առ 'ի խափանել զվտանգ անձեռ լինելոյ բնիկ ազգատոհմից, սահմանեաց զի տանուտերանց վախճանելոց յաջորդեսցեն որդիք հարազատք կամ որդեգիրք. և եթէ ոք անորդի մեռանիցի, մի յեկամուտ ժառանգացն կալցի զանուն նորա, և կացուցեսցէ զազգատոհմն[2]։

Այլ ազանոյն յանձն է ոչ միայն հոգ ազգատոհմից՝ զի մի անտերունչ մնասցեն առանց տանուտեառն, այլ և խնամ ունել զորբոց և զայրեաց՝ որ յերկունս իցեն, և զգաստերաց անեղբարց՝ որոց անկ է հայրենի ժառանգութիւնն[3]։

Յորդեգիրս լեալ ոք ումեք՝ կարող է դառնալ անդրէն յազգատոհմ իւր, բայց թողլով փոխանակ զորդի իւր բաւական'ի ընուլ զպարտս որդեգրութեանն։ Դարձեալ և սա կարէ մեկնել 'ի բաց, թողլով զորդի իւր կամ զկարգ որդի փոխանակ իւր[4]։

Այլ ամենայն նախահոգ զգուշութիւնք չէին բաւական։ Վանդի 'ի բաժանմանէ ևս առն և կնոջ և յատելութենէ նոցա ընդ միմեանս՝ հասանէին ազգատոհմից սպառուածք։ Այսն որոյ հրաման ետ բաժանելոյ ամուսնաց, այլ այնպիսի պայմանաւք՝ զի մի յանախ

1 Պլուտ. 'ի Սոլ. էջ 91։ 3 Նոյն 'ի Մակարտ. էջ 1040։
2 Դիոնս. 'ի Լէոր. էջ 1047։ 4 Նոյն 'ի Լէոր. էջ 1045։

պատահեսցեն բաժանմունք[1]։ Լցեալ այր ըղկին իւր կամիցի արձակել, դարձուսցէ 'ի նա զօժիտն և կամ տացէ նմա զուռնին սահմանեալ յօրինաց[2]. իսկ եթէ կինն խնդրիցէ զարձակումն, յատեան ելցէ, և անձամբ մատուսցէ դատաւորաց զաղերս[3]։

Կարևոր է յընկերահաշտ աղատութեան ոչ միայն պահպանութիւն ազգատոհմից, այլ և զի ստացուածք մի առ սակաւս ոմանս ժողովեսցին[4]։ Զի եթէ համեմատ այսոքիկ բաշխիցին, իւրաքանչիւր որ դոյզն ինչ մասն կալուածոյ ժառանգեալ՝ զբաղի յայն, և ոչ ևս խառնի 'ի հերձուածս ամբոխին։ Զմին երբ օրէնսդիրքն ոմանք արդելին չվաճառել զիւրաքանչիւր ստացուածս առանց կարևոր հարկի[5], կամ տալ զայնոսիկ 'ի գրաւ առ 'ի հայթայթել զպէտսն[6]։ Յոտորուն յօրինաց ասի բաւական եղև վեր 'ի վայր տապալել զհաստատութիւն պետութեանց ոմանց[7]։ Զայսմ և Սողոն զգուշացեալ, չափ և սահման դնէ ստացուածոց իւրաքանչիւրոց[8], և այր ուրուք

1 Պետիա. ատտիկ. օր. էջ 459։

2 Դեմոս. 'ի Նեէր. էջ 869։

3 Անդոկիդ. յԱղկիբ. էջ 30։ Պլատ. յԱղկիբ. հտ. 1. էջ 195։

4 Արիստոտ. յդ. հասար. գիրք Գ. գլ. 11. հտ. 2. էջ 375։

5 Նոյն անդ գիրք Բ. գլ. 7. էջ 323։

6 Նոյն անդ գիրք Զ. գլ. 4. էջ 417։

7 Նոյն անդ գիրք Ե. գլ. 3. էջ 388։

8 Նոյն անդ գիրք Բ. գլ. 7. էջ 323։

'ի քաղաքացւոց զՀայրենի ստացուածն շռայ-
լութեամբ վատնեալ իցէ, զրկէ զնա 'ի մանէ
իրաւանցն [1];

Եւ որ քաղաքացի, որոյ իցեն որդիք, չկարէ
այլուստ թողուլ զինչն 'ի ժառանգութիւն.
իսկ եթէ անորդի իցէ, և անկտակ մեռանիցի,
մերձաւորագոյն յազգականացն ժառանգէ ըզ-
նա [2]։ Իսկ եթէ դուստր միամօր թողուցու
ժառանգ իւր, մերձաւորագունի ազգականին
անկ է առնուլ զնա կնութեան [3]. քայց ատեան
դատաստանի հաստատէ զՀարսանիսն, զի մի
ոք յետոյ փորձեսցի յափշտակել 'ի նմանէ ըզ-
ժառանգութիւնն։ Եւ այնպէս անյեղլի են
մերձաւորագունի ազգականին իրաւունք, զի
եթէ դստեր՝ ամուսնացելոյ օրինօք ընդ առն
քաղաքացւոյ՝ հասանէ ժառանգել զՀայրն մե-
ռեալ անորդի, մարթ է նմա լուծանել զառա-
ջին հարսանիսն, և պահանջել զնա իւր 'ի կը-
նութիւն [4]։

Իսկ եթէ մերձաւորագոյն յազգականացն
անցեալ իցէ զաւուրքք, և անբաւական յոր-
դէծնութիւն, լուծանէ ամուսնութեամբն
զօրէնս պահպանութեան ազգատոհմից, և
զեղծանի օրինօք պահպանութեան ստացուա-

1 Դիոգ. լայ. 'ի Սող. յոգ. 55։
2 Դեմոս. 'ի Մակարտ. էջ 1036։
3 Պետրա. ատտիկ. օր. էջ 441։
4 Նոյն անդ էջ 444։ Հեբրայգ. 'ի Սաղմաս. գիրք Գ. գլ. 15։

ծոց աղգատոհմին։ Վասն որոյ Սողոն 'ի պատուհաս կրկնակի օրինազանցութեան նորա հրաման տայ կնոջն ընդ մերձաւորագոյն ազգականի առնն լինել կնութեան[1]։

Բայց ամին օրինակի և գուստր միամօր կամ անդրանիկ 'ի քորս իւր, որք 'ի ծնողաց և ջաւոր, կարէ բռնադատել զմերձաւորագոյն ազգական իւր յամուսնութիւն, կամ պահանջել 'ի նմանէ զօժիտ։ Այլ եթէ նա չառնուցու յանձն, դատաւորին պարտ է ստիպել զնա. և եթէ ոչ ստիպեսցէ, հազար դրամակշիռ տուժեսցի[2]։ Բայց այսմ օրինաց և ժառանգն եկամուտ չկարէ խնամակալ լինել որբոց, և ոչ խնամակալ որբոցն առնուլ զմայր նոցա կնութեան[3]. դարձեալ և եղբօր օրէն է առնուլ կընութեան զքոյր իւր համահայր, այլ ոչ զհամամայր[4]։ Բանդի վտանգ է խնամակալուին առ խնդիր շահու, և խորթացելոյ մօրն, զինչս որբոց իւրեանց յինքն գրաւելոյ. և եղբօր ընդ համամօր քեռ ամուսնացելոյ զոյ վտանգ միանգամայն ժառանգելոյ զստացուածս հօրն և զառաջնոյ առն մօր իւրոյ[5]։

Այս ամենայն օրինադրութիւնք Սողոնի

1 Պլուտ. 'ի Սող. էջ 89։
2 Դեմոս. 'ի Մակարտ. էջ 1036։
3 Գիոդ. լայ. 'ի Սող. յոդ. 56։
4 Կուռ. Նեպ. 'ի յոջքն. և 'ի կիմ։ Պլուտ. 'ի Թեմիս. էջ 128. 'ի կիմ. էջ 480։ Պեռիա. ատտիկ. օր. էջ 440։
5 Մոնթեսքիէ գիրք Ե. գլ. 5։

յաղագս յաջորդութեան ցեղից, և կտակաւ թողլոյ զժառանգութիւն որդւոց կամ օտարաց, 'ի մի ինչ բերին։ Այլ ասասանօր զկայ առեալ՝ պարտ է մեզ նկատել զօրէնսն, որ հրամայեն անորդի վախճանելոյն՝ թողուլ ում և կամիցի զժառանգութիւն իւր։ Լղեն և լիցին իսկ իմաստասէրք, որ պարսաւիցեն զօրէնս զայս, իբր հակառակ իմաստից իսկ օրէնսդրին[1]. բայց այլք արդարացուցանեն զայն յաւելուածով պայմանացն և բարւոյն դիտաւորութեամբ։ Օ՛ի անվաւեր համարի զկրտակ, եթէ կտակագիրն ծերութեամբ կամ ախտիւ հիւանդութեան ընկնեալ իցէ, կամ 'ի կնոջէն սադրեալ, կամ 'ի շղթայս արգելեալ, և կամ զառանցանաց մտաց կարծիս ինչ տուեալ[2]։ Արդ առանց այսոցիկ զիարդ մարթիցի ընտրել ումեք զօտար ոք իւր 'ի ժառանգութիւն, եթէ չիցեն նորա պատճառք զիւրսն անտես առնելոյ։ Այլ ուրեմն առ 'ի փոյթ և 'ի ջանս լաւութեան ազգականացն[3] ետ Աղոն քաղաքացւոց զաղատութիւնն զայն՝ որ էր նոցա 'ի սկզբանէ. զոր և ընկալան նոքա ցնծութիւնք[4], և օրէնքն ինքնին չէին առեալք չարեաց։ Մանաւանդ զի պարտ էր կտակագրին զժառանգն օտար առնուլ իւր յորդեգիրս[5]։

1 Պղատ. յղ. օր. գիրք ԺԱ. էջ 922։ Մոնթ. գիրք Ե. գլ. 5։
2 Դեմոս. 'ի Ստեփ. Բ. էջ 984։
3 Նոյն 'ի Լեպտ. էջ 556։
4 Պլուտ. 'ի Սող. էջ 90։
5 Պեռխտ. ատտիկ. օր. էջ 479։

Որոնք են՞ առ Եգիպտացիս իւրաքանչիւր ումեք տալ զհամար իւրոյ բաղդին և զհասիցն[1]. և օրէնքս այս կարևորագոյնք են յընկերահաշտ ազատութեան, ուր ոչ է պարտ ժողովրդեան պարապորդ կալ, և ոչ անիրաւութեամբ պաՀարել զկեանսն[2]. և կարևորագոյնք ևս 'ի գաւառի՝ ուր ամուլ է երկիրն, և աշխատութեամբ և ՀարտարութեամբՀարկ է ընուլ զթերին[3]։ Սմին իրի զանգործութիւն 'ի նախատինս եդ Սողոն[4], և սահմանեաց ատենի Արիսպագին քննել՝ ի՛ւ իւրաքանչիւր ոք ըզկեանսն հայթայթիցէ. և հրաման ետ ամենեցուն 'ի ձեռնարուեստս պարապել. և որ ոք անփոյթ արասցէ կրթել զորդի իւր 'ի մի ինչ յարուեստից, մի՛ ծերատածեսցի 'ի նմանէ[5]։

Գ. Նայ մեզ զկարևորագոյնս յօրինադրութեանցն Սողոնի բարոյականս յիշատակել։

Հանգոյն Դրակոնի սահմանեաց և բազում օրէնս զպարտուց քաղաքացւոյ, և մանաւանդ զդատիարակութենէ մանկտւոյն[6]։ Զ ամենայն ինչ նախահոգ զգուշութեամբ օրինադրէ, զհասակ մանկտւոյ՝ յորում պարտ է նոցա կրթել 'ի վարժեարս հասարակաց, և թէ որպի-

1 Երոդ. գիրք Բ. գլ. 177։ Դիոդ. գիրք Ա. էջ 70։
2 Արիստոտ. յզ. հաս. գիրք Զ. գլ. 4։ Մոնթեսքիէ գիրք Ե. գլ. 6։
3 Պլուտ. 'ի Սող. էջ 90։
4 Դիոդ. լայ. 'ի Սող. յոգ. 55։ Պողիտև. գիրք Ը. գլ. 6. յոգ. 42։ Դեմոս. յԵւբուլ. էջ 887։
5 Պլուտ. անդ։
6 Եպին. 'ի Տիմարք. էջ 261։

սիք ոմանք վարժապետք պարտին լինել, և որ-
պիսիք մանկածուքն՝ որ ընդ նոսա կայցեն հա-
նապազ, և թէ յո՞ր ժամ բանայցեն և փակեա-
ցին վարժոցք։ Լաւ առ 'ի չտալ մուտս չարու-
թեան յօթևանս անդր անմեղութեան, յաւե-
լու մահապարտ առնել որք 'ի սրբարան անդր
'ի ժողովեստ մանկանց առանց հարկի մտա-
նիցեն, և զմի յատենից տեսուչ պահպանու-
թեան կարգացս այսոցիկ կացուցանել[1]։

Ընդ հասանել նոցա յարբունս, սահմանել
անցանել 'ի կրթարանս. և անդ զնոյն կարգս
անեղծութեան բարուց օրինադրել, 'ի յոռի
օրինակաց և 'ի հրապուրանաց պարսպել զնո-
սա։ Լաւ ըստ արագափոփոխ յաջողդութեան
սխտիցն նոցա ընդ հասակին, բազմացուցանել
զսպառնալիս և զպատուհասս, վարձս առաքի-
նութեանց, և նախատինս յոռութեանց սահ-
մանեալ[2]։

Զանգի սահմանել որդւոցն 'ի մարտի՝ կեալ
յընչից հասարակաց[3], և վաստակաւորաց աշ-
խարհին՝ հրապարակաւ պսակել։ Սակ այր քա-
զաքացի եղծագործութեամբ չարահամբաւ
եալ, զինչ կենաս և վիճակեալ լցել, և իւ և
է հանճարով գերազանցեալ, անկցի 'ի քրմու-
թենէ իսկ և յատենակալութենէ և յաւա-

1 Նաբեն. 'ի Տիմոթ. էջ 564։
2 Դեմոս. 'ի Լեպտին. էջ 261։
3 Դիոդ. լայ. 'ի Սոզ. յոդ. 55։

գութենէ, և 'ի ժողովոյ հասարակաց 'ի բաց մերժեսցի։ Մի հրապարակախօսել կարասցէ, մի պատգամաւորել, և մի դատաւոր բազմել յատենի. և եթէ իշխեսցէ 'ի մի յայսցանէ, դատապարտեալ յատենի՝ կրեսցէ զօրինաւոր պատիժս պատուհասիցն[1]։

Մի ումեք 'ի վատաց, որ խուսեն 'ի զինուորութենէ, և կամ դժպատեհ ինչ գործով անարգեն զայն, ներեսցի վասն աւագութեան և վասն զինչ և իցէ պատճառանաց յանցաւորին. այլ պատժեսցի հրապարակագոյժ նախատանաք և աշխարհօրէն դատախազութիւն, որպէս զի նախատինքն սպառնացեալ յօրինաց արհաւիրս մեծամեծս արկցեն 'ի քաղաքացիս քան զզէնս թշնամեաց[2]։

Լքելու և զամենայն փափկութիւն և ըզքնքշանս արանց[3]. և զկանանց, որոց մեծ է զօրութիւն 'ի վերայ բարուց, զսպէ զհամարձակութիւն[4]. և պարտս 'ի վերայ դնէ որդւոց՝ ծերատածել զծնողս իւրեանց[5]։ Բայց որք 'ի պառնկութենէ ծնեալ իցեն, զնոսա ազատս առնէ 'ի հայրախնամ պարտուցն. զի ոչ ինչ աւելի քան զնախատինսն առ 'ի հօրէ ժառանգեն[6]։

Ընդհանրութեան բարուց օրինակք բարեաց

1 Եպիֆ. 'ի Ցիմ. էջ 263։ 4 Պլուտ. 'ի Սոզ. էջ 90։
2 Նոյն 'ի Կաեսիլ. էջ 436։ 5 Դիոգ. լայ. 'ի Սոզ. յոգ.
3 Աթեն. գիրք ԺԵ. էջ 687։ 6 Պլուտ. անդ։

էն պատասպարանք, իսկ օրինակս բարեաց ա-
ւագանուցն է տալ. զի որքան 'ի բարձուէ ան-
կանին, այնքան առաւել տպաւորին։ Պակա-
նութիւն ռամկին դիւրաս սանձահարի, և 'ի
խաւնաղանջն ևեթ Ճարակի, ոչ երբեք 'ի
նուաստից առ վերս գերաստիճանեալ. այլ
տիրեալ միանգամ 'ի բարձունս՝ ուր իշխանու-
թեան է կայեան, սաստիկ ևս քան զօրէնս ուժ-
գնութեամբ 'ի խոնարհ վայրաբերի։ Որպէս
զի մարթի աներկիւղ տալ վնիս, զի բարք ժո-
ղովրդեան զբարուց իշխանին կախեալ կան[1]։

Ոչ ինչ նուազ վայելչութիւն և սրբութիւն
կարևոր համարէր Սողն 'ի տեսչութիւն ռամ-
կապետութեան քան 'ի պաշտօն բագնաց։
Այսմն իբրև խիստ քննութիւնքն և երդմունք և
համարք պահանջեալք յամենեցունց, որք էին
կամ եղեն յիշխանութեան։ Այն սակս և օ-
րէնքն յամր պատուհասելոյ զռամիկն, իսկ զա-
ւագանին նոյնհետայն[2]։ Որոյն աղագաւ և
ահարկու վնիս մահապարտութեան 'իշխա-
նին, որ գինեհարեալ և ապա 'ի հրապարակ
ելանիցէ՝ զօրէնս պատուոյն արկեալ զան-
ձամբ[3]։

Այս զի երկարեմ. ատեանն ևեթ՝ որում
յանձն եղև տեսչութիւն բարուց, այն՝ որ ա-

1 Խոկ. առ Դիկոկղ. հա. 1. էջ 168։
2 Դեմոս. Ամբիտոդ. էջ 845 Ա։
3 Դիոդ. լայ. 'ի Սող. յօդ. 57։ Պեսիա. ատտիկ. օր. էջ 240։

հաւորագոյն կշտամբիչն է չարաբարոյից խըստակրօնութեամբն իւրով, յայտ առնէ՝ զի Սողոն հաստատագոյն նեցուկ ամրութեան օրինաց համարէր զանեղծ բարս։

Այս է բովանդակութիւն օրինադրութեանցն Սողոնի. քաղաքական և ատենական օրէնք նորա համարեցան յամենայն ժամանակի պատգամք առ աթենացիս, իսկ առ այլ ազգս օրինակ նմանութեան։ Խազում պետութիւնք Եկլադայ ընկալան զնոսա իւրեանց յօրէնս[1]. և 'ի խորոց Իտալիոյ հռոմայեցիք, պարտասեալք յառտնին հերձուածոց, կարդացին ըզնոսա իւրեանց յօգնութիւն[2]։ Եւ վասն զի հարկ ժամանակին ստիպէ զպետութիւնս 'ի փոփոխմունս ինչ օրինաց, սահմանեաց Սողոն և նախահոգ զգուշութիւնս զկարև որ փոփոխմանց՝ որպէս յիւրում տեղւոջն ասասցուք, որպէս զի մի ՀԷասակարքն 'ի ներքս սպրդեալ մոռանիցեն փոփոխմունք։

Կարգ տեսչութեան աշխարհին, զոր օրինադրեաց Սողոն, կերպարանափոխ գտանի լեալ այժմ բոլորովին։ Եւ զինչ նորանշան փոփոխութեանս պատճառք. թերութիւնք օրինադրութեանցն արդեօք, եթէ արկածք անակընկալք։ Զկարևոր խնդրոյս տաց զպատճառսն՝

1 Դեմոս. 'ի Ցիմարք. էջ 805։
2 Լիւ. գիրք Դ. գլ. 31։
3 Ցիշատ. բանասիր. հա. 12. էջ 42։

ուսեալ 'ի յոլովից ոմանց քաջահմուտ աթենացւոց, այլ 'ի դէպ ևս տեղւոջ՝ յետ պատմելոյ զյեղափոխութիւնս աշխարհին յաւուրցն Սողոնի մինչև ցարշաւանն Պարսից Լիդիադա։

Լաւ որպէս զի մի ահիւ յաւեժական լծոյն սարտնուցուն աթենացիք, ժամանակ իշխանութեան օրինացն սահմանեաց Սողոն հարիւր ամ։ Ուամիկն և աւագանին և Բ.բծոնք երդմամբ ընկալեալ զօրէնսն, արձանագրեցին զնոսա 'ի սիւնս փայտեղէնս, զետեղեալ զնոսա նախ 'ի միջնաբերդին. և ամբառնային սիւնքն յերկրէ մինչև 'ի ձեղունս յարկին՝, և դիւրաբար շրջեալ զառանցիւք՝ տային 'ի տեսիլ զամենայն մատեան օրինացն։ Ընտի ապա փոխեցան սիւնքն 'ի Պրիտանիոն, և ապա յայլ տեղիս, ուր ամենեցուն օրէն է և դիւրամատոյց՝ որոց վերծանելն կամիցին զցանկալի արձանագրութիւնս ազատութեան իւրեանց[2]։

Բ.յնուհետև պարապ առեալ ամենեցուն խոկալոյ 'ի նոյնս, զեղոյր զօրէնսդրաւն համբոխ ժիտ և դատարկախօսդ, և նեղելին զնա 'ի հարցուածս, և 'ի խնդիրս խորհրդոյ, 'ի գովեստ կամ 'ի սպգիւտ օրինացն։ Կէսք թախանձէին զնա 'ի մեկնել ինչ ինչ յօրինացն, որ նո-

1 Սառուգաբ. մատեան 'ի բառն Ա՛ՀՅՈՎ.

2 Պլուտ. 'ի Սոլ. էջ 92։ Աւլ. Գելլ. գիրք Բ. գլ. 12։ Պոլիտ. գիրք Ը. գլ. 10. թիւ 128։ Ալեսրա. ատտիկ. ընթերց. գիրք Ա. գլ. 22։ Պեսիտ. յոլջն. ատտիկ. օր։

ցա երկդիմի տային խմացուածս. և այլք յաւելուածս ինչ խնդրէին առնել յօրէնսն, և մեղմել ինչ կամ 'ի բաց բառնալ։ Սպառեցին հնարք հեզութեան և երկայնմտութեանն Սողոմի, գիտաց զի ոչ այլ ազգ մարթէր հաստատութիւն առնուլ օրինացն՝ բայց ժամանակաւ, և խնդրեաց հրաման 'ի բաց կալոյ յաշխարհէն զամն տասն։ Այլ երդմամբ արարեալ զաթենացիս[1] յաշխարհաժողով ասեն՝ մի ինչ փոփոխումն առնել օրինացն մինչև 'ի դարձ իւր անդրէն[2], մեկնեցաւ 'ի բաց։

Այլ յաձախելը նա Այգիպտոս առ քուրմն. և քանզի համարին նոքա զարձանագիրս ազգաց և ազանց 'ի ձեռին ունել, 'ի միումաւուրց լսելով 'ի նմանէ զհին աւանդս Հելլենաց, մի ոմն 'ի նոցանէ սաստեալ 'ի նա ասէ. Ով Սոլոն, Յոյնք միշտ մանկտի էք, չև ևս ժամանակին զգիտութիւն ձեր ալևորեալ[3]։ Այլ 'ի Կրետէ թագաւոր ոմն, փոքու գաւառի իշխան, աշակերտեցաւ նմա յուսումն առաջնորդութեան. և մի 'ի քաղաքաց կոչեցաւ յանուն նորա, 'ի նմանէ ընկալեալ զբարեկենդանութիւն[4]։

Այլ դարձաւ Սոլոն յԱթենս մինչ ահա աթենացիք անկանէին վերստին յանիշխանութիւն

1 Պլուտ. 'ի Սոլ. էջ 92։ էջ 22։
2 Երոդ. գիրք Ա. գլ. 29։ 4 Պլուտ. 'ի Սոլ. էջ 93։
3 Պլատ. 'ի Կրիտ. հտ. 3.

թիւն՝։ Զ ի ատելութիւն երբեակ խմբից քաւ-
զաքացեաց, յորս՝ի բազում ժամանակաց հեր-
ձեալ պառակտեր աշխարհն, սանձահարեալ
առ ժամանակ մի յաւուրս օրէնսդրութեանն՝
սատակագոյն ևս՝ի մեկնել օրէնսդրին գրգռեր։
Ի մի ինչ ամենեքին միաբանեին, ՝ի փոխել
զկարգ աշխարհին. ոչ այլ ուստեք դրդեալք
յայն՝ բայց յանխաղաղասեր մտաց, և ոչ վասն
այլ իրիք՝ բայց առ կեղակարծ յուսոյ։

Սոդոն բազում մեծարանօք ընկալեալ՝ի նո-
ցանէ, խորհեր՝ի դէպ ժամանակին ցածուցա-
նել զհերձուածսն անլուելիս։ Համարեցաւ իւր
՝ի սկզբանն հզօր զօրաւիգն զՊիսիստրատ, որ
առաջնորդ կացեալ ռամկին՝ վրէժիմդիր զան-
ձին ցուցանէր հաւասարութեան քաղաքա-
ցւոց, և ոխերիմ թշնամի նորաձևութեանց՝ ո-
րոց մարթեր եղծանել զայն։ Բայց վաղ ծա-
նեաւ, զի խորամանկ քաղաքավարութիւն ընդ
չարաբուեստ բարեսիրութեամբն ծածկեր զան-
պայման փառամոլութիւն։

Ել ոք առաւել քան զՊիսիստրատ հրապոյրս
ողբանաց երբեր յանձին՝ի գերել զմիտս։ Ցոհմ
ազնուական[2], փարթամ մեծութիւն, արիու-
թիւն՝ի բազում դէպս պայծառացեալ[3], կեր-
պարան դիմաց պատկառելի[4], համոզող Ճար-

1 Պլուտ. ՝ի Սոլ. էջ 94։
2 Երոդ. գիրք Ե. գլ. 65։
3 Նոյն գիրք Ա. գլ. 59։
4 Աթեն. գիրք ԺԲ. գլ. 8. էջ 533։

տարխսսութիւն՝[1] որ ողորմիչ ևս քաղցրաձայն բարբառուն էր[2], և միաբ Ճոխայեալ գեղեցկութեամբք՝ որ բնութեանն են պարգևք, և գիտութեամբք՝ որ վարժիցն արդասիք[3]։ Յորոշ ոք դարձեալ զՀոյլս ախտից հանգոյն Պիսիտրատեայ սանձահարեաց, և հանդէս արար նայապէս առաքինութեանցն, այնոցիկ իսկ՝ զորոց զկերպարանս ևեթ ունէր յանձին[4]։ Յորեէք իրացն ցուցին, զի երկարաձիգ առաջարկութեանց կատարումն ոչ իւիք այնպէս յաջողէ՝ որպէս հեզ և համբոյր բարուք։

Լ. յսպիսի ոք էր Պիսիտրատ, դիւրամատոյց առ տրուպ քաղաքացին. յորդէր առնոսա քաջալերս և նպաստս, զբաւ առնելով վշտացն, կամ զդառնութիւն նոցա ամոքելով[5]։ Լ. յամ ամենայնի խելամուտ լեալ Սողոն, գիտաց ըզմիտս նորա. բայց մինչ դեռ խորհէր զառաջս առնուլ զչարեացն, Պիսիտրատ վիրաւից աճաւ 'ի հրապարակ՝ անձամբ յանձին զվէրսն Ճարտարութեամբ գործեալ, և խնդրէր պաշտանօք զօգնութիւն ժողովրդեանն՝ փոխանակ նախանձուն իւրոյ 'ի ստէպ պաշտպանութիւն նորա[6]։ Լ. տեան գումարեցաւ, և բազոք

1 Պլուտ. 'ի Սող. էջ 95։ Պլիկ. 'ի Բր. գլ. 7. հմ. 1. էջ 342։

2 Պլուտ. 'ի Պերիկլ. էջ 155։

3 Պլիկ. յոլ. Ճարտ. գիրք Գ. գլ. 34. հմ. 1. էջ 312։

4 Պլուտ. 'ի Սող. էջ 95։

5 Նոյն անդ։

6 Երոդ. գիրք Ա. գլ. 59։ Արիստոտ. յոլ. Ճարտ. գիրք Ա. գլ. 2. հմ. 2. էջ 518։ Դիոդ. գիրք ԺԳ. էջ 215։ Դիոդ. լայ. 'ի Սող։

կալաւ յատեանին Պիսիստրատ զաւագանուոյն և զգլխաւորաց այլոց խմբելոյն, որպէս թէ դարաւնակալ լեալ նոցա կենաց իւրոց. և ցուցանելով զարիւնաթաթաւ զվէրս իւր, գոչէր. Ահաւասիկ վարձք հայրենասէր նախանձուն խմոյ 'ի վերայ ընկերահաշտ ազատութեան, որով ըզվրէժ իրաւանց ձերոց խնդրեցի[1]։

Ի լուր բանիցն աղաղակք սպառնալեաց յամենայն կողմանց հնչեցին. և գլխաւորք 'ի քաղաքայնոց սասանեալ՝ լուռ եղեն, և կէսք խոյս տային 'ի բաց։ Իսկ Սողոն զայրացեալ ընդ վատութիւն ամբոխին և ընդ կուրութիւն, ըզկէսս խրախուսէր, զայլոց զպատրանսն նշաւակէր. այլ 'ի զուր[2]։ Հարբառնորա նուաղեալ յալեաց՝ խափանէր յաղաղակէն, զոր գթութիւն և զայրոյթ և երկիւղ միանգամայն յարուցանէին։ Ապ՝ ախՃան եղև ատենին, սահմանեալ թիկնապահս Պիսիստրատեայ գունդ ահաւոր՝ ուղեկից նմին ամենայն ուրեք։ Յաջողեցին այնուհետև ամենայն իղձք Պիսիստրատեայ. վաղ ընդ փոյթ կալաւ զօրօքն զմիջնաբերդն[3], և զենընկեց արարեալ զամբոխն՝ տիրապետեաց աշխարհին*։

Ել յոյժ յերկարակեաց եղև Սողոն յետ հայրենեացն 'ի ծառայութիւն մատնելոյ։ Հակա-

1 Ցուստ. գիրք Բ. գլ. 8։ Պոլին. 'ի մարթանան գիրք Ա. գլ. 2։
2 Պլուտ. 'ի Սող. էջ 96։
3 Նոյն անդ։ Պոլին. անդ։
* Ն. Բ. 560 ամաւ։

ռակ եկաց նա, որչափ կարէին, խորհրդոց Պիսիստրատեայ մինչ 'ի սպառ. զէն 'ի ձեռին դիմեալ 'ի հրապարակ՝ խնդրէր յարուցանել զամբոխն՝, այլ օրինակ նորա և բանք ոչ էս զօրէին։ Դարեկամք նորա յահի լեալ ընդ համարձակութիւն նորա, ասէին նմա՝ թէ բրոնաւորին 'ի մտի եդեալ է կորուսանել զքեզ, և ուստի՞ է քեզ արիութիւնդ այդ։ Յունա ասէր՝ 'ի ծերութենէ՞։

Դայց Պիսիստրատ չկամէր բնաւ շաղախել զյաղթանակ իւր յարիւն օրէնսդրին. այլ մնանաւանդ մեծարէր զնա, ածեալ զմտաւ զի նա միայն կարող էր յեղանակաւ ինն օրինաւոր առնել զբռնակալութիւն իւր։ Ողբէր զնա մեծապատիւ մեծարանօք, և խրատս խնդրէր 'ի նմանէ. և Սողոն զիջեալ յողբք հրապուրանացն՝ իբր հարկին տեղի տալով, խորհրդակից լինէր նմա՞. յուսացեալ արդեօք 'ի հպատակութիւն օրինացն ածել զնա, և մի՛ 'ի ըսպառ վեր 'ի վայր տապալել զկարգ աշխարհին։

Դմբ երեսուն և երեք անցին 'ի խուսվութէ՛ աստի մինչև ցմահ Պիսիստրատեայ*. այլ նա եօթնեւտասն ամ տիրապետեաց՝։ Դանզի եր-

1 Պլուտ. 'ի Սող. էջ 96։ Դիոդ. լայ. 'ի Սող. յօդ. 49։ Վաղ. Մաքս. գիրք Ե. գլ. 3. թիւ. 3։

2 Պլուտ. անդ։ Կիկ. յղ. ծեր. գլ. 20. հա. 3. էջ 317։

3 Պլուտ. անդ։

* Ն. Ք. 528 ամաւ։

4 Արիստոտ. յղ. հաս. գիրք Ե. գլ. 12. հա. 2. էջ 411։ Յուս. գիրք Բ. գլ. 8։

կիցս հալածեալ յաշխարհէն զօրութեամբ ոսոխացն, դարձեալ վերստին զբռամբ ած զիշխանութիւն[1]. և ինդութեամբ վախճանեաց զկեանսն, ժառանգեցուցեալ զայն զաւակի իւրում։ Լաւ անձնանուէր յօգուտ աշխարհին, զամենայն աւուրս իշխանութեան իւրոյ նշանաւորս արար նորանոր վաստակօք և առաքինութեամբք։

Հալածեաց զանգործութիւն յաշխարհէն, և քաջալերեալ յորդորեաց զերկրագործութիւն և զձեռագէտ ճարտարութիւն։ Օ խառնաղանձ ամբոխ քաղաքացեացն, որ 'ի մայրաքաղաքին կաշկանդեալ կային 'ի յոյզս հերձուածոց, բաշխեաց յարտորայս[2]. և խրախուսեաց զսիրտ զօրականին, սահմանեալ ռոճիկ և դարման վիրաւորացն և խեղելոց 'ի մարտի մինչև ցկեանս[3]։ Ի դաշտս, 'ի հրապարակս, և 'ի պարտէզս իւր և 'ի բուրաստանս՝ որ բաց էին առ ամենեսին[4], երևեր համարձակ օրպէս հայր որդւոց, յամենայն ժամ պատրաստ 'ի լըսել զաղերս տառապելոց, կիսոց զպարտսն շընորհէր, այլոց նպաստս, և ամենեցուն բարեբարեր[5]։

[1] Երոդ. գիրք Ա. գլ. 64։ Արիստոտ. յոլ. հաս. գիրք Ե. գլ. 12. հտ. 2. էջ 411։

[2] Դիոն ոսկեբ. Ճառ 7. էջ 120. Ճառ 25. էջ 281։ Հիւսիքոս և Սուիդ. 'ի բառն Κατων.

[3] Պլուտ. 'ի Սոլ. էջ 96։

[4] Թէոդոսիոս. առ Ամեն. գիրք ԺԲ. գլ. 8. էջ 533։

[5] Եղիսա. զան. պատ. գիրք Թ. գլ. 25։

Դարձեալ և զմեծագործութեանն իւրոյ զախորժակս 'ի ձեռն առեալ առ 'ի պարապելոյ ցանել 'ի գործ զսպերասան և զդատարկապորտ ամբոխն[1], պայծառացոյց զքաղաքն՝ կանգնեալ 'ի նմա մեհեանս և կրթարանս և աղբիւրս ջուրց[2]։ Եւ վասն զի ոչ երկուցեալ խուսափէր 'ի լուսոյ զարդացման գիտութեանց, զհոմերոսի քերթածսն 'ի խանդարանացն նորոգեալ 'ի լոյս էած, և կառոյց 'ի պէտս աթենացւոց մատենադարան, ժողովեալ անդր զամենայն ընտիր մատեանս ժամանակին։

Եւ մեծախոհութեան նորատպաւորագոյն և ցոյցք. զի ոչ երբէք քինախնդիր եղև թշնամանաց, զորոց դիւրին էր նմա խնդրել ըստ վրէժ։ Մինչ դեռ 'ի պաշտամունս դից առընթեր կայր դուստր նորա, պատանի ոմն հարեալ 'ի սէր օրիորդին՝ դիմաց դիրկս արկանէ նմա, և յետոյ առևանկել իսկ ջանացաւ զաղջիկն։ Եւ իբրև ընտանիքն Պիսիստրատեայ յորդորէին զնա 'ի վրէժխնդրութիւն, ասէ. Եթէ զսիրելիսն մեր ատեսցուք, զինչ և առնել իցէ մեզ ընդ ատելիս։ Եւ նոյնհետայն փեսայացոյց իւր զպատանին[3]։

Բազք գինեհարեալք թշնամանեցին հրապարակաւ զկին նորա. և 'ի վաղիւ անդր սթա-

1 Արիստոտ. յդ. հաս. գիրք Ե. գլ. 11. հա. 2. էջ 407։
2 Մեօրս. 'ի Պախտ. գլ. 9։
3 Պլուտ. առակ. հա. 2. էջ 189։ Պոլիէն. 'ի մարթանան գիրք Ե. գլ. 14։ Վաղ. Մաքս. գիրք Ե. գլ. 1։

փեալ, եկէք խնդրել 'ի նմանէ արտասուօք ըզ-թողութիւն՝ որում ոչն իշխէին տալն ունել։ Իսկ նա ասէ. Լսաբիք ով դուք, զի և ոչ արտաքս ելէրէկ կէն իմ[1]։

Դարձեալ և ոմանք 'ի բարեկամաց նորա ոչ կամեցեալ հնազանդել նմա, խոյս ետուն 'ի տեղի ուրեք ամուր։ Այլ առեալ ընդ իւր Պիսիստրատեայ ստրուկս կարասեկիրս, չոքաւ ըզ-հետ նոցա։ Իսկ ապստամբքն իբրև տեսին ըզ-նա, հարցին ցնա և ասեն. Այդ ինչ գաս։ Այն նա ասէ. Կամ զի տաջիք ինձ տեղի կալ առ ձեզ, և կամ զի գայցէք և դուք կալ առ իս[2]։

Հեզութեան նորա և գթութեան օր ըստ օրէ յաճախեալ արգասիք, և բարւոք առաջնորդութեամբն և ևս պայծառացեալ ողոքելն տակաւ զանհամբոյր բարս աթենացւոց, մինչև բազմաց 'ի նոցանէ լաւագոյն համարել զանդորր ծառայութեանն քան զառաջին ազատութիւնն[3]։

Այլ թէպէտ և Պիսիստրատ ըստ օրինաց միահեծան պետութեան օրինակ եկաց թագաւորաց, այլ ըստ օրինաց ընկերահաշտ ազատութեան Աթենս պարսաւելի եղև բռնակալութեամբն, քան գովելի բարերարելով աշխարհին։

Յետ մահու նորա Իպպիաս և Իպպարքոս

[1] Պլուտ. առակ. հտ. 2. էջ 189։

[2] Նոյն անդ։

[3] Երոդ. գիրք Ա. գլ. 62։

որդիք նորա կացին փոխանակ նորա. և թէ-պէտ 'ի հայրենի բարեմասնութեանցն վերջա-ցեալք, նովին իմաստութեամբ վարեցին զնշ-խանութիւնն[1]։ Այլ մանաւանդ Խպարքոս բանասիրական ախորժակաց ևս էր ցանկացող. որ և զՆակրէոն և զԱիմնիդէս առ իւր հրա-ւիրեալ՝ արարն նոցա ընդունելութիւն մեծ յոյժ, զնա պատուովք փառաւորեալ, և զսա մեծա-պարգև մեծարեալ։ Այլ 'ի հռչակ պարծանացն ևս Հոմերի՝ վաստակակից գտաւ հօրն[2]։ Ասէ ստգտանելի է այնու ինքն և եղբայր իւր, զի զհետ գրգռանաց զակատեալ՝ 'ի նոյն և զաթե-նացիս զակատեցոյց[3]։ Ասէ եցեր. չյաւելսը յեղ ծագործութիւնն և զգործն անիրաւութեան, որ կանխահաս մահուն նորա եղև առիթ։

Պատանիք երկու աթենացիք Ադոմդիոս և Ադիստոդիտոն, մտերիմք յոյժ միմեանց, կը-բեալ՝ 'ի նմանէ նախատինս անթափ 'ի մտաց՝ միաբանեցին 'ի կորուսանել զնա և զեղբայրն նո-րա[4]։ Համախոհ եղեն նոցա և ոմանք 'ի բա-բեկամաց, և սպասէին համաթենական տօ-նին հասանելոյ. քանզի յաւուրս տօնին օրէն էր աթենացւոց կրել զէնս, և յուսային գու-մարել զամբոխն ընդ իւրեանս, կամ օգնու-

1 Թուկ. գիրք Զ. գլ. 54։
2 Պլատ. Խպարք. հտ. 2. էջ 228։
3 Աթեն. գիրք ԺԹ. գլ. 8. էջ 532։
4 Թուկ. գիրք Զ. գլ. 56։ Պլատ. անդ էջ 229։ Արիստոտ. յդ. հաս. գիրք Ե. գլ. 10. հտ. 2. էջ 406. և այլք։

թիւն գտանել՝ի նոցանէ ընդդէմ կատաղու-թեան թիկնապահաց որդւոցն Պիսիստրա-տեայ։

Այսու դաւաճանութեան խորհրդով, ծած-կեալ զսուսերս իւրեանց սաղարթովք մրտե-նեօք, դիմեն՝ի տեղի անդր՝ ուստի Խպպարքոս և Խպիաս պատրաստէին ածել զթափօրն՝ի մե-հեան Աթենասայ։ Հասեալք՝ի տեղին, տե-սանեն զմի՝ի համախոհից իւրեանց՝ զի խօսէր մտերմաբար ընդ Խպիասայ, և կասկած մատ-նութեան առին զնմանէ։ Այլ՝ի մոի եդեալ՝ ծանրագնի զկեանս իւրեանց վաճառել, գտա-նեն մեկուսի զԽպպարքոս, և մինեն զսուսերս՝ի կողս նորա*։ Ընդ Երմոդիոս ընդ բազմա-խուռն հարուածովք թիկնապահաց իշխանին տապաստ անկաւ. իսկ Արիստոգիտոն ըմբռ-նեալ նցոյնհետայն, ածաւ՝ի հարցփորձ. բայց լռեալ մինչ՝ի սպառ զդաւակիցս իւր, զբարե-կամն Խպիասայ զրպարտէր, որք անդէն մա-հու պատուհասեցան։ Իսկ բռնաւորն գազա-նացեալ, հարցանէր զայրագին. Այլ իցէն քո տակաւին, տիրադրուժ դաւաճան, այլ և դա-ւակիցք։ Այնոքա ասէ. Ձիք որ, բայց եթէ դու. մեռանիմ, բայց զընտիրս՝ի բարեկամաց քոց բարձեալ՝ի քէն՝ խնդութեամբ մեռանիմ՝։

* Ն. Ռ. 514 տաս.։

։ Պոզիէն. Ի մարթանան գիրք Ա. գլ. 22։ Սենեկա յլ. բարկ. գիրք Բ. գլ. 23։ Յուս. գիրք Բ. գլ. 9։

Լ.յնուհետև Խոսրովաս համարձակ անիրաւեալ բռնակալէր՝. բայց ծանրութեան լուծոյն ոչ եւս համբերեալ աթենացիք, խորտակեցին զայն յետ երից ամաց[*]։ Կլիսթենէս՝ գլուխ աղկմէոնեանցն հզօր ազգատոհմի Յ.թենս, որ անհաշտ թշնամիք էին պիսիստրատեանց, գումարեաց ընդ իւր զամենեսին՝ որ դժկամակութեամբ բերէին զլուծն. և գլուտեալ օգնականութիւն՝ի սպարտացւոց՝ի ձեռն Պիւթիայ դեղվական հարցկին՝ զոր յինքն ձրգեալ էր[2], խաղաց՝ի վերայ Խոսրովասայ, և բռնադատեաց զնա հրաժարել՝ի բռնակալութենէն։ Իսկ բռնաւորն թափառական այսր անդր առ ժամանակ մի հանդերձ ընտանեաւքն դեգերեալ, անկաւ ապա առ Դարեհ արքայ Պարսից. և՝ի Մարաթոն՝ի Ճակատամարտին ընկալաւ զվախճան[3]։

Աթենացիք ընդ դառնալ անդրէն յազատութիւն՝ մեծամեծս պատուեցին զդիւցազակ Աքմոդեայ և Արիստոգիտոնի, անդրիս կանգնեալ նոցա՝ի հրապարակի[4], և կարգս հաստատեալ՝ զի՝ի տօնս համաթենական անուանք

[1] Թուկ. գիրք Զ. գլ. 59։ Արիստոտ. յդ. տնտ. գիրք Բ. հտ. 2. էջ 502։ Պաւս. գիրք Ա. գլ. 23. էջ 53։

[*] Ն. Բ. 510 տմամբ։

[2] Երոդ. գիրք Ե. գլ. 62 և 66։

[3] Նոյն գիրք Զ. գլ. 107։ Թուկ. անդ։

[4] Արիստոտ. յդ. Ճար. գիրք Ա. գլ. 9. հտ. 2. էջ 533։ Դիոմտս. ի Միգ. էջ 630։ Պլին. գիրք ԼԴ. գլ. 8. էջ 654։

նոցա յիշատակեսցին 'ի սպառ[1], և մի՛ ոք 'ի ստրկաց յանուն նոցին կոչեսցի մի՛ և մի՛ իւիք պատճառանօք[2]։ Այլ քերթողաց զփառս նոցա անմահացուցեալ 'ի տաղս[*], որ մինչև ցարդ նուագին 'ի խրախճանս[3], և զաւակի նոցա հնոր-հեցան ազատութիւնք բազումք և մեծամեծք ազգէ յազգ[4]։

Կլիսթենէս յետ այնչափ վաստակոցն 'ի վա-նել զպիսիստրատեանս՝ կրեաց և 'ի հզօր խըմ-բէ հերձելոց ոմանց պատերազմ զամս քանի մի[5]. այլ ապա զօրացեալ, և յառաջամասնու-թեամբքն՝ որպէս արժանի իսկ էր՝ մեծարեալ յամենեցունց, հաստատեաց վերստին զօրի-նադրութիւնսն Սողոնի, զօրս և ոչ պիսիստ-բատեանք երբէք կամեցան խափանել։

Զի և ոչ թագաւոր զանձինս կոչեցին, թէ-պէտ և 'ի նախնի թագաւորացն աթենացւոց համարեին սերեալք[6]։ Այլ թէպէտ Պիսիստ-բատ տասանորդս յարդեանց երկրի առնոյր[7], այլ զդոյզն զայն հարկ, զոր 'ի քսանորդս որ-

1 Դեմոս. յաղ. վրէպ հրեշտ. էջ 344։ Փիլոստր. 'ի վարս Ապոլոնիոս. գիրք Է. գլ. 4. էջ 283։

2 Առ. Գալ. գիրք Թ. գլ. 2։

* Իւրեանց սոյնմատենիս'ի տեղեկութիւնսն. Թիւ Դ։

3 Արիստոտ. 'ի Պիծական տող 1220. յԱքարն. տող 977։ Պարապ. անգ։ Աթեն. գիրք ԺԵ. գլ. 14. էջ 692։

4 Խաչոս յոլ ժամա. Դիկէոգ. էջ 55։ Դեմոս. 'ի Լեպտ. էջ 565։ Դիոնարքոս 'ի Դեմոս. էջ 186։

5 Երոդ. գիրք Ե. գլ. 66։

6 Դիոդ. լայ. 'ի Սող. յօդ. 53։ Պայնեկ. պատ. Յուլ. հտ. 1. էջ 465։

7 Նոյն անգ։ Սուիդաս 'ի բառն Σφάκελ.

դիք նորա նուաղեցուցին, ոչ վասն անձանց՝ այլ'ի պէտս աշխարհին պահանջէին[1]։ Այս աւանիկ իշխանութեամբ և օրինակաւ հաստատեցին նոքա զօրէնսն Յողոնի. քանզի Պիսիստրատ ամբաստանեալ'ի սպանութիւն, որպէս տրուպ ոք քաղաքացի յանդիմանն եղև առենի Արիսպագին՝ տալ զանձնէ պատասխանի[2]։ Նա զգլխաւոր կարգս իսկ աշխարհին հաստատուն կալան[3], զաւագանին զժողովս ժողովրդեան, և զատեանս՝ որոց ինքեանք կացին պէտք, առաւել ևս ընդարձակեալ զզօրութիւն նոցա[4]։ Այս ուրեմն էին նոքա որպէս գլուխ առենական և իշխանապետք մշանջենաւորք'ի ռամկապետութեան, իշխելով ևեթ խորհրդոց հասարակաց։ Զամենազօր իշխանութիւն ընդ կերպարանօք հպատակութեան օրինաց վարէին, և ժողովուրդն'ի ծառայութեան կալով ըզպատկեր ազատութեան առաջի աչաց ունէր։ Որով'ի հալածել պիսիստրատեանց'ի բաց՝ դիւրաբար առանց ինչ ուրուք դժկամակութեան դարձաւ յիրաւունս ազատութեան իւրոյ, որ խափանեալ ևեթ կայր առ ժամանակ մի քանի եղծեալ'ի սպառ։ Բայց նորոգութիւնքն կարգաց տեսչութեանն՝ զոր արար Կլիսթենէս՝ ոչ ամենայն ինչ յառաջին կարգն դարձաւ, որպէս ցուցից ընդ հուպ։

1 Թուկ. գիրք Զ. գլ. 54։ 'Ի Սող. էջ 96։
2 Արիստոտ. յՊ. հաս. գիրք Ե. գլ. 12. էջ 411։ Պլուտ.
3 Երոդ. գիրք Ա. գլ. 59։
4 Թուկ. անդ։

Ա՛ԷՊՔ զվէպս յաջորդեալ ածին զմեզ՝ի ժամանակս՝ յորում մաթէնացիք պայծառացան քաջութեամբ ընդդէմ Պարսից։ Ա՛յլ մինչ չէ՝ի Հառս այնոցիկ մատուցեալ, պարտ է մեզ կատարել զոր խոստացաքն, տեսութիւնս ինչ ըստ քաղաքական օրինադրութեանցն Աղջնի յաւելով։

Ի՛սկ էր մարթ Աղջնի օրէնս հանգոյն օրինացն Լիկուրգեայ սահմանել, զի յոյժ անհամանք միմեանց առաջի կային իրք երկաքանչիւրոցն։

Պարտացուց, երկիրն՝ զոր ժառանգէին՝ մատուցանէր զամենայն պէտս նոցա՝. և շատ էր օրէնսդրին ամփոփել զնոսա՝ի բնիկ աշխարհին՝ առ անեղծ պահելոյ զօրինադրութիւնն յապականարար յեկամուտ յոռութեց օտար ազգաց։ Իսկ աթէնացիք յեզր ծովու բնակէին, շուրջ պատեալ յանդաստանաց՝ ապաշնորհաց առ քիրան մշակին. և հարկ էր նոցա ընդ տուրևառս վաՀառաց և Հարստութեան արուեստից՝ փոխանակել և զնորհուրդս իւրեանց մնաց և զբարս ընդ այլոց ազգաց։

Օրէնսդրութիւն Լիկուրգեայ երիցագոյն է քան զՍողնին ամաք աւելի քան երկերիւրովք։ Պարտացիք պարուրեալք՝ի բնիկ և եթ արուեստս և՝ի գիտութիւնս և յախտս իսկ, դեռ ևս յայնժամ տղայք էին առ բարին և առ

՝ Պլուտ. Ի Սոլ. հտ. 1. էջ 90։

չարն. իսկ աթենացիք ոչ այսպիսիք առ Սո-
ղոնիս։ Վասնզի սոքա զամենայն աղգի աղգի
կարգաց տեսչութեան զփորձ առեալ, տաղտ-
կացեալ էին և 'ի ծառայութենէ և յաղատու-
թենէ, և յերկաքանչիւրոցն ևս չկարէին 'ի
բաց կալ։ Նարտարք էին և գիտունք, սնա-
փառք և դժուարասանձք, և մինչև ցյետին
քաղաքացին ուսեալք 'ի հնարս մեքենաւորս,
'ի փառամոլութիւն, և յամենայն բռնաւոր
կիրս՝ որ 'ի յաչախ վրդովմունս պետութեանց
'ի վեր երևին. և ամենայն ախտք, որ 'ի բար-
գաւաճեալ աղինս գտանին, էին առ նոսա։ Ի
վերայ այսոցիկ յաւելուին և զանխաղաղասէր
ժրութիւնն և զյեղյեղուկ միտս, որ առ այլս
յաղգաց ոչ գտանին։

Օ՛աթոռ թագաւորութեանն Սպարտայ 'ի
բազում ժամանակաց ժառանգէր տունն Լի-
կուրգեայ. արքայք երկոքին՝ որ 'ի միասին ու-
նէին յայնժամ զաթոռն՝ չմեծարէին 'ի ժո-
ղովրդենէն, և քան զամենայն արս երևելիս
աշխարհին վեհ և նախապատիւ էր Լիկուր-
գոս առաջի ամենայն սպարտացւոց՝։ Որով
յուսացեալ նա 'ի զօրութիւն անուան իւրոյ
և բարեկամացն, ոչ ինչ ընկրկէր յերկմտու-
թեանց՝ որ լքուցանեն զհանձար օրէնսդրի, և
նհանջեն զխորհուրդս նորա։ Իսկ Սողոն ան-
նշանաւոր ոք, զիշխանութի առժամանակեայ

1 Պլուտ. 'ի Սոլ. էջ 87։

յանձն առեալ՝ զոր բազում զգօնութեամբ պարտ էր նմա 'ի կիր արկանել յօգուտ, շուրջ պատեալ 'ի հզօր խմբից պառակտելոց՝ ընդ որս հարկ էր նմա բազում զգուշութեամբ վարել առ ունելոյ շնորհս առաջի նոցա, և դեռ ևս խրատեալ օրինակաւն Դրակոնի՝ զի խստութեամբ ոչ ինչ յաջողէր յԱթենս, չկարէր նոքաձևութիւնս մեծամեծս առնել՝ առանց մեծագունիցն ևս վտանգի և խարդաւանելոյ աշխարհին յաղէտս անչողոպրելիս։

Ել ևս յերկարեմ զանձնուրոյն բնաւորութենէ երկաքանչիւրոց օրէնսդրացն. զի ոչ ինչ աննմանագոյն մարթէր լինել ոգւոյն Իկուրգեայ քան զՀանձար Սողոնի, և ոչ սրատալքնդութեան նորա քան զՀեզութիւն և զզգուշաւորութիւն սորին։ Լուանդն ևեթ նոյն էր 'ի նոսա 'ի պատրաստել զբարեկենդանութիւն ժողովրդեան, դարձեալ և շաւիղք նոցա 'ինոյն այլ և այլ Սողոնի զկարգ Իկուրգեայ առեալ, չէր մարթ զմեծամեծս նորա վՀարել զգործս. կասկածեմ թէ և ոչ Իկուրգեայ մարթէր լաւագոյնս ինչքան զՍողոն գործել։

Դիտեր իսկ Սողոն՝ թէ քանի դժուարին գործ հասեալ կայր նմա. նմին իրի իբրև հարցաւ յաթենացւոց՝ թէ չէր մարթ լաւագոյնս քան զօրէնսն սահմանեալս օրինադրել, ասէ. Լաւագունացն անտարբէին աթենացիք[1]։ Լաւ

[1] Պլուտ. 'ի Սող. էջ 86։

հակիրճ վՀռոմն նկարագրեաց զանուղղայ բաբրս աթենացւոց, և զդժնդակ հարկն՝ յորում գտանէր։

Հարկ էր Սողոնի նախամեծար առնել ըզռամկապետութիւն. զի ռամիկն ժամանակս բազումս վայելեալ յայն՝ չկարէր այնուհետև հանդուրժել բռնաւորութեան Հոխիցն[1]. և զի դարձեալ ազգ պարսպեալ 'ի նաւաստութիւն՝ յօժարագոյն 'ի ռամկապետութիւնն է հակամէտ[2]։

Բայց թէպէտ և զռամկապետութիւն ընտրեաց, այլ այնպէս բարեկարգեալ զայն՝ զի ատեան Արիսպագին 'ի նմա զսակաւուց պետութիւն 'ի դէմս բերէր, և աւագանին զաղնուաց պետութիւն. իսկ ռամկապետութիւն ոչ այլ ուրեք երևէր, բայց յատեանս՝ ուր և յեթին քաղաքացւոյն մարթէր բազմել դատաւոր[3]։ Այլ այս կարգ տեսչութեան՝ որ խառն ի մն յազգի ազգի տեսչութեանցն էր՝ եղծաւ զօրանալով ռամկին, որպէս պարսկայինն՝ զօրանալով իշխանին[4]։

Ամենք մեղադրեն Սողոնի, իբր թէ Աթենայեցւոցեալ նորա զեղծումն զայն օրինօքն՝ որով անխտիր ամենայն քաղաքայնոց զդատողական

1 Արիստոտ. յզ. հաս. գիրք Բ. գլ. 12. հտ. 2. էջ 336։

2 Նոյն անդ գիրք Զ. գլ. 7. էջ 420։

3 Նոյն անդ գիրք Բ. գլ. 12. հտ. 2. էջ 336։

4 Պղատ. յզ. օր. գիրք Գ. էջ 693 և 699։

սթոռան չնորհէ, վիճակաւ սահմանեալ զնտ-
ռութիւն կարգելոցն 'ի գործ մեծի և կարևոր
պաշտամանն[1]։ Զատուութեանն այնորիկ չծա-
նուցան 'ի սկզբանն դժպատեհ արդասիք[2]. այլ
հարկ եղև ապա հայթայթել կամ աղերսել
զօգնութիւն ժողովրդեան, որ զատեանս լինէր
գրաւեալ թարգման լինէր օրինաց, և իշխէր
կենաց և բաղդի քաղաքացւոց։

Ի նկարագիր սահմանադրութեանցն Սողո-
նի յաւելի և զպատճառս, վասն որոյ հարկ է-
ղև նմա սահմանել զօրէնս զայս՝ որովստգտա-
նի։ Յաւելում դարձեալ և աստանօր, նախ՝
զի ոչ միայն ընկալեալ են օրէնքս այս, այլ և
յոյժ պիտանիք 'ի բարեկարգ ռամկապետու-
թիւնս[3]. և երկրորդ՝ զի ոչ էր մարթ Սողոնի
կարծել, թէ ժողովուրդն փոխանակիցէ զգործ
և զարարս իւր ընդ թարմատար հաճոյից դա-
տելոյ զվէճ և զկաց իւրաքանչիւրոց։ Այլ է-
թէ ոչ Պերիկղէս նուէրս սահմաներ դատա-
ւորաց[4], յորմէ աղքատ քաղաքացին դիւրաբար
զկեանս իւր հայթայթէր, ժողովուրդն չգրա-
ւէր յինքն զատեանս, և ոչ զօրանայր իշխանու-
թիւն նորա։

Ոչ յօրէնսն Սողոնի խնդրելի է զսերմանս
յոռութեանցն՝ որ ապա եղծեալ խանդարեցին

[1] Արիստոտ. յԼ. հաս. գիրք Բ. գլ. 12. հտ. 2. էջ 336։
[2] Պլուտ. 'ի Սող. էջ 88։
[3] Արիստոտ. անդ գիրք Զ. գլ. 4. հտ. 2. էջ 416։
[4] Նոյն անդ գիրք Բ. գլ. 12. էջ 336։

զվաստակս նորա, այլ 'ի նորաձևութիւնն՝ որ յետոյ մուծան 'ի նոսա առանց հարկի, զորս չէր իսկ մարթ յառաջագոյն գուշակել, որպէս և ոչ արդ անբասիր զնոսա առնել։

Յետ պիսիստրատեանցն 'ի բաց հալածելոյ, Ալեսթենէս առ 'ի ձգել յինքն զժողովուրդն՝ զատոյց 'ի տասն ցեղս զընակիչս Աթտիկեայ, որք 'ի Կեկրոպայ և այսր 'ի քառեակ ցեղս զատանէին։ և ամի ամի յիսուն այր յիւրաքանչիւր ցեղից սահմանեաց յաւագութիւն, որով հինգհարիւր այր 'ի նոցանէ կատարէին զաւագանին։

Ի միում միում 'ի ցեղից անտի՝ որպէս 'ի հասարակապետութիւնս սակաւաւորս՝ էինպէտք և իշխանք, ատեանք և ժողովք, և իւրաքանչիւր հոգք։ Արդ բազմացուցանելովն զնոսա և զօրացուցանելով մուտս տայր ամենայն քաղաքացեաց անխտիր 'ի յանձանձանս իրաց աշխարհին, և նպաստեր և ևս ժողովրդեան՝ որ ոչ միայն իշխանս իւր առանձինն կացուցանէր, այլ և տիրապետեր յիւրաքանչիւրս 'ի ցեղից։

Չէ ոչ այս միայն, այլ և վերակացուք էլն և մտի գանձուն տասն այր 'ի տասանց ցեղից կային. որով յաւելան և ևս պատճառք փառամոլութեան ռամկին. և բացան նմա մուտք 'ի տեսչութիւն իրաց աշխարհին։

1 Երոդ. գիրք Ե. գլ. 66 գիրք Զ. գլ. 4. էջ 418 և 69։ Արիստոտ. յլ. հաս. Պլուտ. 'ի Պեր. 153։

Բայց առաւելագոյն պատճառս կործան-
ման նախնի կարգաց տեսչութեան աշխարհին
ետուն յաղթութիւնքն, զորս տարան աթենա-
ցիք 'ի վերայ Պարսից՝ ։ Բանզի յետ պղատեան
Ճակատամարտին՝ հրաման եղև և յետնագու-
նից դասուց քաղաքացոց ամբառնալ 'ի բարձ
բագոյն իշխանութիւնս յորոց 'ի բաց մերժեալ
էր զնոսա Սոզնի ։ Արիստիդէս հանճարեղն
զհրովարտակս զայս էհան [1], և եղև օրինակ
դժնդակագոյն չարեաց յաջորդելոցն զհետ իւր
յիշխանութիւն ։ Փայփայեցին նոքա զդամիկն,
այլ ապա հարկեցան սպաս մատուցանել նմա ։
Օտանրանայր նա 'ի սկզբանն գալ 'ի ժողովս.
այլ իբրև բաշխք երից դանկաց իւրաքանչիւր
ումեք 'ի ժողովականացն կարգեցան յիշխանու-
թենէ [2], խուռն այնուհետև ընթանայր 'ի ժո-
ղովս. և Ճոխիցն 'ի բաց կալով յերեսաց բազ
մութեան և մոլեգնութեան ամբոխին, ժրաչ-
հեր նա համարձակ փոխանակել զօրէնս ընդ
անձնահաճ կամս իւր ։

Պերիկղէս՝ փնասակարագոյնն 'ի մարդահա-
ճոյս շողոմարարս ռամկին՝ վերջացոյց զնա և
'ի վատակոց և 'ի հետոցն ինչ մնացուածոց
առաքինութեան, շռայլելով նմա բաշխ՝ յորս
սպառէին դանձք աշխարհին. զի 'ի վերայ այ-

[1] Արիստոտ. յՀաս. գիրք 332 ։
Բ. գլ. 12. էջ 336 ։
[2] Պլուտ. յԱրիստիդ. էջ 205 ։
[3] Պլուտ. ատտիկ. օր. էջ

լոց առատութեանց՝ յաւել շահաւէտ առնել նմա և զգնին խաղուց տեսարանաց[1]։ Այլ երդուեալ ինն զոգցես յեղծումն բարուց՝ առ 'ի ձեպել զհետ և զկարգաց աշխարհին զեղծումն, լուեցոյց զԱրիսպագն՝ կապտեալ զնա յամենայն նախապատուութեանցն[2]։

Ընդհետացան 'ի սպառ այնուհետև կամանպիտան եղեն նախահոգ զգուշութիւնքն, զորս Սողոն մեծաւ իմաստութեամբ սահմանեաց առ 'ի պարսպել զօգուտ աշխարհին 'ի կարձմտութենէ տխմար և խելայեղ ռամկին։ Այլ և պատրաստել աւագանւոյն զիրս խորհրդեան, և ասպա առաջարկել աշխարհաժողով ատենին. ոչ և ձարտարախօսացն դատողական ձառք վկայելոցն լաւութեամբ, և ոչ երիցագունեցն հմտացելոց 'ի փորձ նախամեծար լեալ դատաստան։ Այլ եկան այն ամենայն սանձք հզօրք 'ի նուաձել զամենութիւն ամբոխին[3]. և ոչ տեղի ումեք տայր նա սաստից, բայց ստերիւրջացն իւրոց[4]. և այնքան զարտուղի 'ի բաց վազեալ զսահմանօք իշխանութեանն, մինչ ոչ և տեսանել զայնս, և համարել թէ չգուցեն իսկ։

Իշխանութիւնք, զորս ազատ ընտրութիւն մատուցանէր արանց լաւաց, վիճակաւ արդ

1 Պլուտ. 'ի Պեր. էջ 156։
2 Նոյն անդ էջ 155։
3 Եպիֆ. 'ի Կաուսիփ. էջ 427։
4 Արիստոտ. յդ. հաս. գիրք Բ. գլ. 12. հտ. 2. էջ 336։

բաշխին ամենայն քաղաքացեաց[1]. բազումայն է, զի և առանց վիճակի և ընտրութեան՝ կաշառօք և դաւով յաջողէ բազմաց հասանել իշխանութեան, և սպրդեալ մտանել մինչև 'ի կարգ աւագանւոյն[2]։ Դարձեալ և զվերջին վՀին ինքն ժողովուրդն տայ բազումս յանցանաց, որոց դատաստան նմա պահի ոչ առ 'ի Աստուծոյ հրովարտակօք[3], կամ զորս ինքնին յատեան իւր կոչէ՝ արհամարհեալ զդատաստան այլոց օրինաւոր ատենիցն[4]։ Աւստի խառն 'ի խուռն շփոթեալ աղմկին իշխանութիւնքն մեծաւ խմաստութեամբ բաշխեալք. և իշխանութիւնն օրինադիր, նոյն և կատարիչ իւրոց օրինացն, ընկՀնէ հանապազ զորս ընդ իւրեւն կան, կամ զարՀուրեցուցանէ զնոսա ահարկու լծով հարստահարութեան։

Այլեւ ոչ օրինադրեալ բարեկարգութեան աշխարհին խոչք անյաղթելիք ընդ առաջ լինէին, ոչ արդեօք անկարգութիւնքս այսոքիկ 'ի ներքս մտանէին։ Այլ անդստին 'ի սկզբանէ պիսիստրատեանցն բռնակալութիւն խափան արկ յառաջադիմութեան նորա, և յաղթութիւնքն ընդդէմ Պարսից՝ 'ի սպառ եղծեալ ապականեցին զայն։ Հարկ էր նմա ընդ

1 Խոկ. արիսպ. հտ. 1. էջ 321։

2 Նաքին. 'ի Ցիմաքք. էջ 276. 'ի Կոտեսիկ. էջ 437։

3 Բասենոսի. պատ. Ցուն. գիրք Ա. էջ 450։

4 Արիստոտ. յոլ. հաս. գիրք Դ. գլ. 4. էջ 369։

երկար 'ի խաղաղութեան ամենիշխան ա-
զատութեամբ զօրանալ 'ի վերայ բարուց ա-
թենացւոց, առ 'ի ժուժկալել կալ ապա ընդ-
դէմ այնպիսեաց արկածիցն։ Ուստի այսօրիկ
բնաւ ամենայն բազմաստեղն հանՀարցն տե-
սակք 'ի միտս օրէնդրին ժողովեալ՝ չէին բա-
ւական 'ի խափանել զՊիսիստրատ յամենազօր
հրապուրանացն, և զաթենացիս 'ի դիւրահա-
ւան առ հրապոյրսն գոլոյ. և ոչ դարձեալ ըզ-
պայծառ յաղթութիւնս մարաթոնեան և սա-
ղամինեան և պլատեան Հակատամարտիցն կա-
րէին խափանել յաղդելոյ յանդգնութիւն 'ի
սիրտ ազգի, որ քան զամենայն ազգս երկրի 'ի
նոցն էր երագամէտ։

Այլ սակայն յեղելոցն իսկ արդասեաց օրի-
նադրութեանն Սողոնի 'ի միտ առնուլ է, թէ
քանի առաւել այնօրիկ լինէին՝ եթէ յաջողու-
թիւնք նմա 'ի դէպ կային։ Ուստի օրէնքնո-
րա ընկՃեալք ընդ բռնակալութեամբ պիսիստ-
րատեանցն, տակաւին ազդէին 'ի սիրտ ժողովրդ-
դեանն. ոչ միայն օժանդակութեամբ հասա-
րակաց դատարակութեան՝ որ արդ ոչ եւս է՝,
այլ և զօրութեամբ հասարակապետական կար-
գացն՝ որ ընուին զցանկութիւն և զյոյս ազա-
տութեան։ Այսմն իրի ընդ հալածել պիսիստ-
րատեանցն 'ի բաց, ռամկապետութիւն անդ-
րէն վաղվաղակի յառաջին կարգն իւրովի դար-

1 Արիստոտ. յՀ. հաս. գիրք Ը. գլ. 1. հա. 2. էջ 449։

ձաւ. և սթենացւոցն յեղակարծ բարքյերևան ածան։ Յայնմհետէ մինչև ցզեղծումն նոցա անցին ամք իբրյիսուն, և յայնմ բարենշան ժամանակի պատուէին դեռ ևս օրէնք և առաքինութիւնք։ Այս զարդիս ներբողիւք և անձկանօքյիշեն զաւուրսն զայնոսիկ զգծնագոյնք. և ոչ գտանեն այլ ինչ դարման թշուառութեան աշխարհին, բայց վերստին հաստատել զառ 'ի Աողոնէ օրինադրեալ կարգ տեսչութեանն'։

ԳՐԱԿ ԵՐԿՐՈՐԴ.

Որ ինչ իբրյաւուրս Թեմիստոկղի և Արիստիդեայ*։

Լ՚ԷՌ ոչ ըստ կամաց մատչիմ՚ի Ճառս պատերազմաց։ Կարի իսկ շատ է 'ի գիտութիւն՝ զի փառամոլութեամբ իշխանաց սկսանին մարտք պատերազմաց, և թշուառութեամբ ժողովրդոց վախճանին. բայց մեծ է և յոյժ կարևոր առ 'ի խրատ օրինակ ազգի՝ որ զմահ լաւ քան զծառայութիւն համարի, և չէ պարտ լռել զայն։

Կիւրոսի յաւերակս բաբելոնական և լիւդական պետութեանց զպարսկայինն կանգնեալ,

1 Խոկ. արիապ. հա. 1. * Ի 490 ամէ մինչև ցամն էջ 319։ Եպքին. 'ի Կոեսիփ. 444 Ն. Ք։ էջ 427։

զԼաբաբիա և զԼոգիպատոս և զՀեռագոյն և զ-
ազգս ընդ իւրև նուաճեաց[1]. իսկ Կամբիւս
որդի Նորայաւել զիւրենական և աշխարհն,
և զազգս բազումս բնակեալս յԱփրիկէ[2], 'ի
հարկի ծառայութեան կացուցանել։

Իսկ յետ Կամբիւսեայ մեռանելոյ, Եօթն այր
'ի մեծամեծաց Պարսից սպանեալ զՇերդ-
մոգ՝ որ բռնակալէր զաթոռն, ժողովեցան 'ի
սահմանել զլայնածաւալ աշխարհին զբաղդ[3]։
Խորհուրդ 'ի մէջ էարկ Ղատան, ազատս զազգն
կացուցանել՝ ռամկապետութիւն ամենայն ու-
րեք հաստատեալ. իսկ Մեգաբիս զազնուա-
պետութեանն բարեմասնութիւնս 'ի ներքս
էած։ Ոչայց Դարեհի որդւոյն Հշտասպեայ լա-
ւագոյն վարկուցեալ զկարգ տեսչութեան,
որ մինչև ցայնժամ զբարեբաստութիւն և ըզ-
փառս Լաբեայ յարդարէր, միաբանեաց զամե-
նեսին 'ի խորհուրդ իւր։ Յաճարտար հնա-
բիւք յինքն հանեալ զմիձակ բախտին, յոր ընտ-
րութիւն թագաւորին էր ապաստան, ժա-
ռանգեաց խաղաղութեամբ զՀզօրագոյնն 'ի
պետութիւնս երկրի. և ըստ օրինակի առաջնոց
միահեծան թագաւորացն ասորեստանեայց՝
թագաւոր մեծ կոչեցաւ, և արքայից արքայ*։

Յաւ գերաստիճանեալ 'ի փառս՝ մեծարեաց

1 Քսենոփ. կիւրամարզ 13 և այլուր։
Դիոդ Ա. էջ 2. Ը. էջ 230։ 3 Նոյն անդ գլ. 80։
2 Երոդ. գիրք Գ. գլ. 7, * Ն. Գ. 521 ամաս։

զօրէնս, ընտրեաց զվաստակս, ունկնդիր եղև խրատուց, և յոլովեաց իւր բարեկամս։ Օ՞ոպիրոս որդի Մեգաբեայ, նա առաւել քան զամենեսին սիրելի եղև նմա. մինչև 'ի համարձակել երբեմն ուրուք հարցանել զԴարեհ, մինչ նուազն 'ի ձեռին նորա կայր, թէ Օ՞որ 'ի բարեաց ցանկալի է քեզ բազմացուցանել որպէս զհատս նուանդ, նա անդէն արար պատասխանի. զՕ՞ոպիրոս։ Այս պատասխանի թագաւորին յայնպիսի զառածանս տիրասէր նախանձու արկ զսիրելին, զի խանդք ևեթ տիրասիրուութեանն թէ արդարացուցանել կարասցեն զայն*։

Օ՞ամիսս ինն և տասն պաշարեալ Դարեհի զԲաբելոն զապստամբեալն յիւրմէ[2], և իբրև յուսահատեալ՝ ձեռնթափ լինէր 'ի նուաճելոյ զքաղաքն, եկին եկաց առաջի նորա Օ՞ոպիրոս ընտատ և ակնջատ, խեղացեալ յամենայն անդամոց, և վիրալից թաթաւեալ արեամբ։ Թագաւորն 'ի վեր վազեալ յաթոռոյն, ասէ. Այ՞ո անցոյց ընդ քեզ զչարիսդ։ Պատասխանի ետ Օ՞ոպիրոս. Այս ինքն, տեր արքայ. զբնամ՞'ի Բաբելոն, ուր գիտեն զանուն իմ, և զփառս՝ զոր առ քև Ժառանգեմ. և ասացից՝

[1] Պլուտ. առակ. հտ. 2. էջ 173։

* Ըստ Երոդոտեայ (գիրք Դ. գլ. 143.) ոչ զՕ՞ոպիրոս ասէ Դարեհ, այլ զՄեգաբիս հայր նորա։

[2] Երոդ. գիրք Դ. գլ. 151։

թէ անգթութեամբ անգթացաւ յիս տերդիմ արքայ, փոխանակ զի խրատ ետուն մեկնել 'ի բաց։ Եւ տացեն 'ի ձեռս իմ գունդս զօրաց. և տեր արքայ հանցէ զիւրան 'ի Ճակատ, և յաջողեսցէ ինձ գյաղթութիւն՝ առ 'ի վստահացուցանել յիս զթշնամիս իւր 'ի սպառ. և կալայց զդրունս քաղաքին, և տեր արքայ տիրեսցէ Աբեղենի։ Խնդաղատեցաւ Թագաւորն, և յոյժ զարմացաւ ընդ նա. և ելք իրացն յաջողեցին։ Զ.ինու հետև առաւել ևս փայփայէր զնա Թագաւորն, և ընդոյր զնա պարգևօք. և ասէր իսկ ստէպ՝ թէ ո՞ տայր ինձ բիւրիցս զԱբեղեն կորուսանել, և մի զՕ՞սպլոս տեսանել յայն ողորմ տեսիլ[1]։

Զ.յս գորով սրտի, խանդաղատելի 'ի սոսկական ոգ, և յայր Թագաւոր գերասպանծ, յանդիման առնէն զգթութիւն Աբեղիյոր պարտեալքն 'ի նմանել յաՃախս վայելելին, և զբարերարութիւն նորա. զի Թագաւորապէս հաստուցանէր վարձս վաստակոց, զորս իրրև զմի ոք 'ի բազմաց ընդհակալութեամբ ընդունէր[2]։ Զ.ստի էր և հեզութիւն նորա, որ և զխստագոյն սաստ իշխանութեան նորա 'ի կշիռ չափոյ պայմանին ունէր։ Հասք արքունեաց յառաջագոյն 'ի նուիրաց ժողովրդեան գային, զորս Կիւրոս հայրագութ սիրով ընդունէր, Կամ

1 Պլուտ. առակ. հա. 2. 2 Երոդ. գիրք Գ. ՃԼ. 140։ էջ 173։

բիւս տիրաբար բռնութեամբ պահանջէր [1], և մարթէր ապագայից տերանց յաւելուլ ըստ հաճոյս զպահանջ հարկին։ Իսկ Դարեհ 'ի քսան գաւառս կամ՝ ինախարարութիւնս բաժանեալ զաշխարհն, զհոգ հարկահանութեան իւրաքանչիւր գաւառի յանձն արար նախարարի երկրին։ Դոյզն ինչ թուէին ամենեցուն հարկքն, այլ նա կեղակարծ զթուեցեալն նոցա վարկաւ, և զկէս և նուազեցոյց 'ի հարկայն [2]։

Իմաստուն օրինօք ուղղէին ամենայն կարգք պետութեանն [3], և յերիւրեալ յարմարէր 'ի Պարսս միաբանութիւն և խաղաղութիւն՝ որ են նեցուկք աշխարհին, և իւրաքանչիւր ոք պահպանութեամբ իրաւանց և ստացուածոց իւրոց վայելէր 'ի հաւասարութեան, որչափ մարթի վայելել 'ի միահեծան պետութեան։

Դարեհ պիտանի կարգօք պայծառացոյց ըզթագաւորութիւն իւր, և նսեմացոյց զայն աշխարհակալութեամբք։ Պատերազմական աջողութեամբք 'ի ընէ ճոխացեալ, և ոգւով չափ սիրեցեալ 'ի զօրացն [4], քաջասիրտ 'ի ճակատամարտի, և խաղաղական անվրդով 'ի վտանգս [5], նուաճեաց ընդ իւրև ազգս ոչ ինչ պակաս քան զԿիւրոս [6]։

[1] Երոդ. գիրք Գ. գլ. 89։ Ա. էջ 85։
[2] Պլուտ. առակ. հտ. 2. էջ 172։
[3] Պլատ. յլ. օր. գիրք Գ. հտ. 2. էջ 695։ Դիոդ. գիրք
[4] Պլատ. անդ։
[5] Պլուտ. անդ։
[6] Նոյն անդ։

Օրութիւնք նորա և յաղթութիւնք, և մարդահաճութիւն՝ որ սողայ գալարի շուրջ զաթոռովք, կարծեցուցին նմա, զի յակնարկել նորա՝ պարտ էր ամենայն ազգաց սպասս ծառայութեան մատուցանել նմա։ Եւ վասն զի բաւական էր ոչ միայն յառաջարկութիւն խորհրդոց՝ այլ և 'ի կատարումն նոցին, յապաղէր երբէք՝ այլ ոչ ևս անգործ առնէր զխորհուրդս։

Բազում ինչ ձեռնտու էր Պարեհի 'ի յաւելուլ յաշխարհակալութիւնս իւր զԼեադա, այլ նախ զբարուց նորա 'ի դէպ վարկայ ասել, զի թագաւոր քան հզօր զօրութեամբն ահարկու ևս է անձին քաջութեամբք։

Օրութեան նորա գոգցես իմն ոչ գոյր չափ. սահմանք աշխարհին նորա ընդարձակէին ուրեք ուրեք իբր քսանևմի հազար հարիւր վաթսուն և չորս ասպարէզս յարևելից յարևմուտս, և իբր եօթն հազար ինն հարիւր երեսուն և վեց 'ի հարաւոյ 'ի հիւսիս. որով համասփիւռ երեսք երկրին քառակուսի ասպարէզք իբր (115, 618, 000) մետասան հազար հինգհարիւր վաթսունևմի բիւրեցս բիւր և ութ հազար. որով գտանի Լեադա հարիւր հնգետասաներորդ մասն աշխարհին Պարսից, ոչ ինչ աւելի ունելով տարածութիւն քան ըզքառակուսի ասպարէզս (1, 366, 000) հարիւր երեսունևվեց բիւր և վեց հազար։

Լ՝ Էն 'ի նմա գաւառք բազումք ընդ քաղցրախառն նահանգաւ բնակեալք, և 'ի պարարտագոյն ուռոգեալք գետոց, պայծառ քաղաքօք զարդարեալք, և Հոնք ոչ միայն 'ի բնէ արգաւանդաՀող երկրին՝, այլ և 'ի Հարստարութենէ բնակչացն, 'ի տուրևառիկ վաՀառացն շահաւետութենէ, և 'ի բազմամարդութենէ՝ որում և կրօնք երկրին և օրէնք և վարքք բազմաճնութեան նպաստամատոյցք էին։

Հարկք դրամաժողովք [2] ամենայն աշխարհին սուղ ինչ առաւելուին քան զյորեքտասան հազար հինգ հարիւր վաթսուն քանքարս եւբիական։ Լ՝այլ այսոքիկ ոչ 'ի հանապազօր պէտս աշխարհին ծախէին [*], այլ 'ի քծուարս ձուլեալ՝ [3] պահէին 'ի գանձս վասն յեղակարծ պիտոյից։ Լ՝ գաւառաց ելաներ ռոճիկ տանն արքունի, և թոշակ զօրականին՝ [4], կէսք զցորեան նորա հայթայթէին [5], այլք զձիանն [6]։ Լ՝ հայաստանեայց և ԼԵԹ մօրուկք երկու բիւրք գային ամի ամի՝. իսկ այլք 'ի նախարարութեանց կամ անգեայս, կամ գեղին, կամ ոսկեղազ, կամ ժանեխ փղաց, և կամ այլ որ ինչ

1 Քսենոփ. արշ. կիւրոս գիրք Գ. էջ 296։ Աբրիան. պատ. հնդ. էջ 353։

2 Երոդ. գիրք Գ. գլ. 95։

* Ի վերջ կոյս մատենիս 'ի տեղեկութիւնսն. թիւ Ե։

3 Երոդ. անդ գլ. 96։

4 Նոյն գիրք Ա. գլ. 192։

5 Նոյն գիրք Գ. գլ. 91։

6 Նոյն անդ գլ. 90։

7 Սուր. գիրք ԺԱ. էջ 530։

քերք իւրաքանչիւր գաւառացն էին՝ առաքեէին[1]։

Գունդք զօրաց ըստ գաւառաց՝ 'ի հնազանդութեան ունէին զազգս, և 'ի հինից արշաւանաց պահէին զգաւառսն[2]։ Եւ այլ գունդ ընտիր զօրաց Թիւնապահք կային Թագաւորին, և 'ի նոսա բիւր մի ընտրեալագոյնք, որ մատեան կամ անմահ գունդն կոչէր, զի անանուազելի պահէր Թիւ նոցա[3], և ոչ մեծութեամբ և ոչ քաջութեամբ այլք 'ի գնդաց հաւասարէին նմա։

Օհրահանգս, զորս եմոյծ Կիւրոս 'ի զօրսն[4], կալան յաջորդք նորա առ ժամանակ մի. և պարտ էր Թագաւորին ամի ամի հանդէս առնել զօրացն, իւրովի այց և խնդիր առարեալ կարգաց Թիւնապահ գնդացն։ Իսկ 'ի հանդէս զօրականին որ 'ի գաւառս՝ արք հմուտք և հաւատարիմք ոստիկանք 'ի Թագաւորէն գնային։ Իրաքք 'ի զօրապետաց վարձս ըստ վաստակոց առնուին, և վատք յիշխանութենէն 'ի բաց մերժեալ անկանէին[5]։

Ինիկ պարսիկք, գերակայեալք յամենայն ազգս արևելից յաւուրց Կիւրոսի, համարէին

[1] Երոդ. գիրք Գ. գլ. 97։ Սոր. գիրք ԺԵ. էջ 735։
[2] Երոդ. անդ գլ. 90 և 91։ Քսենոփ. կիւրամարզգիրք Ը. էջ 230։
[3] Երոդ. գիրք Է. գլ. 83։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 7։ Հիւսիք. և Սուիդաս 'ի բառն Ա'βαν.
[4] Քսենոփոն անդ էջ 225։
[5] Տոյն յղ. անուանս. էջ 828։

զքաջութիւն վեհ քան զամենայն առաքինութիւնս[1], և 'ի թշնամիսն իսկ մեծարէին զայն[2]։ Տօթահար և ցրտակէզ տոկալ խստութեան տարերց, ընդ ասպարէզս ձիգս և տաժանաւորս խաղալ գնալ, տեգընկէց և նետաձիգ լինել, ընդ ուղիս 'ի լոյզ անցանել, մանկտւոյ խաղք էին առ նոսա[3]։ Իսկ յարբունս հասեալոցն յորսս և յայլ հրահանգս կրթէին կորովք. կիսազէնք 'ի խաղաղութեան շրջէին[4], և գրեթէ միշտ հեծեալք, որպէս զի մի 'ի վարժից հեծելութեանն խամասցին[5]։ Յս սովորութիւնքս այսոքիկ զօրացեալ կալան տակաւ զամենայն սահմանս տերութեան Պարսից։

Հեծելագունդն զօրաւորագոյն մնան է պարսկայնոյ բանակին. որ և յընկրկէն 'ի փախուստ՝ խափանէ նետաձգութեամբ զմնացեալսն յարձակումն յաղթականին[6]։ Հեծեալն և երիվար առ հասարակ սպառազէնք՝ պղնձապատ և երկաթապատ զրահաւորեալ ծածկին[7]. 'ի Մարաց աշխարհէն գան նոցա երիվարք ահիպարանոցք, հուժկուք և օդապարիկք[8]։

1 Երոդ. գիրք Ա. գլ. 136։
2 Նոյն գիրք Է. գլ. 181։
3 Նոյն անդ։ Սար. գիրք ԺԵ. էջ 733։
4 Քսենոփ. կիւրամարզ. գիրք Ա. էջ 5։
5 Յովսեպ. հն. գիրք ԺԸ. հատ. 1. էջ 874։ Մարկեզ գիրք ԻԳ. էջ 383։
6 Քսենոփ. անդ գիրք Դ. էջ 102. Ը. էջ 241։
7 Նոյն յոլ. սարշ. Կիւրո. գիրք Գ. էջ 306։ Պլուտ. 'ի Կրասոս. 1. էջ 558։
8 Բրիսոն. յոլ. թագ. Պարս. գիրք Դ. գլ. 33 և այլուր։
9 Երոդ. գիրք Գ. գլ. 106. Է. գլ. 40։ Աբիան. գիրք Բ. գլ. 11. էջ 77։ Բրիսս. անդ գլ. 29։

Ի քսանամենի զինուորեալ, 'ի յիսնամենի դադարեն 'ի զինուորութենէ[1]։ Ի տալ արքունի հրամանին, զինուորելոց ամենեցուն պարտ էր 'ի ժամանակեալ պահուն 'ի ժամադիր տեղի զօրաժողովոյն հասանել։ Խիստք և ահագինք էին յոյժ օրէնք 'ի մասինս յայսմիկ. որպէս զի 'ի խնդրել տառապելոց ոմանց հարց վաստակաւորաց ազատ առնել զորդիս իւրեանց 'ի նեցուկ ծերութեան իւրեանց, ազատս արդարեւ 'ի պատերազմէ արարին զնոսա թագաւորք, այլ 'ի մահ մատնեալ զնոսա[2].

Թագաւորք արևելից առանց յաշխարհագունդ բանակի անբաւ զօրաց ոչ ուրեք չուառնեն 'ի պատերազմ. քանզի համարին 'ի շուք իշխանութեան իւրեանց՝ ամենայն զօրութեամբ կազմք անդանօր երևել, և 'ի բազում զօրս համարին զյաղթութիւն, և յապահովել կարծեն զաշխարհն 'ի վտանգէ ապրստամբութեան 'ի մեկնել իւրեանց անտի՝ ունելով առ իւրեանս զմեծ մասն զօրութեան իւրեանց։ Այլ եթէ ոչ բանակքս այս անդէն և անդ ահարկութիւն և նախայարձակ ուղիսօրէն խաղացմամբն զամենայն ընդ իւրեանս առեալ մղիցեն զխուչ և զխութ, վաղ ընդ փոյթ ստիպին յետս ընկրկիլ կամ առ 'ի չգոյէ պա-

[1] Սար. գիրք ԺԵ. էջ 734։ Ղ. գլ. 39։ Սեն. յղ. բարկ.
[2] Երոդ. գիրք Դ. գլ. 84. գիրք Գ. գլ. 16 և 17։

բենից, և կամ առ վՀատութեան զօրացն։ Այմն իբրև պատերազմունք Պսիոյ բաղում այն է՝ զի միահաղոյն վՀարին, և բաղդ աշխարՀին 'ի միում և եթ ՀակատամարտՀ հաստատեալ կայ։

Թագաւորք Պարսից ամենազօր վարեն իշխանութիւն, պաշտեցեալք 'ի Ժողովրդենէ որպէս կենդանի պատկերք աստուածութեան[1]։ Տօնախմբի օր ծննդեան նոցա[2]. իսկ 'ի մանՀուն նոցա փակին առեանք, և զկրակ յատրուշանս շիջուցանեն, յայտ իմն այսպէս ասարեալ՝ զի բարձաւ 'ի նոցանէ լուսատուն և օրէնսդիրն[3]։ Ուր ոք 'ի կենդանութեան նոցա մատուցանէ զՀ, առանց խնդրուածս առնելոյ վասն նոցա և աշխարՀին. և ամենայն ոք, և արքայք իսկ Հարկատուք նոցա, և աւագանին բնակեալ 'ի դրան * ստրուկք կոչին թագաւորին։ Որ թէպէտ և արդ արծաթագին գերեցաց է յորջորջումն, այլ յաւուրս Կիւրոսի և Դարեհի զտիրասէր ցուցանէր նախանձ։

Մինչև ցժամանակս թագաւորութեանն

[1] Պլուտ. 'ի Թեմիստ. էջ 125։

[2] Պղատ. Մաղկիբ. Ա. հատ. 2. էջ 121։

[3] Դիոդ. գիրք Ժէ. էջ 580։ Սոտբ. Հատ. 42. էջ 294։ Բրիա. յՊ. Թագ. Պարս. էջ 54։

* Դուռն առ պարսիկս կոչէին արքունիք և ապարանքն Դաքարարաց։ Քսենոփ. կիւրոմարզ գիրք Ը. էջ 201. 203. ԷՆ։ Պլուտ. 'ի Պեղոպ. հատ. 1. էջ 294։ Նոյն 'ի Լիւս. էջ 436։

Դարեհի չեղեն ինչ վէճք Պարսից ընդ ազգս բնակեալս յերկիրն Հոլադայ, և հազիւ ճանաչէր ի Շ՝ օշ անուն Սպարտայ և Աթենայ՝ յորժամ խորհուրդ կալաւ Դարեհ՝ ի նուաճել զազգս հեռաւորս։ Ասոսա դուստր Կիւրոսի, զոր առ Դարեհ հնութեան, նա՝ ի միտս արկ նմա զխորհուրդն զայն՝ թելադրեալ՝ ի Դեմոկեդեայ բժշկէ, որ՝ ի բազմավտանգ քաղցկեղցն ողջացոյց զնա։ Զանգի Դեմոկեդեայ ոչ յուսացեալ այլազգ ազատութիւն գտանել, սաղրեաց և հաւանեցոյց զշխոյին՝ արշաւել Դարեհի Հոլադայ, որպէս զի և իւր լեցի հրաման գնալոյ անդր, ուստի գիւրին էր նմա անկանել՝ ի գաւառ իւր՝ ի Կրոտոն։

Իսկ զշխոյին ժամ պատեհ գտեալ զքաղցրութիւն թագաւորին, ասէ. Համամնակ է պայծառացուցանելոյ զթագաւորութիւն քո արութեամբ, և սարսեցուցանելոյ զազգս՝ որ ընդ ձեռամբ քով են[1]. զի Աքրեաց քաջայաղթ վայելէ թագաւոր։ Դարձո զզօրութիւն դոցա յազգ օտար, եթէ ոչ կամիս զի՝ ի վերայ քո յարիցեն։ Դարեհ ասէ. Իմ՝ ի մտի եդեալ է խաղալ՝ ի Սկիւթս։ Զշխոյն ասէ. Սկիւթք, յորժամ և կամիցիս, քո են. այլ՝ ի յուսնաստան դարձուցես զզէնս քո, ածել ինձ անտի զտիկնայս սպարտացւոց և արգիացւոց, և ըզ-

[1] Երոդ. գիրք Ա. գլ. 153. [2] Նոյն գիրք Գ. գլ. 134։ Ե. գլ. 73 և 105։

բամբշանին կոչնթացուց և աթենացուց յա-
դաֆնայս։ Լոյս յայնմ օրէ փոխեաց Դարեհ
զխորհուրդ արշաւանացն 'ի Սկիւթս. և հինգ
այր 'ի Պարսից յղեաց ընդ Դեմոկեդեայ,
գիտել և տեսանել զաշխարհն՝ յոր խորհէին
արշաւել։

Լոյն ինչ մեկնեալ նոցա 'ի սահմանացն
Պարսից, և փախեաւ Դեմոկեդէս յԻտալիա.
իսկ արքն պարսիկք մնացին անառաջնորդ, և
բազում արկածք հասին նոցա։ Այսպա իբրև
դարձան նոքա 'ի Հ օշ, դշխոյին անցեալ էին
իղձք ազախնելոյ 'ի տիկնաց ելլադացւոց,
և թագաւորն 'ի կարևորագոյն հոգս պաշա-
րեալ կայր։

Դարեհի նուաճեալ զԻաբելոն, խորհուրդ
կալաւ դիմել պատերազմաւ 'ի վերայ սկիւ-
թական ազգաց*, որք անդէոլք իւրեանց դա-
դարեն 'ի ծովեզերս եւքսինեանն Պոնտոսի ընդ
Իստեր** և ընդ Ցանայիս***։

Լոյն եհաս նա եօթանասուն բիւրուք զօ-
րաց՝, 'ի ծառայութիւն կոչելով զազգս. իսկ
նոքա առ 'ի սատակել զզօրս նորա, խորհեցան
յանապատս անշէնս ձգել զանակ նորա։ Լոյ
Դարեհ յամառեալ երթայր զհետ նոցա,
յաղթողաբար ընդ խոր անապատն ձեմելով։
Հրեշտակս արձակեաց առ թագաւորն սկիւ-

* Ն. Ք. 508 ամաւ։
** Դանոբ գետ։
*** Որ արդ Ցոն կոչի։
1 Ցուսա. գլուք Բ. գլ. 5։

թացուց, և ասէ. Ինդէր խուսափէս յերեսաց իմոց, կաց, Հակատեաց ընդ իս 'ի պատերազմ, եթէ կարես զդէմ ունել. ապա թէ ոչ, խոնարհեաց 'ի ծառայութիւն։ Պատասխանի ետ Թագաւորն, և ասէ. Ոչ խուսափեմ, և չիք ինձ ուստեք երկիւղ. այլ 'ի պատերազմի և 'ի խաղաղութեան այսպէս սովորեալ եմք՝ տեղի 'ի տեղւոջէ ընդ լայնածաւալ աշխարհս մեր Թափառեալ շրջելանխռով։ Չիք մեր վիճակ ժառանգութեան, բայց ազատութիւն. և ոչ այլոք տեր, բայց դիքն։ Այսպէս եթէ զփոքր առնուլ կամիցիս քաջութեան սկիւթացւոցս, աղէ եկ, մատիր 'ի շրիմն հարց մերոց'։

Այլ բանակն Պարսից երթայր և նուազէր 'ի հիւանդութենէ և 'ի սովոյ և 'ի տաժանաւոր չուոյն։ Յաւ առ հարկին խորհուրդ կալան դառնալ ընդ կամուրջն, զոր Դարեհի արկեալ էր զԻստեր գետով, և 'ի պահ կացուցեալ անդ զՀոյսն յոնիացիս, հրաման տալով նոցա մեկնել գնալ յաշխարհն իւրեանց՝ եթէ ոչ նախ քան զամիսս երկու դարձցի ինքն անդրէն[2]։ Ինչ պայման ժամանակին, և միանգամ և միւսանգամ հասեալ յերզ գետոյն սկիւթացիք[3], նախ թախանձանօք և ապա սպառնալեօք ստիպէին զզօրապետս նաւատորմին՝ մեկ

[1] Երոդ. գիրք Դ. գլ. 127։
[2] Նոյն անդ գլ. 98։
[3] Նոյն անդ գլ. 133։

նել զօրօքն 'ի Յոնիա։ Միլտիադ աթենացի խրատ ետ հզօր բանիւք՝ հաւանել սկիւթացւոց. բայց Խոտիէոս միլետացի եցոյց այլոց զօրապետաց՝, զի իշխանք 'ի Դարեհէ կացեալ նոցա 'ի քաղաքս Յոնիոյ, 'ի կորնչել թագաւորին՝ հասանէր նոցա անկանել յիշխանութենէն։ Զմին իրի խորհուրդ կալան մնալ անդէն, խոստացեալ սկիւթացւոց քակել զկամուրջն. և այսպէս եղև փրկութիւն Դարեհի և զօրաց նոցա։

Օ կորանս ձախողակի արշաւանին 'ի Սկիւթիա կանգնեաց Դարեհ քաջայաղթ աշխարհակալութեամբ, նուաճեալ ընդ իւրև զհընդիկս, և սահման տերութեան իւրոյ յարևելից կարգեալ զՀնդոս գետ[1]։

Իսկ յարևմտից յելս սահմանաց նորա առեգեան ծովու հատուածք 'ի Յունաց բնակէին։ Ընդ են Լփեսոս, Միլետոս, Օմիւռնա, և այլ քաղաքք բարգաւաճեալք, և դաշնակիցք այլ և այլ նիզակակցութեանց։ Ընդ սոսա և ընդ երկիրն յունաստանի անջրպետ ծով բազմութեամբ կղզեաց, յորոց կէսք ընդ ձեռամբ աթենացւոց, այլք ինքնիշխանք կան։ Ընդ Յոնք բնակեալք 'ի քաղաքս Ասիոյ խորհէին թօթափել զլուծ Պարսից. իսկ բընակիչք կղզեացն և բնոյն յունաստանի երկրն-

[1] Երոդ. գիրք Դ. գլ. 133։ [2] Նոյն անդ գլ. 44։
Նեպ. 'ի Միլտիադ. գլ. 3։

Էին 'ի դրացութենէ հղօր պետութեանն, որ սպառնայր զամենայն ազգս առ հասարակ նուաճել 'ի ծառայութիւն։

Յաւելաւ Երկիւղնոցա 'ի դառնալ Դարեհի 'ի Ակիթիոյ. զի եթող նա 'ի Թրակիա բիւրս ութ զօրաց, որք զաշխարհն նուաճեցին[1], և զթագաւորն մակեդոնացւոց հարկատու Դարեհի կացուցին[2], և զ Եմոս և զՄբրոս կղզիս կալան[3]։

Լուաւել ևս յաճախեաց Երկիւղնոցա 'ի դիմել Պարսից 'ի Հելլասս, և 'ի սպառնալ պատերազմ 'ի վերայ Լիբեայ կղզւոյ՝ որ մերձ էր յոյժ Յունիկ[4], և 'ի հալածել քաղաքաց Յոնիոյ զպետս իւրեանց՝ առ 'ի գիւտ կորուսեալ ազատութեանն[5], և 'ի հրձիգ առնել զՍարդիս մայրաքաղաք նախնի թագաւորութեանն լիդացւոց[6], և 'ի միաբանել ընդ իւրեանս 'ի նիզակակցութիւն ընդդէմ Դարեհի զազգս բնակեալս 'ի Սարիա և զկիպրացիս[7]։ Լիս ոչ վայրապար լինչ էր Երկիւղնոցա. զի վտարանջութեամբն այնուիկ[8] սկիզբն եղև պատերազմաց, որք փոքր միւս ևս՝ և կործանեին զպետութիւնն Լիդացւոյ, և որք պարսկայնոյ պետութեանն յետ հարիւր և յիսուն ամաց՝ 'ի վերայ ածին կործանումն։

1 Երոդ. գիրք Ե. գլ. 2։
2 Նոյն անդ գլ. 18։
3 Նոյն անդ գլ. 26։
4 Նոյն անդ գլ. 31։
5 Նոյն անդ գլ. 37։
6 Նոյն անդ գլ. 102։
7 Նոյն անդ գլ. 103։
8 Իբր 504 ամաւ Ն. Ք։

Բայց սպարտացիք հրաժարեցին 'ի նիզակակցութենէ. իսկ աթենացիք խորհուրդ կալան ձեռն տալ 'ի ծածուկ, առանց յայտնելոյ համարձակ զթշնամութիւն։ Եւ ևս այնուհետև Թագաւորն Պարսից ծածկէր զխորհուրդսն ընդարձակելոյ զսահմանս իւր ընդ Լիդիա։ Պարտ իսկ էր աթենացւոց ձեռն տալ յոլովից 'ի քաղաքացն վտարանջելոց, որք հատուածք 'ի նոցանէ երթեալ էին. և դարձեալ զի 'ի բազում ժամանակաց հետէ խեռիւ էին նոքա ընդ պարսիկս, վասն պատրսպարսն լինելոյ նոցա Խպիսասայ որդւոյ Պիսիստրատեայ, զոր վասն բռնակալութեանն հալածեալ էին 'ի բաց։ Վասնզի Լոտափեռն եղբայր Դարեհի նախարար 'ի նմանէ կացեալ 'ի Լիդիա, պատգամ յղեաց առ նոսա՝ թէ մի ինչի ձեզ խաղաղութիւն մինչ չև դարձ արարեալ Խպիսասայ 'ի քաղաքդ'։ Այլ գիտէին աթենացիք, զի յորմէ հետէ երթեալն էր նա 'ի դուռն Պարսից 'ի Շօշ, ոչ դադարէր 'ի գրգռելոյ զԴարեհ ընդդէմ ազգացն Յունաց, և ևս առաւել ընդդէմ իւրեանց[2]։ Այս ամենայն յորդորեցին զաթենացիսն՝ յղել գունդս զօրաց 'ի Յոնիա, որոց օգնականութեամբ առաւ Արդիս քաղաք։ Զմանողքնոցին եղէն և երեսարացիք բնակեալք Այբիա։

Բազմնորդ ապստամբութեան յոնիացւոց

[1] Երոդ. գիրք Ե. գլ. 96։ [2] Նոյն անդ։

եղև Խատիէոս միլետացի, այն որ յաւուրս արշաւանացն Դարեհի 'ի Սկիւթս՝ յամառեալ մնդեաց կալ մինչ 'ի սպառ 'ի պահ կամրջին զԽատեր գետով։ Եւ մուռացաւ Դարեհ զվաստակս մեծի ծառայութեան նորա, յետ վարձուցն իսկ հատուցման. բայց Խատիէոս տաբագիր յաշխարհէն 'ի դրան Պարսից, անձկայր հայրենեացն. և զխռովիս զայն ծածուկ հնարիւք յարուցեալ 'ի Յոնիա, յաջողեցաւ այնու առնուլ հրաման դարձի 'ի հայրենիսն։ Բայց անդ Նոյնհետայն ըմբռնեալ 'ի Պարսից զէն 'ի ձեռին դերի ածաւ. և փութացեալ զօրավարացն սպանին զնա, զի մի թագաւորն ներեսցէ նմա։ Եւ ոչ վայրապար կասկածեցին. քանզի Դարեհ վասն վաստակոց ծառայութեան նորա անտես արարեալ զմատնութիւնն, յուղարկաւորեաց զնա փառաւք, և զզօրավարսն կշտամբեաց վասն սպանութեանն[1]։

Այսու ժամանակաւ կալան փիւնիկեցիք նաւ մի պատերազմիկ աթենացի. և գտեալ 'ի նմա զԻեսոիոքոս որդի Միլտիադեայ՝ որ իրատն ետ քակել զկամուրջ Խատեր գետոյ, և մատնել զԴարեհ ցասման սկիւթացւոցն, առաքեցին զնա առ թագաւորն։ Բայց թագաւորն պատուեալ զնա, հաւանեցոյց պարգևաւք՝ ՄԻալ անդ 'ի Պարսս[2]։ Իբր ոչ եթէ անփոյթ առնելով զվարանչութենէ յոնիացւոց

[1] Երոդ. գիրք Զ. գլ. 30։ [2] Նոյն անդ գլ. 41։

և զթշնամութենէ աթենացւոցն, քանզի էր դուեալ իսկ էր նորա խնդրել վրէժս մեծամեծս յաթենացւոց՝ 'ի լսել զհրկիզութիւն Պարդեայ, և կացուցեալ իւր յիշեցուցող՝ յուշ ածել զօրհնանպաղ զառ 'ի նոցանէ կրեալ թշնամանսն՝, այլ զի հարկ էր նմա կատարել նախ զպատերազմն ընդ յոնիացիս։ Այնուհետեւ պատերազմն այն զամն քանի մի, յաճախելով նմա փառս. քանզի Յոնիա հնազանդեցաւ նմա, և կղզիք բազումք ընակեալք յեգեան ծով, և առ հատարակ ամենայն քաղաքք Այլեսպոնտեայ մտին ընդ օրինօք նորա։

Զու արար ապա Մարդոնիոս զօրօք բազմաք, այն որ զդուստր Դարեհի ածեալ էր կնութեան. և խաղաղացուցեալ 'ի սպառ ըզՅոնիա, խաղաց յաշխարհն մակեդոնացւոց։ Ընտի կամ անհրամանն 'ի Դարեհէ, և կամ ոչ ինչ աւելի քան զհրամանն արքունի Հարատարեալ, ածէր զզօրս իւր ընդ ծով պատհառանօք իբր թէ 'ի խնդրել վրէժս յաթենացւոց և յերետրացւոց, այլ 'ի մտի խորհէր հարկատու առնել զյունաստան։ Բայց 'ի ստահակ մտրկէ բեկան կէաք 'ի նաւաց նորա բաղխեալք 'ի ժայռս Աթոս լերին, և կորեան զօրքն որ 'ի նմա. և ինքն դարձաւ 'ի Մակեդոնիա, և անտի 'ի Հոչ։

[1] Երոդ. գիրք Ե. գլ. 105։
[2] Նոյն գիրք Զ. գլ. 31 և 33։
[3] Նոյն անդ գլ. 44։

Այլ ոչ արկածքս բաւական եղեն 'ի մեծաւորաց վտանգէն զերծուցանելոյ զԱլադա։ Դարեհ մինչ չև համարձակեալ զպատերազմ, հրեշտակս արձակեաց ընդ ամենայն աշխարհն՝ զի խնդրեսցեն զերկիր և զջուր[1]. քանզի այսպէս կոչէին Պարսք զաղգս 'ի հնազանդութիւն։ Յոլովք քան զսակաւս 'ի կղզեաց և 'ի քաղաքաց հնազանդեալ փութանակի մատուցին զհող և զջուր. բայց աթենացիք և սպարտացիք ոչ միայն չհնազանդեալ, այլ և զերաւունս ազգաց առ ոտն կոխեալ՝ ընկեցին զհրեշտակսն 'ի վիհ խոր[2]։ Այլ ոչ անդ զկայ առեալ սրտմտութեան աթենացւոց, այլ և զթարգմանն 'ի մահ դատապարտեցին իբր պղծիչ հելլէն բարբառոյ՝ զխուժադուժ թագաւորի բացատրելով այնու զպատգամն[3]։

Ելեալ եղև Դարեհի, և կացոյց 'ի վերայ զօրացն զԴատիս Մար յազգէ, տեղեկագոյն իւրաց պատերազմի քան զՄարդոնիոս. և հրամանն ետ նմա խաղալ գնալ աւերել զԹէնս և զԵրետրիա, և զբնակիչս նոցա ածել կապանօք 'ի գերութիւն[4]։

Եկն հասին վաղվաղակի խմբեցան զօրքն 'ի դաշտ մի Մելիկիոյ, և վեց հարիւր նաւօք անցին յԵւբիա։ Երետրիա սաստկապէս դի-

[1] Երոդ. գիրք Զ. գլ. 48։ Արիանոս. Համանթէն. հտ. 1. էջ 211։
[2] Նոյն գիրք Է. գլ. 32։
[3] Պլուտ. 'ի Թեմիս. էջ 114։
[4] Երոդ. գիրք Զ. գլ. 94։

մամարտեալ զաւուրս վեց, այպա առաւ մատ-
նութեամբ ոմանց 'ի քաղաքացեացն՝ որ հզօրք
էին առաջի ժողովրդեան [1]։ Հինն 'ի վերս տա-
պալեցան մահեանք, և բնակիչք քաղաքին կա-
պեալք 'ի գերութիւն վարեցան։ Ընտի նա-
ւատորմն եհաս 'ի ծովեզր Լատիկեայ, և մերձ
'ի Արաթոն աւան՝ որ հեռի էր Այթենայ
ասպարէզս իբր հարիւր և քառասուն, խու-
ժեցին զօրքն 'ի ցամաք՝ տասն բիւրք հետեւա-
կաց, և բիւր մի հեծելոց [2]. և բանակեցան 'ի
դաշտ մի շուրջ պատեալ 'ի լերանց, յարևելից
կուսէ ծովեզերեայ, և շրջապատ ընդարձա-
կութեան դաշտին՝ իբր երկերիւր ասպարէզ։
Այթենացիք զարհուրեալք ահիւ մեծաւ [3],
հրեշտակս արձակեցին առ այլ ազգս յունաս-
տանի՝ խնդրել 'ի նոցանէ օգնութիւն։ Այլոց
կէսք 'ի նոցանէ հնազանդեալ էին Պարսից,
և այլք սարսեալ դողային յանուանէ ևեթ
Արաց և Պարսից [4]. միայն սպարտացիք
յանձն առին օգնել, այլ բազում ինչ խոչ-
ընդ ոտն էր նոցա վաղ հասուցանելոյ զզօրսն
'ի Թիկունս [5]։

Եւ 'ի մնալ աթենացւոց անօգնական, դոյզն
ինչ գուգազ առ Հեպ վտանգին հանեալ յաշ-

1 Երոդ. գիրք Զ. գլ. 101։
2 Նեպ. 'ի Միլտ. գլ. 5։
3 Պլատ. յոլ. օր. գիրք Գ. հատ. 2. էջ 698։
4 Երոդ. անդ գլ. 112։
5 Նոյն անդ գլ. 106։ Պլատ. անդ։ Պլուտ. յոլ. տար. Երոդ. հատ. 2. էջ 861։


ՏԵՂԱՅՈՑՑ
ԱԿԱՌԱՄԱՐԱՐԻՆ
ՄԱՐԱՔԻՆԻ
ՊԱՏԵՐ
դրեալ բանակին
ՑՈՒՆԱՑ.
ՄԱՐԱՔԻՆ
ԱՐԱՐԱՏ
ՊՈՅԼԻՑ
ԼԻՄ
Ի ՊԵՆԴՍԻԼԼԱ

խարհէն՝ զիարդ կարէր զդէմ ունել պետութեան, որ 'ի յիսնից ամաց հետէ յաղթանակէր կործանմամբ հզօրագոյն պետութեանց աշխարհի։ Օլ թէպէտ և արեամբ ընտրելոց 'ի քաղաքացոյն և հզօր պատերազմողաց ժուժկալեալ առ ժամանակ մի՝ մաքառէր ըզ-փառաց յաղթութեանն, սակայն 'ի ծովեզերաց Ասիոյ և 'ի միջերկրեայց պարկաստանի ճամբաքը ահաւորագոյնք քան զառաջինն 'ի վեր երևէին։ Ապաքէն Յոյնք գրգռեցին ըզ-Պարեհ, և թշնամանս 'ի յանցանսն յաւելեալ՝ հարկեցուցին զնա 'ի վրէժխնդիր լինել, կամ զնախատինս յանձն առնուլ անյիշաչարութեամբ։ Բայց և ոչ թշնամանալից ինչ էր հարկ ծառայութեանն՝ զոր խնդրէր 'ի նոցանէ Պարեհ. զի հատուածք 'ի Յունաց յաշխարհ նորա բնակեալք՝ կէին յիւրաքանչիւր օրէնս և 'ի կրօնս և 'ի վիճակս ժառանգութեան իւրեանց։ Այլ յետ վտարանջութեան իսկ նոցա ոչ ապաքէն զգօնագոյն հրամանօք ած զնոսա 'ի մի միաբանութիւն, բռնի զնոցայն գործեալ բարեկենդանութիւն։ Ոչ ապաքէն և նորին ինքեան Արգոնիոսի այն ինչ տակաւին զընկեր հաշտութիւն 'ի քաղաքս Յոնիոյ հաստատեալ էր[1]։

Սովին խորհրդով յոլովագոյնք յազգացն Լեղադայ հնազանդեցան Պարսից. զնոյն և ա-

[1] Երոդ. գիրք Զ. գլ. 42 և 43։

թենացւոց զմտաւ ածեալ, վարանէին 'ի խորհուրդս իւրեանց. զի և ոչ վայրապար ինչ երկիւղ տագնապէր զնոսա։ Վասնզի զբաւալար արքային Պարսից ասի զչղթայս ածեալ բերեր 'ի կապանս նոցա[1], և անտի զԽպպիաս՝ որ զբգդու�եթիւնք և բազմահնար մեքենայք դրդեալ ածին զՊարսս 'ի դաշտ Մարաթոնի[2]։ Մինչին ապա աթենացւոց կամ դառն աղէտք վարելոյ ստրկութիւն անարգաբար յոտս Պարսից, և կամ դառնագոյն էս՝ հեծելոյ ընդ լծով անագորոյն բռնաւորին, որ մթերեալ ոխութեամբք դայր 'ի վրէժխնդրութիւն։ Ի վարանս տարակուսին խորհուրդ կալան կորնչել զէն 'ի ձեռին։

Յաջողութիւն 'ի դէպ եկեալ՝ 'ի ժամանակին յայնմիկ դատն արք երեք, հզօրք 'ի խրախուսել և ևս զընդաբոյս արիութիւն ազգին, Միլտիադ, Արիստիդէս և Թեմիստոկղէս։ Զոսոա, թէ որպիսիք ոմանք էին, վէպք վաստակոց և արութեանցն իւրեանց ցուցցեն։ Միլտիադեայ բաղում պատերազմունս 'ի Թրակիա մղեալ, համբաւէր անուն քաջութեանն. իսկ Արիստիդէս և Թեմիստոկղէս, կրտսերագոյնք քան զնա, անդստին 'ի մանկութենէ այնպէս նախանձընդդէմք լեալ միմեանց, զի անշուշտ կործանումն 'ի վերայ աշխարհին ան-

[1] Պլատ. յղ. որ. գիրք Գ. [2] Երոդ. գիրք Զ. գլ. 102։ հա. 2. էջ 698։

տի հասանէր[1], եթէ ոչ 'ի կարևոր ժամանակի 'ի բաց դնէին զկառաւարութիւն յօգուտ հասարակաց։ Արքայ իսկ է զՔրիստիդէայ միով բանիւ տալ զնկարագիրս, զի նա արդար և առաքինի քան զամենայն աթենացիս եկաց։ Իսկ զԹեմիստոկղէայ ոչ է մարթ սուղ բանիւք նկարագրել զաջողութիւնս մտացն, զհնարս և զդիտաւորութիւնս. սիրեաց նա զհայրենիս, այլ զփառս առաւել քան զհայրենիս։

Սոքա երեքեան սնուանիք յԱթէնս՝ բանիւ և օրինակաւ իւրեանց խրախուսեցին 'ի սպառ զսիրտս քաղաքայնոցն։ Զ Օրաժողով եղեն, գունդ կազմեցին իւրաքանչիւր 'ի տասանց ցեղից հազար այր հետևակ, հանդերձ զօրավարաւ, զստրուկս ևս 'ի լրումն գնդիցն զենուորեալ[2]։ Զու արարին, խաղացին գնացին իջին 'ի դաշտն Մարաթոնի. և անդր 'ի պղատացւոց և 'ի բիովտացւոց եհաս նոցա գունդ յօգնականութիւն հազար հետևակաց[3]։

Խորհէր Միլտիադէս զհասանել առ թշնամին և զյարձակել 'ի վերայ նոցա մի առնել[4]. որումն և Քրիստիդէս և այլք ոմանք 'ի զօրավարաց պատսպարան եղեն խորհրդոյն։ Բայց

1 Պլուտ. յԱրիստիդ. էջ 319։
2 Պաւս. գիրք Ա. էջ 79։
3 Երոդ. գիրք Զ. գլ. 108։
Ցուս. գիրք Բ. գլ. 9։
4 Երոդ. անդ գլ. 109։ Պլուտ. անդ էջ 321։

այլոց զարհուրեալ յանհամեմատ բազմութիւն պարսկախումբ բանակին, ասէին մեալ օգնականութեան սպարտացւոցն։ Յերկպառակել խորհրդականացն՝ մարտպետին անկ էր սահմանել զխորհուրդն, զվարկիցն բառնալով ըզհաւասարութիւն իւրոցն։ Յայնժամ Միլտիադէս սրտառուչ բանիւք խօսեցաւ ընդ նմա, և ասէ. Ի մէջ կրկին ամենամեծ յեղափոխութեանց յերերի կանգնեալ, կամ նախ իշխան ընդ ամենայն Լակեդայ կալ, և կամ մնել զնուութեանն Սպարտացոյ զնիլ տեսարան. 'ի քեզ կայ բաղդ աշխարհին, Կալլիմաքէ։ Լութ թողուցումք եղկանալ եռանդեան զօրականին, խոնարհեսցի նա վատութեամբ ընդ լծով Պարսից. իսկ 'ի մեզ մեր զնա 'ի ձակատամարտ, մեր լիցին դիքն և յաղթութիւն։ Ի ծառայութիւն կամ յազատութիւն վճիռ քո սահմանեսցէ զհայրենիս։

Վճիռ ետ Կալլիմաքոս, և հաստատեցան 'ի պատերազմ։ Լաւ յանշուշտ յաջողութիւն յաղթութեան՝ Լքիստիդէս, և 'ի նախանձ նմանութեան նորա այլք 'ի զօրավարաց առ հասարակ, թողին Միլտիադեայ զկարգ իշխանութեան իւրեանց։ Լայց նա առ անստգիւտ առնելոյ զնոսա 'ի ձախողել մարտին, եկաց մնաց հասանելոյ աւուրց կարգի իշխանութեան իւրոյ[1]։ Լաւ ընդ հասանել աւուրն

[1] Երոդ. գիրք Զ. գլ. 110։ Պլուտ. Արիստիդ. 321։

Ճակատեցոյց զզօրսն առ ստորոտով լերին միոյ 'ի Ծառախիտ վայրի, առ 'ի խափան այրուձիոյն Պարսից։ Օպղատայիս 'ի ձախմէ կացոյց, և յաջումէ Թեւի զօրավարէր Կալլիմաքոս. Արիստիդէս և Մեմիստոկղ 'ի ընդ կային Ճակատուն', իսկ Միլտիադէս ամենայն ուրեք։ Այլ խտրոց 'ի միջի յունական բանակին և պարսկայնոյն էին ասպարէզք ուք[1]։

Ընդ տալ նշանին՝ յարձակեցան Հոյնք քաջարշաւ ընդ ասպարէզն. իսկ պարսիկք զառաջինն պակուցեալ կային անխաղացք, զի նոր էր տարազ յարձակմանն և անսովոր երկաքանչիւր ազգացն. այլ ապա մոլեգին Թափոյ կատաղութեան Թշնամեացն, հանդարտագոյն՝ այլ ոչ ինչ նուազ պակուցանող յարձակմամբ ըզդէմ կալան։ Յամս ինչ սաստկապէս մարտուցեալ երկուստեք անպարտելի, ապա սկրսան յունական բանակին զօրանալ Թեւքն. զի աջոյ Թեւին զօրք ցիր և ցան զԹշնամիսն կացուցին 'ի դաշտին, իսկ ահեկակողմեանք վանեալ ընկրկեցին զնոսա 'ի Ճահիճն Ծածկեալս ընդ արտիւք. յորս խրեալ ընկղմեցան պարսիկք[2]։ Այլ ապա յաջմէ և յահեկէ միանգամայն հասին յօգնութիւն Արիստիդեայ և Մեմիստոկղի, որ 'ի վտանգի կային առաջի

[1] Երոդ. գիրք Զ. գլ. 110։ Նեպ. 'ի Միլտ. գլ. 5։
[2] Երոդ. անդ գլ. 112։
3 Պաւս. գիրք Ա. գլ. 32. էջ 80։

ընտրելոց զօրացն Պարսից՝ զորս Դատիս 'ի միջավայրին կացուցեալ էր։ Բ.մնուհետև առ հասարակ 'ի փախուստ դառնային պարսիկք՝ վանեալք յամենայն կողմանց, և ոչ ուրեք գըտեալ ապաստան՝ դիմեցին 'ի նաւատորմիղն, որ մերձ 'ի ծովեզրն կայր։ Ընդ յաղթականք զէն և ջահ 'ի ձեռին զհետ մտեալ փախըստէիցն, զբազումս 'ի նաւաց նոցա՝ էր զոր գերեցին, էր զոր այրեցին, և էր զոր ընկղմեցին. իսկ կէսք թիավարեալ զօրութեամբ ուժոյ զերծան 'ի փախուստ[1]։

Եւ անկան 'ի Պարսից արք իբր վեց հազար և չորեքարիւր, իսկ յաթենացւոց դիւցազունք հարիւր ինսունևեր[2], քանզի այսպէս զամենեսին զնոսա պարտ է կոչել զանկեալսն 'ի մարտի անդ։ Ընդ և Արիլտագէս վիրաւորեցաւ. և Իպպիաս կորեաւ, և Ատեսիղայոս և Կալլիմաքոս զօրավարք աթենացւոց անկան[3]։

Բ.յն ինչ վախճան լինէր մարտին, մի 'ի զինուորաց ցանկութեամբ վաղագոյն աւետաբեր յաղթութեանն լինելոյ առ աւագանին Յ.թենս, խոնջ և վաստակաբեկ ձեպեալ սլացեալ հասեալ աւետեալ զյաղթութիւնն, և անդէն առ ոտս աւագանւոյն անկանի մեռեալ[4]։

[1] Երոդ. գիրք Զ. գլ. 115։
[2] Երոդ. անդ գլ. 117։
[3] Նոյն անդ գլ. 114։
[4] Պլուտ. յոլ. փառ. Աթէն. Յուստ. գիրք Բ. գլ. 9։
Հա. 2. էջ 347։

Բայց աղէտք զՀետ յաղթութեանն հասա-
նէին Յունաց, եթէ ոչ ամենապարէր Միլտիա-
դէս. քանզի Դատիս մինչ դառնայրն 'ի փա-
խուստ՝ խորհեցաւ յեղակարծումն հասանել
Յաթենս, մինչ չև հասեալ անդր ամենացւոց
'ի պաշտպանութիւն։ Այլ մինչ դեռնա պատէր
զՀրուանդանաւն Սոմնիոնի, ազգ եղև Միլ-
տիադեայ, և չու արարեալ՝ եհաս 'ի նմին ա-
ւուր առ պարիսպս քաղաքին. և յերեսաց նո-
րա ցրեցան ամենայն խորհուրդք թշնամեացն,
և հարկ եղև նոցա դառնալ յետս 'ի ծովեզերս
Բսիոյ[1]։

Յամին երրորդի, եօթանասներորդի երկ-
րորդի ողնմկիադին*, 'ի վեցերորդի աւուր
ամսեան բոյեդրոմիոնի Ճակատամարտս այս
մղեցաւ[2]։ Ի վաղիւ անդր հասին երկու հազար
սպարտացիք, երեքօրեայք անցեալ ասպարէզս
հազար և երկերիւր[3]։ Որոց թէպէտ և լուեալ
զՃանապարհայն զմիախուստն Պարսից, ոչ յետս
դարձան. այլ եկին մինչև 'ի Մարաթոն, ոչ
դժկամակեալ տեսանել զվայրսն՝ ուր ազգին
նախանձորդի իւրեանց զայնպիսւոյ քաջայաղթ
արութեան գործ վՃարեալ էր։ Այլ տեսին անդ
զխորանս Պարսից, զի դեռ ևս կանգնեալ կայ-
ին, և զդաշտն ծածկեալ դիակամբք և փար-

[1] Երոդ. գիրք Զ. գլ. 116։
* Ի 29 աւուր ամսեանն սեպտեմբերի. 490 ամաւն. Քրիստ.։
[2] Քրոսնի տարեգր. տառ. 2. էջ 698։
[3] Խակ. Ներբ. հատ. 1. էջ 163։ Պլատ. յղ. օր. գիրք Գ. հատ. 3. էջ 149։
[3] Խակ. Ներբ. հատ. 1. էջ 163։ Պլատ. յղ. օր. գիրք Գ. հատ. 2. էջ 698։

թամ աւարաւ. և անդ Արիստիդէս իւրով ցեղուն կայր 'ի պահ գերբոյն և աւարին։ Այս ուրախ լեալ ընդ նոսա վասն յաղթութեանն իրաւացի գովութեամբք, դարձան յետս[1]։

Ոչ ինչ թողին անթենացիք առ անմահացուցանելոյ զիշատակ անկելոցն 'ի Ճակատամարտի անդ։ Յուզարկաւորեալ զնոսա փառօք, արձանագրեցին զանուանս նոցա 'ի կոթողս կանգնեալ 'ի Մարաթոն 'ի դաշտին։ Այլ արձանքս այս, և զօրավարացն իսկ Կալլիմաքեայ և Ստեսիղայ շիրիմք, պարզք են և անպաճոյճք ամենևին[2]։ Այ նոքօք և զնշան յաղթութեան կանգնեցին աղխաղխեալ զինուք պարսկայնովք[3] և նկարիչ Ճարտար զՃակատամարտն զայն հանդերձ ամենայն մասամբք նկարեաց յաշխարհամուտ սրահի, ուր Միլտիադ 'ի գլուխ զօրավարացն կացեալ 'ի նկարուն՝ յորդորեր ըզզօրս 'ի պատերազմ[4]։

Օգոյժ առեալ Դարեհի, սրտմտեցաւ յոյժ ընդ պարտութիւնն. և խիթային Յոյնք՝ թէ գուցէ յերեսաբիացիսն զցասումն իւր հեղուցու, զորս 'ի ժամանակին յայնմիկ Դատիս գերի առնէր յոտս թագաւորին։ Այլ նա 'ի տեսիլ գերբոյն ողորմեցաւ, գթութենն յաղթանակեալ

[1] Երոդ. գիրք Զ. գլ. 120։ Պլուտ. յԱրիստիդ. հա. 1. էջ 321։ Նոյն յոլ. ջար. Երոդ. հա. 2. էջ 861։

[2] Պաւս. գիրք Ա. գլ. 32. էջ 79։

[3] Նոյն անդ։ Արիստոտ. 'ի Պիծական տող 709։

[4] Նեպ. 'ի Միլտ. գլ. 6։

'ի վերայ այլոց կրիցն'. և ետ նոցա վիճակս կալուածոց 'ի բացեայ 'ի Շ՝ օշ քաղաքէ։ Այլ առ 'ի խնդրել վրէժ ազնուական և արժանի իւր 'ի Յունաց, հրամայեաց անդրէն զօրաժողով լինել, և կուտեաց զօր անբաւ։

Ել յամեցին աթենացիք ինքնին խնդրել զվրէժ Թագաւորին. քանզի փառաւորեալ նախ զԻլտիադ, սկսան ապա խիթալ 'ի փառաց նորա։ Ամբաստանէին զնմանէ ոսոխքն, իբր թէ 'ի զօրավարելն 'ի Ֆրակիա՝ զիշխանութիւն Թագաւորի 'ի գործ արկեալ էր[2]. և խիթալն արարին զքաջութիւն նորա և զփառս, այնու զի սարսէին 'ի նմանէ օտար ազգք, և զի ժողովուրդն մեծարէր զնա յոյժ։ Պարձեալ և ճախողակի ելք արշաւանաց նորա 'ի Պարս կղզի՝ յաւել պատճառս ամբաստանութեան ոսոխացն, քանզի բարուրս 'ի վերայ նորա եդին՝ կաշառաբեկ գոլոյ նորա 'ի Պարսից։ Այլ թէպէտ լաւք 'ի քաղաքայնոց բողոք բարձեալ՝ թախանձէին վասն ազատութեան նորա, դատապարտեցաւ նա 'ի մահ՝ անկանել 'ի վիհ անդր, ուր զեղեռնագործս հոսէին[3]։ Այլ աւագանին հակառակ եկաց թշնամանալից դատակնքոյն, և փոխեցին զվճիռ մահուն 'ի տուգանս յիսուն քանքարաց։ Այլ զի ոչ էր բաւական ձեռն նորա 'ի հատուցանել զայն, յաղթողն

[1] Երոդ. գիրք Զ. գլ. 119։
[2] Նեպ. 'ի Միլ. գլ. 8։
[3] Պլատ. 'ի Գորգ. հա. 2. էջ 516։

Դարեհի՝ ի կապանս բանտին զրաւեր զկեանս, ՝ի վերայն՝ զոր վասն փրկութեան աշխարհին վերաւորեալ էր՝։

Բայց ցանկութիւն փառաց և առաքինութիւն՝ ի սոսկալի օրինակաց աստի անիրաւութեան և ապերախտութեան իշխանաց և ժողովրդոց ոչ ինչ վհատի. այսոքիկ խոչք են յընթացս փառաց ասպարիզին, որպէս խուճք՝ ի ծովու։ Մեծիստոկղ և Բրիստիդէս զօրանային ՅԱթէնս, մին բաղմահնար հանճարոնն, և միւսն անձնանուէր յօգուտ աշխարհին անցեալ ուղղութեամբն։ Բազմինն յիշատակաւ յաղթանակացն Միլտիադեայ զցայգ և զցերեկ մնայոյզ լեալ՝, մարդահաճեր անդադար նորանոր հրովարտակօք զամբարհաւաճութիւն ռամկին արբեցելոյ յաղթութեամբն։ Իսկ Բրիստիդէս միւսն ևեթ ուշուներ՝ ի պահպանութիւն օրինաց և անեղծութեան բարուց, որք զյաղթութիւնն զայն պատրաստեցին։ Բ. Յլամիտք և այլակամք՝ ի միմեանց՝ այնպէս երկպառակէին ընդ իւրեանս զամբոխն, զի՝ ի խափանել երբեմն Բրիստիդեայ և զիրաւացի խորհուրդ ոսոխին՝ ինքն իսկ խոստովան եղև՝ ի քաղաքաժողովատենի, թէ ոչ զոյր փրկութիւն աշխարհին՝ եթէ ոչ երկոքին միանգամայն՝ ի վիճն ընկեցեալ լինէին՝։

[1] Երոդ. գիրք Զ. գլ. 136։ էջ 113։
Նեպ. ՝ի Միլտ. գլ. 7։
[2] Պլուտ. ՝ի Թեմիս. հտ. 1. էջ 320։
[3] Նոյն. յԱրիստիդ. հտ. 1.

Պարձեալ վերստին Ճարտարմոութիւն և չարահնար մենքենայքյաղթեցին առաքինութեան։ Եւ քանզի Աբիստիդէս իրաւ առնէր վիճելոց, և 'ի համբաւոյ արդարութեան նոքա ամենայն մնային ատեանք դատաստանաց, կուսակիցք թեմիստոկղի ամբաստանեցին զնա՝ իբր թէ կամէր թագաւորել, և սիրով ժողովրդեանն առ նա՝ յաճախեալ զնէթ երկիւղին, պարտաւորեցին զնա յաքսոր։ Ժողովեցան ամենայն ցեղք տալ զվարկս իւրաքանչիւր գրով. և էր անդ Աբիստիդէս 'ի ժողովին։ Եւ ոմն յանշանից քաղաքայնոց, որ առընթեր նմին բազմէր, մատուցեալ նմա զնէցեալն բեկոր, խնդրէր գրել 'ի նմա զանուն ամբաստանելոյն։ Հարց զնա Աբիստիդէս, և ասէ. Զինչ չար արար այրն այն քեզ։ Եւ նա ասէ. Ոչ ինչ, այլ տաղտուկ է ինձ լսել ամենայն ուրեք կոչելոյ զնա արդար։ Եւ գրեաց Աբիստիդէս զանուն իւր. և դատապարտեալ յաքսոր, մենքեր 'ի քաղաքէն՝ բարիս քաղաքայնոցն մաղթելով[1]։

Մինչ չև էր Աբիստիդեայ երթեալ յաքսոր՝ վախճան եղև կենացն Դարեհի, յետ զօրաժողով լինելոյ նորա սպառնալեօք 'ի վերայ Յունաց՝ վասն ոչ առնելոյ նոցա յանձն զլուծ Պարսից, և 'ի վերայ եգիպտացւոց՝ վասն այն ինչ լծընկեց լինելոյ նոցա[2]։ Խսերքսէս որդի նորա

[1] Պլուտ. յԱրիստիդ. էջ 322։ [2] Երոդ. գիրք Է. գլ. 1։ Նեպ. յԱրիստիդ. գլ. 1։

ժառանգեաց զաթոռն*, առանց զառաքինութիւնս հօրն ժառանգելոյ։ Ասեալ յամբարհաւաձել ընդ իշխանութիւն իւր, արդար և բարերար՝ յորժամ կամէրն, անիրաւ և անգութ ըստ յեղեղուկ մտացն, և գրեթէ միշտ 'ի յաջողութեանց և յարկածից յողդողդեալ, ոչ ինչ հաստատուն 'ի բարս իւր եցոյց, այլ զծայրայեղ գոռոզութիւն՝ և զտարապայման կարձմտութիւն։

Յետ խնդրելոյ զվրէժ ապստամբութեան եգիպտացւոցն, և ծանրացուցանելոյ անմտաբար զլուծ նոցա[2], մարթեր նմա թերևս վայելել խաղաղութեամբ յարգասիս վրէժխնդրութեանն, եթէ չէր ոք 'ի վատ մարդահաձոյիցն՝ որք անխիղձ զբիւրս բիւրուց մարդկան փոխանակեն 'ի վերայ չարաշահութեան իւրեանց։ Արդոնիոս, որ զքոյր թագաւորին ուներ կնութեան[3], և հպարտացեալ այնու՝ գերագոյն իշխանութեանց ակն ունէր, կամէր միւսանգամ զօրավարել, բառնալ զկորանս նախկին պարտութեանն, և նուաձեալ զՅոյնս՝ առնուլ զնախարարութիւն աշխարհին, և կողոպտել զայն։ Դիւրաւ հաւանեցոյց նա թագաւորին՝ խառնել զաշխարհն զայն և զՆուբոպէ առհասարակ ընդ Պարսս՝. սահմանեցաւ պատերազմ,

* Ն. Ք. 485 ամաս։
[1] Պղատ. յդ. օր. գիրք Դ. հա. 2. էջ 698։
[2] Նբոդ. գիրք Ի. գլ. 7։
[3] Նոյն գիրք Զ. գլ. 43։
[4] Նոյն գիրք Ի. գլ. 5։
Դիոդ. գիրք ԺԱ. էջ 1։

և շարժեալ դղրդեցաւ ամ աշխարհն Իսրայ։

Իբաղումմանբաւ պատրաստութիւնն Դաւ-
բեթի յաւելան ահաւորագոյնք եւս, և անցին
ամք ջրոք՝ 'ի զօրաժողով, 'ի կանգնել ամբա-
ռնոցս 'ի վերայ ճանապարհին, 'ի կրել 'ի ծով-
եզը զզէնս և զպաշար, և 'ի կառուցանել ամ-
նայն ուրեք 'ի նաւահանգիստս նաւս պատե-
բազմիկս և կարասեկիրս։

Իսպա չու արար թագաւորն 'ի Հ՝օշ քաղա-
քէ, 'ի մոի եդեալ խաղալ զնալ ընդարձակել
զսահմանս տերութեան իւրոյ որչափ արեգա-
կանն ձգին սահմանք[2]։ Եւ հասեալ 'ի Սար-
դիս քաղաք լուսացուց, արձակեաց հրեշտակս
ընդ ամենայն յունաստան՝ կոչել զընակիչս աշ-
խարհին և զկղզեաց առ հասարակ 'ի հնազան-
դութիւն, բաց 'ի սպարտացւոց և յաթենացւոց։
Եւ յոլովք 'ի նոցանէ հնազանդեցան Պարսից[3]։

Յամին ջրրորդի, եօթանասներորդի ջր-
բորդի ողիմպիադին*, 'ի գարնանայնումն եհաս
Դարեբեսէս յեղը Յելեսպոնտեայ աշխարհազօր
բանակաւ՝ որպիսի չէր էր հեղեղատեալ զեր-
կիր[4]։ Եւ առ 'ի զուարճանալ յանձն ընդ մե-
ծութիւն զօրութեան իւրոյ, ետ կանգնել իւր
գահոյս 'ի բարձու, և անդ 'ի զնին կայր տե-
սանել զծով ծածկեալ 'ի նաւաց իւրոց, և զցա-
մաք 'ի բազմութենէ զօրացն[5]։

1 Երոդ. գիրք Է. գլ. 20։
2 Նոյն անդ գլ. 8։
3 Նոյն անդ գլ. 32։ Դիոդ. գիրք ԺԱ. գլ. 2։
* Ն. Ք. 480 ամաւ։
4 Երոդ. անդ գլ. 20։
5 Նոյն անդ գլ. 44։

Կիրձանձուկ'ի տեղւոջ անդ անջրպետեալ ընդ ծովեզը Լիբիոյ և ընդ Լուրոպա[1], և է ընդարձակութիւն կրկին Եօթն ասպարէզ*։ Ընդ նաւակամուրջս կրկին 'ի խարիսխս հաստատեալ՝ զծովեզը ընդ ծովեզը կցորդեաց, կացուցեալ 'ի վերայ գործոյն զեգիպտացիս և զփիւնիկեցիս։ Լայնմիրիկ սաստիկ անկեալ 'ի ծով, քակեաց զկամուրջսն. և հրաման ետ Խսերքսես զլխատել զձարտարապետս գործոյն։ Լուծով պատուհասեալ իբրև զստրուկ մի խեռ ետ ջնել զնա խարազանաւ 'ի հարուածս մեծամեծս, և շանթացեալ երկաթով դրոշմել զնա, և զոյգս շղթայից արկանել զնովաւ կապանս[2]։ Սակայն բիւրք բիւրուց մարդկան այնպիսումն զհետ գնային։

Օ Եօթն տիւ և զեօթն գիշեր անցանէին զօրքն ընդ կիրձն[3], իսկ աղխ բանակին զամիս մի ողջոյն[4]։ Ընտի խաղացեալ 'ի Թրակիա ընդ ծովեզրն[5], ելհաս մերձ 'ի Դորիսկոս քաղաք 'ի դաշտն՝ ընդ որ Լիբրոս գետ հոսեալ անցանէ. զի եր տեղին դիպող 'ի հանգիստ և յարձարծումն զօրականին, և դիւրաւ մարթեր անդ հանդէս առնել միահամուռ ամենայն զօրացն։

Լուս էին զօրք նորա հարիւր և Եօթանասուն բիւրք հետևակաց, և ութ բիւր հեծելոց[6].

[1] Երոդ. գիրք Է. գլ. 34։ Եպիպ. 'ի Պարս. տող 747։

* Ի յետ կոյս մասանէնա 'ի տեղեկութիւնն. Թիւ. Զ։

[2] Երոդ. անդ գլ. 35։

[3] Նոյն անդ գլ. 56։

[4] Նոյն գիրք Ը. գլ. 51։

[5] Նոյն գիրք Է. գլ. 59։

[6] Նոյն անդ գլ. 60 և 87։

և բիւրք երկու արաբացիք և լիբիացիք վաբիչք ուղտերամակացն և սայլից։ Ասերքսեայ կառավարեալ ընդ կարգս բանակին, անց 'ի նաւատորմիղն՝ որ մերձ 'ի ծովեզրն կայր. և էին ամենայն նաւք նորա պատերազմիկք հազար երկերիւր և եօթն, առ հասարակ եռաթիք[1]։ Ի մի մի 'ի նաւաց անտի համարեալ երկերիւր այր, գումարին 'ի վերայ միմեանց քըսանևչորք բիւրք և հազար չորեքհարիւր այր։ Ընդ նոսա էին և նաւք կարասէկիրք երեքհազար, յորս համարին լեալ արք քսանևչորք բիւրք։

Ահա են զորս Ասերքսէս էած ընդ իւր յԱսիոյ. այլ ապա յաւելան 'ի նոսա երեսուն բիւրք մարտկաց 'ի Թրակիոյ, 'ի Մակեդոնիոյ, 'ի Պէոնիոյ, և յայլոց գաւառաց Եւրոպայ նուաճելոց 'ի նմանէ։ Եւ նաւք պատերազմիկք հարիւրևքսան եկին յաւելան 'ի մօտակայ կըղզեաց, և 'ի նոսա արք քսանևչորք հազարք[2]։ Ի բազմակոյտ ամբոխն յաւելեալ և զխուժան կարևոր և անկարևոր մարդկան, որ զհետ երթային բանակին՝ ոչ ինչ նուազ քան զզօրսն բազմութեամբ, գտանին միահամուռ հինգ հարիւր բիւր մարդկան[3] տարաշխարհիկք դիմեալք յաւեր և 'ի կործանումն ազգաց, և 'ի

[1] Երոդ. գիրք Է. գլ. 100 և 184։ Խոկ. Ներբ. հա. 1. էջ 166։

[2] Երոդ. անդ գլ. 185։

[3] Խոկ. համաթ. հա. 2. էջ 205։

յագուրդ փառամոլութեան միոյ ուրուք առն Մարդոնեայ։

Եւ հանդէս արարեալ զօրացն Խսերքսէս, կոչեաց ապա առ ինքն զՅեմարատ, որ ամօք ինչ յառաջ հալածեալ 'ի Սպարտայ՝ 'ի դուռն Պարսից ապաստանեալ էր 'ի Շ օշ։ Եհարց զնա, թէ արդեօք իշխիցեն Յոյնք ընդդէմ դառնալ նմա[1]. իսկ Յեմարատ հրաման առեալ նախ խօսելոյ համարձակ զՃշմարտութիւն, ապա ասէ. Երկիր, արքայ, 'ի Յունաց. զի ընդ անինչս և ընդ առաքինիս հասանէ քեզ տալ պատերազմ։ Թողեալ զայլս 'ի քաց, անուն իսկ ստրկութեան ընդոստուացէ զսպարտացիս. և եթէ բնաւ ամենայն իսկ Եղլադա ընդ զինուք քովք նուաճեսցի, զայրագին և նոքա 'ի վերայ ազատութեան մարտիցեն։ Մի 'ի համար զօրաց նոցա հայիր. թէպէտ և հազար մի միայն, և թէ նուազունք և ս իցեն, խիզախեսցեն ընդ քեզ 'ի պատերազմ։

Ծիծաղեցաւ Թագաւորն, և հանգոյն իւրոց զօրացն վարկուցեալ զնոսա, ասէ. Ո՞չ ապաքէն յոլովք 'ի զօրաց իմոց դասալիք փախուստեայք գնային, եթէ ոչ սպառնալիք և դանք նահանջելին զնոսա. իսկ սպարտացիք ազատք և ինքնիշխանք, որպէս լսեմն, զիա՞րդ առանց այսր երկիւղի վայրապար յանշուշտ մահն դիմագրաւիցեն. և ո՞ զնոսա բռնադատեսցէ յայն։

[1] Երոդ. գիրք Է. գլ. 101։

Գեմարատ ասէ. Զրէնք զնոսա բռնադատեն, այն՝ որ առաւել իշխէ նոցա քան դու որոց ընդ ձեռամբ քով էն. այն՝ որ ոչ հրաման տան նոցա թուել զթշնամիս, այլ դիմել անխտիր առ ամենեսին 'ի յաղթութիւն կամ՝ 'ի մահ՝[1]։

Իսկ թագաւորն առաւել և ի ծիծաղել ընդ այն, հրաման եւ զօրացն չու առնել յերիս աւուրս. միումն խաղալ ընդ ծովեղերս, իսկ այլոցն ընդ միջերկրեայս, ոչ յոյժ հեռի 'ի միմեանց[2]։ Գ. Յախտհոգ պատրաստութեամբքն ոչ ուրեքնուազեցին զօրացն պարէնք. քանզի նաւք երեք հազար ամբարաբերք դնային զծովափամբքն ընդ բանակին. և եգիպտացւոց և փիւնիկեցւոց քաղաքս բազումս 'ի Կիպրակիա և 'ի Մակեդոնիա պաշարապէնդ պատրաստեալ էր[3]։ Դ. Ուր ուրեք դադարէր բանակն, բնակիչք շրջակայ վայրացն տային նոցա զկերակուր և զամենայն պէտս, վաղագոյն լուր առեալ զնոցանէ, և պատրաստեալք յընդունել զնա[4]։

Մինչ դեռ բանակն չու առնէր 'ի Կեսարղիա, աւերելով զանդաստանս, սպառելով 'ի միումն աւուր զարդիւնս ամաց բազմաց, և առեալ ածելով ընդ իւր 'ի պատերազմ զազգս՝ զորս 'ի թշուառութիւն հասուցեալ էր, նաւատորմիղն Վասերքսեայ յայնժամ հատանէր անցս ընդ լեառն Աթոս՝ առ 'ի չպատելոյ զնո-

[1] Երոդ. գիրք Է. գլ. 104։
[2] Նոյն անդ գլ. 121։
[3] Նոյն անդ գլ. 25։
[4] Նոյն անդ գլ. 118 և 119։

վաւ։ Բանդի այս լեառն կարկառի՛ի ծով կրդ-
զի, կցորդեալ ընդ ցամաք երկիր անձուկ նեղ-
ցիւ՝ երկոտասան ասպարէզ՝ի լայնութիւն. և
նաւատորմին Պարսից յառաջքան զամն քանի
մի զփորձ առեալ էր բազմամտանգ պատուա-
ծոյ ծովուն՝։ Մարթ իսկ էր զօրութեամբ
բազկաց ընդ ցամաք զնաւսն անցուցանել յայն
կոյս նեղցին, բայց Խսերքսէս հրամանն ետ հա-
տանել զնեղուցն, և բազմութիւն գործաւո-
րաց պեղէին կիրճ ընդարձակ՝ ընդ որ երկուց
պատերազմիկ նաւաց մարթէր կիցառ երի գը-
նալ[2]։ Այս այսպէս Խսերքսեայ զծովի՛ի ցամաք
նաւակամրջաւ, և զցամաք՝ի ծով կարծեցեալ
փոխել լերանցամէջ հատեալ կրճիւն, եդ՝ի
մտի զի ոչ ևս ոք զօրութեան նորա ընդդէմ
կարասցէ դառնալ։

Աբհաւրաց երկիւղին, յոր զամն բազումն
պատանդեալ կայր Եկեադա, մերձ՝ի վերայ
հասեալ էր լուսն։ Յետ մարաթոնեան պա-
տերազմին ոչ այլ ինչ զրոյցք գային Խսերսեայ՝ բայց
մեծաւլուտ վրէժխնդրութեան արքային Պարսից[3], և զօրաժողովոյ և սպառազինութեան՝
որ մահուամբն Դարեհի առ ժամանակ մի
դադարեալ, և յորդւոյ նորա Խսերքսեայ սկսն-
դագոյն ևս կազմեալ պատրաստէին։

Մինչ դեռ Խսերքսէս պատրաստէրն՝ի պա-

[1] Երոդ. գիրք Զ. գլ. 44։
[2] Նոյն գիրք Է. գլ. 23 և 24։
[3] Պլատ. յղ. օր. գիրք Դ. հա. 2. էջ 698։

տերազմ, յանկարծ սպարտացիք երկու երևեալ 'ի Շ՝ օշ՝ յանդիմանելն Թագաւորին, առանց երկիր պագանելոյ նմա զօրէն արևելեայց, և ասեն. Աչքայդ Մարաց, քանզի սպարտացիք ամօք յառաջ զհրեշտակս Դարեհի սպանին, և արդ գամք տալ զկեանս մեր 'ի վրէժ անիրաւութեանն։ Այս էին որ եկին՝ Սպերթիաս և Բուլիս. որոց գիտացեալ զի զոհք և պատարագք սպարտացւոցն մերժէին 'ի դից վասն անօրէն սպանութեանն, եդին զանձինս վասն փրկութեան հայրենեաց։ Զարմացաւ Խսերքսես ընդ արիութիւն նոցա, այլ ոչ ինչ նուազ զարմանալի ետնոցա պատասխանի, ասէ. Լրթայք ասացէք ցսպարտացիս, զի ինքեանք իշխեցին առ ոսն կոխել զիրաւունս ազգաց, այլ ես չիշխեմ նմանել նոցա, և ոչ մահուամբ ձերով քաւել զարիւնն, յոր շաղախեալ կան։

Դարձեալ և մինչ դեռ էին Խսերքսես 'ի Սարդիս, ըմբռնեցան լրտեսք երեք աթենացիք՝ որք զանխլաբար 'ի բանակն Պարսից մտեալ էին. իսկ Թագաւորն ոչ միայն արձակեալ զնոսա անպատուհաս, այլ և հրաման ետ նոցա շրջել տեսանել զամենայն զօրութիւնս իւր, յուսացեալ զի 'ի դառնալ տանել նոցա զրոյցս՝ յուսահատեացին Յոյնք և գայցեն 'ի հնազանդութիւն։ Լ՝ յլ 'ի լուրնոցին առաւել

1 Երոդ. գիրք Է. գլ. 136։ 2. էջ 235։
Պլուտ. լակոն. առակ. հտ. 2 Երոդ. անդ գլ. 146։

և սաստատեցան սպարտացիք և աթենացիք 'ի խորհուրդ համաշխարհական նիզակակցութեանն ամենայն ազգաց յունաստանի։ Յաղողվեցան 'ի նեղուցն Կորնթոսի, և պնդադէս պանս արձակեցին, որոց ընթացեալ քաղաքաց 'ի քաղաքս ածէին ամենեցուն եռանդն մարտի։ Հարցուկն գեղփական ստիպեալ անդադար 'ի հարցուածոց, և պար առեալ 'ի նուիրաց, վասն անարատ պահելոյ զպատիւ պաշտամանն 'ի հայթայթել անդ զշահ քրմացն և զգաղտնածածուկ իղձս մատուցելոցն առնուլ 'ի նմանէ հրաման պատասխանւոյ, մերթ խրատելր զաղգս 'ի հանդարտութիւն, մերթ աղմկելր զնոսա և եւս չարագոյժ գուշակութեամբք, և առաւել եւս վարանեցուցանելր զնոսա նսեմ պատգամօքն։

Հասին և առ արգիացիս հրեշտակք, ստիպել զնոսա 'ի նիզակակցութիւն'. այլ նոցա այն ինչ զընտիրս մանկտւոյն 'ի վեց հազար զօրականին կորուսեալ էր յարշաւանսն, զոր Կղեոմեն արքայ սպարտացւոց արար յԱրգոլիս [2]. և սպառեալ նոցա կորստեամբն, հրաման եւս պատասխանւոյ ընկալեալ էր՝ մի եւս զէն առնուլ։ Այլ յետոյ խնդրեցին նոքա զօրավարել մասին ինչ յունական բանակին. և ոչ լսելի լեալ՝ որպէս կասկածէինն իսկ, հանդարտեցին [3].

[1] Երոդ. գիրք Ի. գլ. 145։ օր. գիրք Գ. հա. 2. էջ 692։
[2] Նոյն անդ գլ. 148։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 3։
[3] Նոյն անդ։ Պլատ. յլ.

և ապա ձեռն ևս ետուն գաղտ Խսերքսեայ[1]։

Բռաւելագոյն յոյս օգնականութեան գոյր 'ի Սիրակուսայ. քանզի Գեղոնի արքային սիրակուսացւոց զինուք և հանձարով բազում գաղթականս Յունաց ընդ իւրև նուաձեալ էր, որք մնացեալ արդեօք դիմէին յօգնութիւն մայրաքաղաքին իւրեանց։ Հրեշտակք սպարտացւոց և աթենացւոց յանդիման եղեն արքային, և Սիագրոս սպարտացի առաջնորդ եղեալ բանին՝ եցոյց զզօրութիւնս Խսերքսեայ և զառաջարկութիւնս խորհրդոց նորա, և 'ի վերայ էած՝ զի կործանումն Յունադայ զՀետիւբ և զՍիկիլեան առեալ ձգէր զկործանումն[2]։

Խօսեցաւ Թագաւորն սրտմտութեամբ, և ասէ. Յորժամ ընդ կարքեդոնացիս և ընդ այլ ազգս պատերազմ առաջի կայր ինձ, և օգնականութեան կարօտ էի նիզակակցաց, ոչ ոք ինձ 'ի Թիկունս եկաց, և նոքին այժմ 'ի կարիս իւրեանց դիմեն առ իս։ Այլ իմ 'ի բաց եդեալ զարդար վրէժխնդրութիւն, յանձն առնում աւասիկ տալ նոցա երկերիւր նաւս պատերազմի, երկուս բիւրս սպառազէն հետեւակաց, չորեքհազար հեծեալս, և աղեղնաւորս երկու հազար, նոյնչափ և պարսաւորս. դարձեալ և մինչև ցվախճան պատերազմին կերակրեցից զամենայն բանակն, բայց միայն զի

[1] Երոդ. գիրք Թ. գլ. 12։ [2] Նոյն գիրք Է. գլ. 157։

տացի ինձ կալ միագլխապետ ամենայն զօրաց ընդ ծով և ընդ ցամաք։

Իսկ Միագրոս դժկամակեալ ընդ բանսն, ասէ. Հեծեծելով արդեօք հեծեծեր Աքամենոն, եթէ տեսանէր զսպարտացիս կապտեալ՝ի պատուոյ սպարապետութեան, Դէզղենի և սիրակուսացւոց տանելով զայն։ Ոչ, ոչ երբէք Սպարտա թողցէ այլուս զպարծանսն. եթէ օգնել կամիս Յունադայ, ընդ մեզ պարտ է քեզ զինուորել. իսկ եթէ հրամայել կամիս, քեզ լիցի զօրականդ։

Նա պատասխանի թագաւորն խաղաղութեամբ, և ասէ. Յիշեա՛, Միագրե, զի ասպընջականութեան կապանօք զոդիմք ընդ միմեանս. իսկ թշնամանաց բանք դառնացուցանեն և եթ զոգիս։ Այլ ոչ ինչ խրոխտ պատասխանեաւդ դրդուիս՝ի չափոյից. և թէպէտ իշխանութեանս իմում առաւել անկ է զօրավարել քան քեզ, սակայն բաժանել զայն յանձն առնում. ընտրեա դու քեզ զծով կամ զցամաք, և թող ինձ զոր կամիս։

Նա հրեշտակն աթենացւոց ասէ. Ոչ զօրավար, այլ զօրս խնդրեն Յոյնք. լուեցի ցայսվայր, զի Միագրի անկ էր զառաջին խնդիրս քո ցրել. այլ արդ ասեմ. զի եթէ սպարտացիք բաժանել կամիցին զսպարտապետութիւն, մեզ անկ է բաժանակից նոցա լինել՝։

[1] Երոդ. գիրք Է. գլ. 161։

Լ. արձակեալ Պեղոնի զՀրեշտակսն, առաքեաց վաղվաղակի զԱդամս'ի Պեղոնիս՝ սպասել անդ ելից մարտին. դառնալ յետս եթէ Յոյնք յաղթող գտցին. իսկ եթէ պարտեսցին, մատուցանել Աստուածոյ զսպաս ծառայութեան իւրոյ հանդերձ բազումնուիրօք[1]։

Ա. ինչ աւելի յաջողութիւն եղև հրեշտակացն և 'ի քաղաքս այլոց նիզակակցաց։ Ամանզի կրեատցիք հարցեալ զՊիւթիա, հրաման պատասխանուոյ ընկալան՝ մի խառնել 'ի պատերազմն Դլադայ[2]։ Լ. կորկիւրացիք սպառազինեալ վաթսուն նաւս պատերազմի, պատուէր ետուն նոցա զեգերել զափամբք Պեղոպոնեսայ 'ի հարաւոյ, և յաղթողացն լինել կուսակից[3]։

Ակ թեսաղացիք, որք յորդորմամբ բազմաց 'ի զօրավարացն իւրեանց մինչև ցայնժամ կուսակից լեալ էին Մարաց, յանձն առին 'ի ժողովի անդ ունել զպահանն Ողիմպեայ լերին, որ 'ի ստորինն Մակեդոնիոյ ածէ 'ի Թեսաղիա, եթէ այլք 'ի Յունաց օգնեսցեն նոցա[4]։ Ա. աղվաղակի բիւր մի զօրական 'ի ձեռս գումարեալ Լեենետեայ սպարտացւոյ և Թեմիստոկղի աթենացւոյ, հասին յերդ Պենէոն գետոյ, և բանակեցան ընդ այրուձիոյն Թե-

[1] Երոդ. գիրք Է. գլ. 163։ գիրք ԺԱ. կէ. 13։
[2] Նոյն անդ գլ. 169։ [4] Երոդ. անդ գլ. 172։
[3] Նոյն անդ գլ. 168։ Դիոդ.

սաղացւոց 'ի մուտս հովտին Ցեմպեայ։ Բայլ յետ աւուրց զգացեալ նոցա՝ զի ընդ դիւրաբոյն և Ճանապարհ մարթէր Պարսից մտանել 'ի Լեսաղիա, և Շղեքսանդրի արքային մակեդոնացւոց ազգ արարեալ նոցա զվտանգ տեղւոյն, ընկրկեցան նոքա յետս 'ի նեղուցն Կորնթոսի. և թեսաղացիք խորհուրդ կալան ձեռն տալ 'ի Պարսս։

Մնային ապա նուազունք ոմանք յազգաց և 'ի քաղաքաց յունաստանի 'ի պահ աշխարհին։ Շունչ իմն և հոգի խորհրդեան նոցա էր Լեմիստոկղէս. նա քաջալերեալ սրտապնդէր զնոսա մերթ հաւանողական բանիւ, մերթ Ճարտարութեամբ, և բազում այն էր՝ զի խոհականութեամբն և ժրութեամբ. քանզի ոչ առաւել զօրութեամբ բանից քան գործովք զամենեցուն միտս յինքն արկանէր։ Օ՝ի և ինքն իսկ զՀետ բուսոյ բարուցն ձգեալ բերէր, կրթութեան ոչ ինչ յաւելեալ 'ի բարս նորա, զոր բնութեան սահմանեալ էր 'ի վարչութիւն մարդկան և 'ի յանձանձանս իրաց. քանզի բնաւորական իմն ազդմամբ յայտ յանդիման 'ի հանդերձեալն և 'ի մերձակայս տեսանէր զյուսալիսն և զերկիւղալիս[1]։ Օ՝մարթոնական Ճակատամարտն նկատէր նա յամաց հետէ իբր նախաշաւիղ իմն պատերազ-

[1] Թուկ. գիրք Ա. գլ. 138։ 112։ Նեպ. 'ի Թեմիս. գլ. 1 Պլուտ. 'ի Թեմիս. հտ. 1. էջ և այլուր։

մաց, որ մօտալուտ 'ի վերայ կային յունաստանի. և գիտէր զի վտանգաւորագոյն ժամանակ Յունաց յետ յաղթութեանն էր, և զի առ 'ի պահել զյաղթանակն հարկ էր նոցա փոխել զհնարս՝ որովք ստացանն զայն, զի ծովակալութեամբ և եթէ մարթէր նոցա տիրել 'ի սպառ ընդ ցամաք. և զի գալոց էր ժամանակ՝ յորում փրկութիւն նոցա Աթենս, և աթենացւոցն փրկութիւն 'ի նաւատորմ հաստատելոց էր։

Օ այս ամենայն յառաջագոյն գուշակելով յեղակարծ և կարևոր իրս, հնարէր շրջել զնորհուրդս աթենացւոց, և փոխել զզօրութիւնս նոցա 'ի ծով։ Երկու ինչ ըստ յաջողութեան ժամանակին 'ի դէպ եկեալ, օգնեցին 'ի կատարումն առաջարկութեան խորհրդոց նորա։ Օ՛ի աթենացիք պատերազմէին յայնժամ ընդ բնակիչս Եգինայ կղզւոյն, և առաջի կայր նոցա բաժանել յիւրեանս արծաթ բազում հատեալ 'ի բովուց։ Հաւանեցոյց զնոսա Թեմիստոկղ հրաժարել 'ի բաշխիցն, և ծախել զարծաթն զայն 'ի կառուցումն երկերիւր պատերազմիկ նաւաց, առ 'ի դիմել նոքաք առ ժամն 'ի վերայ եգինացւոց, և առ յապա զդէմ ունել Պարսից՝։ Եւ կային նաւքն այնոքիկ կազմք 'ի նաւահանգիստս

1 Երոդ. գիրք Է. գլ. 144։ 'ի Թեմիս. հտ. 1. էջ 113։ Թուկ. գիրք Ա. գլ. 14։ Պլուտ.

Լատիկեայ յորժամ Աստերքսէս արշաւեաց 'ի յունաստան։

Եւ մինչ դեռ գայր նա և մերձենայր, խորհուրդ կալան Յոյնք յաշխարհաժողովն 'ի Կորընթոս՝ զօրահատոյց առնել ընդ Լեւոնիդայ արքային սպարտացւոց, ունել զպահակն Թերմոպիլէայ՝ որ է ընդ Թեսաղիա և ընդ Լոկրիս՝, և զնաւս յղել ընդդէմ նաւատորմին Պարսից մերձ անդր՝ 'ի կիրճ՝ն՝ որ բաժանէ ընդ Ծովէզերս Թեսաղիոյ և Եւբիոյ։ Մեծենայիք իւրեանց համարէին անկ քան սպարտացւոց առաջնորդել նաւատորմին. զի նոցա հարիւր քսան և եօթն նաւս պատերազմի պատրաստեալ էր, իսկ սպարտացւոց տասն միայն[1]։ Այլ՝ 'ի սպառնալ այլոց նիզակակից ազգաց յետս կալ 'ի պատերազմէն՝ եթէ ոչ 'ի սպարտացւոց որ կացցէ Ծովակալ, դադարեցին 'ի խնդրոյն. և եկաց զօրավար ընդ Ծով Եւրիպիադ, և 'ի ձեռանէ նորա Թեմիստոկղ և զօրապետք այլոց ազգաց[2]։ Եւ ժողովեցան 'ի մի վայր եկին մերձ Մատեմիսիոն 'ի հիւսիսակողմն Եւբիոյ 'ի Ծովեզրն երկերիւր և ութսուն նաւք՝, յորոց նաւատորմն կազմէր։

Ընկալեալ և Լեւոնիդայ զպատուէր ժողովոյն, և առաջի աչաց զօրհասն նկատելով՝

[1] Երոդ. գիրք Է. գլ. 175։ Խոկ. համաթ. հտ. 2. էջ 206։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 4։
[2] Երոդ. գիրք Ը. գլ. 1։ 3 Պլուտ. 'ի Թեմիս. էջ 115։ 4 Երոդ. անդ գլ. 1։

հնազանդեցաւ հրամանին նովին արիութիւն, որով յայնժամ Հանաչէին սպարապետք։ Եւ էառ նա ընդ իւր 'ի համազգեացն երեքարիւր այր, քաջասիրտս հանդոյն իւր, և զորոց քաջ գիտէր զհայրենասիրութիւն։ Սենեմա պարկեստն. Յոյժ սակաւ է զօրդ, և ոչ բաւական ընդդիմամարտութիւն։ Եւ նա ասէ. Սակաւ իսկ է 'ի վանել զթշնամիս, այլ բազում յոյժ 'ի գործ՝ յոր երթամքն։ Պարկեստն ասեն. Եւ առ ինչ երթայք։ Լեւոնիդաս ասէ. Գտնել զանձինս 'ի վերայ պահակին, և զոհք երեքարիւր բաւականք են 'ի փառս Սպարտայ։ Որոնչէր նա արդեօք անօգնական, եթէ զամենայն մարտիկս իւր ընդ իս յուղարկէր. քանզի վստահ իսկ եմ զի ոչ ոք 'ի նոսա դասալիք փախստեայ գտանէր[2]։

Տեսարան լեռն տխուր, զոր ոչ է մարթ առանց գորովոյ յիշատակել, յետ աւուրց ինչ 'ի տեսիլ ածաւ 'ի Սպարտա։ Օ՛ինուորակիցք Լեւոնիդայ 'ի պատիւ մահու նորա և իւրեանց դամբանական հանդէս մրցութեան աբարին յանդիման հարց և մարց իւրեանց[3]։ Եւ ապա յետ հանդիսին ելին մեկնեցան 'ի քաղաքէն, յուղարկեալք յաղգականաց և 'ի բարեկամաց իւրեանց, որոց զվերջին հրաժա-

[1] Երոդ. գիրք Է. գլ. 205։ 2. էջ 225։
[2] Դիոդ. գիրք ԺԱ. էջ 4։ 3 Պլուտ. յդ. քար. Երոդ. Պլուտ. լակոն. առակ. հա. էջ 866։

բական ողջոյնն անկրկնելի եւ ետուն։ Ընդ և կը-
նոջ Եւսեբիոսայ զվերջին պատուէրսն 'ի նմանէ
խնդրեալ, եւ պատասխանի Եւսեբիոս. Տա-
ցեն երկինք արժանի քեզ այր, և որդիս ար-
ժանի նմին[1]։

Այլ ստիպէր Եւսեբիոս զչու զնդին, առ-
'ի խափանել օրինակաւն իւրով զբազումս 'ի
քաղաքաց՝ որք պատրաստէին ձեռն տալ 'ի
պարսիկս[2]։ Այլ անց նա ընդ սահմանս թե-
բացւոց, զի նոքա գայթ 'ի գայթի կային. և
ետուն նոքա չորեքարիւր այր, զորս ած բանա-
կեցոյց ընդ իւրսն 'ի Թերմոպիլէ[3]։ Այլ ապա ե-
կին հասին հետ զՀետէ զորք 'ի Տեգեայ և 'ի
Մանտինեայ, և հարիւր և քսան այր Արքո-
մենեայ, և յայլոց քաղաքաց Արկադիոյ հա-
զար այր. չորեքարիւր 'ի Կորնթոսէ, երկերիւր
'ի Փլիոնէ, և ութսուն այր 'ի Միկենաց.
եօթն հարիւր 'ի Թեսպեայ, և հազար այր 'ի
փովկիսացւոց։ Իսկ լոկրիսացիք, ազգ սա-
կաւաւոր, անդր ամենայն զսրուութեամբն իւ-
րեանց հասին[4]։

Զհետ սոցա, որք էին միահամուռ ամե-
նայն ջոկատն իբր եօթն հազար այր*, պատ-
բաստէր հասանել և բուն բանակն յունական։
Բայց սպարտացիք պատաղեալ 'ի տօնս, և

[1] Պլուտ. յՀ. ՀՀր. Երոդ. էջ 866. և լակ. առակ. էջ 225։
[2] Երոդ. գիրք Է. գլ. 206։
[3] Նոյն անդ գլ. 205։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 5։
[4] Երոդ. անդ գլ. 202։
* Յետ կոյս մատենիս 'ի տե-
ղեկութիւնն. թիւ Է։


ՏԵՂԱՍՈՒՑ
ԿՐԹՄՆ
ԹԵՐՄՈՊԻԼԵԱՑ
Ամերիկա
Ասիա
Եվրոպա
Աֆրիկա
Ամերիկա
Կանադայի
Գրենլանդիա
Ամերիկայի Միացեալ Նահանգաց
Մեքսիկայի
Կենտրոնական Ամերիկայի
Հարաւային Ամերիկայի
Ատլանտեան Օվկիանոս
Խաղաղ Օվկիանոս
Հնդկական Օվկիանոս
Ատլանտեան Օվկիանոս
Ամերիկայի Միացեալ Նահանգաց
Կանադայի
Գրենլանդիայի
Մեքսիկայի
Կենտրոնական Ամերիկայի
Հարաւային Ամերիկայի
Ասիայի
Եվրոպայի
Աֆրիկայի

պլք 'ի նիզակակցաց 'ի պատրաստութիւն հանդիսի ողիմպիական խաղուցն, յամենեցին՝ ոչ կարծելով մեռ 'ի Յերուսաղիմ զՅերքսէս հասեալ[1]։

Եւ քանզի ընդ կիրճն ընդ այն հարկ էր անցանել զօրաց, որ գնային 'ի Յեռասաղիա, 'ի Լոկրիս, 'ի Փովկիս, 'ի Թրովտիա, Յաքտիկէ, և յայլ մերձակայ գաւառս[2], պարտ է տալ ասասնօր զնորին համառօտագիծ պատկեր։

Ճանապարհն՝ որ 'ի Փովկեայ ածէ 'ի Յեռասաղիա՝ անցանէ ընդ անձուկ սահմանս լոկրեցւոց, և հասանէ Յէլլեկոս աւան ծովեզերեայ[3]. և քանզի անդ սկիզբն է կրճին, ամրացուցին զայն Յոյնք ոչ յառաջ քան զբազում ինչ ժամանակս[4]։

Կիզ են մուտք Ճանապարհին, ոչ ինչ աւելի քան զանցս սայլի միոյ ընդարձակեալ[5]. այլ ապա ընդարձակի ուղին 'ի Ճահիճս՝ սկսեալս 'ի Ջուրց ծովու[6], և 'ի ժայռս անմատոյցս՝ յորս աւարտին գօտիք Լատայ լերին[7]։

Բայց ինչ մեկնեալ Յէլլեկոսայ՝ հանդիպի 'ի ձախմէ վեմն Նուիրեալ Պելամպիգեանն Հերակլեայ, և անդ յանդի Ճանապարհն՝ որ 'ի կատար լերինն ածէ[8], զորմէ ասացից ընդ

1 Երոդ. գիրք Է. գլ. 206։
2 Լիւ. գիրք Լ.Զ. գլ. 15։
3 Երոդ. անդ գլ. 176։
4 Եպիփան. յոլ. վեպ հրեշտ. էջ 416։
5 Երոդ. անդ։
6 Նոյն անդ։ Պաւս. գիրք Է. գլ. 15. էջ 558։
7 Պար. գիրք Թ. էջ 428։ Լիւ. անդ։
8 Երոդ. անդ գլ. 216։

հուպ։ Ինտի փոքր մի ևս անդր՝ հոսէ ուղիս Ջերմաջուր, ուստի Թերմոպիլէ զանուանն կալաւ, այս ինքն է դուռն Ջերմկաց՝։

Որ՝ի տեղի անդր է Ինթեղա աւան, և դաշտք շուրջանակի. ուր և բլուրն է[2], և մեհեան Դեմետրեայ, յորում ամի ամի գումարին և անդ Ամփիկտիոնք՝ի ժողով։

Յելս դաշտին է Ճանապարհ ինն կամ մանաւանդ Թումբ՝ եօթն ոտնաչափ՝ի լայնութիւն, սուղ ինչ աւելի. և գիտելի է, զի անդ երբեմն փովկիսացիք կառուցին պատուար ընդդէմ հիւսից արշաւանացն Թեսաղացւոց[3]։

Եւ անցեալ ընդ Փիւնիկ վտակ, որ ընդ Ասոպ խառնի գետ՝ բղխեալ՝ի մերձակայ ուստեք հովտէ, հասանէ միւս ևս կապան՝ սուղ ինչ աւելի քան զեօթն ոտնաչափ՝ի լայնութիւն։

Եւ ապա ընդարձակի Ճանապարհն մինչև՝ի Տրաքինիա, որ՝ի Տրաքիս քաղաքէ զանուանն կալաւ[4], և մալիացիք՝ի նմա բնակէն[5]։ Եւ են անդ դաշտավայրք լայնք և ընդարձակք, ուռոդեալք՝ի Սպերքեայ և յայլոց գետոց։ Յարևմտից Տրաքեայ է այժմ Ադակլիա քաղաք, յետ աւուրց Հասերքսեայ կառուցեալ[6]։

Եւ ամենայն երկայնութիւն կրճին, ՝ի դրանէն՝ որ յայսկոյս Ալպենայ, մինչև՝ի կա-

[1] Երոդ. գիրք Է. գլ. 176։ Սոր։ Լիւ. և այլք։
[2] Երոդ. անդ գլ. 225։
[3] Նոյն անդ գլ. 176։
[4] Նոյն անդ գլ. 199։
[5] Թուկ. գիրք Գ. գլ. 92։ Պարտ. հրատ. ընտ. մատ. էջ 275։
[6] Թուկ. անդ։

պանն՝ որ յայնկոյս վտակին, ձգի ասպարէզս երբ քառասունեւուրեն։ Իսկ լայնութիւն նորա փոփոխի զրեթէ յամենայն ոտնափոխս, ամենայն ուրեք աստի լերինք սեպացեալք, և անտի ծով կամ Ճահիճք անգնալիք պատեն զուղին[1]. բազում ուրեք և ընդ ուղին հոսեալ անցանեն ուղիք, և լիճք դադարեալ կան[2]։

Իսկ բանակեցոյց Լեւոնիդաս զզօրսն մերձ Ոլնթեղա[3], և կանգնեալ վերստին զառ 'ի փովկիսացւոցն կառուցեալ անդ զպատուարն, խաղացոյց յառաջ անդր գունդս՝ առ 'ի չտալ թոյլ մերձենալոյ անդր թշնամեաց։ Բայց թէպէտ և խափանեաց զուղին զայն առ ստորոտով լերինն, գոյր միւս ևս 'ի վերայ լերինն ուղի, որ սկսեալ 'ի դաշտէն զՖրաքիս քաղաքաւ՝ յանգի ընդ պատ 'ի պատ շաւիղս մերձ Ոլլեենոս աւան։ Իսկ կացոյց Լեւոնիդաս 'ի պահ ուղւոյն զհազար փովկիսացիսն՝ որ էին ընդ նմա, և երթեալ զկայ առին 'ի բարձունս Իտայ լերին[4]։

Այն ինչ Լեւոնիդայ աստ անդ զզօրսն զետեղեցուցեալ, և ահա բանակն Պարսեբսեայ հեղեղատեր 'ի Ցրաքինիա. և ծածկեցաւ դաշտն խիտ առ խիտ անհամար խորանօքն[5]։ Զայն տեսեալ Յունաց՝ 'ի խորհուրդ մտին,

1 Պաւս. գիրք Ա. էջ 849։
2 Պոլ. գիրք Թ. էջ 428։
3 Պաւս. գիրք Ի. էջ 558։
4 Երոդ. գիրք Է. գլ. 175 և 217։
5 Նոյն անդ գլ. 201։
Լիւ. գիրք ԼԶ. գլ. 15։

և քաղու�՝ 'ի զօրավարացն խրատ տային նա-
հանջել յետս 'ի նեղուցն Կորնթոսի. բայց
Լեւոնիդաս մերժեաց զխրատ նոցա, և սուր-
հանդակս միայն արձակեաց փութացուցանել
զօգնականութիւն նիզակակից ազգաց[1]։

Այս ահա հասանէր հեծեալ մի պարսիկ, ար-
ձակեալ 'ի Խսերքսեայ՝ լրտեսել զբանակ թըշ-
նամեացն։ Յառաջապահք բանակին 'ի նմին
աւուր կային սպասրտացիք, և էին կեաք 'ի նո-
ցանէ պատաղեալ յլեմբշամարտ, այլք 'ի սանտ-
րել զՀերս իւրեանց. քանզի երիցագոյն հոգ
դարմանոյ տանէին հերացն 'ի վտանգս պա-
տերազմի։ Այս ոչ ումեք փոյթ եղև զՀեծե-
լոյն, և թողին նմա ամենայն պարապով առ-
նուլ զՀամար զօրացն և դառնալ։ Բայց որք
յետոյ պատուարին ծածկեալ կային զօրքն՝
ոչ կարաց զնոցանէ տալ Համար Խսերքսեայ,
բայց միայն զերեքարիւրոցն՝ զոր 'ի դրան պա-
հակին ետես[2]։

Մագաւորն զարմացեալ ընդ անհոգու-
թիւն սպարտացւոց, դանդաղեր զաւուրս ինչ՝
առ 'ի տալ նոցա տեղի զգաստութեան[3]. և
յաւուրն հինգերորդի գրեաց առ Լեւոնիդաս
այսպէս. Այթէ հնազանդել յանձն առնուս
Պարսից, տաց քեզ զաշխարհն Յունաց։ Իսկ
Լեւոնիդաս գրեաց առնա պատասխանի. Լաւ

[1] Երոդ. գիրք Է. գլ. 207։
[2] Նոյն անդ գլ. 208։
[3] Նոյն անդ գլ. 210։

իցէ ինձ մեռանել՝ի վերայ Հայրենեաց, քան ծառայեցուցանել զնա։ Դարձեալ միւսանգամ գրեաց առ նա Թագաւորն՝ տալ՝ի բաց զզէնսն. իսկ Եւոնիդաս՝ի ստորոտ գրոյն գրեաց պատասխանի. Այկ և առ՝։

Այս ապա սրտմտեալ Խսերքսեայ՝ խաղացոյց զՊարս և զկիսացիս[1], պատուէր տուեալ նոցա կենդանւոյն ունել զարսն և ածել վաղվաղակի առ ինքն։ Մանք՝ի զօրականէն ընթացեալ առ Եւոնիդաս, ասեն. Թ՝օտ առ մեզ հասեալ կան պարսիկք։ Իսկ նա անխռով ասէ. Դոգջիր մանաւանդ, զի մեք առ նոսա մօտ հասեալ կամք[2]։ Այս ել արտաքս՝ի պատնէն ընտրելովք զօրօքն, և նշան ետ մարտի։ Դիմեցին կատաղաբար Պարք, և անկաւ յառաջամարտիկ ռազմն ընդ խիտ հարուածովք. և որք՝ի տեղի նոցա փոխանակեցին, նմանապէս կորեան. քանզի Յոյնք կուռ ընդ միմեանս մածեալք, և մեծամեծ վահանօքն ամրածածկեալք, նիզակախուռն զՃակատ յարդարեալ կային։ Դունդք զգունդս յաջորդէին առ՝ի բեկանել զայն, այլ՝ի զուր. և՝ի զրաջան յարձակմանցն՝ արհաւիրք կալան զՊարս։ Այս մինչ նոքա՝ի փախստական դառնային՝ եհաս նոցա՝ի Թիկունս գունդն անմահ բիւրուն, որում Խդարնէս զօրավարէր[4]։ Սատակացաւ

[1] Պլուտ. լակոն. առակ. էջ 225։

[2] Երոդ. գիրք Է. գլ. 210։

[3] Պլուտ. անդ։

[4] Դիոդ. գիրք ԺԱ. էջ 7։

մարտն բազմաղէտ. հաւատար էր երկուստեք քաջութիւն, այլ Յունաց զօրավիգն էր տեղին և տարազ զինուցն. քանզի տէգք պարսկաց կարճաբունք էին, և վահանք փոքրիկք։ Չու անկան 'ի նոցանէ բազումք յոյժ. և Արբասերքսեայ տեսանելով զփախստեայս, պատմէն 'ի վեր վազեալ բազում անգամ յաթոռոյ, առ կասկած կորստեան բանակին։

Ի վաղիւ անդր դարձան 'ի պատերազմ. այլ այնպէս ճախողեցին իրք Պարսից, մինչ ոչ էս յուսալ Արբասերքսեայ առնուլ զպահակն։ Չէ մինչ դեռ յամօթ և 'ի տագնապ յուզէին ամ բարտաւան և կարճամիտ խորհուրդք նորա, մատեաւ ոմն 'ի բնակչաց վայրացն՝ Չպիտաղ անուն նորա, և եցոյց զօրհասական ուղին՝ ընդ որ մարթէրն պաշարել զՅոյնս։ Թագաւորն լի խնդութեամբ զօրահատոյց արար զԴարնէս անմահից գնդաւն [2], և Չպիտաղ առաջնորդէր նմա։ Յառաջնում պահու գիշերոյն մեկնեալք, անցին ընդ անտառն կալնեաց՝ որ զկողմ լերինն ծածկէն, և հասին մերձ 'ի տեղին՝ ուր Լեւոնիդայ զկէսս 'ի զօրացն կացուցեալ էր։ Դարնէս համարեցաւ զնոսա սպարտացիս. բայց Չպիտաղ ծանեաւ զնոսա՝ զի փովկիսացիք էին, և ծանոյց զօրավարին։ Որ իբրև կազմեցաւ 'ի կռիւ, նոքա առ վայր

[1] Երոդ. գիրք Է. գլ. 211։ գիրք ԺԱ. կէ 7։ Սար. գիրք
[2] Նոյն անգ գլ. 215։ Դիոդ. Ա. կէ 10։

մի դիմամարտեալ՝ ապա 'ի մերձակայ բլուրսն փախուցեալ ամրացան. և Պարսք յառաջ խաղացին, ուշ եդեալ Հանապարհին։

Այդ եղև Լեւոնիդայ 'ի նմին գիշերի խորհուրդն Պարսից 'ի դասալիք փախստէից նոցա, և ընդ այդն գուժկանք 'ի պահապանաց լերինն հասին առ նա կատարման խորհրդոյն։ Ի լուր ահագին համբաւոյն՝ ժողովեալ 'ի միասին զօրապետք, կիսոցն լաւագոյն համարեալ տեղի տալ 'ի Թերմոպիլէայ, իսկ այլոց կալ մնալ անդէն, Լեւոնիդաս աղաչեաց զնոսա պատերազմոյն ժամանակի պահել զանձինս. այլ ինձ, ասէ, և իմոցս ոչ է օրէն Թողուլ զյանձնեալ մեզ պահն[1]։ Բայց Թեսպացիք չառին յանձն մեկնել 'ի սպարտացւոց. և Թեբացիք չորեքարիւր այր, կէսք կամակար և կէսք ակամայ, կացին ընդ նոսա[2]. իսկ այլոց պարապ գտեալ, խոյս ետուն 'ի պահակէն։

Յայնմ վայրի Լեւոնիդաս մտաբերեալ 'ի յանդգնագոյն արուԹիւն, խօսեցաւ առ իւրսն և ասէ. Ահ ևս աստ է մեզ տեղի մարտնչելոյ, ոչ զինուորակիցք իմ, այլ 'ի խորան անդր Բսերքսեայ պարտ է մեզ դիմել. կամ խողխողեսցուք զնա, և կամ անդէն 'ի բանակին նորա կորիցուք։ Արախոյս ցնծուԹեան բար-

[1] Երոդ. գիրք Է. գլ. 220։ Պլուտ. յղ. ջար. Երոդ. հա. Յուս. գիրք Բ. գլ. 11։
[2] Երոդ. անդ գլ. 222։ 2. էջ 865։

ձին զօրքն առ հասարակ։ և ետ նոցա Լեւոնիդաս սակաւ ինչ առնուլ կերակուր, և ասէ. Մնդ սանդարապետին Պղուտոնի յետ այսորիկ Ճաշ մեզ ընդ հուպ պատրաստի։ Եւ այս ամենայն բանք նորա տպաւորագոյնք 'ի սիրտ զօրականին ազդէին։ Եւ մինչ կազմէրն յարձակել 'ի թշնամիս, յուղեցան գուՇք նորա 'ի վերայ երկուց սպարտացւոց՝ ընդ որս բարեկամութեամբ և արեանմերձաւորութեամբ կցորդէր. և ետ միումն 'ի նոցանէ գիր, և միւսումն պատուէր գաղտ առ աւագանին ըսպարտացւոց։ Նոքա ետուն պատասխանի. Ել 'ի հրեշտակութիւն կամք աստ, այլ 'ի պատերազմէլ. և վաղվաղակի անցեալ կացին 'ի սահմանեալ կայս իւրեանց։

Եւ 'ի մէջ գիշերի մեկնեալք 'ի պահակէն Լեւոնիդայ իւրովքն, և արագ ընթացեալ ընդ դաշտն, զյառաջապահ գունդս տապաստ արկեալ, հասանեն մինչև 'ի խորան անդր Խսերքսեայ, այլ նորա կանխեալ փախուցեալ էր. և գիմեն 'ի մերձակայ խորանսն, սփռին ընդ բանակն, և յագին արեամբ թշնամեաց։ Սքհաւիրքք առաջի երեսաց նոցա գնային, և 'ի գնալն յաՃախէին պակուցանողական նշանօք։ Շուկ խառնաձայն և ամբոխ աղաղակի գու-

[1] Դիոդ. գիրք ԺԱ. էջ 8։ Պլուտ. յՊ. լար. Երոդ. հա. 2. էջ 866։ Նոյն լեկոն. առակ. հա. 2. էջ 225։ Յուս. գիրք Բ. գլ. 11։

ժէին զկոտորած զօրացն Իգարնեայ, և զմօտալուտ երկիւղ կոտորածի ամենայն բանակին 'ի համագումար զօրացն Լեղադայ։ Բրեա-գոյնք 'ի պարակաց ոչ ևս զձայն զօրավարացն լուեալ, ոչ գիտէին յո՛ դիմել, զո՛ հարկանել, և խառն 'ի խուռն յարձակմամբ զիրեարս կոտորէին։ Բայց ինչ արփիասկիզն Ճառա-գայթք զյաղթական զօրականին ջնկատն փոքրիկ ածին 'ի տեսիլ, գունդ գործեցին վաղ-վաղակի, և շուրջանակի 'ի վերայ յարձակեցան յունական գնդին։ Եւ Լեւոնիդաս 'ի թանձրատարափ նետիցն անկաւ տապաստ, և 'ի վերայ դիական նորա մղեցաւ մարտ ահագին՝ Յունաց ընդ դոռ պատերազմողս պարսկախումբ բանակին մարտնչելով, առ 'ի չտալ նոցա զիրառս առաբին։ Եւ երկոքին եղբարք Արսերքսեայ, և ամբոխ բազում յոյժ 'ի Պարսից, անդ և սպարտացիք բազումք անկան։ Բայց թէպէտ և Յոյնք նուազեալք և պարտասեալք՝ բարձին զզօրավար իւրեանց, և չորիցս 'ի նահանջելն իւրեանց վանեցին զթշնամիս. և հասեալք 'ի պահակն, և անդր ևս քան զպատանեշն ընկրկեալք, երթեալ զկայ առին 'ի բլրակին մերձ Անթեղա։ Եւ վայրիկ մի ևս անդ ժուժկալեցին, դիմամարտեալք ընդդէմ հետամտից զօրացն, և զորս Իգարնէս յայնմ կուսէ պահակին ածէրն 'ի վերայ նոցա[1]։

[1] Երդ. գիրք Է. գլ. 225։

«Երեցէք աստանօր, ոգիք քաջազունք, տը-
կարութեան բանիցս. 'ի վերայ բլրոյն՝ ուր ըզ-
վերջին հեծութիւնսդ արձակեցիք, անդ ար-
ժանաւոր ևս կարացի մատուցանել ձեզ սպաս,
փարեալ զչիրմաւդ ձերով, և առագեալ ար-
տասուօք զվայրս ներկեալս յարենէդ ձերմէ։
Ա.յլ Հարտարութիւն իսկ բանից զինչ 'ի ջրք-
նաղ և 'ի գերաշխարհիկ զոհդ ձեր յաւելուլ
կարիցէ։ Պարսկայինն անկցի պետութիւն՝
ընդ որում ժուժկալեցէքն 'ի կռիւ, այլ յիշա-
տակ ձեր կացցէ. և օրինակ ձեր մինչև 'ի վախ-
ճան յաւիտեանց շարժեսցէ զսիրտս հայրե-
նասէրս 'ի խոկումն և 'ի հիացումն։

Մեբացւոց ոմանց նախ քան զվախճան մար-
տին անձնատուր ասեն լեալ 'ի պարսիկս[1]։
Մեսպացիք հաղորդք եղեն քաջութեան և
բաղդին սպարտացւոց. այլ փառք սոցա մթա-
ցուցին զթեսպացւոցն։ Ա.յսմ հասարակաց
կարծեաց և այն համարեսցի պատճառք, զի
զնորհուրդ փոխանակելոյ զանձինս 'ի վերայ
հայրենեաց 'ի Մերմոպիլէ սպարտացիք երկ-
նեցին 'ի մտի, հաստատեցան 'ի նոյն, և կա-
տարեցին զայն, ոչ 'ի յոյզս ինչ եռանդեան՝
այլ պարապով և անյողդողդ արիութեամբ.
իսկ Թեսպացիք 'ի նախանձ նմանութեան
վառեալ, անդէն առ ետեղ յեռանդն քաջու-
թեան և առաքինութեան արիացան։ Հարկ

[1] Երոդ. գիրք է. գլ. 233։

լեալ նոցա դերազանցել քան զայլս 'ի մարդկանէ, ուր սպարտացիք քան զանձինս գտան գեր 'ի վերոյ։

Ինդ կորուստ քաջամարտիկ պատերազմողացն Ակեդեմն պանծացաւ յոյժ. և ամենայն որ ինչ 'ի նոսա պատկանեալ իրք՝ ցանկալի եղեն։ Մինչ դեռ էին նոքա 'ի Թերմոպիլէ, ոմն 'ի տրաքինացւոց առ 'ի տալ նոցա զբազմամբոխ պարսկախուռմբ բանակին զհաւոր կերպարան՝ ասէր ծածկել նոցա նետաձգողքն և ստուերացուցանել զարեգակն։ Սակ Լեւոնեկէս սպարտացի պատասխանի տուեալ, ասէ. Լաւ զինչ քան զայդ լաւագոյն կայցէ, զի 'ի հովանւոջ լիցի մեզ մարտնչել։ Լաւ այլ ոմն 'ի սպարտացւոց, առաքեալ 'ի Եւոնիգայ 'ի Ակեդեմն, արգելաւ Յ. Լեւոնոս վասն աչացն կալոյ 'ի տեսութենէ։ Զդ եղև նմա զի ջոկատն Դարնեայ իջանէր 'ի լեռնէն մըտանել 'ի պահակն, և զնն առեալ՝ հրամայեաց սարկի իւրում առաջնորդել իւր առ թշնամիս. և խառն 'ի խուռն յարձակեալ 'ի նոսա, ընկալաւ զվախճան՝ որում մնայրն[2]։ Լաւ երկուք ոմանք հրամանաւ զօրավարին 'ի բացեայ գտեալ 'ի մարտէն, 'ի դառնալն իւրեանց եղեն կապածելիք՝ իբր վատք և ապաժամանք լեալ։ Լաւ առ յոյժ նախատանացն՝ մին չոգաւ զիւրովին, իսկ միւսն ոչ կարաց այլ ազգ ջնջել

[1] Երոդ. գիրք Է. գլ. 226։ [2] Նոյն անդ գլ. 229։

զնախատինսն, բայց յետ սակաւ միոյ 'ի պղատեան Ճակատամարտին տալով զկեանս 'ի վերայ հայրենեաց[1]։

Ինձնանուէր հայրենասիրութեանն Լեւոնիդայ և զինուորակցաց նորա արդասիք առաւել եղեն յոյժ քան զամենայն պայծառ յաղթութեանց. զի ուսոյց նա Յունաց զդարանեալ 'ի նոսա զօրութիւնն, և Պարսից զպատրուակեալ 'ի նոսա տկարութիւնն[2]։ Զարհուրեցաւ Թագաւորն Պարսից, զի այնքան նուազունք յաշխարհազօր բազմութեանն մարդկանն էին իւր զինուորք. և զարհուրեցաւ դարձեալ, զի այնքան ախոյեանս կրէր Յոլադա 'ի ծոցի իւրում անվեհերս որպէս զթեսպացիսն, և այլ ևս ուժ հաղար սպարտացիս հանգոյնս այնոցիկ՝ որ անկան 'ի Ճակատամարտին[3]։ Դարձեալ և հիացումն, որով սոքա լցին զՅոլադա, փոխեցաւ ընդ հուպ 'ի տենչալի նախանձ նմանութեան նոցին։ Յանկուութիւն փառաց, սեր հայրենեաց, և ամենայն առաքինութիւնք դեր 'ի վեր ամբարձան, մեծանձնութեան գերասահմանեալ յանհաս բարձրութիւն։ Ժամանակ էր անդ քաջայաղթ արութեանց, և ոչ ևս ածելոյ շղթայս 'ի կապանս ազգի՝ որ այնպիսի ազնուական մտածութեամբքն խրախուսեր։

[1] Երոդ. գիրք Է. գլ. 231 և 232։

[2] Դիոդ. գիրք ԺԱ. էջ 10։

[3] Երոդ. անդ գլ. 210 և 234։

Մինչ դեռ Աստեղբսէս 'ի Յերմոպիլէ էր, տորմիզ նաւաց նորա մերձ 'ի ծովեղերս Մագնեսիոյ ալեկոծեալ 'ի մրրկէ՝ որ չորեքարիւր նաւս պատերազմիկս և զբազումս 'ի կարասեկիր նաւաց նորա կորոյս[1], և հասեալ խարիսխս արկեալ կայր առ Միտետ քաղաքաւ հանդէպ յունական նաւատորմին, 'ի բացեայ 'ի նմանէ ուԹսուն ասպարիզաք[2], 'ի պահ կրՃին՝ որ բաժանէր ընդ Աբիա և ընդ ցամաք երկիրն։ Որ ինչ 'ի Յերմոպիլէ նախ քան զՃակատամարտն և 'ի Ճակատամարտին պատահեցին իրք, բազում ինչ հանգոյն նոցին և աստ 'ի նաւամարտի դիպան, Թէպէտ և այլ ազգ էլից իրացն յաջողեալ[3]։

Ի մերձենալ նաւատորմին Պարսից՝ խորհուրդ կալան Հոյնք տեղի տալ 'ի կրՃէն, բայց Յեմիստոկղէս կալաւ զնոսա անդ։ Աւ մինչ դեռ երկերիւր նաւք պարսիկք պատեին զԱբեաւ առ 'ի պաշարել զՀոյնս, դարձեալ մրրիկ խիստ բաղխեալ զնոսա 'ի ժայռս՝ խորտակեաց[4]։ Աւ զաւուրս երիս՝ գրեԹէ յամենայն Ճակատս յաղԹող եղեն Հոյնք. այլ ապա ըզգոյժ առեալ նուաՃելոյ պահակին Յերմոպիլեայ, անդէն խոյս ետուն 'ի Սաղամինա կղզի[5]։

1 Երոդ. գիրք Է. գլ. 190։ Դիոդ. անդ։
2 Նոյն գիրք Ը. գլ. 8։
3 Դիոդ. գիրք ԺԱ. էջ 11։
4 Երոդ. գիրք Ը. գլ. 44 5։
5 Երոդ. անդ գլ. 7 և 13։
6 Նոյն անդ գլ. 21։

Բայց Թեմիստոկղ 'ի դառնալն շրջեալ ընդ ծովեզերս՝ ուր նաւազին Թշնամեաց մարթեր երթալ զջրոյ, գրոչմեալ երթող անդ արձանագիրս առ յոնիացիսն՝ որ էին 'ի բանակին Պարսից, յուշ առնելով նոցա՝ զի 'ի հաւուց նախնեաց 'ի Յունաց սերեալ, զէն ընդդէմ հայրենեացն առնուին։ Բանզի խորհէր սարտուցանել զնոսա այնու 'ի Բսերքսեայ, կամ կասկածել զնոսա առնել թագաւորին։

Կաւատորմն Յունաց զկայառեալ յայնժամ առ նեղցիւն Կորնթեայ, 'ի պահ եւթ մտիցն Պեղոպոնեսեայ կայր[1]։ Որով աթենացւոցն 'ի դերև եւ ակնկալութիւն. քանզի յուսային նոքա, զի Բիովտիա միայն լիցի ասպարէզ մարտին, և ոչ հասցէ Յ՚ստիկէ պատերազմ. և անօգնական 'ի նիզակակցաց վհատեին արդեօք։ Բայց նախահոգ զգուշութեամբքն Թեմիստոկղ՝ որ զամենայն ինչ գուշակէր առանց երկիւղի, և զառաջս ամենայն չարեաց առնոյր առանց վտանգի, արկածքն իսկ այնոքիկ օգնեցին 'ի յաջողութիւն խորհրդոյն՝ զոր անդստին 'ի սկզբանէ պատերազմին Պարսից կալեալ էր 'ի պահ հայրենեաց։

Լսօսէր հրապարակաւ և առանձինն ընդ աթենացիս, և ասէր՝ թէ հարկ է մեզ մեկնել

[1] Երոդ. գիրք Ը. գլ. 22։ Յուստ. գիրք Բ. գլ. 12։ Պլուտ. 'ի Թեմիս. էջ 116։

[2] Երոդ. անդ գլ. 40։ Իսոկ. Նեբր. հատ. 1. էջ 166։

'ի վայրաց զորս ցաւու�եր կնաւոր մատնէ 'ի կատաղութիւն Պարսից. և թէ 'ի նաւատորմի է մեզ այսուհետև ապաւէն, և հայրենիք մեզ՝ուր ուրեք մարթի պահել զազատութիւն։ Եւ հարցուէն դեղփական պատասպարան լինելոյ բանից նորա պատգամաց։ Եւ ապա 'ի գումարել ժողովրդեանն 'ի խորհուրդ, դեպք լիցի 'ի նմանէ մեքենայեալ՝ ածին զամենեսեան լիով 'ի հաւանութիւն. քանզի ասէին քուրմք զօձն մեհենական որ 'ի տաճարին Աթենասայ տաճէրն, աներևոյթ լեալ։ Եւ ձայն բարձեալ ամենեցուն ասեն. Զթէ աստուածուհին տեղի տուեալ մեկնեցաւ 'ի բնակութենէ իւրմէ, մեք ո՞ւմ կամք, զի՞ և ս յապաղեմք, ելցուք ըզհետ նորա։ Եւ հաստատեաց անդէն ժողովուրդն զհրովարտակն առաջարկեալ 'ի Թեմիստոկղեայ, զի զքաղաքն 'ի խնամն Աթենասայ թողեալ, ամենայն որ կարող էր զէն առնուլ՝ ելցէ 'ի նաւ, իւրաքանչիւր խնամ կալեալ յապահովութիւն կնոջ իւրոյ և որդւոց և ստրկաց[2]։ Եւ այնպէս խրախուսեալ ժողովրդեան, զի յարձակել 'ի ժողովոյն՝ ըզԱիւրսիզ Ճարտարախօս քարկոծ արար, փոխանակ զի իշխեաց նա խրատ տալ հնազանդել Պարսից. և զկին նորա նովին պատժով պատուհասեալ[3]։

1 Երոդ. գիրք Ը. գլ. 41։ Պլուտ. 'ի Թեմիս. էջ 116։
2 Պլուտ. անդ։
3 Դիոդոս. վերպակ. էջ 507։

Բայց 'ի կատարել հրովարտակին՝ անդ էր տեսանել տեսիլ աղիողորմ։ Բնակիչք Բյտի-կեայ ստիպեալք 'ի թողուլ զտունս իւրեանց և զանդաստանս և զմերհեանս և զդիս, եղեբական ողբովք զդաշտս հնչեցուցանէին։ Ծերք, զորս վասն անցեալ հասակին տկարութեանն հարկ էր թողուլ 'ի քաղաքի անդ, ոչ կարէին բաժանել 'ի գրկաց տառապելոց ընտանեացն։ Բակ որ կարողն էին օգնել հայրենեաց, հասեալք 'ի ծովեզրն՝ զհրաժարական ողջոյն և զարտասուս կանանց իւրեանց և որդւոց և զծնողացն ընդունէին՝, Ձեպ 'ի Ձեպոյ յուղարկելով զնոսա նաւուք Յոգինա 'ի Տրեզէն և 'ի Աղամիս[2], և ինքեանք Ձեպէին 'ի նաւատորմն ծանրաթափիծ տրտմութեամբ՝ որ ժամուն ևեթ վրէժինդրութեան սպասեալ մնայր։

Բակ Պրսերքսէս կաղմէր 'ի չու, ելանել 'ի Թերմոպիլեայ. զի փախուստ նաւատորմին Յունաց անդրէն միւսանգամ խրոխտացոյց ըզնա, և յուսայր գտանել զնոսա յարհաւիրս և 'ի վհատութեան՝ յորս ինքն առ թեթև ինչ արկածից անկանէրն։ Յայնմ վայրի փախստեայք ոմանք յարկադացուց ածան առ նա. Եհարց թագաւորն՝ թէ զի՞նչ գործէն ժողովուրդն բնակեալ 'ի Պեղոպոնես։ Նա նոքա

[1] Պլուտ. 'ի թեմիս. էջ 117։ Պլուտ. գիրք Բ. էջ 185։
[2] Երոդ. գիրք Ը. գլ. 41։

ասէն. Ի տօնս ողիմպիական խաղուց պարապեալ, բաշխէն պսակս յաղթողաց։ Ընդ մի 'ի զօրագլխաց բանակին գոչեաց. Գնամք ուրեմն պատերազմել ընդ մարդկան, որ վասն փառաց մարտնչին։ Իսկ Աբերքսէս կշտամբեալ յանդիմանեաց զվատութիւն նորա. և համարեալ նախատինս իւր զանհոգութիւն Յունաց, Ձեպեցոյց զչու բանակին[1]։

Լսին եհաս նա 'ի Գոռկիս. բնակիչք երկրին յանձն առեալ կորուսանել զամենայն, և մի մատն լինել հասարակաց ազատութեան, կէսք 'ի Գարնաս լեառն ապաւինեցան, այլք 'ի մի 'ի մերձակայ ազգաց. և ապականեցան անդք նոցա, և քաղաքք նոցա աւերեցան 'ի հուր և 'ի սուր։ Այլ Իփովտիա հնազանդեցաւ Գարսից, բայց 'ի Գղատեայ և 'ի Թեսպեայ, որք հիմն 'ի վեր տապալեցան[2]։

Բայց հարեալ զԲոտիկէ, եմուտ ապա Աբերքսէս յԹէնս. և եգիտ անդ ծերունիս ոմանս տառապեալս՝ որ մնային մահու, և սակաւս 'ի քաղաքայնոց, որք 'ի խեղաթիւր մեկնութիւնս պատգամաց դից յուսացեալ՝ միջնաբերդին պահ ունէին։ Որոց զաւուրս բազումս ժուժկալեալ անդ ընդդէմ յաձախ յարձակմանց պաշարողացն, ապա կէսք ընդ պարիսպն 'ի վայր հոսեցին զանձինս, այլք 'ի մեհեանս ապաւինեցան, բայց 'ի զուր. զի

[1] Երոդ. գիրք Ը. գլ. 26։ [2] Նոյն անդ գլ. 50։

թէնամին անդէն զնոսա կոտորեաց, և զքա-
ղաքն յաւար մատնեաւ՝ հրկէզ արար՝ ։

Ալեքսանդրոսն Պարսից խարիսխս արկեալ
կայր յայնժամ՝ ի ծովեզրս Փաղերեայ՝, քան
ասպարիզաւ հեռի Լ. թենայ. իսկ Յունացն
՝ի ծովեզերս Սաղամինայ։ Սաղամինա հանդէպ
Լեւսեայ կացեալ՝ գործէ անդանօր ծոց մեծ,
երկուստեք թողով մուտս, յարևելից՝ ի կողմն
Աթտիկեայ, և յարևմտից՝ ի կողմն Մեգարայ։
Արևելեան մտիցն, առ որով է Փսիտաղիա
կղզի, սուղ ինչ աւելի քան զեօթն ասպարէզս
ընդարձակի ուրեք ուրեք լայնութիւնն, և ըն-
դարձակագոյն յոյժ յայլ տեղիս. իսկ արև-
մտեանն անձուկ է յոյժ։

Բայց նաւատորմին Յունաց՝ ի հրկիզութէ
Լ. թենայ այնպէս սասանեալ զի բազմագոյնք
՝ի նոցանէ խորհուրդ կալան մատչել՝ ի Եղուցն
Կորնթոսի, ուր և ցամաքային զօրն բանակեր,
և հաստատեցան չու առնել՝ ի վաղուն[3]։ Բայց
Թեմիստոկլ՝ ի գիշերին յայնմիկ* մատուցեալ
առ Լուրիբիադ սպարապետ ամենայն նաւա-
տորմին[4] եցոյց նմա հզօր բանիւք, զի եթէ
զզօրականն ահաբեկ ածէր՝ ի տեղի դիպող փա-
խստեան՝ ոչ ևս ամենայն իշխանութեամբն

[1] Երոդ. գիրք Ը. գլ. 53։ Պաւս. գիրք ԺԸ. գլ. 35. էջ 887։

[2] Երոդ. անդ գլ. 67։ Պաւս. գիրք Ը. գլ. 10. էջ 619։

[3] Երոդ. անդ գլ. 56։

* Ի գիշերին 18 կամ 19 աւուր հոկտեմբերի. 480 ամաս։

[4] Երոդ. անդ գլ. 57։

կարող էր ունել զնոսա 'ի նաւս, այլ վաղ ամենեքին դասալիք փախստեայ զնային՝ թողեալ անօգնական զԽլադա։

Խրիբիադ խռովեալ 'ի բանից անտի՝ կոչեաց զզօրագլուխս 'ի ժողով, և ամենեքին հաւառակ կացին խրատուն Թեմիստոկղեայ. և այնքան սրտմտեալք ընդ յամառութիւնն նորա, մինչև թշնամանս ևս առնել նմա և սպառնալիս նախատանօք։ Այլ նա զայրագին զդէմ կալեալ խազմարար դժպատեհ աղմկին, իբրև եւ տես ցուպ 'ի վերայ իւր վերացուցեալ Խրիբիադեայ, զկոյ էառ և ասէ անխռով. Հար, այլ անսա՝։ Ընդ այն մեծախօհութիւն նորա զարմացաւ զօրավարն սպարտացի, և լռեցին ամենեքին. իսկ Թեմիստոկղ դարձեալ զօրացաւ, այլ առանց ինչ կասկածանս 'ի հաւատարմութիւն ուրուք 'ի զօրագլխացն կամ 'ի զօրաց արկանելոյ՝ յանդիման արար թէ քանի՞ օգուտ էր նոցա կալմնալ անդ, և քանի՞ վտանգ 'ի տեղւոջն՝ ուր գնալ կամէին, և ասէ. Այստանօր յանձկի հաւասար զօրութեամբ Ճակատեսցուք առ թշնամին. իսկ 'ի բացի բազմախումբ տորմիղ նաւաց նորա 'ի լայնալիր ծովուն ծաւալեալ՝ շուրջ պատեսցէ զմեզ։ Զ։ Սաղամեաւ պատերազմեալք, պահ կալցուք կղզւոյն՝ ուր կանայք մեր և որդիք պատսպարեալ կան, և զԽգինա կղզի և զՄեգարա քաղաք ապրեցուս-

1 Պլուտ. 'ի Թեմիս. էջ 117։

ցուք՝ որոց բնակիչք նիզակակից մեր են։ Իսկ 'ի նեղուցն մատուցեալք՝ կորուսցուք զկարևոր վայրքս. և դու, Լուբիբիադ, ստրջասցիս 'ի հասանել Թշնամւոյն 'ի ծովեզերս Պեղոպոնեսեայ'։

Յայնժամ Լգիմաս զօրագլուխ կորնթացւոց, յամառեալ մնդեալ ընդդէմ խորհրդոյն Թեմիստոկղեայ, և անդրէն 'ի Թշնամանս զառածեալ՝ ասէ. Պարտ իցէ ինչ առն, որոյ չիք տուն և տեղի, օրինադիր լինել Լակեդայ։ Լսէ լուսի կացցէ ժամանակի խորհուրդն Թեմիստոկղեայ, յորժամ լիցի նմա յոյս ժառանգելոյ հայրենիս։

Եւ Թեմիստոկղ ասէ. Լաղէ՝ և իշխիցէ՞ զք յանդիման Հելլենաց գրել 'ի յանցանս, զի 'ի պահ ազատութեան Թողաք 'ի բաց զշեղջակոյտս քարի և կրոյ։ Հեգ և չարաբախտ դու. կործանեցան Լթէնք, այլ աթենացիք կան և մնան, և են նոցա հայրենիք պայծառագոյն յոյժ քան զքոյդ։ Հայրենիք են նոցա, որում հրամայեմն, տորմիզ երկերիւր նաւաց։ Սոքա աւասիկ պատրաստ կան 'ի պատերազմ, այլ կացցեն 'ի տեղւոջ ասա. եթէ անտես լեալ արհամարհեսցի օգնականութիւն սոցա, Յոյնք ամենայն՝ որ ինձ ասատանօր լսեն, խելամուտ լիցին ընդ հուպ, զի աթենացիք ժառանգեն տակաւին քաղաք Ճոնագոյն և անդաստանս յոյժ

[1] Երոդ. գիրք Ը. գլ. 61։ Դիոդ. գիրք ԺԱ. գլ. 13։

առաւել բերրիս քան զորս կորուսին՝։ Եւ դարձեալ առ Եւրիբիադ, ասէ. Վասն մեզ մեայ այսուհետև ընտրել ընդ փառս և ընդ նախատինս լինելոյ պատճառաք փրկութեան կամ կործանման Հելլադայ։ Բայց յայտնի լիցի ամենեցուն, զի 'ի մեկնել ձեր՝ և մեք կանամք և որդւովք չու արասցուք յԻտալիա, կանգնել պետութիւն զյառաջագոյն աղդեալն մեզ'ի դիցն պատգամաց։ Եւ 'ի կորուսանել ձեր զնիւսակակիցս հանգոյնս աթենացւոց յայնժամ թերեալ յուշ լիցին ձեզ բանք Թեմիստոկղեայ[2]։

Ընդդրդուելի հաստատութիւն աթենացւոյ զորավարին պակոյց զամենեսեան, և հրաման եւ Եւրիբիադ կալ և մնալ նաւատորմին անդ 'ի Սաղամինա։

Ի նոյն յոյզս խորհրդոց երկաքանչիւր տորմիղք նաւացն աղմկէին։ Վասերքսէս ժողով կոչեալ 'ի մի 'ի նաւացն, 'ի խորհուրդ դումարեաց զամենայն զորավարս խմբից նաւատորմին. որք էին Թագաւորքն Տիւրոսի և Սիդոնի և Կիլիկեայ և Կիպրոսի, և այլ բազումպետքն և Թագաւորքն հնազանդեալք և հարկատուք արքային Պարսից։ Ի ծիրանափառ ակմբին էր և Արտեմիսիա դշխոյն Հալիկառնայ և տիրուհի շրջակայ կղզեաց, որում ոչ օգ յայլոց զորավարացն յաղթեր արիութեամբ և խոհականու-

[1] Երոդ. գիրք Ը. գլ. 61։ [2] Երոդ. անդ գլ. 62։ Պլուտ. 'ի Թեմիս. էջ 117։

թեամբ՝. որ և կամակար ընդ Պարսեբսեայ դումարեալ՝ի պատերազմ, զՀնմարտութիւն առ նոսս խօսէր համարձակ՝ առանց դժպհի լինելոյ թագաւորին։ Խորհուրդ՝ի մէջ առին՝ եթէ ելցէ՞ն դարձեալ՝ի նաւամարտ. և Պարդոնիոս շրջեալ առ ամենեսին՝ լսէր զիւրաքանչիւր խորհուրդ։

Բ.ըքայն սիդոնացւոյ և այլք բազումք համախոհքնմին, գիտելով զխորհուրդս մեծի թագաւորին, կամէին ընդ պատերազմ. բայց Բ.ուտեմիսիա խօսեցաւ առ Պարդոնիոս, և ասէ. Պոգջիր զոր ասեմն թագաւորին. ոչ որ կարծիս վատութեան զինեն բերել կարիցէ յետանցիցն, որ՝ի վերջնում նաւամարտի անցին. այլ նախանձ բարւոյն ստիպէ զիս տալ խորհուրդ օգտակար։ Պ՝ի խիզախեր՝ի պատերազմ զրաջան, թերևս և ինքսակար փառաց քոց։ Հասեր ահա ըղձից քոց, և նուաճեցեր զԲ.ԹԷՆս. նուաճեսցես ընդ հուպ և զամենայն Յոյլադայ, եթէ զնաւատորմ քո կազմ և եթէ կալցիս՝ի խաղաղութեան. զի թշնամեացն սակաւօրեայ պարէնք են, և ցրուեսցի իւրովի նաւատորմն նոցա։ Իսկ եթէ վաղագոյն կամիցիս ցրուել զնոսա, յղեա զնաւս քո՝ի ծովելերս Պեղոպոնեսեայ, և խաղացո զբանակ քո՝ի նեղուցն կորնթական, և զօրքն Յունաց դիմեսցեն յօգնութիւն հայրենեաց իւրեանց։ Խիթամ՝ի

[1] Եղոպ. գիրք Ը. գլ. 101։

հակատամարտէդ, զի ոչ միայն յօգտութեանց աստի վերջացեալ՝ այլ և վտանգ երկոցունցդ իսկ ածցէ բանակաց ընդ ծով և ընդ ցամաք. և խիթամ, զի գիտեմ զհմտութիւն Յունաց 'ի ծովամարտ։ Ոչիք որ որպէս զքեզ Թագաւոր բարեսէր, այլ շուրջ զքեզ պաշտօնեայք անբարեսէրք պատեալ կան. աղէ՝ մի թէ յամբոխ Եգիպտացւոցդ յուսայցես և կիպրացւոց և կիլիկեցւոց և պամփիղացւոց, որովք յոլովագոյնք 'ի նաւացդ լցեալ են[1]։

Իսկ իբրև Մարդոնիոս զամենեցուն զկարծիս պատմեաց Խսերքսեայ, Թագաւորն զդրշխոյին Զիկառնայ գովեալ զբանսն, առ 'ի չբմերժելոյ և զխորհուրդս այլոց բազմագունից՝ հրաման ետ նաւատորմին խաղալ ընդ Սաղամինա, և բանակին ընդ նեղուցն կորնթական[2]։ Եւ որպէս գուշակեացն Զրտեմիսիա, բազմագոյնք 'ի զօրավարաց յունական նաւատորմին ձայն բարձին, դիմել յօգնութիւն 'ի Պելոպոնես. այլ 'ի հակառակութենէ եգինացւոց և մեգարացւոց և աթենացւոց յամէր խորհուրդն։ Բայց Թեմիստոկղ իբրև ետես զի դարձեալ առաջնոցն յաղթէր խորհուրդն[3], ըզվերջին Ձիգն 'ի գործ էարկ առ 'ի խափանել զչարիսն։ Բանագնաց եղև 'ի գիշերին յայն-

[1] Երոդ. գիրք Ը. գլ. 68։
[2] Նոյն անդ գլ. 69 և 71։
[3] Լիկուրգ. 'ի Լեոկր. էջ 156։

միկ* առ զօրավար նաւատորմին Պարսից, թէ ահա զօրավարն աթէնացւոց և կէսք 'ի Յունաց ընդ նմա պատրաստ կան ձեռն տալ քեզ, այլք զարհուրեալ յերկիւղէ՝ խորհին վաղվաղել 'ի փախուստ. և պառակտեալք յիւրեանս, ընդ պաշարել 'ի թշնամեաց՝ լցին զէնբնկէց, կամ առ միմեանս դարձուցին զզէնսն[1]։

Ընդէն վաղվաղակի, զգիշեր օգնական գըտեալ, յառաջ խաղացին Պարսք. և կալեալ զելս փախստի Յունաց[2], կացուցին 'ի պահըպեքհազար այր[3] 'ի կղզւոջն Փսիտաղիա՝ որ կայ ընդ յունաստան երկիր և ընդ արևելեան ծայր Աղամնայ։ Ընդ պատրաստէին տալ պատերազմ[4]։

Յայնմ վայրի Աբիստիդէս, զոր Թեմիստոկղ փոքր մի յառաջ դարձուցեալ էր յաքսորանացն ըստ աղաչանաց աթէնացւոց[5], անցանէր Լեգինայ կղզւոյ 'ի բանակն Յունաց. և եւ տես զնաւորմունս Պարսից։ Եւ հասեալ 'ի Սաղամինա, եկն ուր էր ժողով զօրավարացն. և կոչեցեալ զԹեմիստոկղ, ասէ. Յամէ արդ 'ի քաց դնելոյ զհակառակութիւն մնոտի զմանկտւոյ վայել, և 'ի նոյն նախանձ վառելոյ փոր-

* Ն. Ք. 480 ամաս, յ19 կամ 'ի 20 աւուր հոկտեմբերի։

1 Երոդ. գիրք Ը. գլ. 75։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 14։ Պլուտ. 'ի Թեմիս. էջ 118։ Նեպ. 'ի Թեմիս. գլ. 4։

2 Էսքիլ. 'ի Պարս. տող 366։ Դիոդ. անդ։

3 Պաս. գիրք Ա. գլ. 36. էջ 88։

4 Երոդ. անդ գլ. 76։

5 Պլուտ. անդ էջ 117։


ՏԵՂԱՏՈՒԹԻՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՍԱՂԱՄԻՆԱՆ
ՄԵԴԻԱՆ
ՄԵԾ ԳԱՐԱՍ
ԿԸՉԻ
ՍԱՂԱՄԻՆԱՆ
ՍԱՂԱՄԻՆԱՆ
ՄԵԾ ԳԱՐԱՍ
ԱՍԻԱ
ԵՒՐՈՊԱ
ԱՖՐԻԿԷ
ՆՇԱՆԱԳԻՐ

կութեան Նչլադայ, քո հրաման տալով, և իմ զհրամանս քո կատարելով։ Զսա ցՅոյնսդ, զի ոչ ես ժամանակ է խորհելոյ, ահաւասիկ գայ հասանէ թշնամին՝ ունել զելս փախստի։ Զոմ միստոկղէս զարմացեալ ընդ մեծախոհութիւն Զրիստիդեայ, յայտնեաց նմա զդաւն՝ որով անդր ձգեաց զպարսիկս, և հրաւիրեաց զնա 'ի ժողովն՝։ Զ բոյցք հետ զհետէ հասեալ'ի հաստատութիւն պատմելոցն Զրիստիդեայ, լուծին զժողովն. և կազմեցան Յոյնք 'ի պատերազմ։

Յաւելլով յերկաքանչիւր տորմիղս նաւաց, հազար երկերիւր և եօթն նաւք էին Պարսից, իսկ Յունաց երեքարիւր և ութսուն[2]։ Զ ընդ այդն Զոմիստոկղէս հրաման ետ զօրացն մտանել 'ի նաւս. և կազմեցաւ տորմիղն յունական եկաց առ արևելեան կրճիւն, յաջմէ աթենացիք[3] ընդդէմ փիւնիկեցւոց, և 'ի ձախմէ սպարտացիք, եգինացիք և մեգարացիք ընդդէմ յոնիացւոց[4]։

Զոսերքսէս եկն եկաց անդ 'ի բարձու ուրեք տեղւոջ, որպէս զի յերեսաց իւրոց խրախուսեսցին զօրքն. և շուրջ զնովաւ կային դպիրք, գրել զամենայն անցս մարտին[5]։ Զբրև տեսին

1 Պլուտ. 'ի Թեմիս. էջ 118. Զիոդ. գիրք ԺԱ. էջ 15։
Զրիստիդ. էջ 323։
2 Երոդ. գիրք Է. գլ. 184. Ը. գլ. 66 և 82։
3 Նոյն գիրք Ը. գլ. 83։
4 Երոդ. գիրք Ը. գլ. 85։
5 Նոյն անդ գլ. 69 և 90։ Պլուտ. անդ։

զնա զօրքն, աջ և ահեակ թեաք յառաջ խաղաց-ցին անդր և ասքան զՓոխտաղեա կղզի, պահեալ զկարգ Ձակատուն ցոր վայր մարթեէն. այլ ըստ մտեալ 'ի կղզին և 'ի ցամաքն՝ հարկ լինէր նոցա լուծանել զառաջին [1]։ Այլ թող զայս, հարկ էր նոցա և ընդ հակառակ հողմոյն կռուել [2] ծանրաղանդաղ յամրաշարժ նաւ օքն, որոց ոչ միայն ոչ օգնեալ իրերօք՝ այլ և խոչտան լինէին միմեանց, բաղխեալք ընդ իրեարս։

Յաջումթեւի անդ Յունաց, որ ահեակողմն էր Պարսից, անդր յեցեալ կայր բախտ մարտին. զի անդ ընտիրք երկաքանչիւր բանակաց մարտընչէին փիւնիկեցիք և աթենացիք, յարձակեալք և ընկրկեալք 'ի մուտս կրձին։ Այլ զոբաւար փիւնիկեցւոց էր Ադրիաբիգնէս, մի յեղբարց Խսերքսեայ, որ իբր յանշուշտ յաղթութիւն ածէր զնոսա 'ի Ձակատամարտն։ Իսկ Թեմիստոկլամենայնուրեք յամենայնվտանգս հասանէր. և մինչ խրախուսէին կամ սանձահարէր զեռանդն իւրոցն, Ադրիաբիգնէս յառաջ խաղացեալ՝ նետս թանձրատարափս որպէս 'ի մահարձանաց պարսպաց ածէր զնովաւ։ Ընդ մի 'ի պատերազմիկ նաւաց աթենացւոց դիմեաց եհաս 'ի վերայ ծովապետին փիւնիկեցւոյ. իսկ նորա զայրագին 'ի վերայ յարձակեալ նաւուն, անկաւ վերաւորեալ [3]։

[1] Դիոդ. գիրք ԺԱ. էջ 15։
[2] Պլուտ. 'ի Թեմիս. էջ 119։
[3] Պլուտ. անդ։ Երոդ. գիրք Ը. գլ. 89։

Աբրահամիրը կալան զիւնիկեցիս մահուամբ զօրավարին, և աղմուկ շփոթի բազմութեան զօրավարաց՝ վաղվաղեաց զկորուստ զօրացն։ Այաւք նոցա մեծամարմինք հարեալք ընդ ժայռս ծովեզերեայս, և ընդ իրեարս բաղխեալք և բեկեալք, և ընդ ցռուկս նաւացն ութեանցեաց՝ և կողաքակեալք, ծածկէին զծով՝ի բեկորս իւրեանց։ Այլ որք՝ի թիկունանոցա հասանէին, յաճախագոյն ևս աղմուկ շփոթի՝ի տեղւոջն կացուցանէին[1]։ Ի զուր այնուհետև կիպրացիք և այլք յազգաց արևելից փութացան կազմել անդրէն զՀակատ. զի և նոքա զբրէն փիւնիկեցւոց քակտեալ ցրուեցան, յերկար դիմամարտեալք[2]։

Բայց Թեմիստոկղէս և ոչ այնու յաղթութեամբ շատացեալ, ած զյաղթական թէն յօգնութիւն սպարտացւոց և այլոց նիզակակից ազգաց՝ որք հանդէպ յոնիացւոց մարտնէին։ Այլ՝ ոմանց՝ի յոնիացւոց անտի ընթերցեալ՝ի ծովեզերս Այբիոյ զարձանագիրսն՝ որովք Թեմիստոկղէս սարտուցանէրն զնոսա՝ի Պարսից, և անդրէն՝ի մարտին առ Յոյնս հատուածեալ, կամ թուլութեամբ ընդ նոսա պատերազմեալ։ Բայց սակայն յոլովագոյնք՝ի նոցանէ ամենայն զօրութեամբ պատերազմեալք, և ոչ դարձան՝ի փախուստ՝ մինչև ծանրացաւ ձեռն թշնամեացն՝ի վերայ նոցա։

[1] Եսբիվ.՝ի Պարս. տող 413։ [2] Դիոդ. գիրք ԺԱ. կէ 15։ Երոդ. գիրք Ը. գլ. 80։

Ընդ և Բրտեմիսիա շուրջ պատեալ՝ ի թըշնամեաց, իբրև՝ ի վտանգի կայր անկանելոյ՝ ի ձեռս աթենացւոյ ուրուք՝ որ զՀետոնրա հասաներ, ընկալցէ զմի՝ ի նաւացն Պարսից։ Եւ աթենացւոյն կարծելով՝ զի յետս կացեալ էր զշխոյն՝ ի միաբանութենէ Պարսից, ոչ ևս հալածեաց զնա. և Արտերքսեայ վարկուցեալ՝ զի՝ ի տորմէ Յունաց էր նաւն ընկալուցեալ, գոչեաց, և ասէ. Արա արք կնատեալ, և կանայք արիացեալ՝։

Եւ խոյս ետ նաւատորմն Պարսից՝ ի նաւահանգիստն Փաղերեայ[2]։ Եւ կորեան երկերիւր՝ ի նաւաց նոցա, և բազումք ևս յաւարի առան. իսկ՝ ի յունական նաւատորմէն քառասուն ևեթ նաւք պատերազմիկք կորեան[3]։ Յառաջնումն ամի Եօթանասներորդի հինգերորդի ողիմպիադին՝ ի քսաներորդի աւուր ամսեանն Ռոյեդրոմիոնի* եղև պատերազմն այս։ Եւ գրեցան յիշատակք ազգաց և արանց, որք արիացան՝ ի մարտի անդ. յազգաց՝ Եգինացիք և աթենացիք, իսկ յարանց՝ Պողկրիտոս Եգինացի, և Եւմենէս և Բիմնիաս աթենացիք[4]։

Բայց մինչ դեռ պատերազմն մղէր, Արտերքսէս՝ ի յոյզս խնդութեան և երկիւղի և յու-

[1] Երոդ. գիրք Ը. գլ. 88։
[2] Նոյն անդ գլ. 91 և 93։
[3] Դիոդ. գիրք ԺԱ. գլ. 16։
* Ն. Ք. 480 ամաւ՝ ի 20 հոկտեմբերի. (Ցոտուռէ՝ ի տարեգիրս Թուխիդիդեայ. էջ 49։)
[4] Երոդ. անդ գլ. 93։

սահատութեան՝ անդադար պարգևս խոստա-
նայր, և պատուէրս անողորմն տայր. դպրացն՝
որ առ նմա կային՝ տայր գրոշմել զանուանս ա-
բիւրեղոցն 'ի մարտին, և որք 'ի զօրապետաց
գային աղերս առաջի նորա մատուցանել վասն
ձախողակի ելից իրաց՝ զնոսա տայր ստրկացն
իւրոց սպանանել՝։ Լակ իբրև յոյս և զայրոյթ
լքին զնա, անկաւ այնուհետև 'ի վհատութիւն
անհնարին. զի թէպէտ և էին նմա տակաւին
զօրութիւնք բաւական 'ի նուաճել զտիեզերս,
համարէր զնաւատորմ իւր պատրաստեալ
յապստամբել, և զՀոյնս 'ի հրձիգ առնել ըզ-
նաւակամուրջ իւր կազմեալ Հելլեսպոնտոս։
Արթէր և 'ի մնոտի արհաւրացն զերծանել
նմա վաղ ընդ փոյթ փախստականաւ։ այլ չև ևս
ամոթ և ամբարհաւաճութիւն թողուին խո-
նարհել նմա յայնքան նուաստութիւն առաջի
թշնամեաց և աւագանւոյն իւրոյ։ 'Լմին իբրև
պատուէր տայր կազմել միւսանգամ՝ 'ի պատե-
բազմ, և լիր արկեալ 'ի ծով՝ կցորդել զԱղա-
մինա ընդ երկիրն յունաստանի։

Լչ սուրհանդակ վաղվաղակի 'ի Շ օշ ար-
ձակեաց. բայց ընակիչք մեծի քաղաքին 'ի հա-
սանել առաջնոյ սուրհանդակին, զոր յառնուլն
զԹէնս արձակեալ էր, ընթացեալ 'ի մե-
հեանս, և սաղարթիւք միտենեօք ծածկեալ
զփողոցս, ծխէին ամենայն ուրեք խունկս։ Լակ

1 Դիոդ. գիրք ԺԱ. գլ. 16։ 2 Երոդ. գիրք Ը. գլ. 97։

'ի հասանել երկրորդին, զօձիս պատառեալ, ողբովք և աշխարանօք ընուին զքաղաքն՝ առ գուռն գորովոյ Թագաւորին, և անիծիւք ընդդէմ Մարդոնիոսի, զի նա սկզբնապատճառ եղև մարտին[1]։

Ստի և անտի բանակքն երկոքեան մնային կազմք 'ի Ճակատամարտ. բայց Մարդոնիոս Թերահաւատեր 'ի հրամանս Թագաւորին, և 'ի սիրտ նորա հետազօտեալ նշմարեր կիրս վաստուԹեան, և խորհուրդս վրէժխնդրուԹեան՝ յորմէ և իւր իսկ մօտալուտ 'ի վերայ կայր վտանգ։ Ատուցեալ առ Թագաւորն, ասէ. Դաջալերեաց, տէր արքայ. զի ոչ 'ի նաւատորմն էր քո յոյս յաղԹուԹեան, այլ 'ի Ճամբարդ ահաւոր՝ զոր գումարեցեր ընդ իմով ձեռամբ։ Ոչ ևս Հելլէնք կարող են զդէմ ունել զօրուԹեան քո, և ոչ զերծանել կարասցեն յարժանահաս պատուհասէն առաջնոց իւրեանց ՊԼասուցն և Թարմատար այժմու յաղԹուԹեանն։ ԱյԹէ խոյս տուեալ էր մեր 'ի մարտէն, լինէաք նոցա այսն կատականաց մինչ 'ի սպառ, և 'ի վերայ հաւատարմացն քոց Աքրեաց անկանէին նախատինքն՝ որովք ծածկեցան փիւնիկեցիք և եգիպտացիք զինուորեալք 'ի նաւս քո։ Այլ լինէ միւս ևս խորհուրդ Թուի Ճահաւոր 'ի պահել անարատ զպիտաս նոցա և զքո. զի առեալ քո զմեծ մասն

[1] Երոդ. գիրք Ը. գլ. 99։

բանակիդ՝ դարձուցես 'ի Պարսս, Թողեալ ընդ ձեռամբ իմով երեսուն բիւրս զօրաց. և զ՝Յլլադա Համարէն նուաճեցից նոքօք քեզ 'ի ծառայութիւն[1]։

Լսեաւորն յոյժ ուրախ լեալ ընդ այն 'ի սրտէ, Ժողով կոչեաց. անդր և զ՝Յտեմիսիա հրաւիրեալ հարցանէր զնա վասն առաջարկեալ 'ի Մարդոնեայ խորհրդոյն։ Բայց զԸնտիսին տաղտկացեալ արդեօք 'ի սպաս մատուցանելոյ այնպիսումն, և գիտելով՝ զի յայնպիսի դէպս առաջարկութիւն խորհրդոյ յայտնութիւն էր կամաց, խրատ ետ նմա դառնալ վաղագոյն յաշխարհ իւր։ Բայց հատուած ինչ 'ի պատասխանւոյն պարտ է ինձ ածել, առ 'ի տալ զտիպս կերպարանաց բանից որովք վարէին 'ի դրանն Պարսից։ Լսող, ասէ, 'ի Մարդոնիոս զՀոգ կատարածի գործոյդ՝ յոր բուռն հարեր. եթէ յաջողեսցի, քո լիցին ամենայն փառք. իսկ եթէ կորիցէ կամ պարտեսցի, ոչ հասցէ անտի քում տերութեանդ սասանութիւն, և ոչ Յ՝բեաց մեծ ինչ թուեսցի 'ի միում ուրեք ձակատու պարտութիւն, եթէ միայն կացցէ անձն քո յակաստանի[2]։

Ել ևս յայտնեաց Յ՝Խերքսէս, պատուէր ետ նաւատորմին փութալ Յ՝Յլլեսպոնտոս 'ի պահ նաւակամրջին[3]։ Օ՛հետ եղև նմա նա-

[1] Երոդ. գիրք Ը. գլ. 100։ [2] Երոդ. անդ գլ. 102։
Յուստ. գիրք Բ. գլ. 13։ [3] Նոյն անդ գլ. 107։

ւատորմն յունական մինչև Անդրոս կղզի. քանզի Լեմիստոկղ և աթենացիք կամէին ժամանել հրձիգ առնել զնաւակամուրջն։ Բայց Լուբիբիադեայ հզօր բանիւք հաւանեցուցեալ զնոսա, զի ոչ միայն չէր պարտ խափանել զՊարսս 'ի յունաստան՝ այլ և հանել զնոսա յաշխարհէն, նաւատորմն նիզակակցաց կասեցաւ, և եկն եհաս 'ի Պադաս քաղաք, և անդ ձմերեաց։

Բանագնաց եղև յայնժամ Լեմիստոկղ առ Խսերքսես՝ առ 'ի պատրաստել իւր առ նմա տեղի ապաւինի յաւուր նեղութեան յերեսաց համազգեացն, որպէս ոմանք պատմեն, պարծելով իւր իսկ զքնեալ զմիտս Յունաց 'ի հրձիգ առնելոյ զնաւակամուրջն[1]։ Իսկ այլք ասեն՝ ազգ արաբեալ թագաւորին Ճեպել ըզչուն, մինչ չև խափանեալ Յունաց զՀանապարհ Պսիոյ[2]։ Կալցի զայս որպէս ոք և ախորժէ, բայց աւուրքք ինչ յետոյ քան զսաղամինեան Ճակատամարտն՝ չու արար թագաւորն 'ի Լեսաղլա, ուր Մարդոնիոս ձմերեաց երեսուն բիւրուքն ընտրելոքք յամենայն բանակէն՝ զորս եթող առ նմա թագաւորն[3]։ Ինքն յառաջ խաղացեալ՝ եկն եհաս 'ի ծովեզր Հելեսպոնտեայ դոյզն ինչ մնացորդաք

[1] Երոդ. գիրք Ը. գլ. 110։ գիրք ԺԱ. էջ 16։
[2] Պլուտ. 'ի թեմիս. էջ 120։
[3] Երոդ. անդ գլ. 113։
Նեպ. 'ի թեմիս. գլ. 3։ Դիոդ.

զօրացն՝. քանզի բազումք 'ի նոցանէ առ 'ի չգոյէ համբարոց՝ յախտարար կերակրոց կո-
րեան, կամ այսր անդր 'ի Մակեդոնիա և 'ի Թրակիա ցրուեցան։ Այլ 'ի լուսին արկածից
թշուառութեանն, Եգիպտ և զնաւակամուրջն
քակտեալ 'ի մրրկէ. և մտեալ 'ի նաւակ մի,
գնայր փախստական ընդ ծովն՝ ընդ որ յա-
ռաջ քան զամիսս իբր վեց* անց որպէս տիե-
զերական[1]։ Այլ Երթեալ 'ի Փռիւգիա՝ կառու-
ցանէր ապարանս իւր հոյակապս, բայց ամրա-
ցուցեալ զնոսա շուրջանակի[2]։

Օ՛հետ պատերազմին փութացան յաղթա-
կանք առաքել 'ի Դեղրիս զընտիրս աւարին,
զոր բաժանեցին յիւրեանս։ Այլ ապա զորա-
վարքն չոգան 'ի նեղուցն Կորնթոսի, ժողովել
զբազմաւ Պիսիդեայ, և որոց միանգամառա-
ւելագոյն զօրավիգն եղեն յաղթութեան՝ սահ-
մանել պսակս. քանզի այս սովորութիւն պաշ-
տեր 'ի վաղնջուց ժամանակաց, և առաւել
այնու էր պաշտելի՝ զի 'ի նախանձ նմանու-
թեան յորդորէր զամենեսին։ Այլ ինչ սահ-
մանեցաւ վՃիռ 'ի ժողովին, իւրաքանչիւր 'ի
զօրավարաց անձին տալով զառաջին մրցա-
նակն. բայց զերկրորդն յոլովագոյնք 'ի նոցա-

1 Երոդ. գիրք Ը. գլ. 115։
* Ն. Ք. 480 ամաւ, 'ի 4 դեկ. տեմբերի. (Տոմաւել 'ի տարբ. գիրս Թուկիդիդեայ էջ 50։)
2 Նոյն անդ գլ. 51 և 115։
3 Քսենոփ. արշաւ. Կիւր. գիրք Ա. էջ 246։

նէ միաբանեցին տալ Թեմիստոկղեայ։ Որով Թէպէտ և 'ի միտս ամենեցուն զառաջինն տաբաւ նա զմրցանակ, այլ և յայտնապէս ցանկայը ընդունել զայն 'ի սպարտացւոց։ Զոքա ընկալան զնա 'ի Սպարտա այնու մեծարանօք, որում ինքեանք իսկ էին արժանի. և հանգէ տապատիւ զնա արարին Լիբիբիադեայ, պսակ 'ի ձիթենւոյ երկաքանչիւրոցն ածեալ 'ի գլուխս։ Զի յուղարկեցին զնա բազում նորանոր դրուատեօք, պարգևեալ նմա կառս ամենագեղ՝ ընտրեալ յամենայն կառաց ընդ Ակեդեմն, և երեքարիւր ազատագունդ մանկան հեծեալ յուղարկ երթային նմա մինչև յելս սահմանաց Ակռնիոյ', որպիսի ինչ այլում չէր արարեալ մեծաշուք փառս։

Բայց Մարդոնիոս պատրաստէր 'ի զրաւել զպատերազմն, որ զայնպիսի կորանն հասոյց Պարսից. և յաւելոյր գունդս 'ի գունդն թողեալս առ նմա 'ի թագաւորէն, և ոչ ածէր զմտաւ՝ զի ըստ յաՀախել բազմութեան նոցա նուազէր նոցա զօրութիւն։ Հարցանէր ստէպ զպատգամախօսս ԼՀլադայ զելից մարտին², և ձայնատուր լինէր ազգաց միաբանելոց ընդդէմ Պարսից յասպարէզ կարդալով զնոսա 'ի դաշտս Բիւզանդիոյ կամ Թեսաղիոյ։ Բայց զաթենացիս հնարէր քակել 'ի միաբանութենէ. նմին իրի յղեաց Յ Աթենս զՀելք-

¹ Երոդ. գիրք Բ. գլ. 124։ ² Նոյն անդ գլ. 133։

սանդը արքայ մահեղծնացւոց, որ ասպնջական-նութեան զոդիւ կցորդէին ընդ աթենացիս՝։

Աղեքսանդր ընկալեալ 'ի ժողովրդէնէ ընդ հրեշտակս սպարտացւոց, որ եկեալ էին 'ի ցրել զհրապոյրս պարսկին, խօսեցաւ և ասէ. Օ՞այս ինչ Արդոնիոս բարբառի առ ձեզ։ Պատուէր ընկալայ 'ի թագաւորէն, զի ասէ. Որ ինչ աթենացիքդ հակառակ լինձ գործեցին, թողեալ լեցի. Արդոնիէ, արա զկամս իմ. դարձո 'ի դոսա զերկիր իւրեանց, և յաւելաս'ի նոյն եթէ կամին. թող զդոսա ինքնօրէնս, և կառո վերստին զմիհեանս նոցա այրեցեալս։ Արդ զկամս տեառն իմոյ ծանուցեալ, լուարուք ինձ. խիստ է ձեզ ընդդէմ կալ Պարսից, և խստագոյն՝ զդէմ ունելնոցա ընդ երկար. զի թէպէտ և զյաղթութիւն տարջիք յեղակարծ, միւս այլ ճամբար 'ի վերայ հասեալ՝ յափշտակեսցէ զայն 'ի ձեռաց ձերոց։ Մի՛ զկորուստ 'ի վերայ անձանց կոչէք, ուստ խաղաղութեան կռեալ անկեղծ՝ պահեսցէ զփառս ձեր և զաղատութիւն։

Օ՞այսոսիկ Աղեքսանդր 'ի դիմաց Արդոնիոսի բարբառեալ՝ յաւել և ինքն խրատել զաթենացիս, և ասէր՝ թէ ոչ կարէք զդէմ ունել պարսկայնոյ զօրութեան. և յորդորէր զնոսա յանձն առնուլ զհաշտութիւն օգտակարագոյն քան զամենայն շահ օգտի[2]։ Իսկ

[1] Երոդ. գիրք Ը. գլ. 136։ [2] Նոյն անդ գլ. 140։

հրեշտակք սպարտացւոց անդուստ ձայն բարձեալ, ասեն. Մի՛ լսէք նենգաւոր բանիցն Մ. ղեքսանդրի. բռնաւոր բռնաւորի օգնական լեալ, նենգաւոր խաբէութեամբ խարդախէ զքանս Մարդոնիոսի։ Կարի մեծամեծք են խոստմունքդ, և կեղակարծելի. և ոչ մարթէ ձեզ յանձն առնուլ զդոսա, առանց առ ոտն կոխելոյ զօրէնս արդարութեան և զփառաց։ Ոչ ասպաբէնն դուք շարժեալ դրդեցիք զպատերազմդ. և ոչ է արժան աթենացւոցդ, որ յամենայն ժամանակի նախանձայոյզ քան զամենեսին վրէժխնդիր եղերուք ազատութեան, լինել արդ սիզենապատՀառ ծառայութեան մերոյ։ Սպարտա, որ 'ի ձեռն մեր զայսոսիկ ձեզ աղերս մատուցանէ, ողորմեալ յաղէտս ձեր՝ զի տունք ձեր կործանեալ և անդաստանք ձեր յաղարտ վարեցան, խոստանայ ինքն հանդերձ նիզակակցաք՝ մինչև 'ի վախճան մարտին պահել զկանայս և զորդիս և զստրուկս ձեր՝։

Խորհուրդ արարին աթենացիք, և ըստ խրատուն Արիստիդեայ՝ ետուն պատասխանի արքային մակեդոնացւոց, և ասեն. Ոչ 'ի քէն զչափ զօրութեան մերոյ պարտ է մեզ ուսանել՝ թէ իցեմք տկարք քան զթշնամին. և ոչ եթէ տկարք զոլովնուազ ինչ խրախուսիցեմք ընդդէմ թշնամւոյն։ Եթէ միւսանգամ վա-

[1] Ելոդ. գլուխ Ը. գլ. 142։

տուԹեան պատգամաւոր հասցէ քեզ լինել, խորհրդակից քեզ լինիմք՝ մի՛ և ես երևել առաջի մեր, զուցէ փորձիցիմք լուծանել 'ի քեզ զօրէնս ասպնջականուԹեան և զբարեկամուԹեան[1]։

Իսկ առ սպարտացիսն Ետուն պատասխանի, և ասեն. ԻնԹէ Սպարտա քաջ Հանայէր զԱԹէնս, չկասկածէր զնմանէ 'ի մատնուԹիւն, և ոչ պատՀառանօք օգտի ջանայր յորդորել զնա զի մի քակեսցի 'ի միաբանուԹենէ։ Օ՞ ընտանեաց մերոց մեք մեզէն հոգասցուք ըստ կարի. բայց Հնորհ յոյժ ունիմք զառատ յօժարուԹենէ կամաց նիզակակից բարեկամաց, ընդ որս անխզելի զօգիւ սրբով կցորդիմք։ Օ՞այս ևԹԹ խնդրեմք Հնորհս 'ի նոցանէ, վաղագոյն Հասուցանել օգնուԹիւն, զի ժամանակ է խաղալոյ 'ի Ասիոմտիա, և խափանելոյ զՊարսս, զի մի միւսանգամ մոցեն յԱ՞տտիկէ[2]։

Պարձեալ միւսանգամ Հրեշտակքն յանդիման եղեն ատենին, և Ա՞քիստիդէս ընԹերցեալ առ նոսա զՀրովարտակն, ամբարձ ըզձայն իւր անդէն, և ասէ. Հրեշտակք Սպարտայ, երԹայք ցուցէք յաշխարհին ձերում, զի ամենայն գանձք աշխարհի և որ 'ի սորս և 'ի սոյզս երկրի ծածկեալ կան՝ ոչ ինչ ԹուԼին

[1] Երոդ. գիրք Ը. գլ. 143։ [2] Երոդ. անդ գլ. 144։ Լիկուր. 'ի Լէոկր. էջ 156։

յաչս մեր առ ազատութեամբ։ Այլ առ Ք. զեբքսանդր, ամբարձեալ զձեռն իւր յարեգակն, ասէ. Պոդջիր ցՄարդոնիոս, մինչև լուսաւորդ զսահմանեալն իւր կատարէ շրջան, աթենացիք խնդրեսցեն յարքայէն Պարսից ըզվերեժ անդաստանացն իւրեանց աւերելոց, և զմեհենացն հրկիզելոց։ Այլ ետ վաղվաղակի հրովարտակ հանել զմեհենայն ուրեքքուրմք զհամախոհս Պարսից և զքակեալս 'ի միաբանութենէ Յունաց մատնեսցեն նզովիւք դիցն սանդարամետականաց. ուիստ անհրաժարելի այսու օրինակաւ 'ի վերայ ամենեցուն ածեալ։

Մարդոնիոս իբրև գիտաց զհաստատութիւն մտացն աթենացւոց, խաղացոյց վաղվաղակի զզօրսն 'ի Թիովտիա, և անտի դիմեաց յՄոտիկէ. և բնակիչք տշխարհին դարձեալ միաբանգամ ամրացան 'ի Սաղամինա [2]։ Այլ առեալ զքաղաքն ամայի, առ յոյժ խնդութեանն ասա անդ 'ի կղզիս և 'ի ցամաքի նըշանս կանգնէր՝ ազդ առնել Խսերքսեայ ըզյաղթութիւնն, զի եր նա տակաւին 'ի Սարդիս քաղաք Լիդիոյ [3]։ Այլ յուսացեալ այնուհետև ածել զաթենացիս 'ի հաշտութիւն, միւսանգամ յղեաց առ նոսա պատգամ, և դարձեալ զնոյն ընկալաւ պատասխանի. և Լիկիդաս մի յաւագանեանցն, փոխանակ զի ար-

[1] Երոդ. գիրք Ը. գլ. 143։ [2] Դիոդ. գիրք ԺԱ. էջ 23։
Պլուտ. յԱրիստիդ. էջ 324։ [3] Երոդ. գիրք Թ. գլ. 3։

ժան համարեցաւ լսել բանից պարսկին, քարկոծ եղև նեաւ և որդւովք[1]։

Բայց նիզակակիցքն առաքեցին զօրս Մատիկէ ընդ դաշինն, այլ ամենայնին 'ի նեղուցն Կորնթոսի՝ պահ ևեթ կալեալ Պեղոպոնեսեայ[2]։ Զահի հարեալ աթենացիք արձակեցին հրեշտակս 'ի Սպարտա, մինչ տնքք բազմօրեայք կատարէին անդ, և բողոք կալան. բայց պարէտքն օր 'ի յօր առնէին զպատասխանին։ Մինչև հրեշտակացն սրտմտեալ ընդդանդաղէլնոցա և ընդ լուութիւն, որ զնեն. գուեթեան տային կասկածանս, յանդիման եղեն միւսանգամ պարէտացն, և ասեն համարձակ. Աթենացիք դաւեալ 'ի սպարտացւոց, և լքեալ անօգնական 'ի նիզակակցաց, խորհին խօսել 'ի հաշտութիւն ընդ Պարսս, և 'ի վերայ առաջնոցն դարձուցանել զզէնս։ Բայց պարէտքն ետուն պատասխանի, զի յայնմ իսկ գիշերի յղեալ էր նոցա զՊաւսանիաս, զոստիկան արքայի մանկանն Պղիստարքեայ հինգ հազար սպարտացւովք և երեսուն և հինգ հազար մեկնակազէն սարիսաք կամ եղջսացւովք[3]։ Յորս յաւելան ապա հինգ հազար լակեդեմոնացիք, և ամենեքին միահամուռ գումարեալ ընդ զօրս այլոց նիզակակից ազգաց, չու արարին Յդեւսեայ, և եկին հասին

[1] Երոդ. գիրք Թ. գլ. 5։
[2] Նոյն անդ գլ. 6։
[3] Նոյն անդ գլ. 11։

'ի Ռիվսիա՝ ուր այն ինչ Մարդոնիոս դաբ-
ձեալ էր զօրքն[1]։

Ռանզի խմստուԹեամբ խոյս ետ նա 'ի
պատերազմելոյ Յուտիկէ, յերկիր լեռնախիտ
և 'ի բազմակիրճ, ուր ոչ կարէր զՀեծելազօրն
յարձակ խաղացուցանել, և ոչ 'ի ձախողել
մարտին՝ նահանջել անվտանգ։ Իսկ 'ի Ռիվ-
տիա էին դաշտք լայնածաւալք, և երկիր ար-
գաւանդ, և քաղաքք բազումք պատրաստք 'ի
ժողովել զկայս մեաց ռանակին. զի բաց 'ի պը-
զատացուց և 'ի Թեսպացւոց՝ այլ ամենայն
ազգք բնակիչք կողմանցն ձեռն տուեալ էին
'ի Պարսս։

Լաւ բանակեցաւ անդ Մարդոնիոս 'ի դաշ-
տին Թեբայ առ Լսոյ գետով, կալեալ զա-
հեակ եղբ գետոյն մինչև ցսահմանս պղտտա-
ցւոց։ Լաւ առ ամրուԹիւն աղխի բանակին,
և առ 'ի պատրաստել իւր տեղի ապաւինի,
ետ շուրջանակի փոս խոր հատանել, և ածել
պարիսպ, և աշտարակս փայտակերտս խիտ
առ խիտ կանգնել[2], շրջապատեալ ասպարէզս
քառակուսի տան։

Լաւ կայեն 'ի հանդիպոյ Յոյնք առ ստորո-
տով և 'ի զառ 'ի վայր լերինն ԿիԹերոնի։
Աքիստիդէս զօրավարեր աԹենացւոց, և Պաւ-

[1] Երոդ. գիրք Թ. գլ. 19։ Պլուտ. յԱրիստիդ. էջ 325։
[2] Նոյն անդ գլ. 15։

սանիսա սահնայն բանակին*։ Այնդ զօրավարք
երդմնի արարին զամենայն զօրսն, և օրինակ
երդմանն էր այս. Լսցնուս փոխանակել ըզ-
կեանս 'ի վերայ ազատութեան. չմեկնել 'ի
զօրավարաց իմոց, 'ի կենդանութեան նոցա
և 'ի մահու. չթողուլ անթաղ յանարգու-
թիւն զգիակունս նիզակակցաց անկելոց 'ի
Ճակատամարտի. չաւերել յետ յաղթութեան
զքաղաքս՝ որոց զէն առեալ իցէ յօգնութիւն
Լլլադայ. առնուլ տասանորդս յամենայն քա-
ղաքաց, որ ընդ թշնամիս միաբանիցեն. և չը-
նորոգել զմեհեանս հրկիզեալս կամ աւերեալս,
այլ թողուլ յետնոց զաւերակս նոցա 'ի յիշա-
տակ յաւիտենից մոլեգին ամբարշտութեանն
Պարսից'։

Այն 'ի մատենագրաց, որ գրեթէ ժամա-
նակակից էր իրացն, յաւելու զայս ինչ՝ անտես
լեալ յայլոց, որով մարթ է 'ի միտ առնուլ՝ ե-
թէ զի՞նչ կարծիք էին յոլովագունից 'ի պարս-
կաց զզօրավարէն իւրեանց։ Այլ ումեմն 'ի թե-
բացւոց յընթերիս կայր Մարդոնիոս, յիսուն
այր 'ի սպայիցն ընդ նմա, և յիսուն այր 'ի
թեբացւոց, և թերսանդր մի 'ի գլխաւորաց
յորբոմենացւոց։ Այլ բազմականացն յերկուս
աղգաց յընթերիս անդ մտերմութիւն արա-

* Բանակքն երկոքին կացին հանդէպ միմեանց 'ի տաճեռ ըստրգում աւուր ամսեան սեպտեմբերի, 479 ամաւ Ն. Գ. (Տսուուէլ 'ի տարեգիրս Թուկեդիդեայ. էջ 52։)

։ Լիկուր. 'ի Լէոկր. էջ 158։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 23։

բեալ ընդ միմեանս, և յետ ընթրեացն ասէ մի 'ի պարսկաց ցՀերսանդրն՝ որ առ նմա բազմէր. Սեղանս այս վկայ ընդ իս և ընդ քեզ, զի բաժակքս՝ զոր հեղաք 'ի միասին 'ի նուէրս դից՝ յուզեն զգուշութս իմ՝ 'ի վերայ ձեր. Ժամ է խորհելոյ ձեզ 'ի փրկութիւն անձանց. զի ահաւասիկ Արիքս աստանօր 'ի գինեբերս զակատեալ կան, և զանակն՝ զոր տեսէք առ գետոնն թողեալ, տեսանիցէք ընդ հուպ զոզորմնացուածս նորա։ Լաւ զայս ասելով, աւաղէր և ողբայր. իսկ Հերսանդրն զարմացեալ ընդ բանս նորա, ասէ. Լաւ ընդէր չայտնես զերկիւղ քո Մարդոնիոսի, կամ որոց ունին շնորհս առաջի նորա։ Իսկ պարսիկն ասէ. Ա՛է հնար մարդոյ, սիրելի, խուսել 'ի Ճակատագրէն։ Յոլովք 'ի Պարսից կասկածեն իբրև զիս զմտաբուտ լարեացն, այլ 'ի հրամանս բախտին կամք ապաստան։ Պառն քան զամենայն թշուառութիւն մարդկան այն է, զի խոհականագոյնք 'ի նոսա նուազ քան զայլս լսելի լինին[1]։ Օ՜այս վկայագիրն 'ի նոյն ինքն 'ի Հերսանդրէ լուեալ պատմէ։

Մարդոնիոս իբրև ետես, զի Յոյնք զկայ առեալ 'ի բլուրս՝ ոչ իջանեին 'ի կռիւ, արձակեաց 'ի վերայ նոցա հեծելազօրքն զՄասիսա զօրավար մոերիմ սիրելի թագաւորին, և մեծարոյ առաջի ամենայն բանակին։ Լաւ նախա-

[1] Երոդ. գիրք Թ. գլ. 16։

տեղով Պարսից զՅոյնս, և վասն զնոսա կոչելով, յարձակեցան նոսա 'ի վերայ մեգաբացւոց՝ որք 'ի դաշտային վայրս բանակեալ էին։ Նոքա օգնականութեամբ երեքարիւրոց ամենացւոց ժուժկալեալ ընդ երկար, ապա մահուամբ Մասիստեայ՝ զերծան 'ի սպառասպուռ պարտութենէ, և վախճան եղև մարտին։ Այլ էառ բանակն Պարսից ընդ անկումն զօրավարին, բայց Յոյնք յաղթանակեցին՝ բարձեալ բերելով զգիսակն նորա ընդ կարգս բանակին, յափշտակեալ զայն 'ի ձեռաց թշնամեաց'։

Բայց թէպէտ և զյաղթութիւնն զայն կալեալ, հարկեցան փոխել 'ի տեղւոջէ անտի առ 'ի չգոյէ անդ ջրոյ. զի յոյժ դժուարին էր նոցա երթալ զջրոյ առաջի թշնամեաց, որ տարափովք նետից 'ի բաց հալածէին զմերձեալս 'ի գետ անդր։ Այլ 'ի չու անկեալ առ ստորոտով Կիթերոնի լերին, մտին 'ի սահմանս աշխարհին պղատացւոց։ Լակեդեմոնացիք զկայ առին մերձ յաղբիւրն Դարգափիա, յորդաջուր 'ի լիութիւն բաւականի զօրացն. իսկ այլք 'ի նիզակակցաց յոլովագոյնք բանակեցան 'ի վերայ բլրոց առ ոտամբ լերինն, և կէսք 'ի դաշտին, ամենեքին մերձ Յոսոյ գետ։

Մինչ դեռ զօրքն զտեղի առեալ բանա-

1 Երոդ. գիրք Թ. գլ. 22 էջ 24։ Պլուտ. Արիստիդ. և այլուք։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 327։

կէին, վէճ սաստիկ յուզեցաւ ընդ աթենացիս և ընդ տեգէացիս՝ վասն զօրավարութեան ձախոյ թևին. քանզի երկաքանչիւր պատճառս ածեալ, և զարութիւնս քաջութեան նախանեացն իւրեանց 'ի նեղքս բերելով, կամէին ինքեանք զօրավարել. բայց Քրիստիդէս դադարեցոյց զվէճն, ասէ. Ոչ 'ի վիճել ընդ նիզակակիցս եկեալ եմք այսր, այլ 'ի մարտնչել ընդ թշնամիս. գիտասցեն ամենեքին, զի ոչ 'ի պատիւ զօրավարութեան է քաջութիւն։ Սակայն 'ի ձեզ, ո՛ սպարտացիք, թողումք զընտրութիւնն. սահմանեսջիք մեզ ուր ուրեք և կամք իցեն ձեզ տեղի. այլ մեք գիտասցուք ամբառնալ զայն 'ի բարձրութիւն, թերևս քան զամենայն կայս գերակայ։ Այս ձայն բարձեալ սպարտացիք, աթենացւոց ետուն զպատիւն[1]։

Մինչև ևս 'ի վերայ հասեալ ահաւորագոյն վտանգ, 'ի խիստ ևս հանդիսի պայծառացոյց զիմաստութիւն Քրիստիդեայ։ Զզգեղև նմա զի սպայք ոմանք յաշնուականագունիցն աթենացւոց խորհէին մատնտու առ թշնամին լինել, և երթայր և ստուերանայր գունդ դաւաճանացն։ Բայց Քրիստիդէս ոչ հետաքննեաց գիտել զզօրութիւնս նորա, զի մի արհաւիրքն դաւոյն յաձախեսցեն. այլ միայն արս ուրթ 'ի դաւակցաց կալաւ, երկուց գլխաւո-

[1] Երոդ. գիրք Թ. գլ. 26։ Պլուտ. յԱրիստիդ. էջ 326։

բագունից դաւաճանացն 'ի բաց փախուցեալ։ Իսկ այլոց ցուցեալ զթշնամիս, ասէ. Աբիւն ևեթ դոցա զանօրէնութիւն ձեր քաւեսցէ[1]։

Արդարեւոյ իբրև գիտաց զմուտս յուսնա-կան բանակին 'ի սահմանս Պղատեայ, խա-ղացոյց վաղվաղակի զզօրս իւր ընդ եզր գե-տոյն անդրէն 'ի վեր, և բանակեցոյց զնոսա դարձեալ հանդէպ թշնամեաց։ Իսկ էին նորա երեսուն բիւրք յայգաց Աքիոյ, և հինգ բիւրք աւելի կամ նուազ 'ի բիւղտացւոց և 'ի թե-սաղացւոց և յայլոց ազգաց Յունաց յօգնա-կանութիւն[2]։ Իսկ զօրք Յունաց էին աւելի քան զմետասան բիւրս. յորոց վեց բիւրք ինն հազար և հինգ հարիւր էին մեծակա-զէնք[3]. սպարտացիք և լակեդեմոնացիք բիւր մի, աթենացիք ութ հազար, հինգ հազար կորնթացիք, և մեգարացիք երեք հազար. և յայլոց ևս ազգաց կամ 'ի քաղաքաց Յունադայ գումարտակք բազումք[4], և օր ըստ օրէ յաւե-լուին այլք։ Բայց մանտինէացիք և եղէացիք յամեալ, ապա յետ ճակատամարտին հասին։

Իսկ կային հանդէպ միմեանց բանակքն երկոքին զաւուրս ութ. ապա ջոկատ մի հեծե-լոց Պարսից անցեալ գիշերային ընդ Աքսոպ, եհաս 'ի վերայ ամբարաբերս զօրաց՝ որ եկեալ

[1] Պլուտ. յԱրիստիդ. էջ 326։

[2] Երոդ. գիրք Թ. գլ. 32։

[3] Նոյն անդ գլ. 30։

[4] Նոյն անդ գլ. 28։

'ի Պեղոպոնեսեայ իջանէին ընդ Կիթերոն, և կալեալ զկիրճ լերինն *, արգելին զհամբարս յունական բանակին [1]։ Այլ զաւուրս երկու ոմնհար լեալ ստէպ նախատէին զնա։ Այլ ոչ իշխէին բանակքն երկաքանչիւր անցանել ընդ գետն. քանզի աստի և անտի խղճք, իւրովի եթէ յայլմէ ումեքէ դրդեալ՝ ոչ գիտեմ, զուշակէին զյաղթութիւն այնմ՝ որ պահ ևեթ կալցի իւրում բանակին [2]։

Յաւուրն մետասասներորդի ժողովք կոչեաց Մարդոնիոս ** . և անդ Արտաւազ, մի յառաջնոց զորավարաց բանակին, խրատ ետ պատսպարել կալ առ պարսպովք Թեբայ, և մի խիզախել 'ի մարտ, այլ կաշառաբեկ առնել զգլխաւորս 'ի քաղաքացոյ նիզակակից քաղաքաց։ Հաւանեցան ընդ խրատ նորա Թեբացիք, և յոլովք յաղգաց միաբանելոց քակէին արգեօք այնու 'ի միաբանութենէն, և բանակին յունական առ 'ի չգոյէ համբարոյ ստիպէր յետ աւուրց ինչ ցրուել, կամ մարտնչել 'ի դաշտավայրին՝ յորմէ զգուշանային. բայց Մարդոնիոս արհամարհեալ մերժեաց զաղաւնոք խորհուրդն։

Ի գիշերին յայնմիկ *** հեծեալ մի 'ի բանա-

* Ն. Ռ. 479 ամաւ. գլ. 17 աւուր ամենան սեպտեմբերի. (Ցոտուէլ 'ի տարեգիրս Թուկիդիդեայ. էջ 52։)

[1] Երոդ. գիրք Թ. գլ. 39։

[2] Նոյն անդ գլ. 36 և 37։

** Ի 20 աւուր ամենան սեպտեմբերի. (Ցոտուէլ անդ։)

*** Ի գիշերին 20 կամ 21 աւուր սեպտեմբերի։

կէն Պարսից եկեալ առ աթենացիս, ազգ ա-
բար առ զօրավար նոցա՝ թէ ունիմ ինչ կարևոր
յայտնել խորհուրդ։ Եւ իբրև եկն առ նա
Քրիստիդէս, պարսիկն ասէ. Ի զուր Մար-
դոնիոս աշխատ առնէ զդիս, աւետեաց ինչ
առնուլ նշան. լուութիւն նոցա յամենայն զայ
զպատերազմն, այլ ընդուանայն այսուհետև
Ձգնին զուշակք խափանել զնա. 'ի վաղիւ ընդ
ծագել արեգական՝ յարձակեսցի 'ի վերայ
ձեր։ Յուշ լիցի ձեզ որ զանձն իմ եդի 'ի
կշիռ, զի մի յեղակարծումն 'ի վերայ ձեր հաս-
ցէ վտանգ. և խնայեսջիք յիս 'ի յաղթել մար-
տին։ Եւ եմ Քրիստոդոր արքայ մակեդոնա-
ցւոց, որ խօսիմն ընդ քեզ։ Եւ զայս ասացեալ,
ձիարձակ արագամէտ անդրէն 'ի բանակն
դառնայր՝։

Փութացաւ վաղվաղակի Քրիստիդէս առ
սպարապետս, և խորհուրդ 'ի մէջ առին՝ թէ
զիարդ վանեսցեն զթշնամին։ Ընդ Պաւսանիաս
խրատ էտ, զոր ոչն իշխէր Քրիստիդէս տալ,
զի աթենացիք կացցեն հանդէպ Պարսից 'ի
Ձակատուն, իսկ լակեդեմոնացիք հանդէպ
Յունաց միաբանելոց ընդ Արսերքսէսայ. քան-
զի ասէր, թէ այսպէս երկաքանչիւր մեզ լիցի
մարանչել ընդ թշնամիս՝ որոց առեալ իցէ ըղ-
փորձ զօրութեան մերոյ։ Զայս խորհուրդ
կալեալ, աթենացիք ընդ ծագել արևու ան-

։ Պլուտ. Արիստիդ. էջ 327։

ցին յաջ Թև, իսկ լակեդեմոնացիք յահեակ։ Մարդոնիոս իրազեկ լեալ խորհրդոց նոցա, փոխեաց և ինքն զՊարսս յաջակողմն. և 'ի դառնալ թշնամեաց յառաջին կարգ ձակատուն, դարձեալ միւսանգամ և ինքն ած զիւրսն յառաջին կայս[1]։

Բայց Մարդոնիոս համարեր առ ահի փոփոխել սպարտացւոց թև 'ի թևէ. և խրոխտացեալ ամբարտաւանութիւն կշտամբէր զնոսա 'ի վատութիւն, և նախատանօք ձայնատուր լինէր նոցա 'ի մարտ. և քարոզ արձակեալ առ Պաւսանիաս, ասէ մենամարտութեամբ ըսպարտացւոց ոմանց և պարսկաց զբաւել զպատերազմն։ Բայց ոչ ինչ 'ի նմանէ առեալ պատասխանի, յառաջ խաղացոյց զհեծելագունդն, և նեղեալ տագնապէր մինչև ցերեկոյ զբանակն յունական, և զաղբիւրն իսկ զՊարդափիա խցեալ[2]։ Իսկ Յոյնք զրկեալք և 'ի ջրոյն՝ վասն որոյ կային 'ի տեղւոջն, խորհուրդ կալան փոխել անտի 'ի հեռագոյն ուրեք, 'ի կղզի անդր՝ որ 'ի բաշխս Ասոպ գետոյ 'ի միջի անդ կայր և մի յառաջից գետոյն կոչէր Պերովէ[3]։ Անտի պարտ էր արձակել նոցա զկէս զօրացն 'ի պահակ Կիթերոնի լերին, առ 'ի հալածել անտի զպարսիկս՝ որ խափանէին զամբարարքեր զօրացն Երթևեկ։

[1] Երոդ. գիրք Թ. գլ. 46։ Պլուտ. յԱրիստիդ. էջ 328։
[2] Երոդ. անդ գլ. 49։ Պաւս. գիրք Թ. գլ. 4. էջ 718։
[3] Երոդ. անդ գլ. 51։ Պաւս. անդ։

Զու արար բանակն յայնմ գիշերի*. և անդ էր տեսանել զանհրաժեշտ աղմուկ շփոթին զբազմախուռն այլ և այլ ազատ և ինքնիշխան ազգացն համախմբելոց, որք լուծեալ և լքեալ էին 'ի պարապոյ, և ահաբեկեալք 'ի ստէպ ընկրկելոյ և 'ի համբարոյ նուազելոյ։ Կէսք հասին յուշ եղեալ տեղին, իսկ այլք մնալ բեալք անհմուտ առաջնորդաց կամ յարհաւրացս երկիւղին, պատսպարեցան առ Պղատեաւ[1]։

Բայց սպարտացիք և աթենացիք յամենցին 'ի չու մինչև ցարշալոյսն. և ապա աթենացիք դիմեցին 'ի դաշն, իսկ սպարտացիք ընդ երեքհազար տեգեացիս, 'ի չու անկեալ գնային առ ստորոտով Կիթերոնի լերին։ Լուեալ հասեալք 'ի մեհեանն Դեմետրեայ, որ տան ասպարիզաւ հեռի էր յառաջնմէ տեղւոջէ բանակին նոցա և 'ի Պղատեայ քաղաքէ[2], անդ զկայ առեալ մնային միւսմ 'ի գնդաց իւրեանց՝ որոյ չէր առեալ յանձն նոյն հետայն մեկնել 'ի տեղւոջէն։ Ընդ 'ի վերայ նոցա հասանէր հեծելագունդն Պարսից, զոր Մարդոնիոս զօրահատոյց արար 'ի խափանել զչու նոցա, որ և 'ի մէջ սպասյակոյտ բազմութեանն աղաղակէր. Ցեսէք զնոսա պարտացիսդ անվնասելոս, որ անփախուստքն

* Ի գիշերին, յորում լուսանայր 22 օր ամսեան սեպտեմբերի։

1 Երոդ. գիրք Թ. գլ. 52։

2 Նոյն անդ գլ. 57։

համբաւին յերեսաց Թէնամէոյ. ազգ վատ, ոչ այլով իւիք ընդհատայլոց ազգացն Յունաց՝ բայց առաւելագոյն երկչոտութեամբ. ընկալցի նա ընդ հուպ զարժանահաս պատուհասն՝։

Պէտ առեալ զհետ զքաջ զօրականն պարսիկ և զընտիրս 'ի զնդաց, անց ընդ գետն, և արշաւակի յառաջ խաղայր 'ի դաշտ անդր։ Օհետ գային և այլ զօրք նորա յազգաց արեւելից խառն 'ի խուռն ամբոխիւ և աղաղակաւ։ Յայնմ՝ վայրի աջոյ Թեւն, ուր կային օգնական գունդք Պարսից Յոյնք, յարձակեցան 'ի վերայ աթենացւոց, զի մի ձեռն տալ կարասցեն սպարտացւոց։

Պաւսանիայ 'ի զառ 'ի վայրի ուրեք յառաւպար տեղւոջ զիւրսն կացուցեալ էր առ փոքրիկ վտակաւ, մերձ 'ի բակն նուիրեալ Պեմետրեայ՝. ուր զգուտ ժամն մնային նորա անպատապար նշաւակ նետաձգութեան Թէնամեաց։ Զարագուշակ ընդերաց զոհիցն նանրահաւատ կարծեաք կրընչէին բազումք 'ի զբացն. որոց ոչ այնչափ դառն էր մահ, որչափ զի մահուամբն իւրեանց ոչ ինչ օգնէին հայրենեացն։ Պէտ ոչ ևս հանդուրժեալ տեգեացւոց նուաճել զեռանդն՝ որ խրախուսէրն զնոսա, յառաջ խաղացին. վաղ հասին նոցա 'ի Թիկունս և սպարտացիք, որոց այն ինչ ընկալեալ

[1] Երոդ. գիրք Թ. գլ. 58։ Պլուտ. Արիստիդ. էջ 325։
[2] Նոյն անդ գլ. 57 և 65։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 24։

էր կամ հայթայթեալ 'ի հմայից գուշակութիւնս բարեաց[1]։

Յ մնտելնոցա 'ի բաց եդեալ Պարսից զաղեղունս, և կուռ ընդ միմեանս մածեալ, և վահանափակ շուրջանակի պատսպարեալ, կաղմեցին գունդ անտեղիտալի ստուարութեամբն, և թափոին վանիչ բուռն յարձակման թշնամեաց։ Ա՛յլ բեկանուտ վահանացն նոցա այսր անդր թռչէին բեկորք. և թէպէտ 'ի խորտակէն զնոսա բեկտէինն նիզակք, այլ զթերին զինուց ընոյր անվնասէր արութիւն[2]։ Մ՛արդանիոս ընտրելովքն խրովք հազար արամբք կալաւ զմնարան ընդ երկար անսպարտելի, այլ ասպա խոց կարեվէր անկաւ 'ի Ճակատուն. և որք ընդ նը մայն էին, 'ի վրէժ մահուն նորա պատերազմեալ անկան 'ի վերայ նորա։ Ա՛յնուհետև Պարսք սասանեալ կոր 'ի գլուխ 'ի փախուստ դարձան։ Յ՛ու թէպէտ այրուձինն նոցա խոչ ընդ ոտն եղև առ վայր մի յաղթականացն, այլ հասին անխափան մինչև 'ի ստորոտս պատնիշացն՝ զորս կանգնեալ էր Պարսից առ Ա՛ռոպ գետով, և զկաց և մնաց բանակին անդր պատսպարեալ[3]։

Օ՛նոյն յաջողութիւն և աթենացիք 'ի ձախոսմ թեւի կալան. հզօրագոյնս ընդդէմ նոցա մարտնչէին բիոտացիք, և տկարագոյնք յոյժ այլք 'ի նիզակակցացն Պարսից, զբժդ-

[1] Երոդ. գիրք Թ. գլ. 62։ 329։
[2] Պլուտ. յԱրիստիդ. էջ 3 Երոդ. անդ գլ. 70։

մեալք արդեօք ընդ խրոխտութիւն Արդոնիսոսի և ընդ յամառութիւն նորա՝ի Ճակատել յանպատեհ տեղւոջն։ Զհետ բիւրուցացոց և ամենայն աջոյ թևին Պարսից զոքն՝ի փախուստ դարձան՝. բայց Աբիստիդէս չեղև նոցա հետամուտ, քանզի փութայր հասանել յոգնութիւն սպարտացւոց, զի չև ևս հմուտք էին նոքա՝ի պաշարել զթշնամիս, և յարձակէին ընդ վայր՝ի պատնէշն՝ ուր պարսիկք պատրաստարեալ ամրացեալ կային։ Ոչք և ոչ՝ի հասանել նոցա և այլոց նիզակակից զնդաց երկուցեալք, կատաղաբար՝ի բաց վանէին զամենայն յարձակեալս։ Բայց ապա աթենացիք բռնադատեալ զպատնէշն, խրամատեցին ըզպատուարն. և խուժեալ՝ի բանակեալն Յոյնք սրախողխող արարին զպարսիկս որպէս զխաշն պատրաստեալ՝ի սպանդ[2]։

Աբատաւազ անդատին՝ի սկզբանէ պատերազմին զօրավարքն չորից բիւրուց արանց. բայց դժկամակեալ՝ի սրտէ ընդ ընտրութիւն Մարսերքսեայ, զի ետ նա՝ի ձեռս Արդոնիսոսի զբանակն, գալով գայր՝ի պատերազմ առ՝ի տեսանել մանաւանդ զելս կատարածի իրացն՝ քան զօրավիգն լինել՝ի յաղթութիւն։ Աբդոսա իբրև ետես զբեկումն զօրուն Արդոնիսոսի, հրամայեաց իւրոցն Ճեպել զհետ իւր, և

[1] Երոդ. գիրք Թ. գլ. 67։ Դիոդ. գիրք ԺԱ. կէ 25։
[2] Նոյն անդ գլ. 70։

դէմ եդեալ փախստեամբ 'ի Փոլկիս, անց ընդ ծով 'ի Ֆիւզանդիոն[1], և եհաս Յ'ելիա. ուր գովեցաւ իսկ արդեօք վասն փրկութեան մասին ինչ զօրացն։ Ասաց 'ի սոցանէ եղեն ամենայն ասպետաւք իբր երեք հազար, այլք ամենեքին՝ կէսք 'ի պատանէշսն, և կէսք 'ի Ձակատամարտին կորեան։

Լու որք 'ի մարտի անդ առաքինացան ազգք՝ անտի եղեն պարսիկք և Հ՝ակք, իսկ ատի ըստ պարտացիք և աթենացիք և տեգէացիք։ Ասայց յաղթականք հռչակեցին գովութեամբ զքաջութիւն Մարդոնիոսի, և զՍոփանեայ աթենացւոյ, և զչորեցունց սպարտացւոց՝ որոց պարագլուխ 'ի դէպ է դասել զՄ'ելիստոդեմ, որ աստանօր քերեաց յանձնէ զկեղտ դարձին իւրոյ ողջամբ 'ի պահակէն Թերմոպիլեայ։ Ասայց սպարտացիք ոչ պատուեցին զաձիւն նորա, զի ասէին՝ թէ զմահ 'ի մտի եդեալ քան զյաղթութիւն, և 'ի Ձակատամարտի անդ արտաքս 'ի ռազմէն յարձակեալ, յուսահատութեամբ առաւել քան թէ քաջութեամբ առաքինացաւ[2]։

Վ՝էճք սաստիկ եղեն յայնժամ ընդ սպարտացիս և ընդ աթենացիս յաղագս մրցանակին քաջութեան. քանզի սպարտացիք իւրեանց համարէին զայն անկ՝ զընտիրս 'ի գնդացն Մարդոնիոսի բեկեալ, և աթենացիք՝ զի ըզ-

[1] Երոդ. գիրք Թ. գլ. 66 և 89։ [2] Նոյն անդ գլ. 71։

պատնէշս Պարսից բռնաբարեցին. և երկաքանչիւր այնու ամբարհաւաճումն թեամբ յամառեալ պնդէին, զի չէր նոցա հնար միաբանել։ Օ՝այրազնեալք երկուստեք, հնչէին բանակքն երկաքանչիւր սպառնալեօք. և եթէ ոչ Արիստիդէս խոհական իմաստութեամբն դադարեցուցանէր զվէճն, Ճակատէին ընդ միմեանս 'ի պատերազմ։ Այլնա հաւանեցոյց աթենացւոց՝ իբաւարար կացուցանել զնիզակակից ազգս. յորոց Թէոդիտոն մեդարացի խրատ ետ երկաքանչիւր ազգաց ոսոխաց հրաժարել 'ի մրցանակէն, և այլուսմ ուսմբ յազգաց Թողուլ զայն. իսկ Կղէոկրիտ կորնթացի պղատացւոց զայն անկ համարեցաւ, և ամենեքին միաբանեցին ընդ նմա։

Ծածկեր երկիրն փարթամ աւարաւ պարսիկ զօրականին, և ոսկի և արծաթ փոզփոզէին 'ի խորանս նոցա։ Այլ կացոյց Պաւսանիաս 'ի պահ աւարին զեղջսացիս [2]. և զատուցին յաւարէ անտի տասանորդս մեհենին Դելփեայ, և մասն մեծ առ 'ի կանգնել արձանս 'ի պատիւ դից. ապա և ինքեանք ընդ բաժինս աւարին խառնեցան, ածել յաշխարհ իւրեանց զսերմն ապականութեան [3]։

Իսկ անկելոցն 'ի մարտին մատուցին զամենայն սպաս մեծարանաց, ազգաց իւրաքանչիւր

[1] Պլուտ. յԱրիստիդ. էջ 321։
[2] Երոդ. գիրք Թ. գլ. 80։
[3] Յուստ. գիրք Բ. գլ. 14։

կանգնելով շիրիմ իւրոց մարտկացն[1]։ Այլ 'ի ժողով զօրավարաց Արիստիդէս հաւանութիւն ամենեցուն եւ հանել հրովարտակ, զի ժողովուրդք Այլազգայ ամի ամի արձակեսցեն հրեշտակս 'ի Պղատիէս, կատարել բազմահանդէս զոհիւք զիւրատակ անկելոցն 'ի պատերազմին. և 'ի լրումն հնգեկի ամաց կատարել անդ տօնս խաղուց, կոչելով զայն տօնս ազատութեան. և զի յայնմհետէ պղատացիք անզբաղ յամենայն հոգոց զոհս միայն և պաղատանս վասն փրկութեան Այլազգայ մատուսցեն, որպէս ազգ սրբեալ և նուիրեալ դիցն[2]։

Աւուրք մեռանան 'ի վերայ անցեալ Ճակատամարտին*, խաղացին յաղթականք 'ի վերայ թերացուց, և խնդրէին տալ 'ի ձեռս զգլխաւորս՝ որք ստիպեցին զնոսա հնազանդել Մարաց։ Այլ 'ի չսռնուալ նոցա զայն յանձն, պաշարեցին զքաղաքն, և մերձ էին 'ի կործանել զայն. բայց մի ոմն 'ի գլխաւորաց ինքնասպարտիցն խորհուրդ կալաւ հանդերձ հանախտիւքն անձնատուր լինել 'ի ձեռս յաղթականաց, յուսացեալ գնել զկեանս իւրեանց կաշառաւն՝ զոր 'ի Մարդոնիոսէ առեալ էին։ Այլ Պաւսանիաս մերժեալ զուզերձ նոցա, դատապարտեաց զնոսա 'ի մահ[3]։

[1] Երոդ. գիրք Թ. գլ. 85։ Թուկ. գիրք Գ. գլ. 58։

[2] Պլուտ. յԱրիստիդ. էջ 331։

* Ն. Գ. 479 ամաւ յՅ աւուր ամսեան Հոկտեմբերի։

[3] Երոդ. անդ գլ. 88։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 26։

Յամին երկրորդի եօթանասներորդի հինգերորդի ողնմպիադին, յերբորդում[1] աւուր ամսեան Ռոյեդրոմիոնի եղև պատերազմն այս 'ի Պղատիէս* ։ Ի նմին աւուր և նաւատորմն Յունաց յորում զօրավարք կային Լեւտիքիդաս արքայ սպարտացւոց, և Վասանթիսպոս արքայ աթենացւոց, կանգնեաց յաղթութիւն մեծ 'ի վերայ Պարսից[2] մերձ 'ի Միկաղէ սարաւանդ 'ի Յոնիա. և բնակիչք կողմանցն, որոց զնա յօգնութիւն կոչեցեալ էր, մտին յետ պատերազմին 'ի համաշխարհական նիզակակցութիւնն[3] ։

Բայց վախճան եղև պատերազմին Վասերքսեայ, որ յաձախագոյն և Մարաց պատերազմն կոչի. և տեւեաց այն զերկեամս մի[4] ։ Բայց 'ի սուղ ինչ ժամանակի այսպիսի մեծամեծ անցք ուրեք երբեք ոչ անցին. և ոչ անցք այսպիսիք այսպէս յանկարծ կերպարանափոխս ուրեք աշարին զբարս, զիղձս, և զկարգս տեսչութեան ազգաց ։ Մյլ 'ի սպարտացիսն և այլ յաթենացիս եղեն պատերազմիս այսորիկ արդասիք ըստ այլ և այլ բարուց նոցա և կարգաց ։ Սպարտացիք զնաղաղութեան ևեթ զհետ եղեն

1 Պլուտ. յոլ. փառ. Ա թենհտ. 2. էջ 349 ։ Նոյն 'ի Կամիլ հտ. 1. էջ 138. ('ի վարս Ա րիստիդեայ էջ 330 'ի յերբորդում աւուր ասէ եղեալ։)

* Ն. Ք. 479 ամաւ. 'ի 22 աւուր ամսեան սեպտեմբերի. (Տոմուէլ 'ի տարեգիրս Թուկիդիդեայ. էջ 52։)

2 Երոդ. գիրք Թ. գլ. 90։

3 Նոյն անդ գլ. 106։

4 Դիոդ. գիրք ԺԱ. էջ 29։

յաղթութեամբն, հաղիւ ուրեք նախանձ ընդդէմ աթենացւոց բերեալ. իսկ աթենացիք զակատեալք 'ի սպառ 'ի փառամոլութիւն, եդին 'ի մտի կապտել զդահերիցութիւն 'ի սպարտացւոց, և նախիշխանք կացեալ 'ի յունաստան՝ պահպանել յերեսաց Պարսից զյոնիացիս, որ այն ինչ յառաջին կարգ ազատութեանն դարձեալ էին։

Զգոյշ Լակեդայ առին խաղաղութիւն. և աթենացիք յաւերակս Թշուառ քաղաքին Իւրեանց վերստին շինեալ բնակէին, պարսպաւ և պատեալ զնա, ոչ ունկն դնելով բողոքոյնի զակակից ազգաց՝ որ խիթային 'ի զօրութենէ նոցա, և ոչ աղերսական յանդիմանութեանց սպարտացւոցն՝ որ կամէին կործանել զպարիսպս ամենայն քաղաքաց յունաստանի արտաքոյ քան զՊեղոպոնես, զի մի՛ ամրոցս Իւրեանց գտցեն Պարսք յարշաւելն միւսանգամ Լակեդա[1]։ Զատանօր Թեմիստոկղէս Հարտարութեամբ ըզդէմ կալաւ վտանգին, որ մօտալուտ 'ի վերայ հասեալ կայր աթենացւոց. և յաւելեալ ամրացուցանել զՊիրէոն հզօր պարսպաւ, կազմեալ զայն 'ի նաւահանգիստ[2]. և սահմանեաց կառուցանել ամի ամի նաւս թուով, և շնորհել ազատութիւն օտարաց և մանաւանդ գործաւորաց՝ որ գայցեն բնականալ Յ.թենս[3]։

1 Թուկ. գիրք Ա. գլ. 90։ 2 Պլուտ. անդ։ Նեպ. 'ի Պլուտ. 'ի Թեմիս. էջ 121։ Թեմիս. գլ. 6։
Դիոդ. գիրք ԺԱ. էջ 31։ 3 Դիոդ. գիրք ԺԱ. էջ 33։

Ինմին ժամանակի ազգք նիզակակիցք պատ-
բաստէին յաղատութիւն դարձուցանել զքա-
ղաքս Յունաց, ուր պահակապան զօրս Թո-
ղեալ էր Պարսից։ Այսն որոյ Պաւսանիաս և
Արիստիդէս զօրավարքը բազմութեամբ նա-
ւաց հասեալ Թափեցին 'ի ձեռաց Թշնամեաց
զԿիպրոս կղզի, և զԲիւզանդիոն քաղաք՝ կա-
ռուցեալ յեզը Հելեսպոնտեայ[1]։ Այլ Պաւ-
սանիաս 'ի սպառ զառածեալ յաղթութենէն,
ոչ ևս փառամոլութեանն Թափոյ տանել կա-
րաց։ Եւ ևս էր նա այնուհետև ժուժկալ ըս-
պարտացին, որ 'ի դաշտս Պղատեայ ոսնհար
լեալ անգոսներ զպերձութիւն և զտրկաբար
ծառայութիւն Պարսց[2]. այլ որպէս ոք 'ի նա-
խարարացն Պարսից, նուաճեալ 'ի բարուց
պարտելոց ազգաց, և շուրջ պատել 'ի թիկնա-
պահաց այլազգեաց՝ անմատչելի իւրոցն[3]։ Ազ-
գքը նիզակակիցք չհանդուրժեալ ընդ խիստ
և ընդ խիզախ պատասխանիս նորա, և ընդ
սաստ սպառնալեաց և ընդ անսգորոյն հրա-
մանս նորա, ընդդէմ դարձան գոռոզութեան
նորա՝ որ ուղղութեամբն Արիստիդեայ և ևս
ատելի լիներ նոցա։ Վասնզի սա առ 'ի յանկու-
ցանել յինքն զսիրտս ամենեցուն՝ զգօրաւորա-
գոյնսն 'ի կիր արկաներ զէնս, զհեզութիւն և

[1] Թուկ. գիրք Ա. գլ. 94։ [3] Թուկ. անդ գլ. 130։
Դիոդ. գիրք ԺԱ. հլ 34։ Նեպ. 'ի Պաւս. գլ. 3։
[2] Երոդ. գիրք Թ. գլ. 82։

զարդարութիւն. նմին իրի և ազգք նիզակակիցք կամէին այնու հետև առաջնորդութեամբ աթենացւոց տալ պատերազմ[1]։

Իսպազեկ լեալ սպարտացւոց, յետս կոչեցին վաղվաղակի զՊաւսանիաս՝ ամբաստանեալ վասն հարստահարութեանցն ընդ նիզակակիցսն առնելոց, և զի կասկած ևս էր զնմանէ համախոհութեան ընդ պարսիկս։ Բ. Ժամն հարստահարութեանց ևեթ նորա ցուցեալ հաւաստիք, անկաւ նա 'ի զօրավարութենէ[2]. ցուցաւ ապա և համախոհութիւն նորա ընդ Պարսս, և բարձաւ նա 'ի կենաց[3]։ Այլ և ոչ այնու անաչառ վրէժինդրութեամբն սպարտացւոց յորդորեցան ազգք նիզակակիցք լինել ընդ զօրավարութեամբ նոցա, այլ մերժեցին զԱրիստիս՝ զոր սպարտացւոց կացուցեալ էր փոխանակ Պաւսանիայ[4]։ Արիստիս դարձաւ յետս, և խորհուրդ 'ի մէջ առին սպարտացիք՝ թէ զինչ առնիցեն։

Օրավարութիւն հելլենախումբ բանակին նոցա անկ էր անժխտելի իրաւամբք։ Անոր ազգք Լակեդայ, և նոքին իսկ աթենացիք, մինչև ցայնժամ առանց հակառակութեան ընդունէին զայն[5]. և ոչ երբէք սպար-

1 Թուկ. գիրք Ա. գլ. 95։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 34։ Պլուտ. յԱրիստիդ. էջ 333։ Նեպ. յԱրիստիդ. գլ. 2։

2 Թուկ. անդ. գլ. 131։

3 Նոյն անդ գլ. 134։ Դիոդ. անդ էջ 35։

4 Թուկ. անդ գլ. 95։

5 Երոդ. գիրք Ը. գլ. 2 և

3։ Նեպ. յԱրիստիդ. գլ. 2։

տացուց առ ընդարձակելոյ զսահմանս իւրեանց 'ի կիր արկեալ էր զայն, այլ 'ի հալածել և եթ զբռնաւորութիւն[1]։ Պարձեալ զի և հանձարեղ օրինաւոր լինէին յաճախ իրաւարար ազգաց Լեղադայ, և վասն արդարակորով վճռոց նոցա յաւելեալ էին բաղումք 'ի նիզակակցութիւն։ Լաւ երբ բառնային 'ի նմանէ զիշխանութիւնն 'ի ժամանակի՝ յորում Յոյնք ընդ զօրավարութեամբ նոցա զպայծառագոյն յաղթութիւնսն կալան։

Այս ամենայն 'ի քննութիւն առեալ կրկնէ տեսին զատամունս. և մինչ դեռ սպառնալից սրտմտութեամբ խորհէին արշաւել յԲտիկէ, մի ոմն յաւագանւոյն Լատեմարիդաս կացեալ 'ի մէջ պատերազմողաց՝ եցոյց անվեհեր, զի զօրավարքն նոցա զհետ պայծառ յաղթութեանցն՝ սերմանս ապականութեան ածէին 'ի հայրենիսն. և զի օրինական Պաւսանիայ զփոքր առեալ՝ պարտ էր նոցա խելթալ 'ի յաջորդաց նորա. և զի լաւ էր նոցա թողուլ յաթենացիս զծովապետութիւն և զհոգս կատարածի պարսկական պատերազմին[2]։

Զիրան հանդարտեցին ամենեքեան յանակընկալ բանից անտի. և ազգ՝ կորովագոյն քան զամենայն ազգս երկրի՝ մեծարեաց անդ զա-

[1] Թուկ. գիրք Ա. գլ. 18։ [2] Թուկ. անգ գլ. 75 և 95։ Պլուտ. 'ի Նիկուր. հա. 1. էջ 58։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 38։

ռաքինութիւն քան զվրէժխնդրութիւն, ի-մաստից բանին նեղբոյ արկեալ զնախանձայու-զութիւն։ Զանգի չև ևս ոգին լիկուրգեան նուաղեալ էր 'ի Սպարտա, և թերևս չերևե-ցաւ նա ուրեք երբէք ոլոգէս անդանօր արի և վեհ։ Այլ մինչ դեռ աթենացիք պատրաստէին զինու զօրութեամբ յինքն ձգել զիշխանու-թիւնն, հիացեալ զարմացան ընդ անակնկալ զիջումն սպարտացւոց՝ զոր ոչն իսկ կարէին ին-քեանք առաքինանալ. և մինչ ազգ նախան-ձորդ նոցա կամակար հրաժարէր 'ի մասնէ իշ-խանութեանն, նոքա առաւել ևս ձգնէին 'ի ձեռն նիզակակցաց ամրանալ 'ի պատիւ զօրա-վարութեան յունական նաւատորմին։

Զորոյ կարգի նիզակակցութեանն 'ի դէպ էր մտանել 'ի հանդէս քաջութեան. նմին իրի նորանոր խորհուրդք 'ի մէջ առան, և նախ 'ի հայթայթանս գանձուց կարևորաց 'ի կատա-րումն պարսկական պատերազմին։ Արիստի-դեայ յանձն արարին միաբան ամենայն ազգք զշահ օգտին իւրեանց. և նա շրջեալ ընդ եր-կիրն Յունաց և ընդ կղզիս, քննեալ զչափ էառ եկամտից վայրաց իւրաքանչիւր։ Այս այնու ուղղութեամբ և իմաստութեամբ կատարեաց զգործ պաշտամանն, զի որք զտուրան տային՝ բարերար իւրեանց զնա կարդային[1]։ Այս իբրև

[1] Պլուտ. յԱրիստիդ. էջ 333։ [2] Նոյն անդ։

կատարեցաւ դրամաժողովն, խորհուրդ կալան դիմել 'ի վերայ Պարսից։

Բայց սպարտացիք չեղեն հաղորդք խորհրդոյն, զի նոքա յայնժամ խաղաղութեան ևեթ ցանկային, իսկ աթենացիք պատերազմի. ոչ ասա միայն այլակամք 'ի միմեանց երևեալ։ Հետ Ճակատամարտին՝ որ առ Միկաղեաւ, պեղոպոնեսացիք առաջնորդեալ 'ի սպարտացւոց՝ կամէին փոխել զժողովուրդս Յոնիոյ երկիրն յունաստանի, տալով նոցա 'ի բնակութիւն զծովեղերեայ քաղաքս՝ զորս ժառանգէին ազգք միաբանեալք ընդ պարսիկս. որով Լակեդա զերծանէր 'ի հոգոց խնամակալութեան գաղթականացն իւրոց յոնիացւոց, և բառնային 'ի միջոյ պատճառք յաճախ պատերազմի ընդ Պարսս և ընդ Եւրոպա։ Բայց աթենացիք մերժեցին զխորհուրդ նոցա, ասելով թէ գաղթականացն ապահովութիւն ոչ 'ի նիզակակից ազգացս պահանջի։ Սակայն պարտ էր գէթ զկեղտ ինչ նախատանաց զբոլորմել 'ի վերայ ազգացն Յունաց՝ որոց ձեռն տուեալ էր 'ի Խսերքսէս, և կամ ոչ առեալ զէն ընդ համազգիսն։ Սպարտացիք կամէին մերժել զնոսա 'ի ժողովոյ Պամփիկտիոնաց. բայց Թեմիստոկղ առ 'ի ձգել զարգիացիս և զթեբացիս և զթեսաղացիս 'ի կողմն աթենացւոց, ասէր՝ թէ յարտաքսել ազգաց յանցաւորաց 'ի

[2] Երոդ. գիրք Թ. գլ. 106։

ժողովոյն, երկուք ոմանք կամ երեք 'ի հՂօր քաղաքաց իշխեին խորհրդոց։ Այլ ընդ վայր հարեալ զխորհուրդ սպարտացւոց, ոխացոյց զնոսա ընդ իւր'։

Այլ խակ և զնիզակակից ազգս գրգռեալ էր ընդ իւր հարկապահանջութեամբք և բռնութեամբք 'ի կղզիս եգեան ծովու։ Զմին իւրի ամբոխս բազմութեան բողոք ունէին զանիրաւութեանց նորա, և այլք զմեծութեանց նորա մթերելոց, և ամենեքին առ հասարակ զփառասէր իշխանասիրութենէ նորա։ Մանաւանք պարսաւադէտք ամենայն գործոց և բանից նորա՝ բերկրէին անագորոյն բերկրանս, ստուերածս ածելով 'ի վերայ փառաց նորա. և տեսանէր նա օր ըստ օրէ նսեմացեալ զփառս իւր, և առ անաղօտելի պահել զպայծառութիւն նորա՝ զնուաստութիւն յանձն առնոյր 'ի պատմել զքաջութիւնս իւր, աշխատ առնելով զլսելիս ժողովրդեան, ոչ զմտաւ ածեալ՝ զի վտանգ է և անօգուտ յիշեցուցանել զվաստակս մոռացեալս։ Այլ ետ նա կառուցանել մերձ 'ի տուն իւր մեհեան ԱՐՏԵՄԵԱՑ ԲԱՐՒԽՈՐՀՐԴՈՅ։ Զոյս արձանագիր յիշեցուցիչ բաբեաց խորհրդոցն՝ զոր ինքն ետ աթենացւոց 'ի պատերազմին Պարսից, թուեցաւ կշտամբութի՛ն ինն և նախատինք ազգին։ Յաղթանակեցին ոսոխք նորա. և աքսորեալ 'ի հայրենեաց*,

1 Պլուտ. 'ի թեմիս. էջ 122։ * Իբր 471 ամաւ Ն. Ք։

խոյս էտ 'ի Պեղոպոնես. և ապա ամբաստանեալ յեղեռն համախոհութեան ընդ Աբրտաշիսի յաջորդին Խոսերքսեայ, և հալածեալ քաղաք 'ի քաղաքէ[1], անկաւ փախստական 'ի Պարսս։ Հոգաբաժարեցին զյաղթողն իւրեանց խոնարհեալ յաղերս վասն քաջութեանն, որ թէպէտ և նկուն արար զնոսա՝ այլ ոչ ևս էր նոցա ահարկու։ Լու անդ յետ քազում ամաց վախճանեաց Ամիստոկղ զկեանս իւր*։

Ոչինչ փոյթ եղև աթենացւոց ընդ կորուստն ընդ այն. և էին նոցա յայնժամ զօրավարք՝ Աբիստիդէս և Կիմոն որդի Միլտիադեայ։ Կիմոն 'ի հայրենի քաջութեանն յաւելեալ ըստ խոհականութիւն Ամիստոկղեայ, և գրեթէ զամենայն առաքինութիւնս Աբիստիդեայ, որում աշակերտեալն իսկ էր, և 'ի նախանձնը մանութեան նորա կրթեալ[2]։ Օնա կացուցին հրամատար յունական նաւատորմին. որ և դիմեալ 'ի Ամբակիա, հալածեաց զպահակապանս պարսիկս՝ որ կային անդ 'ի միում ուրեք 'ի քաղաքաց, և հար վանեաց զծովամարտիկ հէնն՝ որ անդ շուրջանակի աւար հարկանէին, և զարհուրեցոյց զկղզիս՝ որ քակեալ էին 'ի միաբանութենէն Յունաց[3]։

1 Թուկ. գիրք Ա. գլ. 135։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 42։ Պլուտ. 'ի Թեմիս. էջ 122 և 123։

* Իբր 449 ամաւ Ն. Ք։

2 Պլուտ. 'ի Կիմ. էջ 481։

3 Նոյն անդ էջ 483։ Թուկ. անդ գլ. 98։

Լ՚ալա չու արար 'ի Պիրէոնէ երկերիւր պա-
տերազմիկ նաւաք, յորս հարիւր այլ նաւս յա-
ւելին նիզակակիցք. և յերեսաց նորա և 'ի զօ-
րութենէ զինուցն խուճապեալ քաղաքք Կա-
ռիոյ և Լիկիոյ, համարձակեցին զթշնամու-
թիւն ընդ Պարսս։ Հանդէպ Կիպրոսի պա-
տահեալ նաւատորմին Պարսից երկերիւր նա-
ւաց՝, զկէս 'ի նոցանէ ընկղմեալ, և զայլս գե-
ռեաց. և ընդ երեկս հասեալ՝ 'ի ծովեզերս Պամ-
փիղեայ, ուր էր ամբոխ մեծ զօրացն Պարսից,
եհան զօրս յերկիր, եհար ցրուեաց զթշնամին.
և առեալ գերի սաստիկ, և աւար բազում յոյժ
'ի պայծառութիւն քաղաքին Աթենայ, դարձ
արար անդրէն։

Օհետ կրկին յաղթութեանցն կալաւ և ըզ-
ցամաք կղզին Թրակիոյ՝, և բազում այլ ևս
յաղթութեամբք յաճախէր զփառս աթենա-
ցւոց ընդ ամս յոլովս, և զվստահութիւն նոցա
'ի զօրութիւնս իւրեանց։ Աւլ ըստ նմին յա-
փոյ պակասէր նիզակակցացն զօրութիւն. քան-
զի պարտասեալ նոցա 'ի պատերազմէն, որ ոչ
ևս օգտի ինչ օգնել նոցա, բազումք հրա-
ժարէին 'ի տալոյ զկարգեալ գումնդն և զնա-
ւատորմ։ Աթենացիք զառաջինն սպառնալեօք
և բռնութեամբ պահանջէին զայնս, բայց Կի-
մոն իմաստնագոյն խորհրդով եթող 'ի նոսա

1 Թուկ. գիրք Ա. գլ. 100։ 3 Պլուտ. 'ի Կիմ. էջ 487։
2 Դիոդ. գիրք ԺԱ. էջ 47։

զզօրս և զնաւաստիս, և յաւել՝ի վերայ նոցա զդրամահարկ, և նաւս ևեթ պահանջէր 'ի նոցանէ՝ նաւաստիս յաթենացւոց կացուցեալ՝։ Սովին խորագէտ Հարտարութեամբ բարձեալ 'ի նոցանէ զնաւաստականութիւն, թմրեցոյց զնոսա 'ի հանգիստ օրհասական. իսկ զՀայրենիսն այնպէս զբարացոյց, զի ոչ ևս յերեսաց նիզակակցացն ակնածէին։ Բ.բիստիդէս և Կիմոն տակաւին աննուազելի խնամօքն զոմանս 'ի նոցանէ 'ի բարեկամութեան կալան, բայց աթենացիք խրոխտ ամբարտաւանութեամբն սարտուցին զբազումս, և ապա 'ի պատուհասյետս կալոյ նոցա 'ի նիզակակցութենէն՝ նուաստեցին զնոսա 'ի ծառայութիւն։ Բ.յսու օրինակաւ տիրեցին նոքա 'ի Սկիւրոս և 'ի Լ.աքսոս կրղզիս[2]. և բնակիչք կղզւոյն Թասոսի պաշարեալք ընդ երկար, ստիպեցան ապա կործանել իւրովի զպարիսպս մայրաքաղաքին, և տալ 'ի ձեռս յաղթականին զնաւս և զբոլս ոսկւոյ, և զերկիրն՝ զոր ժառանգէին 'ի ցամաքի[3]։

Բ.յս ամենայն յայտնապէս հակառակ էին ուխտին, զոր եդ Բ.բիստիդէս ընդ նիզակակիցս. և թէպէտ երդմունք ահագինք երաշխաւորէին պահպանութեան նորա, բայց Բ-

1 Թուկ. գիրք Ա. գլ. 99։ Պլուտ. 'ի կեմ. էջ 485։
2 Թուկ. անդ գլ. 98։ Պլուտ. անդ էջ 483։
3 Թուկ. անդ գլ. 101։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 53։ Պլուտ. անդ էջ 487։

բիստիդէս խրատ ետ աթենացւոց՝ յիւր վերայ զանէծս կուտել զդրժանացն՝. քանզի փառամոլութիւն և զառաքինութեանն իսկ սկսանէր խախտել զհաստատութիւն։

Լին յայնժամ աթենացիք անդադար 'ի մարտս պատերազմաց, պատՀառելով 'ի վերին երեսս զպահպանութիւն ազատութեան քաղաքացն Յունիոյ, ոչ համարձակեալ նոցա զըստոյգն խոստովանել զի կամին բառնալ զազատութիւն ազգացն Հելլադայ։

Պարտացիք անագան ուրեմն 'ի յաՀախել բողոքոյ նիզակակցացն ընդոստուցեալք, մինչ դեռ Լեասոս 'ի պաշարման կայր՝ խորհէին ինքեանք զօրահատոյց առնել Պրտիկէ[2]։ Բայլ 'ի ժամանակի անդ ահագին սասանութիւնք երկրի տապալեցին զՊարտա, և բազմութիւն յոյժ 'ի բնակչացն ընդ փլատակօքն կորեան. և ստուկք նոցա 'ի դէպ ժամանակին ապստամբեցին, և կէսք 'ի քաղաքաց Լակոնիոյ զՀետ նոցա. որպէս զի ստիպել սպարտացւոց խնդրել օգնութիւն յազգէ, որում խորհէին խափան լինել յառաջադիմութեանն*։ Մի ոմն 'ի Ճարտարախօսացն աթենացւոց խրատ ետ թողուլ զՊարտա 'ի կործանումն, որ միայն յամենայն քաղաքաց Հելլադայ ահարկու էր նոցա. բայց Կիմոնի ածեալ զմտաւ զի նա-

1 Պլուտ. յԱրիստիդ. էջ 334։

2 Թուկ. գիրք Ա. գլ. 101։

* Իբր 464 ամաւ 'ն. Ք։

խանձքաղաքին այնորիկ օգտակարագոյն էր ա-
թենացւոց քան զաշխարհակալութիւնս նոցա,
իմաստս ազնուականագոյնս թելադրեաց [1]։ Ա-
ղով յայնժամ և առ յապայ հասուցին աթե-
նացիք զօրս 'ի թիկունս սպարտացւոց. բայց
մեծաւ սպասաւորութեամբն փոխանակ հաս-
տելոյ սէր 'ի միջի, գրգռեցան ազգքն երկոքին
ընդ միմեանս յատելութիւն՝ յորմէ պատերազ-
մունք բազմաղէտք առին պատճառս [2]։ Բայ-
զի սպարտացիք առ կասկած երկիւղի՝ թէ գու-
ցէ զօրավարք աթենացւոց համախոհք ընդ ա-
պրստամբսն իցեն, յետս դարձուցին զնոսա պա-
ՀՈՒՀՏեալ պատՀառանօք։ Բայց աթենացիք
սրտմտեալ ընդ կասկածանսն, լուծին զուխտ
նիզակակցութեանն՝ զոր անդստին 'ի սկզբա-
նէ պատերազմին Պարսց կռեալ էին ընդ
սպարտացիս, և եդին ուխտ ընդ արգիացիս՝ որ
'ի բազում ժամանակաց թշնամութեամբ էին
ընդ սպարտացիս [3]։

Մինչ դեռ այս իրք էին 'ի յունաստան, Ի-
նարոս որդի Փսամմետիքեայ յարոյց զԱրկիպ-
տոս ընդդէմ Դարտաշիսի արքային Պարսից [4],
և կոչեաց յօգնութիւն զաթենացիս [*]։ Իսկզբ
վատթարելոյ զՊարսս, և նիզակակցութիւն

1 Պլուտ. 'ի Կիմ. էջ 489։ գիրք Դ. գլ. 24. էջ 339։
2 Դիոդ. գիրք ԺԱ. էջ 49։ 4 Թուկ. անդ գլ. 104։
3 Թուկ. գիրք Ա. գլ. 102։ Դիոդ. անդ էջ 54։
Դիոդ. անդ էջ 48։ Պաւս. * Իբր 462 ամաւ Ն. Ք։

Այգիպտոսի առաւել յորդորեցին զնոսա քան զամենայն խոստմունս Աստարոսի. և չու արար Կիմոն Այգիպտոս նաւատորմաւ նիզակակից ազգաց երկերիւր նաւաք՝, խաղաց ընդ վեր կոյս գետոյն՝ Եղեսի, և եհաս խառնեցաւ ընդ տորմիզ նաւացն Եգիպտացւոց. որոց յաղթահարեալ զՊարսս՝ կալան զԼեմիիս, բաց՝ ի միոջէ կողմանէն՝ ուր մնացորդք բանակին Պարսից ապաստանեալ էին։ Եւ զամս վեց յաղթանակեցին ապստամբք օգնականութեամբ աթենացւոց և այլոց Յունաց. բայց ապա պարտեալք՝ ի Ճակատամարտի, և ամրացեալք՝ ի կղզեղոջ ուրեք՝ ի մէջ երկուց վտակաց՝ Եղեսի, պահ կալան անձանց զամիս վեց, և բազումք՝ ի նոցանէ անկան զէն՝ ի ձեռին։ Բայց թագաւորն Պարսից և յառաջագոյն առ՝ ի հանել զթշնամին Այգիպտոսէ՝ փորձեցաւ Արտաշէս հաւանեցուցանել գանձիւք զսպարապետս արշաւել Ամոտիկէ, այլ նոքա չառին զայն յանձն[2]։

Ի՞նչ դեռ աթենացիք պատերազմէին՝ ի տարաշխարհի առ՝ ի կացուցանել թագաւոր Այգիպտոս՝, ինչմին ժամանակի և՝ ի վերայ կորընթացւոց և եպիդաւրացւոց յարձակէին նոքա Այսրոպա, նոյնք յաղթանակէին յայնժամ և ընդդէմ բիսլտացւոց և սիկիոնացւոց, և զնաւատորմն պեղոպոնեսացւոց ցրուէին, և բռնա-

1 Թուկ. գիրք Ա. գլ. 110։ Պլուտ. ՝ի կիմ. էջ 490։

2 Թուկ. անդ գլ. 109։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 56։

դատէին զէգիպտացիս տալ իւրեանց գնաւսն և հարկս, և կործանել զպարիսպսն՝։ Լոքին դարձեալ և գունդս 'ի Լիմեսաղիա արձակէին առ 'ի դարձուցանել զՎիրեստեսյաթոռն հայրենի՝, և ոչ դադարէին 'ի դղրդելոյ զազգս Հրէլադայ գաղտ հնարիւք կամ յանդուգն համարձակութեամբ, կիսոց ձեռն տալով, յայլոց ուժգին առնլով օգնականութիւն, յաւելլով 'ի սահմանս իւրեանց զվայրս՝ որ 'ի դէպ թուէին նոցա, և հաստատելով բնակութիւն ամենայն ուրեք՝ ուր վաճառաշահութիւն ձգէր զնոսա անդր. հանապազ զէն 'ի ձեռին, անդադար 'ի նորանոր արշաւանս դիմեալք, արագ յաջորդութեամբ արկածից և յաջողութեանց։

Գաղթականք 'ի նոցանէ, բիւրաւորք իսկ բազմութեամբ՝, գնային 'ի տար աշխարհ՝ գործել զերկիրս նուաճելոյ ազգաց՝. և 'ի գաղթականութեանց աստի և 'ի պատերազմաց անմարդանալը Լատիկէ։ Լայց փոխանակ նոցա եկք յաճախէին բազմութեամբ յանձուկ աշխարհն, ձգեալք անդր հրովարտակաւն Լիմիստոկլի՝ որ տայր նոցա ապաւէն, և առաւել ևս ցանկութեամբն հաղորդ լինելոյ փառաց և օգտի բազմայաղթ աշխարհակալութեանցն։

1 Թուկ. գիրք Ա. գլ. 105 և 108։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 59 և 63։

2 Թուկ. անդ գլ. 111։

3 Դիոդ. անդ էջ 54։

4 Նոյն անդ էջ 67։ Պլուտ. 'ի Պերիկլ. էջ 163։

Օրավարք քաջք և արիասիրտք օգնական լեալ արքանեկէին ապերասան փառամոլութեանն աթենացւոց. որպիսի ոք Միռոնիդէսն էր, որ միով և եթ Ճակատամարտիւ կալաւ զՓովկիս և գրեթէ զամենայն իսկ զՍիրիա[1]. որպիսի ոք Տոլմիդէսն էր, որ զայնու ժամանակաւ հար աւար զծովեզերս Պեղոպոնեսեայ[2]. որպիսի ոք դարձեալ և Պերիկղէսն էր, որ անդատին 'ի նմին ժամանակի արկանէր զՀիմունս հանդերձեալ փառացն իւրոց, և ըստ յաճախ տարակայութիւն Կիմոնի պարապ առեալ, յարեցուցանէր յինքն զսիրտ ժողովրդեան։

Եւ ևս յայնժամ պատերազմէին աթենացիք համարձակ ընդ սպարտացիս, այլ յաճախ թշնամութիւնք 'ի միջի գործէին նոցա ընդ սոսա և ընդ նիզակակիցս սոցա։ Այլև երբեմն զի կամէին աթենացիք 'ի միասին ընդ արգիացիս խափանել զդարձ գնդի միոյ սպարտացւոց, որք 'ի խնդիր իւրեանցն օգտի երթեալ էին 'ի Պեղոպոնեսեայ 'ի Սիրիովտիա։ Ճակատեցան առ միմեանս մերձ 'ի Տանագրա քաղաք*. հարան աթենացիք, և սպարտացիք անցեալ գնացին զՃանապարհ իւրեանց[3]։ Այլ աթենացիք երկեան՝ թէ գուցէ շարժեալ դրդեսանդ։

1 Դիոդ. գիրք ԺԱ. էջ 63։ Թուկ. գիրք Ա. գլ. 108։
2 Դիոդ. անդ էջ 64։ Թուկ. անդ։
* Իբր 456 ամաւ Ն. Փ։
3 Թուկ. անդ։

ցի անտի պատերազմ. զի ամաչէին յայնպիսի դէպս ընդ անիրաւութիւն իւրեանց, և իշխանք նոցա 'ի բաց դնէին զնախանձ հակառակութեան։ Մենեքին զարձուցին զաչս իւրեանց 'ի Կիմոն, զոր ամաչ ինչ յառաջ աքսորեալ էին. և նոյն ինքն Պերիկղէս, որ տուեալն էր աքսորել զնա, յանձն առ յանդիման առնել ժողովրդեան զհրովարտակ դարձի նորա։

Այլ ոչ այս մեծ Կիմոն, պատկառելի առաջի սպարտացւոց, և վստահ 'ի սէր աթենացւոց, զամենայն ջան 'ի գործ էարկ առ 'ի հաստատել խաղաղութիւն 'ի միջի[1], և հաւանեցոյց զնոսա յոխտ դաշին 'ի բաց դնելոյ զզէնս զամս հինգ*։ Այլ քանզի աթենացիք ոչ ևս կարէին կալ 'ի խաղաղութեան, փութացաւ ած զնոսա 'ի Կիպրոս, և այնպիսի յաղթութիւնս կալաւ անդ մեծամեծս ընդդէմ Պարսից, մինչև ստիպել Արտաշիսի խնդրել աղերսանօք զզ խաղաղութիւն**։ Պայմանք հաշտութեանն ե զէն կարի անարգականք արքայից արքային, ոչ այլազգք յայնցանէ՝ զորս ինքն դնէր արդեօք 'ի վերայ ազգաց հուդկահարաց աւերողաց զգ տահմանս իւր։ Յանձն էառ թողուլ ազատս ինքնիշխանս զքաղաքս Յունաց բնակեալս 'ի Յոնիա, և մի ևս արձակել զնաւս իւր 'ի ծո-

[1] Պլուտ. 'ի Կիմ. էջ 490։
[2] Թուկ. գիրք Ա. գլ. 112։
* Ն. Ք. 450 ամաւ։
** Ն. Ք. 449 ամաւ։
Պլուտ. անդ։

վրա յունաստանի, և մի զղջաց իւր անդր քան զեռաւրեայ Հանասպարհ'ի ծովեզերս Յունաց։ Արդուսան և աթենացիք մի ինչ առնել չար'ի սահմանս Աբրտաշիսի[1]։

Հայոսոսիկ մի'ի քաղաքաց Ալեքսադայ դներ օրէնս'ի վերայ Աբրեայ պետութեանն՝ որ մեծագոյր քան զամենայն ինքնակալութիւնս աշխարհի էր։ Յառաջ քան զամն երեսուն խորհել նորա'ի դիմակալել պարսկայնոյ պետութեան, թուեցաւ խորհուրդ անհնարին, և յաջողութիւն իրացն՝ աքանչելիք։ Կիմոն ոչ ևս ընդ երկար 'վայելեալ'ի փառս, վախճանեաց զկեանս իւր 'ի Կիպրոս. և մահուամբ նորա եղև վախճան յաջողութեանցն աթենայեցոց։ Գովին և եսայր մասին պատմութեանս առնեմ վախճան, ծայրաքաղ առնելով ինչ ինչ առ'ի տալ զտիպս կերպարանաց ժամանակին, յորում եկաց։

ՅԱՐՔԱՒԵԼ. Պարսից Ալեքսադա, կրկին կասկածք երկիւղի ստիպեցին զաթենացիս զդէմ ունել նոցա ամենայն զօրութեամբ. երկիւղ ծառայութեան, որ առաւել խրախուսէ միշտ զազգ ազատ յառաքինութիւն, քան զՀրամանս օրինաց աշխարհին. և երկիւղ հաստակաց կարծեաց, որ առ ամենայն ազգս ընդ յաճախ զտեղի առաքինութեան։ Ինչափ առաւել

[1] Դիոդ. գիրք ԺԲ. էջ 74։

ազգէր յաթենացիս առաջին երկիւղն, որչափ զի այն ինչ սկսանէին նոքա վայելել յազատութեանն՝ վասն որոյ զամս երկերիւր պայքարեալ էին. իսկ երկրորդն դաստիարակութեան նոցա և երկար սովորութեանն էին արգասիք։ Ի ժամանակին յայնմիկ իշխէր 'ի սիրտս ամենեցուն ամօթ՝ [1] որ ոչ ինչ ընդհատ 'ի վատութենէ ամաչէ ընդ համարձակութիւն, որ զիւրաքանչիւր ոք 'ի քաղաքայնոց պահէ 'ի չափաւ պայմանի բաղդին և բաւականութեանն, և որ սանձահարէ օրինօք զհզօրն, և զառաքինութիւն առնէ օձան տկարին, և զանուն բարի կարևոր ամենեցուն։

Մինայն ոք խոյս տայր յաւագութենէ, զի ամենեքին արժանի էին այնմ՝ [2]. և ոչ ոք իշխէր թեկն ածել զփառաց և զպատուոյ, զի մեծարանք հասարակաց բաւական վարձք համարէին վաստակոց մատուցելոց աշխարհին։ Եւ գործեցան ուրեք երբեք իրք մեծամեծք որպէս 'ի ժամանակին յայնմիկ, սակայն և քան զամենայն մարդիկ հեռագոյնք էին այնր ժամանակի որեարն 'ի խորհելոյ՝ թէ փառք մեծամեծացն այնոցիկ գործոց ամփոփել մարթիցին յոմանս 'ի քաղաքայնոց։ Սոլոնի և Լիմոդեայ և Լիւրիստոդիտոնի կանգնել կանգնեցան անդրեք, այլ յետ մահուն նոցա։ Լիւրիստիդէս և

[1] Պղատ. յլ. օր. գիրք Գ. էջ 699։

[2] Խոսկ. արիսպ. հա. 1. էջ 323։

Թեմիստոկղէս կեցուցին զՀայրենիսն, և ոչ պակ 'ի դամենոյ ընկալեալ փոխարէն[1]։ Մինչ տիադէս յետ մարաթոնեան Հակատամարտին աղերսելով յատենի ժողովրդեան՝ ընդհելիւր զպատիւն, յարուցեալ ոմն 'ի մէջ ատենին՝ ասէ. Մինչ տիադէս, յորժամ դու քեզէն միայնակ վանեսցես զխուժախումբ բանակս, կալցիս յայնժամ դու միայն պակ[2]։ Պարձեալ և սուղ ինչ յետոյ, յորժամ գունդք զօրացն աթենացւոց զօրավարութեամբ Կիմոնի յաղթութիւն մեծամեծս կալեալ 'ի Թրակիա՝ 'ի դառնալն իւրեանց խնդրէին մրցանակս, յարձանագիրսն՝ որ կանգնեցան նոցա՝ խառն 'ի խուռն ամենայն զօրացն ընծայէին դրուատիք, և ոչ ումեք յանուանէ[3]։

Այս քանզի իւրաքանչիւր որ 'ի քաղաքացւոց մարթէր լինել պիտանի, և ոչնկուն լինէր հանապազ տարապարտ նախապատուութեամբ այլոց, ամենայն որ վատահ էր՝ զի մարթէր նրմա ստանալ պատիւ. և զի պարզք և անկեղծք էին բարուք, ամենայն որ ժառանգէր զազատութիւնն և զպատիւ՝ որ յաձախութեամբ պիտոյից ևեթ և ցանկութեանց կորնչին։

Յաւելից 'ի պարծանս ժամանակիս և զգեբասանծ փառս, զոր աթենացիք մատուցին

1 Եպբն. 'ի Կոնոսիմ. էջ 457։
2 Պլուտ. 'ի Կիմ. էջ 483։
3 Եպբն. անդ էջ 458։ Պլուտ. անդ էջ 482։

ուղղութեանն Աբիստիդեայ. զի 'ի տեսարա-
նի զմի յողբերգութեանցն Եաքիզեայ յանդի-
մանն առնելով, յասել գուսանին զՄիթիթարա-
ւեայ՝ թէ ցանկայ նա լինել քան երևելի լաւ,
անդէն ամենեքին դարձուցին զաչս իւրեանց
Ի Աբիստիդէս՝ ։ Աբդ թէպէտ և մարթեր և
ազգի թիւրելոյ առնել հանդոյն ինն, բայց
միշտ իսկնախամեծար առնէին աթենացիք ըզ-
քանս Աբիստիդեայ քան զԹեմիստոկղեայն,
զոր ազգ զեղծ և թիւր չառներ արդեօք ։

Յետ յաղթութեանն՝ զոր կալան ընդդէմ
Պարսից, խրոխտումն հետևորդ յաղթութեան[2]
կցորդեր 'ի նոսա ընդ առաքինութեան՝ որով
կանգնեցին զյաղթութիւնս. էր իսկ տարապարտ
խրոխտումն այն, զի չեղև ուրեք երբեք իրա-
ւացի քան զայն և կարևորագոյն պատերազմ։

Յորժամ ազգ առաքինի 'ի նուաստութենէ
յանկարծ ամբառնայ 'ի բարձրութիւն, մի յեր-
կուց ատի պատահէն դէպք. զի կամ 'ի պահ-
պանութիւն կարգաց աշխարհին հրաժարել նա
յամենայն ըղձից և ևս մեծանալոյ, և ժառան-
գել խաղաղութեամբ ընօրհն և մեծարանս ա-
ռաջի այլոց ազգաց, որպէս պատահեացն ըս-
պարտացւոց, և կամ ցանկայ փոխանակել զա-
մենայն առ 'ի յաւելուլ 'ի զօրութիւն, և լինի
զրկող և հարստահարող, որպիսիք եղեն աթե-

[1] Պլուտ. յԱբիստիդ. էջ 320։

[2] Աբիստոտ. յԱրիստոտ. տող 779։

նացիք։ Ամեմիստոկլ զնոսա խոտորեցոյց 'ի թիւրշաւիղն, և առաջնորդեաց նոցա ընդ այն. և այլք 'ի զօրավարաց ոչ միայն չխափանեալ զեռանդն նոցա, այլ և յաւելին գրգռեալ զայն։

Ի միւսանգամ արշաւելն Պարսից յԱՀլլադա, խրատ ետ Թիլտիադէս 'ի գիւրի մղել Ճակատամարտ[1]. և խորհուրդն այն 'ի դէպ էր այնմ որ 'ի Մարաթոն զյաղթութիւնն կանգնեաց։ Իսկ Ամեմիստոկլեայն թերևս յանդգնագոյն էր խորհուրդ, զի խրատ ետ աթենացւոց՝ նաւամարտիւ 'ի բաղդն առնել ապաստան զյաջողութիւն. որում զօրաւորք ընդդէմ կային պատճառք։ Զանազի աթենայիք հաղիւ կարէին յայնժամ վարել զենչին նաւակս իւրեանց՝ անհմուտք նաւամարտի, և ոչ էր մարթ զուշակել զի Խսերքսէս յանձուկ կրճի պատահեսցէ նոցա. և դարձեալ պարտ էր ինչ վստահել Ամեմիստոկլի, որպէս խոստանայրն համարձակ՝ որ ինչ դէպ և տացէ՝ հատանել անցանել ընդ նաւատոմն թշնամեաց, և զերծուցանել զժողովուրդն Աթենայ 'ի տար աշխարհ։ Այլ այս որպէս և իցէ, յաջողութեամբ ելից իրացն արդարացան խորհուրդք նորա։

Այց թէպէտ և նաւատականութիւն կեցոյց զԱթենս, սակայն և փառամոլութեան նորա և կործանմանն նոյն եղև առիթ[2]։ Ամե-

1 Սաեսմբր. առ Պլուտարք. քեայ 'ի Թեմիս. էջ 113։

2 Խոկ. յղ. խաղաղ. հատ. 1. էջ 393։

միստոկղի կամելով հզօրագոյն 'ի յունաստան կացուցանել զազգ իւր, որպէս զի վեհագոյն 'ի Յոյնս կացցէ ինքն, եւ բանալ նաւահանգիստ նոր և կառուցանել յաճախագոյն բազմութիւն նաւաց, և ելից 'ի նոսա զզօրականն, զգործաւորս, զմշակս, և զամբոխս օտարաց ձեռգեալ առ ինքն յամենայն կողմանց։ Յառաջագոյն խրատ տուեալ խնայել յազգս բնակեալս 'ի ցամաք երկիրն Լակեդայ՝ որոց միաբանեալ էր ընդ Պարսիկս, յարձակ ապա անինայ 'ի կղզիս՝ որք բռնադատութեամբ տեղի տուեալ էին Պարսից '. և յափշտակելովք 'ի նոցանէ գանձիւքն դարձեալ 'ի հայրենիսն, գներ կուսակիցս, զորս ցաձուցանէր և յարուցանէր առատ պարգևօքն։ Կիմոն և այլ զօրավարքը նմանապէս մեծացեալք գանձիւք, ծախեցին զայն յառատաձեռնութիւն ցայն վայր անծանօթս. 'ի մի ինչ ուշ եղեալ հանդոյն Թեմիստոկղեայ, 'ի մեծացուցանել զհասարակապետութիւն. զնոյն ցանկութիւն էր 'ի սիրտս ամենեցուն։

Յողովուրդն խրոխտացեալ յաձել զօրավարաց յոտս նորա զաւարն և զկողոպուտ, և զբռնի և զկամակար հարկս նուաձելոց ազգաց, յարձակ յարձակ խաղայր ընդ ծովս, և յամենայն ծովեզերս հասեալ՝ յոլովեր զաշխարհակալութիւնս իւր. այլ այնոքիկ տակաւ եղծա-

[1] Պլուտ. 'ի Թեմիս. հա. 1. էջ 122։

նէին զբաս և զքաջութիւն ազգին։ Օի կոբովն զորականին, որ 'ի դաշտս Պարաթոնի և Պղատեայ դիմագրաւ խիզախէրն 'ի մահ, վաբեալ 'ի ծառայութիւն նաւաստութեան՝ ոչ և այլ ինչ հրահանգք էին, բայց իջանել զգուշեաւ յերկիր, հասանել յեզակարծուն 'ի վերայ անօգնական քաղաքաց, և աւար հարկանել զերկիրս լքեալս ամայի։ Որ ոչ այլ ինչ յայնպիսի պատերազմունս ուսանի զորականն, բայց կշռել զզօրութիւն իւր, և դողութեամբ մնատել 'ի թշնամին, և առանց ամենայ 'ի փախուստ դառնալ'։

Ինկալան բարք զՀարուածն օրհասական, զոր կցորդութիւն ազգաց օտարաց, և նախանձ հակառակութեան ընդ զօրութիւն և ընդ փառս, և տենչ աշխարհակալութեան, և խընդիր շահու ածեն պետութեանց հիմնելոց յառաքինութիւն։ Որ մբոխ բազմութեան աննշան քաղաքացեաց, որ 'ի ծառայութիւն նաւացն կայր, և յորոց պարտ էր հասարակապետութեան ածել՝ 'ի ձեռն նոցա ստանալով զփառս, ուստի յարշաւանսն հինաբար աւազակել. և օր ըստ օրէ յաւելեալ 'ի յանդգնութիւն՝ իշխեցին յատեան հրապարակին, և փոխեցին զիշխանութիւն 'ի ռամիկն, որպէս պատահէ զբեթէ յամենայն պետութիւնս բարգաւաճեալս

1 Պղատ. յղ. որ. գիրք Դ. հա. 2. էջ 706։

'ի նաւամարտ[1]։ Յեղելոց աստի իրաց 'ի միտ առնուլ է, թէ զնմանէ արագ ուղղութիւն և արդարութիւն եղծան յազգին։

Յետ Պղատեայ Ճակատամարտին՝ Մեմիատոկղ'ի քաղաքաժողով ատենի խօսեցաւ, և ասէ. Խորհուրդ կարևոր ունիմ'ի մտի, որում գաղտնութեամբ ևեթ մարթի յաջողել։ Լաւ ժողովուրդն ետ պատասխանի, թէ Բրիստիդէս լեցի աւանդապահ խորհրդոյդ, և մեք դիմա լուիցուք։ Իսկ Մեմիատոկղեայ առեալ զնա մեկուսի, ասէ. Լաւատորմ նիզակակցաց աստ 'ի նաւահանգստիս է 'ի Պագաս յանկասկածի. արդ ես խորհիմ հրձիգ առնել զայն, և լիցուք տեարք յուսնաստանի։ Յայնժամ Բրիստիդէս ասէ ցժողովն. Բրք աթենացիք, չիք ինչ օգտակարագոյն քան զխորհուրդ Մեմիատոկղեայ, այլ ոչ ինչ անիրաւ քան զայն։ Լաւ ամենեքին միաբարբառ աղաղակեցին. Վաւ լեցի մեզ առնել զայդ[2]։

Իսկ յետ ամաց ինչ 'ի խնդրել սամոսացւոց 'ի նոցանէ դրժելդաշին՝ զոր ընդ նիզակակիցսն կռեալ էին, ելարց ժողովուրդն զԲրիստիդէս. և իբրև ասաց՝ թէ խորհուրդ սամեցւոցդ անիրաւ է, այլ օգտակար, հաւանեցան ամենեքին առնել զայն[3]։

[1] Արիստոտ. յՊլուտ. հատար. դիրք Ե. գլ. 3. էջ 389 և 390։ Պլուտ. 'ի Թեմիս. էջ 121։

[2] Պլուտ. անդ էջ 122. յԱրիստիդ. էջ 332։

[3] Պլուտ. յԱրիստիդ. էջ 334։

Դարձեալ և յետ սուղ ինչ ժամանակի առ Պերիկղեաւ բազում անգամ ժպրհեցան ա-թենացիք ասել, թէ բաց 'ի զօրութենէ այլ ինչ իրաւունս ազգաց ոչ գիտեմք'։

ԳՐԱԿ ԵՐՐՈՐԴ

Որ ինչ եղեալ յաւուրս Պերիկղեայ։

ՅԱՌԱՋԱԳՈՅՆ գիտաց Պերիկղէս զի ազ-նուատոհմութիւն և մեծութիւնք զոյգ ընդ իրաւունսն՝ զոր մատուցանէին նմա, կասկա-ծելի առնէին զնա. 'ի վերայ այսորիկ և միւս ևս երկիւղ էր նմա։ Օրերք՝ որոց ընդ Պիսիս-տրատեայ ձգեալ էր զկենսն՝ 'ի նա ինքն կեր-պարանէին զՊերիկղէս անդէն 'ի մանկու-թեանն, և թուէր նոցա զձայն Պիսիստրա-տեայ և զնոյն նորին Ճարտարիմաստութիւնն լսել 'ի բերանս Պերիկղեայ[2]. և զիարդ մար-թէր անտես առնել նոցա զայնքան նմանու-թիւնն հանդերձ այլովք բարեմասնութիւնքն։ Այսպէս այսր ամենայնի Պերիկղէս զառաջին հասակն էր յուսումն իմաստասիրութեան, ոչ խառնելով 'ի յանձանձանս իրաց աշխար-

1 Թուկ. գիրք Ե. գլ. 89 յամին 404։ և այլուր։ 2 Պլուտ. 'ի Պերիկղ. էջ
* Ի 444 ամէ Ն. Ք. մինչև 155։

հին, և ոչ այլ ինչ փառասիրելով՝ բայց զանուն քաջութեան [1]։

Յետ Աբրիստիդեայ մեռանելոյ և աքսորա-նացն Թեմիստոկղի, Կիմոն զերասանակս 'ի ձեռն էառ ուղղութեան աշխարհին. այլ 'ի ստէպ արշաւանս պատաղեալ՝ Թողոյր զվստա-հութիւն աթենացւոց տարտամ յայլս 'ի հե-տամտից, զի ոչ ոք 'ի նոցանէ բաւական էր յինքն հաստատել զայն։ Պայծառանայր յայն ժամ Պերիկղէս որոշեալ 'ի մարդկանէ և հրա-ժարեալ 'ի զբօսանաց, զամենեցուն յինքն ձը-գելով զուշ հանդարտ գնացիւքն, պատկա-ռանօք, համեստութեամբ և անստգիւտ վա-րուք [2]։ Այլ նա 'ի հասանել ժամանակին 'ի բեմ, և ընդ նախընծայ փորձ Ճառիցն զար-մացոյց զաթենացիս. քանզի բարեմասին հա-սեալ 'ի բնէ՝ գոլով Ճոխաբան քան զամենայն մարդիկ, վեհագոյն 'ի Ճարտարախօսս Յունա-դայ եկաց ջանիւ [3]։

Պարժապետք քաջք որ դաստիարակեցին զնա 'ի մանկութեան, նոքին դարձեալ օգնա-կան լինէին նմա խրատուք՝ նեբաձելով զնա 'ի խորս բարոյականին և օրինաց քաղաքավարու-թեան. և զամենայն գիտութիւնս նոցա գրա-ւեր յինքն հանՃարուն [4]։ Այսպէս խորութիւն

1 Պլուտ. 'ի Պերիկղ. էջ 155։
2 Նոյն անդ էջ 154 և 155։
3 Պիկ. յոլ քաջ. Ճարտ. գլ. 11. հտ. 1. էջ 345։ Դիոդ. գիրք ԺԲ. էջ 96։
4 Պլուտ. անդ էջ 156։

ՀառԷից նորա և լիապատար հմտութիւն. ասի ուժգնութիւն բանիցն, զոր մեղմէրն ըստ պատշաՀի. ասի վայելչութիւն նոցին, զոր մի ոչ երբէք անփոյթ առնէր, վՀարեալ յամենայն բռնազբօս մանուածոյ և 'ի ձեւոյ. ասի և այլ ամենայն Հանդամանք բանից նորա, որովք Համոզէրն և զայնոսիկ՝ զորոց չյաղթահարէր զմիտս, և զՀետ բանիցն իւրոց առեալ ձգէր՝ զորս չյաղթահարէրն իսկ և չՀամոզէր։

Լոյր 'ի ՀառԷս նորա վսեմութիւն հին ահեղ, յորմէ ընկՀէին միտք. և այն արդասիք էին կենակցութեան նորա ընդ Լնաքսագորայ իմաստասիրի, որոյ զեիցս և զգաղտնեաց սոցա պարզելովնմա զօրէնս՝ զգերիմաստ միտս նորա երևի և ևս վերամբարձեալ։

Ոչ ինչ նուազ զարմանալի էր ՀարտարութիւնՆորա 'ի բանադատել զՀակառակորդսն, և 'ի խոյս տալ 'ի բռնադատութենէ նոցա, վարժեալ 'ի Օենանէ իմաստասիրէ եղեայց, որ 'ի պատ 'ի պատ դարձուածս բանից ստէպ մոլորեցուցանէր զնա՝ առ ուսուցանելոյ նմա զգողուղի ելս փախստի [2]։ Լմին իրի մի 'ի հզօր ոսոխաց Նորա ասէր. Լթէ զգեանեալ արկից զնա ընդ ինև, նա զՀակառակն կարծեցուցանէ մարտատեսացն՝ կանգուն կալ յոտին անպարտելի [3]։

1 Պլուտ'ի Պերիկղ. էջ 156։
2 Նոյն անդ էջ 154։
3 Նոյն անդ էջ 156. և 'ի հրատ. հատ. հա. 2. էջ 802։

Բայց Պերիկղէս քանզի քաջ խելամուտ էր բնաւորութեան ազգին, զամենայն յոյս իւր եդ 'ի Հարտարախօսութիւն. և զՀարտարախօսութեանն և զքաջ գիտելով զյարգ, առաւել քան զամենեսին փոյթ ունէր այնմ։ Մինչ չև երևեալ յատեան՝ յուշ առնէր անձին՝ զի առ ազատորեարն մատչէր խօսել, առ Յոյնս, և առ ահեղացիս՝։ Եւ որչափ մարթէրն՝ խորչէր 'ի բեմէ. քանզի հանապազ գուն գործեալ 'ի ծայր բարձրութեան յուշիկ 'ի վեր ելանել, երկնչէր թէ գուցէ յաղթանակք ըզյաղթանակս մղեալ՝ կարի վաղ զզարմացու�ժողովրդեանն հասուցեն 'ի ծաղ անդր, որ ուրմէնք յաջորդեն։ Բայց ժողովուրդն ածէր զմտաւ, զի Հարտարախօս՝ որ յանշուշան գովութենէ խոյս տայր, կարի իսկ արժանի էր հաւատարմութեան՝ զոր ոչն խնդրէր, և զի հարկ էր կարևոր գոլ իրացն Հառելոց 'ի նմանէ, որ ստիպէին զնա լուծանել զլռութիւն։

Յոյժ զարմացոյց նա զահեղացիս և տիրական իշխանութեամբն 'ի վերայ կրիցն։ Տարաժամեալ երբեմն ժողովոյն մինչև ցգիշեր, և ուրուն 'ի ռամիկն խափանելով ստէպ թըշնամանօք զՀառս նորա, և նախատինս զՀետ նորա ձգելով մինչ գնայրն 'ի տուն, նա հանդարտ և անխռով պատուէր եւ միւսմ 'ի տարը-

1 Պլուտ. առակ. հա. 2. 2 Նոյն 'ի Պերիկղ. էջ 155։ էջ 186։

կայն՝ ջահ առաջի նորա ածել, և ընդունել զնա 'ի տուն իւր'։

Այլ զի երկարեմ. իբրև տեսանէր ժողովուրդն ամենայն ուրեք ոչ միայն զհանճար նորա, այլ և զառաքինութիւն ըստ տեղւոյն և ըստ ժամանակին, զի զվաղնջուց ժամանակացն յանձին բերէր զհամեստութիւն և զսակաւապիտութիւն, 'ի յանձանձանս իրաց աշխարհին՝ անտեսութիւն անձին և ուղղութիւն անկեղլի, և 'ի զօրավարութեան՝ փոյթ և ըզգուշութիւն չառնելոյ ինչ 'ի բաղդն ապաստան, և զանձն մանաւանդ դնել 'ի կշիռ քան 'ի վտանգ արկանել զփրկութիւն աշխարհին[2], զայս ամենայն տեսեալ ժողովրդեանն՝ խորհէր 'ի մտի, զի որ զգողութիւնս և զնախատինս արհամարհէր և զմեծութիւնս և զաւելին քան զկարեւորն և զփառս իսկ անտես առնէր, հարկ էր նմա այնպիսի ունել եռանդն հայրենասիրութեանէ, որ խափանէր 'ի նմա զայլ կիրս, կամ 'ի մի յայն տենչ զամենայնն ժողովէր։

Այս պատրանք առաւել քան զամենայն ինչ զօրավիգն եղեն Պերիկղեայ 'ի բարձրութիւն. և գիտաց նա զամն իբր քառասուն[3] ունել 'ի պատրանն զաղգ իմաստուն, վասն ժինդիր ինչ խանութեան իւրոյ, և որ ոչ ինչ ընդհատ դիւրաստաղտուկն էր ընդ զարմացումն քան ընդ հնազանդութիւն։

1 Պլուտ. 'ի Պերիկղ. էջ 154։ և այլուք։
2 'Նոյն անդ էջ 161, 162 3 'Նոյն անդ էջ 161։

Բայց 'ի սկզբանն ոչ ամենայն ժողովուրդն յարեալ էր 'ի նա, զի աղնուականք և ճոխք էին ընդ Կիմոնի. իսկ Պերիկղէս կուսակից եղև ռամկին՝ զոր արհամարհէրն, և նոքա զբաւիղն եղէն նմա։ Կիմոն 'ի բազում արշաւանսն արդարութեամբ մթերեալ գանձս անբաւս, ծախէր զայն 'ի պայծառութիւն քաղաքին և 'ի նպաստ տառապելոց. իսկ Պերիկղէս զօրութեամբ ճարտարիսօսութեանն իշխէր գանձուց հասարակաց աթենացւոց և նիզակակցաց. որով ելից զԱթէնս հրաշակերտիւք, կարգեաց ռոճիկ աղքատ քաղաքացոց, բաշխեաց 'ի նոսա զմսան ինչ նուաճելոց գաւառաց, յաճախեաց զտօնս, և սահմանեաց վարձս դատաւորաց՝ եկելոց յատեան, և քաղաքացեաց՝ որք 'ի տեսարանս և 'ի ժողովս հասարակաց առընթեր գտանէին[1]։ Ժողովուրդն հայեցեալ 'ի ձեռն և եթ պարգևատու, ինքոյր զայս իւր առ 'ի չտեսանելոյ ուստի պարգևքն գային, և ևս քան զևս յարէր 'ի Պերիկղէս. որ առ 'ի սերտել զնա ընդ իւր՝ էառ զնա գործակից անիրաւութեանց իւրոց, և 'ի ձեռն նորա գործեաց զդժուարինս՝ որ յաճախեն զսաստ զօրութեան, յայտնելով զայն։ Յտնա աքսորել զԿիմոն, սուտ ամբաստանութեամբ համախոհութեան ընդ սպարտացիս

[1] Արիստոտ. յզ. հատ. գիրք Պլուտ. 'ի Պերիկղ. էջ 155 և Բ. գլ. 12. հատ. 2. էջ 336։ 157։

ունելոյ [1]. և տարապարտ պատճառանօք եղծ զատեան Աբիսպագին, որ թումբ և ամբարտակն կայր ընդդէմ համարձակութեան բարուց և նորաձևութեանց [2]։

Ի մեռանել Կիմոնի, Թուկիդիդէս քեռայր նորա խրախուսեաց զկողմնակիցս նորա զՀոխս և զաղնուականս, որ յողդողդէին. և թէպէտ չէր որպէս զՊերիկղէս քաջ յիրս պատերազմի, այլ հանգոյն նմին իշխէր արտից։ Այլ 'ի կշիռ հաւասարութեան կալեալ առ ժամանակ մի զերկոսին կողմանս, ապա և ինքն զխեցեկոյտ վՀռոյն ընկալեալ զդատակնիք՝ աքսորեցաւ [3]։

Յայնմհետէ Պերիկղէս փոխեաց զհնարս. քանզի փայփայելով զամբոխն՝ նուաճեալ ըզՀոխս, նուաճեաց ապա և զամբոխն՝ սանձահարելով զանձնահաճ կամս նորա, մերթ անզիջանելի խստութեամբ, մերթ հանձարեղ խրատուք, և մերթ ողբանօք Հարտարիսօսութեանն [4]։ Ամենայն ինչ ըստ կամաց նորա գործէր, և ամենայն ինչ ըստ օրինադիր կարգաց կատարէր յերևմանն. և ազատութիւն յեցեալ անկասկած 'ի պահպանութիւն ձևոց հասարակապետական կարգաց, ընկՀէր յանզգաստից ընդ աջողութեամբ մտաց։

Այց Պերիկղէս ըստ զօրանալ իշխանութեանն՝ նուազագոյն զսաստ 'ի կիր արկանէր

1 Պլուտ. 'ի Կիմ. էջ 489։
2 Նոյն 'ի Պերիկղ. էջ 157։
3 Նոյն անդ էջ 158 և 161։
4 Նոյն 'ի Պերիկղ. էջ 161։

և դուն ուրեք երևէր։ Մենայեալ առանին ընդ ազգականս իւր և ընդ բարեկամս, հրս-կեր 'ի հեռուստ 'ի վերայ ամենայն խմբից, մինչ դեռ ամենեքին կարծէին պատաղեալ զնա 'ի խաղաղել կամ 'ի կերպարանափոխ առնել զաշխարհն։ Մթենացիք անդիմադարձք զ-րութեանն՝ որ դրդեր զնոսա, ակն ածէին 'ի դրդողէն, զի հազիւ երբեք աղերսեր զոգնու-թիւն նոցա. և բառնէք յիմաստս և 'ի բացա-տրութիւն, 'ի տիպս կերպարանաց վերհագու-նէն դից յանդիման առնէին զՊերիկղէս։ Օր 'ի լսելի առնել նորա զձայն իւր 'ի դէպս կա-րևորս, ասէին՝ Բամազդայ աւանդեալ նմա զփայլատակունս իւր և զշանթիս'. իսկ ար-բանեկութեամբ ձեռասուն բարեկամացն դոր-ծելով նորա զդուզնաքեայս, դարձեալ Բրա-մազդայ նմանեցուցանէին զնա, իբր թէ 'ի վարել զտիեզերս՝ զթեթև ինչ յայլս 'ի դից 'ի սպասաւորկուս իւր թողոյր։

Պերիկղեայ պայծառ յաղթութեամբք ընդ-արձակեալ զսահմանս աթենացւոց, և ա-ծեալ զզօրութիւն նոցա 'ի չափ բարձրութե, նախատինս իւր համարէր այնու հետև թողուլ անկանել նոցա անդրէն 'ի տկարութիւն, և թշուառութիւն նոցա՝ զառաւել բարձրու-թիւն։ Բյսմ յամենայն գործս իւր ուշ կա-

։ Արիստով. յԱքարն. էջ 156։ Պլիկ. Ծարա. գլ. 9. տող 529։ Պլուտ. 'ի Պերիկղ. հա. 1. էջ 426։

լեալ յաղթանակ չարտաք քաղաքավարութիւն իւրոյ կանգնեաց՝ ունելով ընդ այնչափ ամն զաթենացիս յանդգնութեան, զնիզակակիցս 'ի հնազանդութեան, և զսպարտացիս յերկիւղ մեծարանաց։

Այլ աթենացիք վստահացեալ 'ի զօրութիւն իւրեանց, վստահութիւն՝ որ զաւագանին զառաջանէ 'ի խրախտումն և 'ի գոռոզութիւն, և զռամիկն 'ի ստահակութիւն և 'ի վայրենութիւն, ոչ ևս շատանային տիրելով ընդ յունաստան, այլ խորհէին տարածանել զաշխարհակալութիւն իւրեանց մինչ Յդիպտոս, 'ի Կարքեդոն, 'ի Սիկիլիա, և Յտալիա։ Սակ Պերիկղեայ թողեալ նոցա զբաղել 'ի մեծայոյս խորհուրդսն, ինքն առաւել ևս լըրտեսէր զգնացս նիզակակից ազգաց՝։

Անկերհաշտութիւն խզէր տակաւ զկապանս հաւասարութեան, յորս ուխտ նիզակակցութեանն յենոյր. ծանրանայր օր ըստ օրէ 'ի վերայ նիզակակցաց լուծ դժնդակ քան զխոժադուժ ազգացն, քանզի դիւրագոյն իսկ է սովորել 'ի տոկ բռնութեան քան անիրաւութիւն։ Ի վերայ այլոց գանգատանաց յաւելուին նիզակակիցք բողոքել զաթենացւոց, զի 'ի շուք պայծառութեան քաղաքին ծախէին նոքա զարծաթն՝ հարկեալ 'ի նիզակակցաց ամի ամի

1 Խոկ. յդ. խազազութիւն Պերիկղ. էջ 164։
հմ. 1. էջ 402։ Պլուտ. 'ի

վասն պարսկական պատերազմին։ Ողոց պա-
տասխանի ետ Պերիկղէս, զի տորմիզ նաւացն
աթենացւոց պահէր զնիզակակիցս յակաստա-
նի յերեսաց հինից բարբարոսացն, և ոչ ինչ
այլ պարտք 'ի վերայ կային[1]։ Օ այն պատաս-
խանի առեալ՝ վտարանջեցին Լաբիա, Սամոս
և Թիւզանդիոն. բայց Լաբիա դարձաւ ան-
դրէն 'ի հնազանդութիւն աթենացւոց[2],
Թիւզանդիոն մատոյց դարձեալ զսահմանեալ
հարկն[3]. իսկ Սամոս յետ հզօր դիմմար-
տութեան, տուժեցաւ զամենայն ծախս պա-
տերազմին, եթող զամենայն նաւս իւր 'ի նո-
սա, կործանեաց զզարիսպս իւր, և յաւել
տալ նոցա պատանդս[4]։

Տեսեալ պեղոպոնեսացւոց զբռնութիւնն
զայն, որով ինքնիշխանաբար տիրապետէին
աթենացիք 'ի վերայ նիզակակցացն, կասկա-
ծէին թէ գուցէ ժամանակաւ և 'ի վերայ
թշնամեացն տիրապետեսցէն. քանզի և արագ
արագ յառաջխաղացութիւն նոցա 'ի բազմաց
հետէ յաւելոյր նոցա կասկածանս, և ոչ վրս-
տահէին յուխտս դաշանցն կռելոց ընդ նոսա[5],
զոր և դաշամբ երեսնամեայ հաշտութեան
հաստատեալն էին*։ Այլ եթէ ոչ սպարտացիք

1 Պլուտ. 'ի Պերիկղ. էջ 158։ էջ 167։
2 Թուկ. գիրք Ա. գլ. 114։ 5 Թուկ. անդ գլ. 115։
Դիոդ. գիրք ԺԲ. էջ 73։ * Ն. Բ. 445 ամաւ. (Ա-
3 Թուկ. անդ գլ. 117։ տուէլ 'ի տարեգիրս Թուկիդի-
4 Նոյն անդ։ Պլուտ. անդ դեայ. էջ 104։)

յամառեալ պնդէին անհաւանք 'ի պատերազմ, վաղու և դիմեալ էր նոցա 'ի խափանել զյաղթութիւնս ամենացուց։

Այս ամենայն ամբոխ կրից էին յայնժամ յաղագս յունաստանի. Պերիկղէս կիսոց ատելի, և ամենեցուն ահարկու էր. Թագաւորութիւն իւր, քանզի այսպէս 'ի դէպ է կոչել զինամակալութիւն նորա զիրաց աշխարհին', անսասան կայր յաղմկէ մախանաց, և առաւել յերգիծանաց և 'ի լուտանաց՝ որ 'ի թատերս և յակումբս ընդդէմ նորա գործէին։ Այլ այսմ վրէժխնդրութեան՝ որով տկարութիւն ռամկին սփոփի՝ յաջորդեցին յետոյ ուրեմն շշունջք գանգատանաց և խլրտմունք, որ էն կարապետք մօտալուտ ապստամբութեան։ Ասոիք նորա ոչ համարձակեալ անդէն և անդ 'ի վերայ նորա յարձակել, նախ 'ի վերայ այնոցիկ հանդէս արարին զինուց իւրեանց՝ որք պաշտպանութեան նորա կամ բարեկամութեան լեալ էին արժանի։

Փիդիաս վերակացու 'ի նմանէ կացեալ հոյակապ շինուածոցն, որովք պայծառանան Աթէնք, ամբաստանեցաւ խորեալ 'ի նիւթոյ ոսկի զարդուց պատկերին Աթենասայ. և թէպէտ արդարացոյց զանձն յատենի, սակայն 'ի կապանս բանտին վախճանեաց զկեանս։ Անաքսագոր, երկիւղածագոյնն արդէօք յիմաս

1 Թուկ. գիրք Բ. գլ. 65։ Պլուտ. 'ի Պերիկղ. էջ 156։

տասերս , զրպարտեալ յամբարշտութիւն , փախստեամբ մազապուր եղև 'ի մահուանէ ։ Եւ Յոսպասիա , ըղձալին նորա հարձն և տարփածուն , ամբաստանեցաւ ամբարշտեալ 'ի դիսն հայհոյութեամբ , և զհամեստութիւն թշնամանեալ պղծութեամբ . և ինքնին վասն անձին իւրոյ ետ պատասխանի . և արտասուք առնն նորա հաղիւ գողացան զնա 'ի խիստ պատուհասէն ։ Յ.ՍԼ այսոքիկ նախաշաւիղք էին մեծամեծացն յարձակմանց՝ որ պատրաստէին 'ի վերայ նորա . բայց դէպք ինն անակնկալ կանգնեցին դարձեալ զյոյս նորա , և հաստատեցին զնա յիշխանութիւնն ։

Կորկիւրացիք յամաց հետէ[2] պատերազմէին ընդ կորնթացիս , յորոց գաղթեալն էին . և ըստ աշխարհական օրինաց յունաստանի՝ ոչ ումեք 'ի պետութեանց օրէն էր մտանել 'ի վեհս մայրաքաղաքաց ընդ գաղթականս նոցա ։ Բայց օգուտ մեծ էր աթենացւոց յիւրեանս արկանել զԿորկիւրա՝ հզօր 'ի նաւամարտ , և տեղեաւն զօրավիգն նաւատորմին նոցա դիմել 'ի Սիկիլիա և Յիտալիա ։ Նմին իրի ընկալեալ զնա 'ի նիզակակցութիւն , յղեցին նմա զօրս 'ի Թիկունս . և կորնթացիք բողոք բարձեալ հրատարակեցին զդրժել աթենացւոց դաշանցն խաղաղութեան ։

1 Դիոդ. գիրք ԺԲ. էջ 95։ տոփանեայ 'ի խաղ. տող 604։ Պլուտ. 'ի Պերիկլ. էջ 169։ 2 Թուկ. գիրք Ա. գլ. 25 Փիլոք. առ պարապ. Արիս. և այլուր։

Պոտիդէա քաղաք, և նա գաղթական 'ի կորնթացւոց բնակեալ, միաբանեալ էր ընդ աթենացիս. բայց աթենացիք թերահաւատեալ 'ի նոսա, ոչ միայն պատանդս 'ի նոցանէ պահանջէին, այլ և կործանել զպարիսպս քաղաքին, և հալածել 'ի բաց զդատաւորս՝ որ ամի ամի գային անդր 'ի Կորնթոսէ ըստ սովորութեան։ Այլ 'ի միաբանել բնակչացն Պոտիդեայ ընդ պեղոպոնեսացիս, աթենացիք պաշարեցին զքաղաք նոցա։

Սուղ ինչ յառաջ արգելեալ էր նոցա բաղբաղանօք և մեգարացւոց նիզակակցացն սպառնացւոց՝ չմտանել 'ի նաւահանգիստս իւրեանց, և չածել վաճառս յաշխարհն իւրեանց[2]։ Դարձեալ և այլ քաղաքք հեծէին ընդ բարձումն օրինաց իւրեանց և ընդ կորուստ ազատութեան։

Բայց կորնթացիք համաշխարհական կամելով յարուցանել պատերազմ, կուսակիցք եղեն ամենեցուն նոցա, և յորդորեցին զնոսա խնդրել 'ի սպարտացւոց՝ որ էին առաջնորդք ուխտին նիզակակցութեան պեղոպոնեսացւոց՝ առնել յայտ յանդիման վրէժխնդրութիւն[3]։ Հրեշտակք այլ և այլ քաղաքաց այսոցիկ հասին 'ի Սպարտա. և յանդիման լեալ յատենի, բողոք կալան սրտառուչ և հզօր բանիւք, ա-

1 Թուկ. գիրք Ա. գլ. 56։ գիրք ԺԲ. էջ 96։
2 Նոյն անդ գլ. 67։ Դիոդ. 3 Թուկ. անդ։

ռաջի առնելով ժողովոյն որ ինչ կրեալն էին, և որ ինչ երկիւղ էր նոցա կրելոյ, և զպարտս վրէժխնդրութեան, և որ ինչ միանգամ դրդէին զնախանձ և զատելութիւն։ Այլ իբրև նոքա պատրաստեցին զսիրտս առ ազգողազոյն տըպաւորութիւնս, խօսել կալաւ մի 'ի հրեշտակացն կորնթացւոց', և մեղադրեաց սպարտացւոց զաներկեւանութիւն նոցա՝ որով ոչ ինչ կասկածէին զհաւատադրժութենէ այլոց, և զտարապարտ երկայնմտութիւնն՝ զոր յառաքինութիւն համարեալ, ապախտ առնէին այնու զօգուտ սահմանակից ազգաց։ Այլ յաւելեալ 'ի բանս իւր, ասէ.

Բազում անգամ ազգ արարեալ է ձեզ ըզխորհուրդս աթենացւոց, և արդ պարտ իցէ ինչ դարձեալ յիշեցուցանել։ Կորկիւրա հզօր 'ի նաւամարտ, որ կարողն էր 'ի դէպ ժամանակի զօրավիգն լինել մեզ, գումարեցաւ ընդ նոսա. և Պոտիդէա, որ պատսպարանն էր ժառանգութեանցն մերոց 'ի Թրակիա, նուաստ ընդ ձեռամբ նոցա։ Այլ ո՞ այսոցիկ պատճառք, բայց դուք՝ որք յետ պատերազմին Պարսից թողէք նոցա ամրացուցանել զքաղաք իւրեանց, և տարածանել զանխարհակալութիւնսն. դուք՝ որք վրէժխնդիրդ գոլով ազատութեան, լռութեամբ ձերով ձեռն տայք ծառայութեանն. դուք՝ որք 'ի ժամանակի ձեռն

[1] Թուկ. գիրք Ա. գլ. 68։

'ի գործ առնելոյ՝ խորհուրդ 'ի մէջ առնուք, և 'ի հասանել թշնամւոյն 'ի վերայ ձեր ամենայն զօրութեամբ՝ ապա կազմիք պահ ունել անձանց։ Միշտամբ տակաւին, զի 'ի խորոց Աստուծոյ չու արարեալ Աստուծոյ, և անցեալ ընդ յունասատան՝ եկին հասին մտին 'ի Պեղոպոնես, և դուք 'ի տունս ձեր կայիք խաղաղութեամբ։ Ոչ ձեզ աստ պատերազմ ընդ ազգի հեռաւորի, այլ որ առ դուրս ձեր կայ. ընդ աթենացիս՝ զորոց ոչ երբեք ծաներուք, և ոչ ճանաչէք զնոսա և զնկարագիր բուսոյ բարուց նոցա։ Յդանդունք 'ի կազմել խորհուրդս, ճարտարք 'ի փոփոխել զայնս ըստ ժամանակին. այնպէս երագունք 'ի կատարել զայնոսիկ, զի ցանկութիւն նոցա ժառանգութիւն է. այնպէս յանդգունք, զի համարին կորուստ զկարելն յաւելուլ զաշխարհակալութիւնս. և այնպէս անյագք, զի ոչ երբեք շատանան ընդ աշխարհակալութիւնն։ Զգի խիզախ և խռովայոյզ, որոյ յանդգնութիւն յաւելու 'ի վտանգս, և յոյս 'ի թշուառութեան, և որ զհանդարտութիւն համարի իւր կոտանս. ազգ յաստուածասաստ բարկութիւնդ դիցն երևեալ յերկրի, անխաղաղասէր, և խռովիչ խաղաղութեան այլոց։

Իսկ դուք զինչ առ այսոսիկ ընդդէմ դնիցէք. խորհուրդս 'ի վայր քան զկար ձեր, երկմտութիւն և ընդ խոհականագոյն առա-

ջարկութիւնս, դանդաղութիւն 'ի գործ, վը-
հատութիւն 'ի գոյն արկածս, երկիւղ յընդ-
արձակել զսահմանս ձեր, և յուլութիւն
'ի պահել զայնս։ Այնոքանչ ինչ ձեր, և ի-
մաստդ իսկ քաղաքավարութեան, փնատա-
կարք են խաղաղութեան Աչքադայ և յապա-
հովութեան ձերում։ Զյարձակել յոք և
պահել զանձինս 'ի յարձակմանց ոչ թուին
ձեզ բաւական 'ի պատրաստել զարեւելեանդա-
նութիւն ժողովրդեան, այլ կամիք և ոչ զթըշ-
նամանաց խնդրել զվրէժ՝ եթէ ոչ անտի փնաս
ինչ հասցէ հայրենեաց։ Աւ զինչ քան զայս-
պիսի իմաստս փնատակար կայցէ. զի և ոչ
յասպատակութենէ ազգացդ՝ որ շուրջ բնա-
կեն՝ իմաստդդ այդ զձեզ պարսպեսցեն։

Քաղաքավարութիւնդ այդ, ո՛ սպարտա-
ցիք, կարի իմն զվաղնջուց ժամանակացն բերէ
զպարզմտութիւն. այլ ժամանակ, այլատա-
բաղ բարք, և այլ կարգ իրաց աստանօր ա-
ռաջի կան։ Հաստատութիւնդ այդ անցեալի
'ի ձահ պատահէ ազգի՝ որ յանշարժ խաղա-
ղութեան կայ. այլ որում ընդ այլ ազգս իրք
իցեն, և շահ օգտին նորա ընդ նոցայն կցոր-
դեալ, խորագիտագոյն քաղաքավարութեան
պէտք են նմա։ Թողէք անդր, ըստ օրինակի
աթենացւոց, զուղղութիւնդ զայդ անցեալ-
նելի պատշաճից ժամանակին. ընկեցէք յան-
ձանց զյուլութիւնդ, որ կաշկանդէ ունի ըզ-

ձեզ 'ի քաղաքորմի. հասէք Յոտիկէ, և մի թողուք նիզակակցայ ձերոյ և հաւատարիմ բարեկամաց անձնատուր լինել 'ի թշնամիս ձեր. և կացեալք 'ի գլուխ ազգայ Պեղոպոնեսայ, երևեցարուք արժանի իշխանութեանն, զոր առաքինութեանցն ձերոյ վստահացան հարքն մեր։

Զնդ հրեշտակք աթենացւոյ՝ որ վասն այլ ինչ իրայ եկեալ էին 'ի Սպարտա՝ խօսել կալան, և ասեն. Յմբաստանութեանցդ՝ զոր լուաք՝ չտամք ինչ պատասխանի, զի ոչ դատաւորայ առաջի կամք. այլ յուշ առնեմք ժողովրդ՝ պարապով խորհել և ապա հաստատել 'ի խորհուրդ, որում մարթ է զհետ իւր առեալ ձգել աղէտս'։ Յուշ լիցին ձեզ Հաւատամարտքն, որ 'ի Մարաթոն և 'ի Սալամիս. անդանօր աթենացիք կանգնեցին զյաղթութիւն, նոքա հալածեցին զխուժախուժն բանակս, և նոքա կեցուցին զՀելլադա։ Զդ՝ այսպիսեայ գործող արութեանց՝ ակնածութեան արդեօք գոյր արժանի. այլ արդ նախանձ 'ի յանցանս համարի նմա զիշխանութիւնն՝ զոր վարէ 'ի վերայ մասին ինչ ազգացն Յունաց։ Բայց Սպարտա ետ նմա զայն. և նա պահէ, զի չկարէ իսկ հրաժարել յայնմանէ անվտանգ։ Սակայն և 'ի վարելն զայն՝ ըզհեղութիւն նախամեծար առնէ քան զխստու-

։ Թուկ. գիրք Ա. գլ. 72։

թիւն. և եթէ բռնութիւն ինչ ուրեք ստիպի 'ի կիր արկանել, քանզի տկարագոյնք 'ի մարդկանէ բռնի՝ և ոչ այլ ազգ հնազանդին։ Դադարեսցէ ապա, մի և ես լուիցէ Սպարտա անիրաւ բողոքոյ նիզակակցացն աթենացւոց, և մոլեգին նախանձու իւրոցն. մինչ չև հաստատեալ 'ի խորհուրդ, ուշիւ քննեսցէ որպիսի՞ ինչ մեծ և կարևոր առաջի կայ, և թէ քանի՞ յողդողդ են դէպք՝ յոր ապաստանի։ Թողէք անդր 'ի բաց զարբեցութիւնդ, որ չտայ լսել ձայնի ճշմարտութեան՝ մինչ չև 'ի խորս թշուառութեան խարդաւանեալ զազգս, որով ամենայն պատերազմունք անդ զկայ առնուն՝ ուստի պարտն էր սկսանել։ Դեռ ևս ժամանակ 'ի ձեռս է, և մարթ է մեզ իրաւախոհ լինել բարեկամութեամբ ըստ պայմանաց ուխտի դաշանցս. իսկ եթէ անարգեալ զերդումն՝ լուծանիցէք զխաղաղութիւն, վկայ զդիսն կոչեմք վրէժխնդիրս հաւատադրժութեանէ զի կամ և պատրաստ կացցուք 'ի հզօրագոյն դիմամարտ։

Այս դադարեալ հրեշտակքն 'ի խօսելոյ, ելին յատենէն։ Բայց Աբիդամոս սրբայ ըստ պարտացւոց, որ զբազմամեայ փորձ հմտութեան ընդ բազմահանճար իմաստութեան յանձին իւրում բերեր, զգացեալ զյոյզս մըտաց ամենեցուն՝ զի անհրաժեշտ հարկ 'ի վերայ կայր պատերազմի, խորհեցաւ գոնեայ յերկարաձգել զայն։ Խօսեցաւ, և ասէ՝.

1 Թուկ. գիրք Ա. գլ. 79։

Լուարուք, ժողովուրդ Լակեդեմոնի. 'ի բազումս պատերազմունս մոռեալ է իմ, և բազմաց իսկ 'ի ձէնջ ընդ իս. այլ այնու իսկ առաւել խիթամ 'ի պատերազմէդ, յոր ձեռն արկանէք։ Զանգի անպատրաստք և անօգնականք խորհիք դիմել 'ի վերայ ազգի, որ կիրթն է 'ի ծովամարտ, և հզօր բազմութեամբ նաւամարտիկ զօրաց և նաւաց, և Հոս բերովք երկրին և 'ի հարկայ նիզակակից ազգաց։ Լա յինչ յուսացեալ իցէք. մի թէ 'ի նաւատորմդ, սակայն ժամանակի պէտք են առ 'ի կազմել պատրաստել զայն։ Մերևս 'ի մեծութիւնս. այլ ոչ գոն մեզ գանձք հասարակաց', և իւրաքանչիւր ուրուք ձեռն ոչ է բաւական 'ի տուրս։ Մերևս ամն ունիցիք սարտուցանել զնիզակակիցս աթենացւոց². այլ բազմագոյնք 'ի նոցանէ բնակիչք են կղզեաց, և պարտ էր մեզ զծով ընդ ձեռամբ ունել առ 'ի վտարանջեցուցանելոյ զնոսա և պահելոյ 'ի վտարանջութեանն։ Մերևս աւարառութեամբ անդաստանացն Լտտիկեայ յուսայցէք 'ի միում ևեթ ամի զբաւ առնել մեծի պատերազմիդ, այլ կարծիցէք զի ստիպեսցին աթենացիք աղերսել զհաշտութիւն կորստեամբ միոյ ևեթ ամի հնձոց, զոր յոյժ դիւրին է նոցա ընուլ բարգաւաճութեամբ վա-

1 Պլուտ. առակ. լակոն. 2 Թուկ. գիրք Ա. գլ. 79։ հտ. 2. էջ 217։

Հառաջահութեան երկրին։ Լրկնչիմ զի և որդւոց մերոց յետ մեր թողցուք զպատերազմդ 'ի ժառանգութիւն չարաչուեր։ Թշնամութիւն մարդկան և քաղաքաց անցանեն. այլ 'ի խանձել մարտի 'ի մէջ հզօր պետութեանց, այնպէս դժուարին է զելս նորա նկատել՝ որպէս յաղթանակել 'ի նմա փառօք։

Լբր ոչ եթէ խրատիցեմ թողուլ զնիզակակիցս մեր 'ի հարստահարութեան, այլ մինչ չէ զէն առեալ՝ հրեշտակս արձակել յԼթէնս, և խօսել 'ի խաղաղութի. զի նոքա հրաւիրեցին զմեզ յայս, և անիրաւ է մերժել զհրաւէրն։ Լյլ մինչև հրեշտակք զերթևեկն առնիցեն, մեք դիմեսցուք առ աղգս Լյլադայ, և առ խուժադուժս իսկ ըստ հարկի իրաց ժամանակիս, հայթայթել նաւս և արծաթ յօգնութիւն։ Լթէ մերժեսցեն աթենացիք զբողոք մեր, կրկնեսցուք զայն և երեքկնեսցուք յետ զերկեամ մի և զերեամ պատրաստութեան. թերևս յայնժամ ոչ ևս անսաստեսցեն։

Յամրութիւն՝ որով ստգտանիմք՝ նոյն յայմ ժամանակի պատրաստեաց մեզ աներկեւան ապահովութիւն, և ոչ երբէք գովեստ կամ ստգիւտ հրապուրեցին զմեզ 'ի գործել ինչ յախուռն յանդգնաբար։ Դարտարութիւն բանից չեմք ինչ ատակ փլուզանելոյ զՀակատս թշնամեաց. այլ առ 'ի կարող լինելոյ յաղթել նոցա՝ պարտ է մեզ չարհամարհել զնոսա, 'ի

մերմէս զնոցայն դատել զնացս, ամրանալ յե-
բեսաց խոհականութեան նոցա և քաջու-
թեան, և առաւել քան 'ի սխալանս նոցա 'ի
նախահոգ զգուշութիւնս մեր յուսալ։ Զիք
խտիր ընդ այր և ընդ այր. այլ ահաւորագոյն
'ի մարդիկ այն է, որ 'ի դէպս վտանգաւորս՝
առաւելագոյն 'ի կիր արկանել զգուշութիւն
և իմաստութիւն։

Մի 'ի հայրենականացն վերջացուք յի-
մաստից, որ զաշխարհս մեր պահեցին ցարդ
անսասան։ Ուրեք պարապ 'ի խորհել, զուցէ
վայրկեան մի խուն պատրաստեսցէ կորուստ
ամենայն ընչից ձերոց և փառաց, և Հապա-
զիս արեան բազմութեան քաղաքացեաց, և
թշուառութիւն ազգաց բազմաց։ Ուրկեք ար-
հաւիրս մարտի, այլ մի համարձակեք զթշնա-
մութիւն. կազմեցարուք 'ի պատերազմ՝ իբր
ոչ ակն ունելով բանից խաղաղութեան, և
դիք 'ի մտի՝ զի չիք ինչ օգտակարագոյն քան
զհնարս զայսոսիկ հայրենեաց, և ոչ հզօրա-
գոյն ինչ յերկեցուցանել զաթենացիս։

Հանդարտեին թերևս սպարտացիք խրա-
տուքն Ուրբիդամայ. այլ Աթենեզայիդաս, մի
'ի պարետաց, առ 'ի ցրել զզօրութիւն բանից
նորա՝ ձայն բարձեալ, ասէ [1]. Ի զուր աթե-
նացիքդ Հռոմութեամբ բանից Համարտա-
կեն. ոչ սպառին նոցա բանք յանձնդոլու-

[1] Թուկ. գիրք Ա. գլ. 86։

թիւն, այլ և ոչ մի ինչ յայնցանէ օգնեն նոցա 'ի ջատագովութիւն։ Որչափ անստգիւտ գըտան նոքա 'ի պատերազմին Աստաց, նոյնչափ արդ ստգտանելիք են. և այնու ևս առաւել պատժապարտք, զի առաքինիք երբեմն գոլով վերջացեալք արդ յառաքինութենէն գըտանին։ Իսկ մեք միշտ անփոփոխք, մի մատն լնցուք նիզակակցացն մերոց. այլ նովին փութոյ պնդութեամբ, որով յարձակին 'ի նոսա թշնամիք, պաշտպան կացցուք նոցա։ Աստանօր ոչ զհակառակութեանց էն խնդիրք, զի ոչ թէ բանիւք միայն նախատեցին զնիզակակիցս մեր թշնամիք. վայրիկ մի ևս յապաղել դժպատեհ է Սպարտայ, արագ արագ վրէժխնդրութեան պէտք են։ Լաւ մի՝ ոք պարտ համարեսցի յետ թշնամանացս ընդունելոյ՝ տակաւին խորհուրդ 'ի մէջ առնուլ. պարտ նոցին իսկ թշնամանողացն էր՝ բազումս նախ քան զթշնամանելն խորհել։ Հաստատեցարուք ասա 'ի պատերազմ, ո՛ սպարտացիք. և առ 'ի կարձել զանիրաւութիւն և զփառամոլութիւն աթենացւոց, խաղաղացուք դիւցն օգնականութեամբ 'ի վերայ հարստահարողաց աղաստութեան։

Օ՜այս իբրև ասաց, կոչեաց վաղվաղակի ըզժողովուրդն՝ տալ զիւրաքանչիւր վարկ։ Բազումք 'ի ժողովելոցն անդ համախոհք գտան թագաւորին, այլ ըստ բազմագունիցն կար-

ծեաց սահմանեցաւ, զի վասն դրժելոյ աթեն-նացւոց ուխտին խաղաղութեան՝ կոչեսցի առ-տեան աշխարհաժողով, տալ վերջին վճիռ։

Հրեշտակք յամենայն կողմանց եկին ժողո-վեցան, և դարձեալ միւսանգամ խորհուրդ 'ի մէջ առեալ՝ յոլովագունիցն միաբանութեամբ սահմանեցաւ պատերազմ՝։ Մինչև 'ի կազմել ամենեցուն՝ յանձն եղև սպարտացւոց արձակել հրեշտակս առ աթենացիս, տալ ըզ-բողոք ուխտին միաբանութեան պեղոպոնե-սացւոց։

Դ. Խոսագնացքն պատգամաւորք տարագրու-թեանն և եթ Պերիկղեայ ուշ կալան և ատե-լի առնելոյ զնա ժողովրդեան[2]. այլ պատգա-մաւորանք նոցա օտարոտիք յիրացն, վասն որոյ ե-կեալն էին, ոչ ինչ ազդեցին յաթենացիս։ Զ. Հետ նոցա այլ հրեշտակք հասեալ՝ ետուն պատգամ զդէսս 'ի բաց դնել, և 'ի վերայ այ-լոց պայմանաց՝ պահանջէին եղծանել զվճիռն, որով աթենացիք արգելեալ էին մեգարացւոց յածել վաճառս յԱտտիկէ[3]։ Որոց պատասխա-նի ետ Պերիկղէս, զի ոչ էր նոցա օրէն բաւ-նալ զտախտակն՝ յորում վճիռն այն գրոշմեալ էր։ Իսկ մի ոմն 'ի պատգամաւորացն ասէ. Լ. Թէ բաւնալ չիցէ օրէն, դարձուցէք զայն. զի օրէնք ձեր զայդ ձեզ ոչ արգելուն՝։

1 Թուկ. գիրք Ա. գլ. 125։
2 Նոյն անդ գլ. 126։
3 Նոյն անդ գլ. 139։
4 Պլուտ. 'ի Պերիկղ. էջ 168։

Պարձեալ վերստին երրորդ անգամ հաստեալ պատգամաւորք, ասեն. Պարտացիք խաղաղութեան ցանկան, բայց միայն եթէ թողուցուք ազգաց Լեղադայ ինքնօրէն յաղաստութեան կալ՝։ Բ. յս պայման քննեցաւ ընդ առաջինն յատենի ժողովրդեան. և 'ի պառակտել կարծեաց, Պերիկղէս եղ 'ի բեմ, և եցոյց՝ զի ըստ ուխտի դաշանցն պարտ էր նիզակակից ազգաց խաղաղութեամբ իրաւախոհ լինել ընդ միմեանս 'ի յառնել վիճից, հանապազորդելով յիւրաքանչիւր ժառանգութիս։ Լաւ գնովիմբ ածեալ, ասէ. Լոկ արդ հակառակ այսմ միաբանական դաշին սպարտացիք իշխանաբար տան մեզ պատգամ, սպառնալով զծառայութիւն կամ զպատերազմ, և հրամայեն 'ի բաց թողուլ զամենայն արգասիս յաղթութեանցն՝ զոր կալաք 'ի նիզակակցացն նոցա։ Զվճիռն եթէ տուեալ 'ի մէնջ ընդդէմ մեզարացւոց հրատարակեն նոքա պատճառս պատերազմի. և բաղուք 'ի ձէնջ բողոքեն՝ թէ չէ պարտ առ դոյզն ինչ իրաց զէն առնուլ։ Բ. յլծանծաղէն հաղբքն, ո՞ աթենացիք. պարտ է չառնուլ յանձն և ոչ ինչ, մինչև հաւասարք ընդ հաւասարս զիջանիցին խօսել։ Բ՝զգ որ օրէնս կամի տալ ընկերի իւրում, կապանս պատրաստէ նմա. եթէ միումն եթէ 'ի պայմանացն տեղի տայցէք, համարիցին նոքա դո-

[1] Թուկ. գիրք Ա. գլ. 139։

զայուցեալ զձեզ, և խստագոյն և յաւելու-
ցուն 'ի վերայ ձեր պայմանս[1]։

Հիմ զանգիտեք յամբոխել այլայլախառն
ազգացդ տարախոհից, որք հաղիւ 'ի ժողով
կարեն գումարել, և աղմուկ չիսթի են խորհ-
հուրդք նոցա։ Այրիկ մի յօգուտ հասարակ-
կաց խորհեցեալ, ապա իւրաքանչիւր ոք իւ-
րումն փոյթ ունի. ոմն վրէժխնդրութեան ցան-
կայ, այլ ոմն անձին ապահովութեան. և գրեթէ
ամենեքին 'ի միմեանս յուսացեալ, դիմեն յա-
խուռն 'ի կորուստ իւրեանց առ հասարակ[2]։

Լու ապա եղոյց Պերիկղէս գիւրագոյն հը-
նարս յաղթութեան, զի ոչ կարէին պեղ-
պոնեսացիք ժուժկալել բազմամեայ պատե-
րազմի, և վասն այն պարտ էր պարտասեցու-
նել զնոսա, և մինչ նոքա ըստ ցամաք մղէին
պատերազմ՝ ածել 'ի վերայ նոցա ծովամարտ։
Այսպէս. Լթէ յասպատակել նոցա յԱտտիկէ՝
մեք նաւատորմաւ զծովեզերս նոցա յաւարի
առնուցուք, նոքա զտոյժս աւերանացն չկա-
բասցեն հայթայթել, մինչ մեք զանդաստանս
մեր 'ի կղզիս և 'ի ցամաքի մշակեսցուք։ Ծով-
վակալութեան մեծ է զօրութիւն, որպէս զի
եթէ 'ի կղզւոջ քնակէիք՝ ոչ ոք 'ի պետու-
թեանց իշխեր գալ 'ի վերայ ձեր. համարե-
ցարուք այսուհետև զԱթէնս ամրոց զատու-
ցեալ յերկրէ, զիւք զօրս 'ի պահ 'ի պարիսպաց,

[1] Թուկ. գիրք Ա. գլ. 140։ [2] Նոյն անդ գլ. 141։

և 'ի նաւս՝ որ կան 'ի նաւահանգստիդ։ Լրս-
կիրդ՝ որ շուրջ զդովա՝ համարեսցի ձեզ երբ-
կիր օտար, և առաջի աչաց ձերոց լիցի յաւար
թշնամեաց։ Մի տայք տեղի անխորհուրդ ե-
ռանդեան՝ խիզախել քաջութեամբ ընդդէմ
յոլովագոյն բազմութեան. քանզի յաղթու-
թիւն յաճախագունդ և բանակս 'ի վերայ
ձեր ձգեսցէ, իսկ պարտութիւն զամենայն նի-
զակակիցս մեր՝ զորս զօրութեամբ նուաճեմք
ընդ մեզ՝ յապստամբութիւն ածիցէ։ Ա-
այնպէս աւաղելի է կորուստ ստացուածոցդ
ձերոց որպէս զօրականին՝ զոր արկանիցէք 'ի
վտանգ։ Յանկարծ եթէ համոզել կարէի ըզ-
ձեզ, վաղվաղակի հուր և սուր ածէիք ընդ ան-
դաստանս, և ընդ տունս՝ որ 'ի նոսա. զի մի
և ես համարէին զնոսա սպարտացիք գրաւականս
ծառայութեան մերոյ'։

Արթէր ինձ ածել և այլ և ես առհաւատ-
չեայ յաղթութեան. այլ կասկածեմ, զի առ-
ահի յաւելցոյ 'ի վտանգս մարտին և այլս, դի-
մեսջիք 'ի պատերազմ'ի խնդիր աշխարհակա-
լութեան. քանզի առաւել քան 'ի խորհրդոց
թշնամեաց՝ 'ի ձերոց վրիպանացդ խութամ։
Ա.յլ արդ ժամ է տալ հրեշտակացն պատաս-
խանի. նախ զի մեզ արարացւոց ազատ լիցի վա-
ճառականութիւն յԱտտիկէ, եթէ սպարտա-
ցիք ոչ և ես արդելուցուն մեզ և նիզակակցաց

[1] Թուկ. գիրք Ա. գլ. 143։

մերոց մոռանել՝ի քաղաքս իւրեանց։ Լցկերորդ՝ զի ազգք նուաճեալք ընդ մեօք դարձցին յա-ռաջին իւրեանց ազատութիւնն, եթէ սպար-տացիք և զնոցն ազատութիւն տացեն քաղա-քաց՝ որ ընդ ձեռամբ նոցա են։ Լս երրորդ՝ զի տակաւին աթենացիք հանդերձ ամենայն նիզակակցօքն յանձն առնուն սիրով և խաղա-ղութեամբ իրաւախոհ լինել, և բառնալ՝ի միջոյ զկրճիմն, եթէ կամիցին զայն պեղոպո-նեսացիք[1]։

Օ այս պատասխանի առեալ հրեշտակացն սպարտացւոց, դարձան յետս. և աստի և ան-տի կազմեին՝ի պատերազմն բազմաղէտ և երկարատև քան զամենայն պատերազմունս՝ որ ամայացուցին զԼլլադա*. զի տևեաց այն զամն քսանևեօթն[2]։ Ի փառամոլութենէ աթենա-ցւոց շարժեալ դրդեցաւ պատերազմն այն, և յերկիւղէ իրաւացի կասկածանացն՝ զոր առին զնոցանէ սպարտացիք և նիզակակիցք նոցին։ Ասայց ոսոիք Պերիկղեայ զնա ամբաստանեցին առեալ պատերազմին. որ զի օձան եղև՝ի հաս-տատութիւն իշխանութեան նորա և զօրու-թեան, ընդ այս չիք երկբայել։

Ինդ սպարտացիսն էին միաբանեալ բիով-տացիք, փոկիսացիք, լոկրեսացիք, մեգարա-ցիք, ամբրակացիք, լեւկադացիք, անակտորա-

[1] Թուկ. գիրք Ա. գլ. 144։ Ն. Ռ։
* Ի գարնանային 431 ամին [2] Թուկ. գիրք Ե. գլ. 26։

ցիք, և ամենայն Պեղոպոնեսս, բայց յարգիա-
ցւոց՝ որք ոչ 'ի սոցա կոյս և ոչ 'ի նոցա ձեռն է-
տուն [1]։ Իսկ ընդ աթենացիս միաբանեալ էին
ամենայն քաղաքք Յունաց բնակեալք 'ի Ծով-
եղերս Լսիոյ և 'ի Թրակիա և Հելլեսպոնտոս,
և Կարնանիա զբեթէ բոլանդակ, և այլք ո-
մանք ազգք սակաւաւորք, և ամենայն բնա-
կիչք կղզեաց՝ բայց 'ի մեղոսացւոց և 'ի Թե-
բացւոց։ Ի վերայ այսոցիկ և անդստին յիւ-
բեանց աշխարհէն էին նոցա երեքտասան հա-
զար զօրք սպառազէնք, երկերիւր հեծեալ,
հազար և վեց հարիւր աղեղնաւորք հետևակք,
և երեքարիւր նաւք պատերազմի։ Այս վեշտա-
սան հազար այր 'ի մանկանց և 'ի ծերոց քա-
ղաքացեաց և յեկաց բնակելոց Ա.թենա՝ կայ-
ին 'ի պահ պարսպաց քաղաքին, և ամրոցացն՝
որ էին Ա.տտիկէ [2]։

Վեց հազար քանքարք յաւանդի կային 'ի
միջնաբերդին. մարթ էր 'ի կարևոր ժամանա-
կի հայթայթելնոցա այլևս աւելի քան զՀինգ
հարիւր քանքար 'ի մեհենական սպասուց և
յայլոց իրաց, որպէս Պերիկղէս սադրէր ժո-
ղովրդեան։ Այս զօրութիւնք էին աթենացւոց։

Ա.ռքիդամոս արքայ սպարտացւոց զտեղի ա-
ռեալ 'ի կորնթեան նեղցին, զօրաժողով արար
յամենայն քաղաքաց Պեղոպոնեսայ միաբանե-

[1] Թուկիդիդէս. գլ. 9։ Դիոդ. դեբք ԺԲ. էջ 99։
[2] Նոյն անդ գլ. 13։ Դիոդ. անդ էջ 97։

լոց, և առեալ զամենայն հասակն զինուորութեան՝ բաց յերիր մանէ[1], հանդարտաբայլ խաղայր Յ.ոտիկէ վեց բիւր զօրօք[2]։ Յ.ու միւսանգամ հրեշտակ արձակեաց առ աթենացիսն՝ խօսել 'ի հաշտութիւն. այլ նոքա և ոչ ընկալան զհրեշտակն յատեան, այլ նոյնհետայն 'ի բաց վարեցին զնա 'ի սահմանաց իւրեանց[3]։ Իսկ Յ.ոբիդամոս յառաջ վարեալ զչուն, սրիռեաց ընդ դաշտս Յ.ոտիկեայ ասպատակ. և էր ժամանակն հնձոց։ Պաշտայնոց 'ի մօտել նորա խոյս տուեալ[4], զամենայն ինչս իւրեանց ածեալ էին Յ.թէնս, և բազումք 'ի նոցանէ չգտեալ այլ ուրեք ապաւէն՝ 'ի մեհեանս և 'ի դամբարանս, յաշտարակս պարսպաց, 'ի խաւարչուտ նկուղս և յանապատս ամայիս ամրացեալ էին։ Ի վիշտս երբեմնաց նոցա 'ի հայրենի յանդորրս բնակութենէն յաւելաւ և դառն տեսարան, զի տեսանէին 'ի հեռաստանէ զտունս իւրեանց հրդեհեալ, և զհունձս աւար առեալ 'ի սրոյ թշնամեաց[5]։

Յ.թենացիք ստիպեալ 'ի համբերել թշնամանացն, որ յիշատակաւ առաջնոց պանծալի քաջութեանցն ևս առաւել անբերելի էին նոցա, սրտմտեալ զայրանային ընդդէմ Պերիկղեայ՝ որ կապեալ կաշկանդէր զզօրութիւնն նո-

1 Թուկ. գիրք Բ. գլ. 10։
2 Պլուտ. 'ի Պերիկղ. հատ. 1. էջ 170։
3 Թուկ. անդ գլ. 12։
4 Նոյն անդ գլ. 14։
5 Նոյն անդ գլ. 17 և 21։

ցա[1]։ Իսկ նա առ ամենայն ողոքք և սպառնալիս նոցա լուռ և եթ կայր, և տորմիզ նաւաց Հարիւրոց Ճեպեցուցանէր 'ի Պերոսպոնես[2], սաստիւ և եթ անուանն ցածուցեալ զբոլորք ամենեցուն։

Աբիդամոս ոչ ևս գտեալ պարէնս Յոտիկէ, դարձոյց զզօրականն ի աւարաւ 'ի Պերոսպոնես. և ցրուեցան իւրաքանչիւր 'ի տունս իւրեանց, և ոչ ևս երևեցան զայն ամ։ Իսկ մեկնելնոցա՝ զօրահատոյց արար Պերիկղէս ընդդէմ ըսկրիսացւոց, և 'ի Ճակատս ուրեք զօրացաւ 'ի վերայ նոցա[3]։ Իսկ նաւատորմիղն մեծ աւար հարեալ զծովեղերս Պերոսպոնեսեայ, և 'ի դառնալն իւրում էառ զԼիգինա կղզի[4]. ապա իսկ և իսկ խաղացին աթենացիք աշխարհօրէն ընդդէմ մեգարացւոց, և աւար հարին զերկիր նոցա[5]։ Յաջ զմեռն զայն արարին հրաչակաւոր յուղարկաւորութիւն անկելոցն 'ի պատերազմին, և Պերիկղէս պանծացոյց զնոսա դամբանական պերճախօս Ճառիւ։ Իսկ կորբնութացիք քառասուն նաւս պատերազմիկս սպառազինեալ՝ ի Ջին ՅԼակոնանիա, այլ կորակոր յետս դարձան[6]. և այսպէս վախճան եղև գործոյ պատերազմին զայն ամ։

Յաջ յամն որ զկնի՝ դարձեալ գունդք ընդ

[1] Թուկ. գիրք Բ. գլ. 22։
[2] Նոյն անդ գլ. 26։ Պլուտ. 'ի Պերիկլ. էջ 170։
[3] Թուկ. անդ։
[4] Նոյն անդ գլ. 27։
[5] Նոյն անդ գլ. 31։
[6] Նոյն անդ գլ. 33 և 34։

գունդս մենամարտեալ, և ասպատակք 'ի միմեանս արշաւեալ, թուէին արտաքոյ առաջարկութեան պատերազմին երկուստեք Ճգնել։ Իսկ ընդէր ազգք պատերազմողք և սահմանակիցք միմեանց, անդստին 'ի սկզբանէ նախանձընդդէմք, և ևս քան զևս 'ի ժամանակին յայնմիկ զրգռեալք յատելութիւն, ոչ այլ ինչ զործէին՝ բայց հինաբար դիմել 'ի վերայ միմեանց, և խուսափել յիրեարց, զբարհատոյց առնել, և բաժանել զգբարութիւնս միմեանց, ոչ փառս անձանց հայթայթեալ, և ոչ 'ի վրատանգ խիզախեալ, յաՃախելով և էեթ և յելկա բաձգելով զաղէտս պատերազմին։ Դանզի չը մարթէր նոցա աստանօր որպէս յայլ պատերազմունս վարել։

Միզակակցութիւն պեղոպոնեսացւոց հզօրագոյն յոյժ էր զօրք ընդ ցամաք, և ոչ կարէին աթենացիք միահամուռ Ճակատ յարդարել՝ առանց երկիւղի սպառսպուռ պարտութեան։ Իսկ նիզակակցեալ ազգք անհմուտք էին 'ի պարսպամարտ, և այն ինչ հասեալ էր նոցա բեկումն յանդիման փոքու դղեկի Յոյտիկէ՝. և զՊղատիէս քաղաք 'ի Իփովտիա, պահեալ 'ի դոյզն գնդէ, յետ զերկեամ մի պաշարման՝ ապա կարացին ունել անՃնատուր լինելով բնակչացն 'ի նոսա առ սովոյն վտանգի[2]։

[1] Թուկ. գիրք Բ. գլ. 19։ գլ. 20։ Դիոդ. գիրք ԺԲ. էջ
[2] Նոյն անդ գլ. 78. և Գ. 102 և 109։

Եւ զիսաՐդ ապա յուսալի էր նոցա առնուլ պատերազմաւ, կամ սովով՝ 'ի նեղ արկանել զԹէնն՝ որում երեք բիւրք կային 'ի պահ, և ընդ ձեռամբ նորա էր ծով՝ ուստի զամենայն պէտսն ընդոյր դիւրապատրաստ։

Զինայր ապա այլ ինչ հնար թշնամեաց՝ բայց ասպատակաւ կործանել զտունս Յ.ոտիկէ, որպէս և արարին յառաջին ամս պատերազմին։ Այլ և ոչ ասպատակութեանց նոցա մարթէր երկարատևել. զի չքաւորք էին և զերկիր գործէին, և չէր մարթ յամենոցա 'ի տարաշխարհ՝ 'ի զինուորութեան։ Այսպա խորհուրդ կալան յաւելուլ զնաւս իւրեանց. այլ ամաց բազմաց պէտք եղեն նոցա 'ի վարժս նաւատականութեան, և 'ի փորձ հմտութեան՝ զոր յինամեայ կրթութեամբ հաղիւ ստացեալ էր աթենացւոց[2]. որոց աջողութիւն այնպէս էր ահարկու 'ի սկզբան պատերազմին, զի գումարտակ մի նոցա փոքրիկ խիզախեր աներկիւղ 'ի վերայ յաՃախագունդ նաւատորմի պեղոպոնեսացւոց[3]։

Յեսթնեղորդումամի պատերազմին * սպարտացիք առ 'ի կեցուցանել զչորեքարիւր և ըզքսան արս[4], զորս աթենացիք 'ի կղզւոջ ուրեք պաշարեալ պահէին, խնդրեցին խօսել 'ի խա-

1 Թուկ. գիրք Ա. գլ. 141։
2 Նոյն անդ գլ. 142։
3 Նոյն գիրք Բ. գլ. 88։
* Իբր 424 ամաւ Ն. Ք։
4 Թուկ. գիրք Դ. գլ. 8։

զաղուԹիւն, աւանդեալ նոցա նաւս պատերազ-
միկս իբր վաԹսուն. որպէս զի եԹէ ոչ ազա-
տեսցին պաշարեալքն, ընկալցին զնաւսն անդ-
րէն։ Բայց պաշարեալքն ոչ ազատեցան, իսկ
աԹենացիք չդարձուցին զնաւսն անդրէն[1]. և
բեկեալ զօրուԹիւն պեղոպոնեսացւոց ընդ ծովս
Լաւ արկածք յարկածից հասեալ՝ յամեցուցին
զկանգնումն կորանացն մինչև ցքսանեերորդ ամ
պատերազմին, յորում ժամանակի յանձն էառ
Թագաւորն Պարսից ուխտիւք և դաշամբք
տալ զամենայն ծախս պատերազմին[2]։ Ծածկեցին
այնուհետև նաւք սպարտացւոց զծով[3].
և ազգքն երկոքին նախանձորդք ախոյանայաղ-
ձակք 'ի Հակառ դիմէին։ Լաւ յետ երկուստեք
յաղԹուԹեանց և պարտուԹեանց՝ նկուն ե-
ղեն երկաքանչիւր ընդ զօրուԹեամբ իւրեաց։

Ել ևս աԹենացիք կարող էին բազմուԹիւն
նաւացն օրէնս տալ Լեղադայ, և ոչ սպարտացիք
բազմուԹեամբ զօրացն։ Լրշաւեալ նաւուք
'ի սահմանս ուրեք պեղոպոնեսացւոց, հաղիւ
զխորշ մի երկրին կարէին աւար հարկանել,
կամ նուաճել զոք յանպատսպար քաղաքաց, և
առնուլ հարկս, առանց իշխելոյ միջամուխ լի-
նել յաշխարհն։ Լաւ եԹէ զոք 'ի հզօր քաղա-
քաց պաշարէին 'ի տար աշխարհ, Թէպէտ և

1 Թուկ. գիրք Դ. գլ. 16 36, 45 և պրբ։
և 23։
2 Նոյն գիրք Ը. գլ. 5, 18,
3 Նոյն անդ գլ. 3։

դիւրագոյն էր նոցա քան սպարտացւոց Հայ-
թայթել պարէնս զօրականին, այլ յերկարել
պաշարմանն՝ սպառէլին նոցա դանձք և գունդք
սակաւաւորք՝ զորս մարթէր նոցա զինուորել։
Յառաւելն Պոտիդեայ զերկեամ՛մի և կէս աշ-
խատ լեալ, վատնեցին զօր բազում, և երկու
հազար քանքար՝։

Վասն այսր անհամեմատ և այլատարազ զօ-
րութեան երկոցունց կողմանցն՝ հարկ էր պա-
տերազմին երկարատևել, որպէս և գուշակե-
ցին իսկ զայս յառաջագոյն երկոքին Ճարտար
քաղաքավարքն Լակեդայ, Լաբիդամոս և Պե-
ռիկղէս՝. բայց Լաբիդամոս խելթալի սպար-
տացւոց համարէր զպատերազմն զայն, իսկ Պե-
ռիկղէս ցանկալի աթենացւոց։ Լոր դարձեալ
գուշակելզհրդեհին այնորիկ բոցածաւալբոր-
բոքումն, և զի հարկ էր նմա երբէք երբէք շի-
ջանել և դարձեալ ընդ ամենայն ազգս ծաւա-
լել բոցոյն։ Օի ուր և քաղաքք մերձաւորք
այլակամք՛ի միմեանց, կէսք առ դոյզն պատ-
Ճառանաց քակէին յուխտէ նիզակակցութենէն,
և այլք պառակտեալ կային՝ի հերձուածս՝ զոր
Լթէնք և Սպարտա անդադար արծարծա-
նէին, դէպ լինէր անդէն՝ի նմին գաւառի
խանձել մարտին ազգէ յազգ, և՝ի նմին ազգի

1 Թուկ. գիրք Ա. գլ. 64. Բ. գլ. 70. (Տոռուել՝ի տա-
րեգիրս Թուկ. էջ 114)։ Դիոդ. գիրք ԺԲ. էջ 102։
2 Թուկ. անդ գլ. 81 և 141։

քաղաքէ 'ի քաղաք, և 'ի նմին քաղաքի խուռմբ 'ի խմբէ։

Որ ինչ չարիք 'ի յերկարաձիգ և 'ի դժնդակ հերձուածոց աստի զհետ եկիցն, զայն ամենայն Թուկիդիդեայ և Քսենոփոնի ստուգապատումարարեալ է. յորոց բազումինչ 'ի բաց Թողեալ՝ որ արդ ազգացն Լեհաց ցանկալի են, ասացից որ ինչ դէպք կարևորք յաԹենացւոցն պատկանին 'ի վէպս։

Ի սկիզբն երկրորդի ամի պատերազմին դիմեցին դարձեալ Թշնամիք յԱտտիկէ, և սրածուԹեան ախտ Ճարակէր յԱԹենս՝։ Լրբէք ուրէք ընդ այնչափ նահանգս առ հասարակ ոչ տարածեցաւ ապականարարս այս ախտ. քանզի սկիզբն յԱԹովպիոյ առեալ՝ անց յԱգիպտոս, և անտի 'ի լիբաստան ծաւալեցաւ և 'ի կողմն մի աշխարհին Պարսից, 'ի Լիմնոս կղզի, և յայլ կողմանս ուրէք։ Լաւ մի 'ի վաՃառական նաւաց, որպէս հաւաստի կարծեմ, ածեմայծ զայն 'ի Պիրէոն. զի անդ նախ 'ի վեր երևեալ ախտն, անտի զայրագին ընդ քաղաքն Ճարակեցաւ, և մանաւանդ 'ի խաւարային և 'ի մղձկուտ վայրս՝ ուր բնակիչք դաշտաց զմիմեամբք կուտակեալ խռնեալ բնակէին։

Լխտակրեալոցն տակաւ ամենայն անդամք մարմնոյն վարակեալ յախտէն[2], և նշանք ա-

1 Թուկ. գիրք Բ. գլ. 47։ 'Ի Պերիկլ. էջ 171։ Դիոդ. էջ
2 Նոյն անդ գլ. 49։ Պլուտ. 101։ Լուկրետ. գիրք Զ.։

հարկուք 'ի նոսա 'ի վեր երևէին. արագ արագ զայրանայր ախտն, և դուն ուրեք ոք ապրեր 'ի մահուանէ։ Ընդէն յըմբռնել ախտիւն՝ նուաղեր նոցա հոգւոյն զօրութիւն, իսկ մարմնոյն թուէր և ևս արծարծանել. որպէս զի տաղնապել նոցա յաղէտս դժնդակս, առանց զօրութեան համբերելոյ ցաւոցն՝ տոկալով ախտին։ Դուն հատաներ յաչացնոցա. խուճապք և հեկեկանք անընդհատ, և պրկումն ջղայ և ձգտումն սաստիկ 'ի վերայ հասանէին. և 'ի դառնակսկիծ ցաւսն յաւելոյր տենդ դժոխըմբեր փաղաղել զնոսա 'ի ներքուստ։ Դազմակեղ կապուտակեալ մարմինք նոցա, աչք հրացեալք, սիրտ հեղձամղձուկ, աղիք կեղեքեալ և շունչ դարշահոտ 'ի նեխոյ ապականութեան արեան նոցա բուրեր 'ի բերանոյն։ Սողեալք ընդ փողոցս գնային առ 'ի կլանել համարձակ զոդ, և ոչ կարելով զովացուցանել զտապ ծաբաւոյն՝ որ տոչորէրն զնոսա, հոսէին զանձինս 'ի գետս ծածկեալս սառամանեաց։ Դազմաց յեօթներորդում կամ յիններորդումն աւուր հասանէր մահ. իսկ որոց տարաժամէրն, կսկիծելի ևս և յամրագոյն տուայտանաց լինէր վախճան։

Դայց թէպէտ և սակաւք յոյժ յապրեցելոցն միւսանգամ ըմբռնէին յախտէն[1], այլ յոյժ եր ողորմելի կենդանութեանն նոցա մինթ արու-

[1] Թուկ. գիրք Բ. գլ. 31։

թիւն. զի իբր կմախք թուէին յաչս տեսողաց։ Վանզի կէաք անդամալոյծք լեալ, և այլք ոչ ինչ զանցելոց կենացն յիշէին. բարեբաղդք արդարեւ անզգայութեամբ թշուառութեանն, սակայն ոչ ևս զբարեկամն ճանաչէին՝։ Եղին դարման մերթ կենարար և մերթ մահաբեր ախտակրելոցն լիներ, որպէս զի զամենայն օրէնս բժշկականս և զփորձ հմտութիւն թուէր ծաղր առնել ախտին։

Ի ճարակել նորա և ընդ բազում գաւառս Պարսից, խորհուրդ կալաւ Արտաշէս արքայ՝ կոչել յօգնութիւն զԽպոկրատ զանուանին, որ էր յայնժամ՝ի Կոս կղզի[2]։ Այլ՝ի ճանչանչ գանձուցն և աւագութեան ոչ շլացեալ այրն մեծախոհ, պատասխանի արար և ասէ. Զի ինչ իմիք ցանկամ, և ոչ իւիք կարօտ եմ. և համազգեացն իմոց ծառայել պարտիմ քան թշնամեաց նոցա[3]։ Զի եկն իսկ յԱթէնս՝ի սպասաւորութիւն, և աթենացիք ընկալան զնա բազում շնորհընկալ գոհութեամբ. զի բազմագոյնք՝ի բժշկաց նոցա մեռեալէին յախտէն, փոխանակեալ զանձինս՝ի վերայ հայրենեաց։ Եղեալ զամենայն հնարս արուեստին՝ի գործ էարկ, և զանձն ևս յաճախ եդ՝ի վտանգ. և թէպէտ ոչ ըստ դիմագրաւ հայրենասիրու-

1 Թուկ. գիրք Բ. գլ. 49։ էջ 350։ Գալէն. թէ քաջի
2 Սուիդ. ՝ի բառն Ἱπποκρ. բժշկի պարտ է և խմաստասէր
3 Պլուտ. ՝ի Կատ. հտ. 1. լինել հտ. 1։

թեանն և ըստ Հարտար արուեստին եղեն հա-
մեմատ արգասիքն, այլ գէթ սփոփումն և յոյս
'ի սիրտս ամենեցուն արծարծեցոյց։ Պատմեն
զի առ 'ի մաքրել զօդս հրատեմ բորբոքեցոյց
ընդ փողոցս քաղաքին աթենացւոց[1]. բայց
կեաք Լկրոնի ակրագանդացւոյ բժշկի ասեն 'ի
կիր արկեալ զհնարս զայս, և յաջողեալ[2]։

Գուութ որդիական և բարեկամութիւն ա-
ռատ՝ ետուն 'ի սկզբան բազում օրինակս նա-
խանձելիս. այլ առաքինութիւնն այն մահա-
ւիթ եղեալ գործողացն գրեթէ ամենեցուն,
դուն ուրեք այնուհետև երևէր 'ի միջի։ Ընդ
կապք քան զամենայն կապանս հզօրք խզեցան.
և աչք օրհասականացն ոչ այլ ինչ շուրջ տեսա-
նէին 'ի փակէն, բայց լուռ ամայութիւն[3]. և
ոչ ևս մահ արտասուաց լինէր առիթ։

Յստասպտութեանս այսմիկ զհետ եկն ապե-
բասան համարձակութիւն։ Ընդ կորուստ բազ-
մութեան լաւաց՝ որք խառն ընդ անօրէնս 'ի
մի գերեզման արկան, և ընդ կողոպուտ մե-
ծութեանց՝ որ յանկարծ բաժին եղեն կամ ա-
ւար աննշան քաղաքայնոց, 'ի խոր խոցեցան այ-
նոքիկ՝ զորոց երկիւղ ևեթ ուղղէր զկեանսն։
Լաւ 'ի մտի եդեալ զի ոչ ևս ինչ փոյթ էր դից
զառաքինութենէ, և զի մնատլուտ քան ըզ-

[1] Ա՛ռ Խպպոկրատեայ հա. հա. 2. էջ 383։
2. էջ 970։
[2] Պլուտ. յԻսիս և յՈսիրէ.
[3] Թուկ. գիրք Բ. գլ. 51։

վրէժխնդրութիւն օրինաց հասանէր մահ, ըստ արագավախճան կենացն նոր օրէնս յերիւրել կարծեցեալ, ժամ՝ի ժամ մնալով մահու՝ պարտ համարեցան՝ի գրգռանս զվայրկեան ժամանակն անցուցանել՝։

Յետ երկեամ ժամանակի զիջաւ ախտն. բայց տակաւին ուրեք ուրեք՝ի վեր երևէր սերմն ժանտ ապականութեանն, ոչ՝ի սպառ անհետ լեալ։ Իսկ յետ ութ եւտասն ամսոց դարձեալ անդրէն Չարակեալ, գործեաց զնոյն ո. զորմ տեսարան աղետից և արհաւրաց ընդ ամ մի ողջոյն[2]։ Յերկոսին ևս նուագս կորեան բազմութիւն յոյժ քաղաքացւոց, յորս էին արք իբրև հինգ հազար՝ որ կարէին զէն առնուլ։

Այլ անփոխանակելի և մեծ քան զամենայն կորուստս եղև մահ Պերիկղեայ, որ յերրորդումն ամի պատերազմին* ժանտ ախտիւն վարակեալ՝ զրաւեցաւ՝ի կենաց[3]։ Այլ յայսոսա ջագոյն դառնացեալ աթենացւոց՝ի վիշտս չարեացն, և կապտեալ՝ի նմանէ զիշխանութիւնն՝ դատապարտեալ էին զնա՝ի տուգանս. այլապա ստրջացեալ նոցա ընդ անիրաւութիւնն, և Պերիկղեայ հաշտեալ էր ընդ նոսա[4], թէպէտ և տաղտկացեալ ընդ հրամատարութիւն

1 Թուկ. գիրք Բ. գլ. 53։
2 Նոյն գիրք Գ. գլ. 87։
* Ն. Բ. 429 ամաւ., Ի մուտս աշնան։
3 Թուկ. անդ գլ. 65։ Պլուտ. Ի Պերիկղ. էջ 173։
4 Պլուտ. անդ էջ 172։

վասն յեղյեղուկ մտաց ժողովրդեանն, և վասն բազմայոյ ընտանեացն իւրոց և 'ի բարեկամաց մեռանելոյ 'ի ժամտ ախտէն։ Այլ իբրև 'ի շունչ վախճանին հասեալ կայր, և թուէր իսկ մեռեալ, զվերաւորք աթենացւոց շուրջ կացեալ զմահՀաքն սփոփէին զմիմեանս՝ յիշելով զվաստակս քաջութեան նորա և զբազմութիւն յաղթանակացն։ Իսկ նորա յանկարծ 'ի վեր առեալ զգլուխ իւր, ասէ. Յաղթանակքդ այդոքիկ բաղդին են արդասիք, հասարակացինձ և այլոց զօրավարաց. այլ ինձ սեփական պարծանք այն են, զի ոչ զոք երբեք 'ի քաղաքայնոց նստուցի 'ի սուգ[1]։

Եթէ աթենացիք ըստ խորհրդոցն Պերիկղեայ հանապազորդէին զպատերազմն ընդ ծովն և պահ ևեթ ունէին ընդ ցամաք[2], և եթէ հրաժարեալք 'ի ցանկութենէ աշխարհակալութեան՝ ոչ արկանէին 'ի վտանգ զիրկութի՛ աշխարհին յանդուգն խիզախմամբ, վաղ կամ անագան յաղթանակէին 'ի վերայ թշնամեացքանզի 'ի գուշնաբեայ պատերազմունսն յոյժ առաւելքան զգործեալսն կրէին տոյժս։ Օ՛ի միաբանեալքն ընդ աթենացիս գրեթէ ամենեքեան հպատակք էին նոցա. իսկ նիզակակցութեան պեղոպոնեսացւոց, քանզի յայլ և այլ ազգաց միաբանեալ էին, մարթ էր գիւրաւ լուծանել։

[1] Պլատ. 'ի Պերիկղ. էջ 173։ [2] Թուկ. գիրք Բ. գլ. 65։

Բայց Պերիկղէս մեռաւ, և եկաց փոխանակ նորա Կղէոն. այր անննչան յազգէ, և ոչ հանձարո

զօրագոյն զօրութեան։ Թոյլ եին փաստք 'ի շրթունս նորա. զի ամբոխն առանց յուզելոյ սրտին ոչ համոզի, իսկ Կղէոն ամբոխեր զկիրս նորա Ճամարտակելովն և մոլեգին իմն աղաղակաւն և շարժուածով[1]։

Դէպ եղև զի Կղէոն յաջողեցաւ 'ի գործ, յորմէ Լիկիաս հրաժարեաւն եր. և աթենացիք՝ որ ստրջացեալն եին ընդ ընտրութիւն իւրեանց՝ առաւել և սայնու հետև վստահացեալք 'ի նա, ունկնդիր եղեն խրատու նորա, և մերժեցին զպատգամն խաղաղութեան՝ զոր յղեր Թշնամին[2], և զօրավար զնա կացուցեալ՝ յղեցին ընդդէմ Դրպսիդայ քաջահմուտ զօրավարին սպարտացւոց։ Այլ Կղէոն առաջի երկոցունցն և բանակաց արհամարհեցաւ. քանզի յանդգնաբար մօտեալ առ Թշնամին, ածզնա յեղակարծում 'ի վերայ իւր և ընդ վատասրտագոյնս 'ի զօրացն աՃապարեալ 'ի փախուստ, անդէն 'ի փախստին սպանաւ[3]։

Ա. և ա եր այնուհետև խափան խաղաղութեան 'ի մեռանել Կղէոնի. և Լիկիաս պատգամ հաշտութեան յղեալ[*] հաստատեաց ուխտ նիզակակցութեան ընդ սպարտացիս, օգնական 'ի Թիկունս լինել միմեանց 'ի պատերազմ և 'ի դիմամարտ զամն յիսուն[4]։ Այլ այս պայ-

1 Պլուտ. 'ի Դիկ. էջ 528։
2 Պարսպ. Արիստոտ. յոլ. խաղաղ. տող 647 և 664։
3 Թուկ. գիրք Ե. գլ. 10։
* Ն. Բ. 421 տմամբ։
4 Թուկ. անդ գլ. 17, 18 և այլուր։

ման էր ուխտին, դառնալնոցա յառաջին կարգն՝ որպէս նախ քան զպատերազմն էին. սակայն ամբ առաւել քան զտասն անցեալ էին 'ի սկզբանէ պատերազմին, և 'ի նանիր վատնեալ էր երկաքանչիւրոց ազգացն զօրութիւն։

Այլ մինչ դեռ այն ինչ թուէր նոցա առնուլ զձաշակ քաղցրութեան անդորրաւէտ կենաց, նոր հերձուածք և պառակտմունք 'ի նիզակակից միաբանութենէն նոցա շարժեալ դրդեցան։ Վանզի բազումք 'ի նիզակակցացն սպարտացւոց բողոք կալեալ վասն ջնտանելոյ իւրեանց յուխտ նիզակակցութեանն, միաբանեցին ընդ արգիացիս՝ որ մինչև յայնժամ տեսողք և եթ լեալ էին պատերազմին, և զնեցան ընդդէմ սպարտացւոց։ Պարձեալ և աթենացիք և սպարտացիք բողոք ունէին զմիմեանց վասն ոչ կալոյ 'ի պայմանս ուխտին, և անտի և ս գրժտութիւնք և թշնամութիւնք։ Այլ անագան ուրեմն յետ իբր եօթն ամաց* համարձակեցին զթշնամութիւն մնոտի պատճառանօք'. և դիւրին իսկ էր խափանել զպատերազմն, եթէ չէր այն կարևոր 'ի պայծառութիւն Աստուծոյ։

Ալ ԻՊԱԳԻՐՔ զաթենացւոյ առնս նսեմացուցին զյիշատակ. բայց այլք պանծացուցանեն զնա կարի յիրաւի զերծք յաչառանաց։ Թուի

* Ն. Բ. 414 ամաւ։ 2 Նեպ. ՅԱղկիբ. գլ. 11։
1 Թուկ. գիրք Ե. գլ. 25։

ին համահաւաքեալ բնութեանն 'ի նմա ըզ-
հզօրագոյն արգասիս յոռութեան և առաքի-
նութեան [1]։ Ցեսցուք զնա արդ ըստ քաղաքա-
վարական մասին, որով Ճեպեցոյց զկործանումն
պետութեանն. և ապա 'ի ստորև ըստ կենցա-
ղավարականին, որով ետ լրումն զեղծման միա-
բանութեան մարդկան։

Զնուատոհմութիւն, փարթամ մեծութի,
չքնաղ կերպարան, ողբք շրթանց հրապուրող,
միտք աջողակ և ընդարձակ, և կցորդութիւն
ընդ Պերիկղեայ, այս ամենայն նախամանուա-
թիւնք շացուցին անդէն և անդ զաթենացիս,
և զնոյն ինքն Ա.Լկիբիադ նախ քան զնոսին [2]։
Ի տիս՝ յորում կարեկցութեան և եթ կարօտ
էր նա և խրատուց՝ հոյլք փաղաքշաց ընթեին
զնովաւ. զարմացոյց նա զվարժապետս իւր հը-
լութեամբն, և զաթենացիս ցոփ համարձա-
կութեամբն։

Սոկրատայ յառաջագոյն նկատեալ, զի կարի
ինասակար քաղաքայնոցն հարկ էր լինել պա-
տանւոյն՝ եթէ ոչ լիներ նա նոցին կարի յոյժ
պիտանի, խնդրեաց առնել ընդ նմա բարեկա-
մութիւն. և արար իսկ խնամոտ ջանիւքն, և
մինչև 'ի սպառ եկաց 'ի նմին [3]։ Այլ ապա ձեռն
էարկ նա 'ի զսպել զհպարտութիւն պատա-

1 Նեպ. յԱղկիբ. գլ. 1։ յԱղկիբ. և այլուր։
2 Պլատ. յԱղկիբ. Ա. հատ. 2. էջ 104։ Նեպ. անդ։ Դիոդ. գիրք ԺԲ. էջ 130։ Պլուտ.
3 Պլատ. անդ էջ 103։ Նոյն 'ի Խարմիդ. հատ. 3. էջ 215 և այլուր։

նուոյն, որ ոչն հանդուրժէր ստորանկել ումեք, և ոչ հաւասարել. և այնպէս հզօր էին Ճշմարտութիւն և առաքինութիւն 'ի բերան Վոկրատայ, մինչև արտասուել աշակերտին ընդ զառաջանս իւր, և կրեալ զձաղանս անտրտունջ։

Ի մտանեալն յասպարէզ աւադութեան, եղ 'ի մտի Ճարտարախօսութեանն ողբանօք յաջողել 'ի նմա՝ քան շքով պարգևաց և առատաձեռնութեան[2]. անց եկացնա 'ի բեմ։ Ոչոյզն ինչ թերութիւն լեզուին զչնորհս ինն անարուեստ աւաչոյ մանկութեան յաւելոյր 'ի բարբառ նորա[3]. և թէպէտ դանդաչէր ուրեք ուրեք 'ի Ճառսն առ 'ի գտանել զպատշաճաբառսն, սակայն ընդ վեհագունից Ճարտարախօսացն աթենացւոց 'ի համարի է[4]։ Այլ ուրեմն էառնա զփոքր քաջութեանն. և 'ի գործելոց արութեանց նորա զհանդերձեալսն գուշակելով, ակն ունէին ամենեքին՝ կալոյ նորա մի 'ի քաջաց զօրավարացն Լակեդայ։ Թողում զհեզութիւն նորա և զքաղցրութիւն և զայլ էս մասունս բարեաց, որովք սիրելի էր այլոց։

Չէր 'ինամս առաքինութեանն մեծախոհութիւն[5], այլ քաջասրտութիւն ազգեալ 'ի գիտութենէ բաւականութեան իւրոյ։ Եւ խոչք

1 Պլուտ. յԱղկիբ. հա. 1. էջ 193 և 194։
2 Նոյն անդ էջ 195։
3 Նոյն անդ էջ 192։ Արիստոտ. 'ի Պիծական առդ 44։
4 Դիոդոս. 'ի Միգ. էջ 626։ Պլուտ. անդ էջ 196։ Դիոդ. գիրք ԺԲ. էջ 130։
5 Նոյն գիրք ԺԳ. էջ 191։

և խուԹք, և ոչ արկածք Թշուառութեանց պակուցանէին զնա կամ վհատեցուցանէին. և Թուէր իմն նմա այնպէս՝ Թէ իցեն ոմանք, որք ոչ վասն այլ իրիք չառնեն զամենայն զոր կամին՝ բայց զի չիշխեն առնել զամենայն զոր կարեն։ Լաստ հարկի իրաց ժամանակին ստիպեալ 'ի սպասաւորել Թշնամեաց իւրոյ հայրենեացն, յաջողեցաւնմա նովինն նախամանութեամբքն վստահացուցանել զնոսա յինքն 'ի սպառ, և վարել զնոսա հանձարեղ խրատուքն։ Լչ այս ինչ ուրոյն էր նմա, զի յոր կոյս և ձեռն տայր՝ յաղԹանակէր կողմն այն, և ոչ մի 'ի բազում այնչափ յաղԹութեանցն նորա նսեմացաւ պարտութեամբ[1]։

Լյանձանձանս իրաց՝ էր զի զՀնարս աշխոյժ և խորախորհուրդ մտացն ևԹ 'ի կիր արկանէր, և էր զի զխորամանկութիւն և զնենգ՝ որ ոչն երբեք պատՃառանօք բարեաց աշխարհին են անբաասելի[2]. և այլ ուրեք զՀլութիւն, որով կամ առ 'ի տիրել և կամ առ 'ի հաՃոյ լինել յերիւրեր զանձն դիւրաւ ըստ իրաց ժամանակին։ Լմենայն ուրեք զաչս ամենեցուն յինքն ձգէր, և նուաՃէր զվարկ ամենեցուն. զարմացեալ էին սպարտացիք ընդ սակաւապիտութիւն նորա, և Թրակացիք ընդ շուայ-

[1] Պլուտ. 'ի Կորիոզ. հտ. 1. Ը. գլ. 82։ Պլուտ. Ալգիբ. էջ 233։ Նեպ. Ալգիբ. գլ. 6։ էջ 198։

[2] Թուկ. գիրք Ե. գլ. 45.

տութիւնն. բիովտացիք ընդ սէր նորա առ խստագոյն հրահանգս, և յոսիացիք ընդ յուսութիւն նորա և ընդ հեշտասիրութիւն, և նախարարք Աֆիոյ ընդ զեղխութիւն նորա՝ ուրուք ոչ կարէին հաւասարել՝։ Աբաքինագոյն քան զամենայն որ երևէր, եթէ օրինակս ախտից չունէր առաջի. բայց ախտք ձգէին զնա 'ի քարշ, առանց ծառայեցուցանելոյ։ Օրինաւանցութիւն և զզուածանս ախտից համարեր յաղթանակս ինն'ի վերայ օրինաց և բարուց. և յոռութիւնք թուէին'ի նմա մնափառութեան արդասիք։ Ամբարանք ինչ թեթևամտութեան և խոլութեան և անզգաստութեան, երևեալք'ի մանկութեան նորա և 'ի պարապորդութեան, վաղվաղակի անհետ լինէին'ի դէպս՝ ուր զգաստութեան և հաստատութեան պէտք էին. զի զժրութիւն յաւելոյր 'ի խոհականութիւն՝. և ոչ գողանային գրգանք վայրկեան մի ժամանակի, զոր վասն փառաց կամ առ 'ի շահ ինչ օգտի պարտ էր նմա 'ի կիր արկանել։

Հարկ էր հպարտութեան նորա եթէ վաղ և թէ անագան զառածանել 'ի փառամոլութիւն. քանզի չէր իսկ հնար՝ զի որ դէր 'ի վերայ քան զայլսն վիճակեալ էր 'ի բնէ, և իշխանասիրութեան անձկով մաշեալ, չմտաբերէր

1 Պրատ. յԱղկիք. էջ 203։ Նեպ. յԱղկիք. գլ. 11։ 2 Պրատ. անդ էջ 211։ Նեպ. անդ գլ. 1։

'ի հնազանդեցուցանել իւր զամենեսին՝ յետ ՅԳելոյ լինելոյ զզարմացումն ամենեցուն։ Վասն իրի և յամենայն կենս իւր կասկածելի եղև գլխաւորաց 'ի քաղաքացոցն. զի կենաք 'ի հան. Ճարոյ նորա, այլք 'ի զառածանացն զանգի. տեալ կասկածէին[1]. որով մերթ սիրելի լինէր, մերթ երկիւղալի, և մերթ ատելի ժողովրդեան՝ որ ոչն կարէր հրաժարել 'ի նմանէ[2]. և ամենեցուն զնմանէ կարծիք միշտ 'ի մոլութի զակատեալ, մերթ ծայրայեղ ցնծութեամբ փառաց 'ի փառս զնա ամբառնային, և մերթ մոլեգին սրտմտութեամբ[3] 'ի մահ զնա դա. տապարտէին. դարձուցեալ զնա յաքսորանաց, և դարձեալ վերստին յաքսոր զնայուղարկէին։

Արդատեացն Ցիմոն յուղղոյ ուրեմն հան. դիպեալ նմա երբեմն, մինչ դառնայր նա 'ի տուն՝ գրաւեալ բեմբասացութեամբ զամե. նեցուն զմիտս, և անդր յուղարկեր զնա ամե. նայն ժողովն, աջխաղաղութեան ետ նմա և ասէ. Հաջալերեաց, որդեակ, և մեծացիր. զի քեզ պատրաստի կորուստ՝ եմ ժողովրդեանս[4]։

Եւ այլ երբեմն խելայեղեալ առակին, կամէր թագաւորել նմա 'ի վերայ իւր[5]. այլնա թա. գաւորութեամբ ևեթ ոչ շատանայր, և ոչ ինչ-

1 Թուկ. գիրք Զ. գլ. 15։ Պլուտ. յԱղկիբ. էջ 198։
2 Աբիատոփ. 'ի Գոլոտանան տող 1472։
3 Յուստ. գիրք Ե. գլ. 4։
4 Պլուտ. անդ էջ 199։
5 Նոյն անդ էջ 210։

խանութիւն փոքու գաւառի ԱՂԹԵՆս վայելեր նմա, այլ ինքնակալութիւն մեծ՝ որովմարթէր տիեզերակալել։

Պարտ էր նմա զկասարակապետութիւնն՝ յորում ծնեալն էր՝ ամբառնալ գեր 'ի վերոյ, և ապա խոնարհեցուցանել զնա յոտս իւր։ Սովին խորհրդով ձգեաց նա զաթենացիս 'ի պայծառ նահատակութիւնն. որպէս զի մինչ զօրօք նոցա նուաճէր զաղգս, յանզգաստից գտանէին ընդ նովաւ նուաճեալ։

Բայց նախկին գժդմնութիւն աթենացւոց ընդ նմա, իբր անդէն 'ի մուտս ասպարիզին խափանեալ զնա, յայտ արար՝ զի հանձար նորա և խորհուրդք կարի յոյժ ընդարձակք էին, և ոչ 'ի բարեկենդանութիւն հայրենեացն անկաւորք։ Արդարեւ չկարէր Աղեսդա, ըստ ասացուածին, Ալկիբիադս բերել երկուս՝. այլ յաւելուլ 'ի դէպ է, զի և մին աւելի լիոն էր աթենացւոց։ Սա ինքն Ալկիբիադ շարժեալ դրդեաց զպատերազմն Սիկիլեոյ։

Ի ԺԱՄԱՆԱԿԱՑ հետէ խորհէին աթենացիք ունել զՍիկիլիա զՀոն և զՀզոր կղզին. Օ՝այն ագահակամ ցանկութիւն նոցա, սանձահարեալ 'ի Պերիկղեայ, գրգռեալ զայրացոյց Ալկիբիադ։ Օ՝ամենայն գիշերս պսակեալ յանուրջս քաջայաղթ փառաբ, համարէր զՍիկիլիա թաար նախկին արութեանցն, և

1 Արքեսար. առ Պլուտարքեայ Ալկիբ. էջ 199։

նուաՀեր զՄՀբրիկէ և զՄտալիա և զՊեղոպոնես. և զօր ամենայն զփառամոլ խորհրդոցն Հառս արկեալ խօսէր ընդ խօլամիտ մանկտուոյն, որ ոչ մեկնէին 'ի նմանէ, և ինքն իշխէր կամաց նոցա՝։

Ի ժամանակին յայնմիկ եգեստացիք, բնակիչք Աղեստայ քաղաքի 'ի Սիկիլիա, բողոք կալեալ զսելինացւոց և զսիրակուսացւոց՝ իբր հարստահարեալք 'ի նոցանէ, խնդրէին օգնութիւն յաթենացւոց, զի էին նոցա նիզակակիցք։ Ու խոստանային տալ վարձս զօրականին, ազգ արաբեալ ևս նոցա, զի եթէ զչարեացն ոչ կալջիք զառաջս՝ յաւելցեն և սիրակուսացիք գումարել ընդդէմ ձեր ընդ սպարտացիս։ Ի՚Աթենացիք արձակեցին արս 'ի Սիկիլիա, քննել և տեսանել զկրսն. բայց արքն դարձեալ բերին զրոյցս օտար 'ի Հիմարտուութենէ, և հաստատեցաւ խորհուրդ զօրաժողովոյն, և զօրավարք զօրացն կարգեցան Ի՚Լկիբիադ՝ Ի՚Նիկիաս և Ի՚Ղամաքոս։ Ու այնքան յուսացեալ աթենացւոց 'ի յաղթութիւն պատերազմին, զի անդստին նախ քան զպատերազմն սահմանեցին զբաղդ բնակչաց Սիկիլիոյ այլ և այլ ազգաց։

Բայց խոհականագոյնք 'ի քաղաքացւոց երկընչէին յոյժ, քանզի մեծութեանն Սիկիլիոյ և զօրութեան նորա և Հոխութեանն համբաւ

։ Պլուտ. յՆգիք. էջ 199։

աղօտ ինչ 'ի մասնէ հասեալ էր 'ի գիտութիւն նոցա [1]։ Այլ թէպէտ օրէնք էին զվնասեալն չաՃել անդրէն 'ի քննութիւն, բայց Եզեկիաս յանդիման արար ժողովրդոյն՝ զի չեւ ևս վՃաբեալ էր պատերազմ նոցա ընդ սպարտացիս, այլ դուլևեթ լեալ զինուց. և թՃամանաւոր մնայր նոցա 'ի Պեղոպոնես, ակնկալեալ չուոյ զօրացն, առ 'ի դիմել Յունդիկէ։ Դարձեալ զի և ոչ պարտ ինչ էր իւրեանց իրաւարար կալոյ 'ի վեՃս ազգաց Ասիկիլոյ. և զի չէր և չէր իսկ օրէն վտանգել զիրկութիւն աշխարհին վասն փառասիրութեան և 'ի շահ օգտի մանկան միոյ, որ զի հանդէս արասցէ պերՃնութեան իւրոյ առաջի զօրականին. և զի այնպիսիքն քաղաքացիք համակորՃան ընդ ինքեանս առնեն զՀայրենիսն, և զի չէր նոցա անկ և ոչ 'ի խորհուրդ մտանել զկարևորաց իրացն, թող թէ լինել գործոյն պաշտօնեայք [2]։

Այլ վախՃանեալ զբանս իւր, ասէ. Յոյժ իսկ երկուցեալ 'ի ժողովոյ մանկտւոյդ՝ որ շուրջ զնովաւ կան համախոհք, զհամախոհութիւն պատկառելի ալեացդ յանուն հայրենեաց աղերսեմ. և ձեզ, ո դատաւորք, խրատ տամ կոչել անդրէն զժողովուրդն 'ի խորհուրդ։ Իսկ եԹէ օրէնք արգելուցուն զայդ, խորհեցարուք զի կարևոր քան զամենայն օրէնս է փրկութիւն հայրենեաց։

1 Թուկ. գիրք Զ. գլ. 1։ 2 Նոյն անդ գլ. 8։

Որում պատասխանի տուեալ Լ.ակիբիադասէ. Լ.թենացիք թեւարկելով հարստահարելոց ազգաց՝ հասին 'ի ծագ այսր փառաց և մեծութեան'. և ոչ 'ի դէպ է նոցա մեղկել հանգստեամբ զքաջութիւն զօրականին։ Լ.թէ ոչ կանխեսցեն նոքա նուաճել զայլս, եկեսցեն աւուրք՝ զի ինքեանք յայլոց նուաճեսցին։ Բազումք 'ի քաղաքաց Ասիկիլիոյ 'ի խուժադուժ ազգաց բնակեալ են, կամ յօտարաց՝ որոց ոչ ինչ փոյթ է ընդ փառս հայրենեացն, և պատրաստք կան 'ի փոխել զտեարս. և այլք տաղտկացեալք յառանին գժտութեանց, հասանելոյ նաւատորմին մերոյ սպասեալ մնան՝ առ 'ի ձեռն տալ աթենացւոց։ Լ.շխարհակալութեամբ կղզւոյս պատրաստեսցի մեզ բոլորումն տիրել Լ.ալադայ. զի 'ի ձախողել երբեք մնարտին, լիցի անդ նաւացն ապաւէն։ Ի շրջինդն ևեթ արշաւանիս պակուցեալ սարսեսցեն սպարտացիք. և եթէ իշխեսցեն ևս խուժել Լ.ոտիկէ, ձեռս 'ի գլուխս որպէս միշտն, կորակոր յետս դառնայցեն։

Իսկ որ ինչ վասն իւր ամբաստանութիւնքն էին, ընդդէմ այնոցիկ պատասխանի տուեալ՝ ասէ. Ա՛ռ առ այլ ինչ մինչև ցայսօր 'ի կիր արկի զշուք և զպերճութիւն, բայց 'ի յաճախել առաջի ազգաց Լ.ալադայ զմեծարանս և զսաստ զօրութեան աթենացւոց, և 'ի

1 Թուկ. գիրք Զ. գլ. 18։

սարտուցանել զազգս ողջոյն՝ի միաբանութենէ պեղծպտնեսացուց։ Դարձեալ զի և զօրավարակից ինձ է Լիկիաս. եթէ մանկութիւն իմ և խակութիւն զձեզ երկեցուցանեն, այլ անշուշտ է ձեզ յաջողութիւն ելից իրացն՝ որ զամենայն գործս նորա պսակէն[1]։

Յբանից աստի Աւկիբիադեայ արծարծեցաւ և ևս եռանդն աթենացւոց. և իբրև հանդերձեալն վաթսուն նաւս պատերազմիկս ըստ կանխակալ խորհրդոյն յղել՝ի Սիկիլիա, խորհեցաւ Լիկիաս մարթանօք իմն շրջել զհորհուրդս նոցա, և բաց՝ի ծովամարտիկ զօրութենէն՝ ընդ ցամաք ևս կարևոր եցոյց գումարել նոցա զօրս, և առաջի առնէր նոցա՝ թէ որպիսի անհնարին սպառազինութեան և ծախուց և բազմութեան զօրաց պէտք էին՝ի յաջողութիւն արշաւանին։ Յայնժամ մի ոմն՝ի միջոյ խորհրդեանն ձայն բարձեալ, ասէ. Ով է ժամանակ պատ՝ի պատ բանից, ով Լիկիաս. այլ գու զայն ասա՝ թէ քեզ քանի՞ ինչ զօրաց և նաւաց պէտք իցեն[2]։ Այլ նորա պատասխանի տուեալ՝ ընդ զօրավարակիցս իւր խորհել զայնմանէ, տուաւ նմա՝ի ժողովոյն իշխանութիւն՝ի վերայ ամենայն զօրութեաց աշխարհին։

Իբրև ամենայն ինչ կազմ էր[3], եղև ամ-

1 Թուկ. գիրք Զ. գլ. 17։ ԱՌՂԿԲ. էջ 200։ ՆԵՊ. ՅԱՂԿԲ. գլ. 3։
2 Նոյն անդ գլ. 25։
3 Նոյն անդ գլ. 27։ Պլուտ.

բաստանութիւն զԼ.կիբիադեայ, զդրօշեալս Հերմեայ՝ որ յայլ և այլ վայրս քաղաքին կանգնեալ կային՝ գիշերայն ընդ խրախճանակիցս ոմանս իւր ծայրաքաղ արարեալ, և յընթրիս ուրեմն զելեւսեան խորհրդատնիցն զահաւոր արարողութիւնսն ձևացուցեալ։ Լողովուրդն յօժար 'ի ներել նմա զամենայն, աստանօր զայրագնեալ՝ սպառնայր զվրէժխնդրութիւն։ Լ սրտմտութենէ ամբոխին սասանեցաւ Լ.կիբիադ 'ի սկզբանն. այլ ապա 'ի խնդրել զնա զօրականին և նաւաստեաց առաջնորդ իւրեանց, քաջալերեալ՝ յանդիման եղև ատենին, և քերեաց յանձնէ զկասկածանսն, մահ ընդ մեղապարտութեան, և վրէժխնդրութիւն հրապարակաւ ընդ անմեղութեան խընդրեալ։ Լ.յլդատախազք նորա յերկարաձգեցին զդատաստան նորա յետ դարձին, բռնադատեալ զնա 'ի չու կասկածանօք երկիւղին՝ որ հանապազ սուսեր զգլխով նորա թերաքաշեալ ունէր։

Կորկիւրա էր տեղի զօրաժողովոյ ամենեցուն, աթենացւոց և նիզակակցաց նոցա։ և անտի չու արար տորմիզ նաւացն իբր երեք հարիւրոց, գիմեալ 'ի Հռեգիոն 'ի ծայր Լատալոյ*։ Լ.ին 'ի նմա հինգ հազար և հարիւր այր սպառազէն, ընտիրք զօրացն աթենա-

1 Թուկ. գիրք Զ. գլ. 42, * Ն. Ք. 415 ամաւ։ 43 և այլուր։

ցւոց. և աղեղնաւորք չորեքարիւր և ութսուն, եօթն հարիւր պարսաւորք, և այլ գունդք մեկնակազէն զօրաց, և այրուձի թուով։

Ոչ աւելի ինչ զօրաց ցանկային զօրավարքն. քանզի Անիկիաս չխորհէր նուաճել զՍիկիլիա, իսկ Ալկիբիադ առ 'ի նուաճել զայն՝ բաւական համարէր հերձուածս ևեթ արկանել 'ի բնակիչս երկրին. որպէս երկաքանչիւր յայտնեցին զխորհուրդս իւրեանց յառաջնումն ժողովի նախ քան զպատերազմն։ Որանզի հրամանն էր նոցա ուղղել զիրս Սիկիլիոյ՝ որպէս օգտակարագոյն էր հասարակապետութեան, բայց միայն պատուէր տուեալ նոցա ձեռն տալ յեգեստացիս ընդդէմ սելինացւոց, և ստիպել զսիրակուսացիս՝ եթէ յաջողէր նոցա՝ դարձուցանել 'ի լեռնտացիս զկալուածս, զորս յափշտակեալ էին 'ի նոցանէ։

Անիկիաս 'ի պատուէր հրամանին ուշ եդեալ՝ զայն ևեթ կամէր կատարել, և դառնալ նաւատորմաւն յեռս 'ի Պիրէոն[2]։ Իսկ Ալկիբիադ յետ մեծի սպառազինութեանն՝ պարտ համարէր յաղթանակս ինչ կանգնել, և հրեշտակս ասէր արձակել 'ի գլխաւոր քաղաքս Սիկիլիոյ, և յարուցանել զնոսա ընդդէմ սիրակուսացւոց, և առնուլ 'ի նոցանէ զօրս և համբար. և ապա յարգել և 'ի պաշարումն արկանել զՍելինոն կամ զՍիրակուսա։ Դարձեալ

1 Թուկ. գիրք Զ. գլ. 8։ 2 Նոյն անդ գլ. 47։

և Ղ՝ ամաքոս զօրավարակից նոցա խրատ տայր՝ դէպ՝ ուղիղ դիմել՝ի Սիրակուսա, մինչ դեռ յապշութեանն էին ընակիչք քաղաքին ընդ գալուստ աթենացւոց՝, և՝ի նաւահանգիստն Մեգարայ մերձ՝ի քաղաք անդր ամրանալ նաւատորմին, և դղորդել զՍիկիլիա յաղթութեամբն։

Յաջողեր արդեօք խորհուրդն Ղ ամաքոսի. քանզի սիրակուսացիք ոչ ինչ ընդդէմ սպառնալեաց վտանգին պատրաստեալ էին, և ոչ կարծէին անմտանալ աթենացւոց՝ի մտաբերել յառուն Սիրակուսայ մեծամուր քաղաքին. մինչև իշխել ումեն՝ի Ճարտարախօսաց նոցա ասել, թէ երթեալ շնորհս կալցին աթենացիք, զի ոչ զնոսա ընդ մերովքս նուաճեցաք օրինաւք։

Բայց ոչ հաճոյ թուեցաւ երկոցունց այլոց զօրավարացն խորհուրդն Ղ ամաքոսի, և նա յաւել միաբանել ընդ Ալկիբիադեայ։ Եւ մինչ դեռ Ալկիբիադ նուաճէր զԼատանա դաւով, և՝Լաքսոս բանայր առաջի նորա զդրբունս, և դրունք Մեսինայ բռնադատէին մարթանօք նորա[3], և ակնկալութիւնք նորա արդիւնք լինէին[4], չու առնէր՝ի Պիրէոնէ նաւն՝ որում հրաման էր դարձուցանել զնա

1 Թուկ. գիրք Զ. գլ. 49։ Յաղկիր. էջ 202։
2 Նոյն անդ գլ. 36։ 4 Նոյն. Յաղկիր. գլ. 4։
3 Նոյն անդ գլ. 51։ Պլուտ.

ՀԱԹԵՆՍ։ Քանզի ոսոխք նորա յաղթանակեցին, և հասաներ նմա կոչ 'ի դատաստանն՝ որ թողաւ թերի։ Բայց ոչ օք իշխեաց ունել զնա, քանզի երկնչեին՝ թէ գուցէ ապստամբեսցէ զօրականն, և գունդք նիզակակիցք՝ յորոց բազումք յորդորանօք նորա եկեալ էին 'ի Սիկիլիա՝ դասալիք 'ի բաց գնայցեն[1]։ Եւ կիբեիադ խորհեցաւ նախ գնալ կալ յանդիման ոսոխացն յատենի. այլ իբրև եհաս 'ի Թուրիոն, զմտաւ ածեալ զանիրաւութիւն աթենացւոց՝ զերծեալ 'ի տքնութենէ պահապանացն, փախեաւ 'ի Պեղոպոնես[2]։

Ի մեկնել նորա 'ի բանակէն՝ լքաւ զօրականն. քանզի Նիկիաս անվեհեր 'ի կատարումն խորհրդոց, այլ վեհերոտ էր 'ի խորհել. և եղկացուցանէր յանդգնութեան կամ 'ի թեթև ինչ գործս պատերազմի զեռանդն՝ վառեալ Հայկիբիադեայ 'ի սիրտ զօրականին։ Բայց իբրև ետես զաբրեպատեհ յաջողութիւն խորհրդոյն՝ զօրմէ խիթայլն, եդ այնուհետև 'ի մտի պաշարել զՍիրակուսա. և այնու Հարտարութեամբ յարգել և 'ի պաշարումն արկ զքաղաքն, զի բնակիչք նորա պատրաստէին անձնատուր լինել։ Եւ յոլովք իսկ յազգաց բնակելոց 'ի Սիկիլիա և Իտալիա միաբանեալ էին ընդ նմա. բայց Դիոնիսիոս

1 Թուկ. գիրք Զ. գլ. 61։ 2 Պլուտ. անդ էջ 202։ Պլուտ. Անգիր. էջ 200։

զօրավար սպարտացւոց հասեալ յօգնութիւն զօրօք՝ զորս 'ի Պեղոպոնեսայ ածեալ էր և 'ի սիկիլիացւոց անտի գումարեալ, եմուտ 'ի քաղաքն մինչ դեռ 'ի պաշարման կայր։ Արբեր էր Դիկիասայ արգելուլ զնա և չտալ թոյլ մտել նմա 'ի կղզի անդր, այլ թերահոգ գըտաւ՝. և յուլութիւնն այն անձարակ յելս հնարից զՀետ իւր ձգեաց զամենայն աղէտս թշուառութեան նորա։ Պիլիպպոս քաջալերեալ զվհատութիւն սիրակուսացւոց, հար զաթենացիս, և պաշարեաց զնոսա 'ի պատնէշս իւրեանց։

Աթենացիք զԴեմոսթենէս և զԴրիմեդոն զօրավար կացուցեալ, յղեցին բազմութեամբ այլոց ևս եօթանասուն և երիս պատերազմիկ նաւաց, զօր 'ի ձեռս նոցա գումարեալ հինգ հազար այր սպառազէն, և մեկնակազէն գունդս։ Այլ Դեմոսթենեայ կորեան արք երկու հազար 'ի մարտնչելն նորա 'ի վերայ ամուր դղեկի միոյ. և երկուցեալ թէ գուցէ 'ի յամենն՝ չմարթիցի յետոյ նաւարկել ընդ ծով, զի ախտակրեին ևս անդ զօրքն և նուազէին, խորհեցաւ ձեռնթափ լինել 'ի գործոյն, կամ ածել զզօրսն այլուր յառողջ վայրս։ Այլ 'ի ձգել նաւացն զառագաստ՝ դէպ եղև նուազել լուսնին, յորմէ արբ-

1 Թուկ. գիրք Զ. գլ. 104։ 3 Նոյն անդ գլ. 47 և 49։
2 Նոյն գիրք Է. գլ. 42։ Յուստ. գիրք Դ. գլ. 5։

հաւիրք կալան զբանակն. և 'Ալիկիասայ հարցեալ զիշէս, նոքա ետուն հրաման պատասխանուլ՝ յամէլ նմա անդ այլ և աւուրս քսանեւեօթն[1]։

Այլ նախ քան զկատարել աւուրցն այնոցիկ՝ աթենացիք պարտեալք ընդ ծով և ընդ ցամաք, և զի ոչ էս կարէին կալ առ պարսպօքն Սիրակուսայ՝ առ 'ի չգոյէ նոցա համբարոյ, և ոչ ելանել 'ի նաւահանգստէն՝ զորոյ սիրակուսացիք արգելեալ պահէին զմուտսն, խորհուրդ կալան թողուլ անդ զաղէն հանդերձ վիրաւորօք և զնաւս, և խոյս տալ ընդ ցամաք 'ի մի ուրեք 'ի քաղաքաց Սիկիլիոյ։ Մեկնեցան գնացին քառասուն հազար այր[2], հանդերձ զօրօքն՝ որ 'ի Սիկիլիոյ և Յոտալիոյ գումարեալ էին, և նաւաստեօք և սպասաւորօք և ստրկօք։

Յայնմ վայրի սիրակուսացիք հասին կալան զկիրճն լերանց և զանցս գետոց, զկամուրջս քակեալ կործանեցին, եդին պահ 'ի բարձունս, և զեղան ընդ դաշտն ջոկատք հեծելոց և մեկնակազէն զօրաց։ Աթենացիք խուճապեալք յամենայն ոտնփոխս և խափանեալք, և նշաւակք լեալ նետից թշնամւոյն՝ որ ամենայն ուրեք ընդ առաջ ելանէր նոցա, և ինքեանք ոչ ուրեք կարէին 'ի վերայ հասանել նմա, օրինակաւ զօրավարացն խրախուսէին, և յորդորանօք 'Ալիկիասայ՝ որ թէպէտ և հիւ-

1 Թուկ. գիրք Է. գլ. 50։ 2 Թուկ. անդ գլ. 75։

ծեալ՝ի յերկար հիւանդութենէ, ՝ի վեր քան զվտանգն արիանայր։ Օաւուրս ութ հարկ եղև նոցա գուսպարել ընդ խոչս նորանորս. բայց Գեմոսթենէս, որ վերջապահ գնդին զօրավարքեր վեց հազար արանց, մնլորեալ ըզՀանապարհայն՝ վարեցաւ՝ի Թշնամեաց՝ի տեղի մի անձուկ. և անհնարին արութիւնս՝ի տեղւոջն գործեալ, ապա անձնատուր եղև, դաշն եդեալ ընդ Թշնամիս՝ հնորհել իւր և իւրոցն զկեանս, և մի յարհաւիրս բանտին մատնել զինքեանս՝։

Իսկ Կիկիաս պայմանս առաջի արարեալ Թշնամեաց, և անլսելի լեալ, ած զմնացորդ բանակին մինչև Յոյնար[3] գետ։ Ընդ բազումք՝ի զօրականէն պասքեալք՝ի ծարաւոյ՝ խառն՝ի խուռն՝ի գետ անդր անձամբ զանձինս մղէին, և այլք՝ի Թշնամեացն մղեալք գետավէժ լինէին. և որք՝ի լոզ զերծանել յայն կոյս խնդրէին, ընդ ափափայ գետեզերսն՝ի նետաձիգ զօրացն խոցէին, ողորմելի նախճիրքք՝ի տեղւոջն գործեալ։ Ութ հազար այր անդանօր կորեան[5]. և Կիկիաս ձայն արար առ Գիլիպպոս, և ասէ. Զքա ընդ իս որպէս և կամիս, այլ խնայեա՝ի չուառ զօրականդ։ Յայնժամ Գիլիպպոս դադարեցոյց զկոտորածն։

[1] Թուկ. գիրք Ի. գլ. 82։ [3] Դիոդ. գիրք ԺԳ. էջ 148։
[2] Նոյն անդ գլ. 84։

Այ դարձան մտին սիրակուսացիք 'ի քաղաքն Իւրեանց, դերի զՀետ ածեալ բազմութիւն եօթն հազար արանց[1], և Հետուն զնոսա 'ի քարահատս։ Որոց վիշտս անհնարինս զամիսս բազումն անդանօր կրեալ, բազումք 'ի նոցանէ կորեան, և այլք սարկաբար 'ի վաճառածան։ Այ բազմազոյնք 'ի նոցանէ մատնեալ 'ի ձեռս սպայից և զօրականաց՝ վախճանեցին զաւուրս իւրեանց 'ի շղթայս, բաց յաթենացւոց ոմանց՝ որք Այբիպիդեայ տաղիւքն փրկեցան, հատուածս դեղեցիկս յայնցանէ 'ի լուր տերանցն Իւրեանց արտասանեալ. զի չև ևս 'ի Սիկիլիա քաջածանօթք էին տաղք քաջի քերթողին[2]։ Իսկ Դիկիոս և Դեմոսթենէս 'ի մահ մատնեցան, ոչ կարացեալ Դիւլիպպեայ ամենայն ջանիւքն ապրեցուցանել զնոսա[3]։

Աթենացիք ընկճեալ 'ի յեղակարծ թշուառութենէն, դժնդակագոյն ևս աղէտս չարեաց առաջի աչաց նկատէին։ Անզգի նիզակակիցք նոցա պատրաստէին լծընկեց լինել, և այլ ազգք 'ի կորուստ նոցա էին միաբանեալ[4], և պեղոպոնեսացւոց վաղ իսկ ըստ օրինակի նոցա լուծեալ էր անխիղճ զդադարումն զլինուց[5]։ Յամենայարմար միաբանութենէն յայտնի է-

1 Թուկ. գիրք Է. գլ. 87։
2 Պլուտ. 'ի Նիկ. հատ. 1. էջ 542։
3 Թուկ. անդ գլ. 86։
4 Նոյն գիրք Ը. գլ. 2։
5 Նոյն գիրք Է. գլ. 19։

բևէր Հոգին վրէժխնդրութեան, և գերազանց հանձարոյն առաջնորդութիւն։ Բանզի յոյժ մեծարոյ էր Աւկիբիադ 'ի Լակեդեմոն, որպէս և ամենայն ուրեք մեծարէրն. և 'ի նմանէ յորդորեալ սպարտացիք խորհուրդ կալան յղել օգնականութիւն 'ի Սիրակուսա, և դարձեալ վերստին ասպատակել Յունտիկէ, և ամբ բացուցանել զԴեկեղիա՝ որ էր հեռի Յունայ հարիւր և քսան ասպարիզաբ, և յարգել արկանէր զքաղաքն 'ի ցամաք կուսէ[1]։

Բռ 'ի կործանել 'ի սպառ զիշխանութիւն աթենացւոց՝ պարտ էր ձեռն տալ վտարանջութեան նիզակակցաց նոցա, և բեկանել զծովամարտիկ զօրութիւն նոցա։ Դմին իբր Աւկիբիադ դիմեալ 'ի ծովեզերս փոքրուն Ասիոյ, զԲիոս և զՄիլետոս և զայլ բարգաւաճագոյն քաղաքս ձգեաց 'ի կողմն սպարտացւոց[2]. և յանկուցող բարուքն յինքն յարեցուցեալ զՏիսափեռն՝ որ նախարար կայր 'ի Սարդիս[3], զծախս նաւատորմին պեղպոնեսացւոց ընոյր յարքայէն Պարսից[4]։

Լրկրորդս այս պատերազմ, կարգաւորագոյն քան զառաջինն ուղղեալ, վաղագոյն արդեօք վճարէր. բայց Աւկիբիադ ոսոխ յանձն

1 Թուկ. գիրք Զ. գլ. 91։
2 Թուկ. գիրք Ը. գլ. 12 և 17։
3 Պլուտ. յԱղկիբ. էջ 204։ Նեպ. յԱղկիբ. գլ. 4։
4 Թուկ. անդ գլ. 5։ Ցուս. գիրք Ե. գլ. 2։

իւր ձգեալ զՄ՝գիս արքայ սպարտացւոց՝ վասն գողանալոյ զսեր տիկնոջ նորա, և զայլ գլխաւորս նիզակակցութեանն՝ վասն կասկածելի գոլոյ նոցա, լաւ վարկաւ այնուհետև յետ խնդրելոյ զվրէժ՝ ի հայրենեացն՝ փրկել զնա՝ ի մատալուտ յանշուշտ կորստենէն՝։ Զմին իբրև կասեցոյց զզենս Ցիսափեռնեայ և զգնականութիւն արքային Պարսից. պատճառանօք իբր թէ լաւ և օգուտ էր նմա թողուլ՝ զի բեկցին իրերօք աղգք Յունադայ՝։

Զհետ այսորիկ աթենացիք եղծին զհրովարտակ աքսորանացն Մէկիբիադեայ. և նորա վաղվաղակի անցեալ՝ ի գլուխ բանակին, հնազանդեցոյց զքաղաքս Յունասպոնտեայ՝, և հարկեցոյց զնախարարս Պարսից՝ ի պայմանս ուխտի օգտակարագոյնս աթենացւոց՝, և ըստ ակեդեմն յաղերս խաղաղութեան՝։ Բայց աթենացիք մերժեցին զսղերս նոցա քանզի անյաղթելի այնուհետև զանձինս վարկուցեալ զօրավարութեամբն Մէկիբիադեայ, յանհնարին արհաւրացն անդէն և անդ՝ ի յանդգնագոյն վստահութիւն զառածանեին. և ոսեբիմ ատելութեան նոցա ընդ զօրավարին աբրագ արագ յաջորդէր ծայրայեղ շնորհապարտութիւն և սիրելութիւն առաւելագանց։

1 Պլուտ. Ալգիբ. էջ 204։
2 Յուստ. գիրք Ե. գլ. 2։
3 Պլուտ. անդ էջ 206։
4 Նոյն անդ էջ 208։
5 Դիոդ. գիրք ԺԳ. էջ 177։

Լաւ իբրև դարձաւ նա 'ի Հայրենիսն, մտա-նել նորա անդր, և որչափ եկաց անդ, և պա-տասխանատուութիւն նորա զանձնէ, ամենայնն յաղթանակք եղեն նմա, և տոնք ժողովրդ-եան[1]։ Լաւ մինչ ձայնիւ ցնծութեան ամե-նայն քաղաքին չու առնէր նա բազմութեամբ հարիւրոց նաւաց 'ի Պիրէոնէ, ոչ ևս ոք երկ-բայէր՝ զի առաջի արագայաղթ քաջութեան նորա չէր հնար կալ ազգացն պեղոպոնեսա-ցւոց, այլ մնայր նոցա վաղ նուաձել ընդ օրի-նօք յաղթականին. և ժամ՝ 'ի ժամ սպասեալ մնային սուրհանդակին ածելոյ զաւետիս բեկ-ման բանակի Թէնամեաց և աշխարհակալու-թեան Յոնիոյ[2]։

Մինչ դեռ յուսոմն այնմիկ խնդային, գոյժ եհաս զի հնգետասան նաւք պատերազմիկք աթենացւոց անկեալ էին 'ի ձեռս սպարտա-ցւոց։ Բանզի հակառակ հրամանացն Լակի-բիադեայ Ճակատ տուեալ էին զօրքն, մինչ ինքն ոչ էր անդ. զի 'ի Յոնիա երթեալ էր առնել դրամաժողով 'ի ռոձիկ զօրացն։ Որ և ընդ լուր կոտորածին դարձ արարեալ, Ճակա-տեցաւ ընդդէմ յաղթականին. այլ նա խոյս ետ յերեսաց նորա[3]։ Բայց թէպէտ և Լակի-

[1] Նեպ. Ալկիբ. գլ. 6։ Պլուտ. Ալկիբ. էջ 209։ Յուս. գիրք Ե. գլ. 4։

[2] Պլուտ. անդ էջ 211։

[3] Նոյն անդ էջ 211։ Քսե-նոփ. պատ. Յուն. գիրք Ա. էջ 442։

բիւդ կանգնեաց զկորանս աթենացւոց, և դոյզն ինչ եղև կորուստն, այլ զմախանս ոսոխացն յինքն ձգեաց. որք չարացուցին ընդդէմ նորա զժողովուրդն, և նովին փութոյ պնդութեամբ՝ որով ամբարձեալն էին զնա աթենացիք 'ի սպարապետութիւն ամենայն զօրացն՝ ընկեցին զնա յիշխանութենէն։

Լուեալ այնորիկ տեսեաց պատերազմն զամս քանի մի ընդ ծով, մինչև 'ի Ճակատամարտն՝ որ մերձ Լեգոս գետ մղեցաւ, յորում պեղոպոնեսացիք կալան զյաղթութիւն 'ի կիրճն Լեղեսպոնտեայ։ Բանզի Լիսանդր զօրավար սպարտացւոց՝ յեղակարծում պահու 'ի վերայ հասեալ նաւատորմին աթենացւոց հարիւր և ութսուն նաւաց, նուաճեաց զնոսա, և գերեաց 'ի նոցանէ արս երեք հազար *։

Ալկիբիադ, որ յետ լուծանելոյ յիշխանութենէն բնակէր մերձ Լեգեսպոնտոս, բազում անգամ՝ ազգ արար զօրավարացն աթենացւոց զվտանգ տեղւոյն, և զլուծումն հրահանգաց զօրականին և նաւազին. այլ նոքա անդոնեցին զնորատ առնն անկելոյ 'ի չնորհաց[2]։

Ռեկման Ճակատամարտին յաջողդեաց առուն Լթենայ, որ զամիսս քանի մի ժուժ-

1 Քսեն. պատ. Յուն. գիրք Բ. էջ 455 և 457։ Պլուտ. 'ի Լիսա. հա. 1. էջ 440։

2 Քսենոփ. անդ էջ 456։ Պլուտ. Ալկիբ. հա. 1. էջ 212։ Կեպ. Ալկիբ. գլ. 8։

* Ն. Բ. 405 տաս։

կալեալ պաշարման, ապա առ սովոյն վտանգի անձնատուր եղև*։ Բազումք 'ի նիզակակից ազգաց խրատ տային կործանել զքաղաքն, բայց սպարտացիք լաւ համարեալ զփառս քան զշահ օգտի՝ ոչ կամեցան դերել զազգն, որոյ զայնպիսի վաստակս մեծամեծս մատուցեալ էր Լակեդայ՝. այլ պատուէր հրամանի 'ի վերայ եդին՝ քանդել նմա զամուրս Պիրէոնի, և զպատուարն երկայնաձիգ՝ որ զնաւահանգիստն կցորդէ ընդ քաղաքին, տալ 'ի բաց զամենայն նաւս պատերազմիկս՝ բաց յերկոտասանից, դարձուցանել զամենայն աքսորեալս, թողուլ զամենայն քաղաքս նուաճեալս, նիզակակից լինել ընդ սպարտացիս 'ի պատերազմ և 'ի դիմամարտ, և ամենայն ուրեք ուր և կոչեսցեն ընդ ծով և ընդ ցամաք տալ զպատերազմ նոցա[2]։

Եւ կործանեցան պարիսպքն 'ի ձայն նուագարանաց, որպէս թէ Լակեդայ յազատութիւն դառնայր[3]. և յետ ամսոց ինչ յաղթականք յընտիր արարին ժողովրդեան կացուցանել իւրեանց իշխանս երեսուն, փոխեալ զկարգ իշխանութեան**. որոց բռնակալեալ գրաւեցին

* Ն. Ռ. 404 ամաւ, 'ի վերջ կոյս ամսեանն ապրիլի։

1 Քսեն. պատ. Յուն. գիրք Բ. էջ 460։ Խոկ. յոլ. խաղաղ. հա. 1. էջ 399։ Ագոկ. յոլ. խաղաղ. էջ 26։

2 Քսեն. անդ։ Դիոդ. գիրք Գ. էջ 226։

3 Քսեն. անդ։ Պլուտ. 'ի Լիւս. էջ 441։

** Ն. Ռ. 404 ամաւ, 'ի մուտս ամարայնոյն։

յիւրեանց՝ իսպառ զամենայն իշխանութիւնն։ Այլ նախ յամբոխս բանսարկուացն անդրեթա-
ցեալ՝ որ լաւացն ատելիքն էին, ապա յոսոխս իւրեանց բռնացան, և տակաւ յայնոսիկ՝ զո-
ւրոց յափշտակել զմեծութիւնսն ցանկային։ Ի սպարտացի զօրականէն՝ զոր եթող առ նոսա
Լիսանդր՝ արս երեք հազար 'ի բնիկ քաղա-
քացոց արարին իւրեանց թիկնապահս [2], որք
անօրէնութեանց համարձակ զօրավիգն լի-
նէին։ Աթենացիք կողոպտեալ 'ի զինուց,
յանկարծակի 'ի սարկութիւն մատնեցան. և
որ ոք բռնութեանն հակառակ կայր, կամ լը-
ռութեամբն ևեթ թուէր դժկամակել ընդ
այն, աքսոր և կապանք և մահ մնային նմա։
Այլ թէպէտ և ոչ տևեաց բռնութիւնն այն
աւելի քան զամիս ութ [3], առաւել քան զհա-
զար և զհինգ հարիւր այր 'ի քաղաքացոյց ան-
տի 'ի սուղ ժամանակին սպանան, և 'ի յետին
եղերական սպասուցն զրկեալք [4]. և յոլովք մեկ-
նեալ գնացին 'ի քաղաքէն, ուր չէր օրէն հե-
ծել ընդ հարստահարութիւնսն կրողաց զայ-
նոսիկ և տեսողաց առ հասարակ. զի հարկ
էր անմռունչ վշտակրել, և անկարեկիր գոլ
ընդ վիշտս այլոց։

1 Լիւս. Ներատոսթ. էջ 192։ Քսեն. պատ. Յուն. գիրք Բ. էջ 461։ Դիոդ. գիրք ԺԳ. էջ 236։

2 Լիւս. անդ էջ 227։ Քսեն. անդ էջ 463։

3 Քորսինի տարեգր. առ տիկ. հտ. 3. էջ 264։

4 Խոսկ. արիսպ. հտ. 1. էջ 345։ Դիմոս. 'ի Ցիմոկր. էջ 782։ Եպքին. 'ի Կեսեսիփ. էջ 466։

Սոկրատ միայն անմեղկելի յանօրէնութենէ ժամանակին, սփոփէր արիաբար զվշտակրեալս, և հրամանի բռնաւորացն հակառակ կայր[1]։ Մայնոքա առաւելքանյանվեհեր առաքինութենէ նորա՝ 'ի Ճարակէ գերահանՃարն մտաց Մակիբիադեայ զարհուրեալք, դիտէին զել և զմուտ նորա։ Չր նա յայնժամ՝'ի մի յաւանաց փոխեցիոյ, ուր նախաբար կայր Փառնաբազ. առ որում հնորհս գտեալ, մեծարէր 'ի նմանէ։

Մնդ լուեալ՝ զի կրտսերն Կիւրոս զօրաժողով լիներ 'ի փոքրն Ասիա, ծանեաւ՝ զի խորհեր նա դիմել 'ի վերայ Արտաշիսի եղբօր իւրոյ, և եդ 'ի մտի անցանել առ Թագաւորն Պարսից, և յայտնութեամբ մեծալուտ վտանգին՝ գտանել 'ի նմանէ օգնութիւն յազատութիւն հայրենեացն։ Մայ մինչ դեռ նա յայնմ մտաց խորհրդի էր, դաւաՃանք 'ի Փառնաբազայ առաքեալ՝ շուրջ եղեն զտամբ նորա. և ոչ իշխեալ յարՃակել 'ի նա, հուր հարին զնովաւ։ Մակիբիադ սուսեր 'ի ձեռին 'ի դուրս յարՃակեալ, անց ընդ հուրն, և վանեաց 'ի բաց զխուժադուժն, այլ ընդ տարափով նետից նոցա անկաւ մեռեալ[2]. և էր նա յայնժամ ամաց քառասնից։ Մահ նորա նախատինք են սպարտացւոց, եթէ արդարեւ աւագանին նո-

1 Քսեն. յիշատ. էջ 716։ Դիոդ. գիրք ԺԴ. էջ 237։ Սեն. յղ. անդր. հոդ. գլ. 3։

2 Պլուտ. յԱղկիբ. հտ. 1. էջ 212 և 313։ Նեպ. յԱղկիբ. գլ. 10։

ցա համախոհ կասկածանաց Եբեմնիցն բռնակալելոց յԱթէնս՝ գրգռեցին զՓառնաբազ 'ի թշնամանալից ոճիրն. քանզի կէսք հաստատեն՝ իւրովի վասն անձին չարաշահութեան 'ի դաւաճանութիւն յայն զառաջեալ նախարարին՝։

Փառք ազատութեանն Աթենայ 'ի բռնաւորաց՝ Ոփասիբուղեայ պահեալ էին։ Զանազի արիասիրտս այս այր, վասն իւրոց վաստակոց առաջնորդ փախստէիցն կացեալ մեկնելոց 'ի քաղաքէն, խուլ առ հրապոյրս բռնաւորացն՝ որք իշխանակից իւրեանց կամէին զնա, կալաւ զՊիրէոն, և դարձոյց զժողովուրդն յազատութիւն[2]։ Ամանք 'ի բռնաւորացն զէն 'ի ձեռին անկան, այլք 'ի մահ դատապարտեցան. և մուրհակ մոռացութեան միաբանեաց զերկոսին կողմանն 'ի խաղաղութիւն, յանդորր հանեալ զԱթէնս[3]։

Յետ ոչ բազում ամաց աթենացիք թօթափեալ զլուծ սպարտացւոց, դարձան յընկերահաշտ ազատութիւն, և յանձն առին զուխտ խաղաղութեանն՝ զոր Անտալկիդաս սպարտացի եդ ընդ Արտաշիսի*։ Եւ պայմանք ուխտին, որ ըստ հարկի իրաց ժամանակին կռեցան, այս էին. Թողուլ 'ի Պարսս զամենայն քաղաքս Յունաց՝ որ 'ի փոքրն Ասիա հատուածք

1 Եփոր. առ Դիոդորի գիրք ԺԴ. էջ 242։
2 Քսեն. պատ. Յուն. գիրք Բ. էջ 472։
3 Նոյն անդ էջ 479։
* Ն. Քր. 387 ամք։

բնակէին, և զոմանս 'ի մօտակայ կղզեաց. իսկ այլոց ազգաց յունաստանի կալ ինքնօրէն ինքնիշխան յազատութեան։ Այլ այնպէս վատթարեալ գտան յայնմհետէ ազգքն, զի ոչ ևս լիցի նոցա թերևս դառնալ յառաջին զօրութիւնն։ Այս վախճան եղև վիճիցն, յորոց շարժեալ դրդեցան մարտք պատերազմին Արաց և պեղոպոնեսացւոց։

Այսոքանօր զկայ առցէ համառօտագիծ պատմութիւնս յառուն քաղաքին աթենացւոց. իսկ որ ինչ յետ այնորիկ երևելի իրք եղեն մինչև ցժամանակս մեկնելոյ իմոյ 'ի Սկիւթիայ, զայն ամենայն խառն ընդ իրս ուղղորութեան իմոյ պատմեցից, համարձակեալ այժմտալ տեսութիւնս ինչ զաւուրցն Պերիկղեայ։

Ի ՍԿՍԱՆԵԼ պեղոպոնեսական մարտին յոյժ այլակերպեալ գտանէին աթենացիք 'ի վաղնջուց հայրենի կերպարանացն։ Այնմ ինչ՝ զոր հարք նոցա 'ի հրահանգս ուղղութեան բարուց դարուց 'ի դարս յաւելեալ էին, օրէնք և սահմանադրութիւնք և խրատք և օրինակք, 'ի սակաւ ամս եղծեալ ապականեալ էին։ Սոսկալի ինն քան ամենայն ուրեք ցուցաւ անդաւնօր, զի յաղթութիւնք մեծամեծք ոչ ինչ նուազ վնասակարք էն յաղթողաց քան յաղթելոց։

1 Քսեն. պատ. Յուն. գիրք գ.ա. էջ 608։ Դիոդ. գիրք Ե. էջ 549։ Խոկ. յշ. խաղ. հա. 1. էջ 368։ Պլուտ. յԱ. ԺԴ. էջ 319։

Յուցի վերագոյն զաղետալի արգասիս աշխարհակալութեանցն անթենացւոց և զծովամարտիկ զօրութեան նոցա և զվաճառաշահութեան, զի վաղ ընդ փոյթ ընդարձակեալ զտէրութիւն իւրեանց, Ժողովեցին'ի ծոց իւրեանց զկապուտնիզակակցելոց և նուաճելոց ազգաց. և հասին զհետ այնոցիկ աշխարհաւեր զեղխութիւն, և իղձք անյագք տօնից և տեսարանաց։ Պետութեանն առ հասարակ զառանցեալ'ի ցնորս ամբարտաւանութիւն, զամենայն ինչ օրէն համարէր իւր այնու՝ զի իշխեր ձեռնարկել յամենայն ինչ. իսկ իւրաքանչիւրոց ըստ նմին օրինակի զամենայն բռնադատութիւն պարտուց յանձնէ'ի բաց ընկեցեալ էր զքնութիւն և զքաղաքաժողով միաբանութիւն։

Այնուհետև վաստակք արգոյ և եթ համարեին, և ամենայն որ զհետ լիներ իշխանութեան. ամենեցուն կիրք'ի շահ անձանց բերեալք, և ուղիք ապականութեան զեղան զաշխարհաւն։ Ցուփանք որ ընդ քաղով հարստանեաց և պարկեշտութեան ծածկէին'ի սկզբանէ, հոլանեցին զբոց պիղծ ցանկութեանն. և յաճախեաց անհամեստ կանանին ընդ Արտիկէ և ընդ ամենայն Աղլադա', անդր հասեալ'ի Յոնիոյ՝ ուր խանձարուրք ախտաբիծ ցանկութեանն էին ընդ քաղցրախառնանահանգաւն։ Ակոց յոգունս զհետ իւրեանց ձգելով

1 ԱԹԵՆ. գիրք ԺԳ. էջ 569։

հոմանիս՝ անխտրաբար սիրեալ զնոսա, և սի-
րեալ՝ի նոցանէ աննախանձաբար, և այլոց ըզ-
միոյ ուրուք պարուրեալ յիւրեանս զսեր [1], ար-
տաքնայարդար համեստութեամբն գովելի իսկ
էին և ակնածելի դիւրահաւան ամբոխին, որ
առաքինիս զնոսա համարէր վասն ընդ հոմա-
նիսն հաւատարմութեանն։

Պերիկղէս ակամատեսս գոլով չարեացն, ան-
փոյթ արար խափանել զայնոսիկ. և որ ինքն
խստակրօնն էր բարուք, ջանայր զեղծուցանել
զբարս աթենացւոց՝մեղկեալ զնոսա անընդհատ
յաճախութեամբ տօնից և խաղուց [2]։ Զնուա-
նէն Զոսպասիա, ծնեալ՝ի Միլետոս Յոնիոյ,
օգնական լինէր խորհրդոցն Պերիկղէայ. ո-
բուամ նախ վարժապետ լեալ, և ապա եղև նմա
կնութեան. և այնպէս իշխէր նմա, մինչև ամ-
բաստանեցաւ Պերիկղէս՝՝ի վրէժխնդրութիւն
թշնամանաց նորա դրդեալ զպատերազմն [3]։
Համարձակեցաւ նա մինչև գումարել ընդ իւր
պոռնիկ կանայս, առ՝ի ձգել յինքն զմանկ-
տին աթենացւոց գեղով նոցա և հրապուրա-
նօք [4]։ Զմօր ինչ յառաջ ընդ խորհուրդ իսկ
այնպիսւոյ միաբանութեանէ աղմկեցաւ քաղաքն,
իսկ յայնժամ ընդ գործ նշաւակութեանն հա-

1 Տերենտ. Յինքնագաման
արար. 2. տես. 3։
2 Պլուտ. ի Պերիկղ. հա-
1. էջ 158։
3 Աբիստոփ. ՅԱքարն. ա-
բար. 2. տես. 5. տող 527։
Պլուտ. անդ էջ 165 և 168։
4 Պլուտ. անդ էջ 165։

զիւ քրիստոնէիւն ինչ լսելի եղև. զի թէպէտ և քերթողք կատակերգակք գձէին զնա 'ի թատերս [1], այլ ոչ ինչ նուազ յաճախէին 'ի տուն նորա աղնուականք աթենացւոց։

Պերիկղէս համարձակեցոյց զցոփութիւն, Ասպասիա ընդարձակեաց, իսկ Անկիբիադ սիրելի արար զայն։ Կեանք նորա լի էին ամենայն պղծութեամբք, այլ կցորդէին 'ի նմա ընդ այնոսիկ և չքնաղ բարեմասնութիւնք. և ընդ կուղս չարեաց նորա այնքան հիւսեալ բարիք, մինչև դատողականին չգիտել յո՞րս 'ի նոցանէ լինել ակնկառոյց [2]։ Դարձեալ զի և ինքը էր հնար կախարդանաց դեղատուութեան նորա զդէմ ունել, որ 'ի նոցին իսկ չնորհաց դիցն թուէին զեղեալ 'ի նմա։ Օ՛իարդ մարթէր դատապարտել զայր մի, որում ոչ ինչ պակասէր առ'ի սիրելի լինել, և որ զամենայն հնարս հնարէր 'ի նոյն, և որ անձամբ զանձն կանխեալ դատապարտէր, և զթեթև ինչ թշնամանս ողոքիչ մեծարանօքն ծածկէր, և որ թուէր իմն գթել 'ի յանցանս քան թէ յանցանել։ Որով չարիք նորա համարէին ընդ մանկական խաղս և ընդ խակութիւնս, որ ընդ եռանդն տիոց անցանեն [3]։ Այլ որ ներբեն ախտից՝ դաւակից լինին ընդդէմ առաքինութեան. որպէս և աստանօր դիպաւ։ Օ՛ի բաց 'ի սակա-

1 Կրատին. Էսպոզ. առ Պլուտարքեայ 'ի Պերիկղ. էջ 165։
2 Պլուտ. յԱղկիբ. էջ 199։
3 Նոյն անդ։

ւուց ոմանց քաղաքայնոց, որ Հայրենի առա-
քինութեանցն պատկառ կային[1], հրապու-
րեալ ամենայն ազգն զՀետ Ա.Լիբիադեայ՝ 'ի
նոյն նորին ցոփութիւնսն զառածաւ, և յան-
բասիրն առնելոյ զախտս նորա՝ անց 'ի Ջատա-
գովել զայնս։

Ա՝ անկունք աթենացիք զակն 'ի վնասակար
օրինակն պիշ ունելով, 'ի բարեմասնութեանցն
նորա վերջացեալք, համարէին գէթ ընդ ա-
զօտ ինչ զնախատպին բերել յինքեանս զնմա-
նութիւն, ախտիցն եւթ նորա նմանելով, զորս
առաւելովն սարասէին յանձինս. խօլք եւլով, զի
թեթեւ էր նս. ստահակք, զի յանդուգն էր
նա. և անօրէնք, զի զեղծաբարոյ էր նա։ Այ-
կէսք առանց մեծութեանց նորա հանգոյն նը-
մին շռայլեալ, ծաղր կացին մտփառ պերճա-
նօքն[2], և տնանկացան. և ազգէ յազգ աւան-
դելով նոցա զանկարգութիւնսն, յերկարա-
տեւեաց և յետ մահուն Ա.Լիբիադեայ ազգե-
ցութիւն յոռութեանց նորա։

Պատերազմունք, որպէս ոմն 'ի քաջ պատ-
մագրացն իմաստասիրէ[3], յեղուն զբարս աղ-
գաց, և խստացուցանէն ըստ չարեացն կրելոց։
Ա՝ ընդ ընդ այնչափ բազում ամն պեղոպոնեաս-
կան պատերազմին՝ 'ի բազում արկածիցն կրե-
լոց յոյժ յեղափոխեցան բարք աթենացւոց։

[1] Պլուտ. Աղկիբ. էջ 199։ տես. 1։
[2] Արիստոտան. Ամսան 3 թուկ. դիրք Գ. դլ. 82։

Արտմտութիւն նոցա ոչ յայգենայր, եթէ ոչ զանցանէր վրէժխնդրութիւն քան զհնամանսն. որով բազում անգամ հրովարտակս հանին սա- տակման բնակչաց կղզեացն վտարանելոց 'ի նիզակակցութենէ իւրեանց[1], և զօրավարքն նո- ցա բազում ուրեք զգերին չարաչար տանջա- նօք խոշտանգեցին[2]։ Ալ և յիշէին զնախնեացն օրինագրութիւն, զի Հելլէնք երգովք ուրա- խութեան զյաղթութիւնսն ընդդէմ խուժա- դուժ ազգաց և եթէ կանգնեալս հռչակէին, իսկ զյաղթանակս ընդդէմ համազգեացն՝ ողբ- ովք և աշխարհագոյժ կականաւ[3]։

Յաւելու նոյն ինքն վիպագիրն, զի յաւուրս այսր բազմաղէտ պատերազմի այնպէս յեղա- փոխեցան խորհուրդք և իմաստք ազգին, զի և ընտանեգոյնք յանուանց այլ ընդ այլս ըն- ծայեցուցանէին միտս. քանզի հաւատարմու- թիւն զնենգութեան, Ճարտարութիւն զկեղ- ծաւորութեան, և հեզութիւն և խոհականու- թիւն զվատութեան և զկարՃմտութեան ա- ռին իմաստս, ուր յանդգնութիւն և բռնու- թիւն համարէին արգասիք արիութեան և հայրենասէր նախանձու[4]։ Այլ զինչ քան զայս- պիսի խառնակութիւն բարբառոյ դժնդակա-

1 Թուկ. գիրք Գ. գլ. 36։
2 Գան. պատ. Յուն. գիրք Բ. էջ 457։ Պլուտ. 'ի Պերիկլ. հա. 1. էջ 166։
3 Խոսկ. նեբբ. հա. 1. էջ 205։
4 Թուկ. անդ գլ. 82։

գոյն նշանակ զեղծման ազգին կայցէ։ Օ՛ի թէպէտ և բազում՝ այլ ուրեք առաքինութիւն կրէ հարուածս, այլ նկարագիր անուանն և էթ զսաստ իշխանութեան նորա յայտ առնէ խոստովանեալ յամենեցունց։ Իսկ իբրև յանուանէն ևս կապտիցի՝ զրկի յիրաւանց աթոռոյն, և գահակալէ չարութիւն տիրապետեալ անպատուհաս։

Ի նախձիրս պատերազմին շինչան և բազում ազգատոհմք, որոց փառք նոցն և աշխարհին էր՝. և օտարաց 'ի տեղն նոցա փոխանակեալ, հակեցին զմէտ իշխանութեանն 'ի ռամիկն[2]։ Զի թէ ցոր վայր ստահակութիւն ռամիկն զառածաւ՝ անտի 'ի միտ առնուլ է, զի 'ի վերջ կոյս պերզպոնեսական մարտին՝ քնարահարոնն, երբեմն ստրուկ, և հնարիւք մերենաւորութեամբ զքաղաքացւոյ առեալ պատիւ, և վանն առատաձեռնութեանն մեծարեալ յամբոխնէն, տապար 'ի ձեռին եկաց յատենի ամենայն ժողովրդեան, և սպառնայր համարձակ որոց 'ի խորհուրդ խաղաղութեան մտաբերէին[3]։ Զի յետ ոչ բազում՝ ամաց առին սպարտացիք զ՝Թէնս, և վաղ ընդ զինուք արքային մակեդոնացւոց նուաճեցաւ քաղաքն։

Պետութեան, որ 'ի բարս հաստատեալ էր,

[1] Խոկ. յղ. խաղաղ. հտ. 1. էջ 404։
[2] Արիստոտ. յղ. հատ. գիրք Ե. գլ. 3. հտ. 2. էջ 389։
[3] Եսքին. յղ. վրէպ հրեշտ. էջ 407։

հարկ էր այսպիսի ունել վախճան։ Լ.ոք իմաստասէրք, որք զելից կարևոր իրաց զպատճառս հետազօտեն, ասացին դարուց իւրաքանչիւր յեղանակաւ իմն կրել 'ի ծոցի զապագայս։ Լ.ոդ այսյանդուգն այլասացութիւն բերէին, քեան զկարևորն Չէմարտութիւն, որում և աթենացւոցն վկայեն վէպք. զի օրինապահութեան նոցա դար և առաքինութեան ծնաւ զքաջութեանն և զփառաց, և սա զաշխարհակալութեանցն և զզեղեսութեան, յորմէ ապա կործանումն պետութեանն եկաւ։

Լ.ոդ այժմ յողորմելի տեսարանացս 'ի հաճոյականն և 'ի կարևորագոյնս փոխեսցուք։ Յաւուրս պեղոպոնեսական մարտին, ընութիւնն Ձիգն 'ի Ձիգն յաւելեալ՝ փթթեցոյց 'ի սուղ ժամանակի զՀոյլս ամենազան հանճարոյ. բազումք Լ.թէնս իսկ ծնեալք, և բազմագոյնք անդր դիմէին 'ի խնդիր առ 'ի նմանել մրցանակին։

Լ.ոդ ելանդր զՈրդիաս, զՊարմենիդէս, զՊրոտագորաս, և զայլս բազումս յիմաստակաց Հռոմն, որոց խնդիրս 'ի մէջ արկեալ 'ի հրապարակի՝ բարգաւաճեցուցանէին զիմաստս, Սոփոկղ, Եւրիպիդէս և Լ.ուիտոփանէս պայծառանային 'ի թատերս, շուրջ պար առեալ յոսոխաց՝ բաժանելով ընդ նոսա ըզփառս։ Լ.ստ ասատեղաբաշխն Մետոն զընթացս երկնից չափէր և զոլորմունս տարեաց. և անդ

Ընտիփոն և Ընդոկիդէս և Լիւսիաս Հարտարախօսք յազգի ազգի մասունս հռետորական պերճանային։ Մոնիդիդէս նախանձեալ ընդ փառս Լիրոդոտեայ իրականաց մատենիցն, զորս նա 'ի լուր աթենացւոց ընթերցեալ՝ գովեցաւ, պատրաստեր զիւրմն անդրստին առ 'ի ժառանգել հանգոյն նմին դրուատիս։ Լիւ վարդապետութիւն իմն վեհ աւանդեր Սոկրատ աշակերտացն, յորոց բազումք վարժեալս յետոյ կարգեցին։ Օջրավարքքաջք պայծառացուցանէին յաղթանակաւք զլինս հայրենեաց. և իմաստուն Հարտարապետք շինուածս հոյակապս երկնաբերձ կանգնէին։ Պողիգնոտ և Պարրաս և Օեւքսիս նկարագործ գրչաւն իւրեանց, և Փիդիաս և Ցկամենէս քանդակագործ գրոցաւն 'ի հակառակ մտեալ, զարդարէին զմեհեանս, զգաւիթս և զհրապարակս։ Սոքա ամենեքին արք երևելիք, և որ յայլ կողմանս ուրեք Լիլադայ պայծառացեալք, վերակենցալ յաշակերտսն երևելին յարժանաւորս 'ի յաջորդութիւն վարժապետացն. և յայտնի լինէր ամենեցուն, զի զեղծագունին 'ի դարուց բարգաւաճագոյն քան զամենայն դարս առաջի կայր լինել։

Լայսպէս մինչ դեռ այլ և այլ ազգաց աշխարհին 'ի վերայ հասեալ կայր կորուստ պետութեանն ընդ ծով և ընդ ցամաք, այլ իմն դաս խաղաղասէր քաղաքայնոց գուն ի ործէին

պատրաստել նմա զիմացականին յաւերժական պետութիւն, կառուցանելով 'ի փառս ազգին զՀիմնարկեալն յառաջնմէ զտաճար, որ ընդդէմ զօրութեան ապագայիցն յաղթանակելոց էր դարուց։ Որոշեալ օր ըստ օրէ փայլէին գիտութիւնք, և արուեստք նորանոր զարգացմամբք բարգաւաճէին. բանաստեղծութիւն ոչ եւս յաւելոյր 'ի շուք, այլ զնախնին անկորուստ պահեալ 'ի կիր արկանէր զայն առաւելապէս 'ի յօրինուած ողբերգական և կատակերգական քերթութեանց, որք վաղ ընդ փոյթ 'ի ծայր կատարելութեան հասին։ Իսկ պատմութիւն նեբբոյ անկեալ օրինաց ուղղադատքնութեան 'ի բաց պարուրեր զառասպել՝ խուզարկութեամբ ճշմարտութեան', և զանցեալս հանդերձելոցն պատրաստէր 'ի խրատ զօրաւոր։ Ըստ ամբառնալ շինուածոյն՝ երևէին շուրջանակի անդք, կէսք ամայիք, և կէսք ժրագոյն մշակութեան կարօտք։ Կանոնք բանականին մակացութեան և հռետորականին, տեսութիւնք բնազանցականք, և իմաստք բարոյականին պարզեցան 'ի մատեանս, որ ընդ կարգաւորութեան ճառիցն բերէին յինքեանս ըզպարզութիւն իմացուածոց և զվայելուչ տիպս կերպարանաց բանից։

Ի՞նչ 'ի ժառանգեցուցանել Հայաստանեայ զպարծանս զայսոսիկ՝ ոչ սակաւ օժանդակեաց ի-

1 Թուկ. գիրք Ա. գլ. 20 և 21։

մաստասիրութիւն, 'ի խաւարէ ածեալ 'ի լոյս յետ յաղթութեանն կանգնելոյ ընդդէմ Պարսից։ Յերևեալ Օ. Ենանի Մ. Թէնս, հրահանգեցան ամենացիք 'ի Ճարտարմտութիւն եղեկան վարժարանին։ Մնաքսագոր զթաղիսեան վարժարանին ծագեցոյց առ նոսա զլոյս, 'ի բաց հանելով 'ի համարոյ հրաշից զխաւարմունս լուսաւորաց և զՀրեշս և զնորանշան արգասիս բնութեան։ Բայց հարկ էր նմա զայսոսիկ յունկանէ ուսուցանել՝. զի ռամիկն սովորեալ յարփային երևութեանց գուշակել զաղդմունս երկնից, զայրանայր ընդ իմաստասէրս՝ որ փարատել կամէին 'ի նմանէ զնանրահաւատ կարծիսն։ Իսկ նոքա հալածանօքն և աքսորանօք ուսան, զի ոչ է մարթ Ճշմարտութեան բարձր 'ի գլուխ երևել առ մարդիկ՝ այլ սպրդել զհետ մոլորութեան յարամբն 'ի ներքս մտանել։

Բուեստք, ոչ ևս այնուհետև խափանեալ 'ի մտահաՃութեանց ռամկին, արագ արագ Ճախր առնուին 'ի ծագ կատարելութեան։ Մեհեանն Բրամազդայ հիմնարկեալ առ Պիսիստրատեաւ, և Թեսեայն կառուցեալ յաւուրս Կիմոնի, օրինակք նմանութեան առաջի կային Ճարտարապետաց. այլ նկարքն և անդրիք, որ կային յայնժամ, փորձ ինչ նախակերբ-

։ Պլուտ. 'ի Պերիկլ. հտ. 1. էջ 154։ Նոյն 'ի Նիկ. էջ 538։

թուլեան և ոչ այլ ինչ ընծայելին նկարչաց և քանդակագործաց։

Լմնք ինչ յառաջ քան զպեղոպոնեսական պատերազմն, Պանենոս եղբայր Փիդիասայ նկարեաց 'ի գաւթի ուրեք Լ.թենս զՀակատամարտն մարաթոնական. և հիացեալ զարմանային տեսողք՝ Հանաչելով 'ի նկարս անդ զզօրավարս երկոցունց բանակացն[1]։ Պերազանցեաց նա զամենեքումբք՝ որ յառաջ քան զնա կացեալ էին նկարիչք, այլ վաղ զփառս նորա մեթացուցին Պոլիգնոտ Թասեցի, Լպոզոդորոս աթենացի, Օնէքսիս արակլացի, և Պարրասս եփեսացի։

Պոլիգնոտ նախ բազմակերպ զգիրս գիմաց յարդարեաց 'ի նկարս, խոտորեալ յառաջնոցն 'ի միօրինակ և 'ի տաղտկատեսիլ ձևոյ[2]. և նոյն ինքն նախ զնկարս կանայիս գեղեցկացոյց, զգեցուցեալ նոցա նուրբս և պայծառս։ Պիւցաղունք 'ի նկարս նորա բերեն 'ի դէմս զտիպս բարոյականին գեղոյ, որ խորագոյնս 'ի միտս նկարչին գոյր տպաւորեալ[3]։ Լաւ ոչ այնու ինչ եպերելի է, զի զաստիՀանս գունոցն չկարաց քաջ զանազանել[4]. քանզի այս արուեստին դեռ ևս տղայութեանն էր թերութիւն։

1 Պլին. գիրք ԼԵ. գլ. 8. հա. 2. էջ 690։ Պաւս. գիրք Ե. գլ. 11. էջ 402։

2 Պլին. անդ գլ. 9. էջ 691։ Ցիշ. բանաս. հա. 35. էջ 194 և 271։

3 Արիստոտ. յդ. հաս. գիրք Ը. գլ. 5. հա. 2. էջ 455. յդ. քերթ. գլ. 2. հա. 2. էջ 653։

4 Կուինտ. գիրք ԺԲ. գլ. 10. էջ 743։

Պողոդոր ըստ այսմ մասին ելից զթերին Պողիգնոտեայ, զստուերը ընդ լուսոյ քաջ բարեխառնեալ. զոր ասպա Օեւքսիս լացոյց ըզ գիւտս նորին։ Բայց Պողոդոր 'ի հնարելն ապահովել իւր զփառս, ասոխին փառացն եղև վկայ. զի այսպէս 'ի քերթուածեանն իւրում յայտ արարեալ ասէ.

Զանծանօթին գաղանիս բաշխման ըստուերին
Եմ իսկ գլուխ, և զայն յինէն այլք բարձին.
Եւ է արուեստն այժմ 'ի Զեւքսեայ 'ի ձեռին։։

Օեւքսիս բնականին հետազօտութեամբ[2] աւարտեր զթերին նկարուցն իւրոց[3], որ զշրջտեին զաչս գեղոցին։ Ի Պենելոպայ նկարագործ պատկերին՝ բարը և նկարագիր տիկնոջն Թուին ակներև 'ի նմանէ 'ի տեսիլ ածեալ[4]. բայց սակայն 'ի մասին՝ յորում Պողիգնոտ գերազանցեաց, սա թերի քան զնա գտաւ[5]։

Օեւքսիս գեղեցկութեամբ ներկուածոյն Ճեպեցոյց զզարգացումն արուեստին, իսկ ասոխ նորա Պարրաս կենդանատիպ և Ճշգրիտ գծագրութեամբ[6]։ Գաւեալաւ նա 'ի մասին համե-

1 Պլուտ. յը. փառ. Ալթեն. հտ. 2. էջ 346։ Պլին. գիրք ԼԵ. գլ. 9. էջ 691։ Յիշատ. բանաս. հտ. 25. էջ 195։

2 Կիկ. յը. գիւտ. գիրք Բ. գլ. 1. հտ. 1. էջ 75։ Դիոն. ասիկ. նախն. մատեն. գլ. 1. հտ. 5. էջ 417։ Պլին. անդ։

3 Պլուտ. 'ի Պերիկլ. հտ. 1. էջ 159։

4 Պլին անդ։

5 Արիստոտ. յը. քերթ. գլ. 6. հտ. 2. էջ 657։

6 Կուինտ. գիրք ԺԲ. գլ. 10. էջ 744։ Պլին. անդ։

մատուռեան. և զպատկերս դից և զդիւցազանց այնպէս ըստ պատշաճ չափուց յօրինեալ, զի որք յետ նորա կացին Ճարտարք՝ ըստ նմին օրինակի նկարագրէին զնոսա, վասն որոյ և օրէնսդիր նկարչաց կոչեցաւ [1]։ Պարձեալ և այլովք մասամբք եղև զարմանալի. զի նա ինքն արարն նախ զկերպարանս դիմաց կենդանիս սիրայինս, և զշրթունս վայելուչս, և զգիսակս վարսից թեթև ծածանեալս [2]։

Օ հետ երկոցունց Ճարտարացս կացին Տիմանթէս, որոյ նկարք առաւել քան զերևելոն տան իմանալ, ծայրագոյն 'ի դէմս ածեալ արուեստս, և հանճար գերածայր [3]. Պամփիղ, որ վաստակօքն իւրովք մեծարոյ եղև յոյժ, և բազում ուրեք 'ի քաղաքս Յունաց վարժեաբս նկարչութեան ետ հաստատել, և հրովարտակ առնել զի մի ոք 'ի ստրկաց առցի 'ի վարժս [4]. և Յուփրանոր յամենայն մասունս արուեստին Ճարտար, յամենայնի յար և նման քաջութիւն [5]։ Յղե իսկ առ ոմանս 'ի Ճարտարաց աստի, և ապա ազգ եղև ինձ՝ զի մի ոմն 'ի համբակաց նոցա Պլեղէս, զոր առ Պամփիղեայ տեսեալ էր իմ, գերազանցէր քան զամենեսին։

Դանդակագործութեանն զարգացումն ոչ

1 Կուինտ. գիրք ԺԲ. գլ. 10. էջ 744։
2 Պլին. գիրք ԼԵ. գլ. 9. էջ 691։ Ցիշ. բանաս. հտ. 19. էջ 266. հտ. 25. էջ 163։
3 Պլին. անդ էջ 694։
4 Նոյն անդ։
5 Նոյն անդ գլ. 11. էջ 703։

ինչ նուազքան զնկարչութեանն գոյր զարմանալի. որում վկայք առաջի կան Փիդիաս, Պոլիկլէտ, Պզկամենէս, Ակոպաս և Պրաքսիտելէս, այլովքն հանդերձ։ Բ. Առաջինն 'ի նոցանէ առ Պերիկղեաւ եկաց, իսկ ընդ յետանումն եղեն իսկ ինձ իրք։ Յամն սակաւ քան զհարիւր յայն ծագ բարձրութեան արուեստս այս աճեաւ, զի հարկ էր նախնեաց ամաչել արդ ընդ վաստակս և ընդ համբաւ իւրեանց՝։

Եթէ յազգի ազգի տեսակս յայսոսիկ հանճարոյ յաւելուցումք և զորս յառաջն կացին, յաւուրցն Պերիկղեայ մինչև յերիցագոյնն յիմաստասէրս Եղլադայ 'ի Թաղէս 'ի վեր կոյս ընթացեալ, գտանեմք զմարդկան միտս առաւել զարգացեալ յամն երկերիւր քան 'ի բազմահոլով դարսն առաջինս։ Որ ձեռն հզօր տըպաւորեաց 'ի նա յանկարծ և պահէ ցարդ զայս արդասաւոր և արագ յառաջխաղացութիւն։

Թուի իմն ընդ ժամանակս ժամանակս, կամ մանաւանդ 'ի դարս իւրաքանչիւր, բաշխել բնութեան 'ի մարդիկ ազգս ինչ հանճարոյ. այլ այսոքիկ թաղեալ մնան, եթէ ոչ դէպք օգնեսցեն առ 'ի յայտ ածել զնոսա. և եթէ միւսում ու�եք դէպ լնցի բանալ իւր նոր ասպարէզ, բնաւք առ հասարակ զարթնուն որպէս 'ի խոր թմբրութենէ ընդոստուցեալք։ Որ նախայարձակք յասպարէզ անդր դիմեն, բաժա-

1 Պլատ. Յիպպ. հատ. 3. էջ 282։

նեն յիւրեանս՝ եթէ այսպէս հաճոյ ումեք թուեսցի ասել՝ զգաւառս նորոյ տէրութեն. իսկ յաջորդք նոցա վաստակին 'ի բարգաւաճեցուցանել զայնս, և 'ի կարգել նոցա օրէնս։ Այլ հանճարոյ և մտաց գոյ եզը որպէս աշխարհակալութեանց և տարաշխարհիկ ուղևորութեանց։ Գիւտք կարևորաց և մեծամեծ իրաց անմահացուցանեն զգտողս նոցին և ըզկատարողս. իսկ յետ նոցա հանճարեղ մարդկան ոչ և ս զխրախոյսն զայն առաջի ունելով, 'ի նոցին յաջողութեանցն վերջացեալք՝ գոգցես իմն ընդ սինլքոր բազմութեանն գրին 'ի համար։

Ի հանրականս յայս հարկ է և ըստմասնեայս յաւելուլ պատճառս բազումս։ Ի սկզբան մեծի յեղափոխութեանն, զորմէ ճառս է, իմաստասէրն Փերեկիդէս սկիւռացի, և Կադմոս և Լկատէոս միլետացի վիպագիրք մուծին զհետևակ բան՝ դիպողագոյն քան զչափաբերականն յարտայայտել զխորհուրդս մտաց։ Զայնու ժամանակաւ Թաղէս և Պիթագոր և այլք 'ի Յունաց աճին և նոքա Լգիպտոսէ և 'ի Փիկողմանց արևելից զգիտութիւնս, և աւանդեցին զայնոսիկ աշակերտացն իւրեանց։ Լու մինչ դեռ գիտութիւնք ծաղկէին լուսեայն 'ի վարժարանս կառուցեալս 'ի Սիկիլիա և Լիտալիա,

1 Պլին. գիրք Ե. գլ. 29. Սոր. գիրք Ա. էջ 18։ Սուիդ. հա. 1. էջ 278. Ի. էջ 417։ 'Ի բառն Φερεκύδ.

և առաւել ևս 'ի ծովեզերս Պիսոյ, դէպք 'ի բա-
ղի յաջողէին զարգանալ 'ի նմին ժամանակի և
արուեստից։

Որք երևակայութեան մտաց կցորդ են ա-
ղուեստք, նոքիմբք առաւելապէս զարդարին
առ Հելլէնս տօնք և տաճարք, և նոքօք հրա-
չակին արութիւնք ազգաց և մրցանակք գու-
պարայաղթ նահատակաց 'ի տօնս խաղուց Ել-
լադայ։ Մատակարարք փառացն, նոքին և փա-
ռակիցք, յաճախագոյնս քան զոր յառաջն գը-
տին դէպս հրահանգաց արուեստին զհետ պա-
տերազմին Պարսից։

Այլադա ժամանակս ինչ վայելեալ 'ի յաջո-
ղութեան և հզօրացեալ', պառակտեցաւ ա-
պա 'ի հերձուածս՝ որք նորանչան ինն փոյթ ա-
ծին ամենեցուն։ Խոնեցան պատերազմունք
և յաղթութիւնք, փարթամութիւն և շուք,
ձեռագէտք և կերտուածք։ Տօնք պայծառա-
ցան, յաճախեցին տեսարանք, նկարակերտ յօ-
բինեցան որմք մեհենից, և Դեղփիս և Ողիմ-
պոս շուրջանակի անդրեաք զարդարեցան։ Կրօ-
նասիրութիւն, կամ մանաւանդ մտափառու-
թիւն 'ի պարծանս հայրենեաց, զհետ փոքու
իրիք յաղթանակի մատուցանէր հարկս ճար-
տարութեան, զոր և սահմանադրութիւն ինն
օգտակար յոյժ 'ի զարգացումն արուեստից խը-
րախուսէր։ Զ. Զի եթէ զմի 'ի քաղաքաց կամ

[1] Դիոդ. գիրք ԺԲ. էջ 72։

յաշխարհամուտ չինուածոց դէպ լինէր չքեզազարդել, յոգունք 'ի Հարտարաց 'ի նոյն պարապեալք 'ի գործ՝ ածէին զվաստակս իւրեանց և զփորձ 'ի տեսիլ. և յաղթէր զրում ումեր բազմագոյն վարկք տային զնախապատուութիւն[1]։ Փառաւորագոյն ևս մրցանակք նկարչութեան և երաժշտութեան կարգեցան 'ի Դեղփիս, 'ի Կորնթոս, յԱթէնս և յայլ տեղիս. և քաղաքք Լակեդայ, որոց զինական և ևթմրցութիւնս տեսեալէր, տեսին զմրցանս հանՀարոյ. և բազմագոյնք 'ի նոցանէ կերպարանափոխ եղեն ըստ օրինակի քաղաքին աթենացւոց, որ գեր 'ի վերոյ քան զամենեսին պայծառացաւ մեծագործութեամբք։

Պերիկղէս առ 'ի զբօսացուցանել զամբոխն[2] որ 'ի ժամանակի խաղաղութեան խիթալի էր աւագանւոյն, խորհեցաւ ծախել 'ի պայծառութիւն քաղաքին կիլիս բազումս արծաթոյ 'ի հարկացն՝ զոր տային ազգք նիզակակիցք վասն պատերազմին ընդդէմ Պարսից, և որք մինչև ցայսժամ 'ի միջնաբերդին գանձեալ կային 'ի պահեստի։ Լցոյց յատեանի զի գանձքն այնոքիկ յարգեալք 'ի ծախս՝ առատութիւն առժամայն պատրաստեին ազգին, և առ յապայ փառս յաւէժական[3]։ Նոյնհետայն գործարանք և

1 Պլին. գիրք Լ.Ջ. գլ. 5. էջ 158։
2 Պլուտ. 'ի Պերիկղ. հա. 1.
3 Նոյն անդ էջ 159։

կրպակքն հրապարակքն եղեն բազմութեամբ ձեռագիտաց և գործաւորաց, որոց վերակացու վաստակոցն կային Ճարտարապետք խմաստունք, և Փիդիաս տայր զձև նոցա և զօրինակ։ Այս ձեռակերտք՝ յորս մեծազօր պետութեանց ոչ էր իշխելի ձեռնարկել և որք երկայն ժամանակաց թուէին գործք, յանկ ելեալ կատարեցան 'ի փոքու ուրեք պետութեան, 'ի սակաւ ամս, և ընդ առաջնորդութեամբ միոյ ուրուք, անհնարին երագութենն ոչ ինչ ստնանելով գեղոյ և ամրութեան նոցա։ Այս գումար ծախուցն միահամուռ եղեն քանքարք իբր երեք հազար '*։

Մինչ գեռ շինուածքն կառուցանէին, ասոնք Պերիկղէայ ամբաստան եղեն զնմանէ՝ իբր թէ ընդվայրաճախ վատներ զինչս աշխարհին։ Այսուհարց զնոսա Պերիկղէս 'ի քաղաքաժողով ատենի, և ասէ. Մեծ ինչ թուիցին ձեզ ծախքդ։ Այս նոքա ասեն. Այս կարի խակ մեծ։ Այս Պերիկղէս ասէ. Ցիմ վերայ եղիցին ապա ծախքդ ամենայն, այլ զիմ անուն յարձանագիրս անդ գրոշմեցից։ Ցայնժամ ամբոխն աղաղակեաց. Մի՛ այդպէս, այլ՝ 'ի հասարակաց գանձուց տացին առանց խնայելոյ ծախքն ամենայն '։

Էխորժակք արուեստից մնին տակաւ 'ի քա-

1 Թուկ. գիրք Բ. գլ. 13։ 2 Պլուտ. 'ի Պերիկղ. հա. 1.
* Ի վերջ կոյս մատենիս 'ի էջ 160։
տեղեկութիւնն. Թիւ Ը։

զաբացիս և խղճնկարուց և անզգեաց 'ի Հոխտ։ Եւ քանզի զզօրութիւն պետութեան ըստ ե-
ղեալի մեծագործութեանցն գատի ամբոխն, նմին իբրի մեծարեալ պատուէին Հարտարքն՝ որք
քաջայանդուգն ձեռակերտօքն նշանաւորք լի-
նէին։ Կէսք 'ի նոցանէ ձրի վաստակէին աշ-
խարհին, վասն որոյ պատիւք տուան նոցա յաշ-
խարհէն[1]. և այլք մեծացան վարժապետելով[2],
կամ՝ տուրս յայնցանէ առնելով՝ որք 'ի գործա-
ւանս նոցա 'ի տեսիլ հրաշակերտիցն գային[3]։
Եւ ոմանք 'ի նոցանէ գրուատեօք բազմու-
թեան ամբարհաւաճեալք, ըղձալի եւս վարձս
վաստակոցն զկարծիս Հարտարութեան իւ-
բեանց վարկանէին, և զհարկ մեծարանացն՝
զոր անձամբ անձին մատուցանէին, մինչև ա-
ռանց ամօթոյ արձանագրել 'ի նկարս իւրեանց,
թէ գիւրագոյն էր սոգտանել քան թէ նմա-
նել այնց[4]։ Իսկ Օեւքսեայ այնքան Հոխտա-
ցեալ, զի 'ի վերջին ամն կենաց իւրոց ձրի ըղ-
նկարս իւր բաշխեր իւրք անգենս[5]։ Եւ Պար-
բասայ այնպիսի բարձր ունելով կարծիս զանձ-
նէ, զի յերկնուստ 'ի գիցն պարծէր առեալ
զծնունդ[6]. և զարմացմամբ ամենեցուն ընդ

1 Պլին. գիրք ԼԷ. գլ. 9. էջ 691։ Պուլգ. և Հարպոկ. 'ի բառն Πολύγν.

2 Պլին. անդ էջ 694։

3 Եղիան. զան. պատ. գիրք Դ. գլ. 12։

4 Պլին. անդ էջ 691։ Պուտ. յդ. փառ. Ամեն. հա. 2. էջ 346։

5 Պլին. անդ։

6 Նոյն անդ էջ 694։

վաստակոնոցա՝ յաւելուին յարբեցութիւն ամ-
բարհաւաճութեան։

Բայց գիտութիւնք թէպէտ և վաղ ի-ին
հանգոյն արուեստից բարգաւաճեալ էին առ
Յոյնս, այլ մարթ է ասել՝ զի նոքա բաց 'ի
քերթողականէն զայլսն ոչ յոյժ խնամէին։
Մեծարել մեծարէին զձարտարիսօսութիւն և
զվիպասանութիւն, զի մին 'ի բաղխոհութիւն
օգտին իւրեանց կարևոր էր, և միւսն մնա-
փառութեան նոցա պատկանաւոր. իսկ այլ
մասունք բանասիրականին առաւել յարգա-
սաւորութենէ երկրին քան 'ի ինամոց պետու-
թեանն բարգաւաճեցին առ նոսա։ Ի բա-
զում քաղաքս նոցա էին վարժոցք նահատա-
կաց, և 'ի գանձուց աշխարհին կարգեալ նո-
ցա ռոճիկ և դարման. իսկ վարժարանք հրա-
հանգաց մտաց կայունք ոչ ուրեք։ Ընագան
ուրեմն համարողականին ուսումն և երկրա-
չափութիւն համարեցան առ նոսա ընդ մա-
սունս բարւոք դաստիարակութեան. և ոչ բա-
զում ինչ ժամանակք են, զի յախտարակաց
գիտութիւնս սկսան ընդելանել։

Յաւուրս Պերիկղեայ հետազօտութիւնք
իմաստասիրականք տարագրեցան խստիւ յա-
թենացւոց[1]. և ըղձապատում կիւսիցն երբեք
երբեք մեծարեալ պատուով 'ի Պրիտանիան[2],

[1] Պլուտ. 'ի Պերիկղ. հտ. 1. էջ 169։
[2] Պարսպ. Արիստոտ. Յանման տող 338։

իսկ իմաստասէրքն հաղիւ իշխէին յունկն հաւատարիմ աշակերտացն վարդապետել։ Այլ ոչ առ այլ ազգս Յունաց առաւել ինչ ընդունելի էին, այլ ամենայն ուրեք ատելի և արհամարհեալ. և ոչ այլ ազգ 'ի սրտմտութենէ ձախողակի նախանձուն խուսել կարէին, բայց բանտարգել առնելով զՀմարտութիւն. և ոչ 'ի մոլեգնութենէ մախանաց զերծանել, բայց կամաւոր և բռնազբօս աղքատութեամբ։ Այլ զարդիս իսկ թեպետ և անխափանք, այլ շուրջանակի պատեալ պաշարեալ պահին 'ի գիտողաց. որպէս զի 'ի համարձակել իմաստասիրութեան առ փոքր մի, զնոյն կրէ թշնամանս։

Պարթէ յայսմ ամենայնէ 'ի միտ առնուլ, զի Հելլէնք յամենայն ժամանակի առաւել զայն ստեղն հանՀարոյ մեծարեցին, որ առ 'ի բերկրանս նոցա պատկանէր քան 'ի գիտութիւն. և դարձեալ զի 'ի զարդացումն գիտութեանց առաւել օգնեցին պատՀառք բնականք քան բարոյականք, իսկ 'ի զարգացումն արուեստից՝ առաւել քան զբնականս բարոյականք. և երրորդ անգամ՝ զի 'ի զուր ուրեմն պարծին ամենացիք ծնողք գոլ կամ դայեակք արուեստից և գիտութեանց[1], և ընդունայն մնափառին լուսաՀեմ հորդեալ ուղղ յանմահութիւն[2], և ոչ բարեմասին 'ի բնէ գտանին

[1] Խոկ. Ներբ. հա. 1. էջ 138։ Պլատ. հա. 2. էջ 345։ [2] Ամենեն. խրախՀ. գիտնոց գիրք Զ. գլ. 13. էջ 250։

հասեալ քան զայլ ազգինս Յունաց։ Նոքա ըզ-թատերականն հանձարեցին բանաստեղծու-թիւն, և ճարտարախօսք երևելիք կացին 'ի նոցանէ, և վիպագիրք ոմանք երկու և կամ երեք, և սակաւք ոմանք նկարիչք և քանդա-կագործք և ճարտարապետք քաջք։ Իսկ յայլ մասունս հանձարոյ գրեթէ առ հասարակ հոյլս իմն արանց ականաւորաց այլ ազգք Նե-լադայ հանեն 'ի ճակատ. և արդեօք ատի-կատան երկիր առաւել քերրի է հանձարոյ, թէ Յոնիա և Ակիլիա, չունիմ ասել։

Ազգէնք օթևանք են մանաւանդ հանձա-րոյ քան խանձարուրք. մեծութիւնք օգնեն նմա առ 'ի կիր արկանել զայն, և գիտու-թիւնք առ 'ի յարգել։ Պայծառութիւն տօ-նից նորա, հեզութիւն օրինաց, բազմութիւն և բարեբարոյ բնաւորութիւն բնակչացն բա-ւականք են 'ի բնակացուցանել առ իւր զփա-ռասէր մարդիկ, և որք ասպարէզս խնդրեն և ոսոխս և մարտադիրս։

Պերիկղէս փառաւք անուանն ածէր զնոսա զիւրև, Աքսասիա ողբաւոյ շրթանցն. և երկա-քանչիւր քաջախոհ ընտրութեամբն։ Ի գոյր Աքսասիայ զուգական, և ոչ այնչափ ընդ գեղ նորա քան ընդ ճարտարիսօսութիւն և ընդ խորագնին և չքնաղ միտս նորա զարմանային Հելլէնք։ Սոկրատ, Աղկիբիադ, արք անուա-նիք գիտնաւորք և արուեստաւորք, և ընտիրք

աթենացւոց արք և կանայք ժողովէին առ կինն այն զարմանալի, որ ընդ ամենեսին խօսեր 'ի բնիկ բարբառ նոցա զամենեցուն յինքն ձգելով զաչս։

Կումբս այս եղև տիպ և օրինակ առ յապայ գումարելոց կաճառաց. սեր գիտութեանց և արուեստից և զբօսանաց, որ առ իրեարս ձգեն զմարդիկ, և խառնեալ կցորդեն զպետութիւնս ընդ միմեանս, եցոյց զյարգ ընտրութեան 'ի բացատրութիւնս և 'ի ձեւս բանից։ Որք 'ի բնէ բարեհաճոյքն վիճակեալք էին, հաճոյք արդեամբք ջանացեալ լինել՝ յաւելին ջանիւքն շնորհս 'ի բնական բարեմասնութիւնն. և վաղ ազնուական ակմբին զանազանեալ գտաւ բարբառ։ Այս քանզի բազում ինչ պատշաճից մասունք են 'ի սմա սահմանեալք 'ի կամաց, և խորազնին և խաղաղ մտաց պէտք են ակմբելոցն, ոչ սակաւ ժամանակի կարօտ գտաւ անխառն ընտրութիւն նորա, և չեղև նմա հնար մտանել յամենայն կարգս մարդկան։ Այս բարեմարդութիւն, որ երբեմն իւրաքանչիւր մեծարանացն էր արտայայտութիւն, փոխեցաւ տակաւ 'ի կեղծաւորութիւն. և ամենայն ոք շռայլէ ըզպատիւ, զի զառաւելն ընկալցի. և մեծարէ զանձնասիրութիւն այլոց, զի մի զիւրն ոք վերդովեսցէ։

ԿԱՏԱՐԵՑԱԼ
ՆԱԽԱԲԱՆՈՒԹ. ԳՐՈՑՍ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԿՐՏՍԵՐՈՅՆ ԱՆԱՐՔԱՐՍԼԱՅ

ՅԵՂԱՐԴԸ

Ի ՄԷՋ ԿՈՑՍ ԴԱՐՈՒՆ ՀՈՐՐՈՐԴԻ

ՆԱԽ ՔԱՆ ՀԹՈՒԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՓՐԿՉԻՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԿՐՏՍԼԵՐՈՅՆ ԸՆԴՌԸՐՍԼԵԱՅ

ՅԵՎՅԸԴԸ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Զու Ամաքարսեայ 'ի Սկիւթիոյ։ — Զսաւրոսեանն Քէքաս՝ նէ * և զեւքսինեանն Պոնտոսէ ** բանք։ — Որ ինչ իբք Հելլադա յառմանէ քաղաքին աթենացւոց, ըրէքարիւր չորիւք ամաք նախ քան զգալուսա փրկչին, մինչև ցաւուրս ուղևորութեանն Ամաքարսեայ։ — ԶԹրակեանն Վոսփորէ և հասանել Նորա 'ի Բիւզանդիոն ***։

Ընդ՝ԱՌԱՐՍԻՍ, ազգաւ սկիւթացի, Ցոքսարեայ որդի, նա է հայր մատենիս. և ուղերձէ զսա բարեկամաց իւրոց, սկիզբն պատմութեան իւրոյ զպատճառս ուղևորութեանն առնելով։

Իմաստունն Ամաքարսիս գերահռչակեալն 'ի Յոյնս, և որ զայնպիսի դժպատեհս յիւրոց

* Խրիմ։
** Սեաւ ծով։
*** Կոստանդինուպոլիս։

անտի 'ի սկիւթացւոցն կրեաց, նախնի իմ է՝ որպէս ամենեցունդ է յայտ։ Բռնանագրութիւնք կենաց նորա և մահուն անդստին 'ի մատաղ տիոց մեծարոյ արարին ինձ զազգն զայն՝ որ պատուեաց զառաքինութիւնս նորա, և սարտուցին զիս յազգէն՝ որ խոտեացն զնոսա։

Եւ յաւել սարտուցանել զիս 'ի նմանէ և ևս ստրուկ ոմն հելլէն 'ի սկիւթական կողմանս սահեալ նժդեհութեամբ, որ եղև ինձ ծառայ արծաթագին։ Օ՛ի սա յազնուականագունիցն էր 'ի բնակչաց Ամեքայ՝ որ 'ի Ռիովտիա, և իբր երեսուն և վեց ամաք* յառաջ զհետ երթեալ էր կրտսերոյն Միւրոսի՝ յարշաւեալ նորա ընդդէմ եղբօր իւրոյ Արտաշիսի արքային Պարսից։ Եւ գերեալ 'ի միում ուրեք 'ի Ճակատուց՝ զորս հարկեցան Յոյնք մղել 'ի նահանջէն, փոխեաց տեարս բազումս, և ընդ այլ և այլ ազգս 'ի քարշ ածեալ զկապանսն, եհաս ասպա յերկիր բնակութեան իմոյ։

Որչափ առաւել ծանեայ զնա, նոյնչափ ևս առաւել խելամուտ եղէ գերազանցութեան ազգաց բարգաւաճելոց 'ի գիտութիւն քան զայլ ազինս։ Ցիմագենէս, քանզի այս անուն էր թեբացւոյն, պարուրեր յինքն զսիրտ իմ, և յամօթ առնէր զիս գեղով խօսիցն և գերխմաստ գիտութեամբք։ Ճառս արկեալ խօ-

* Ն. Ռ. 400 ամաք։

սէաք ընդ նմա զերացն Յունաց, զսովորութեանց նոցա, զկարգաց տեսչութեան, զգիտութեաց, զարուեստից, զտնից նոցա և զտեսարանաց. հարցանէի զնա, և ունկնդիր լինէի նմա յակնիռս կալով։ Դէռ ևս լցեալ էին ինձ յայնժամ ամք եօթնեւտասն, և եռանդն մտաց երանգս ակնախտիղս 'ի Հոմ նկարսն յաւելեալ։ Մինչև ցայնժամ այլ ինչ չէր իմ տեսեալ, բայց վրանս վաչեայս, և հօտս և նախիրս անդէոց, և անապատս. այլ ոչ ևս հանդուրժեալ խորանաչու անկեաց կենացն՝ զոր վարէի, և խոր տգիտութեանն՝ յոր կաչկանդեալ կայի, եդի 'ի մտի լքանել զերկիրն՝ որ հաղիւ զկարևորս կենաց հայթայթէր, և զաղգ՝ որոյ ոչ այլ ինչ լաւութիւն էր, բայց միայն զի ոչ զամենայն մասունս չարեաց գիտէր։

Զընտիրս ամաց իմոց կեցի Ալեքսադրիայ, Ալեքսիպտոս և 'ի Պարսս. այլ առաւել քան ամենայն ուրեք եղէ Ալեքսադրիայ։ Լաւ տեսի զվերջին աւուրս փառաց նորա, և ոչ մեկնեցայ անտի՝ մինչև տեսի զաղատութիւն նորա շնչասպառ 'ի դաշտին Վերոնեայ։ Այլ յորչափ ժամանակս շրջեցայ ընդ գաւառս նորա, պէտ անձին արարի հաւաքել զամենայն որ ինչ արժանի գիտութեան էր. և յետ այնր Հակատամարտին՝ դարձ արարեալ 'ի Ակիւթս, անդ զամենայն իրս ուղղորութեանն իմոյ գրեցի կարգաւ։ Ստուգապատում ևս յաջողէր ինձ առնել

զամենայն, եթէ նաւն՝ յորում էին մատեանքն իմ՝ չէր կորուսեալ յեւքսինեանն Պոնտոս։

Ա. ՅԼ դուք, զորս յուղևորութեան իմում ծանեայ 'ի Պարսս, ամենք վերհազունք Աբշամ և Փեդիմա, քանի՛ յաձախ 'ի վիպագրէն իմում յուշ ինձ անկանիցիք, և ի՞նչ գեղաձաձանչ տիպք կերպարանաց ձերոց յանդիման լինէին ինձ՝ ուր ուրեք գէպ լինէր նկարագրել զվսեմ լաւութիւն սրտի և մտաց, և ձառել զբարերարութենէ և զշնորհընկալ գոհութենէ։ Ա՛տաեանս այս ձեզ շնորհապարտ գըտանի. զի անդ ըստ մասին զսա շարագրեցի 'ի չքնաղ օթևանին, որ ձեզք գեղեցկագոյն պձնեալ զարդարեր. և թէպէտ հեռի յաշխարհէդ Պարսից զսա կատարեցի, այլ ոչ 'ի բացեայ 'ի ձէնջ. զի յիշատակ աւուրցն՝ յորս եղէ առ ձեզ՝ առ իս է յամենայն ժամ, նոյն և զմնացուած կենաց իմոց սփոփեսցէ։ Ա. ՅԼ և յետ մահուն իմոյ այս և եթէ մնայ ինձ ցանկալի, զի 'ի վերին՝ որ զաձիւն իմ ծածկելոց է՝ արձանագրեալ դրոշմեսցի, ԶԻ ԻՆՁ ԱՐՀԱՄ ԵՒ ՓԵԴԻՄԱ ԵՂԵՆ ԲԱՐԵԿԱՄՔ։

Ի ՎԵՐՋ ԿՈՑՍ առաջնոյ ամին հարիւրորդի չորրորդի ողիմպիադին*, մեկնեցաք 'ի Ակիւթիոյ ընդ Տիմագենեայ, զոր ազատեալ էր իմ զնա 'ի սարկուութենէ։ Լ՚ս անցեալք ընդ

* Ն. Ք. 363 ամք, յամենայն սպրիլի։

լայնալիր անապատս՝ հասաք յեղը Ցանայիս* գետոյ, 'ի տեղի ուր բերանացեալ հասէ նա 'ի ծովալիճն մէջտեան։ Ելնտի մտեալք 'ի նաւ, հասաք 'ի Պանտիկապէ քաղաք կանգնեալ 'ի բլրի՝, մերձ 'ի կիրճն անուանեալ Կիմմերեանն Վոսփոր, որ ցծովալիճն կցորդէ ընդ Եւքսինեանն Պոնտոս։

Քաղաքս այս հատուած 'ի Յունաց երբեմն բնակեալ[2], մայրաքաղաք է այժմ փոքրու գաւառի՝ որ տարածանի մինչև յարևելեան ծովեղը տաւրոսեանն Քերսոնի. և թագաւորեր անդ Լեւկոն յամաց իբր երեսնից[3]։ Լեւկոն էր այր մեծախոհ և արի[4]. որոյ բազում անգամ ցրեալ զգաւաճանութիւն, և յաղթանակեալ էր քաջութեամբն և աջողութեամբ 'ի մարտի[5]։ Ընդև մեզ տեսանել զնա, զի 'ի ժամանակին յայմմիկ դիմեալ գնայր նա պատերազմաւ ընդդէմ արակլացւոց՝ որք յառաջ քան զաւուրս ինչ հասեալ էին բազմութեամբ նաւաց 'ի Խիթանիոյ խուժել յերկիր նորա։ Լեւկոնի զգացեալ զի թուլութեամբ զգէմ ունէին թշնամեաց զօրք իւր, կացոյց զՀետ նոցա գունդ մի սկիւթացի, որպէս զի մի՝ իշխեսցեն յետս ընկրկել վատութեամբ[6]։

* Ցան։
1 Սար. գիրք Դ. էջ 309։
2 Նոյն անդ էջ 310։ Պլին. գիրք Դ. գլ. 12. հա. 1. էջ 218։
3 Դիոդ. գիրք Ժ.Զ. էջ 432։
4 Բրիսիպ. առ Պլուտարք. քեայ յդ. սոպրիկ. հա. 2. էջ 104։
5 Պոլիէն. գիրք Զ. գլ. 9։
6 Նոյն անդ։

Յիշեմ տակաւին զմի 'ի բանից նորա, և տակաւին 'ի յիշելն խմեմ սոսկամ։ Օ՛ի ո՞մանք յաւագանեսցին, որոց համարձակութիւն էր առաջի նորա, քսութեամբ ետուն նմա մերժել 'ի դրանէն զաղուսն 'ի բարեկամաց իւրոց, և ինքեանք մոռին 'ի ժառանգութիւն ընչից և ստացուածոց նոցա։ Իրաղեկ եղև թագաւորն. և մինչ մի ոմն 'ի նոցանէ դարձեալ համարձակեալ չարախօսէր զուսմունէ, ասէ. Լրթ վատ արանց, և հնորհս կալջիր՝ զի կարեւոր են յարքունիս ապիրատք իբրև զքեզ. ապա թէ ոչ՝ այժմ իսկ 'ի մահ մատնեալ էր իմ զքեզ[1]։

Տաւրոսեանն Վերսոն, երկիր բերրի յոյժ ցորենոյ, այն ինչ ընդ խոփ արօրոյն անցեալ՝ բերէ երեսուն ընդ միոյ[2]։ Լաւ է անդ Յունաց վաճառականութիւն մեծ, մինչև հարկ լինել թագաւորին բանալ 'ի Լաոդոսիա* քաղաք անդէն 'ի Պոսփոր՝ նաւահանգիստ 'ի կայս հարիւրոց նաւաց[3]։ Լաւ գային վաճառք ա-թենացւոց բազմութեամբ անդր և 'ի Պանտիկապէ, առանց ինչ տրոց ելի կամ մտի. և աթենացիք փոխանակ բարութեան նորա ըզքաղաքացւոյ կարգ և պատիւ տուեալ էին նմա և որդւոց նորա[4]**։

[1] Աթեն. գիրք Զ. գլ. 16. էջ 257։
[2] Սոր. գիրք Ի. էջ 311։
* Որ այժմ կոչի Կաֆֆա կամ Բէֆիկ։
[3] Դեմոս. 'ի Լեպտին. էջ 546։ Սոր. անդ էջ 309։
[4] Դեմոս. անդ էջ 545։
** Ի յետ կոյս մասանէնս 'ի տեղեկութիւնսն. թիւ Թ։

Լոյս գտաք անդ նաւ մի լեսբացի պատրաստական, և նաւապետին անուն էր Կղէոմեդէս, որ և ընկալաւ զմեզ։ Բայլ մինչ դեռ մնայաք անդէն մեկնելոյ նաւուն, յաճախ 'ի քաղաքն երթեւեկեալ՝ ոչ յագէի 'ի տեսիլ միջնաբերդին և զինարանին, նաւահանգստին և նաւացն, և սարեաց նոցա և կազմածոց։ Լոյս ուր և հասանէին ոտք իմ, մտանէի 'ի տունս, 'ի գործարանս, և 'ի կրպակս. և արտաքոյ քաղաքին ակնկառոյց կայի 'ի գեղ պլըզաւէտ ծառաստանացն, և բազմահունձ անդաստանաց։ Ընդոստանուին զգայութիւնք իմ 'ի տեսիլ նոցա, և աշխոյժք 'ի Ճառս իմ զեղուին. զի ոչ զանխուսլ ինչ լսելեայն 'ի բարեբաստութեանն վայելի, այլ ընդ ամենեսին Ճառս արկեալ խօսի զիրացն։ Լոյս զամենայն, որ ինչ զարմանալի ինձ թուէր, ընթանայի պատմել Ցիմագենեայ՝ որպէս նոր իմն և ընաշխարհիկ իրս զարմանալի. հարցանէի զնա՝ թէ գոյր ուրեք ծով քան զմեծ տեանն մեծ և լայնատարած, և թէ գուցէ քաղաք ընդ տիեզերս գեղեցկագոյն քան զՊանտիկապէ։

Ընդ ամենայն ժամանակս ուղևորութեան իմոյ, մանաւանդ 'ի սկզբանն յաճախ զայսոսիկ կրեի կիրս՝ ուր ուրեք բնութեանն կամ Ճարտարութեան նորանոր արգասիք ընդ առաջ լինէին ինձ։ Իսկ եթէ հոգեշարժ ինչ

դէպ լինէր ինձ տեսանել, 'ի հիացման լեալ՝ ոչ ունէի ժոյժ արտասուաց, և կամ առ յոյժ խնդութեան այլ յայլմէ լինէի, և չկարէր Տէր մագենէս սանձահարել զառաւելութիւնս խնդութեան իմոյ։ Այլ տակաւ նուազեցին յիս զարմանք, և որ առ 'ի նմանէն ներգործէր յիս զուարճութիւնն՝ բարձաւ յինէն. և գիտացի ակամայ, զի ըստ առաւելուլ 'ի փորձ հմտութեան՝ անզգայագոյնք գտանիմք։

Ոչ կարեմ բանիւք յանդիման առնել՝ թէ որպիսի՞ զարմանք կալան զիս յելանելն իմում 'ի կիմմերեանն Պոնտոս տակաւ առաջի իմ ծաւալեր ծոց մեծ և լայնատարդ գրեթէ ամենուստ պատեալ 'ի լերանց, որ մերձ և որ հեռի զծովեղերքն ամբառնան, և ասպնջական գետոց իբր քառասնից՝ որ հաւաքեալ 'ի ջուրց մասին ինչ Գսիոյ և Լիբոպայ, 'ի ծովն անդր անկանին[1]։ Մետասան հազար և հարիւր ասպարէզ ասեն[2] լինել զերկայնութիւն նորա, և երեք հազար երեքարիւր ասպարէզ զընդարձակագոյն լայնութիւն նորա։ Զգգ այլածինք այլաբարդք և այլալեզուք[3] յեզերս նորա բնակեն. և են անդ քաղաքք յաձախաւորք, մանաւանդ զՀարաւային ծովեղերքն, կառուցեալք 'ի մի լետացւոց անտի և 'ի մեգարացւոց և յաթե-

[1] Սար. գիրք Ի. էջ 298։ [3] Ամմիան. Մարկելլ. գիրք
[2] Երոդ. գիրք Դ. գլ. 85։ ԻԹ. գլ. 8։

նացուոց, և բազմագոյնք յերկիր արգաւանդահող և ձեռնտու վաճառականութեան։ Յարևելից կայ Կողքիս, անուանի վանն Աբգեայ նաւորդացն անդր նաւարկութեան, զոր առասպելքն պանծացուցանեն, և որով քաջահմուտք հեռաւոր վայրացն այնոցիկ գտան Հելլէնք։

Գոեռք՝ որ անդր բերանացեալ հոսեն՝ 'ի կարաձմեռն ձմերայնի ծածկեն զմկանունս նորա սառամանեօք[1], և քաղցրախառն զդառնութիւն ջուրցն գործեն. և սիկ առատ և նիւթ ստածիչ զեղեալ 'ի նա, ձգեն անդր ըզբազմութիւն ձկանց 'ի պարարումն[2]։ Գոն և վահանաձուկն, և գրեթէ բնաւ ամենայն սեռք ձկանց անդր դիմեն արկանել ձուս, և աձեն յոյժ և բազմանան 'ի ծովուն՝ առ 'ի չգոյէ անդ գժոխորովային կիտից և նհանգաց[3]։ Այլ և մառախուղ թանձրամած ծածկեն յաճախ զերեսս նորա, և մրրիկք սաստիկք կոծեն զալիսն[4]. նմին իրի պարտ է նաւարկել ընդ այն 'ի ժամանակի, յորում ոչ ստէպ պատահեն նաւաբեկութիւնք[5]։ Ալ յոյժ խորա-

1 Երոդ. առ Մակրոբիոսի. գիրք Է. գլ. 12։ Ցիշ. բանաս. հտ. 32. էջ 640։

2 Աբիսաոտ. պատ. կենդ. գիրք Ը. գլ. 19. հտ. 1. էջ 913։ Շատաէն Ճան. հտ. 1. էջ 107։

3 Աբիսաոտ. անդ գիրք Զ. գլ. 17. հտ. 1. էջ 874։ Սոր. գիրք Է. էջ 320։ Պլին. գիրք Թ. գլ. 15. հտ. 1. էջ 507։ Ամմիան. Մարկ. գիրք ԻԲ. գլ. 8. էջ 318։

4 Ցիշ. բանաս. հտ. 32. էջ 639։ Շատ. Ճան. հտ. 1. էջ 92։

5 Թուռնէֆ. Ճան. հտ. 2. թղթ. 16։

յատակ է ծովն[1], բայց միայն յարևելեան կողմանն՝ ուր անդնդախորք զՀիմունս նորա եդ բնութիւնն, և ոչ գունդք 'ի թափս նորա հասանեն[2]։

Լուս պարզելով Կղեմոմեդեայ զայս ամենայն, ծրագրէր 'ի տախտակի զշրջապատ ծովուն. և իբրև կատարեաց, ասեմ. Դու ահաւասիկ զաղեղն սկիւթացւոցս յանգէտս նկարեցեր, զի այդ իսկ Ճշգրիտ ձև է նորա[3]. այլ՞ուր անցքն իցեն, ընդ որ եղ և մուտ 'ի ծով այդր գործի։ Լուսնա ասէ ցիս. ԿիրՃ անՃուկ, հանգոյն այնմ՝ ընդ որ անցաքն, կցորդէ զսա ընդ այլ ծովս։

Բայց 'ի կիրՃ անդր ոչ դէպ ուղիղ նաւեցաք, այլ երկուցեալ Կղեմոմեդեայ հեռանալ յափանց՝ առագաստեաց ընդ արևմուտս, և ապա առխթեալ զնաւն արկաք ընդ հարաւ։ Լուս 'ի քերել զափամքն, Ճառս արկեալ խօսէաք զազգացն՝ որ անդ բնակէին. և տեսաք ուրեք ուրեք անդեայս Ճարակաւորս, որք 'ի ծովէզը անդր գիմէին յարբու�ջուրցն՝ որ նոցա ախորժ և ստածիչ ըմպելին էր[4]։ Լուս պատմէին մեզ՝ զի 'ի Ամերայնի յորժամ պաղեալ ձուլի ծովն[5], ձկնորսք կողմանցն տա-

[1] Սար. գիրք Ա. էջ 30։
[2] Արիստոտ. Նշանք օդ. գիրք Ա. գլ. 13. հա. 1. էջ 345 և 346։
[3] Սար. գիրք Բ. էջ 125։ Դիոնիս. Պերիեգետաս տող 157։ Պարապ. անդ։
[4] Արրիան. առ մասեն. արխարհագր. հա. 1. էջ 8։
[5] Թուանդի. Ճան. հա. 2. էջ 130։

զաւարս 'ի վերայ սառամանեացն հարեալ, և ծակս 'ի նմա գործեալ, որսան ընդ ծակտին կարթիւք '։ Այլ ցուցանէին մեզ 'ի հեռուստ զբերան Խորիսթենեայ * գետոյ, և զՀատերայ **, և զայլոց ոմանց 'ի գետոց։ Բազում այն էր՝ զի երեկոթէաք 'ի ցամաքի, և էր՝ զի 'ի նաւին, խարիսխ 'ի ծով արկեալ[2]։

Ի միում աւուրց 'ի պատմել Կղէոմենդեայ զիրս արշաւանաց կրտսերոյն Կիւրոսի, քանզի ընթերցեալ էր նորա զայն, ասէ Տիմագենէս. Այս ուրեմն կարեկցի ընդ աղէտս մեր Աստուած, և այս ոչ սակաւ ափոփանք են վիճակեալս գժնդակ բախտի տեսանելոյ յետ այնորիկ զարև. և որ ձեռն բարերար նկարագրեաց զսյատակերն զայն։ Կղէոմենդէս ասէ. Մի ոմն 'ի զօրավարացն՝ որ զՀոյնս դարձուցին 'ի Հայրենիսն, Քսենոփոն աթենացի։ Տիմագենէս ասէ. Բաւէ, յետ ամաց իբր երեսուն և եօթանց՝ յորմէ հետէ մեկնեցաք 'ի միմեանց՝ այժմ աւասիկ հասանէ ինձ լսել զողջամբ դարձ նորա. յանկարծ եթէ տեսանեմ զնա միւսանգամ, այլ կասկածեմ զի օրհաս մահուն...

Այլ մինչ դեռ բանքն 'ի բերանի կային Տիմագենեայ, ասէ Կղէոմենդէս. Մի ինչ կասկածեր, տակաւին կենդանի է նա։ Տիմագե-

1 Արիստոտ. Նշանք օդ. գիրք Ա. գլ. 12. հա. 1. էջ 543։

* Որ այժմ կոչի Ցնեբեր։

** Դանուբ գետ։

2 Դեմոս. 'ի Պոլիկր. էջ 1087։

նէս ասէ. ( )ՐՀՆԵԱԼ ԷՆ ԴԻՔ, ԵԹԷ տակաւին կենդանի է՝ ընկալցի զգրկախառն համբոյր միոյ 'ի զինուորացն իւրոց և 'ի բարեկամաց, զոր 'ի բազում նուագս կեցոյց 'ի մահուանէ. նա արդ մեծարեալ յոյժ ի՝ցէ յաթենացւոց։ Կղէոմեդէս ասէ. Ա՛յա աւանիկ յաքսորս կայ վասն համախոհ սպարտացւոցն Թուեղոյ[1]։ Տիմագենէս ասէ. Ա՛յլ և յաքսորս զամենեցուն յինքն ձգեսցէ զաչս։ Կղէոմեդէս ասէ. Ա՛յդպէս, այլ ամենեքին Յպամինոնդ կան ակնկառոյց 'ի զօրավարն Թեբացի։ Տիմագենէս ասէ. Յեպամինոնդ, և քանի՞ ամք են նորա, և ո՞ր որդի է։ Կղէոմեդէս ասէ. Ի՝ցեն նորա արդ ամք իբր յիսուն, և է հայր նորա Պողիմնիս, և եղբայր նորա Կափիսիաս[2]։ Յա՛ Տիմագենէս խնդութեամբ ասէ. Ա՛յոն ինքն է, Ճանաչեմ զնա 'ի մանկութենէ, և դեռ յաչս իմ է կերպարան նորա. կցորդութիւն արեան յայնմ ժամանակէ վառեաց 'ի մեզ սէր։ Ա՜մ՝ օք ինչ կրտսերագոյն է նա քան զիս. և դաս տիարակեցաւ նա յանընչասիրութիւն, և 'ի սէր առաքինութեան. ոչ ոք արագագոյն քան զնա զարգացաւ 'ի հրահանգս մարմնոյ և մըտաց, զի ոչ բաւէին ուսուցիչք զուսումնասիրութեանն նորա ընուլ զագահութիւն։ Յի-

1 Դիոդ. լայ. 'ի Քսենոփ. գիրք Բ. յօդ. 51։

2 Պլուտ. յղ. գիւին Սոկր.

հա. 2. էջ 576 և 579։ Նեպ. Յեպամ. գլ. 1։

չեմ իսկ, զի չկարէաք անջատել զնա 'ի կենակցութենէ Լիւսեայ դժնեայ և խստակրօն պիւթագորականի՝։ Զև և ես էին Լպամինոնդայ ամբ երեքտասան՝ յորժամ զինուորեցայ ես Պիւրոսի. այլ անդստին նշողէր 'ի նմա նկարագիր առն մեծի, և ամենեքեան ակն ունէին՝ զի գեր 'ի վերոյ ամենեցուն հասանէր նմա անցանել կալ՝։ Վերեա ժուութեանս. և լցաւ գեղեցիկ ակնկալութիւն նոցա։

Կղեոմենէս ասէ. Բարձրացոյց նա զաղդիւր, և արուեստամբքն իւրովք նախիշխան կացոյց զնա Յունադա։ Յայնժամ Տիմագենեայ ամբարձեալ զձայն իւր, ասէ. Ովթեբէ, հայրենիք իմ, ո՞ տղայութեանս իմոյ երանաւէտ օթեւան. իսկ դու երանելի ես, Լպամինոնդ...։ Բ. յլ մինչ դեռ նա զայս ասէր, հիացումն կալաւ զնա յանկարծ, և լռեաց։ Յայնժամ ասեմ. Ո՜հ, կարի իսկ արժանի է սիրոյ որ այսպէս խանդաղատական գորովի 'ի սեր հայրենեաց։ Նա անկեալ զպարանոցաւ նորա, ասեմ. Սիրեցեալդ իմ Տիմագենէս, դու թէ այսքան սիրես զվայրսն՝ ուր դէպք եղուն ծընանել քեզ, ո՞րչափ ևս առաւել սիրիցես զբարեկամս քո՝ զորս դու քեզն ընտրեցեր։ Իսկ նորա կալեալ զձեռանէ իմմէ, ասէ ցիս. Յաճախ խօսէի ընդ քեզ զանմեղկելի հայրե-

1 Ղեպ. յԻպամ. գլ. 2։ պատ. գիրք Գ. գլ. 17։ Պլուտ. յՊ. գիրն Սոկր. հատ. 2 Ղեպ. անդ։ 2. էջ 585։ Եղիան. զան.

նասիրութենէ Հելլենացս, և թերևս դը-
ժուարահաւատալի քեզ թուէր. արդ ահա-
ւասիկ արտասուք իմ վկայեն սերտ և անկեղծ
սիրոյ հայրենեացս։ Եւ զայս ասելովք արտա-
սուէր։

Եւ յետ վայրիկ մի լռութեան ետարց դար-
ձեալ ցԱղէքսանդրէս՝ եթէ զիարդ յեղափոխու-
թիւնն այն պանծալի յաջողեցաւ թեբացւոց։
Եւ նա ասէ. Ընկալեալ մանրապատումս առնել
մի ըստ միոջէ զամենայն՝ որ ինչ անցք անցին
յետ մեկնելոյ քո. այլ զկարևորսն և եթէ պատ-
մեցից, որովք մարթի է քեզ 'ի միտ առնուլ
զայժմու կերպարանս իրաց Եգիպտոս։

Դիտիցես իսկ զայն, զի նուաճմամբ քաղա-
քին աթենացւոց * ամենայն պետութիւնք
յունաստանի զրեթէ նուաճեցան 'ի ծառայ-
ութիւն սպարտացւոց, կէսք ստիպեալ յա-
ղերսել զնիզակակցութիւն նոցա, այլք 'ի
յանձն առնուլ զայն. և չքնաղ բարեմասնու-
թիւնք և պայծառ արութիւնք Զեսիղայոսի
արքային սպարտացւոց սպառնային լամ ընդ-
երկարել նոցա ծառայութեանն։ Զեսի-
ղայոս կոչեցեալ յօգնութիւն յոնիացւոց, որք
վասն միաբանութեանն ընդ Կիւրոսի՝ զար-
հուրեին 'ի վրէժխնդրութենէն Աստաշէայ,
եհար 'ի ճակատս բազում զզօրավարս նորա.
և խորհուրդք նորա ընդ յաջողութիւնսն ընդ-

* Ն. Ռ. 404 տեսք։

արձակեալ, մնաբերեր զկնն ածել 'ի Պարս, և մինչև 'ի գահոյս անդր Աքեայ արքային գիմեալ հասանել[1]։

Բայց Արտաշէս 'ի ձեռն գանձուց զբազումս 'ի քաղաքաց Լեռադայ քակեալ 'ի միաբանութենէ սպարտացւոց[2], փարատեցոյց ըստ մրրիկն։ Միաբանեալ ապա Թեբացիք, կորընթացիք, արգիացիք և այլ ևս ազգք կազմեցին հզօր նիզակակցութիւն, և զօրաժողով եղեն 'ի դաշտս Կորմնեայ և Ռիսոլտիոյ[3], և ապա Հակատեցան 'ի պատերազմ ընդ զօրս Աքեսի զայ։ Բայց 'ի ժամանակին յայնմիկ կոչ հասեալ Աքեսիզայոսի 'ի Սպարտայ, հարկ եղև նմա կասել 'ի կէս ասպարիզի քաջութենացն, և դառնալ 'ի հայրենիսն։ Ռեենոփոն, որ պատերազմակիցն եղև ընդ նմա, ասէր՝ թէ զայնպիսի նախձիրս արեան երբէք ուրեք չէր տեսեալ[4]։ Ընդ սպարտացիք կալան զպարծանս յաղթութեան, և Թեբացիք զփառս անսխալ ուստ նահանջման[5]։

Յաղթութեամբն այնուիկ յաւել Սպարտա 'ի զօրութիւն, և անտի դարձեալ դրդեցան

1 Պլուտ. յԱգես. հա. 1. էջ 603։ Նեպ. յԱգես. գլ. 4։
2 Քսեն. պատ. Յունն. գիրք Դ. էջ 513։ Պլուտ. անդ էջ 604։ Նոյն առակ. լսիսն. հա. 2. էջ 211։
* Ն. Ք. 404 ամք։
3 Պլուտ. յԱգես. էջ 605։ Քսեն. յԱգես. էջ 659։
4 Քսեն. պատ. Յունն. գիրք Դ. էջ 513։ Պլուտ. անդ։ Դիոդ. գիրք ԺԴ. էջ 302։

աղմուկք, և գումարեցան անդրէն նիկակակ-
ցութիւնք. զի և 'ի յաղթականացն կէսք պաշ-
տասեալ 'ի պատերազմէ, և այլք դժկամակէին
ընդ փառս Աստուծոյ։ Սոցա առաջնորդ կա-
ւեալ զՆեստորիոս սպարտացի, խորհուրդ
կալան աղերսել զԱրտաշէս 'ի խաղաղութիւն
ընդ ազգս Այլազգայ։ Հասին 'ի մի վայր պատ-
գամաւորք նոցա, և Տրիբազ նախարար Յու-
նիոյ եցոյց նոցա զկամս Արեաց արքային, զայ-
սոսիկ առաջի եդեալ պայմանս խաղաղու-
թեան *.

Խորհուրդ Արտաշէս զարդարութի այսպէս
սահմանել. ամենայն քաղաքաց Յունաց բնա-
կելոց Ասիա, այլ և կղզեացն Կղազոմենեայ և
Կիպրոսի, կալ ընդ իւրով իշխանութեամբն.
իսկ այլոց քաղաքաց Յունաց լինել ազատ,
բաց 'ի կղզեացն Լեմնեայ և Իմբրեայ և Սկիւ-
րոսի, որ աթենացւոց թողեալ լիցին։ Եւ
որք այսմ խաղաղութեան միաբան լիցին, հա-
մագումդ ընդ նոսա թագաւորն գումարեսցէ
զզօրութիւնս իւր. իսկ որք հեստեանն, ընդ-
դէմ նոցա գումարեսցէ '։

Ուխտին խաղաղութեան, որ հանդերձեալ
էր զամենայն կարգս տեսչութեան աշխարհին
Յունաց կերպարանափոխ առնել, սպարտա-

* Ն. Ռ. 387 տմբ։
1 Փաւստ. պատ. Յուն. գիրք Ե. էջ 550. Զ. էջ 602։ Խորհ. Ղազար. խաղաղ. հա. 1. էջ 369։ Պլուտ. առակ. լակոն. հա. 2. էջ 213։

ցուոց յանձն եղև հոգ. այնոցիկ՝ որոց զխորհուրդ խաղաղութեանն երկնեալ, և զպայմանս ուխտին սահմանեալ էին։ Բանզի առաջնոյն խորհէին արկանել անդրէն ընդ լծով Պարսից ըստ Յոյնս սահաբնակս, որոց ազատութեամբն ևեթ այնչափ ճապաղիք եղեն արեան 'ի դարձ հետէ. իսկ երկրորդ պայմանաւն սահպելով զթեբացիս թողուլ ազատ զքաղաքս Ֆիովտիոյ, կամէին տարաբաղձանել զպետութիւնն՝ որ միայն կարող էր խափան լինել խորհրդոց նոցա[1]։ Այսմ իրի թեբացիք և արդիացիք չառին յանձն զպայմանս ուխտին, մինչև հարկեցան բռնի. իսկ այլք անդիմադարձ, և կէսք մտադիւրագոյն յանձն առին զամենայն։

Յետ ոչ բազում ամաց * Վեբիդաս սպարտացի անցեալ զօրօք 'ի Ֆիովտիա, բանակեցաւ հանդէպ քաղաքին թեբացւոց[2]։ Այրկպառակեր յայնժամ Ամեբէ, և առաջնորդք երկպառակութեանն էին երկոքին աւագ իշխանք։ Լեոնտիադէս առաջնորդ համախոհեցն ըստպարտացւոց խրատ ետ Վեբիդայ տիրել միջնաբերդին, և առաջնորդեաց նմա 'ի հնարս գործոյն 'ի ժամանակի խաղաղութեան, մինչ դեռ թեբացիք աներկեան և անկասկած

1 Քսեն. պատ. Յուն. գիրք Ե. էջ 551։ Պլուտ. Յագես. հտ. 1. էջ 608։ Նեպ. 'ի Պելոպ. գլ. 1։

* Ն. Ք. 382 ամաք։

2 Քսեն. անդ էջ 556։ Պլուտ. անդ. Նեպ. անդ։

զՊեմարեայ տօնսն խմբեին[1]։ Օ՛ուխտադրուժ նենգութեանն դժնդակութիւն յաւելին դաւաճանք անգթութեամբքն, զոր ընդ հայրենասէրս 'ի քաղաքացոցն անցուցին. յորոց չորեքարիւր այր փախուցեալ անկան առաթենացիս, բայց Խամենիաս առաջնորդ նոցա շղթայակապ 'ի մահ ածաւ բարբանոք։

Խողոք երարձ ամենայն Լաչադա. սպարտացիք կրնտեալ զատամունս, ինդրեին եթէ ոչ՞ հրամանաւ Փերիդաս զոՀիրն զայն գործեաց[2]։ Ոչոց Աղեսիլայոս ետ պատասխանի, թէ օրէն է զօրավարի գործել ինքնահրաման՝ զոր ինչ օգուտ աշխարհին պահանջէ, և թէ ըստ այսմ օրինաց դատելի է զՓերիդաս։ Լաւ էր յայնժամ Լեւոնտիադէս 'ի Լակեդեմոն, և ցաւոյց զաղմուկն՝ զրգռեալ զսիրտս ամենեցուն ընդդէմ թերացւոց, և եկաց այս բան խորհրդի. սպարտացւոց ունել զդրեակն Փերայ, այլ զՓերիդաս դատապարտել 'ի տուգանս տասն բիւր դրամակշռոց[3]։

Յայնժամ Տիմագենեայ ընդմիջեալ ջանս Կղեոմենեայ, ասէ. Պա՛տ ուրեմն Սպարտա ընդ մեզն հաՀեցաւ 'ի դատապարտել զմեղապարտն[4]. և զինչ յայնժամ Աղեսիլայոս ա-

1 Քսեն. պատ. Յուն. գիրք Է. էջ 557։ Պլուտ. 'ի Պելոպ. հտ. 1. էջ 280։

2 Քսեն. անդ. էջ 557 և 558։ Պլուտ. յԱգես. հտ. 1. էջ 608։

3 Պլուտ. 'ի Պելոպ. հտ. 1. էջ 280։ Դեպ. 'ի Պելոպ. գլ. 1։

4 Պոլիբ. պատ. գիրք Դ. էջ 296։

բար։ Կղեմոմեդես ասէ. Մեմբաստանեցւոյ ձեռնտու նենգաւորին, և իւր զմիհան զայն հայ-թայթեալ 'ի լուսին անօրէնութեան[1]։ Տիմագենէս ասէ. Դու զովէիր զԱգեսիզայոս, այլ արդ ապիրատութիւնդ այդ . . . .

Ինսա վայրիկ մի, յաւել Կղեմոմեդես. գիտասջիր զի Ալսենոփոն, այր լաւ և առաքինի, զարմանայ հանդերձ այսու ամենայնիւ ընդ Աղեսիզայոս, և մեծարէ և սիրէ զնա[2]։ Իմ իսկ 'ի բազում պատերազմունս զինուորեալ է նմա, այլ ոչ ինչ զպատերազմական քաջութենէ նորա ասեմ, զի տեսցես դու բազում ուրեք ընդ Լակեդա և ընդ Աթիա ախոյեանս 'ի նշան յաղթութեանց նորա կանգնեալ[3]։ Բայց զայն կարեմ վկայել, զի զօրք նորա փոխանակէին զանձինս 'ի վերայ նորա[4], և յամենայն նահատակութիւնս նորա և 'ի վտանգս մերձ կային առ նմա։ Յարշաւելն իւրում Աս-սիա՝ զարմացոյց զխուժադուժս անպատճոյճ ձևոփն և մեծախոհութեամբ. և ամենայն իսկ ուրեք զարմանալի եղև անխնամելով զիւրն, սակաւապիտութեամբ, չափոյիւք և հեզութեամբ։ Օ՛ի անտես առնէր զիւր մեծութիւնն, ոչ երկուցեալ թէ գուցէ անմեծարեսցի յայ-

1 Պլուտ. ՅԱգես. հտ. 1. էջ 609։
2 Քսեն. պատ. Յուն. գիրք Ե։ Նոյն ՅԱգես։
3 Խոսկ. Ակթեդ. հտ. 2. էջ 38։
4 Քսեն. ՅԱգես. էջ 667։

լոց. դիւրամատոյց էր ամենեցուն և բարեհամ բոյր, անցասուն և անմնախանձ[1], և յամենայն ժամու պատրաստ 'ի լսել զաղերս։ Խստամիտ սպարտացին ոչ ինչ դժնդակագոյն քան զնա վարէր կենցաղ. և ոչ սիրայօրդոր աթենացւոյն առաւելագոյն նշողէր գեղ մտացն[2]։ Ի լրումն գովութեանց նորա մնայ ինձ յաւելուլ և զայս ինչ, զի նորա 'ի քաջայաղթ աշխարհակալութիւնն Ալ:սիա երիցագոյն խնամք այն եղեն՝ դիւրել զդժբաղդութիւն գերւոյն, և 'արձակել զստրուկս յազատութիւն[3]։

Արիստոտել անդրէն Տիմագենեայ, ասէ. Լաւ բնաւ իսկ այդ ամենայն բարեաց մասունք զի՞նչ են, նաեմացեալք անիրաւութեամբն՝ ուրումսատար եղև ընդդէմ թերացւոց։ Կղեոմեդէս ասէ. Վակայն զարդարութիւն նախամեծար առնէր քան զամենայն առաքինութիւս[4]. ապաքէն անցանէր երբեմն զնովաւ, չկարեմ անբասիր առնել զայն. բայց ոչ երբեք ընդդէմ թշնամեաց, այլ յօգուտ բարեկամաց[5]։ Խստոտրեցաւ նա 'ի բարուց իւրոց յանիրաւէն առ թերացիս, զի զամենայն ինչ օրէն համարէր առ 'ի կործանել զպետութիւնն ոսոխ

1 Պլուտ. ՀՆգես. հտ. 1. էջ 599։
2 Քանն. պատ. Յուն. գիրք Ե. էջ 619։ Պլուտ. անդ էջ 596։
3 Քանն. անդ էջ 654։
4 Պլուտ. առակ. լակոն. հտ. 2. էջ 213։
5 Պլուտ. ՀՆգես. հտ. 1. էջ 598։ Նոյն առակ. լակոն. հտ. 2. էջ 209։

Պարտաց, և կամ զի չկամէր կորուսանել զդէպ ժամանակն խնդրելոյ զվրէժ անիրաւութեանցն կրելոց։ Զուաձեաց նա զամենայն կիրս իւր բաց 'ի միոյն՝ որ տիրէրն նմա, և որ 'ի կողոպուտ այլոցն Հոխացեալ՝ բռնանայր, անիրաւէր, և թշնամանաց երբէք ոչ ներէր. ասեմ իսկ զփառամոլութիւնն, զոր թշնամանեցին ուրեք ուրեք թերացիք[1], մանաւանդ 'ի ցրել զսորհուրդս նորա յորժամ խորհէրն ընկենուլ յաթոռոյ զթագաւորն Պարսից։

Ա՝ Հիոն այն սպարտացւոց եղև սկիզբն վատթարելոյ պետութեան նոցա. բազումք 'ի նիզակակցաց նոցա սարտուցեալ քակեցան 'ի միաբանութենէ նոցա, և յետ երից կամ չորից ամաց* թափեցին թերացիք զլուծ նոցա՝ ընդ որով հեծէին[2]։ Ի՝ արիասիրաբ ոմանք 'ի քաղաքայնոցն 'ի միում գիշերի, 'ի մի վայրկեան ժամանակի սպանին զամենայն կուսակիցս բռնաւորութեանն. և ժողովուրդն դուռմարեալ զհետ դիմագրաւ նահատակութեան նոցա, թափեցին զմիջնաբերդն 'ի ձեռաց սպարտացւոց։ Ընդ առաջնորդս դաւոյն էր Պեղոպիդաս մանուկ՝ մի 'ի վտարանդելոցն՝. որ ազգաւ և Հոխութեամբ բարենշան, նշանա-

1 Քսեն. պատ. Յուն. գիրք Ի. էջ 621։ Պլուտ. յԱգես. հատ. 1. էջ 599։ 2 Քսեն. անդ գիրք Ե. էջ 566։ 3 Պլուտ. 'ի Պելոպ. էջ 281։

* Ն. Ք. 379 կամ 378 տարի։ Նեպ. 'ի Պելոպ. գլ. 2։

ւոր և սնդանօր ցուցաւ 'ի Ճաճանչ արութեցն՝ որովք պայծառացոյց զՀայրենիսն։

Ելեւ գոյր հնար հաշտութեան երկուց ազգացն ընդ միմեանս. ոսուրթիւն Թեբացւոց յորդեալ զեղոյր վասն արիւնահեղ թշնամանացն կրելոց, ոչ ինչ նուազ և սպարտացւոցն՝ որք զարիւնհեղութիւնն զայն գործեցին։ Այլ թէպէտ սոցա բազում պատերազմունք 'ի վերայ կային, սակայն ասպատակ արարին 'ի Ֆիովտիա։ Մնդր Մգեսիզայոս երկիցս՝ խաղացոյց զզօրս իւր, մշտայաղթս ընդ իւրև. և 'ի ձակատու ուրեք 'ի սակաւաձեռն մարտի գէպ լեալ վիրաւորել նմա, Մնտաղկիդաս սպարտացի ասէ ցնա. Մհաւասիկ արգասիք հրահանգացն, զորս ետուր Թեբացւոց։ Դանզի Թեբացիք թողին նմա 'ի սկզբան աւերել զանդաստանս իւրեանց, և սակաւաձեռն և եթ գնդաւ երբէք երբէք 'ի կռիւ եկեալ, յաճախեցին հուպ ընդ հուպ զբախմունս։ Օ՞ր հանապազ ածէր զնոսա Պելոպիդաս 'ի ձակատ. և թէպէտ բուռն և սաստիկ էր բարուք, այլ 'ի յաջողել մարտին՝ կասեցուցանէր զնոսա, և 'ի ձախողելն խրախուսէր, և մարդէր զնոսա տակաւ յարհամարհել զսպարտական զօրութիւնն կամ մանաւանդ զՀամբաւ՝ յորմէ զար-

1 Քսենոփ. պատ. Յուն. գիրք Ե. էջ 572 և 575։ Ցոտուէլ տարեգր. Քսենոփ. յամին 378։

2 Պլուտ. 'ի Պելոպ. էջ 285։

հուրէինն։ Այլ ինքն իսկ սխալանօքն իւրովք և օրինակաւն Աղեսիղայոսի զփորձ առեալ, զքաջագունին 'ի զօրավարս Այլադայ սարա-սէր յանձին զհմտութիւն. և զարդասիս Ճը-գանցն իւրոց և զխելամտութեանց ընկալաւ 'ի միում յառաջիկայ Ճակատուցն։

Զի մինչ դեռ էր նա 'ի Ռիովտիա [1], և դի-մեալ երթայր 'ի Թեբէ [*], պատահեցին նմա սպարտացիք զՃանապարհայն բազմաձեռն յոյժ քան զնա։ Զորս իբրև եռեռս հեծեալ մի թե-բացի յառաջընթաց, զի 'ի դուրս յարձակէին 'ի մերձակայ պահակէն, փութացաւ առ Պե-ղոպիդաս, և գուժելով ասէ. Ատանեցաք 'ի ձեռս թշնամեաց։ Իսկ զօրավարն ասէ. Այլ ընդէր ոչ նոքա 'ի ձեռս մեր։ Մինչև ցայն-ժամ ոչ ուրուք յազգաց խիզախեալ էր ընդդէմ սպարտացւոց հաւասար զօրութեամբ, թող թէ նուազագունիւ։ Բազում նախՃիրք ա-բեան 'ի տեղւոջն գործեցան, և պատերազմն երկուստեք եկաց ընդ երկար անպարտելի։ Սպարտացիք, իբրև անկան նոցա երկոքին զօ-րավարքն և ընտիրք զօրացն, առանց քակելոյ զռազմն՝ Ճանապարհ արարին թշնամւոյն ան-ցանելգնալ համարձակ. բայց Պեղոպիդայ ըզ-բանակետղն կամեցեալ նուաՃել, հարաւ դար-ձեալ ընդ նոսա, և ցան և ցիր զնոսա կացոյց

[1] Պլուտ. 'ի Պեղոպ. էջ 285։ [*] Ն. Ռ. 375 ամք։

ընդ երեսս դաշտին, ցնծացեալ յաղթանակաւն։

Լինդ յեղակարծ յաղթութիւնն պակեան սպարտացիք և ահեղացիք, և բնաւ ամենայն ազգք Լակեդայ. և ծանրատաղտուկք 'ի բազմաղէտ պատերազմէն, խորհուրդ կալան իրաւախոհ լինել։ Ի Սպարտա գումարեցաւ ժողով՝, և անդ Լսպամինոնդ ընդ այլ պատգամաւորս Թեբացւոց յանդիման եղև։

Լոր նա ամաց քառասնից, և մինչև ցայնժամ ծածկեալ էր նորա զկեանս իւր ըստ խրատու իմաստնոց[2]. և ոչ միայն ծածկեալ, այլ և յօգուտ այլոց պատրաստեալ զայն։ Լինդ հասանելն յարքունս՝ անձամբ անձին պէտ արար լընուլ զթերին հրահանգաց իւրոց. և Թէպէտ ոչ մեծատուն էր, զ[illegible] Լուսիս իմաստասէր կալաւառ իւր[3], և յաճախ ընդ նմա կենակցութեամբ խելամուտ եղև վեհ իմաստից պիւթագորականացն զառաքինութենէ. որ ապա առաքինութիւնս այս յամենայն գործս նորա նշողեալ, անմատոյց զնա արար երկիւղն։ Լերթ կրթութեամբ յընթացս ասպարիզին և գօտեմարտիս[4], և մանաւանդ ժուժկալութեամբ,

1 Դեմն. պատ. Յուն. գիրք Զ. էջ 590։

2 Պլուտ. յդ. ծածկ. կենաց հա. 2. էջ 1129։

3 Նոյն յդ. գիւին Սոկր. հա. 2. էջ 585։ Եղիան. զան. պատ. գիրք Գ. գլ. 17։ Դիոդ. գիրք ԺԵ. էջ 356։ Նոյն 'ի ծաղկ. Վաղէս. 246։ Կիկ. յդ. պատշաճ. գիրք Ա. գլ. 44. հա. 3. էջ 223։

4 Նեպ. Լեպամ. գլ. 2։

զառաջնութիւն իւր կազդուրեր. և մերթ ըզ-
բարս մարդկան ուսանէր, և խրատ 'ի գիտնոց
խնդրէր[1], և խոկայր 'ի պարտս զբաւարի և
աւագանւոյ։ Ի հրապարակախօսել իւրում ոչ
անտես առնէր զզարդս արուեստին[2], բայց
պերճախօսութիւն վերհից արանց մեծախոհից
յամենայն ճառս նորա երևէր։ Հանճար նորա,
որով 'ի կարգ հռչակելոց ճարտասանացն դա-
սեցաւ, 'ի ժողովն Սպարտայ՝ որում Ղեսիդեայ-
ս եղև առաջնորդ, անդ նախ պայծառացաւ։

Հրեշտակք ազգաց իւրաքանչիւր առաջի ա-
բարին անդ զիրաւունս և զօգուտ աշխարհին
իւրեանց. յորոց դէպ եղև ինձ լսել զճառս ե-
ղիցս պատգամաւորաց աթենացւոց։ Մի 'ի նո-
ցանէ, որ էր քուրմ Դեմետրեայ, հպարտա-
ցեալ յազգատոհմիւր, և պերճացեալ 'ի գո-
վութիւնս այլոց և յանձնգով պարծանս[3], ա-
ռաջի արար՝ թէ քանի մեծ և կարևոր իրաց
հոգ յանձն եղև յաթենացւոց ազգատոհմին
իւրում; և թէ քանի բարութիւնս ընկալան
ազգք պեղոպոնեսացիք 'ի դիցն՝ որոց ինքն
սպասաւորէր. և կատարեալ զանս իւր, ասէ.
Ձիք ուրեք մնար պատերազմի առաւել քան
զսա տարաժամեալ քան զարժանն, և կանխա-
գոյն քան զարժանն գադարեալ։

Կալիստրատ ճարտարախօս անուանի փոխա-

1 Դեպ. յԵպամ. գլ. 3։
2 Նոյն անդ գլ. 6։
3 Փաւն. պատ. Յուն. գիրք Զ. էջ 590։

նակ խնդրելոյ զհասարակաց օգուտ աշխարհին Յունաց, անխորհրդաբար բանս 'ի մէջ էառ առաջի ամենայն նիզակակից ազգաց, զի աթենացւոց և սպարտացւոց մարթէր 'ի միաբանելն ընդ միմեանս՝ տիրապետել անխափան ընդ ծով և ընդ ցամաք։ Իսկ երրորդ հրեշտակն, Լուտոկղէս, բազում ինչ խօսեցաւ համարձակ զանիրաւութեանցն սպարտացւոց, որոց յազատութիւն հրաւիրեալ զազգս՝ նուաձէին զնոսա 'ի գերութիւն, մնոտի պատճառանօք պաշտպանութեանն՝ զոր 'ի պայմանս ուխտին Անտալկիդայ խոստանային։

Ուստ պայմանաց ուխտի դաշանցս այսոցիկ, որպէս կանխաւն ասացի, պարտ էր ամենայն քաղաքաց Յունադայ լինել ազատ։ Այլ սպարտացիք կալեալ ընդ ձեռամբ զքաղաքս Լակոնիոյ, պահանջէին յոխորտագոյնս 'ի Թեբացւոց տալ 'ի դուրս զքաղաքս Մէոմենոյ[1]։ Եւ 'ի բազմացուցանել նոցա զբողոք դառնութեանն ընդդէմ Թեբացւոց հակառակ լակոնացի հակիրճ ճշդութեանն. տաղտկացեալ Եպամինոնդայ 'ի շատխօսութենէ թշնամանաց նոցա, ասէ. «Աջիկ գիտացին Թեբացիք տալ ձեզ բազմավանգել զմիավանակ պատգամդ[2]։ Եւ այնպիսի ազդողական բանիւք խօսեցաւ 'ի ժողովի անդ, մինչև խռովել Գեսիղայոյ

1 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 366։ 2. էջ 545։ Նոյն՝ առակ. հա. 2. էջ 193։
2 Պլուտ. յզ. անձնգով. հա.

սի. և 'ի պնդել Թեբացւոյն հզօրագոյնս՝ զի պարտ էր յարդարութիւն և յիրաւունս հաստատել զուխտ իւրեանց, Աղեսիղայոս ասէ. Եւ զիարդ Թուի քեզ, չիցէ՞ն արդարութիւն և իրաւունք ազատել զքաղաքս Ալիովտիոյ։ Եւ պամինոնդ ասէ. Եւ քեզ զիարդ Թուի, չիցէ՞ն արդարութիւն և իրաւունք ազատել զքաղաքս Լակոնիոյ։ Աղեսիղայոս զայրագին. Այս ինձ համարձակ, Թողջիք յազատութիւն զքաղաքս Ալիովտիոյ։ Եպամինոնդ յոխորտագոյնս. Եւ դու ասա ինձ, Թողջիք յազատութիւն զքաղաքս Լակոնիոյ։ Եւ ընդեաց անդ Աղեսիղայոս զանուն Թեբացւոց 'ի դաշնակցութենէ ուխտին, և ժողովն լուծաւ[1]։

Այս վախճան եղև մեծի խորհրդոյն, որպէս կէսք պատմեն. զի այլք այլ ազգ տան զրոյցս 'ի պարծանս Աղեսիղայոսի[2]։ Կալցի զայս որպէս ոք և ախորժէ. այլ այս գլխաւոր պայմանք էին հրովարտակի ժողովոյն. արձակել՝ 'ի բաց ըզզօրս, վայելել ամենայն ազգաց յազատութիւն, և օրէն լիցի ամենայն նիզակակից ազգաց կալ 'ի Թիկունս նուաձելոց քաղաքաց[3]։

Այլ տակաւին գոյր տեղի հաշտութեան. այլ սպարտացիք ցնորիւք իմն արբեցութեան 'ի կործանումն իւրեանց բերեալք[4], պատուէր

1 Պլուտ. յԱգես. հտ. 1. էջ 611։
2 Քսեն. պատ. Յուն. գիրք Զ. էջ 593։
3 Նոյն անդ։ Դիոդ. գիրք ԺԵ. էջ 355։
4 Քսեն. անդ էջ 594։

առաքեցին առ Կղեմբրոտ՝ որ 'ի Փովկիս զորավար կայր Նիզակակից ազգաց, խաղալ 'ի Լիվոտիս զորօքն՝ որ էին առ նմա, բիւր մի հետևակաց և հազար հեծեալ։ Թեբացւոց ոչ գոյին աւելի քան զվեց հազար հետևակս[3], և հեծեալք սակաւք էին նոցա, բայց Լպամինոնդ զորավար էր նոցա, և Պելոպիդաս 'ի ձեռանէ նորա։

Զարագոյժ հմայից հաւադիտացն պատասխանէր, թէ քան զամենայն հմայս աջողակ այն է՝ պատերազմել 'ի վերայ հայրենեաց[5]։ Իսկ զպատգամս աւետեաց՝ որ ուստեք ուստեք հընչէին՝ այնպէս հաւատարմացուցանէր, զի բազմաց կարծիք եղեն՝ թէ 'ի նմանէ իսկ յոդէին պատգամքն[4]։ Օրք նորա էին արք պատերազմողք, և 'ի նոցն նախանձ քաջութեան զորավարին վառեալք. իսկ հեծելագունդ Թբէնսամեացն, առ խուռն գուգալ հանեալ, անպատերազմնփորձք էին և ոչ նախանձաւորք քաջութեան[3]։ Դարձեալ և նիզակակից քաղաքաց դժկամակութեամբ մեծաւ յանձն առեալ զպատերազմն, ակամայ զինուորէին զորք նոցա։ Օգայ Կղեմբրոտ զվհատութիւն զորականին. բայց քանզի ոչ պակասէին նմա

1 Պլուտ. 'ի Պելոպ. հտ. 1. էջ 288։
2 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 367։
3 Նոյն անդ։
4 Քսեն. պատ. Ցուն. գիրք
5. էջ 595։ Դիոդ. անդ։ Պոլիեն. 'ի մարթանան գիրք Բ. գլ. 3. յօդ. 8։
5 Քսեն. անդ էջ 596։

ոսոխք, յանձն էաւ զվտանգ մարտին՝ քան պատճառս բարբանաց տալ ատելութեան նոցա։

Հասին քանակքն երկոքեան 'ի Լևկտրա աւան Թիվտիոյ։ Յերեկոյէ մարտին, մինչ դեռ Լպամինոնդ կազմէր զզօրսն, և էր 'ի հոգս զելից պատերազմին՝ որ զբաղդ հայրենեաց սահմանելոց էր, լուաւ՝ զի մի ոմն 'ի սպայից քաջաց մեռանէր խաղաղութեամբ 'ի խորանին, ասէ. Լարեարար դիք, և իցէ՞ մարթ 'ի տագնապ պահուս գտանել պարապ մեռանելոյ՞։

Ի վաղիւ անդր* մղեցաւ Ճակատամարտն, որ հանճարով զօրավարին Թեբացւոյ անմահ կալաւ յիշատակ։ Կղեոմբրոտ յաջուտ Թեւի կայր ամբոխիւ սպարտացւոց՝, ամրացեալ յետ կոյս այրուձիոյն՝ որ զյառաջապահ ռազմն կազմէր։ Խորհեցաւ Լպամինոնդ, զի եթէ զթեւն զայն պնդակազմ բեկանէր՝ անշուշտ ուներ ըզյաղթութիւն. և խորհուրդ կալաւ զգուշանալ աջոյ թեւին 'ի թշնամեաց, և ահեկաւն յարձակել 'ի վերայ նոցա։ Նոցայց անդր զընտիրս 'ի գնդացն, և կարգեաց զնոսա կարգս յիսուն առ 'ի խոր, և զՀեծելազօրն հանդոյն թշնամեաց յառաջապահ կացոյց։ Զայն իբրև

1 Կիկ. յզ. պատշաճ. գիրք Ա. գլ. 24. հա. 3. էջ 201։
2 Պլուտ. յզ. խնամ առողջ. հա. 2. էջ 136։
* Ն. Ա. 371 ամաց, յուլիսի որդ աւուր ամենան յուլիսի։
3 Բանն. պատ. Յունն. գիրք Զ. էջ 596։ Դիոդ. գիրք ԺԵ. էջ 370։ Պլուտ. 'ի Պելոպ. էջ 289։ Աբրիան. հրատ. մարտի էջ 32։ Փոլար յզ. գաղթ. գլ. 10, յառաջին հա. Թրգ. Պոլիբ. էջ 57։

Եւ ես Կղեմբրոտ, փոխեաց զկարգ բանակին. այլ փոխանակ ստուարացուցանելոյ զաջ թեւն 'ի խոր, տարածեաց զայն անդր քան զերկայնութիւն թեւին Լպամինոնդայ։ Լու մինչդեռ նա զկարգաւորութիւնն առնէր, այրուձին թեբացւոց անկեալ 'ի վերայ հեծելագնդին սպարտացւոց՝ արկ զայն զփաղանգաւն նոցա, որոյ ոչ ինչ աւելի քան զերկոտասան արանց էր խորութիւն։ Յայնժամ և Պելոպիդաս՝ որ սրբոյ գնդին* զօրավարէր՝ յարձակեցաւ 'ի թեւէ, և Լպամինոնդ ամբակուռ գնդաւն առ հասարակ 'ի վերայ փաղանգին. որ այնու քաջութեամբ զդէմ կալաւ հարուածոյն, զի աւգարագոյն մարտի և յաջողագոյն ելից էր արժանի քաջութիւն նորա։ Ազնաղ արութիւնք չեղենբաւականապրեցուցանելոյ զԿղեմբրոտ. արք պատերազմողք՝ որք շուրջ զնովաւն կային՝ եդին զանձինս առ 'ի փրկել զնորայն, և 'ի վերայ դիոյ նորա ետուն պատերազմ, և ոչ թողին թեբացւոց զպարծանս աւարին։

Իսկ երբև Կղեմբրոտ անկաւ մեռեալ, զորք պեղոպոնեսացւոց նահանջեցան 'ի բանակետն 'ի բլուր մի մերձակայ։ Ամենք 'ի սպարտացւոց խրախուսեին դառնալ 'ի կռիւ '. այլ զօրավարքն նոցա զարհուրեալք ընդ կորուստն՝ որ

* Էր դունդս այս գումարտակ երեքարիւրոց քաջաց թեբացւոց։

1 Քսեն. պատ. Յուն. գիրք Զ. էջ 597։

եհաս Սպարտայ, և ոչ յուսացեալ՝ի նիզակա-
կիցս՝ որք փոխանակ տրտմութեան խնդա-
մտէին ընդ պարտութիւն նոցա, թողին թե-
բացւոց կանգնել անխափան զնշան յաղթու-
թեան 'ի Ճակատուն տեղւոջ։ Ի Թեբացւոց
սակաւք յոյժ անկան 'ի Ճակատամարտին. իսկ
'ի Թշնամեաց իբր չորք հազարք, յորս էին հա-
զար լակեդեմոնացիք. և 'ի բնիկ սպարտա-
ցւոց, որ էին եօթն հարիւր այր, անկան արք
չորեքարիւր[1]։

Շուինդն համբաւոյ յաղթութեանն գրի-
գռեաց Ալքենոսնախանձ դժպատուհ ընդդէմ
Թեբացւոց[2]. իսկ 'ի Սպարտա զարթոյց զկիրս
նորանշանս, զորս լիկուրգեան օրէնք ազգէն
'ի սիրտ։ Յողովուրդն 'ի զնին կայր հանդիսի
խաղոց, յորում ամենայն չափ հասակի գու-
պարէր 'ի գօտեկռիւ և յայլ հրահանգս մար-
տից վասն փառաց մրցանակին։ Ի հասանել
գուժկանին՝ զգաց աւագանին զի կորուստ 'ի
վերայ հասեալ կայր Սպարտայ. այլ առանց
խափանելոյ զտօնս խաղոց, ազգ արարին ըն-
տանեաց անկելոցն, և քաջալերեալ յորդորե-
ցին զմարս և զկանայս նոցա՝ լռել և թագու-
ցանել զսուգ իւրեանց։ Որք 'ի վաղիւ անդր
զուարթադէմք դիմեալ՝ի մեհեանս և 'ի հրա-
պարակս, գոհանային զդից, և ուրախ լինէին

1 Քսեն. պատ. Յուն. գիրք էջ 371։
2. էջ 597։ Դիոդ. գիրք ԺԵ. 2 Քսեն. անդ էջ 598։

ընդ միմեանս վասն ընծայելոյ հայրենեաց ա-
բի նահատակս։ Իսկ այլք 'ի տունս ծածկեալ,
կամ թէ հարկ լինէր 'ի հրապարակ ելանել,
զթաղծութեան և զոգոյ կրեինն նշանակս։ Ի նշ-
ան թոյ և սէր հայրենեաց այնպէս զօրացան
'ի բաղումս 'ի նոցանէ, մինչև առն չիշխել հայ-
ել յերեսս կնոջ իւրոյ, և մօր երկնչել ընդ
դարձ որդւոյ իւրոյ[1]։

Խրոխտացան յոյժ թեբայիք ընդ յաղթու-
թիւն իւրեանց, մինչև Անտիսթենեայ իմաս-
տասիրի ասել. Տեսանեմ զաշակերտս ոմանս
պանծացեալս, զի ջնեն գաւազանաւ զվարժա-
պետս իւրեանց[2]։ Իսկ սպարտացւոց ոչ յանձն
առեալ զպարտութիւն խոստովանել, խնդրե-
ցին իրաւարար 'ի մէջ իւրեանց զաքայեցիս կա-
ցուցանել[3]։

Յետ երկեամ ժամանակի[4] Լպամինոնդ և
Պելոպիդաս կացին բիոլտապետք, կամ պետք
նիզակակցութեանն բիոլտացւոց[*]։ Դէպք
բարեպատեհք, շնորհք առաջի ժողովրդեան,
բարեկամութիւն, և միակամ և համամիտ մը-
տերմութիւն կցորդեցին զնոսա ընդ միմեանս
անլուծանելի։ Լծեպետ և միումն առաւել էին
առաքինութիւնք և քաջութիւնք, այլ միւսոյն

1 Քսեն. պատ. Յուն. գիրք Զ. էջ 597։ Պլուտ. Լակեա. հտ. 1. էջ 612։

2 Պլուտ. 'ի Լիկ. հտ. 1. էջ 59։

3 Պոլիբ. պատ. գիրք Բ. էջ 127։

4 Տատ. տարեգրք. Քսենոփ. էջ 279։

* Ն. Բ. 369 տաք։

զառաւելութիւն նորա գիտելով անհնշմարելի ինն զայն առնէր։ Ընդ այնպիսուն հաւատարիմ նահատակակցի և փառակցի մտեալ Նպամինոնդայ 'ի Պեղոպոնես, աւերը և արհաւիրս ած յազգս միաբանեալս ընդ սպարտացիս[1]. զայլոց Ճեպեցոյց զվտարանչութիւն, և զմեսենիացւոցն խորտակեաց զլուծ՝ ընդ որով հեծէին 'ի բազում դարուց։ Նօթն բիւր մարդկան յայլ և այլ ազգաց զինուորէին նմա, միով ոգւով քաջայոյսք 'ի նա[2]. զորս ած 'ի Լակեդեմոն, 'ի մտի եդեալ անդէն 'ի տունս իւրաքանչիւր հարկանել զընակիչս, և 'ի քաղաքամիջի անդ նշան յաղթութեան կանգնել։

Քաղաքն սպարտացւոց անպարիսպ է և անդղեակ[3]. այլ բլուրք 'ի նմա կան բարձունք, զորս Աղեսիղայոս ամրացոյց զօրօք. և 'ի զառ 'ի վայր բարձրագունին զբանակ իւր կացոյց։ Ինտի հայեցեալ ետես, զի ահա մերձենայր Նպամինոնդ զօրօքն, և առաջնորդէր նոցա ընդ Նւրոտաս գետ՝ որ սառնահալ ձիւնախառնաղ յորդութեամբ յարուցեալ գայր։ Նա ակնկառոյց պշուցեալ 'ի նա, ապա գոչեաց. Ո՛ մեծագործ այր[4]։

1 Քսեն. պատ. Յուն. գիրք Զ. էջ 607։ Եղիան. զան. պատ. գիրք Դ. գլ. 8։

2 Պլուտ. 'ի Պեղոպ. էջ 290. Յանգես. էջ 613։ Դիոդ. գիրք ԺԵ. էջ 375 և 390։

3 Քսենոփ. անդ էջ 608։ Պլուտ. Յանգես. էջ 613։ Լիւ. գիրք ԼԴ. գլ. 38. ԼԹ. գլ. 37։ Նեպ. Յանգես. գլ. 6։ Յուստ. գիրք ԺԴ. գլ. 5։

4 Պլուտ. անդ։

Բայց Աղեսիղայոս 'ի տագնապ տարակուսի կայր. քանզի արտաքոյ բանակ ահեղ, իսկ 'ի ներքս զօրք թուով, և այնոքիկ ոչ ևս վստահք 'ի յաղթութիւն. ամբոխ խռովարարաց, որ զամենայն ինչ իւրեանց օրէն համարէին. տրտունջ և բողոք բնակչաց՝ որոց կալուածք առաջի աչաց նոցա յապականութիւն վարէին, և կեանք նոցա կային 'ի վտանգի. աղաղակ հասարակաց, որ ամենայն չարեաց հասեալց Անլադայ զնա ամբաստանէին պատճառաք. և դժնեայ յիշատակ առաջնոյ մեծութեան վառաց պետութեանն, որ արդ յանարգութիւն հասեալ էր, թատր նորանշան և ահարկու կացեալ տեսողաց. զի իբր 'ի վեցեակ դարուց հետէ թշնամիք նորա հազիւ ուրեք յելս սահմանաց Լակոնիոյ իշխեալ էին հարևանցի ինչ ասպատակել', և կանանց սպարտացւոց երբեք ուրեք չէր տեսեալ զծուխս բանակի նոցա [1].

Յայնչափ վարանս երկիւղի Աղեսիղայոս զուարթերես խրախուսեալ արհամարհէր ըզնախատինս թշնամեաց, որք առ 'ի շարժել զնա 'ի տեղւոջէն մերթ թշնամանէին զնա որպէս զվատ, և մերթ զանդաստանս մերձակայս

[1] Թուկ. գիրք Բ. գլ. 25. Դ. գլ. 41. Ե. գլ. 14. Պլուտ. 'ի Պեր. էջ 170։

[2] Խոկ. Յարբիդ. հտ. 2. էջ 30։ Դենարք. 'ի Դեմոս. առ. հելլէն Հարտարախօսաց էջ 99։ Դիոդ. գիրք ԺԵ. էջ 377։ Եղիսան. զան. պատ. գիրք ԺԳ. գլ. 42։ Պլուտ. Յագես. հտ. 1. էջ 613։

յանդիման աչաց նորա աւար հարկանէին։ Յայնմ վայրի արք իբր երկերիւր դաւակիցք ամրացան 'ի տեղի մի հզօր և դժուարամարտ. և իբրև խրատ տային ոմանք զօրահատոյց առ-նել 'ի վերայ նոցա, Աղեսիղայոս մերժեաց զխորհուրդ նոցա. և հասեալ առ ապստամբսն միայնակ՝ սպասաւորաւ միով, իբր թէ վրիպա-լուր լեալ էին բանք իւրոյ հրամանին, ասէ. Արք զինուորակիցք իմ, ոչ այսր զձեզ յղեցի, այլ յայս և յայն նիշ տեղի։ Այլ զայս ասելով՝ նշանակէր նոցայայլ և այլ կայս, առ ցիր և ցան կացուցանելոյ զնոսա հեռի 'ի միմեանց. և նոքա իսկ և իսկ հնազանդեալ, կալան զիւրա-քանչիւր կայս՝։

Բայց Անպամինոնդ ոչ ևս յուսայր ձգել զսպարտացիս յարձակավայր. և քանզի ձմեռն ևս խորին էր, և արկադացիք և արգիացիք և եղիսացիք լուծեալ էին զպաշարումն, և 'ի թեբացւոց անտի օր ըստ օրէ անկանէին բա-զումք, և համբարք նուազէին նոցա, և աթե-նացիք և այլ ազգք զօրաժողով լինէին յօգ-նութիւն սպարտացւոց, հարկ համարեցաւ ամփոփել յետս։ Այլ զայլ ևս սահմանս Լա-կոնիոյ յապականութիւն եդեալ, և խոյս տուեալ յերեսաց զօրացն աթենացւոց՝ որոց զօրավարէր Իփիկրատ, ած զիւրսն խաղաղու-թեամբ 'ի Իսթմոսիա՝։

1 Պլուտ. յԱգես. հտ. 1. էջ 614։

2 Քսեն. պատ. Յուն. գիրք Զ. էջ 612։

Օրավարաց բիուխտական նիզակակցութեան զամ մի ևեթ օրէն է կալ յիշխանութեան, և 'ի լուսն ամին յաջորդէն այլք։ Այլ Լպամինոնդ և Պեղոպիդաս զամիսս չորս յերկարեալ յիշխանութեան քան զպայման ժամանակին[1], ամբաստանեցան և կոչեցան յատեան։ Պեղոպիդայ վատասրտեալ, յաղերս ողբանաց խոնարհեցաւ, իսկ Լպամինոնդ նոցին անվեհեր արիութեամբ, որով առաջնորդէրն բանակին, եկայ առաջի դատաւորացն և ասէ. Մ՝ահապարտ եմ, դատապարտեալ յօրինաց[2]. այլ այս մի ինչ խնդիր է ինձ, արձանագրել զշիրմաւս՝ զի Թեբացիք զԼպամինոնդ 'ի մահ դատապարտեցին, փոխանակ զի 'ի Լեւկտրա մղեաց զնոսա 'ի Ձակատ, և ետ 'ի ձեռս նոցա զյաղթութիւն ընդդէմ սպարտացւոց՝ յորոց սարսեին յառաջ յերեսաց նոցա. փոխանակ զի կեցոյց յաղթութեամբն զհայրենիսն, և դարձոյց զԼլադա յազատութիւն. փոխանակ զի առաջնորդեալք 'ի նմանէ Թեբացիք՝ պաշարեցին զՍպարտա, և փոքր միւս ևս՝ և կործանէին զնա. և փոխանակ զի կանգնեալ վերստին զՄ՝եսենա, պատեաց զնա հզօր պարսպաւք[3]։ Լաւ ամենեքին, որ անդն կայ-

1 Պլուտ. 'ի Պեղոպ. հատ. 1. էջ 290։ Նեպ. յԵպամ. գլ. 7։

2 Պլուտ. յդ. անձնգով. հատ. 2. էջ 540։

3 Նեպ. յԵպամ. գլ. 8։ Եզիան. զան. պատ. գիրք ԺԳ. գլ. 42։

ին, գովեցին զբանս Լ,պամինոնդայ. և ոչ իշ-
խեցին դատաւորք պարտաւորել զնա։

Զայլ մախանք, որ և ևս գրգռին պարտու-
թեամբ, հնարեցան այլով իւիք դնել զնա յա-
նարգութիւն։ Օլ 'ի բաշխել զյանձանձանս
իրաց՝ զքաջայաղթ զօրավարն աղեւապէտ կա-
ցուցին 'ի հոգ մաքրութեան փողոցաց քաղա-
քին, և առուաց աղբանոցաց չիցանելոյ։ Իսկ
նորա մտադիւր յանձն առեալ զպաշտօնն, ե-
ցոյց՝ որպէս և ասացն իսկ կանխաւ՝ զի ոչ 'ի
պաշտամանէն զյարգ պաշտօնէին դատելի է,
այլ 'ի պաշտօնէէն զյարգ պաշտամանն[1]։

Զմք վեց յետ այնորիկ 'ի վերայ անցին, և Լ,
պամինոնդ երբեք երբեք սարսեցոյց զՊեղոպո-
նէս առաջի թեբացւոց, և Պեղոպիդաս նկուն
արար զԱմեսաղիա առաջի զինուց նոցա[2]։ Որ և
իրաւարար կացեալ երկոցունց եղբարց՝ որք
զթագաւորութիւն աշխարհին մակեդոնացւոց
վիճեալ մաքառէին, Համոզեաց 'ի մէջ նոցա,
և արար խաղաղութիւն աշխարհին[3]։ Զնց ա-
պա 'ի դուռն Պարսից 'ի Շօշ՝, ուր համբա-
ւոյ նորա կարապետեալ՝ պայծառ փառս պատ-
բաստեաց նմա*. և ցրեաց անդ Պեղոպի-

1 Պլուտ. յղ. օր. հասար. հտ. 2. էջ 811։

2 Քսեն. պատ. Յուն. գիրք Ի. էջ 616 և 624։ Պլուտ. 'ի Պեղոպ. էջ 291։ Տոտ. տաբեգր. Քսեն. էջ 280 և 283։

3 Պլուտ. յղ. օր. հասար. հտ. 2. էջ 811։

4 Քսեն. պատ. Յուն. գիրք Ի. էջ 620։ Պլուտ. 'ի Պեղոպ. էջ 294։

* Ն. Բ. 367 անք. (Տոտ. տաբեգր։)

դաս զՀնարս պատգամաւորացն աթենացւոց և սպարտացւոց, որ օգնութիւն յարքայէն Պարսից խնդրելոն. և եդ ուխտ նիզակակցութեան անլուծանելի ընդ Հայրենիս իւր և ընդ նա։

Այս 'ի վերջնումն ամի* խաղաց 'ի վերայ Մելքսանդրի բռնաւորին Լեսաղիոյ, և անկաւ 'ի պատերազմի անդ՝ 'ի հալածել զթշնամին, որ յերեսաց նորա կոր 'ի գլուխ 'ի փախուստ դառնայր՝։ Լեբէ և նիզակակիցք նորա լային զմահ զօրավարին. բայց թէ պէտ և անկաւ մի յախոյեանացն Լեբայ, միւսն դեռ ևս կայ Լպամինոնդ. և 'ի մտի ելեալ է նորա զօրհասական հարուածն տալ Սպարտայ։ Ի յոյզս է Լելադա, ազգք ընդ ազգս նիզակակցին, և սպառազինութիւնք կազմին անբաւք։ Մթենացիք ընդ սպարտացիս ասի թէ գումարին, և թէ յերեսաց նիզակակցութեան իսկ նոցա ոչ կասեսցի Լպամինոնդ. այլ 'ի սկիզբն գարնանայոյս սահմանեսցի կարևոր վէճն։ Այնչափ ցայս վայր հանգոյց զբանս իւր Կղեոմեդէս։

Լի ՁԲԱՁՈՒՄ աւուրս նաւարկեալ յաջողութեամբ, հասաւ 'ի Կոսիոր Լրգակիոյ. քանզի այս անուն էր կրճին, զորմէ Կղեոմեդէս կանխաւն ասացեալ էր մեզ։ Հազմա-

* Ն. Ք. 364 ամք։ Նեպ. 'ի Պելոպ. գլ. 5։ Տար. տարեգր. Քանն. էջ 286։

։ Պլուտ. 'ի Պելոպ. էջ 296։

վանդ են մուտք կրձին, և հողմք անդ ընդ-
դիմակք վարեն զնաւս յաձախ 'ի մերձակայ
ծովեզերս [1], ուր նաւորդացն հասանէ մահ
կամ գերութիւն. զի բնակիչք վայրացն արդ-
արեւ խուժադուժք են, անգութք և գազա-
նաբարոյք [2]։

Ի մուտս անդ կրձին գոհութիւնս բազումս
սկսան նաւաստիքն մատուցանել Աստուծոյ-
Աբամազդայ՝ որոյ էր անդ մեհեան 'ի ձախմէ
մերմէ 'ի ծովեզր Ասիոյ, որ և փրկեացն զմեզ
'ի մրրկալից ալեացն [3]։ Յայնժամ ասեմ ցՏի-
մագենէս. Զետոց իբր քառասնից ասեն
զեւբսինեանդ Պոնտոս գոլ ասպնջական, և
ոչ սակաւք 'ի գետոց անտի մեծամեծք են, և
իբր ընդ անձուկ կիրձդ ընդ այդ հոսիցեն [4],
և կամ զինչ այնչափ անհնարին բազմութիւն
ջուրցն լինիցի, որ զցայգ և զցերեկ 'ի ջրամ-
բարս այս մեծ ժողովին։ Տիմագենէս ասէ.
Կէսք 'ի նոցանէ ընդ այսր հոսեն, և կէսք
ձգեալք 'ի ձառագայթից արեգական՝ ցնդին
յօդս. քանզի ջուրք ծովուս քաղցրագոյնք են
և թեթեւագոյնք քան զայլոց ծովուց, և դիւ-
րաւ գոլորշին [5]։ Լսեալս և մասն ինչ ջուրցդ
յանյատակ խորսն ծծեալ, զորոց ասէրն ցմեզ

1 Շառա. Ճան. հա. 1. էջ 100։
2 Քսեն. պատ. Յուն. գիրք Ի. էջ 380 և 412։
3 Զիզպուլ հնախաս. ա. սիակ. էջ 61։
4 Թուռնքի. Ճան. հա. 2. էջ 123։
5 Արիստոտ. Նշանք օդ. գիրք Բ. գլ. 2. հա. 1. էջ 552։

Կղէոմեդէս, ընդ անցս ստորերկրեայս խառնին ընդ ծովս հեռաւորս։

Թէրակեանն Պոսփոր անջրպետեն ընդ Լիբոսս և ընդ Իսիա, երկայնեալ հարիւր և քսան ասպարէզս 'ի մի հենէն Բրամազդայ մինչև 'ի Լիւզանդիոն քաղաք՝ ուր յանգի[1]։ Եւ ամենայն ուրեք հաւասար ընդարձակեալ, այլ 'ի մուտս անդ՝ ասպարէզս չորս[2], և 'ի սպառուածին՝ չորեքտասան[*]. և ուրեք ուրեք ոլորտացեալ, ծոցս մեծամեծս գործեն և խորշս խորին[3]։

Նովափունք որպէս զկրկիսացն շուրջ տեսանելեաց վայրս երկուստեք ամբարձեալ, տեսիլ ամենասքանչ, և անպարոյր զանազանութիւնս ընծայեն աչաց։ Ալուրք ծառախիտք հովանաւորք, և հովիտք արգասաւորք, հաւառակօքն խառնեալ ամուլ ժայռիւք՝ որք պըտոյտս անակնկալս տան ջուրցն գործել, ընդոստուցանեն զաչս տեսողաց[4]։ Լրկիւղածութեան ազգաց արձանք 'ի բլուրս անդ կանգնեալ, և ծովեզերքքն ապարանք զուարձալիք,

1 Երոդ. գիրք Դ. գլ. 85։ Պղիբ. գիրք Դ. էջ 307 և 311։ Ներբեան. Նաւարկ. Ծովեզ. էջ 12, առ մատեն. աշխարհ. հա. 1։

2 Երոդ. անդ։ Պար. գիրք Բ. էջ 125։

* Չ չափս զայսոսիկ այլազգ 'ի միմեանց աւանդեն նախիներ, այլազգագոյն ևս արդիք. որպէս զեւբանեանն ևս Պոնտոսէ և զԳրոպոնտեայ և զԶղեսպոնտեայ տարտաւայնին։ Այլ ևս զԷրոդոտեայն 'ի գէպ վարկայ առնուլ 'ի կիր, զի ծանօթագոյն քան զայլոցն էր յաւուրս Անաքարսեայ։

3 Թուանրի. Ճան. հա. 2. էջ 156։

4 Նոյն անդ էջ 125։

և հողմախաղաղ նաւակայք. քաղաքք և ա-
ւանք մեծացեալք վաճառաշահութեամբ, և
առուք և վտակք ծովահոսք՝ որք զհարկս ջուր-
ցըն ածեալ մատուցանեն։ Այլ ըստ յեղանա-
կաց տարւոյ յաւելուն զչքնաղ գեղ տեսա-
բանին բազմութիւն մակուկաց ձկնորսակա-
նաց, և նաւաց մեծամեծաց՝ որք յեւքսի-
նեանն Պոնտոս և անտի այսր ակաղձեալք բա-
բեօք երթևեկեն։

Ի միջոցս կրձին տեսաք զվայրն, ուր Դա-
բեհ արքայ Պարսից նաւակամուրջ գործեալ՝
եօթանասուն բիւրս զօրաց խաղացոյց ընդ այն
'ի Սկիւթս։ Այնուհետեւ կրձին ոչ ինչ աւել
է անդ քան զհինգ ասպարէզս, այլ և և-
անձկանայ սարաւանդակաւն՝ յորոյ վերայ մե-
հեանն Հերմեայ կառուցեալ կայ՝։ Ընդ արք
երկու աստի և անտի արձանացեալք, մին յԱ-
սիա և միւս յԵւրոպէ, կարասցեն քաջ ըստ-
առնել միմեանց զբարբառ իւրեանց՝։ Այս
վաղ ընդփոյթ զմիջաբերդն և զպարիսպս Թիւ-
զանդեայ տեսաք. և յահեկակողմն թողեալ
զՊրիսոպոլիս քաղաք փոքրիկ, և զԱղկե-
դոն անտի 'ի ձախմէ նկատեալ, մտաք 'ի նա-
ւահանգիստ քաղաքին բիւզանդացւոց։

1 Պոլիբ. գիրք Դ. էջ 311։ 2 Ցիշ. բանաս. հտ. 32. էջ
Պլին. գիրք Դ. գլ. 24։ 635։

ԳԼՈՒԽ Բ.

Նկարագիր բիւզանդացւոց քաղաքին, և վասն որ'ի Յունաց հառուածք գնացեալ անդր։ — Զկրձին Նլեւսպոնտեայքանք։ — Եւ'ի Բիւզանդիոնէ'ի Լեւսոս ուղևորել Անաքարսեայ։

ԲԻՒԶԱՆԴԻՈՆ հիմնեալ վաղ ուրեմն'ի մեգարացւոց անտի[1], և ապա շինեալ տակաւ'ի միլետացւոց[2] և յայլոց ազգաց Յունաց[3], 'ի սարաւանդակի կառուցեալ կայ՝ յեռանկիւնի աւարտեալ ձևով։ Զիր ուրեք վայր բարեբաստագոյն և ահեղ քան զայն. զի անտի շուրջանակի ուրուք զաչս պարայածեալ, տեսանէ յաջմէ զՊրոպոնտիս ծով, 'ի հանդիպոյ յայնկոյս անձուկ կրճին զԲաղկեդոն և զԲիւզանդիոն, ապա զՍ[4] ոսփոր, և ապա զբլուրս դալսարագեղս, և զծոցն հանգրուան նաւաց՝ աստպարեալս վաթսուն մահկաբար խորացեալ[5]։

Յեղը սարաւանդակին միջնաբերդն կառուցեալ կայ. և պարիսպք քաղաքին 'ի կոփածոյ ապառաժից միապաղաղ 'ի հեղուածս արուեստին ձուլեալ։ Ի ցամաք կուսէ բարձրաբերձք

1 Ստեփ. 'ի բառն ԲՀշՀ. Եւսեբիոս. 'ի Դիոնիս. տող 804։

2 Վաղ. Պատերկ. գիրք Բ. գլ. 15։

3 Ամմ. Մարկելլ. գիրք ԻԲ. գլ. 8. էջ 308։ Յուստ. գիրք Թ. գլ. 1։

4 Սոր. գիրք Ի. էջ 320։

5 Դիոն Կաս. պատ. հռ. գիրք ՀԴ. էջ 1251։ Հերոդիան. գիրք Գ. սկիզբն։

էն, իսկ 'ի ծովակողմն կուսաց խոնարհագոյնք յոյժ, ալեօք ծովուն 'ի բնէ ամրացեալք, և ուրեք ուրեք ժայռիւք՝ յորս խարսխեալ կան՝ կարկառելովք 'ի ծով[1]։

Թողում զկրթարանն[2] և զբաղում այլ և այլ շինուածս հասարակաց, էն 'ի քաղաքի անդ և ամենայն ինչ՝ զոր ազգ Հոռոմ և բազմամարդ 'ի դիւրութիւն կենաց հայթայթել կարող է[3]։ Ոմանին ժողովեալ յընդարձակ ուրեք հրապարակի, ուր մարթ է փոքու բանակի Հակատ յարդարել[4], հաստատեալ անդ կամ ցրեալ զվնիռ իմաստնագունին քան զինքն աւագանւոյն[5]։ Բազում ուրեք ընդ քաղաքս Կլեադայ տեսի զանպատեհս զայս իր, և յիշեցի զբան Պնաքարսեայ՝ զոր ասաց ցՍողոն, թէ Բռ ձեզ ի-մաստունք խորհին, և վնռեն յիմարք[6]։

Լրկիր Ռիւզանդեայ, բերրի է արմտեաց և պտղեղ[7], այլ անպատասպար 'ի յաՀախ աւարաւորութենէ թրակացւոց՝ որ 'ի մերձակայ շէնս բնակեն[8]։ Զուէն առատ է յոյժ 'ի ծովուն, որպէս զի և 'ի նաւահանգստի անդ գիւտք են որսոց[9] յաշնայնի յիջանել նոցա յեւքսի-

1 Դիոն Կաս. պատ. հա. գիրք ՀԴ. էջ 1254։ Քսեն. արշ. կիւր. գիրք Ի. էջ 395։
2 Արիստոտ. յդ. անտես. հա. 2. էջ 502։
3 Դիոդ. գիրք ԺԳ. էջ 190։
4 Քսեն. անդ։ Զսիմ. գիրք Բ. էջ 687։
5 Դեմոս. յդ. պա. էջ 487։
6 Պլուտ. 'ի Սոզոն հա. 1. էջ 81։
7 Պոմպ. գիրք Դ. էջ 813։ Հերոդ. գիրք Գ. սկիզ։ Տակտարեգր. գիրք ԺԲ. գլ. 63։
8 Քսեն. անդ էջ 398։ Պոմպ. անդ։
9 Սոր. գիրք Ի. էջ 320։ Աթեն. գիրք Գ. գլ. 25. էջ 116։

նեանն Պոնտոսէ 'ի ստորին ծովս, և գարնայ-
նոյն 'ի գառնալ նոցա անդրէն 'ի Պոնտոս[1],
Յորսոց աստի և յաղծեալ ձկանց յաձախեն
մեծութիւնք քաղաքին[2], յորում և վաճառա-
կանաց բազմութիւն է, և բարգաւաճ և շա-
հաւէտ վաճառականութիւն։ Լաւահանգիստ
քաղաքին անմատոյց 'ի մրրկաց զամենայն ազ-
գաց Յունական զնաւս յինքն հրաւիրէ. և կա-
ցեալ 'ի մուտս կրձին՝ իշխէ տիրաբար 'ի վե-
րայ վաճառաց երթելոց յեւքսինեանն Պոն-
տոս, խափանել զնոսա, կամ բաժս ծանուցանս
'ի վերայ արկանել[3], և սովեցուցանել զաղգս՝
որ անտի կերակրին։ Մին իրի ջանահնար է-
ղեն յոյժ աթենացիք և սպարտացիք առ 'ի
ձգել զքաղաքն զայն 'ի նիզակակցութիւն. և
էր նա յայնժամ նիզակակից աթենացւոց[4]։

Կղեոմենդեայ առեալ էր ընդ իւր պաշարս
'ի Պանտիկապեայ աղանդերս և աղծեալ ձը-
կունս[5]. այլ քանզի աղնուագոյնք ևս բիւ-
զանդականքն էին[6], յաւել անտի ևս առնուլ։
Այլ իբրև կատարեաց նա զամենայն գործս
իւր, մեկնեալք 'ի նաւահանգստէն՝ առագաստ

1 Արիստոտ. պատ. կենդ. գիրք Զ. գլ. 17. հա. 1. էջ 874. Ը. գլ. 19. հա. 1. էջ 913։ Պլին. գիրք Թ. գլ. 15. հա. 1. էջ 507։ Տակ. տաբեգր. գիրք ԺԲ. գլ. 63։

2 Արիստոտ. յղ. անտես. հա. 2. էջ 502։

3 Դեմոս. 'ի Լեպտին. էջ 549. 'ի Պոլիկլ. էջ 1084։ Քսենոֆ. պատ. Յուն. գիրք Դ. էջ 542։

4 Դիոդ. գիրք ԺԶ. էջ 412։

5 Դեմոս. 'ի Լակր. էջ 953։

6 Աթեն. գիրք Դ. էջ 117 և 120։

ձգեալ Ծովամուխ եղաք 'ի Պրոպոնտիս։ Ընդ-
լայնութիւն ծովուն ասեն լինել հինգ հարիւր
ասպարէզ՝, և զերկայնութիւն նորա հազար
չորեքարիւր։ Աղաքք բազումք ականաւորք
յեզերս նորա բնակեն, կէսք կառուցեալք և
կէսք նուաձեալք 'ի Յունաց. աստի Մելիմ-
բրիա, Պերինթոս և Խիսանթոս, անտի Բ՚ստա-
կոս 'ի Խիւթանիա, և Կիզիկոն 'ի Միւսիա։

Յեզերս ծովուցն, ընդ որս անցաք, գաղ-
թականս բազումն տեսաք յազգացն Յունաց*.
և այլս առաջի կայր մեզ տեսանել Անդրես-
պոնտոս, արդեօք և 'ի ծովս հեռաւորս։ Ա-
սեմ. Ուստի՞ և ընդէ՞ր գաղթականքս այսոքիկ
սփռեցան, և ե՞ն նոցա տակաւին իրք ընդ մայ-
բաքաղաքս իւրեանց։ Յայնժամ Կղեոմեդէս
պարզեաց առաջի իմ քարտէս, և Տիմագենեայ
վաղվաղեալ 'ի լուծանել զինդիրս իմ՝ ասէ.

Անդադա ցամաք կղզի է. յարևմտից յոնիա-
կանն սահմանէ զնա ծով, և յարևելից Է-
գէականն. և գաւառք 'ի նմա են արդ՝ Պեղե-
պոնես, Բ՚տտիկէ, Փոկիկիս, Խիոլտիա, Մե-
սաղիա, Անտողիա, Բ՚կարնանիա, կողմն մի Ա-
պիրոսի, և այլ ևս գաւառք ոմանք փոքրիկք։
Նշանաւորք 'ի հոյլս բարգաւաճեալ քաղա-
քաց են անդ՝ Սպարտա, Կորնթոս, Բ՚թէնք
և Մեգէք։

1 Երոդ. գիրք Դ. գլ. 86։ * Գացեն խնդրոյք զգաղ-
թականացն Յունաց զցանկ 'ի
վերջնում մատենի գրոցս։

Ընձուկ է աշխարհն *, և ամուլ ըստ մեծի մասին, և լեռնային։ Այրենեացն Երբեմն 'ի նմա բնակչաց 'ի մի վայր եկեալ վասն պիտոյից կարօտութեան միմեանց, և ապա յանցանել ժամանակաց սփռեցան յայլ և այլ գաւառս։ Ընդցուք ձեզ 'ի ձեռոյ ընդ գաւառս, զորս արդ ժառանգեմք։

Որ են յարևմուտս կղզիք մօտաւորք՝ Օակինթոս, Կեփաղենիա և Կորկիւրա, այլովքն հանդերձ. և 'ի ծովեզերս իսկ Լիւբիկեայ են մեզ բնակութիւնք։ Հեռագոյն ևս 'ի հարաւակողմն Իտալիոյ, և գրեթէ ընդ բովանդակ Սիկիլիա, բնակեն 'ի մէնջ գաղթականք հրոյրք և բազմամարդք։ Ընդ ևս յաշխարհն Կեղտաց Մասսիլիա 'ի փոքկիսացւոց կառուցաւ, մայրաքաղաք գաղթականաց բազմաց՝ որք 'ի նմանէ 'ի մերձակայ ծովեզերս գաղթեալ բնակեն. Մասսիլիա Հոխսացեալն պարծանաք, այն՝ որ օրէնս հանձարեղս ետ, որ կարքեդոնացւոցն գտաւ յաղթական՝, և որ յերկիր բարբարոսաց բարգաւաձեցոյց զարուեստս և զգիտութիւնս Յունադայ։

Յափրիկէ մեծափարթամն Կիւրենէ՝ մայրաքաղաք կիւրենական գաւառին, և 'Լաւ կրատ կառուցեալ 'ի բերան մի գետոյն 'Լեղոսի, ընդ ձեռամբ մերով են։

* Ցարածութիւն Եկեղեայ ասպարէզ աւելի կամ նուազ է յիսուն հազար քառակուսի։ ։ Թուկ. գիրք Ա. գլ. 13։

Դարձեալ այսրէն 'ի Հիւսիս, մեր է Աիպրոս գրեթէ բովանդակ. և զՀռոդոս և զԿրետէ, և զամենայն կղզիս բնակեալս յեգեան ծով, և զմեծ մասն զհանդիսակաց նոցին ծովեզերացն և զԱղէքսանտրեայ, և սահմանս բազումս զափամբք եւքսինեանն Պոնտոսի և Պրոպոնտեայ ժառանգեմք։

Հարկաւորեալք իմն 'ի բնէ վայրացն՝ աթենացիք ընդ արևելս գաղթեցան, և ազգք պեղպոնեսացիք ընդ արևմուտս Աղլադայ։ Ընակիչք Յոնիոյ և կղզեաց բազմաց եգեական ծովուն յաթենացւոց անտի սերեալ էին։ Եւ քաղաքք բազումք 'ի կողնեթացւոց կառուցան 'ի Աեկիլիա, և 'ի սպարտացւոց 'ի մեծն յունաստան։

Կարի յոյժ առձել բազմութեան 'ի միումուրեք տեղւոջ, փառասիրութիւն իշխանաց[2] և ազատասիրութիւն իշխանաւորաց, սրածութիւնք յաձախաւորք, հրամանք պատասխանւոյ յօդեալք, և ուխտք թարմատարք, եղեն պատճառք չուոյ գաղթականաց բազմաց. և զարդիս տուրևառիկ վաձառաց շահաւետութիւն, և խորագէտ հնարք քաղաքավարութեան, տեղի ետուն նորոց գաղթականաց։ Որովք ընդարձակեցան սահմանք Աղլադայ, և յիրաւունս հասարակաց յաւելան օրէնք

[1] Թուկ. գիրք Ա. գլ. 12։ [2] Երոդ. գիրք Ե. գլ. 42։

բնութեան և մարդասիրութեան[1]։

Կապ կցորդութեան որդւոց ընդ ծնողս, նոյն զոդէ զգաղթականս ընդ մայրաքաղաքս իւրեանց[2]. և ըստ այլ և այլ ընդ միմեանս կը-ցորդութեանն՝ գորովանաց և մեծարանաց անուամբք յորջորջին դստերք, քորք, մարք և հանք, և ըստ պայմանի անուանցն իւրաքան-չիւր են նոցա առ միմեանս պարտք[3]։

Մայրաքաղաքաց պարտք էն ծնեալսէր յան-ձանձանօք պաշտպանել դստերաց իւրեանց գաղթականաց. և սոցա ծնողասէր պարտք՝ հա-ւատարել յօգնութիւն նոցա ընդդէմ հինից թշնամեաց։ Ռուբմն և դատաւորս[4] և զօրա-վարս 'ի մայրաքաղաքացն ընդունին բաղումք 'ի գաղթականաց. և ընդ նոցին օրինաքն և սովորութեամբք և ընդ նոցին կրօնիւք դիցն կան, ամի ամի առաքելով 'ի մեհեանս նոցա զերկրայրիս պտղոց և հնձոց։ Լաւ 'ի մատուց-մունս զոհից և 'ի տեսիլս խաղաց և 'ի ժո-ղովս ժողովրդեան նախապատիւ մեծարին մայ-րաքաղաքացիք առ դստերս իւրեանց[5]։

Այլ այս ամենայն յառաջամանութիւնք ոչ ինչ դժպհի առնեն զիշխանութիւն մայրա-

1 Պուլէն. յղ. մայրաքաղ. և գաղթ. էջ 18։ Սփան. յղ. դրամ. 580։ Սենթ-Բեռուա յղ. գաղթ. նախնի ժող. էջ 65։

2 Պղատ. յղ. օր. գիրք Զ. հտ. 2. էջ 754։

3 Սփան. անդ էջ 575։

4 Թուկ. գիրք Ա. գլ. 56։

5 Սփան. անդ էջ 580։ Պուլէն. անդ էջ 36։

քաղաքաց առ գաղթականս. քանզի սոքա ազատք են և ինքնիշխանք ընդ իշխանութեամբ, որպէս որդիք ընդ հարկաւ մեծարանաց՝ զոր մատուցանեն ծնողաց իւրեանց սիրելեաց։ Օնոյն գութ գորովոյ բերեն յիւրեանս քաղաքք Աղլադայ զրեթէ առ հատարակ, կամ պարտ է նոցա բերել. և նովին Աթէնք և Սպարտա և Կորնթոս համարին նախածնողք կամ բունք երից բազմասերունդ զարմից սիրելոց ընդ երեսին կողմանս երկրի։ Այլոր ինչ յազգատոհմն իւրաքանչիւր շինողացանէ զխանդ բնութեան, նոյն հանապազօր գրգռէ աղմուկս յազգատոհմն քաղաքաց. և դրժելոյ պարտուց իւրաքանչիւր առ միմեանս, կարծիք կամ հաւաստիք, կարի յաճախ տան պատճառանս կամ իրաւունս պատերազմաց՝ յորս պառակտի Աղլադա՝։

Բայց ոչ ամենայն գաղթականք օրինացս այսոցիկ ներքոյ կան, այլ որք 'ի կամաց մայրաքաղաքացն իւրեանց կամ հրամանաւ նոցա գաղթեալք իցեն. իսկ այլք, և մանաւանդ որք 'ի հեռաւոր կողմանս հատուածք բնակեն, գորովո

կեն հաձը և հաւանք, եթէ ազգքն՝ զորս վա-
րեցին նոքա 'ի միջերկրայս՝ Թողուն զնոսա յան-
դորրս, և ոչ խափանեն զնոսա 'ի վաճառա-
շահութէ։ Օ՛ի ահա ասասնոր զծովեզերքդ
բնակեն Յոյնք, և այսի անդր կան յաջմէ ան-
դաստանք Լեռակիոյ բարեբերք, և 'ի ձախմէ
սահմանք լայնածաւալ աշխարհին Պարսից՝
բնակեալ 'ի բիւթանացւոց և 'ի միւսիացւոց,
որոց բնակութիւն տարածանի առ եզերքք
Լեղեսպոնտեայ՝ յոր մտանեմքս։

Այս երրորդ կերդ էր, ընդ որ առաջի կայր
մեզ անցանել, յորմէ հետէ մեկնեցաքն 'ի
Ակիւթիոյ. և ընդարձակութիւն նորա չորե-
քարիւր ասպարէզ։ Լա 'ի շնչել աջողակ հող-
մոյ և 'ի սրընթաց հոսանացն մղեալք, փու-
թանակի նաւարկեալ անցաք ընդ կերդն։ Յե-
զերս գետոյն, եթէ այսպէս զբազուկն զայն
ծովուն հաձոյ ումեք թուեսցի յորջորջել,
ամբառնան խիտ առ խիտ բլուրք, խառն ընդ
քաղաքս և ընդ շէնս։ Այսի տեսաք զ[1] ամի-
սակոնքաղաք՝ անուանի վանս այգեստանեաց[2],
և անտի զբերան վտակին՝ որ անուանեալ կոչի
Այծգետ, ուր Լիւսանդր մեծաւ յաղթու-
թիւն զրաւ արար պեղոպոնեսական մարտին։
Ընդր ևս բնակեն Սեստոս և Աբիդոս քա-
ղաքք, զրեթէ հանդէպ միմեանց. մերձ 'ի

[1] Երոդ. գիրք Դ. գլ. 85։ [2] Սոր. գիրք ԺԳ. էջ 589։

Աեստոս է աշտարակն Լրովայ[1], ուր մանկամարդ Լստղկանն քրմուհին ծովավէժ զինքն արար, որպէս աւանդէն. զի յալիս անդ Եռեսս ընկլուզեալ զտարփածուն իւր զԼեանդրոս, որ 'ի լոզ ընդ կիրճն անցանէր գայր առ տարփալին[2]։

Օլայնութիւն կրճին 'ի տեղւոջ անդ ոչ ինչ աւելի քան զեօթն ասպարէզս ասէին լինել[3]։ Լսերքսէս աշխարհազօր ահեղ բանակաւն անց ընդ այն, նաւակամուրջս կրկին 'ի ծով անդր գործեալ, ընդ որ յետ սակաւ միոյ 'ի նաւակ մի ձկնորսական դառնայր։ Լ. աստ շիրիմն Լկովբայ յայս կոյս, և Լասայն յայն կոյս. ահա և նաւահանգիստն, ուստի նաւատորմն Լգամեմնեայ չու արար յԼսիա. ահա ւասիկ և ծովեզերք արքայութեանն Պրիամու։

Լաք մեք յայնժամ յեզր կրճին, և յածէին ընդ միտս իմ տաղք հոմերականք և կրիցն որ 'ի նոսա յուզմունք. խնդրէի իջանել 'ի նաւէ, և վազեցի յերկիր 'ի ծովեզր անդր։ Ցեսի անդ զՆեփեստոս, զի հոսէր ուղիս բոցավառս ընդ փրփրադէզ ալիս Սկամանդրեայ զայրացելոյ ընդդէմ Լքիլլեայ։ Երճ առ դրբուենս քաղաքին մատչէի, և սիրտ իմ գեղանէր 'ի գորով հրաժարական ողջունին Լնդրոմ

1 Սոր. գիրք ԺԳ. էջ 591։ Գ. տող 258։ Ովիդ. յղ. տիր. գիրք Բ. եղեր. 16. տող 31։
2 Մեկա գիրք Ա. գլ. 19. Բ. գլ. 2։ Վիրգ. մշակ. գիրք 3 Երոդ. գիրք Դ. գլ. 85։

մաքեայ և Լիկտորի։ Ցեսի անդ 'ի վերայ լե-
ռինն Լդայ զՊարիս, զի մօրն տարփանաց Աք-
տրղկան զգեղեցկութեանն մատուցանէր մըբ-
ցանակ։ Ցեսի և զՀերա անդր հասեալ, և
զերկիր զուարթացեալ յերեսաց նորա, և 'ի
ձեմն ոտից նորա ծաղկունս փթթեալ. և էր
նորա զկամար Աստղկանն գօտի ածեալ, վայել-
չագոյն անդ քան ամենայն ուրեք յորջորջելով
դչխոյ դից։

Ա.յլ վաղ անհետացան առաչօք տեսիլք
բերկրականք, և ոչ ևս տեսանէի զվայրսն ան-
մահացեալս 'ի տաղտն Հոմերի։ Վաղաքն
Ցրովա չկ ուրեք, և աւերակք իսկ նորա չե-
բևեին 'ի միջի '. սկսխառն հեղեղատք և սա-
սանութիւնք երկրի կերպարանափոխ արարին
զաշխարհն[2]։

Այլ անդրէն 'ի նաւն, և հրճուէի 'ի խընդ-
ութենէ. քանզի լուայ՝ զի մերձ հասեալ էր
մեր 'ի դէմ եդեալ տեղին, և մտեալ 'ի ծով
անդր եգեական, և զի 'ի վաղիւ անդր առաջի
կայր մեզ Ժամանել 'ի Ա'իտիլինէ քաղաք մեծ
'ի Լեսբոս։

Նա թողաք յաջակողմն զՄբրոս, զՍամ-
թրակէ և զԹասոս կղզիս. և է Թասոս ակա-
նաւոր վասն բովուցն 'ի նմա ոսկեհանաց[3], և

[1] Լուսն. փարսաղ. գիրք Թ. տող 969։ Սարաք. գիրք Ա. էջ 58։ Վարուք յդ. հանդ. հմ. էջ 308։
[2] Երոդ. գիրք Բ. դլ. 10։ [3] Երոդ. գիրք Զ. դլ. 46։

Սամեթրակէ սրբազան խորհրդածութիւնքն։ Լաւ ահա ընդ երեկս յարևմտից կողմանէ, ուր զ Յեմենոս նշմարեաք, բոց ընդ երկինս երբեք երբեք ծաւալէր. և հարցեալ՝ գիտացի, զի 'ի գագաթանէ լերինն ժայթքէր բոցն[1], և զի ընդ երկրաւ կղզւոյն ամբարեալ կայր հուր, և բղխէին անտի աղբերք եռացեալք[2]. զորս նախնի Հելլէնք ոչ բնութեան վարկանէին արգասիս, այլ Հեփեստեայ դարբնոց իւր կառուցեալ անդ 'ի Յեմենոս, և Կիկղոպացին դարբնել անդ շանթիս Լրամազդայ։ Լաւ 'ի թընդիւն նուաղ, որ ընդ բոցածաւալ խանձողացն հոսանս լինի երբեմն լսելի, թուի ռամկին զուռնադղորդ կոփիւնս լսել։

Ի մէջ գիշերի քերեաք զափամբք Ցենեդեայ կղզւոյն, և ընդ այգն մտաք 'ի կիրձն՝ որ բաժանէ ընդ Յեսբոս և ընդ երկիրն մերձակայ[3]։ Լաւ հասեալք վաղվաղակի հանդէպ Միտիլենեայ՝ տեսաք 'ի դաշտավայրս նորա, և ահա թափօր հանդարտաբայլ դէմ եդեալ գնայր 'ի մեհեանն՝ զոր 'ի հեռուստ նշմարեաք. և էր մեհեանն Լպողոնի, որոյ կատարեալն տօնքն[4]։ Ի բարձրաձայն քարքառ երգոյն հնչէին օդք առ հասարակ. ջինջ և ան-

1 Պոչ. սրբ. աշխ. գիրք Ա. գլ. 12. էջ 399։
2 Նաստաթ. Ոչղակ. գիրք Ա. էջ 157։
3 Թուանքի. Ճան. հտ. 1. էջ 392։
4 Թուկ. գիրք Գ. գլ. 3։

ամպ էր երկին, և զեփիւռ մեղմ տատանէր զառագաստս։ Օ մայլեալ 'ի տեսիլն, և ոչ գիտացի զմուտս մեր 'ի նաւահանգիստն։ Աղէոմեդեայ ընդ առաջ եկեալ անդր 'ի ծովեզրն ազգականք նորա և բարեկամք, ընկալան զնա ցնծութեամբ։ Եւ շուրջ զնոքօք բազմութիւն նաւաստեաց և գործաւորաց խռնեալ 'ի տեսանել զիս, շշուկ մեծ 'ի տեղւոջն կացուցանէին՝ հարցանելով զմիմեանս, ո՞վ է սա, ուստի՞ գայ, յո՞ երթայ։ Եւ ագաք առ Աղէոմեդեայ, որոյ հոգ յանձն առեալ էր յուղարկել զմեզ յերկիրն Եղեդայ։

ԳԼՈՒԽ Գ.

Նկարագիր Լէսբեայ։ — Եւ վասն Պիտտակեայ, Արիոնի Տերպանդրի, Աղկեայ և Սափփոյայ։

Բնաց Թէպէտ և Տիմագենէս փութայր անձկով 'ի հայրենիսն, հարկ եղև մեզ մնալ 'ի Լէսբոս առաւել քան զամսօրեայ մի ժամանակ մեկնելոյ նաւուն՝ որ ածելոցն էր զմեզ 'ի Բաղկիս, գլուխ քաղաքաց Եւբիոյ։ Եւ իմ պարապ առեալ, ուսեալ տեղեկացայ որ ինչ արժանի գիտելոյ էր զերկրէն։

Օ՛չ ընդ պատ Լէսբեայ հազար և հարիւր ասպարէզս ասեն լինել[1]։ Ընդ միջերկրայս

[1] Սոր. գիրք ԺԳ. էջ 617։

կղզւոյն, մանաւանդ յարևելս կոյս և յարևմուտս, անցանեն կապանք լերանց և բլրոց. կէսք այգեստանեաք ծածկեալ, այլք կաղամախեաք և նռաստվք և մայրեաք[1], և կէսք վէմս առ'ի սովորական պէտս շինուածոց մատուցանեն[2]։ Լակ'ի լերանցամէջս անդ դաշտավայրք՝ բերեն ցորեան առատ[3]։ Այն անդ բազում ուրեք աղբիւրք ջերմաջուրք[4]. և անդ է ակն աւկատ, և այլ ևս ազգի ազգի քարինք պատուական[5]. և ծառաստանք ամենայն ուրեք մրոտենիք և ձիթենիք և թզենիք։ Այլ փարթամագոյն մեծութիւնք բնակչացն են'ի գինւոյ, որ բազում ուրեք առաւել խնդրին լեսբեանքն քան զամենայն ազգս գինեաց Յունադայ[6]։

Ծովեզերացն ուրեք ուրեք խորշս առեալ'ի բնէ, շուրջ զնոքօք կառուցեալ կան քաղաքք՝ ձեռագործ ամրացեալք, և պայծառացեալք վաճառաշահութեամբ. որպիսիք են Միտիլենէ, Պիւռա, Մեթիմնէ, Բրիսբա, Յրեսոս, և Ընթիսա քաղաքք[7]։ Ի պատմու-

1 Պոռա. կղզ. գիրք Բ. էջ 58։ Փոքր. կղզ. գիրք Բ. էջ 128։ Փոքրք ատորագր. աբեաբ. հա. 2. մասն 2. էջ 16։

2 Պլին. գիրք Լ.Զ. գլ. 6. հա. 2. էջ 731։

3 Փոքրք անդ էջ 20։

4 Նոյն անդ։

5 Պլին. գիրք Լէ. գլ. 10. հա. 2. էջ 787 և 792։

6 Կղէարք. առ Ամենէոսի գիրք Ա. գլ. 22. էջ 28։ Աբքեսարք. առ Նորին անդ գլ. 23. էջ 29. Գ. էջ 92։ Պլին. գիրք ԺԴ. գլ. 7. հա. 2. էջ 717։ Եղիան. զան. պատ. գիրք ԺԲ. գլ. 31։

7 Երոդ. գիրք Ա. գլ. 151։ Սոր. գիրք ԺԳ. էջ 618։

թիւնս քաղաքացս այսոցիկ չէք այլ ինչ տեսանել, բայց վտարանջութիւնս կուռ զմիմեանց կնի անհետ 'ի վերայ հասեալ։ Յետ բազում ժամանակս կալոյ նոցա յազատութեան, և հեծելոյ դարձեալ ընդ ծառայութեամբ, թօթափեցին զլուծ Պարսից յաւուրս Խոսրովեայ. և 'ի պեղպտնեական մարտին քակեցան երբէք երբէք 'ի միաբանութենէ աթենացւոց', այլ դարձեալ վերստին հարկեցան միաբանել ընդ նոսա, և արդ ևս նիզակակիցք են նոցա։ Այլ 'ի միում նուազին թեթև ինչ պատճառաւ 'ի բաց կալոյ նոցա 'ի միաբանութենէ՝ չարիս ծանունս զՀետ իւրեանց առեալ ձգեցին։

Մի ոմն յականաւորաց միտիլենեցւոց խընդրեր հարսնացուցանել որդւոց իւրոց օրիորդս երկուս ժառանգս փարթամ մեծութեանց. և ոչ պատահեալ խնդրոյն, հերձուածս սկսաւ արկանել 'ի բնակիչս քաղաքին, և ամբաստան եղև զնոցանէ՝ իբր թէ կամէին միաբանել ընդ սպարտացիս։ Այլ այնչափ ինչ մեքենայեալ, մինչև աթենացւոց արձակել բազմութիւնն ասաց 'ի Լեսբոս 'ի խափանումն կամ՝ 'ի վրէժխնդրութիւն թշնամանացն[2]։ Բաղաքք՝ որ շուրջ բնակեալն էին՝ զինուորեցան առ հասարակ, բաց 'ի Մեթիմնեայ, յօգնութիւն

[1] Թուկ. գիրք Գ. գլ. 2։ Ե. գլ. 4. հտ. 2. էջ 390։
[2] Արիստոտ. յղ. հաս. գիրք

քաղաքին՝ որ Նիքակակին էր նոցա, այլ՝ ի զուր. զի աթենացիք՝ ի սուղ ժամանակի նուաճեալ զնոսա, կալան զՄիտիլենէ, քանդեցին զպարիսպս նորա, առին զնաւս պատերազմի, և սպանին զգլխաւորս՝ ի բնակչացն հազարս։ Չէ լարաբաժին արարեալ յերիս հազար բաժինս զընաւ կղզին, բաց՝ ի սահմանացն Մեթիմնեայ՝ յոր խնայեցին, երեքարիւր բաժինս՝ ի պաշտօն դիցն նուիրեցին. և զայլս վիճակաւ բաշխեցին յաթենացիս։ Որոց ոչ կարելով յարկել իւրովի զերկիրն, ետուն զայն տերանց կալուածոցն՝ ի վարձու, սակ արկեալ մնասս երկուս առ բաժին, որ ամի ամի բերէր նորոց տերանցն ինն սուն քանքար։

Յետ այսր դժնդակ աղիտից՝ դարձեալ վերստին Միտիլենէ զտոյժն ստացեալ, և զպարիսպսն կանգնեալ[2], եհաս՝ ի նոյն յառաջին պայծառութիւնն՝ յոր վայելէրն ընդ դարս յոլովս[3]։ Այնպիսի շքաբերութեամբն, գեղեցկակերպ շինուածովքն, և բազմութեամբ և ճոխութեամբ բնակչացն[4] համարի մայրաքաղաք Լեսբեայ։ Օնախնի քաղաքն, կառուցեալ՝ ի կղզեակ մի, անջրպետեալ ծով՝ ի նոր բոյն ընդ կիրճ մի անձուկ[5]։ Չէ տարածանի

1 Թուկ. գիրք Գ. գլ. 50։ Դիոդ. գիրք ԺԲ. հա. 2. էջ 108։
2 Դիոդ. գիրք ԺԷ. հա. 2. էջ 509։
3 Պլին. գիրք Ե. հա. 1. էջ 288։
4 Քսեն. պատ. Յուն. գիրք Ա. էջ 445։ Սոր. գիրք ԺԳ. էջ 616 և 617։ Կիկ. յոլ. Երկր. Ճառ. 2. գլ. 16. հա. 5. էջ 119։
5 Դիոդ. գիրք ԺԳ. հա. 2. էջ 201։

քաղաքն նորակերտ զծովեզերքն 'ի դաշտա-
վայրի, շրջածիր 'ի տնկախիտ բլրոց այգես-
տանեաց և ձիթաստանեաց[1]. և անդր քան
զբլուրսն ընդարձակի երկիր բարեբեր և մար-
դաւէտ։ Այլ թէպէտ և քաղաքս այս 'ի բա-
րեբաստ տեղւոջ թուի բնակեալ, հողմք դատ-
նաշունչք տիրեն անդ դժոխքմբերք բնակչացն։
Հողմն հարաւոյ և արևմտեանն հիւսիսի ա-
ծեն անդր ախտս հիւանդութեանց. և հողմն
հիւսիսոյ ախտահալած՝ այնքան է ցրտաշունչ,
զի 'ի հնչելն նորա՝ դժուարաւ ոք 'ի հրապարակ
ելանել կարէ կամ՝ 'ի փողոցս[2]։ Շ ահավանառ
զհոյլս տարաշխարհիկ նաւաց ձգէ 'ի կրկին
նաւահանգիստս նորա, որ մին 'ի հիւսիսոյ
քաղաքին և միւսն 'ի հարաւոյ կան։ Հիւսի-
սային ընդարձակագոյն է և խորագոյն, և
պատսպարեալ 'ի ստահակ հողմոց և 'ի մրրկաց,
ժայռք մեծամեծք թումբ և ամբարտակ ընդ-
դէմ բռնութեան նոցին 'ի տեղւոջն կանգ-
նեալք[3]։

Լեսբոս վայր է փափկութեան, կամ մա-
նաւանդ ապերասան համարձակութեան[4]։
Մնակաց նորա իմաստք բարոյականք այնպէս
դիւրաւ յերիւրին ըստ ժամանակի և գալարին

1 Ղենդոս հովուերդ. գիրք Ա. 'ի սկիզբն։ Փոքրք հա. 2. ման 2. էջ 15։
2 Վ խարով. գիրք Ա. գլ. 6։
3 Դիոդ. գիրք ԺԳ. հա. 2. էջ 200։ Սար. գիրք ԺԳ. էջ 617։ Փոքրք անդ։
4 Ա.թէն. գիրք Ի. էջ 438։ Ղուկիան. զրուցասար. 5. հա. 3. էջ 289։

ըստ կամն, որպէս քանանք արՀՀեայք * Հարստարապետաց նոցա՝։ Եւ ինչ թերևս յամենայն ուղևորութեան իմում յեղակարծ ինձ պատահեաց որպէս ցոփութիւն լեսբացւոցն, և ներգործեալ յիս անտի վայրկեան փոփոխումն։ Օր զտպաւորութիւնս տիոց մանկութեան անքննաբար ընկալեալ, և միաբ իմ կրօնիւք և օրինակաւ այլոց դաստիարակեալ, օտար ինն անդէն 'ի մէջ բարգաւաՀեալ աղէնն գտայ, 'ի նոր աշխարհին՝ ուր իշխէր ազատութիւն մտաց և իմաստից։ Որք թէպէտ և անՀաՀոյ 'ի սկզբանն թուեցան ինձ, այլ տակաւ զեղծուցին զիս արք՝ ամօթ համարել զժուժկալութիւն, և կանայք զպատկառանս։ Յամրագոյն եղև ինձ զարգանալ 'ի 'ի բարեՀաճ տարազ և 'ի խօսս երկրին. զի էի ես որպէս ծառ փոխեալ յանտառէ 'ի պարտէզ, որոյ ուղեղք յամբ թեքին 'ի կամն անկողին։

Ի վարժս նորոգ դաստիարակութեան իմոյ պարապեցի և 'ի տեղեկութիւն ականաւորաց արանց կացելոց 'ի Լեսբոս։ Գոլուխ երևէալ գունիցն 'ի նոցանէ 'ի դէպ է դասել զՊիտտակոս, զոր 'ի թիւ եօթանեցունց իմաստնոցն իւրոց եդ զնա ԼՀլադա՝։

* Որովք վարէին 'ի չափել զամենայն ազգի ազգի հարթ և կոր մակերեւոյթս։

՝ Արիստոտ. յՁ. բարոյ. գիրք Ե. գլ. 14. հմ. 2. էջ 72։

՝՝ Պղատ. 'ի Պրոտագ. հմ. 1. էջ 343. և այլք։

Ամք աւելի քան զերկերիւր 'ի վերայ անցեալ մահուն նորա, յաւելին մանաւանդ ըզպայծառութիւն փառաց նորա։ Քաջութեամբն իւրով և իմաստութեամբ ազատեաց զՀայրենիս իւր զՄիտիլինէ 'ի հարստահարութենէ բռնաւորաց, և յաղիտից պատերազմին՝ որ ընդ աթենացիս, և յառտնին հերձուածոց՝ յորս պառակտէրն[1]։ Եւ իբրև միաբանեցին միտիլինեցիք տալ 'ի ձեռս նորա զիշխանութիւն քաղաքին իւրեանց և զկղզւոյն առ հասարակ, յանձն էառ զայն՝ առ 'ի հաստատել և եթ խաղաղութիւն 'ի նմա, և առ 'ի կարգել զօրէնս կարևորս նմին[2]։ Եւ ինչ յօրէնս նորա, որ զմիտս իմաստասիրաց ձգէ 'ի տեսութիւն[3]. զի արբեցելոցն յանցանաց կըրկին սահմանեաց պատիժս. որ ոչ համեմատ յանցանացն թուէր հատուցումն, այլ կարևոր յոյժ էր առ 'ի բառնալ զպատճառանս ակամայութեան եղեռանցն՝ յորս գինեհարութիւն խարդաւանէր զլեսբացիս։ Օրինադրութեանն աւարտեալ զգործ, խորհեցաւ զմնացուած աւուրց իւրոց պարապել յուսումն

1 Դիոդ. 'ի ծաղկաքաղ. Վաղէս. էջ 234։ Սոր. գիրք ԺԳ. էջ 600։ Պլուտ. յղ. չար. Երոդ. հտ. 2. էջ 858։ Պողիէն. 'ի մարթանան գիրք Ա. գլ. 25։

2 Արիստոտ. յղ. հաս. գիրք Գ. գլ. 14. հտ. 2. էջ 357։ Դիոդ. լայ. գիրք Ա. յօդ. 75։

3 Արիստոտ. անդ գիրք Բ. գլ. 12. հտ. 2. էջ 337։ Նոյն յղ. բարոյ. գիրք Գ. գլ. 7. հտ. 2. էջ 34։ Նոյն յղ. ճարտ. գիրք Բ. գլ. 25. հտ. 2. էջ 582։ Դիոդ. լայ. անդ յօդ. 76. հտ. 1։

իմաստութեան[1]. և առանց փառասիրելոյ՝ հրաժարեաց 'ի գերագոյն իշխանութենէն։ Լա՛ 'ի զվամներն 'ի քաղաքացոյն հարցանել, ասէ. «Լանզի 'ի Պերիանդրը կորնթացի հայեցեալ զարհուրիմ, որ յերբեմն հայրութենէն հնազանդելոյն՝ եղև նոցին բռնաւոր[2]. զի յոյժ դժուարին է մինչև 'ի սպառ գոլ առաքինի»։

Լրաժշտութիւն և քերթութիւն յայն զարգացումն ածան 'ի Լեսբոս, զի թէպէտ և ոչ որպէս Լաթենս յստակ զնոսս իւրեանց բերեն Լեսբացիք 'ի հելլէն բարբառ[3], այլ զնոցանէ սովոր են ասել Յոնք՝ թէ 'ի յուզարկաւորութիւնս նոցա Մուսայք եղերամարքը նուագեն զողբս[4]։ Լ՝ 'ի կղզւոջ անդ վարժոց երաժշտութեան վաղեմի յոյժ, եթէ հաւատալ արժան իցէ աւանդութեանն՝ զոր լուայ 'ի Մեթիմնէ։ Լմանչեմ իսկ ասել, այլ վասն քաջահմուտ լինելոյ իրացն Յունաց՝ 'ի դէպ է և զառաստպելս ինչ նոցա գիտել, որովք վէպք նոցա պատճուճին կամ մանաւանդ անչքանան։ Օի 'ի վէպս անդ յայտ յանդիման նկարագիր կրից ազգին երևի, իսկ յառաստպելս տիպք կերպարանաց մնաց նորա։

Արիստոս, որ զայնպիսի հրաշս նուագաբն գոր-

1 Պլատ. յԱպոլ. երէց. հտ. 3. էջ 281։ Դիոգ. լայ. գիրք Ա. յօդ. 75։

2 Զենոբ. հարիւրաւ. Զ. առակ 38։

3 Պլատ. 'ի Պրոտագ. հտ. 1. էջ 339։

4 Նոյն անդ էջ 341։

5 Ցիշ. բանաս. հտ. 7. էջ 338։

ծեաց, յաստուածատպարարկացն յօշեալ՝ զլուսն նորա և քնար արկան յԱբրոս գետ 'ի Թրակիա, և մղեցան յալեաց ծովուն յեզերս Մեթիմնեայ[1]։ Այս մինչ դեռ 'ի ծովածփանսն կայր, ձայն ողորմ երգոց նորա լսելի լինէր խառն ընդ քնարին՝ զորոյ հողմք հեզիկ բախէին զլարս[2]։ Ինակիչք Մեթիմնեայ առեալ թաղեցին զգլուխն նորա, ուր և ցուցաւ ինձ տեղին, և զքնար նորա կախեցին նուէր արգադիր 'ի մեհեան Լպողոնի։ Այլ Լպողոն փոխան պարգևին հեղ 'ի նոսա զաշխոյժս երաժշտութեան, և փթթեցոյց 'ի նոսա զազգս ազգս հանձարոյ[3]։ Այս ամենայն քրմին Լպողոնի պատմելով մեզ, մի ոմն 'ի Մեթիմնեցւոց անտի յաւել թէ զգին Որփեայ յանկեան ուրեք Թրակիոյ Թաղեալ Մուսայից[4], և ոչ ուրեք որպէս զչիրմաւ նորա քաղցրանուագ սոխակաց հընչէին դայլայլիկք[5]։

Բրբ գերահանձարք զհետ միմեանց կացեալ 'ի Լեսբոս, աւանդեցին իրերաց զփառս գերազանցութեան քան զամենայն երաժիշտս Այլ լադայ 'ի քնարահարութիւն[6]։ Բազմահոյլպա-

1 Ովիդ. պյլակերպ. գիրք ԺԱ. տող 55։ Փիլարգ. 'ի մլակ. Վիրգ. գիրք Դ. տող 523։ Եւստաթ. 'ի Դիոնիս. տող 536։

2 Ղուկիան. ընդդէմ ագիտ. հա. 3. էջ 109։

3 Իգին. քերթ. աստղ. գիրք Բ. գլ. 7։

4 Նոյն անդ։

5 Պաւս. գիրք Թ. էջ 769։

6 Պլուտ. յղ. երաժշտ. հա. 2. էջ 1133։

բուն նոցին զարդ պայծառութեան՝ Լբիոն մեթիմնեցի և Տերպանդր անտիսացի։

Լբիոն եկաց յառաջքան զամս իբր երեքարիւր՝[1], և ելթող զառաջս իւր՝[2] զորս 'ի քնար իւր յեղանակեր, որպէս և ամենեցուն սովորութիւն էր քերթողաց ժամանակին։ Այս հնարեցաւ կամ՝ 'ի կատարումն ած զերկդունենին[3] երգ, զորմէ յետոյ ասացից. և զշրջադարձ կաքաւն[4] կցորդեաց նմին, որպէս մինչև ցայժմ պարերգութեանն այնորիկ պահի կարգ։ Պերիանդր բռնաւոր կորնթացւոց ժամանակս բազումս կալաւ զնա առ իւր՝ 'ի Կորնթոս. անտի մեկնեալ նորա՝ չոգաւ 'ի Սիկիլիա, ուր 'ի Հանդէս երաժշտաց տարաւ մրցանակ[5]։

Այլ եմուտ 'ի նաև մի կորնթացի, գնալ՝ 'ի Տարենտոն. և նաւաստեացն խորհուրդ կալեալ ընկենուլ զնա 'ի ծով, և ժառանգել զկապուտ նորա, նա իրազեկ եղև. և ոչ կարացեալ քաղցրաձայն երգովքն ողոբել զնոսա[6], անձամբ զանձն ընկեց 'ի ծով։ Արգասիրաց զոյն անդանօր գտեալ մի 'ի դլինաց, ած զնա 'ի սարաւանդակն Տենարեայ։ Այլ զնորանշան

1 Սոքն. գլ. 7։
2 Սուիդ. 'ի բառն Ա՝ρίων.
3 Երոդ. գիրք Ա. գլ. 23։ Պարսպ. Պինդ. յոդմնկ. ԺԳ. տող 25։
4 Եղեան. և Դիկէարք. առ պարսպ. Արիստոտ. 'ի Հաւան տող 1403։
5 Սոքն. անդ.
6 Երոդ. գիրք Ա. գլ. 24։ Ոպպիան. գիրք Ե. տող 450։ Պլին. գիրք Թ. գլ. 8. հատ. 1. էջ 302։ Սոքն. գլ. 12։

պատահարն բանիւք և օրինակօք Ջանային ցուցանել ինձ հնարաւոր. զի ոչ միայն վկայէ այնմ Արիոն 'ի միում ուրեք 'ի տաղիցն [1], և աւանդութեամբ ունին զայն լեսբացիք, այլ և 'ի Կորնթոս ցուցաւ ինձ տեղին՝ ուր Պերիանդրի զնաւաստիսն ասեն սպանեալ [2]։ Եւ 'ի Տենարոս [3] և Հելիկոն լերին [4] և յայլ տեղիս տեսի զանդրի քերթողին կացեալ 'ի դլխին։ Դարձեալ զի և ոչ միայն սիրողք են նուագաց կէտքս այսոքիկ [5] և հնորհակալութիւն և բարեկամք ազգի մարդկան [6], այլ և զդորովականս զայս տեսարան այլ ևս ուրեք ածին 'ի հանդէս [7]. զի Ցարաս կառուցող Տարենտեայ նոքա զերծուցին 'ի նաւաբեկութենէ, զոր և 'ի դրամս [*] դրոշմեալ 'ի տարենտացւոց անտի եցոյց ինձ երբեմն Արիստոտէլ [8]։

Տերպանդր [9] գրեթէ ժամանակակից եկաց Արիոնի. և 'ի հանդէս խաղուց Հելլադայ բա-

1 Եղիան. պատ. կենդ. գիրք ԺԲ. գլ. 45։

2 Երոդ. գիրք Ա. գլ. 24։

3 Նոյն անդ։ Դիոն ոսկիբ. Ճառ. 37. էջ 455։ Գելլ. գիրք ԺԶ. գլ. 19։

4 Պաւս. գիրք Թ. գլ. 30. էջ 767։

5 Արիոն. առ. Եղիանոսի անդ. Պլին. գիրք Թ. գլ. 8. հտ. 1. էջ 502։

6 Արիստոտ. պատ. կենդ. գիրք Թ. գլ. 48. հտ. 1. էջ 954։ Եղիան. անդ. գիրք Զ. գլ. 15։

7 Պլին. անդ։ Պաւս. գիրք Ժ. գլ. 13. էջ 831։

* Դրոշմածք տարենտացիանք բերին զպատկեր առն քնար 'ի ձեռին 'ի դլխին կացեալ։

8 Արիստոտ. առ. Պոլիտ. գիրք Թ. գլ. 6. յօդ. 80։

9 Փարրիկ. մատեն. Յուն. հտ. 1. էջ 234։ Յիշ. բանաս. հտ. 10. էջ 213։

զում անդամ կալաւ մրցանակ[1], այլ պանծալի և յաղթանակք նորա եղեն գիւտքն երաժշտականք։ Օ՛ի յաւել նա երիս այլ և 'ի քառեակ լարս քնարին[2]. յարդարեաց նուագս պատկանաւորս ազգի ազգի գործեաց արուեստականաց, որ եղեն յօրինակ յետնոց[3]. եմոյծ նոր չափս 'ի քերթութիւն տաղից[4]. և յերգս երաժշտական մրցութեանց յաւել զձևացութիւնս վիպաց, որովք ախորժելի եղեն յոյժ[5]։ Նոյն և 'ի հռոմերական քերթածն երկասիրեալ, հաստատեաց զնոսա խազիւք յերգ պատկանաւոր[6]։ Պարտացիք կոչեն զնա ըստ առաւելագանցութեան՝ Նրգիչն լեսբացի[7], իսկ այլք 'ի Յունաց առ հասարակ այնու մեծարանօք յիշեն զնա, որով մեծարեն զամենայն արս հանճարեղս որ հաճոյից և բերկրութեան նոցա սպաս մատուցանեն։

Ա՛մօք իբր յինանիւք յետոյ քան զՏերպանդր կացին 'ի Միտիլենէ Ա՛ղկէոս և Սափփով, երկոքին և նախապատիւք 'ի պարու քնարերգակ քերթողաց։ Ա՛ղկէոս[8] անհանդարտ էր

1 Պլուտ. յզ. երաժշտ. հտ. 2. էջ 1132։ Ա՛թեն. գիրք ԺԴ. գլ. 4. էջ 635։

2 Տերպ. առ Եւկղ. ներատ. գաշնակ. նախնի երաժշտ. էջ 19. հտ. 1։ Սոր. գիրք ԺԴ. էջ 618։

3 Պլուտ. անդ։ Ոքսոնեան վէմք. գար 35։

4 Պլուտ. անդ էջ 1135։

5 Պոզիտ. գիրք Դ. գլ. 9. յոգ. 66։

6 Պլուտ. անդ էջ 1132։

7 Նոյն յզ. յամբ վիրժուց գից հտ. 2. էջ 558։

8 Փարբիկ. մատեն. Յուն. հտ. 1. էջ 563։

բարուք և անխաղաղասէր. և ետ զանձն նախ 'ի զինուորութիւն, գերագոյն քան զամենայն արուեստս համարեալ զայն։ Պատուազինեալ էր տուն նորա սուսերօք, սաղաւարտօք, ասպարօք և զրահիւք[1]. այլ 'ի նախկին շուինդն մարտի՝ վատութեամբ 'ի փախուստ դարձաւ նա. և աթենացիք առ 'ի նախատինսնմին կախեցին զզէնս նորա 'ի մեհեան Աթենասայ 'ի Ալիգէոն[2]։ Ալ ընժինդիր լինէր նա համարձակ 'ի վերայ ազատութեան, այլ կասկած եղև ըզ նմանէ՝ զի 'ի սրտէ ցանկայր բնաբարձ առնել զայն[3]։ Միաբանեացնա եղբարբքն իւրովք ընդ Պիտտակեայ 'ի հալածել զՄեղանքրոս բրոնաւոր միտիլինեցւոց[4], և ընդ դժգոհս 'ի յառնել ընդդէմ իշխանութեանն Պիտտակեայ։ Ընհեթեթ և շինականագոյն թշնամանք նորա ժայթքեալք ընդդէմ Պիտտակեայ[5] նշաւակեցին զմախանս նորա. և տարագրեցաւ 'ի Միտիլինեայ։ Յետ սակաւ ժամանակի առաջնորդ աքսորելոցն կացեալ, դարձաւ 'ի Միտիլինէ[6], և անկաւ 'ի ձեռս ոսոխին. որ վրէժ նորանշան խնդրեաց 'ի նմանէ, ներելովնմա[7]։

Ռանաստեղծութիւն, տուփանք և արքեցու-

1 Ագիմ. առ Աթենէոսի գիրք ԺԴ. էջ 627։
2 Երոդ. գիրք Ե. գլ. 95։
3 Սոր. գիրք ԺԴ. էջ 617։
4 Դիոգ. լայ. գիրք Ա. յոդ. 74։
5 Նոյն անդ յոդ. 81։ Մեն. Ծան. 'ի Դիոգ. լայ։
6 Արիստոտ. յզ. հաս. գիրք Գ. գլ. 14։
7 Դիոգ. լայ. անդ յոդ. 76։

թիւն սփոփէին զնա յարկածս. յառաջին քերթածսն զոխութիւն իւր եհեղ ընդդէմ բըռնաւորութեան, և ապա [1] զդիսն երդէր, մանաւանդ զինամակալս ցանկութեանց [2]. և երգեաց նա զտուփանս իւր, զնահատակութիւնս մարտի, զուղևորութիւնսն և զթշուառութիւն աքսորանացն [3]։ Այժոյժք մնաց նորա՝ զինեհարութեամբ զարթնուլն [4]. և յարբեցութեանն արար զքերթածս իւր զարմանալիս յետնոց [5]։ Այղանակ բանից նորա իմաստից տաղիցն միշտ պատշաՃեալ, ոչ իւիք թերանայ՝ բայց միայն որ ինչ հատարակաց խօսից թեսբացւոցն էն թերութիւնք։ Կցորդէ նա զքաղցրութիւն ընդ զօրութեան, և զՀոխութիւն ընդ Ճշդութեան և ընդ պայծառութեան. և 'ի նկարագիրս մարտի և յահարկութիւն բռնաւորաց՝ ամբառնայ հուպ 'ի բարձրութիւն Հոմերի [6]։

Աղկիոս հարեալ 'ի սէր Սափփոփայ, գրեաց առ նա և ասէ. Կամի գրել ինչ քեզ, այլ ամենի խափանէ զիս։ Այ Սափփոփ գրեաց պատասխանի. Ոչ ամաչիցի, եթէ չէր սիրտ քո մերզապարտ [7]։

1 Փարրիկ. մատեն. Յուն. հտ. 1. էջ 563։
2 Ովատ. գիրք Ա. տաղերդ. 32։
3 Ադկ. տաղ։ Ովատ. գիրք Բ. տաղերդ. 13։
4 Ամեն. գիրք Ժ. գլ. 7. էջ 429։
5 Դիոն. ազիկ. յոյ. յոբին. Ճառի հտ. 3. էջ 187։
6 Նոյն յոյ. քնն. Նախնի մատեն. հտ. 5. էջ 421։ Կուինտ. գիրք Ի. գլ. 1. էջ 631։
7 Արիստոտ. Ճարտ. գիրք Ա. գլ. 9. հտ. 2. էջ 531։

Այլ ասէր Սափփով. Բաժինք ելին ինձ տարփանք և առաքինասիրութիւն [1]. առանց սորա չիք ինչ ինասակարագոյն քան զմեծութիւնս, իսկ բարեբաստութիւն 'ի պարառութեան երկոցունցն իսկ է [2]։ Այլ ասէր դարձեալ. Ամն նշանաւոր գեղով, և այլ ոմն առաքինութեամբ. նա յառաջնումն տեսլեան, իսկ սա յերկրորդումն ոչ ինչ նուազ զօշոտէ զաչս [3]։

Օգոստիկ և զսոցին սակի իմաստս նորա պատմելով իմ երբեմն ումեք 'ի միտիլինեցւոց, ասեմ. Օ պատկեր Սափփովայ տեսի 'ի դրամս ձեր դրոշմեալ [4], և զի մեծարանօք պատուէք զյիշատակ նորա [5]. և զիարդ այս իմաստք աւանդեալք 'ի նմանէ գրով, և սպաս մեծարանացն մատուցեալ նմա հրապարակաւ, միաբանիցին ընդ շրջունչ համբաւոյ անարժան վարուց նորա։ Այլ նա ասէ. Զանգի չիք ուրուք ստուգ ապատում արարեալ զվարս նորա, ոչ է մարթ դատաստան առնել զնմանէ *. և ոչ այնու զի յարգէ նա զառաքինութիւն, և զի մեծարի 'ի մէնջ վասն հանճարոյն, մարթ է հա-

1 Սափփ. առ Աթենէոսի գիրք ԺԵ. էջ 687։

2 Նոյն առ պարապ. Պլինդարեայ ոդիսպ. 2. տող 96. և սիւթ. Ճ. տող 1։

3 Նոյն 'ի Ծայրաքաղն Վոլփ. էջ 72։

4 Պոլիտ. բառար. գիրք Թ. գլ. 6. յօդ. 84։

5 Արիստոտ. Ճարտ. գիրք Բ. գլ. 23. հա. 2. էջ 576։

* Գիտելի է զի վկայագիրք՝ որք զցոփութիւնէն Սափփովայ գրեցին՝ կրտսերագոյնք յոյժ են քան զնա ժամանակաւ, ոչ ուրուք 'ի ժամանակակցայ նորա վկայեալ բանիցն։

սաստեաւ գուշակել ինչ զնմանէ բարիս։ Ի վերծանել զքերթածս նորա, չիշխեմ անպարտ առնել զնա. այլև ոչ համարձակիմ դատապարտել զնա, զի էին նորա բարեմասնութիւնք և ասոիք։

Ի մեռանել առն իւրոյ՝ ետ զանձն 'ի բանասիրութիւն, 'ի նոյն ախորժակս և զկանայս լեսբացիս յորդորեալ՝։ Ի ազուամբ 'ի նոցանէ աշակերտեցան նմա, օտարաց և յաւելեալ՝ 'ի թիւ աշակերտուցն հեացն. և սիրէր զնոսա յոյժ, զի չկարէր իսկ չափով սիրել. և զգուութ սիրոյն տուփական բանիւք յայտ առնէր։ Ի նդ որ ոչ ինչ զարմացիս, եթէ խելամուտ լիցիս դիւրազգած բնութեան ազգին. զի առ նոսա և կարի իսկ պատշաճ բարեկամութիւն զգէմն տարփաւորի առնու։ Ի նթերցիր զզրուցատրութիւնսն Պղատոնի, և տեսցես թէ որպէս խօսի անդ Սոկրատ զգեղոյ աշակերտելոց համ բակացն իւրոց[2]. բայց սակայն ոչ ոք տեղեկագոյն էր քան զՊղատոն ամբծութեան մտացն Սոկրատայ։ Ի Ներևս և Սափփոփայն ոչ ինչ նուազ էր ամբիծ. այլ համարձակութիւն ինն բարուց, և եռանդն արտայայտութեան սրտի, պատճառս ետուն մախանաց մեծուհեաց ոմանց՝ զորովք ստուերածս ածէր զերակայութիւն հանճարոյ նորա, և ոմանց յաշակերտու-

1 Սուիդ. 'ի բառն Σάπφω. տիւր. հատ. 24. յոդ. 9. էջ
2 Պղատ. 'ի Փեդր։ Մաքս. 297։

հեացն՝ որք նուազքան զայլս սիրելիք էին նը-
մա։ Համարձակ յայտնեցան մախանք նոցա.
և Սափիրովայ պատասխանեալ նոցա զՀնմար-
տութիւն խառն ընդ երդիծանս, յաւել գըր-
գռել զնոսա[1]. և բողոք եւ նորա զՀալածչացն[2]
համարեցաւ նմա յեղեռն։ Պա ստիպեալ 'ի
փախուստ*, խոյս ետ 'ի Սիկիլիա[3]. ուր, որ-
պէս լսեմ[4], խորհին կանգնել նմա անդրի**։
Եթէ արդարեւ զրոյցքն համբաւեալք զնմա-
նէ, զորոց ասացերդ, տարապարտք իցեն՝ որ-
պէս ինձ թուի, յօրինակէ նորա է 'ի միտ առ-
նուլ՝ զի անխոհականութիւնք մեծամեծք բա-
ւականք են յաղարտել զանուն այնոցիկ, որ կան
'ի տեսիլ ժամանակակցացն և ապագայից։

Եւ ապա 'ի վերայ ածեալ, ասէ. Սափիրով
զգայուն էր յոյժ։ Եւ ես ասեմ. Պա և կա-
րի թշուառ։ Եւ նա ասէ. Ուղիղ դատեցար.
սիրեաց նա զՓաւռն, և թողաւ 'ի նմանէ[5]. և
'ի զուր ջանացեալ ձգել յինքն անդրէն զսիրտ

1 ԱԹԵՆ. գիրք Ա. էջ 21։ Սափիր. առ Պլուտարքէայ օ-
րէնք ամուսն. հտ. 2. էջ 146. առ Սոսոբ. յզ. անխոհեմ. Ճառ
4. էջ 52։

2 Ովիդ. գիրք Բ. տաղ-
երգ. 13։

* Ի յետ կոյս մասանիս 'ի տեղեկութիւնսն. թիւ Ժ.։

3 Ոքանեան վէմք. դար 37։

4 Պիկ. 'ի Վերր. գիրք Դ. գլ. 37. հտ. 4. էջ 402։

** Ամբ ինչ յետոյ կանգ-
նեցաւ նմա անդրի, Սիզանեայ
քանդակեալ զայն՝ միոյ 'ի Ճար-
տար քանդակագործաց ժա-
մանակին։ (Պիկ. անդ։ Ցա-
տիան. առ Յոյնս. գլ. 52 էջ
113։)

5 ԱԹԵՆ. գիրք ԺԴ. էջ 596։
Պլին. գիրք ԻԲ. գլ. 8. հտ.
2. էջ 269։ Ովիդ. գիւցազն.
թղթք. 15. հտ. 1. էջ 195։

նորա, և ոչ ևս յուսացեալ այնուհետև բարեբաստիկ լինել, ոչ ընդ նմա և ոչ առանց նորա, մտաբերեաց վաղել ընդ լեւկադեան վախս 'ի ծով, և կորեաւ յալիսն [1]։ Չև ևս մահ կարաց քերել 'ի նմանէ զկեղտն, և գուցէ ոչ ևս կարասցէ քերել զայն 'ի սպառ. քանզի մեռանի իսկ նախանձն ոսոխ աւագ որերոյ, այլ թողու զհետ իւր անմահ զզրպարտութիւն։

Եւ արար Սափփով օրհնութիւնս տաղս եղերերգութիւնս, և այլ քերթածս բազումս. զյոլովս յայնցանէ չափաւն * զոր ինքն եմայծ [2], և զեղափայլս առ հասարակ չքնաղ կերպարանաք ասացուածոցն՝ որովք Ճոխացոյց զհելլէն բարբառ [3]։ Բազումք 'ի կանանց Յունաց աջողեցան 'ի քերթողութիւն, այլ ոչ ոք մինչև ցայսօր հաւասարեաց նմին [4]. և սակաւք 'ի հանուրց իսկ քերթողաց գտանին քան զնա գեղազանցեալ։ Ճարտար յընտրութիւն, ոչ իմաստիցն ևեթ, այլ և ասացուածոց տաղիցն. որ ինչ 'ի զգալիքս զուարթ և բերկրալի ինչ են [5], մուծանէ անդր, և նկարագրէ զնոսին պատշաճագոյն երանգօք. այնու Ճարտարութեամբ ընդ իրեարս զերանգսն յերիւրեալ, զի

1 Մեն. առ. Սարաբոնի գիրք ժ. էջ 452։
* Ի յետ կոյս մատենիս 'ի տեղեկութիւնսն. Թիւ ԺԱ։
2 Փաբրիկ. մատեն. Յուն. հտ. 1. էջ 590։ Գրիսա. վարք Սափփ. էջ 16 և 18։
3 Դեմետր. փաղ. յոլ. պերճար. գլ. 167։
4 Սար. գիրք ԺԳ. էջ 617։
5 Դեմետր. փաղ. անդ գլ. 132։

հիւսս իմն չքնաղս լուսոյ ընդ ստուերի խառնել ամենայն ուրեք 'ի տաղսն[1]։ Ինքիր ախորժակք նորա նշողին և 'ի նիւթական կազմած տաղիցն. զի է անդ արուեստ ամենեին անչափ, և ոչ հեզասահ առանց ուժգին կոծելոյ ընդ տարերս լեզուին. որպէս զի և փափկագոյն լսելիք հաղիւ հնչիւն ինչ 'ի բովանդակ տաղին գտանեն մեղմելի[2]։ Այսու զմայլական ներդաշնակութեամբ վայելուչ ևս և փափկագոյն գտանին յոլովագոյնք 'ի տաղից նորա քան զԱնակրեոնին և զԱիմոնիդեայ։

Եւ զիք չափ ուժգնութեան թափոյ խանդիցն, որով առեալ ձգէ նա զմիտս 'ի նկարագիր անդր ջերմաջերմ տարփանացն արբեցութեան։ Աստուածարեալ իմն հանդոյն Պինդիայ՝ բանս բոցավառս դրոշմէ 'ի քարտիսի[3], և խմաստից հոսք տեղատարափ իբրև զնետս կարկտի և իբրև զամենածախս անձրև հրակայլակ։ Օր և աշխոյժք կենդանիք կրիցն բռնութեան անձնաւորին իմն անդանօր, և յարձակեալ 'ի վերայ՝ 'ի յոյզս անհնարինս զոգիսդ արկանեն[4]։

Օ այսոսիկ 'ի Այնիլինէ, որ ինչ 'ի բանիբուն արանց բազմաց լուայ զհանճարոյն Սափ-

[1] Դիոն. ասիկ. յդ. չարագր. բառ. պր. 23. էջ 171։
[2] Նոյն անդ էջ 180։ Դիմեաբ. փաղ. յդ. պերճաբ. ԳԼ. 132։ Պլուտ. յդ. պիւթ. պատգ. հտ. 2. էջ 397։
[3] Պլուտ. տարփոգ. հտ. 2. էջ 763։ Ովիդ. գիրք Դ. տաղերգ. 9. տող 11։
[4] Ղոնգին. յդ. վսեմ. յօդ. 10։

փովայ, համառօտագիծ նշանակեցի. և 'ի խոր լռութեան անդ աստեղափայլ գիշերոյն, որ-պիսիս յաՀախագոյն է տեսանել 'ի Յունաց աշխարՀին, հարաւ յունէն իմ քնարախառն հնչիւն գողովական երգոյ՝ հուպ 'ի լուսանցոյց պատուՀանս օթևանին մերոյ նուագեալ. և էր այն մի 'ի տաղից սքանչելւոյ լեսբացւոյն, յորում անարգել և անպատրուակ զգեղոյն հրաւ պոյրս առնէ առաջի։ Այս հայեցեալ տեսանելի ես զնա կթոտեալ և դողդոջոտ իբրև զանթահար զոք, և յանձնէն և 'ի մտացն զգայութենէ յափշտակեալ. էր զի շառաչներ, և էր զի 'ի գոյն դալկան ոգեսպառ ինն նուաղէր, ամբոխեալ 'ի ծուփս ահագին և բազմապատիկ կրեցն ընդ միմեանս բախելոց 'ի սրտին։

Այս չափ է պերՀախօսութեան սրտի մարդոյ, և այս նկարագիրք վերՀք և կենդանատիպք՝ յորժամ ընտրանաւ քաջայարմար 'ի մէջ բերիցէ զՀանգամանսն ազդողագոյնս զառն տարաբախտի։

։ Ղանգին. յղ. վեր. յոդ. 10։

ԳԼՈՒԽ Գ.

Զու Անաքարսեայ 'ի Միտիլենեայ։ — Նկարագիր Եւթիոյ, և զՔաղկեայ բանք։ — Եւ հասանել նորա 'ի Թեբէ։

Ի ՎԱՂԻՒ անդր Ճեպեցաք 'ի նաւ մնանել։ Եւ էր մանկոյկն կցեալ պարանաւ 'ի նաւն[1], և զեակք երկուստեք խեղացն 'ի խառնելիսն արկեալ[2], կայմն կանգնաւոր՝ թեւոյն առ չեղամ բարձեալ յառագաստին թռչարան, և ամենայն ինչ կազմ էր 'ի չոս։ Թիւավարքք քսան, տասն աստի և տասն անտի[3] բուռն զթեւնչանկացն հարեալ կային. և հրաժարեցաք 'ի Միտիլենեայ խանդակաթ անձկով։ Յելս նաւահանգստին երգէին նաւազք օրհնութիւնս դից, և մեծ աղաղակաւ ուխտս վասն հողմոցն յաջողութեան մատուցանէին[4]։

Եւ պատեալք զՄալեայ սարաւանդիւն՝ որ 'ի հարաւ կուսէ կղզւոյն երկայնեալ, պարզեցաք զառագաստն. և թիավարացն նորագործ Ճգամբք, սաղապաՃեմ ընդ մկանունսն սահեալ գնայաք։ Յեղենատիայտից գրեթէ բովանդակ նաւս մեր կազմեալ էր[5], ըստ ճևոյ

1 Դեմոս. 'ի Զենոդ. էջ 929։ Աքիլլ. Տատ. յղ. Կլեոտփ. և Լեւկիպպ. գիրք Գ. գլ. 3. էջ 240։

2 Շէֆիֆեր յղ. նաւ. զնաւոր. գիրք Բ. գլ. 5. էջ 146։

3 Դեմոս. 'ի Լակրիտ. էջ 949։

4 Աքիլլ. Տատ. անդ գիրք Բ. գլ. 32. էջ 200։

5 Թէոփր. բուսաբան. գիրք Ե. գլ. 8. էջ 533։

նաւաց՝ որք յամարայնի եօթանասուն բիւր գիրկս գնան 'ի տունջեան, և վաթսուն 'ի գիշերի[1]։ Այն 'ի նաւաց անտի, որք 'ի քսանեւչորս ժամն 'ի ցրտագին նահանգէ յերկիր տօթակէզ արագ հասին, 'ի մէոլտեան ծովակէն մինչև Այթիոպիա[2]։

Աջողակի և անվտանգ եղև մեզ նաւարկել. և նաւապետին անուն էր Փանէս։ Աբ խորանաւն նորա զմերն հարեալ[3], էր զի 'ի լուր նաւարկութեանցն նորա զբօսնուի, և էր զի զՀոմերոնի գիրսն 'ի ձեռս առեալ՝ նորանոր գեղեցկութիւնս 'ի նոսա գտանէի. քանզի 'ի վայրս, ուրանօր զքերթածն արար, անդ պարտ է նկատել զՀզրտութիւն նկարագրութեանց նորա և զկենդանութիւն երանգոց նոցին[4]։ Օրս սիրելի էր ինձ համեմատել զնկարսն զայնոսիկ ընդ էիցն, զի ոչ նսեմացուցանէին զպատկերացն պայծառութիւն նախատիպքն։

Այլ ահա տեսաք զկատար Ալքայ լերին, գեբածայրեալ քան զամենայն լերանցն Այբիոյ[5]. և ըստ մերձենալ մեր անդր՝ երկայներ յաչս մեր կողմն 'ի հարաւոյ 'ի հիւսիս։ Այլ ասէ ցիս Փանէս. Կողմս այս տարածանի ընդ երկայնու-

1 Երոդ. գիրք Դ. գլ. 86։
2 Դիոդ. գիրք Դ. էջ 167։
3 Շէֆֆեր յղ. նաւ. գլն. գիրք Բ. գլ. 5. էջ 137։
4 Վուտ. յղ. հանձ.
Հոմեր։
5 Սոր. գիրք Ա. էջ 445։ Նստամբ. Ալեքսանդ. գիրք Բ. էջ 280։

թիւն աշխարհին ատտիկեցւոց և բիսվտացւոց և լոկրեցւոց և մասին ինչ Թեսաղեոյ[1]. այլ լայնութիւն նորա անհամեմատ է երկայնութեանն։ Արգաւանդահող է երկիրն, և բերէ ցորեան առատ, և գինի և իւղ և պտուղ բազում[2]։ Այն 'ի նմա և բոլոր պղնձոյ և երկաթոյ[3], և գործաւորք Հարտարքն են մեր 'ի դարբնել զայնոսիկ[4]. և մանաւանդ պղնձոյն պիտառութեան մեր են նախագիւտ պարծանք[5]։ Այլ ջերմուկք բազումք են մեզ ախտահալածք[6]։ Արդ հակառակ բարեացս այսոցիկ մասանց պատահեն ատ սասանութիւնք երկրի, է զի զքաղաքս ողջոյն ընկլուզեալ, և է զի ծածկեալ ալեօք զծովեղերս բնակեալս[7]։

Այսահանգիստք անքոյթք, քաղաքք մեծափարթամք, ամուրք հզօրք[8], և ատրքահատ առատութիւն ցորենոյ՝ ուստի աթենացւոց քաղաքին հայթայթին յաՀախ պարէնք, հանդերձ սոքիմքք և բարեբաստիկ տեղի բնակութեան կղզւոյն, աներկբայելի առնեն. զի եթէ ընդ միոյ ուրուք իշխանութեամբ էր, զամենայն շրջակայ ազգինս հնազանդեցուցանէր ընդ

[1] Սոր. գիրք Ա. էջ 444։
[2] Երոդ. գիրք Ե. էջ 31։
[3] Սոր. անդ էջ 447։
[4] Սաեւփ. 'ի բառն Α'ίσηψ.
[5] Նոյն 'ի բառն Χαλκ.
[6] Նոյն անդ։ Սոր. անդ։
Արիստոտ. Նշանք օդ. գիրք Բ. գլ. 8. հտ. 1. էջ 567։
Պլին. գիրք Դ. գլ. 12. հտ. 1. էջ 211։
[7] Արիստոտ. անդ։ Թուկ. գիրք Գ. գլ. 89։ Սոր. անդ։
[8] Պլուտ. 'ի Փոկ. հտ. 1. էջ 747։

իւրև՝։ Այլ նոքա հերձուածովքս մերովք պարսպեալք անկասկած 'ի վտանդէն, իշխեցին իսկ բազումս անգամ և առին պարապ 'ի նուաստել զմեզ[2]. և նախանձընդդէմ հակառակութեամբն ևեթ նոցա դարձաք անդրէն յաղատութիւն[3]։ Վասնզի նիզակակիցք եմք աթենացւոց քան թէ հնազանդեալք. և զսակ ևեթ հարկին հատուցեալ նոցա[4], կամք ինքնօրէնք 'ի վայելս բարեաց ընկերահաշտ ազատութեան. և յաշխարհաժողով գումարիսմք 'ի Վաղկիս, զի անդ օգտի և իրաւանց քաղաքացս մերոց առնին խնդիրք[5]։

Լինն ընդ նաւորդս եւբիացիք ոմանք, որք 'ի շահավաճառ երթեալ 'ի Միտիլենէ, դառնային 'ի հայրենիսն։ Մի 'ի նոցանէ որեացի էր քաղաքաւ, միւսն կարիստացի, և երրորդն երետրացի. առաջինն 'ի նոցանէ ասէ. Ի հնէալ աջողակ հողմոյ, եթէ կարասցուք մըտանել 'ի հիւսիսոյ կողմանէ 'ի կիրձն՝ որ անջրպետէ ընդ կղզին և ընդ ցամաք, մարթ է մեզ զկայ առնուլ յառաջին քաղաքն՝ որ 'ի ձախմէ հանդիպեսցի մեզ[6]։ Արդեա կոչի քա-

1 Դեմոս. վասն պարսպին էջ 483։ Ուլպիան. 'ի Ճառին առ. Արիստոկր. էջ 769։ Պոլիբ. գիրք Ժ.Ի. էջ 731։

2 Դեմոս. անդ։ Թուկիդ. գիրք Ա. գլ. 114։ Դիոդ. գիրք Ժ.Զ. գլ. 7. էջ 411։

3 Դեմոս. անդ էջ 489։ Նոյն յԱնգրոս. էջ 710։ Եպին 'ի կոնս. էջ 441։

4 Եպին. անդ էջ 442, 443։

5 Նոյն անդ։

6 Լիւ. գիրք ԻԸ. գլ. 5։

զաբն, և գրեթէ առ հասարակ բնակեալ է յաթենացւոց. տեսցես դու քաղաք մեծամուբ տեղեաւն 'ի բնէ, և ձեռագործ ամրութիւնք[1]։ Տեսցես դու երկիր, որոյ այգեստանք անդրստին 'ի վաղնջուց ժամանակացն Հոմերի հրաշակաւորք[2]։ Յաւել ասա երկրորդն. Իսկ եթէ 'ի հարաւոյ լեցի մեզ մնանել 'ի կիրճն, ինքնուրք 'ի նաւահանգիստն Կարիստեայ՝ որ յայլմէ հանդիպի մեզ, և պարարեսցին աչք քո 'ի դալարագեղ արօտս ծածկեալս անդեռվք[3]։ Լաւ ածից զքեզ 'ի քարահատս լերին Ովքայ, ուստի հատանի կիր կանաչ գորշային խայտաճամուկ, քաջագեղ 'ի յորինուած սեանց[4]։ Տեսցես դու անդ և ազգ քարի, որ մանեալ ոստայնանկի. և անծախելի 'ի հուր, սրբի յամենայն աղտից[5]։

Յաւել երրորդն, և ասէ. Լինիցէ եկեսցես դու Լիբերտրիա, ցուցից քեզ պատկերս նկարագործս և քանդակեալս անթիւս[6]. և տեսցես աւանդ պատուական զՀիմունս պարսպաց մերոց վաղեմեաց, զոր կործանեցին պարսիկք 'ի խիզախելն մերում ընդդէմ նոցա 'ի պատերազմ[7]։ Ընդ 'ի մեհենի ուրեք տեսցես 'ի

1 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 349։ Լիւ. գիրք ԼԱ. գլ. 46։

2 Հոմեր. յԵղի. գիրք Բ. տող 537։

3 Եւստաթ. յԵղի. գիրք Բ. էջ 280։

4 Սար. գիրք Թ. էջ 437. Ժ. էջ 446։ Դիոն. ոսկեբ. Հատ. 80. էջ 664։

5 Սար. գիրք Ժ. էջ 446։

6 Լիւ. գիրք ԼԹ. գլ. 16։

7 Երոդ. գիրք Զ. գլ. 101։ Սար. անդ էջ 448։

մի 'ի սեանցն, զի 'ի տարեւորական տօնս Աբ-
տեմեայ՝ հանդէս առնէաք երբեմն երից հա-
զարաց հետեւակաց, վեցհարիւր հեծելոց, և
վաթսուն գերանդաձէն կառաց[2]։ Եւ այնու
փութոյ պնդութեամբ յաւել պանծացուցա-
նել զնախնի զօրութիւն քաղաքին, և զարդի
փառս նորա 'ի մէջ ազգաց Յունաստանեայ, զի ոչ
ևս հանդուրժեալ Փանեայ՝ սկսաւ և նա ներ-
բողել զԲաղկիս։ Եւ զայրացան անդէն վէճք
զնախապատուութենէ երկոցունց քաղաքացն։

Իսկ ես զարմացեալ կայի ընդ վէճս նոցա,
և ասեմ ցՏիմագենէս. Զոքա զիրս քաղա-
քաց իւրեանց համարին անձանց. իցէ՞ և առ
ձեզ այսնախանձ հակառակութիւն։ Եւ նա ասէ.
Եւ կարի իսկ քաջ. ոչ միայն հզօր քաղաքաց
ընդ միմեանս, այլ և գիւղից ընդ գիւղս։ Եւ
ոչ օտար է այս 'ի կարգաց բնութիւն, որ 'ի տալ
շարժումն բնաւից էիցս՝ տպաւորեաց 'ի սիրտս
մեր կրկնակի բերմունս, յորոց ամենայն բա-
րիք գոյանան 'ի մեզ. ցանկութիւն մարմնոյ,
որ 'ի սերումն բնութեանս ձկտի. և ցանկու-
թիւն գերազանցութեան, յորմէ փառասի-
րութիւն և անիրաւութիւն, նախանձ նմա-
նութեան և ճարտարութիւն. և առանց այ-
սորիկ ոչ սեանց 'ի Կարիստեայ մարթէր հա-
տանել, ոչ պատկերաց Յունրեորիա նկարել, և
ոչ թերևս այգեաց տնկել Յունրեա։

[1] Լիւ. գիրք ԼԵ. գլ. 38։ [2] Սոր. գիրք Ա. էջ 448։

Մինչ դեռ նա զայս խօսէր, կրկնեալ անդ-
րէն Փանեայ՝ ասէ ցոսոին. Գիտիցես զի 'ի
տեսարանս Աթենայ երեսրացիքդ ծանակիք
վասն խաղտալուր եղիսական բարբառոյդ[1]։
Արեսրացին ասէ. Այլ դու գիտիցես զի անդ
'ի տեսարանս ծանակագոյն ևս երգիծանու-
թիւնք զագահութենէ քաղկիսացւոց լինին
և զզեղծ բարուց նոցա[2]։ Փանէս ասէ. Բայց
սակայն Պաղկիս մի 'ի վաղեմի քաղաքացն է
Արլադայ, և 'ի Հոմերոնէ յիշատակեալ։ Ա-
րեսրացին ասէ. Հոմերոս և զԱրեսրիա անդ
'ի նմին տեղւոջ յիշատակէ[3]։ Փանէս ասէ.
Այլ 'ի մէնջ երբեմն գաղթականք 'ի Թրակիա
և յԻտալիա և 'ի Սիկիլիա արձակեցան։ Ա-
միւսն ասէ. Այլ 'ի մէնջ 'ի ստորոտս Աթոս
լերին հատուածք բնակեն[4]։ Փանէս ասէ.
Հարքն մեր Թէպէտ և առ ժամանակ մի ընդ
բռնութեամբ Խոխիցն հեծեցին, և ապա
Փոքսոսի բռնաւորին, այլ ապա արիաբար
թօթափեցին զլուծ, և կացին յընկերահաշտ
ազատութեան[5]։ Արեսրացին ասէ. Օնոյն
և հարքն մեր արիացան, զընկերհաշտու-
թիւն փոխանակ ազնուապետութեան հաս-

1 Սոր. գիրք Ա. էջ 448։ Հիւսիք. 'ի բառն Ἐρέτρ. Եւս. տաթ. յեղիսակ. գիրք Բ. էջ 279։

2 Հիւսիք. և Սուիդաս 'ի բառն Χαλκ. Եւսեբաթ. անդ։

3 Հոմեր. յեղի. գիրք Բ. տող 537։

4 Սոր. անդ էջ 447։ Եւսեբաթ. անդ։

5 Արիստոտ. յզ. հաս. գիրք Ե. գլ. 4. հա. 2. էջ 391։

տատեալ՝։ Պնդուստ և կարիստացին ասէ. Ոչ էր ձեզ պարծել ընդ փոփոխումն կարգաց պետութեանդ. զի բարգաւաճագոյնք յայնժամ էին քաղաքք ձեր, յորժամ սակաւք ոմանք՝ ի քաղաքայնոցդ իշխէին. յայնժամ և գաղթականքդ ձեր բազմամբոխք սփռեցան։ Յաւելն որէացին. Այլ յոյժ անիրաւին բանք դոցա, զի և արդ խսկ ահա քաղկիսացիք կրէն վատութեամբ զլուծ Պնեսարքեայ բռնաւորի, և երեսարացիք զվեմսանի՝։ Յայնժամ Տիմագենէս ասէ. Ոչ առ վատութեան ինչ կրէն զայն, զի երկոցունց և՛ քաղաքացիք՝ են և ազգեն միշտ քաջք։ Դոքա՝ ի Ճակատու ուրեք դաշինս նախ քան զպատերազմն կռեցին՝ խառնել անդէն ընդ միմեանս՝ ի կռիւ, և մի զէնս հեռաձիգս՝ ի կիր արկանել։ Զայս նորանչան դաշն ուխտի ես ինքն ոչ՝ խնվք տեսի Յորեսարիա՝ արձանագրեալ՝ ի սիւն մի՝ ի մէջ հէնին Աքրտեմեայ։ Պպաքէն բազում Ճապաղիք եղեն անդ արեանց, այլ զրաւ եղև նոքօք պատերազմին։

Յայնժամ ասեմ և ես. Լուրք զմին՝ ի պարծանացդ ձերոց. զիցէ՞ն և իմաստասէրքդ և քերթողք անուանիք կացեալ Յունբիա. զի որ բազում իրաք կցորդիքդ ընդ աթենացիս, զիարդ մարթի թէ ախորժակք բանասիրու-

1 Արիստոտ. յոլ. հաս. գիրք Ե. գլ. 6. էջ 395։
2 Եպիքն. ի կաս. էջ 441։
3 Սոր. գիրք ժ. էջ 448։

թեան չիցեն 'ի նոցունց 'ի ձեզ ածանցեալ'։ Եւ կարկեալ կացին։ Իսկ նաւապետն հրամման եւ, և պատեալք զհարաւային ծայրիւ կղզւոյն՝ մտաք 'ի կիրճ մի, ուր աստի և անտի 'ի ծովեզերս էին քաղաքք մեծամեծք և փոքունք։ Եւ անցեալք առ պարսպօքն Կարիստեայ և Եղեսրիոյ, հասաք 'ի Բաղկիս։

Սարաւանդ յայս կոյս և սարաւանդ յայն կոյս կարկառեալ, գրեթէ 'ի համբոյր միմեանց ածեն զկղզին ընդ ծովեզերս Բիսիդիոյ[2]։ Իսկ որ 'ի միջի անձուկ կիրճն՝ կոչի Եւրիպոս. և 'ի մասն մի նորա լիր արկեալ և թումբ գործեալ է, զոր Ջիմագենեայ տեսեալ էր 'ի մանկութեան զշինուած թմբին։ Յերկոսին ծայրս նորա աշտարակք կանգնեալ կան մարտկոցք, և կամուրջ բառնալի յանցս նաւաց[3]։ Եւ ուղիթ ի մեն նորանշան, որոյ դեռ ևս զանխուլ են պատճառքն, երևելի ևս անդանօր գործի. զի ջուրք ծովուն զցայգ և զցերեկ հիւսիսոյ 'ի հարաւ և աստի անդր յաձախ երթևեկեն սահմանեալ ժամանակաւ։ Եւ զի երթևեկ ջուրցն հպատակեն օրինաց, որպէս ովկիանան ծովուն ալիք. և է զի անցանեն զօրինօքն[4], և 'ի միում վայրկեան ժամանակի զկայ առեալ 'ի

1 Դիկեարք. առ մատենա- գիրս աշխարհ. հա. 2. էջ 20։
2 Սար. գիրք ժ. էջ 445։
3 Դիոդ. գիրք ժԳ. էջ 173։
4 Պղատ. 'ի Փեդ. հա. 1. էջ 90։

հոսանացն՝ յետս ընդ կրունկն յորձանօք 'ի վերը ընթանան[1]։

Բաղկիս կառուցեալ կայ 'ի զառ 'ի վայր համանուն լերին[2]. արձականիստ շրջասփիւռ տարածանի քաղաքն, այլ քաղաքացիք խորհին և եւս ընդարձակել զայն[3]։ Օտառք բարձրաբերձք 'ի հրապարակս նորա և 'ի պարտէզս[4] հովանի առնեն բնակչացն 'ի բոցակէզ տապոյ արեգական. և ուղիք բազմաջուր Բրեթուսայ աղբերն ընուն զպէտս քաղաքին առատապէս[5]։ Յարդ մեծ 'ի պայծառութիւն քաղաքին յօրինեն թատերք և կրթարանք և կամարակապք և մեհեանք և անդրիք և նկարագործ պատկերք[6]։ Բարեբախտ տեղի բնակութեան քաղաքին, դարբնոցք պղնձոյ[7], անդաստանք նորա ոռոգեալք 'ի Էլանտեայ գետոյ, և ձիթաստանք ձգեն 'ի նաւահանգիստ նորա զնաւս վաճառաշահ ազգաց[8]։ Բնակիչք նորա անգրագէտք են և հետաքրքիրք յոյժ, և հիւրասերք. և թէպէտ նախանձաւորք ազատութեան, այլ դիւրամէտք 'ի ծառայութիւն[9]։

1 Սփոն. Ճան. հա. 2. էջ 162։
2 Դիկէարք. առ մատեն. աշխարհ. հա. 2. էջ 19։ Եւսեբիոս. յԵզի. գիրք Բ. էջ 279։ Սոեփ. 'ի բառն Χαλκ.
3 Սար. գիրք Ժ. էջ 447։
4 Դիկէարք. անդ։
5 Եւսեբիոս. անդ։
6 Դիկէարք. անդ։
7 Սոեփ. անդ։
8 Դիկէարք. անդ։ Պլին. գիրք Դ. գլ. 12. հա. 1. էջ 211։
9 Դիկէարք. անդ։

Լրեկոթեալ 'ի Վաղկիս, 'ի վաղիւ անդր 'ի ծագել արեգական հասաք 'ի հանդիպակաց ծովեզրն Յեղիս աւան, առ որով խորշ առեալ ծովուն գործէ ծոց մեծ, ուր նաւատորմն Գամենեայ զկայ էառ ընդ երկար վասն հողմոցն ընդդէմ լինելոյ [1]։

Ընտի ուղևորեալք ընդ Սաղկանէա, չոգաք Յնթեդոն ընդ Ճանապարհ զուարճալի, որ ածէ ընդ ծովեզերս, և ընդ բլուր մի հովանաւոր՝ ուր խիտ առ խիտ բղխեն աղբիւրք [2]։ Ընթեդոն է քաղաք փոքրիկ, և հրապարակ 'ի նմա հովանացեալ 'ի վարսագեղ ծառոց, և շուրջ պատեալ 'ի կամարակապ սրահից։ Յոլովագոյնք 'ի բնակչաց քաղաքին պարապեն 'ի ձկնորսութիւն, և սակաւք 'ի մշակութիւն. զի անօսր է երկիրն և անբեր ցորենոյ, այլ այգեւէտ [3]։ Ընցաք ասպարէզս Եօթանասուն, և հարիւր և վաթսուն ասպարէզք առաջի կային մեզ մինչև 'ի Յոբեբէ [4]։

Եւ քանզի սայլիւ գնայաք, կալաք զՃանապարհ դաշտին, թէպէտ և երկայն էր ուղին և բազմապտոյտ [5]։ Եւ հասեալք մերձ 'ի քաղաք անդր մեծ, 'ի տեսիլ միջնաբերդին 'ի հեռուստ՝ ոչ ևս կարաց Ցիմագենէս ժոյժ ունել արտասուաց։ Եր զի յոյս, և էր զի եր-

1 Սոր. գիրք Թ. էջ 403։
2 Դիկէարքի. առ մասանաղրաց աշխարհ. հա. 2. էջ 19։
3 Նոյն անդ էջ 18։
4 Նոյն անդ էջ 17 և 19։
5 Նոյն անդ էջ 17։

կիւզ 'ի դէմն նկարեալ, ասէր. Ո՞հաւասիկ հայրենիք իմ, ասա զհայր իմ Թողի, աստանօր զմայր խանդաղակաթ գորովեալ զինև. և չգիտեմ եթէ լիցի ինձ դարձեալ տեսանել զնոսա. և յեղբայրն իմ և 'ի քոյր արդեօք խնայեաց մահ։ Այս ամենայն յարաձուփ յոյզք խորհրդոց Ամլէին զսիրտ նորա և զիմ. բարբէ. քանի՞ հոգս յաւել ինձ անդ ընդ վիշտ վտանգ զին, և ապա քանի՞ գութ և գորով։ Օ՛ի ընդ հասանելն մեր 'ի Ֆոբէ, կարեվէր խոցեցին զնա գուժկանք. քանզի անձուկ սիրոյ նորա 'ի դժոխս զծնողն ի՞ջուցեալ էր, և եղբայր նորա 'ի Ճակատու ուրեք պատերազմի անկեալ. իսկ քոյր նորա հարսնացեալ յԱ՞թէնս, և որբս 'ի մօրէ Թողեալ ուստր մի և դստրիկ։ Դառնակսկիծ էր վիշտն, այլ գութք և խնամք՝ զոր կալան զնմանէ քաղաքացիքն առ հասարակ, և ոմանք 'ի հեռաւոր ազգականաց նորա ապրեալք, և մանաւանդ Ադամինոնդ, սփոփեցին զվիշտս նորա, և միխիթարեցին զնա 'ի վերայ վախճանելոցն ոչ սակաւ։

ԳԼՈՒԽ Լ.

Դեգերել Ազնաքարսեայ 'ի Թերէ։ — Եւ վասն Եպամինոնդայ և Փիլիպպեայ մակեդոնացւոյ։

Ի ՃԱՌՍ միւսանգամ դարձին իմոյ 'ի Ի՛խովտիա՝ յայնժամ զքաղաքէն Թեբացւոց և զաբուց նոցա ասացից, ասասանօր զԵպամինոնդայ եւեթ յօրինեալ զՃառս։

Լոյս ածէ զիս առ նա Տիմագենէս. և քանզի քաջ Ճանաչէր նա զիմաստունն Ազնաքարսիս, ընդոստ եկաց 'ի լսել զանուն իմ։ Լոյս զարմացաւ, իբրև գիտաց եթէ առ ինչ ուղևորեալ Լինիցիս. և ելեալ զիս զսկիւթացւոց։ Լակ ես այնպէս կայի պատկառեալ և զարմացեալ, մինչև չկարել տալ նմա պատասխանի։ Զգաց և ինքն զայն, և փոխեաց զՃառս 'ի կրտսերն Կիւրոս և 'ի նահանջ բիւրուն։ Լոյս աղաչեաց՝ ստէպ տեսանել մեզ զմիմեանս. և կանխեաք առ նա հանապազօր, և կայաք առ նմա 'ի լուր խօսիցն ընդ գիտնագոյնս 'ի Թեբացւոց անտի, և ընդ քաջահմուտ զօրավարս. զի Թէպէտ և լի էր նա գիտութեամբք, այլ սիրէր ուսնիլ։ Մեծայն տեսութիւնք նորա անվրէպք էին և խորաշնինք. և 'ի կարևորպահու պատասխանատրութեան զանձնէ՝ պատրաստ էին բանք նորա հզօրք և ճշգրիտք։

Եւ յոյժ զուարճանայր յորժամ զիմաստասիրութիւնէ և զքաղաքավարութիւնէ անկանէին ճառք[1]։

Որերկրիմ յիշատակաւն և բարձրամտիմ իսկ, յորժամ յիշեմ՝ զի իբրև զմի յընտանեաց կենակից եղէ ընդ այնքանոյ առն, քան զոր մեծագոյն զոք Թերևս ոչ ծնաւ Յունադա[2]։ Եւ ընդէր ոչ մեծ կոչիցեմ զզօրավարն, որ զամենեցուն մթացոյց զփառս զերևելի զօրավարացն[3], և զժբախտութիւն ևեթ նկուն արար զմշտայաղթն[4]։ Ընդէր զքաղաքավարն, որ զվարեալ նախիշխան կացոյց Յունադա փառօք՝ որում յառաջ քան զնա ոչ կարացին հասանել Թեբացիք, և զոր մահուամբն նորա դարձեալ կորուսին[5]։ Ընդէր զյանձանձիչն իւրաց հասարակաց՝ որ յամենայն ժողովս յաղթող գտաւ այլոց պատգամաւորաց Յունադայ[6], և արար նիզակակիցս հայրենեաց իւրոց զազգըս՝ որ նախանձէին ընդ զօրանալ նորոյ պետութեանն։ Եւ ընդէր զՃարտարախօսն, որ գէր 'ի վերոյ գտաւ քան զյոլովագոյնս 'ի Ճարտարախօսացն Աթենայ[7]. զանձնանուէրն

1 Նեպոս յԵպամ. գլ. 3։
2 Կիկ. յՊ. Ճարտ. գիրք Գ. գլ. 34. հտ. 1. էջ 313։ Նոյն առակ. գիրք Ա. գլ. 2. հտ. 2. էջ 234։
3 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 356, 396։ Եղեան. զան. պատ. գիրք Ի. գլ. 14։
4 Պոլիբ. գիրք Թ. էջ 548։
5 Նոյն գիրք Զ. էջ 488։ Դիոդ. անդ էջ 388 և 397։ Պաւս. գիրք Ը. գլ. 11. էջ 622. Նեպ. անդ գլ. 10։
6 Նեպ. անդ գլ. 6։
7 Կիկ. 'ի Բրուտ. գլ. 13. հտ. 1. էջ 346։

հայրենեաց առաւել քան զ[1] Եւոնիդաս՝, և զարդարն՝ Թերևս առաւել քան զնա ինքն Քրիստիդէս։

Զիք ներբող արժանաւոր նմին քան զկենդանագիր մտաց նորա. այլ զիարդ մարթի բանիւ յանդիման առնել զվեհ իմաստասիրութիւն նորա՝ որ ուղղէրն յամենայն գործս ըզգնացս նորա, և լոյս տայր շաւղաց նորա. իբր զհանճար նորա բազմահմուտ և բազմահնար, և զխորհուրդս նորա՝ զորս խոհականութեամբ բազմաւ առաջարկեալ, և արագ արագ կատարէրն։ Զիարդ մարթի նկարագրել զանյողդողդ սիրտ նորա, և զամբիծ բարս[*]. ըզբարեձևութիւն նորա և զվայելուչ գնացս, և 'ի դուզնաքեայս իսկ պատկառ կալ Հնմարտութեան. զհեզութիւն նորա և զմարդասիրութիւն, և զհամբերութիւն նորա 'ի տանել անիրաւութեանց ժողովրդեան և ոմանց 'ի բարեկամացն իւրոց[2]։

Եւ ինչ նուազ զարմանալի էր այրն ըստ սոսկական կենացն քան ըստ աւագութեանն. և շատ է զդէպս ինչ կենաց նորա անխտիր 'ի ներքս ածել՝ առ 'ի տալ Հնգրիտ զնկարագիր երկաքանչիւր կերպարանացն։ Այլ ես զնշա-

1 Պիկ. յլ. կատար. գիրք Բ. գլ. 19. հտ. 2. էջ 123։
2 Նեպոս յԵպամ. գլ. 3։ Պլուտ. 'ի Պելոպ. էջ 290։ Պաւս. գիրք Ը. գլ. 49. էջ 699։
* Ի վերջ կոյս մատենիս 'ի տեղեկութիւնսն. Թիւ ԺԲ։

նաւոր քաջութեանց նորա ասացի յառաջին գլուխս գրոցս։

Ցուն նորա ապաւէն էր աղքատաց, և սրբ-բարան աղքատութեան. զի անդանօր աղքա-տութիւն իշխէր անտրամական խնդութեամբ անմեղութեան, և երանաւէտ անխռով խա-զաղութեամբ, պար առեալ յառաքինութիւն՝ զորոց յաւելոյր զօրութիւն, և որովք պՀնեալ զարդարէր. և այնու անժպիտ պարզութեամբ իշխեալ, որ դժուարահաւատալի թուի [1]։ Ի դիմել երբեմն մարտիւ 'ի Պեղոպոնես, հարկ եղև նմա վաստակել ինքնին 'ի սպառազինու-թիւն իւր. և յիսուն դրամակշիռ 'ի փոխ էառ, 'ի բաց մերժեալ ցասմամբ զլարգ և միոյ 'ի թա-գաւորաց Թեսաղիոյ՝ որ յիսուն դահեկանս ոս-կիս մատուցանէր նմա [2]։ Ու թեբացւոց ս-մանց բաժանել ընդ նմա կամելով զինչս իւ-րեանց, նա զիսառս իւր բաժանեաց ընդ նոսա առ 'ի սփոփել նոքօք զկարօտեալս։

Ի միում աւուրց գտաք զնա պար առեալ 'ի բարեկամացն, և ասէր ցնոսա. Սփոդրիայ դըս-տրիկ մի է 'ի չափ հասեալ, և չէ բաւական ձեռն նորա 'ի պատրաստել նմա օժիտ. արդ միում միում 'ի ձէնք ըստ ձեռինդ բաւականի բաժ արկի. այլ զի հարկ է ինձ կալ զաւուրս

1 Փրանս. 'ի մարթանան դիրք Դ. գլ. 3։ Ամ. գլ. 9։ Պլուտ. առակ. հատ. 2. էջ 193։

2 Նդիան. զան. պատ. դիրք

ինչ 'ի տան, ընդ Ելանելն իմ արտաքս՝ ածից առ ձեզ զՀայր աղջկանն, զայր լաւ. քանզի արժան է նմա 'ի ձեռաց ձերոց ընդունել զպարգևն, որպէս զի գիտասցէ զպարգևատուն'։ Եւ ամենեքին ձեռն ետուն հաւանութեան, և մեկնեցան, չնորհ ունելով զնմանէ վասն մտերիմ համարձակութեան ընդ իւրեանս։ Բայց Տիմագենէս ցանկացաւ գիտել՝ թէ ընդէր Նպամինոնդայ հարկ էր կալ առտնին, և Եհարց նմա զայն. և Նպամինոնդ ոչ թագոյց զայն, ասէ. Օ՛ի հարկ է ինձ տալ զմեկնոցակն իմ 'ի լուացումն[1]։ Քանզի ոչ ունէր այլ բաց 'ի միոյն։

Այսպա եմուտ Միկիթոս պատանի, զոր սիրէրն յոյժ Նպամինոնդ, և ասէ ցնա. Պիոմեդոն կիզիկեցի այսր հասեալ կայ, և խնդրէ յանդիման լինել քեզ, և տալ զպատգամն արքային Պարսից, ածեալ 'ի նմանէ առ քեզ արծաթ բազում. որ և զիս իսկ բռնադատեալ, խթեաց 'ի ձեռս իմ հինգ քանքար։ Եւ Նպամինոնդայ հրաման տուեալ՝ մուծանել զնա, ասէ. Լուր Պիոմեդոն, եթէ կամք Արտաշիսի օգտակարք են Հայրենեաց իմոց, ոչ ինչ պէտք են ինձ պարգևաց. իսկ եթէ ՀԼնասակարք, բնաւ ամենայն ոսկի և արծաթ աշխարհին իւրոյ ոչ կարասցեն հրապուրել զիս 'ի դրդ-

[1] Նեպ. յԵպամ. գլ. 3։
[2] Եղիան. զան. պատ. գիրք Ե. գլ. 5։

ժանս։ Յորոց կրէիրդ՝ 'ի նոյն և զիս կարծեցեր, ներեալ քեզ. այլ երթ, մեկնեաց վաղագոյն 'ի քաղաքէս, զի մի գուցէ կաշառակուրծ զոք 'ի քաղաքայնոց առնիցես՝։ Նա դու, Մի՛ կիլթէ, եթէ ոչ դարձուցանիցես զարծաթն՝ զոր առեր 'ի դմանէ, այժմ իսկ մատնեցիր ըզքեզ ատենին։ Օ՜այսոսիկ Մ՝ԻԿԻԹՈՍ ապա պատմեաց մեզ, զի չէաք մեք անդ առ նմա յայնմ վայրի։

Օ՜նոյն խրատ և առ այլս յիւրոցն յառաջագոյն տուեալ էր Նպամինոնդայ. զի և 'ի զօրավարելն իւրում իբրև գիտաց՝ զի ասպարակրին իւրոյ արձակեալ էր զմի 'ի գերեաց ընդ արծաթոյ, ասէ ցնա. Տուր ինձ այսր զասպարն իմ, զի ժանգոտեալ են ձեռք քո յարծաթոյ, ոչ ևս կարես ընկերել ինձ 'ի վտանգս՝։ Նա նա խստակրօն աշակերտ Պիւթագորայ՝ նմանող վարդապետին սակաւապիտութեանն, հրաժարեալ և 'ի գինւոյ. և բազում այն էր՝ զի դոյզն ինչ մեղու ևեթ կերակրէր՝։ Նրաժըշտութեամբ, յոր 'ի Ճարտար երաժշտապետաց էր վարժեալ, զպարապոյ ժամանակն սփոփէր. և էր աջող 'ի սրինգ, և 'ի Ճաշս հրաւիրեալ՝ երգէր քնարաւ ըստ կարգի բազմականին՝։

1 Նեպ. յԵպամ. գլ. 4։ Եղիան. զան. պատ. գիրք Ե. գլ. 2։

2 Նոյն անդ գիրք ԺԱ. գլ. 9։ Պլուտ. առակ. հատ. 2. էջ 194։

3 Ատեն. գիրք ԺԳ. էջ 419։

4 Կիկ. տուսկ. գիրք Ա. գլ. 2. հատ. 2. էջ 234։ Ատեն. գիրք Դ. էջ 184։ Նեպ. անդ գլ. 2։

Որչափ հեզ էր 'ի կենակցութեան, նոյնչափ և առաւել խիստ էր 'ի զգուշութիւն պատշաճից իւրաքանչիւր կարգաց։ Մի ոմն 'ի սինլքոր խուժանէն, այր զեղխ, 'ի բանտ արկեալ էր. և եկն Պեղոպիդաս առ Լպամինոնդ, և ասէ. Ընդէր, բարեկամ, ոչ ինձ ընդ հեցեր ըզբանտարկեալն, և զիջար յաղերս կնոջ միոյ պոռնկի։ Եւ Լպամինոնդ ասէ. Օ՛ի ոչ 'ի դէպ էր քեզ բարեխօս լինել վասն այնպիսւոյն'։

Ոչ երբէք զաւագութեան թեկն էած, և ոչ 'ի յանձանձանաց ինչ իրաց աշխարհին հրաժարեաց։ Ի բազում պատերազմունս զինուորեցաւ ընդ անհմուտ զօրավարօք, զորս չարարուեստ մեքենայքնախապատիւ քան զնա արարին։ Եւ բազում անգամ պաշարեալ զօրացն 'ի բանակի և 'ի նեղ անկեալ, կարդացին զնա յօգնութիւն. և հասեալ՝ ելս իրացն արար, վանեաց զթշնամիս, և ած զզօրսն խաղաղութեամբ յանդորր, ոչ յիշելով զանիրաւութիւն հայրենեացն, և ոչ ընդ փոխարէնս բարեացն պարծելով զոր մատուցանէր[1]։

Օ՛ամենայն հնարս հնարէր առ 'ի իրախուսել զազգն 'ի քաջութիւն, և ահարկու առնել զնա այլոց ազգաց։ Նախ քան զառաջին Ճակատամարտն պեղոպոնեսական զթեբացիս ոմանս յորդորեաց 'ի գօտեկռիւ ընդ սպարտա-

1 Պլուտ. օրէնք հասար. հտ. 2 Նեպ. Լպամ. գլ. 7։

ցիս՝ որ էին 'ի Ամբէ. և 'ի յաղթել Թերա-
ցւոց 'ի կռուին, խրախուսեալ զօրացն իւրոց՝ ոչ
և սա զանգիտէին յերեսաց սպարտացւոց՝ ։ Մինչ
բանակեալ կայր նա Մակեդիա 'ի ձմերանի,
հրեշտակք 'ի միոջէ 'ի մերձակայ քաղաքաց ե-
կեալ՝ հրաւիրէին զնա ձմերել առ իւրեանս ։
Իսկ Լպամինոնդ ասէ ցսպայն. Լթէ տեսա-
նիցեն դոքա զմեզ նստեալ առ հրով, համա-
բիցին զմեզ իբրև զայլս 'ի մարդկանէ. այլ կաց-
ցուք աստ կռուելով ընդ ցուրտ և ընդ ձմեռն.
զի 'ի տեսիլ ըմբշամարտիցն մերոց և հրահան-
գաց մրցութեան՝ պակուցեալ զարմացին [2] ։

Պապիանոս և Յողիդաս, զօրագլուխք մե-
ծարեալք 'ի նմանէ, ասէին ցՏիմագենէս.
Յոյժ առաւել հիացեալ զարմանայիր, եթէ
մոռանէիր ընդ նմա 'ի պատերազմունս՝ նկա-
տել զչու զօրաց նորա և զկայ, և զհրամանս
նորա նախ քան զձակատամարտն, զքաջա-
յաղթ արութիւնս նորա և զարագամտու-
թիւն 'ի խառն մարտի. զի է նա միշտ ժիր,
ցանկ անխռով, և 'ի թարթել ական խելա-
մուտ խորհրդոց թշնամեաց. աներկեւանութիւն
ինն օրհասական ազդէ 'ի նոսա, և որոդայթս
բազմապատիկս լարէ զնոքօք անխուսափելի [3] ։
միանգամայն և զգուշանայ խստութեան հրա-

1 Պողիեն. 'ի մարթանան սեղ. զհասարակաբանութիւնն էջ 788։
2 Պլուտ. յոլ. Ծերոյ անտեսանելի։
3 Պողիեն. անդ գլ. 3։

հանգաց յիւրում բանակին, և նորանոր հնարիւք արծարծանէ զեռանդն զօրացն [1], և խորհի հանապազ 'ի պահպանութիւն կենաց նոցա և 'ի բաբեկենդանութիւն։

Սովին բազմագութ խնամօքյինքն պարուրէ զսիրտ նոցա. նմին իրի և վաստակաբեկք և սովալլուկք՝ կազմք կան առ 'ի կատարել ըզհրամանս նորա, և առ 'ի դիմել 'ի վտանգս [2]։ Յանկարծահաս արհաւիրքն յաճախեալք 'ի բանակս այլոց՝ անծանօթք են յիւրումն. զի 'ի սպրդել երկիւղին 'ի ներքս մտանել, միով բանիւ փարատել զայն և կամ շրջել յօգուտ իւր [3]։ Ի մուտս մեր 'ի Պեղոպոնես՝ եկին բանակեցան Թշնամիք յանդիման մեր [4]. և մինչ դեռ Լպամինոնդ դիտէր զկայս բանակի նոցա, Ձայթումն որոտման զարհուրեցոյց զզօրս նորա, և իրՁք հրաման ետուն զկայ առնուլ բանակին։ Հարցանէին զօրքն ահաբեկ զզօրավարն վասն նշանին՝ թէ զի՞նչ գուշակեր. իսկ նա աներկիւղ համարձակութեամբ ասէ. Օ՛այն իսկ զի Թշնամիք յանպատեհ տեղւոջ հարին զբանակ։ Յայն բան խրախուսեցին զօրքն առհասարակ, և 'ի վաղիւ անդր կալան զպահակն [5]։

Ի այլ բազում ինչ զօրավարքն երկոքեան

1 Պոլիբն. 'ի մարթանան և 368։ Պոլիբն. անդ գլ. 3. գիրք Բ. գլ. 3։
2 Քսեն. պատ. Ցուն. գիրք Ի. էջ 645։
3 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 367
յոդ. 3 և 8։
4 Դիոդ. անդ էջ 380։
5 Պոլիբն. անդ. յոդ. 3։

պատմեցին, զորս լռեմ. լռեմ և զորս ինքնին
աչօք իմովք տեսի, զայս միայն յուշ արարեալ՝
զի Նպամինոնդ առանց փառասիրութեան,
առանց պերճանաց և առանց խնդրելոյ զիւրն,
'ի սակաւ ամն ամբարձ զազգ իւր 'ի ծագ մե-
ծութեան՝ յորում տեսաքն զթեբացիս։ Նա
գործեաց նա զմեծ զայս գործ զօրութեամբ
առաքինութեանցն իւրոց և բարեմասնութեանց.
զի ոչ միայն իշխեր նա մտաց այլոց գերակայ-
ութեամբ հանճարոյն և գիտութեամբք,
այլ և ուղղեր 'ի կամն իւր զկիրս այլոց՝ իշխան
գոլով իւրոցն. բայց վաղվաղեաց գյաջողութի
իրին բուռն սաստկութիւն բուսոյ բարուց նո-
ցա։ Նշատ և աննկուն ոգւոմբ անդստին 'ի
սկզբանէ ծանրացասումն ընդ տիրապետութենն՝
զոր սպարտացիք և աթենացիք վարէին 'ի վե-
բայ ամենայն Նյլլադայ, և մանաւանդ 'ի վե-
բայ Թեբայ, երդուաւ ընդդէմ նոցա ատելու-
թիւն. և մթերեալ պահէր զայն 'ի սրտի։ Սակ
իբրև յանձն եղև նմա հոգ վրէժխնդրութենն,
խորտակեաց զշղթայս գերութեան ազգաց,
և 'ի հարկէ պաշտամանն եղև աշխարհակալ։
Մտաբերեաց 'ի խորհուրդն նոր և 'ի քաջայան-
դուգն՝ դիմել մինչև 'ի բուն անդր պետութենն
սպարտացւոց, և կապտել զնոսա 'ի նախագա-
հութենէ՝ յոր 'ի բազում դարուց վայելէին.
և կատարեաց զխորհուրդն, յամառեալ պընդ-
դեալ ընդդէմ զօրութեան նոցա և փառաց

և նիզակակցաց և թշնամեաց՝ որ կասկածանօք կային 'ի զնին երագ յառաջխաղացութեանն թեբացւոց։

Եւ ոչ առանին երկպառակութիւն կասեցոյց զնա, որով կէաք 'ի թեբացւոց միաբանեալ խնդրէին զխաղաղութիւն յայն սակս իսկ՝ զի Այպամինոնդ կամէր ընդ պատերազմ՝։ Ա. առաջնորդ երկպառակութեանն էր Մենեկղիդէս. Ճարտարախօսութիւն նորա և աւագութիւնք, և բերու�բազմաց 'ի բնէ յանդորր, զօրաւոր առնէին զնա առաջի ժողովրդեան. այլանայողդողդ արիութիւն Այպամինոնդայ տապալեաց զամենայն խոչ և խութ, և ամենայն ինչ կազմ և պատրաստ էր 'ի պատերազմ՝յորժամ մեկնեցաք մեք 'ի նմանէ։ Այթէ ոչ օրհաս վախճանին զրաւէր զկեանս նորա 'ի կանգնել անդ զյաղթութիւնն՝ որով սպարտացիք սպառսպուռ 'ի պարտութիւն մատնէին, համարս այնուհետև պահանջէր յաթենացւոց զյաղթութեանցն՝ զոր կալեալ էր նոցա 'ի վերայ Յունաց, և ընդ զմիջնաբերդն Մոնեայ՝ որպէս ասէրն իսկ՝ արձանօք, որովք աթենականն պէտնեալ զարդարի՝։

Տեսանէաք յաշխարհ և զՊողոնիս զհայրն Այպամինոնդայ. և արդոյ ծերունին առաւել բերկրեր ընդ փառս որդւոյն՝ որ հրովարտա-

։ Նեպ. Յեպամ. գլ. 5։
։ Եպբին. յղ. վերակ հրեշտ. էջ 411։

կաւ սահմանէին նմա, քան ընդ հարկ մեծաբանացն՝ զոր ամենեքին մատուցանէին առաքինութեանցն իւրոց։ Յիշէր մեզ յաճախ ըղձնողասէր գութ որդւոյն, զի յետ լուկտրեան ձակատամարտին մինչ զօրքն կայթս ցնծութեամբ հարկանէին, ասէր. Ընդ այն իսկ յոյժ խնդամ, զի ծնողք իմ դեռ ևս կենդանի են, և ցնծասցեն ընդ փառս իմ[1]։

Նմա յանձն էր հոգ զգուշութեան 'ի վերայ Փիլիպպեայ մանկան, եղբօր Պերդիկկայ արքային մակեդոնացւոց[2]։ Անզի Պեղոպիդայ խաղաղացուցեալ զաղմուկ պետութեան նոցա, զնա ածեալ էր 'ի պատանդ հանդերձ երեսուն ազատագունդ մանկտւով[3]։ Նա էր յայնժամ Փիլիպպոս ամաց իբր ութուտասանից, և կցորդէր 'ի նմա աջողութիւն ընդ իղձս հաճոյ լինելոյ։ Ցեսիլ իսկ գեղոյ նորա զոշոտէր զաչս[4]. իսկ 'ի բարբառելն՝ զարմացուցանէր զամենեսին ընդ հանճար իւր, ընդ յիշողութիւն, ընդ ճարտարիմաստութեան և ընդ վայելչութիւն խօսիցն զմայլելի[5]։ Օրարթամտութեամբն 'ի քնէ իմաստս ինչ հանճարեղս երբէք երբէք 'ի կիր արկանէր, առանց կծանելոյ զոք։ Հեզ էր և համբոյր բարուք, մեծ-

1 Պլուտ. 'ի Կորիոզ. հտ. 1. էջ 215։
2 Դիոդ. գիրք ԺԴ. էջ 407։
3 Պլուտ. 'ի Պեղոպ. հտ. 1. էջ 291։ Դիոդ. գիրք ԺԵ. էջ 379։ Յուստ. գիրք Է. գլ. 5. Որոս. գիրք Գ. գլ. 12. էջ 167։
4 Եպիֆ. յղ. վրէպ հրեշտ. էջ 402 և 412։
5 Նոյն անդ էջ 401։

անձն, արագ յընտրել զվաստակս, և ոչ ոք առաւել քան զնա գիտէր զարուեստ և զհարկ յանկուցանելոյ զսիրտս[1]։ Լաւսիթեոս պիւ-թագորեան վարժապետ նորա արկ 'ի նա ըզ-կայծակն գիտութեանց, որ և յամենայն կեանս նորա վառ և բորբոք 'ի նմա պահեցան, և խը-րատս զգաստութեան նա ինքն ետ նմա, այլ այսոքիկ 'ի մոռացօնս եղէն[2]։ Յանկութիւն 'ի մէջ գերազանց առաքինութեանցն սպը-դեալ մնանէր, առանց աղմկելոյ և խափանե-լոյ զնոսին. և անդատին յայտնի լինէր զի 'ի թագաւորել մանկանն՝ ոչ հոգք աշխարհին և ոչ գրգանք ընկճելոց էին զնա։

Լ.ՔԴ սա հանապազորդէր առ ոտս Լպամի-նոնդայ, և ուշ եդեալ 'ի հանձար մեծի առնն՝ նկրտէր լինել 'ի ժամանակի նմին նմանող[3]։ Վտադիւրութեամբ ունկն դնէր ձառից նո-րա, և 'ի միտ առնոյր զգործս. և անդ 'ի վերջ վարժարանին ուսաւ 'ի չափու ունել զանձն[4], և լսել զձշմարտութիւն. դարձաւ 'ի թիւր շաւղացն, ծանեաւ զՀելլէնս, և ոչպէս կա-րէրն ծառայեցուցանել զնոսա իւր։

1 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 482։ Պլուտ. յղ. ծերոյ տնտեսել զհաս. հտ. 2. էջ 806։

2 Կղ. աղեքս. դաստի. գիրք Ա. էջ 130։ Դիոդ. անդ էջ 407։ Աթեն. գիրք Դ. էջ 167. Զ. էջ 260։

3 Պլուտ. 'ի Պերոպ. հտ. 1. էջ 292։

4 Նոյն օրէնք ամուսն. հտ. 2. էջ 143։ Նոյն առակ. էջ 177։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Ա. Զայլ և այլ գաւառաւոյն բարբառոցն, զոր Հոմերոս 'ի նիր արկանէ։ (էջ 95։)

Պարտաւէն ոմանք զՀոմերոս այնու զի զայլ և այլ գաւառացն Եղլադայ զանազան բարբառս խառն 'ի կիր արկանէ. և իրաւացի թուի պարտաւն։ Բայց զինքդ մարթէր այնպիսում բերբի և արդաստաւոր մտաց քերթողին 'ի կիր առնուլ զաղատութիւն՝ զոր և տրուպ ոք 'ի քերթողաց չառնոյր յանձն, և այլ այլախառն բարբառոնքն տաղաչափել 'ի տարտուցումն լսելեաց ոչ միայն յեանոց՝ այլ և ժամանակակից մարդկանն, որչափ և ոգէաս ոք զնոսա կարծիցէ։ Ապա ուրեմն 'ի դէպ ևս է կարծել, հատարակաց խօսիք իւրոյ ժամանակին տաղաչափեալ Հոմերի։

Առ նախնի Հելլէնս նոյն տառք թաւ և լերկ կամ խիստ և մեղմ տային հնչումն, և նոյն բառք զանազանաբար յանդէին, և ոչ ապէս հոլովէին։ Ապաքէն արտուղութիւնք էին այսոքիկ, այլ յաճախեալք 'ի տգայութեան լեզուաց. և առ Յոյնս երկարասև գոան վասն յաճախագոյն գաղթականացն 'ի նոցանէ ափռելոց։ Որոց այլ և այլ ուրեք կալեալ բնակութիւն անդարձ, յեզանակք ինչ խօսից առ իւրաքանչիւրսն պահեցան, և անախ եղեն զանազան բարբառք Յունաց, որք և դարձեալ զանազանէին յիւրեանս։

Առ այս և 'ի գաւառէն, յորում գրեացն Հոմերոս, 'ի դէպ է յաւելուլ պատճառս։ Զի յոնիացիք, որ իբր երկերիւր ամաւ յառաջ քան զքերթողն հատուած բնակեցին 'ի Ծովեզերս փոքուն Ասիոյ՝ առաջնորդեալք 'ի Նեղէայ յորդւոյ Կոդրոսի, էին ըստ մեծի մասին 'ի յոնիացւոց բնակելոց 'ի Պեղոպոնես. յորս յաւելան և Թեբացիք և փոկիացիք, և այլք յայլոց գաւառաց յունաստանի [1]։

Արդ խառն յայլ և այլ բարբառոց ասցա, և 'ի բարբառոյ եւզացւոց և յայլոց գաղթականաց Յունաց բնակելոց մերձ 'ի Յո-

[1] Պաւս. գիրք Է. գլ. 3. էջ 528։

նիա, կազմեցաւ արգելք բարբառն՝ որով Հռոմերս տասաչա-
փէ։ Ալ ապա բան տակաւ յեղափոխութեան ամենայն լե-
զուաց՝ ի գաւառս ուրեք այլ և այլ բարբառք առին պարզագոյն
կերպարան, զնշանակ երբեմն խառնմանն զանազանութեանցն
իւրեանց՝ ի գէմն բերելով։ Զի ահաւասիկ Երոդոտ, յորում
բերի տեղ քան զՀռոմերս։, յոմեկանին եւեթ բար-
բառոյ՝ ի յոր յեղանակ ասէ զանազանել։

Բ. Զեղծմունքեաց։ (էջ 116։)

Որ ինչ յաղագս Եպիմենիդեայ Ճառին բանք, յոյժ նսեմք
են։ Կէաք՝ ի մատենագրաց իբր 600 տարւ նախ քան զթուա-
բերութիւն փրկչին առեն զնա երթեալ յԱթէնս։ Պղատոն
միայն Ճշգիւ զերթն նորա ժամանակագրէ լեալ հինգ հարիւր
տարւ նախ քան զթուականութիւն փրկչին։ Որով վարանին
ոգի քննիչք։ Կէաք՝ ի նոցանէ այլոյլեալ ասեն զքնադերն Պղա-
տոնի, այլ այս ոչ արդարեւ կարծեցեալ լինի։ այլք երկուս
վարկանին գոլ համանուանս, և այս ևս տարբ թուի՝ ի Ճշմար-
տութենէ։ Ալ զի հին մատենագրքն ասեն ձգեալ նորա ըզ-
կնանս մինչև ցհարիւր յիսուն և չորս կամ յիսուն և եօթն տս,
և ոմանք մինչև ցերկերիւր ինանուն և ինն տս, մարթի է ասել՝
թէ երկիցս հոգաւ նա յԱթէնս, նախ՝ ի քառասնամենի, և երբ
կրոդգ անգամ՝ ի հասակի հարիւր և յիսուն ամաց։ Կարի իսկ
հաւանելի է այս, բայց մարթի ասել և Պղատոնի տիպեալ.
զառաւելն՝ ի Փարրիկեայ գիրսն գտցեն ինդրոցք։

Գ. Զնչխանութենէ հոգոյ յԱթէնս։ (էջ 132։)

Զիմարդ մարթէր Սոկրատի, որ զվշխանութիւն վարձառելոյ
իսկ զորդիս երարձ՝ ի հարց, տալ նոցա իշխանութիւն որդեա-
պատուութեան՝ որպէս ոմանք՝ ի հնոց մատենագրաց կրսերա-
գոյնք քան զՍոկրատ ասացեալն։ Հաւանիմ Դիոնիսեայ ասե-
կատնացուոյ, որ՝ ի հռոմէական հնախօսութիւնսն՝ ասէ՝ թէ
առ Յոյնս, բան օրինացն Սոկրատի և Պիտակոսի և Քարոնդայ,
անժառանգել միայն զորդիս օրէն էր կամ պրատաբեալ զնատա-

1 Երոդ. գիրք Բ. գլ. 53։
2 Նոյն գիրք Ա. գլ. 142։
3 Պլատ. յոլ. օր. գիրք Ա. հտ. 2. էջ 642։
4 Քոլսնեի տարեգրութի տատրի. հտ. 3. էջ 72։
5 Փարրիկ. մատ. Յուն. հտ. 1. էջ 364 602։ Պրուք. պատ. քեն. խնս. հտ. 1. էջ 419։
6 Սիքս. Եմպիր. պիւռոն. կարգագր. գիրք Դ. գլ. 24. էջ 180։ Հերոդ. Եմիովպ. գիրք Ա. էջ 24։ Մեսրս. ատատ. գիրք Ա. գլ. 2։
7 Դիոն. ատիկ. գիրք Բ. գլ. 26. էջ 292։

'ի տանէ, և ոչ ծանրագոյն ինչ պատուհաս ածել զնոքաք։ Իսկ յետոյ հռամայեցուցն՝ որպէս կարծեմ՝ նմանող լեալ, ընդարձակեցին Յոյնք զհայրենի իշխանութիւնն։

Դ. Զոգոլիս Բերիոզոն յԱքոգիս և յԱքիոգիսն։ (էջ 158։)

Զմի 'ի տաղից ասի Ամենեսս։ հասոյց մեզ. և այս իմաստք են նորին,

Ի մերոյ ենիս պատեալ սուսեր
Սաղարթապատ ածից յազգեր,
Իբր 'ի հարուած սատակմանէ բրնաւորին
Արիստոգիտ ու Արմոդ ածին,
Զազատութիւն և զբրէնս
Վերականգնեալ 'ի յԱթէնս։
Արմոդիէ, դու ոչ մեռար.
Այլ դու անմահ կեցցես 'ի սպառ
Երագոտին ընդ Աբիլլեայ
Եւ ընդ որդւոյն Տիդեայ քաջին Դիոմեդեայ,
Յերանելեացն 'ի կղզիս
Ուր դու բնակեալ համբաւիս։
Ի մերոյ ենիս պատեալ սուսեր
Սաղարթապատ ածից յազգեր,
Իբր 'ի հարուած սատակմանէ բրնաւորին
Արիստոգիտ ու Արմոդ ածին,
Համարձակեսան 'ի տոնին
Խոց զԻպարքեայ արկեալ գին։
Արմոդիէ, դու ցանկալիդ,
Եւ ցանկալիդ Արիստոգիտ,
Յաւերժացին մինչև 'ի սպառ փառք ձեր անմահ,
Որ զԻպարքեայ կործանեալ գահ,
Զազատութիւն և զբրէնս
Կայկայեցեք դուք յԱթէնս։

Ե. Զգոնիոց Բոգոտրոն Պորոն։ (էջ 176։)

Ի միտ առնուլ է 'ի պատմութենէս, թէ որպէս Աղեքսանդր այնչափ մեծերս գանձուց եգիտ 'ի Պերսեպոլիս, 'ի Շուշ, 'ի Պասարգադ, և յայլ քաղաքս Պարսից։ Այլ ջիտեմ թէ հաւատալ արժան իցէ Յուստինեայ, զի ասէ նա զԱղեքսանդրէ։

1 Ամեն. գիրք ԺԵ. գլ. 15. էջ 695։

2 Արրիան. գիրք Գ. գլ. 16. էջ 128. գլ. 18. էջ 131։ Կուրտ. գիրք Ե. գլ. 6։ Դիոդ. գիրք ԺԷ. էջ 544։ Պլուտ. յԱղեքս. հա. 1. էջ 686։

3 Յուստ. գիրք ԺԳ. գլ. 1։

թէ նուաՀեալ զՊարսս՝ ամի ամի առնոյր յաշխարհէն երեսուն բիւր քանեաք։

Զ. Զնաւամիջոցն, զոր Քաջերեսն Խոսոյ
յԵԼԱՄԱՅՍ։ (էջ 204։)

Սկիզբն յԱղուանից առեալ, սուղ ինչ՝ ի վերս քան զԱՀատաս աւարաւէին խելք երկուց կամրջաց։ Արդ զի ըստ նորոգ տեղեկութեան անՀագոյն անցք կրՀիս են իբր երեքարիւր եօթանասուն և հինգ ձողաչափ և կէս, և զի կամրջացն երկայնութիւն էր եօթն ասպարիզաց, ասսի Ազուել իմաստասիրէ՝ զի էր ասպարէզն այն յիսուն և մի ձողաչափ։ Ի յիշատակագիրս բանասիրական Հեմարանին. Հատ. էջ. էջ 334։

Է. Համբ յանձնան զբրան, որոյ Լանիկոս զբրաւորէր
Ի Թերմոդիէ։ (էջ 218։)

Յերոդոտեայ, գիրք Է. գլ. մբ. Ի Պաւսանիայ, գիրք Ժ. գլ. Ի. էջ 845. և Ի Դիոդորէ սիկիլիացւոյ, գիրք Ժեան. էջ 4. զՀաշիւս զայս ածեմ։

ԳՈՒՆԴԻՔ ՊԵՂԱՊՈՆԵՍԱՑԻՈՑՆ

ԸՍՏ ԵՐԱԴՈՏԵԱՑ

Սպարտացիք	300
Տեգէացիք	500
Մանտինէացիք	500
Ելիսցիներացիք	120
Արկադացիք	1000
Կորնթացիք	400
Փլիոնացիք	200
Միկենացիք	80
Համագումար	3100

ԸՍՏ ՊԱՒՍԱՆԻԱՅ

Սպարտացիք	300
Տեգէացիք	500
Մանտինէացիք	500
Ելիսցիներացիք	120
Արկադացիք	1000
Կորնթացիք	400
Փլիոնացիք	200
Միկենացիք	80
Համագումար	3100

ԸՍՏ ԴՒՈՂՈՐԻ

Սպասաւորք	300
Լակեդեմոնացիք	700
Յայլոց ազգաց Պեղոպոնեսեայ	3000
Համագումար	4000

ԳՈՒՆԴՔ ՊԵՂՈՊՈՆԵՍԱՑԻՈՑՆ

ԸՍՏ ԵՐՈԴՈՏԵԱՆ

Թեսպացիք	700
Թեբացիք	400
Փոկիսացիք	1000
Լոկրեցիք ոպոսականք	
Համագումար	2100

ԸՍՏ ՊԱՒՍԱՆԻԱՆ

Թեսպացիք	700
Թեբացիք	400
Փոկիսացիք	1000
Լոկրեցիք	6000
Համագումար	8100

ԸՍՏ ԴՒՈՂՈՐԻ

Միլեսացիք	1000
Թեբացիք	400
Փոկիսացիք	1000
Լոկրեցիք	1000
Համագումար	3400

Ելոգ ըստ Երոդոտեայ համարեալ զպեղոպոնեսացիս 3100, զԹեսպացիս 700, զԹեբացիս 400, և զՓոկիսացիս 100, գումարին միահամուռ 5200 այր, թող զլոկրեցիս ոպոսականս՝ որք աշխարհօրէն էին ի պատերազմ։

Պառանիասս յար և նման Երոդոտեայ բերել զՀաշիւն, բայց միայն զլոկրեցւոցն թիւ գուշակութեամբ յաւելու, որով լինին միահամուռ 11200 այր։

Ըստ Դիոդորի՝ Լեւոնիդաս զգաւ՝ի թերմոպիլէ չորեքհազար արամբք, յորոց երեքարիւր ապարտացիք էին, և եօթն հարիւր լակեդեմոնացիք։ Եւ ապա յաւելեալ ի Դոսա ասէ յոգնականութեամբ հազար այր ի միլեսացւոց, չորեքարիւր ի Թեբացւոց, հազար ի լոկրեցւոց, և ոչ ինչ պակաս ի փոկ-

կիսացեաց. որով գումարին միահամուռ եօթն հազար և չորեքարիւր այր։ Բայց Յուստինոս [1], և այլք 'ի մատենագրաց ասեն, ոչ ինչ աւելի քան զարս չորեքհազար ածեալ ընդ իւր Լեւոնիդայ։

Այս ամենայն տարակոյսք Թերեւս 'ի բաց փարատէին, եթէ գոյին արդ 'ի միջի արձանագրութիւնքն յետ Ճակատամարտին գրոշմեալք 'ի հնգեակ սիւնսն կանգնեալս անդ 'ի Թերմոպիլէ [2]։ Է իսկ 'ի միջի Մեգիստիայն ըղձի արձանագրութիւն [3], այլ այն ոչ ինչ օգնէ։ Իսկ այլք 'ի պատիւ անկելոցն յայլեայլ ազգաց կանգնեալ էին։ Ի սպարտականին արձանագրեալ կային երեքարիւր այր, իսկ յայլում չորեքհազարաց պելոպոնեսացւոց ընդ երեքարիւր բիւրս պարսկաց պատերազմեալ [4]։ Զլոկրիականն յիշէ եւեթ Սորաբոն, առանց 'ի ներքս ածելոյ զայն [5]. ուր արձանագրեալ կայր արդեաք թիւ զօրականին։ Իսկ զՏինեգերորդէն չիք ինչ ուրեք աւանդեալ, այլ երևի 'ի պատիւ Թեսպական գնդին կանգնեալ. զի փովկիացիք խոյս եառուն 'ի մարտէն, իսկ Թեբացւոց ձեռն առեալ էր 'ի Քսերքսէս՝ յորժամ արձանագիրքս այս կանգնեցան։

Արդ առ 'ի միաբանել զանազանութիւն համարոյ զօրացս, դիւրելի է.

Ա. Զի Յուստինոս յարձանագրութենէ պելոպոնեսական եւեթ գնդին առեալ գրէ, և վասն այնորիկ համարի ընդ ամենայն չորեքհազար այր ընդ Լեւոնիդայ։

Բ. Երոդոտ ոչ սահմանէ զթիւ լոկրեցւոց, իսկ Պաւսանիաս կեղակարծելով համարի զնոսա վեց հազար այր։ Բայց նախ Սորաբոն հակառակ նմին վկայէ [6], սակաւս ոմանս առելով առեալ ընդ իւր Լեւոնիդայ 'ի շրջակայ ազգաց. և երկրորդ Դիոդորոս սիկիլեացի, որ 'ի համար զօրուն հազար այր եւեթ 'ի լոկրեցւոց վարկանի։

Գ. Դիոդորի զթեսպացիս 'ի պատմութեանն յիշատակեալ [7], ապա 'ի համար գնդիցն անյիշատակ առնէ զնոսա [8]։ Բայց փոխանակ Թեսպացւոց յաւելու զմիլեսացիս, ուր 'ի ցամաք երկիրն յունաստանի չիք ազգ միլեսացի։ Բոլմիէ [9] համարի զմիլեսացի ընդ մալիացւոց այլ ընդ այլոց սպրդեալ. բայց քանզի մալիացիք անդստին 'ի սկզբանէ միաբանեցին ընդ Քսերքսէսայ [10], և զարմանալի իմն էր գառնալ միաբանել նոցա ընդ Յոյնս,

1 Յուստ. գիրք Բ. գլ. 11։
2 Սոր. գիրք Թ. էջ 429։
3 Երոդ. գիրք Է. գլ. 228։
4 Նոյն անդ։
5 Սոր. գիրք Թ. էջ 429։
6 Նոյն անդ։
7 Դիոդ. գիրք ԺԱ. էջ 5։
8 Նոյն անդ էջ 8։
9 Պալմեր. հրատ. էջ 106։
10 Դիոդ. գիրք ԺԱ. էջ 3։

նմին իբրև համարի Բոլմիէ՝ յետ Ճակատամարտին Թէրմոպիլեայ յայտնեալ նոցա համարձակ ի կռուին Պարսից։ որում և Երոդոտ։ Թուի երաշխաւորել։ Այլ դիմդ եր իբրեւ մոլեանցուց, յանպատապար աշխարհին՝ զէն առնուլ ընդդէմ հզոր սեռուՇեՇեան, որում երդուեալն էին հնազանդել։ Յոյժ առատաՀաւանելի է՝ ոչ ի Յոյնս և ոչ ի Պարս ՇեՇն սուտեալ նոցա ի Ճակատամարտին Թերմոպիլեայ, այլ յետ այնորիկ նաՀաջ ոմանքք ՇեՇնտու լեալ Պարսից։ Որով օրինակաւ և սպրդեալ էրեկ ի Դիոդորի մատեանն վրիպանն, սակայն ըստ իս՝ փոխանակ հազար միլեսացւոց Եօմին հարիւր թեսպացիս ընթեռնելի է։

Դ. Յերէքարիւր սպարապային յաՀեալս Դիոդոր և Եօմին հարիւր լակեդեմոնացիս. վասն այսմ և խորհրդաւ ՀայանաՀպէս։ Իսկ Երոդոտ յայն սակս արդեաք չյիշէ ինչ զնոցանէ, զի նոքա ոչ ընդ Լեւոնիդայ՝ այլ յետոյ չեւ արարին։ Բայց ի գէպ է յաՀեալս զնոսա ի Համար, ոչ միայն զի Դիոդոր և Խսոկրատ յաՀեալսն զնոսա, այլ և զի սովոր էին սպարապայիք ընդ լակեդեմոնացիս ի միասին երանել ի պատերազմ։ Դարձեալ և յայտ է զի ի Պերզապոլեսայ էին չորք հազար այր, յարձանագիր չիրմին նոցա յայտնապէս վկայեալ. սակայն Երոդոտ ոչ ինչ ասէր քան զերեք հազար և հարիւր այր Համարի զպերզապոլեսացիս, ոչ ի գէպ վարկուցեալ յաՀեալս ի Համար զեօմին հարիւր լակեդեմոնացիս, որոց երեկ յետոյ եկեալ հասեալ առ Լեւոնիդաս ի Թերմոպիլէ։

Այսպէս ուրեմն Երոդոտ զՀամար մարտիկացն Ժողովի ի հինգ հազար և երկերիւր այր։ Արդ յաՀեալ ի նոսա զեօմին հարիւր լակեդեմոնացիս, և գործեալ զոկրեցիս, զորոց ոչ դնել նա զՀամար՝ բայց Դիոդոր ոչ ինչ աՀեալ Համարի զնոսա քան զՀազար այր, Ժողովին միահանուռ վեց հազար և ինն հարիւր այր։ ՊաՀանեիսս գումարէ զՀին մարտիկացն ի մեռասան հազար և երկերիւր այր։ Արդ յաՀեալ ի նոսա զեօմին հարիւր լակեդեմոնացիս՝ զորս ըստ օրինակի Երոդոտեայ ի բաց թողու, գումարին մեռասան հազար և ինն հարիւր այր։ Բայց ի վեց հազարաց լոկրեցւոցն ի բաց բարձեալ ըստ Դիոդորի զՀինգ հազարսն, մնան գործեալ վեց հազար և ինն հարիւր այր։

Իսկ Դիոդոր գումարէ եօթն հազար չորեքարիւր այր. արդ փոխանակ հազար արանցն միլեսացւոց Համարեալ եօթն հարիւր թեսպացիս, մնան եօթն հազար և հարիւր այր։ Որով մարթ է առանց Ճշդի Համարոյ ասել, թէ էին ընդ Լեւոնիդայ արք իբր եօթն հազար։

1 Երոդ. գիրք Ը. գլ. 66։ 164. և յԱրբիդ. հա. 2. էջ 62։
2 Խսկր. Ներբ. հա. 1. էջ

Երեւ ի բանիցն Երոդոտեայ[1], զի ընդ ասպարացիս էին որ սկս միշտն և ի զասցիք։ Էին մեծամեծագիրք յաճեն զնոսա ի համար. և Թերեւս ոչ ինչ աւելի էին ի նոցանէ քան զարս երեք հարիւր։

Լեւոնիդաս երբոյ գիտաց՝ զի պարսիկքն զնա Թշնամիք, որ ձակեաց զրաղումս ի զօրացն, կալեալ առ իւր զասպարացիս միայն, զմեսասպանս և զմեբարիս, որ միահամուռ էին հազարք յերիւքարիւրք այր, և բաղումք ևս ի նոցանէ յառաջին Ճակատսն անկեալ էին։ Եւ եթէ Դիոդորի հաւասարելովք բանիցն[2], ոչ գոյին ընդ Լեւոնիդեայ աւելի քան զՀինգ հարիւր այր ի յարձակել նորա ի բանակն Պարսից։

Ը. Որ թէ ի Պերիկլէայ ի խոհուրդսն յԻսոկրատայ Ծ-ԽԵ ամ։
(էջ 386։)

Թուկիդիդէս։ համարի զծախսն երեք հազար և եօթն հարիւր քանքարս, պարտուեալ միահամուռ ոչ միայն զծախս ամ դաստակաց միմնաբերդին, և զայլոց շինուածոց՝ որք հրամանաւն Պերիկղէայ կատուցան, այլ և զպաշարմանն Պոտիդէայ. և որպէս ասէր իւր լուելոյս։, երկու հազար քանքարք ի պաշարումն յայն ծախեցան. ապա ուրեմն ի շինուածսն կառուցեալս հրամանաւն Պերիկղէայ՝ դասանին ծախեալ հազար և եօթն հարիւր քանքարք։ Բայց ասի ի հնոց վիպագրաց։ երկու հազար և երկոտասան քանքարս ասէ ծախեալ ի շինուածսն ամ դաստակաց ևեթ միմնաբերդին։

Ա՛ռ ի լուծանելոյ զկնճռաւն տարակուսանացս՝ գիտել պարտ է, զի Թուկիդիդէս ճառէ զբանձուց ամենեանցուց՝ անդ էն ի սկզբան պեղասպանեսական մարտին, և յայնմ ամ դեռ այն ինչ սկսեալ էին ամենեանցիք պաշարել զՊոտիդէա. այլ պաշարումն քաղաքին այնորիկ տեւեաց զերկեամ մի, և վիպագիրն զծախսն ևեթ՝ որ ի սկզբան անդ եղեն՝ ի հանար արկանէ։ Արդ որ ինչ մինչև ցայնժամ ծախք լեալ էին՝ համարեալ 700 քանքարս, դասանին 3000 քանքարք ծախեալ ի Պերիկղէայ ի պաշարումն քաղաքին։ որ դումարին ի 16200000 լիրայ դաղիական, համարեալ 5400 լիրայ առ քանքար։ Բայց մարմնոյ յաւուրս Պերիկղէայ մէն մի քանքարոյ արժէլ աւելի ևս երեքարիւրամբ լիրայիւք, որով լինին միահամուռ 17400000 լիրայք։

[1] Երոդ. գիրք Ի. գլ. 229. Ը. գլ. 25։

[2] Դիոդ. գիրք ԺԱ. էջ 8 և 9։

[3] Թուկ. գիրք Բ. գլ. 13։ և Նդոյն անդ գլ. 70։

[5] Հէրիոդ. առ Հերպոկր. և Պուիդ. ի բառն Սիրոբն.

Թ. Յաղագս ապահարզութեանցն՝ զոր Լնէան և Սինէսիոս արքին դիմեաց։ (էջ 400։)

Որպէս զի վաճառականաց ամենեցուն ապահարզութիւնքս այսոքիկ յայտնի կացցեն, ի սիւնս երիս արձանագրեալ զայնոսիկ՝ զմին ի Պիրէոն կանգնէին, զմիւսն ի Վոսփոր Թրակիոյ, և զերրորդն ի Կիմմերեանն Վոսփոր. որ են սկիզբն և միջ և եզր Ճանապարհին, ընդ որ երկաքանչիւրոց ազգացն նաւք երթևեկէին։

Ժ. Զ Ս ա ֆ ֆ ո ն ։ (էջ 464։)

Հաստատեալ ժամանակագրութեանն Պարոսի, ուր զքերթողուհւոյս են յիշատակք, Ընթեալ էր ի սպառ. ի մաշելոյ վիմն։ այլ նշմարին ի նմա յայտնապէս փոխուստ նորա և նաւարկել ի Սիկիլիա։ Ոչ ի գէպ է ասել ասել ըստ սմանց՝ թէ զՀետ փաւռնի անգամ նաւարկեալ էցե։ այլ մանաւանդ կարծելի է զնմանէ դաւակցեալ ընդ Ազկէոսի ընդդէմ Պիտակեայ, և վասն այնորիկ ընդ նմա և ընդ Հանմաթոհս նորա ապաստեալ ի Մարքինեայս։

ԺԱ. Զ ա ֆ ֆ ո ն ի ն ի ն ։ (էջ 465։)

Զարմ, զոր եմոյծ Պափիով կամ յանմեսեայ ի տարս իւր, այս է. տունք իւրաքանչիւր կազմեալ յերից մեռաստանեան տոզից, և աւարաեալ չորրորդաւն հնգոստեան տոզիս։

ԺԲ. Զ Ս դ ա մ ն ե դ ա յ ։ (էջ 482։)

Կղէարքոս սոզոստացի, որպէս աւանդէ Ամենէոս։, պատմէր ինչ զԷպամինոնդայ՝ որ զամբոխութիւն բարուց նորա ընդ կասկածանաց արկանէ։ Ա՝ պատմութիւնն այն, հակառակ վկայութեան հնոցն ամենեցուն վկայագրաց, ոչ միարանի ընդ խիստ խնամսիցն՝ յորոց ոչ խոտորեցաւ Երրեք այլն զարմանալի, և ոչ ի վտանգս մեծամեծս։

1 Դիմոս. ի Լեպ. էջ 546։ 3 Ամենն. գիրք ԺԳ. գլ. 6.
2 Ոքսոնեան վէպ. գար 37։ էջ 590։

Էջ	Տող	Վրիպակ	Ուղիղ
43	17	յիշատակք	յիշատակի
58	24	'ի մարտս ուրեք	'ի մարդս ուրեք
65	23	յոլովագոյն	յոլովագոյնք
67	5	Միկէնա	'ի Միկէնա
74	6	ընդ սովորութիւն	ըստ սովորութեան
86	25	կռուել	կռուեալ
90	22	ընդ ցնորից	ըստ ցնորից
105	14	զամ յարձակմունս նորա	զամ, և զյարձակմունս նորա
108	14	ընդ քերթողական	ըստ քերթողական
173	14	զՀոպիոս	զՀոպիրոս
217	8	ընդդիմամարտութիւն	յընդդիմամարտութիւն
218	18	'ի Փլիոնէ	'ի Փթիոնէ
276	17	շուրջ պատել	շուրջ պատեալ
282	14	'ի հայրենի քաջութենն	'ի հայրենի քաջութիւն
296	11	յարձակէ	յարձակէր
303	15	աշխահին	աշխարհին
323	17	ըստ ցամաք	ընդ ցամաք
365	2	յիւրեանց	յիւրեանս
432	12	յախոյեանացն	յախոյենացն
484	8	համարձակութեան	համարձակութեանն նորա